Է. Ռ. ԿՂԱՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ


ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

Э. Б. АГАЯН

СКЛОНЕНИЕ И СПРЯЖЕНИЕ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

(СТРУКТУРНЫЙ АНАЛИЗ)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1967

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

(ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1967

Պատ. խմբագիր՝ Ս. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

7—1—3

ՆԱԽԱԲԱՆ

Այս աշխատությամբ հեղինակը նպատակ է ունեցել ուսումնասիրել ժամանակակից գրական հայերենի հոլովման ու խոնարհման կառուցվածքը լեզվաբանական նոր մեթոդների կիրառումով: Վերջին երեք տասնամյակների ընթացքում լեզվաբանության մեջ տեղի են ունեցել հսկայական, կարելի է ասել հեղափոխիչ իրադարձություններ: Լեզվի, որպես կառուցվածքի ըմբռնումը և դրանից բխող կառուցվածքային վերլուծության մեթոդների մշակումը, մասնավորապես հնչույթաբանության մշակումը և նրա հիմնական դրույթների տարածումը լեզվի նաև մյուս բաղադրիչների վրա, մեքենական թարգմանության հիմնադրումը և նրա պահանջներին համապատասխան լեզվաբանական վերլուծությունների մեթոդների մշակումը և այլն, զարգացման այնպիսի ընթացք և ուղղություն են տվել լեզվաբանությանը, որոնք, առաջին հայացքից, կարծես թե ոչ մի կապ չունեն այդ գիտության ավելի հան հարյուրհնամյա պատմության հետ և առերևույթ հակասում են լեզվաբանության, որպես մարդկային լեզվի գիտության բուն իսկ էությանն ու ոգուն: Այս հանգամանքը իհարկե արդեն բավական էր, որպեսզի դասական լեզվաբանության կողմնակիցները վճռաբար դիմադրեին նոր ուղղություններին: Բայց իրողությունն ավելի բարդացավ ուրիշ, առավել կարևոր պատճառներով: Նոր մեթոդները իրենց առաջացման հենց սկզբից ևեթ հանդես եկան որպես տարբեր լեզվաբանական ուղղությունների հետազոտական մեթոդներ, կապվելիքն լեզվաբանական տարբեր տեսությունների հետ, թեև այդ մեթոդները, իհարկե վերցրած, անմիջականորեն չեն կանխադրում հատկապես այս կամ այն ուղղությունը: Դա էլ, ահա, առաջ բերեց ոչ միայն լեզվաբանական ուսումնասիրության հին ու նոր մեթոդ-

ների, այլև տարբեր ուղղությունների սուր բախումներ, որոնք հաճախ հանգում էին (և այժմ էլ հանգում են) մեկի կամ մյուսի բացարձակ ժխտմանը, որ, իհարկե, զուրկ է գիտական առողջ դատողությունից: Առանձնապես այդ տարբեր տեսություններն էին պատճառ, որ սովետական լեզվաբանությունը, հայտնի պայմաններում, մինչև վերջին տասնամյակը բացարձակ ժխտողական վերաբերմունք ուներ այն ամենի նկատմամբ, ինչ որ ծագում ու զարգանում էր արտասահմանյան լեզվաբանության մեջ: Միայն վերջին տասնամյակում սովետական լեզվաբանությունը հնարավորություն ունեցավ անմիջականորեն զբաղվելու *նոր մեթոդների* կիրառումով, դրանց մշակումով ու զարգացումով, իսկ սա էլ, ինչպես և պետք էր սպասել, առաջ բերեց այն սուր բախումները, իրենց ամբողջ ծայրահեղություններով, որոնք տեղի էին ունենում արտասահմանյան լեզվաբանության մեջ երեսունական-fառասունական թվականներին և որոնք վերջին տասնամյակում արդեն բավականաչափ մեղմացել են: Այս բախումների ընթացքում սովետական լեզվաբանության մեջ էլ դրսևորվեցին երեք ուղղություններ. դասական լեզվաբանության ներկայացուցիչների մի մասը հանդես եկավ նոր մեթոդների դեմ, գտնելով, որ դրանք լեզվաբանությունը տանում են դեպի գիտության հասարակական դերի ու բնույթի *ժխտում. նոր* ուղղության կողմնակիցների մի մասը, նույնպիսի ծայրահեղ, «մարտական» դիրքերից ելնելով, գտնում էր, որ դասական լեզվաբանությունն ապրել է իր դարը և, հետևաբար, լեզվաբանությունը պետք է զարգանա նոր ուղղությամբ: Վերջապես, երրորդը, որ կազմում է լեզվաբանների ավելի մեծ զանգվածը, բռնում է միջին դիրք, գտնելով, որ նորը և հինը ըստ էության միմյանց չեն հակասում, նրանք լրացնում, փոխադարձաբար նպաստում են միմյանց, ուստի և կարող են ոչ միայն համագոյակցել, այլև միաձուլվել: Այս ուղղությանն են պատկանում նաև մենք, և հենց դրանով էլ պայմանավորված է մեր այս ուսումնասիրությունը: Եվ որովհետև ամեն մի դիրքավորում ունի իր մեթոդաբանական-գաղափարական հիմնավորումը, ապա մենք էլ մի քանի խոսքով կփորձենք հիմնավորել մեր դիրքորոշումը:

Լեզվաբանությունը գիտություն է մարդկային լեզվի մասին. իբրև այդպիսին նա հասարակական գիտություն է, որի մեթոդաբանական հիմքն են կազմում մատերիալիստական աշխարհայացքն ու դիալեկտիկական մեթոդը: Սա արդեն ինքնին նշանակում է, թե լեզվաբանությունը ոչ մի դեպքում չի կարող նրաժարվել պատմա-

կան հայեցակետից և չի կարող անտեսել լեզվի հասարակական բնույթը, եթե նա ուզում է մնալ իբրև գիտություն լեզվի մասին: Սրանով բնորոշվում է նաև լեզվաբանության դերը հասարակության կյանքում: Հասարակական գիտություններր ձգտում են հասարակական երևույթների նշգրիտ լուսաբանությանը, նրանց խոր ու բազմակողմանի ճանաչողությանը, որ հնարավորություն է տալիս հասարակության զարգացման անցյալ ընթացքը նիշտ կերպով հասկանալու և հետագա ընթացքը նշգրիտ կերպով կանխորոշելու: Այդ տեսակետից հասարակական գիտություններն ունեն հսկայական դեր սերունդների դաստիարակության և նրանց նպատակասլաց գործունեության կազմակերպման մեջ: Իսկ դա պահանջում է հասարակական գիտությունների բնագավառի յուրաքանչյուր ուսումնասիրություն կատարել մեթոդաբանական անխախտելի սկրզբունքների համաձայն: Մյուս կողմից, այն փաստը, որ հասարակական գիտություններն ունեն դաստիարակչական հսկայական դեր, ինքնին նշանակում է, թե նրանք պետք է մատչելի, հասկանալի լինեն հասարակության լայն խավերին: Եթե հասարակական գիտությունը դադարի մասսաներին մատչելի լինելուց, նա կկորցնի իր կարևորագույն նշանակությունը հասարակության դաստիարակության գործում, կկորցնի հասարակության հոգեկան պահանջները բավարարելու հատկությունը, կկորցնի *մասսաների վրա գաղափարական ու բարոյական ներգործության ուժը և կդառնա գիտություն գիտության համար:* Այս բոլորը վերաբերում են նաև լեզվաբանությանը, որպես հասարակական գիտության: Այս տեսակետից մոտենալով արտասահմանյան լեզվաբանական զանազան ուղղություններին, կարելի է նշել հետևյալ գլխավոր, տեսական կարևոր նշանակություն ունեցող փաստը: Նորագույն լեզվաբանությունը լեզուն դիտում է որպես հաղորդակցման միջոց և իբրև ուսումնասիրության առարկա, բնորոշում հենց այդ դերով («կոմունիկատիվ ֆունկցիայով»): Այս բնորոշումը ունեցավ այն դրական կողմը, որ լեզվաբանությունը դուրս բերեց ամեն կարգի ինդիվիդուալիստական ուղղություններիոլորտից. լեզվաբանության մեջ իշխող դարձավ լեզվի, որպես հասարակական երևույթի ըմբռնումը: Մյուս կողմից, սակայն, սա ունեցավ նաև այն բացասական հետևանքը, որ անտեսվեց լեզվի մյուս, նույնքան կարևոր ֆունկցիան՝ մտածողության նյութապես ձևավորման ֆունկցիան: Սա իր հերթին հանգեցրեց բովանդակության անտեսմանը հատկապես ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ: Վերջապես,

բանի որ հաղորդակցումը հանդես է գալիս որպես համամանակյա (սինխրոնիկ) երևույթ, ապա ուշադրությունը միայն դրա վրա բևեռելը հանգեցրեց պատմական հայեցակետի մերժմանը, պատմական լեզվաբանության բացասմանը: Հասկանալի է, որ մենք վճռականապես մերժում ենք այդ մոտեցումը: Մեզ համար լեզուն մտածողության նյութական ձևն է և նրա արտահայտման միջոցը՝ հասարակական հաղորդակցման միջոցը. լեզվի այդ երկու գործառույթները՝ ֆունկցիաները փոխադարձաբար պայմանավորված են իրարով և նրանք իրարից խզել չի կարելի: Ինչ վերաբերում է նոր մեթոդներին, ապա սրանց նկատմամբ մեր տեսակետները հանգում են հետևյալին: Լեզվաբանական արդի, նոր կոչվող մեթոդներից ոչ մեկն էլ չի առաջացել իննինի, հանկարծակի, առանց լեզվաբանության մեջ ստեղծված նախադրյալների: Լեզվաբանական բոլոր նոր մեթոդներն իրենց սաղմերը կամ ուղղակի հիմքերն ունեն արդեն XIX դարի լեզվաբանության մեջ և դրանց օրինաչափ զարգացումն են ներկայացնում նոր պայմաններում՝ ուրիշ գիտությունների զարգացման արդի վիճակում: Կառուցվածքային վերլուծության սաղմերը, այլև լեզվի որպես համակարգի ըմբռնման գործնական արտահայտությունը գտնում են Գրիմի օրենքի մեջ: Ներքին վերակազգնումների մեթոդը պատմա-համեմատական մեթոդի զարգացման ու կատարելագործման օրինաչափ հետևանքն է: Լեզվաբանական վիճակագրության և լեզվաբանական ժամանակագրության բազմաթիվ փորձեր, և շատ հաջող փորձեր՝ իրենց հիանալի արդյունքով, հայտնի են բոլորին: Այս բոլորին ավելացավ նաև ուրիշ գիտությունների նոր հայտնագործությունների ազդեցությունը. էվանտային մեխանիկայի, հավանականության տեսության, նյութի կառույցի տեսության զանազան դրույթներ իրենց արձագանքն ստացան լեզվաբանության մեջ: Քիմիայի մեջ կատարված այն հայտնագործությունը, որ միատեսակ ատոմները մոլեկուլի մեջ կարող են դասավորվել տարբեր կերպ, որի հետևանքով փոխվում են ստացվող նյութի կառուցվածքն ու նրա հատկությունները, իր անմիջական արտահայտությունը գտավ լեզվաբանության մեջ: Լեզվական միավորների հարաբերակցությունն էլ պայմանավորում է տարբեր կառույցների (կոնստրուկցիաների) կառուցվածքը և իմաստը: Այս բոլորն, ահա, բացատրում են նոր մեթոդների առաջացման պատմական օրինաչափությունը: Եվ այժմ, երբ այդ մեթոդները լայնորեն կիրառվում են՝ տալով հիանալի արդյունքներ, չի կարելի ո՛չ անուշադրության մատնել դրանք և ո՛չ էլ, մանավանդ, բացասել

դրանք: Այլ բան է դրանց կիրառման շրջանակների ու նպատակների որոշումը: Մեր կարծիքով, նոր մեթոդներից յուրաքանչյուրը ունի իր կիրառության բնագավառը և իր նպատակները. դրանցից յուրաքանչյուրի համար ամեն մեկը լիովին արդարացնում է իրեն: Լեզվի կառուցվածքային վերլուծությունը, օրինակ, լիովին արդարացրել է իրեն իբրև լեզվի համամանակյա, այնպես էլ պատմական ուսումնասիրության բնագավառում: Նա մի մեթոդ է, որը հնարավորություն է տալիս առանց հակասությունների, սպառիչ կերպով վերլուծել լեզվական միավորները և ստանալ օբյեկտիվորեն նշգրիտ արդյունքներ, իսկ սա մեծ նվաճում է լեզվաբանության համար: Այս էլ աճա մեզ դրդել է ժամանակակից հայերենի հոլովման ու խոնարհման կառուցվածքային վերլուծության առաջին փորձը կատարելու: Նկատի ունենալով, որ հայագիտության մեջ առայժմ չկա որևէ ձեռնարկ, որ երիտասարդ մասնագետներին հնարավորություն տար ծանոթանալու լեզվաբանական նոր մեթոդների հիմնական դրույթներին, մենք աշխատությանը կցել ենք մի ներածական գրույթ: Այդտեղ մենք աշխատել ենք շարադրել կառուցվածքային լեզվաբանության հիմնական դրույթները այն չափով, որ չափով դրանք կապվում են մեր ուսումնասիրության նյութի հետ: Ընդհանուր առմամբ մենք աշխատել ենք ներկայացնել լեզվաբանության մեջ արդեն ընդհանուր ճանաչում գտած դրույթները, բայց շատ հարցերում էլ առաջ ենք քաշել մեր տեսակետները, որոնք նոր, մեր իմքնուրույն մոտեցումն են արտահայտում:

Անհրաժեշտ ենք համարում ավելացնել նաև հետևյալը. կառուցվածքային լեզվաբանության արտաքին հատկանիշներից մեկն էլ նորանոր տերմինների առատությունն է և, մանավանդ, ոչ միօրինակությունը, որ անհրաժեշտ է դարձրել առանձին ուղղությունների լեզվաբանական տերմինների բառարանների հրատարակությունը: Թեև մենք աշխատել ենք խուսափել դրանից, բայց և այնպես հարկադրված ենք եղել դարձյալ բազմաթիվ նոր տերմիններ կերտել՝ գոնե ընդհանուր ճանաչում գտած միջազգային տերմիններին համապատասխան: Սա մեր մեղքը չէ, այլ հետևանքը այն բանի, որ մեզ մոտ այս կարգի ուսումնասիրություններ չեն կատարվել հայերեն լեզվով, ուստի մինչև այժմ այդ միջազգային տերմինների համար համապատասխան հայերեն բառեր չեն ստեղծվել:

ՀԵՂԻՆԱԿ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. ԼԵԶՎԻ ԿԻՐԱՐԿՈՒԹՅՈՒՆ, ԿԱՆՈՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Լեզուն, իբրև լեզվաբանական ուսումնասիրության առարկա, կարելի է քննել իր տարբեր վիճակներով ու տարբեր մոտեցումներով։ Լեզվական երևույթների, իրակությունների քննությունը ժամանակի ու տարածության մեջ նրանց շարժման՝ զարգացման գործընթացի տեսանկյունով, լեզվի պատմական՝ տարամանակյա (դիախրոնիկ) ուսումնասիրությունն է։ Լեզվական իրակությունների քննությունը տվյալ ժամանակահատվածում, որպես որոշակի վիճակ, անկախ զարգացման ու փոփոխությունների գործընթացից՝ լեզվի համամանակյա (սինխրոնիկ) ուսումնասիրությունն է։

Որպես հետազոտության առարկա լեզուն թե՛ տարամանակյա և թե՛ համամանակյա քննության համար անմիջականորեն դիտարկելի է իր գործադրության՝ իրական դրսևորման մեջ՝ որպես խոսք։ Բայց խոսքը իրական և մասնավոր դրսևորումն է բառաձևերի և քերականական կանոնների այն ամբողջ հարստության, որ ներկայացնում է լեզուն տվյալ վիճակում, իբրև պատմական զարգացումով ձևավորված և խոսողներից յուրաքանչյուրի մոտ որպես լեզվական կարողություն (պոտենցիա) հաստատված վիճակ։ Յուրաքանչյուր բառ և քերականական կանոն խոսքից դուրս զուրկ է կոնկրետությունից։ Պահարան բառը արտահայտում է պահարան առարկայի հասկացությունն ընդհանրապես և ոչ՝ որևէ առանձին պահարանի, դոյականի –ից վերջավորությունը բացառական հոլովի վերջավորությունն է ընդհանրապես, և ոչ թե այս կամ այն

առանձին բառի խոսքի մեջ դրանք մասնավորվում են. Այս պահ-
րանից մի գիրք վերցրի նախադասության մեջ թե՛ պահարան բա-
որ և թե՛ -ից վերջավորությունը մասնավորված են, նրանք ստացել
են իրական կիրարկություն և դրանով իսկ՝ մասնավորվել։ Այն,
ինչ որ խոսքի մեջ մասնավոր է և կոնկրետ, խոսքից դուրս ընդ-
հանուր է, վերացարկված. նրանք կանոններ կամ կաղապարներ
են, որոնք մասնավորվում են հաղորդակցման ժամանակ։ Լեզվի
ավյալ վիճակի բառային հարստությունը, նոր բառեր կազմելու
միջոցներն ու եղանակները, քերականական օրենքները որոշակի
կանոն են հանդիսանում խոսքի կառուցման համար. արդի հայե-
րենի այդ կանոնը, օրինակ, մեզ թելադրում է, որ կարող ենք
ասել (կամ գրել) պահարանից մի գիրք վերցրի, բայց չենք կա-
րող ասել (կամ գրել) պահարանուց կամ պահարանէ և այլն։ Սա-
կայն այդ կանոններն էլ իրենց հերթին որոշ կոնկրետացում կամ
մասնավորեցում ունեն։ Այսպես, պահարանից հոլովաձևը կազ-
մված է բացառականի -ից վերջավորությամբ, իսկ այգուց՝ -ուց
վերջավորությամբ։ Լեզվական կանոնները մեզ թելադրում են, որ
այսինչ բառերի բացառականը կազմվում է -ից-ով, ուրիշներինը՝
-ուց-ով։ Հաղորդակցման համար այդ երկու երևույթները էական
նշանակություն ունեն, որովհետև միայն դրանք իմանալով կարելի
է ճիշտ խոսք կազմել և խուսափել սխալներից։ Բայց այդ երկու
կանոնները կորցնում են իրենց կարևորությունը, երբ մենք ավելի
բարձր մակարդակի ենք անցնում և դիմում ենք ավելի բարձր վե-
րացարկման։ Այսպես, օրինակ, եթե վերլուծենք դարձյալ բացա-
ռականի կազմությունը ոչ թե առանձին բառերի ու բառախմբերի
բացառականը կազմելու կանոնները որոշելու, այլ առհասարակ
այդ հոլովի կառուցվածքը բացահայտելու համար, այդ դեպքում
կունենայինք միայն մեկ ընդհանուր բանաձև, այն է՝ հիմք+բացա-
ռականի վերջավորություն։ Ինչպես տեսնում ենք, այստեղ առան-
ձին կանոնները կորցնում են իրենց արժեքը, և կարևորություն է
ստանում լոկ այդ կանոնների միջոցով դրսևորվող ընդհանուր կա-
ռուցվածքը։ Այս բոլորը նկատի ունենալով էլ ժամանակակից լեզ-
վաբանությունը լեզուն, որպես ուսումնասիրության առարկա, դի-
տում է երեք մակարդակով՝ խոսքային, կանոնական և կառուց-
վածքային։

Խոսքային մակարդակը լեզվի *իրական դրսևորումն է, լեզվի*
կանոնական մակարդակի կիրարկությունը, որ համառոտությամբ
կոչում են պարզապես խոսք կամ կիրարկություն (ուզուս)։ Այս

մակարդակի առանձնահատկությունները հետևյալներն են. 1) Լեզուն այստեղ ստանում է ֆիզիկապես նյութական դրսևորում. խոսքի միավորները կազմվում են լսելի, տեսանելի կամ շոշափելի նվազագույն միավորներից. 2) Կառուցվածքային և կանոնական մակարդակի ընդհանուր ու վերացարկված երևույթներն ստանում են մասնավորված, կոնկրետ դրսևորում. 3) Անմիջական արտահայտություն են ստանում խոսողի ապրումները, վերաբերմունքը, նույնիսկ անցողիկ, տվյալ պահին հատուկ տրամադրությունները, որոնք իրենց բազմազանությամբ չեն կարող ընդգրկվել կանոնական և մանավանդ կառուցվածքային մակարդակներում. 4) Կարևոր դեր է կատարում ոչ լեզվական կամ արտալեզվական միջոցների օգտագործումը (դեմքի արտահայտություն, ձեռքերի շարժումներ, իրադրությամբ պայմանավորված՝ ինքնին հասկանալի բառերի և նախադասությունների բացթողումներ կամ կրճատումներ և այլն). 5) Լեզվական միավորներն ստանում են անհատական երանգավորում (ձայնի առանձնահատկություններ, արագախոսություն կամ դանդաղախոսություն, ելևէջավորման, հնչյունների արտասանության առանձնահատկություններ և այլն). 6) Խոսքը բացարձակ նույնությամբ կրկնվել չի կարող, այսինքն՝ չի կարելի ասված խոսքը բացարձակ նույն ձայնային, ելևէջային, շարժումնային և այլ հատկանիշներով կրկնել (բնականաբար հաշվի չենք առնում գործիքային գրանցումը), այդ պատճառով էլ սովորաբար ասում են, որ խոսքը անկրկնելի է. 7) Խոսքը լեզվի ներգործուն վերարտադրությունն է, այսինքն՝ խոսելու ժամանակ մարդը ոչ միայն վերարտադրում է այն, ինչ-որ երբևէ լսել կամ կարդացել է և ամբարել իր գիտակցության մեջ իբրև լեզվական հարստություն, այլև լեզվի կանոնական համակարգի գործադրումով ստեղծում է այնպիսի բառեր, բառակապակցություններ, իմաստային երանգավորումներ և այլն, որոնք երբեք չի լսել:

Խոսքի այս առանձնահատկություններից մի քանիսը (3, 4, 5) կապված են անմիջականորեն խոսողի անհատականության հետ, այդ պատճառով էլ հաճախ խոսքը համարում են անհատական երևույթ ի հակադրություն լեզվին (կանոնական և կառուցվածքային մակարդակներին), որ հասարակական է: Այսպիսի բնորոշումը սակայն մեզ համար ընդունելի չէ: Մեր ըմբռնումով, խոսքը այնքանով միայն կարող է լեզվաբանության առարկա լինել, որքանով նա լեզվի դրսևորումն է. թեև խոսքի բացառապես անհատական առանձնահատկությունները ուրիշ տեսակետներից կարող են կա-

րևոր լինել, բայց լեզվաբանության առարկա չեն (օրինակ՝ ձայնի երանգը, ուժգնությունը, արագախոսությունը և այլն, և այլն)։ Այս հարցում մենք միանգամայն համամիտ ենք այն լեզվաբաններին, որոնք գտնում են, որ իր ամբողջ անհատականությամբ հանդերձ խոսքը հասարակական երևույթ է, որքանով որ թե՛ լեզուն և թե՛ հաղորդակցումը՝ որպես հաղորդակցում հասարակության անդամների միջև, հասարակական են։ Լ. Վ. Շչերբան ճիշտ կերպով շեշտում է, որ նույնիսկ անհատի խոսքային գործունեության հոգեբնախոսական կողմը հասարակական բնույթ ունի[1]։

Խոսքի ուսումնասիրությամբ լեզվաբանությունը զբաղվում է տարբեր մոտեցումներով։ Քանի որ կանոնական և կառուցվածքային մակարդակների իրական, դիտարկելի դրսևորումը խոսքն է, ապա, բնականաբար, հենց այդ մակարդակների ուսումնասիրությունն էլ հնարավոր է կատարել միայն խոսքի լեզվաբանական վերլուծությամբ, որի մասին ավելի մանրամասն կխոսվի ստորև։ Այնուհետև՝ խոսքը որպես կանոնական համակարգի արտահայտություն կարելի է ուսումնասիրել ոճաբանության տեսանկյունով և այս դեպքում էլ նա դառնում է լեզվաբանական հատուկ գիտակարգի՝ ոճաբանության առարկա։ Վերջապես, խոսքը, որպես հոգե-բնախոսական գործունեության նյութական արտահայտություն, կարող է քննության առարկա դառնալ հոգեբանական, բնախոսական և ֆիզիկական տեսակետներով։ Այս վերջին մոտեցումով կատարվող ուսումնասիրությունը վերջին ժամանակներում ընդունված է կոչել «անհատական խոսքի լեզվաբանություն», որ իր հերթին բաժանվում է «հաղորդողի խոսքի լեզվաբանություն» և «ընկալողի խոսքի լեզվաբանություն» բաժիններին[2]։ Այսպիսի ուսումնասիրությունն զբաղվում է հաղորդակցման (խոսքի հաղորդման ու ընկալման) իրականացումը պայմանավորող հոգեբանական, բնախոսական և ֆիզիկական գործընթացների (պրոցեսների) լուսաբանությամբ։ Այս երեքից մենք բուն լեզվաբանական ենք համարում բնախոսականը և ֆիզիկականը, որոնք ավելի սովորական անվանումով կոչվում են փորձառական հնչյունաբանություն, որի նպատակն է ճշգրտորեն լուսաբանել խոսքի միավորների արտասանական և ֆիզիկական առանձնահատկություններն ու էությունը։ Հասկանալի է, որ այս կարգի հետազոտությունները կատար-

[1] Л. В. Щерба, О трояком аспекте языковых явлений и об эксперименте в языкознании, ИЯ, I, (1960), стр. 302.

[2] Տե՛ս, օրինակ, Ю. С. Степанов, Основы языкознания, М., 1966, стр. 187—224.

ված են բացառապես անհատների խոսքի փորձառական ուսումնասիրությամբ, բայց այստեղ էլ, նույնիսկ առանձին հնչյունների արտասանական և ֆիզիկական հատկանիշների մեջ, լեզվաբանորեն արժեք ունի միայն հասարակականը[1]:

Կանոնական մակարդակը *կամ պարզապես* **կանոնը** *(նորմա) խոսքային միավորների այն ընդհանուր և վերացարկված լեզվական համակարգն է, որ գոյություն ունի տվյալ լեզվով խոսող հանրության անդամների գիտակցության մեջ: Դա լեզուն է որպես տվյալ հանրության հաղորդակցման միջոց: Այս մակարդակում լեզվական միավորները բնականաբար զուրկ են նյութականությունից այն իմաստով, որ նրանք ինչ-որ ֆիզիկական միավորներ չեն մեր գիտակցության մեջ, այլ դրանց արտացոլումը: Եթե խոսքի մեջ ա, բ, գ և այլն կարող են ֆիզիկապես դիտարկվել ու բնութագրվել, ապա կանոնական համակարգում կան միայն դրանց ընդհանրացված և վերացարկված հասկացությունները: Դրան համապատասխան էլ այստեղ դրանք զրկված են այն իրական, մասնավոր հատկանիշներից, որոնք հատուկ են խոսքի մեջ արտասանվող ա, բ, գ հնչյունների բազմազան դրսևորումներին: Դրանք ա, բ, գ հնչյուններն են ընդհանրապես: Սրանից էլ բխում է այն, որ կանոնական մակարդակի միավորները, ինքնին զուրկ լինելով նյութականությունից, կարող են, այնուամենայնիվ, նկարագրվել թե՛ նյութական և թե՛ վերացական հայեցակետով: Նրանք կարող են նյութական հայեցակետով նկարագրվել, քանի որ անմիջականորեն հարաբերակից են նյութական միավորներին՝ խոսքի հնչյուններին, բառերին, սրանց կապակցություններին, ելևէջավորման և այլն: Վերացական հայեցակետով նրանք կարող են նկարագրվել այն չափով, որ չափով որ լեզվի տարրերի ու կանոնների տվյալ վիճակը ավանդական է, պատմականորեն ձևավորված և պայմանական: Այն, որ արդի գրական հայերենի կանոնական համակարգում*

---

1 *Փորձառական տվյալներից հայտնի է, որ ոչ միայն նույն լեզվով խոսող անհատները, այլև միևնույն անհատը նույն հնչյունը երբեք բացարձակապես նույնությամբ չի արտասանում: Բայց սա լեզվական ոչ մի արժեք չունի: Հայտնի է, որ ամեն մի լեզու ունի իր արտասանական բազան, որ հասարակական բնույթ ունի. հնչյունների փորձառական ուսումնասիրությունը լեզվաբանության համար այնքան արժեք ունի, որքան որ բացահայտում է տվյալ հնչյունի արտասանական և ֆիզիկական հատկանիշները տվյալ արտասանական բազայի մեջ կամ այլ կերպ՝ տվյալ հանրության մոտ, տվյալ ժամանակում և վայրում: Այս տեսակետից փորձառական հնչյունաբանությունն էլ, իբրև լեզվաբանական գիտաճյուղ, զործ ունի հասարակական երևույթի հետ:*

ճիշտ է մարդու և ոչ՝ մարդի, որ է հնչյունն ունի գերազանցապես բաց արտասանություն և ոչ՝ փակ, ուստի այդ արտասանությունն է ճիշտ, արդարանում է միայն լեզվի ավանդականությամբ։

Կառուցվածքային մակարդակը կամ պարզապես կառուցվածքը (սարուկտուրա) կանոնականից ավելի բարձր վերացարկումն է լեզվական համակարգի։ Այստեղ մենք գործ ունենք լեզվի այնպիսի համակարգի հետ, որի միավորները բնութագրվում են ոչ միայն իրենց էությամբ, այլև միմյանց նկատմամբ ունեցած հարաբերություններով։ Օրինակ՝ ժամանակակից հայերենում որոշ դիրքերում (հատկապես ի և յ հնչյուններից առաջ) հաճախ արտասանվում են քմայնացած գ, կ, f, որոնցով ստանում ենք այդ հնչյունների երկուական տարբերակներ՝ գ, կ, f և գ՛, կ՛, f՛։ Հնչյունական այս տարբերակները կանոնական համակարգում արժեք չունեն, որովհետև դրանք պայմանավորված են լոկ արտասանական հանգամանքներով և լեզվի մեջ որևէ դեր չունեն. բացի դրանից, նույն դիրքում (օրինակ՝ յ-ից առաջ) մենք կարող ենք արտասանել և կ՛ և կ (անկ՛յուն, անկյուն), առանց իմաստի որևէ փոփոխություն առաջ բերելու։ Այստեղ մենք ունենք հնչյունի տարբերակներ՝ խոսքային մակարդակում։ Նույնպիսի տարբերակներ ունեն նաև մեր դ, տ, բ հնչյունները, որոնք կանոնական համակարգում ոչ մի կարևորություն չունեն. բայց դրանց զուգահեռ մեր գրական լեզվում կա քմայնացած բ՛ –ություն ածանցի մեջ, որն այժմ ունի կարևոր նշանակություն կանոնական համակարգում. այդ ածանցի մեջ բ հնչյունը ոչ քմայնացած արտասանելը այժմ դիտվում է որպես կոպիտ կամ բարբառային արտասանություն. ավելին՝ այդ քմայնացումն արդեն այնքան ուժեղացել է, որ երիտասարդ սերնդի մոտ հանգել է ց-ի (տեղի է ունեցել պատմական հնչյունափոխություն)։ Ուրեմն, մեր լեզվի կանոնական համակարգում մենք այժմ ունենք բ հնչույթի երկու դիրքային տարբերակները (ենթահնչույթները)՝ բ և բ՛, որոնցից յուրաքանչյուրն ունի իր գործածության որոշակի կանոնը։ Դրան հակառակ, կառուցվածքային համակարգում այդ տարբերակումը կարևորություն չունի, որովհետև նրանց միջև հնչույթային հակադրություն չկա. այստեղ մենք ունենք մեկ բ հնչույթ, որը կարող է խոսքի մեջ իրացվել, դրսևորվել և՛ որպես բ, և՛ որպես բ՛։ Կառուցվածքի և կանոնի տարբերությունը ցայտուն կերպով երևում է հետևյալ օրինակով. հայերենի որոշ խոսվածքներում է և ի ձայնավորներից առաջ կ, գ, f բաղաձայնները դարձել են ճ՛, ջ՛, շ՛. քանի որ այս վերջինները քմայնացած ձույգ են կազմում ճ, ջ, շ-ի

հետ, ապա՝ բնականաբար, կանոնի համակարգում մենք ունենք ճ և ճ՛, ջ և ջ՛, շ և շ՛ զույգերը, որպես միևնույն հնչյունների քմայնացած և ոչ քմայնացած տեսակներ՝ գործածության որոշակի կանոններով։ Կանոնական մակարդակը, սակայն, չի պարզում ճ, ջ, շ հնչյունների տեղն այդ խոսվածքների հնչույթային համակարգում. դրա համար պետք է դիմենք կառուցվածքին։ Արդ, այդ խոսվածքներում ունենք մի կողմից չ՛իր «քույր», չ՛ինի «գինի», չ՛իթ «քիթ», չ՛իչ «քիչ», մյուս կողմից՝ շիր «չոր միրգ, չիր», շին «1. դև, սատանա. 2. բարկություն», շիթ «բամբակե բարակ կտոր» և այլն. բերված օրինակներից երևում է, որ չ՛իր «քույր» և շիր «չոր միրգ», չ՛իթ «քիթ» և շիթ (գործվածքը), չ՛ինի «գինի» և շինի (շին բառի սեռ. հոլովը) հնչույթային հակադրություններ են ներկայացնում, այսինքն՝ այդ զույգերի մեջ չ՛ և շ, չ՛ և չ առաջ են բերում բառիմաստների տարբերակում, մինչդեռ նույն խոսվածքներում չենք գտնում ֆիթ–չ՛իթ, գինի–չ՛ինի հակադրություն։ Նշանակում է, այդ խոսվածքներում չ—չ՛, չ—չ՛, ճ—ճ՛ տարբեր հնչույթներ են, իսկ կ—ճ՛, գ—չ՛, ֆ—շ՛ նույն հնչույթների ենթահնչույթները։

Կանոնի և կառուցվածքի տարբերությունը նաև քերականական համակարգի մեջ ցույց տալու համար դիմենք հետևյալ օրինակին։ Ժամանակակից հայերենում գոյականների ներգոյական հոլովը կազմվում է –ում վերջավորությամբ, որ ավելանում է ուղղականի կամ սեռականի հիմքին (հմմտ. քաղաք-քաղաքում, առու-առվ-ում, այգի-այգ-ում և այլն)։ Կառուցվածքային այս տիպարը այնքան օրինաչափ է, որ մենք իրավացիորեն կարող ենք սպասել ներգոյականի այնպիսի ձևերի, ինչպիսիք են մարդում, եղբորում, Հայկում, ուսանողությունում և այլն։ Կառուցվածքային տեսակետից ոչ մի հանգամանք չի բացառում այդ ձևերի, մանավանդ վերջինի, օրինականությունը, ըստ որում ունենք միությունում, կայսրությունում, մրցությունում և այլ բազմաթիվ գործածական ձևեր։ Եվ չնայած դրան, մեր արդի լեզվի մեջ –ություն ածանցով կազմված բառերի և անձ ցույց տվող հասարակ ու հատուկ անունների ներգոյականի –ում վերջավորությամբ ձևը չի գործածվում. ներգոյականի իմաստն այդ կարգի բառերի համար արտահայտվում է բաղադրյալ կազմությամբ՝ մեջ կապով (մարդու մեջ, եղբոր մեջ, ուսանողության մեջ, Հայկի մեջ և այլն)։ Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, կանոնական մակարդակում դուրս է մղվել կառուցվածքային մակարդակի միանգամայն օրինական կազմությունը և փոխարինվել մի այլ կազմությամբ, ըստ որում այդ կազմությունն էլ,

իհարկե, խորթ չէ մեր լեզվի ձևաբանական կառուցվածքին։ Մյուս կողմից, թեև կանոնական մակարդակում ներգոյականի իմաստի այդ երկու դրսևորումները որոշակիորեն տարբեր երևույթներ են, կառուցվածքի մեջ նրանք միևնույն միավորն են ներկայացնում՝ տարբեր դրսևորումներով։

Ասվածներից հեշտությամբ կարելի է եզրակացնել, որ կառուցվածքը ներկայացնում է այն ամենաբարձր մակարդակը, որի մեջ միավորները բնորոշվում են իրենց ունեցած փոխհարաբերություններով ու դերով։ Այս մակարդակում յուրաքանչյուր իրակություն կարող է դիտվել իբրև ինքնուրույն միավոր այն դեպքում միայն, եթե նա ավյալ մակարդակին հատուկ տարբերակիչ հատկանիշներից առնվազն մեկով հակադրվում է բոլոր մյուս միավորներին։ Կանոնը կառուցվածքի պատմականորեն հաստատված դրսևորումն է լեզվի պատմական զարգացման ավյալ փուլում և ավյալ հաղորդակցական գործունեության մեջ։ Կիրարկությունը կամ խոսքը կանոնի մասնավոր, իրական գործադրություններ է հասարակության անդամների հաղորդակցման գործընթացում։

2. ԼԵԶՎԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԵՎ ՈՃԵՐ

Լեզուն հասարակական հաղորդակցման միջոց է։ Իբրև այդպիսին նա անհրաժեշտորեն ընդհանուր է իրենով խոսող հասարակության անդամների համար և միասնական՝ ամբողջ հասարակության համար։ Այս տեսակետից «համաժողովրդական լեզուն» բոլորովին էլ պատրանք չէ, այլ հասարակական հաղորդակցման անհրաժեշտ պայման։ Բայց այդ ընդհանրությունը՝ պայմանավորված լինելով հասարակական կյանքով, ավյալ լեզվական ընդհանրության առավել կամ պակաս համախմբվածությամբ ու միասնականությամբ, պատմական տարբեր դարաշրջաններում և տարբեր լեզվական հանրույթուններիի մոտ տարբեր աստիճաններ կարող է ունենալ։ Հասարակական հաղորդակցմանը ծառայող ընդհանուր լեզուն կարող է ունենալ իրարից առավել կամ պակաս չափով տարբեր տեղային բարբառներ ու խոսվածքներ, դասակարգային բարբառներ կամ ժարգոններ, մասնագիտական «լեզուներ», գրական և խոսակցական իրարից առավել կամ պակաս չափով տարբերվող դրսևորումներ և այլն։

Այս բոլորի տեսական ուսումնասիրությունը ընդհանուր լեզվաբանության գործն է և, բնականաբար, մեր այս աշխատության սահմաններից դուրս է։ Սակայն յուրաքանչյուր լեզվի ուսումնասիրություն պահանջում է հաշվի առնել այդ երևույթները և դրանց հիման վրա հանգել ճիշտ եզրակացությունների՝ լեզվի կառուցվածքի, կանոնի ու կիրարկության զանազան միավորների բնութագրության մեջ։

Հայոց ազգային լեզուն, պատմական հանգամանքների բերումով, գրական և խոսակցական երկու դրսևորում է ստացել, բաժանվել երկու ճյուղի՝ արևելյան և արևմտյան։ Այս երկու ճյուղերի միջև եղած հնչույթաբանական, բառային ու քերականական տարբերությունները թե՛ կառուցվածքի և թե՛ կանոնի ու կիրարկության մակարդակներում այնքան նշանակալից են, որ առայժմ անկարելի է տալ երկուսի միասնական լեզվաբանական նկարագրություն։ Այդ երկու ճյուղերը ներկայացնում են որոշակիորեն տարբեր համակարգեր, թեև, դրա հետ միաժամանակ, ունեն այնքան ընդհանրություններ, որ կարող են համարվել միևնույն ազգային լեզվի երկու դրսևորումները, և որ կարևոր է, երկու դրսևորումների կրողները լիովին հասկանում են իրար։ Այս երկու գրական լեզուների միջև, բնականաբար, առավել կամ պակաս փոխազդեցություններ եղել են և կան, հատկապես բառակազմի ու դարձվածաբանության ոլորտներում։ Վերջին տասնամյակներում, սփյուռքահայության հետ կապերի ուժեղացման և ներգաղթի հետևանքով այդ փոխազդեցություններն առավել զգալի են դարձել և նպաստավոր դեր են կատարում թե՛ մեկ և թե՛ մյուս ճյուղի մշակման, կատարելագործման ու զարգացման, թերևս նաև նրանց հետագա մերձեցման ու միասնականացման տեսակետից։

Հայոց լեզվի պատմական ճակատագրի առանձնահատկություններից մեկն էլ տեղական բարբառների ու ենթաբարբառների բազմազանությունն է։ Մի փոքրիկ երկիր ու մի բուռ ժողովուրդ՝ և ավելի քան 50 բարբառ։ Եվ ի՞նչ բարբառներ. իրարից այնքան տարբեր, որ հասարակական գործոնը անտես առնելու դեպքում կարելի էր առանձին լեզուներ համարել։ Ագուլիսի, Մեղրու, Արամոյի, Նոր Նախիջևանի և մի շարք այլ բարբառներ այնքան տարբեր են իրարից, որ այդ բարբառներին անծանոթ հայի համար անհասկանալի են։ Բարբառների այս խիստ տարբերություններն են պատճառը, որ հայ բարբառագիտության մեջ հաճախ մեկ բարբառի են հատկացնում այնպիսի խոսվածքներ, որոնք իրենց ա-

ռանձնահատկություններով կարող էին առանձին բարբառներ համարվել. բայց այդ դեպքում մենք ստիպված կլինեինք հայերեն բարբառների թիվը հարյուրների հասցնել։

Բարբառների այս բազմազանությունն ու բազմությունը բնականաբար զգալիորեն անդրադառնում է մեր գրական ու խոսակցական լեզվի միասնականության վրա, արգելք հանդիսանում լեզվի միօրինակացման և առաջ բերում արտասանական, բառային ու քերականական զանազան զուգահեռություններ (հմմտ. բերի-բերեցի, շուրթ-շուրթի և շրթան, բուռ-բռի, բռան, բուռեր և բռներ և այլն, և այլն)։

Մեր գեղարվեստական գրականության լեզուն վերջին հիսնամյակում մշակման բավականաչափ միասնական ընթացք է ունեցել. սակայն, չնայած դրան, այդ լեզուն էլ մի կողմից անհրաժեշտորեն, մյուս կողմից կամայականորեն զրկված է միօրինակությունից։ Անհրաժեշտորեն խախտվում է միօրինակությունը գրական ստեղծագործությունների ոճական տարբերություններով. այստեղ մենք գործ ունենք ոչ միայն առանձին հեղինակային ոճերի, այլև ստեղծագործությունների բնույթով պայմանավորված առանձնահատկությունների հետ։ Այսպես, օրինակ, Դ. Դեմիրճյանի «Վարդանանքի» և Ս. Զորյանի «Պապ թագավորի» մեջ ցայտուն կերպով դրսևորվել են մի կողմից հեղինակային լեզվա-ոճական առանձնահատկությունները, մյուս կողմից՝ պատմական որոշ դարաշրջանի լեզվա-ոճական երանգավորում ստեղծող առանձնահատկությունները։ Ավ. Իսահակյանի «Լիլիթի» լեզուն վարպետորեն երանգավորված է աստվածաշնչական լեզվա-ոճային առանձնահատկություններով (որոշիչ հոդի բացթողում, և շաղկապի՝ Աստվածաշնչին հատուկ գործածություն, նախադասությունների կարճություն և այլն), մինչդեռ Վ. Խեչումյանի «Գիրք լինելության» ստեղծագործության մեջ մեր արդի գրական լեզվի կանոնական մակարդակի շրջանակներում հիանալիորեն ստեղծվել է միջին հայերենի երանգավորում։ Ե. Չարենցի տաղերի և Ավ. Իսահակյանի ժողովրդական երգերի («Մաճկալ ես», «Սիրեցի, չարս տարան», «Է՛յ կանաչ ախպեր...», «Սև-մութ ամպեր ճակտիդ դիզվան» և այլն) մեջ հանճարեղորեն օգտագործված են ժողովրդական-գուսանական երգի լեզվա-ոճական տարրերը, մինչդեռ առաջինի «Ամբոխները խելագարված» և երկրորդի «Աբու-Լալա-Մահարի» ստեղծագործություններին հատուկ է վսեմ լեզվական ձևավորումը։ Վ. Տերյանի և Մ. Մեծարենցի քնարական բանաստեղծությունների գողտ-

րիկ լեզվին հակադրվում է Սիամանթոյի ու Դ. Վարուժանի ստեղծագործությունների հախուռն ու պերճ լեզուն և այլն, և այլն: Այս բոլորից բխում է այն եզրակացությունը, որ թեև գեղարվեստական գրականությունը լեզվի մշակման, կատարելագործման ու կանոնականացման բովն է, բայց հենց այդտեղ էլ կատարյալ միօրինակությունը անհնարին է: Գեղարվեստական գրականության մեջ լեզվա-ոճական տարբերակումները, որպես անխուսափելի, «բնական» տարբերակումներ, պայմանավորված են առաջին հերթին ստեղծագործությունների ժանրային ու թեմատիկ առանձնահատկություններով (արձակ—չափածո, քնարական սիրային—ներբողական, երգիծական—պատմողական և այլն, պատմական-ժամանակակից, գյուղական կյանք—քաղաքային-ընտանեկան կյանք, ռազմական իրադարձություններ—խաղաղ կյանք և այլն, և այլն): Այս կարգի տարբերակումները կարելի է համարել օբյեկտիվ տարբերակումներ: Լեզվա-ոճական տարբերակումների մեջ շատ կարևոր է հեղինակային բնույթի տարբերակումը. ամեն մի հեղինակ ունի իր ուրույն ոճը կամ, ինչպես հաճախ ասում են՝ իր լեզուն: Ըստ որում, հեղինակային լեզվի մեջ էլ՝ տարբերվում են հասարակականը և անհատականը. Հ. Թումանյանի լեզվին հատուկ է էս, էդ, էն դերանվանական ձևերի գործածությունը այս, այդ, այն ձևերի փոխարեն, և դա, ինչպես և այդ կարգի բազմաթիվ իրակություններ կազմում են նրա բանաստեղծական լեզվի առանձնահատկությունները: Բայց դա պետք է դիտել ոչ թե իբրև անհատական, այլ հասարակական երևույթ, որովհետև ներկայացնում է մեր գրական լեզվի մշակման մի որոշակի հոսանք: Րաֆֆին իր երկերում գործածում է մարդիկներ և դրանից կազմված հոգնակի հոլովաձևերը՝ մարդիկ, մարդկանց և մյուս ձևերի փոխարեն, Ս. Զորյանը «Հայոց բերդում» գործածում է մարդեր հոգնակիի ձևը, վ. Տերյանը գործածում է մարդոց հոգնակի սեռականի ձևը (Բյուր մարդոց մեջ, պաղ մարդոց մեջ...) և այլն: Այս բոլոր ձևերը բացառապես անհատական են, թեև այստեղ էլ առաջին երկու դեպքերը կարելի է վերջին հաշվով կապել որոշ լեզվաշինարարական մտայնության հետ (անկանոնությունների վերացում): Հասկանալի է, որ հեղինակային խոսքի առանձնահատկությունների մեջ առաջնակարգ կարևորություն ունի հասարակականը, բայց անհատականն էլ չի կարելի կարևոր չհամարել: Հատկապես բառակազմության և դարձվածաբանության մեջ հեղինակների և առհասարակ քաղաքական ու մշակութային գործիչների նորարարությունները շատ մեծ դեր

են խաղում լեզվի հարստացման մեջ։ Ե. Չարենցն իր ստեղծագործությունների մեջ կերտել է բազմաթիվ բանաստեղծական բառեր, որոնք արդի գրական լեզվում ընդհանուր գործածություն ունեն, Հ. Թումանյանը գործածեց նարեկացու կերտած ծիծաղախիտ բառը, որ հենց Թումանյանի գողտրիկ ստեղծագործության շնորհիվ մեր գրական լեզվի մեջ կենսունակություն ստացավ։

Ֆրանկլին Ռուզվելտը 1933 թ. իբրև պրեզիդենտության թեկնածու արտասանած նախընտրական ճառում գործածեց «նոր կուրս» արտահայտությունը[1] երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի նոր ուղղություն, նոր քաղաքականություն իմաստով, և այդ արտահայտությունը շուտով վերածվեց կայուն բառակապակցության ու գործածվել սկսեց ոչ միայն անգլերենում, այլև աշխարհի բազմաթիվ լեզուներում։ 1936 թ., երբ ֆրանկոյական զորքերը շրջապատել էին Մադրիդը, գեներալներից մեկը ռադիոյով դիմեց Մադրիդի քաղաքացիներին՝ դիմադրությունը դադարեցնելու կոչ անելով և հայտարարեց, որ քաղաքը չորս կողմից օղակված է չորս զորասյունով, իսկ 5-րդ զորասյունը գտնվում է քաղաքի ներսում[2]։ Շուտով «հինգերորդ զորասյուն» կապակցությունը վերածվեց դարձվածքի և ստանալով «ներքին թշնամի, հակառակորդի կողմնակիցներ երկրի ներսում» իմաստը, ընդհանրական գործածություն ունեցավ բոլոր լեզուներում, մանավանդ՝ 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ։ Իհարկե, հեղինակային-անհատական խոսքի մեջ երբեմն լինում են նաև բարբառներից եկող՝ գրական լեզվին խորթ բառեր ու ձևեր, ինչպես և հեղինակների կողմից հորինված սխալ ձևեր, բառակապակցություններ և այլն. Շիրվանզադեն գործածում է գլխարկ հագնել (ռուսերենի բառացի թարգմանությամբ), փոխանակ՝ գլխարկ դնել, Լ. Հուրունցը գրում է թոխմաչար՝ վայրի թթենուց-ի փոխարեն, մորաքույրին՝ մորաքրոջ փոխարեն, Խ. Գյուլնազարյանը՝ կարին ձևի փոխարեն՝ կտրած բարբառային ձևը. Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի թարգմանության մեջ մախաղ բառը վրիպակով տպագրված է մաղախ, որից էլ սկսվել է այդ սխալի տարածումը, և մեր գրողներից շատերը այժմ գործածում են մաղախ սխալ ձևը։ Հասկանալի է,

---

1 «Ես հանդիսավոր կերպով խոստանում եմ ձեզ, խոստանում եմ ինքս ինձ՝ ամերիկյան ժողովրդի համար նոր կուրս գտնել» (Луи де Лонг, Немецкая пятая колонна во второй мировой войне, пер. с английского А. Н. Дьяконова, М., 1958, стр. 43).

2 Луи де Лонг, Цит. соч., стр. 41.

որ անհատական բնույթ կրող այս կարգի իրակութիւնները սովորաբար սահմանափակ են լինում և իբրև ընդհանուր կանոն՝ մերժվում են, թեև չի բացառվում առանձին երևույթների ընդհանրացումը (հմմտ. շերամ՝ շերաս-ից, շագանակ՝ շահդանակ-ից և այլն)։

Գրական լեզուս ասելով հասկանում ենք ոչ միայն գեղարվեստական, այլև մամուլի, գիտա-տեխնիկական գրականութեան ու պետական-պաշտոնական գրագրութեան լեզուն։ Գիտական գրականութեան մեջ իրենց դրսևորումն են գտնում գիտութեան զանազան ճյուղերի առանձնահատկութիւնները, գիտութեան և արվեստի ամեն մի ճյուղի յուրահատուկ տերմինաբանութիւնն ու դարձվածաբանութիւնը։ Պետական-պաշտոնական գործառնութիւնների (операция-ների) մեջ մշակվում են կարգադրութիւնների, հրամանների ու հրամանագրերի, հիմնարկների ու պաշտոնատար անձանց միմյանց դիմելու բանաձևային բնույթ ստացած դարձվածաբանութիւն, արտահայտութիւններ, բառակապակցութիւններ, յուրահատուկ բառեր և այլն, որոնք յուրահատուկ բանաձևային-կանոնական բնույթ են տալիս լեզվին, ստեղծում այսպես կոչված «գրասենյակային լեզու»։ Հայ ժողովուրդը մինչև հեղափոխութիւնը զուրկ է եղել պետականութիւնից, որի հետևանքով էլ «գրասենյակային լեզու», այնպիսին, ինչպիսին, օրինակ, ռուսների մոտ է, չունի, բայց և այնպես, մեկ հիսնամյակի պետական կյանքն ստեղծել է իր որոշ չափով ուրույն ոճը (այսու հայտնում ենք, տրվում է սույնը առ այն, ցնոր կարգադրութիւն, ի տնօրինութիւն, ի գեկավարութիւն, ի կատարումն, ի հայեցողութիւն, գործերը առօրի քերել կամ դցել և այլն, և այլն)։

Այսպիսով, միևնույն ժամանակաշրջանի գրական-ընդհանուր լեզուն ստանում է իր տարբերակումները՝ ժանրային ոճ, թեմատիկ ոճ, հեղինակային ոճ, «գրասենյակային լեզու», մասնագիտական-զբաղմունքային «լեզուներ» («բժիշկների լեզու», «արտիստական լեզու» և այլն), որոնք ընդհանուր անունով կոչվում են ոճեր։ Իբրև ընդհանուր երևույթ, բոլոր ոճերը մնում են կանոնական համակարգի շրջանակներում և հանդիսանում են կանոնի տարբեր դրսևորումները։

Թեև ազգային գրական լեզուն իր հիմնական օրինաչափութիւններով մեր օրերում դարձել է ժողովրդական հոծ զանգվածների սեփականութիւնը, բայց և այնպես առօրյա բանավոր հաղորդակցութեան մեջ գործածվում է այսպես կոչված ժողովրդական-խոսակցական լեզուն։ Նույնիսկ այնպիսի մի վայրում, ինչպիսին է

մեր հանրապետության մայրաքաղաք Երևանը, որ գրական-մշակութային կյանքի կենտրոնն է, սովորական հաղորդակցման մեջ, ոչ հանդիսավոր պայմաններում, կարելի է լսել բարբառախառն, անգամ բարբառային խոսքից մինչև գրական պերճ խոսքը։ Այս հանգամանքը զգալի չափով անդրադառնում է խոսակցական լեզվի միօրինակության վրա, իսկ սրանից էլ՝ թափանցում գրականության լեզվի մեջ։

Վերջապես, լեզուն անընդհատորեն զարգացող ու փոփոխվող երևույթ է և նրա պատմության ո՛ր փուլն էլ դիտելու լինենք, կարող ենք նկատել մի կողմից նոր առաջացող, իսկ մյուս կողմից «մահացող», կանոնից ու կիրարկությունից դուրս եկող երևույթներ։ Բավական է ուշադրությամբ լսել կամ, մանավանդ, կարդալ 70—80-ամյա մի մտավորականի խոսքը, նկատելու համար, որ նրա գործածած շատ բառեր, դարձվածներ և նույնիսկ քերականական ու հնչյունաբանական երևույթներ մեզ համար սովորական չեն կամ անգամ խորթ են։

Դպրոցական դասագրքի ուղղախոսության կանոնները խոսքային տվյալներով ստուգելու, ճշտելու և արդի գրական լեզվի ուղղախոսության կանոնական համակարգը պարզելու նպատակով մենք երկու տարվա ընթացքում գրի ենք առել տարբեր հասակի մարդկանց (դասախոսներ, դրողներ, մամուլի, թատրոնի, ռադիոյի և հեռուստատեսության աշխատողներ, հայոց լեզվի ուսուցիչներ, ուսանողներ) արտասանության տվյալները 20 բառի վերաբերյալ։ Այդ տվյալների ամփոփումը ուշագրավ է ոչ միայն մեր առաջադրած նպատակի, այլև լեզվի փոփոխության, տարբեր սերունդների լեզվի կանոնական համակարգի բնութագրման համար, ուստի և ստորև բերում ենք այդ տվյալները երկու տախտակներով։ Առաջին տախտակում 20 բառի տարբեր արտասանությունները խմբավորել ենք խոսողների ծննդյան թվերի համաձայն՝ ըստ տասնամյակների։ Յուրաքանչյուր սյունակի առաջին թիվը ներկայացնում է տվյալ բառի մեջ եղած բ, գ, դ, ձ, ջ, ղ ձայնեղ արտասանողների թիվը, երկրորդը՝ փ, ֆ, թ, ց, չ, խ արտասանողների թիվը։

Ինչպես երևում է թե՛ առանձին բառերի և թե՛ բոլոր բառերի արտասանությունների գումարից, ավագագույն սերնդի մոտ բացարձակապես գերիշխում է շնչեղացած խուլ արտասանությունը (թաքուհի, կարաք, առաչարկ ևն), իսկ կրտսերագույն սերնդի մոտ, ընդհակառակն, գերիշխողն է ձայնեղ արտասանությունը (թագուհի, կարագ, առաջարկ ևն)։ Ավագագույն սերնդի տվյալնե-

		1890—1900	1901—1910	1911—1920	1921—1930	1931—1940	1941—1950
1	հարդանք, հաթդել (գ—ք)	34—16	38—12	46—4	46—4	49—1	50—
2	նրգ (գ—ք)	—50	—50	—50	—50	—50	2—48
3	թագուհի (դ—բ)	2—48	11—39	28—22	43—7	50—	50—
4	ներքող (բ—փ)	4—46	6—44	12—38	27—23	48—2	50—
5	կարթագ (գ—ք)	5—45	10—40	12—38	24—26	39—11	47—3
6	նրբանցք (բ—փ)	2—48	4—46	3—47	11—39	18—32	20—30
7	Թարդամ (գ—թ)	43—7	42—8	48—2	48—2	49—1	50—
8	Ահմուդ (դ—թ)	44—6	40—10	43—7	46—4	46—4	48—2
9	վրձին (ձ—ց)	—50	—50	2—48	5—45	13—37	15—35
10	համարձակ (ձ—ց)	4—46	8—42	11—39	16—34	26—24	48—2
11	Արձան, Արձանագրել (ձ—ց)	2—48	7—43	12—38	22—28	29—21	47—3
12	Որջ (ջ—չ)	28—22	32—18	41—9	46—4	50—	50—
13	Մեջ (ջ—չ)	—50	—50	—50	2—48	7—43	16—34
14	Միջոց, Միջակ, Միջանցք (ջ—չ)	1—49	3—47	14—36	26—24	39—11	47—3
15	Հաջող, Հաջողակ (ջ—չ)	2—48	4—46	4—46	18—32	29—21	47—3
16	Ընդամենը (դ—թ)	—50	—50	2—48	4—46	17—33	47—3
17	Մզկիտ (դ—խ)	—50	—50	10—40	14—36	22—28	42—8
18	Քաղց (գ—խ)	—50	—50	4—46	9—41	18—32	22—28
19	Հռաջարկ (ջ—չ)	—50	—50	—50	5—45	6—44	12—38
20	Ողջույն (ղջ—խչ)	—50	—50	2—48	7—43	12—38	16—34
		171—829 17%—83%	205—795 20%—79,5%	294—706 29%—71%	419—581 42%—58%	567—433 57%—43%	726—274 73%—27%

քով ունենք ձայնեղ՝ 171, շնչեղացած խուլ՝ 829, տոկոսներով՝ 17-ի և 83-ի հարաբերություն, իսկ կրտսերագույն սերնդի մոտ՝ համապատասխանորեն՝ 726—274, տոկոսներով՝ 73-ի և 27-ի հարաբերություն։ Բառացանկի մեջ մենք դիտավորյալ կերպով մտցրել ենք զերազանցապես այն բառերը, որոնց արտասանությունը անորոշ է (ոմանց համար ճիշտ է ձայնեղը, ոմանց համար՝ շնչեղացած խուլը). մտցրել ենք միայն մեկ բառ (երգ), որի շնչեղացումը կանոնական է, ուստի և 2 հոգու ձայնեղ արտասանությունը անհատական խոսքային շեղում է, և երեք բառ (խարդախ, աճուրդ,

որջ), որոնց ձայնեղ արտասանությունն է կանոնական նույնիսկ ավագագույն սերնդի համար, ըստ որում դրանք զրաբարից կատարված փոխառություններ են, ուստի և այս դեպքում էլ շնչեղ արտասանությունն է անհատական խոսքային շեղում:

Տվյալների մասին պետք է անել հետևյալ ընդհանուր դիտողությունները: 1910—1940 թթ. ծնվածների ճնշող մեծամասնությունն են կազմում Երևանի պետական համալսարանի շրջանավարտները, իսկ 1941—1946 թթ. ծնվածները համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողներ են: Սթե նկատի ունենանք, որ այս ֆակուլտետում հայոց լեզվի դասախոսներն էլ, բացի 2-ից, 1910—1935 թթ. ծնվածներ են և դարձյալ համալսարանի շրջանավարտներ, ընդունենք նաև, որ նրանց արտասանությունը և ուղղախոսության ուսուցումը որոշակի ազդեցություն է թողնում ուսանողների վրա, ապա մեր այս տվյալները, բնականաբար, ընդհանրական ցուցանիշներ չի կարելի համարել, այլ գերազանցապես մեկ միջավայրի արտասանական պատկերը: Շատ հավանական է, որ եթե այդպիսի տվյալներ հավաքվեին Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, պատկերը կարող էր փոխվել: Մեր տվյալների մասին մենք կարող ենք հիշել նաև հետևյալ պերճախոս փաստը. նրանք, որ միջնակարգ դպրոցում հայոց լեզու սովորել են մանկավարժ Սիմակի մոտ, գերազանցապես արտասանում են շնչեղացած խուլեր. սա նշանակում է, թե ուսուցիչը վճռական դեր ունի աշակերտների արտասանությունը այս կամ այն ուղղությամբ միօրինակացնելու գործում:

Երկրորդ կարևոր դիտողությունն այն է, որ հասակային խմբավորումները պայմանական են և, նույնիսկ, ոչ այնքան ճիշտ: Այսպես, 1910 թ. ծնվածը շատ ավելի մոտ է 1911—1912 թթ. ծնվածներին, քան 1901—1902 թթ. ծնվածներին, այդպես էլ 1911—1912 թթ. ծնվածները շատ ավելի մոտ են 1909—1910 թթ. ծնվածներին, քան 1919—1920 թթ. ծնվածներին, բայց 1910 թ. ծնվածներին դասել ենք մեկ խմբում՝ 1901 թ. ծնվածների հետ, իսկ 1911 թ. ծնվածներին՝ 1920 թ. ծնվածների հետ: Այս բանը երևում է նաև տախտակից. իրար հաջորդող խմբերի միջև տարբերությունները համեմատաբար փոքր են. օրինակ՝ ձայնեղ արտասանության աճն ըստ տասնամյակների հետևյալն է. 17%, 20,5%, 29%, 42%, 57%, 73%: Սա նշանակում է, թե հասակային այդ խմբավորումները, առանձին-առանձին, այնքան էլ հաստատուն հիմք չունեն: Այս պայմանականությունից որոշ չափով խուսափելու հա-

մար մենք նույն տվյալները բերում ենք մի այլ տախտակով, որ բաղկացած է երեք բաժնից. ա) 1901—1940 թթ. ծնվածներ, որոնք մեր արդի կյանքում առավել գործուն դեր են կատարում, բ) 1890—1920 թթ. ծնվածներ, որոնք ավագ և ավագագույն սերունդն են ներկայացնում, և գ) 1921—1950 թթ. ծնվածներ, որոնք կրտսեր և կրտսերագույն սերունդն են ներկայացնում։

Տ ա խ տ ա կ 2

		1901—1940		1890—1920		1921—1950	
		Քանակը (ա, ֆ, ո, ս, ր, ք)	Իսկ կշռային տոկոսը	Թվերը	Իսկ կշռային տոկոսը	Թվերը	Իսկ կշռային տոկոսը
1	Հարգանք, Հարգել	179	21	118	32	149	1
2	Երգ	—	200	—	150	2	148
3	Թագուհի	132	68	41	109	143	7
4	Ներքոզ	93	107	22	128	125	25
5	Հարագ	85	115	27	123	110	40
6	Նրբանցք	36	164	9	141	49	101
7	Խարդախ	187	13	133	17	147	3
8	Աճուրդ	175	25	127	23	140	10
9	Վրձին	20	180	2	148	33	117
10	Համարձակ	61	139	23	127	90	60
11	Արձան, Արձանագրել	70	130	21	129	98	52
12	Որջ	169	31	101	49	146	4
13	Մեջ	9	191	—	150	25	125
14	Միջոց, Միջակ, Միջանցք	82	118	18	132	112	38
15	Հաջող, Հաջողակ	55	145	10	140	94	56
16	Ընդամենը	23	177	2	148	68	82
17	Մղկտալ	46	154	10	140	78	72
18	Ջաղց	31	169	4	146	49	101
19	Առաջարկ	11	189	—	150	23	127
20	Ոզնուշն	21	179	2	148	35	115
		1485	2515	670	2330	1716	1284
		37%	63%	28%	78%	57%	43%

Այս տախտակի երկրորդ և երրորդ բաժինները որոշակիորեն ներկայացնում են տարբեր վիճակներ. դրանցից առաջինը (1890—1920) բնորոշվում է փ, f, թ, ց, չ, խ արտասանությամբ, երկրորդը՝

բ, գ, դ, ձ, ջ, ղ արտասանությամբ: Սա ցույց է տալիս մի կողմից այն, որ լեզուն նշված վեց տասնամյակներում ենթարկվել է զգալի փոփոխության, տվյալ դեպքում ուղղախոսության տեսակետից, իսկ մյուս կողմից՝ այն, որ լեզվական փոփոխությունները ներկայացնում են ոչ թե հանկարծական ոստյուններ, այլ աննկատելի աստիճանականություն: Պատմական ուսումնասիրության համար այս տվյալները կարևոր են այն տեսակետից, որ որոշում են լեզվական հին ու նոր վիճակների մոտավոր սահմանը, որ է մոտավորապես 1910-ական թվականների ժամանակաշրջանը: Այս մոտավոր սահմանը համընկնում է նաև մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական իրադարձությունների: Սակայն այստեղ մեզ համար կարևորը պատմական գործընթացը չէ. լեզվի համամանակյա ուսումնասիրությունը դիտում է լեզուն որպես կայուն վիճակ և աչքաթող է անում նրա փոփոխականությունը. այսպիսի մոտեցումը բնականաբար չի հակասում իրականությանը, որովհետև այս դեպքում քննության առարկա է դառնում լեզուն տվյալ ժամանակային սահմանափակ հատվածի համար, որի մեջ, ինչպես ցույց են տալիս տախտակները, փոփոխությունն այնքան աննշան է, որ կարելի է աչքաթող անել, քանի որ դրանք չեն փոխում կանոնական համակարգը: Այսպես, օրինակ, առաջին տախտակի մեջ առաջին երեք տասնամյակների խմբերի միջև տարբերություններ կան, բայց ինչպես երևում է թե՛ առաջին տախտակից և թե՛ երկրորդ տախտակի երկրորդ բաժնից, այդ երեք խմբերի համար կանոնականը փ, f, թ, ց, չ, խ արտասանությունն է: Արդ, քանի որ մեր նպատակն է նկարագրել մեր լեզվի արդի վիճակի կառուցվածքային նկարագրությունը, ապա մեզ անհրաժեշտ է որոշել, թե հիշյալ տախտակներում բերված տվյալներից ո՛րն ենք դիտում իբրև կանոն (նորմա) մեր վերլուծությունների համար: Այս հարցի պատասխանը մեզ տալիս է երկրորդ տախտակի առաջին բաժանմունքը: Այդտեղ ընդգրկված են 1901—1940 թթ. ծնվածները, այսինքն՝ մեր արդի հասարակության առավել գործուն զանգվածը (26—66 տարեկաններ): Ըստ տախտակի տվյալների, նա միջին վիճակն է ներկայացնում հաջորդ երկու բաժանումների համեմատությամբ և, վերջապես, համընկնում է բոլոր վեց տասնամյակների տվյալների միջին թվաբանականը ներկայացնող տոկոսային հարաբերությանը (1890—1950 թթ. բ, գ, դ, ձ, ջ, ղ— 39,75%, փ, f, թ, ց, չ, խ— 60,25%, 1900—1940 թթ. 37%—63%): Ուրեմն, 1900—1940 թթ. ծնվածները և՛ հասարակական կյանքում ունեցած դերով և՛ լեզ-

վական տվյալների միջին դիրքով կարող են դիտվել իբրև արդի լեզվի կանոնական համակարգը կրողներ, որով մինչև 1900 թ. ծնվածների լեզվական առանձնահատկությունները կորակվեն որպես հնաբանություններ (եթե վերը նշված ոճերին չեն պատկանում), իսկ 1940 թ. հետո ծնվածներինը՝ նորաբանություններ:

Նույնպիսի վիճակագրական հաշվումներ կարելի էր կատարել նաև բառապաշարային, բառակազմական, իմաստաբանական և քերականական երևույթների համար: Ըստ որում ամենից ավելի կարևորը կլիներ քերականական երևույթների վիճակագրությունը: Չունենալով այդպիսի հաշվումներ կատարելու համար անհրաժեշտ տվյալներ, մենք մի այլ միջոցի ենք դիմում: Գիտենք, որ լեզվի քերականական կառուցվածքը շատ ավելի դանդաղ է փոփոխությունների ենթարկվում, քան բառային կազմն ու հնչյունական համակարգը: Դա մեզ հնարավորություն է տալիս իբրև ելակետ ընդունել մեր գրական լեզվի տարբեր փուլերը ներկայացնող քերականագիտական ուսումնասիրություններ: Առաջին փուլի համար մենք առնում ենք Մ. Աբեղյանի քերականագիտական աշխատությունները: Մ. Աբեղյանը ծնվել է 1864 թվականին, գիտական գործունեությունն սկսել է 90-ական թվականներին, վախճանվել է 1944 թ.: Նա, ուրեմն, իր ուսումնասիրությունների մեջ և իր գրվածքների շարադրանքի լեզվով ներկայացնում է ավագագույն սերընդի լեզվական կանոնը: Երկրորդ փուլի համար վերցնում ենք Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի տեսությունը» (1939 թ.) և մեր ու Հ. Բարսեղյանի կազմած՝ միջնակարգ դպրոցի 5—7-րդ դասարանների հայոց լեզվի դասագիրքը (1965 թ.): Գ. Սևակը ծնվել է 1904 թ., իսկ մյուս երկուսը՝ ավելի ուշ, հետևաբար երեքն էլ ներկայացնում են 1900—1940 թթ. ծնվածների լեզվական կանոնը: Արդ, Մ. Աբեղյանը իր «Աշխարհաբարի քերականության»[1] մեջ (1906 թ.) խոնարհման բաժնում որպես գրական լեզվին հարազատ ձևեր ընդունում է. ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին, լինիմ են, արգելականի համար՝ մի՛ կարդար, մի՛ գնար, մի՛ խոսիր, մի՛ գրիր են, ենթադրականի ժխտականի համար՝ չեմ գնալ, չեմ գրիլ, չէի գնալ, չէի գրիլ են, պատճառական բայերի անցյալ կատարյալի համար՝ մատուցի, մատուցիր, մատուցեց, մատուցինք, մատուցիք, մատուցին, չ սոսկածանցավոր և կրավորական բայերի անորոշի համար՝ ի լծորդով ձևը (փախչիլ, փրկվիլ են), ինչպես և՝ և սոսկ-

1 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 97—134:

ածանցով և պարզ բայերի համար (մեռնիլ, խոսիլ, ծաղկիլ, խոտվիլ, դադարիլ են), նույն իլ-ով անորոշ դերբայ ունեցող բայերի անցյալ կատարյալի համար՝ ծաղկեցա, ծաղկեցար, ծաղկեցավ, ծաղկեցանք, ծաղկեցաք, ծաղկեցան, ճամարվեցա, ճամարվեցար են, ըղձականի համար՝ ծաղկիմ, ծաղկիս, ծաղկի, ծաղկինք, ծաղկիք, ծաղկին, ճամարվիմ, ճամարվիս են ձևերը. ունեմ, ունես, լինեմ, լինես ձևերը համարում է բարբառային (էջ 126—127), արդելականում և ենթադրականի ժխտականում վերջահանգ լ-ի անկումը համարում է խոսակցական լեզվին հատուկ (էջ 131—132) և այլն, և այլն: Հոլովման մեջ ժամանակ ցույց տվող բառերի տրականի վերջավորության կանոնական ձևն է համարում –վան, որի, ն-ն «հաճախ դուրս է ընկնում, և տեղը գրում են ավելորդ անձայն յ» (էջ 148), ի-ով վերջացող բառերի հոգնակիի համար կանոնական է համարում նաև f վերջավորությունը (էջ 153—154), թեև հոլովման տախտակում դնում է –եր, –ներ և այլն, և այլն: Նույն պատկերն է ներկայացնում նաև «Աշխարհաբարի շարահյուսությունը» (1912):

Գ. Սևակի հիշյալ աշխատության և մեր դասագրքի մեջ չկա իլ լծորդություն, ունիմ, լինիմ ձևերի դիմաց իբրև գրական ձևեր են տրվում ունեմ, լինեմ, արդելականի համար՝ մի՛ խաղա, մի՛ գրիր, ենթադրականի ժխտականի համար՝ չեմ խաղա, չեմ գրի. ծաղկեցա, ճամարվեցա ձևերի դիմաց՝ ծաղկեցի, ճամարվեցի. ծաղկիմ, ճամարվիմ ձևերի դիմաց՝ ծաղկեմ, ճամարվեմ, ժամանակ ցույց տվող բառերի սեռական-տրականի համար ճիշտն է համարվում –վա. f հոգնակերտը համարվում է հնաբանություն և, իբրև այդպիսին՝ անհանձնարարելի և այլն, և այլն:

Քանի որ հիշյալ տվյալները հիմնված են գիտական վերլուծությունների վրա, ապա դրանք վստահելի կռվաններ են: Մ. Աբեղյանը իր տվյալներով ներկայացնում է XIX դարի վերջի և XX-ի սկզբի քերականական կանոնը, մյուսները՝ մեր դարի 20—50-ական թվականների կանոնը: Այստեղ էլ, ուրեմն, սահմանը մոտավորապես նույնն է: Այստեղ, սակայն, պետք է նկատի ունենալ հետեվյալ երկու հանգամանքները:

ա) Արտասանական-ուղղախոսական երևույթները յուրացվում ու ամրանում են խոսողների մոտ մանուկ հասակում և սովորաբար պահպանվում են մինչև կյանքի վերջը: Սա բացատրվում է նրանով, որ որոշ տարիքից սկսած մարդու արտասանական գործառոյթները կորցնում են իրենց ճկունությունը: Կարևոր գործոն է և

այն, որ առանձին հնչյունների այսպես կամ այնպես արտասանելը հաճախ չի խանգարում միմյանց հասկանալուն. այսօր, օրինակ, հաղորդակցման տեսակետից հայի համար ոչ մի էական նշանակություն չունի, թե խոսողը բարդի, միջանցք, առձանագրել և բազմաթիվ այլ բառերում դ, ջ, ձ հնչյունն ե՞րն է լսում, թե՞ թ, չ, ց: Երկու դեպքում էլ հաղորդակցումը անխափան կերպով տեղի է ունենում, և փոխադարձ ըմբռնումը չի տուժում: Սրան նպաստում է այն, որ երկու կարգի արտասանությունները համագոյակից են, և մարդիկ երկուսն էլ շարունակ լսելով, նույնացնում են իրար հետ և միատեսակ լեզվական հակազդեցություն (ռեակցիա) ցուցաբերում: Այդպես չէ այն դեպքերում, երբ տարբեր արտասանությունները անսովոր են և խանգարում են փոխըմբռնմանը: Այս բանը առավել վճռական նշանակություն ունի քերականության մեջ. այստեղ քերականական զուգաձևերը ավելորդ կերպով ծանրաբեռնում են լեզուն: Եթե դա առանձին բառերի է վերաբերում, դեռևս առանձին չարիք չէ. օրինակ՝ ունենք ասել բայի ասացի, ասեցի և ասի ձևերը, և թեև դրանցից այժմ գերակշռություն է ստանում ասեցի-ն, բայց մյուսներն էլ դեռևս գործածվում են և առանձնապես չեն խանգարում հաղորդակցմանը: Սակայն երբ այդ զուգաձևերը որոշ համակարգ են կազմում, այս դեպքում արդեն առաջ է գալիս հաղորդակցման կանոնավոր ընթացքի խանգարում. ենթադրենք, թե մեկը գործածում է ճամարեցի, ծաղկեց, փրկվեց ևն ձևերը, իսկ խոսակցից լսում է դրանց համապատասխան ճամարվեցա, ծաղկեցավ, փրկվեցավ ևն ձևերը. այս դեպքում նա ստիպված է լեզվական հակազդեցությամբ շարունակ այդ ձևերը վերածել իր իմացած առաջին ձևերին, այսինքն՝ կատարել մի բոլորովին ավելորդ աշխատանք: Այս տեսակետից որոշ չափով կարելի է արդարացնել Ա. Մարտինեի «խնայողության սկզբունքը» որպես ուղեկցող գործոն, հիմնականը համարելով լեզվի համակարգային բնույթը: Լեզուն իր զարգացման յուրաքանչյուր փուլում ներկայացնում է մի որոշակի համակարգ. կառուցվածքով իրար բացասող կամ ճակասող զուգաձևերը առաջ են բերում ներքին ճակասություն համակարգի մեջ, ուստի և աննրաժեշտորեն այդ ճակասությունը ստաճաճաբար վերացնում է ճօգուտ միասնական համակարգի: Տվյալ դեպքում, բերված օրինակների համար կարելի է ասել հետևյալը. աշխարհաբարում ներգործական սեռի բառերի կրավորականն ու չեզոքը կազմվում էին, ինչպես և այժմ՝ վ մասնիկով և բաղադրյալ բայաձևերի մեջ ուրիշ ոչ մի ցուցիչ չկար (օր. գրում է, գրվում է,

գրել է, գրվել է, գրելու է, գրվելու է և այլն). այդպես էր նաև ըղձականում, ենթադրականում, հրամայականում և հարկադրականում, և միայն սահմանականի անցյալ կատարյալն էր, որ բացի վ-ից ուներ նաև մի այլ ցուցիչ՝ յուրահատուկ վերջավորություն (ա, ար, ավ, աճ, աf, ան). երկու ցուցիչներից մեկը ավելորդ էր և պետք է վերանար. քանի որ խոնարհման համակարգի մեջ գլխավորն էր վ-ն, ապա վերջավորություններն ավելորդ էին: Դրա օգտին էր գործում նաև մի այլ հանգամանք. -ան, -են ածանցով կազմված բայերը անցյալ կատարյալում ունեին նույն ա, ար, ավ, աճ, աf, ան վերջավորությունները անկախ սեռից. ճեռանալ և մոտենալ չեզոք են, մոռանալ և գիտենալ՝ ներգործական, բայց նրանք խոնարհվում էին միևնույն վերջավորություններով (մոռացա, -ար, -ավ ևն, հեռացա, -ար, -ավ ևն): Այսպիսով խոնարհման համակարգի մեջ կրկնակի հակասություն էր ստեղծվել. մի կողմից՝ կրավորականի ավելորդ ցուցիչ միայն մեկ ժամանակի համար, որ խախտում էր միասնական համակարգը, մյուս կողմից՝ միևնույն վերջավորությունների կրկնակի դեր (և՛ ներգործական, և՛ կրավորական ու չեզոք), որ հանգեցնում էր նրանց չեզոքացման և այդ վերջավորությունները փաստորեն զրկվում էին սեռային ցուցիչի դերից, մնում որպես ավելորդ տարրեր: Եվ որովհետև ամբողջ համակարգի մեջ ժամանակային ու դիմային վերջավորությունները զուրկ էին սեռային ցուցիչի դերից, ապա այդ ա, ար ևն վերջավորությունները, ավելորդ լինելով, հակասություն էին ստեղծում համակարգի մեջ և վերացան:

Այս բացատրությունները կարևոր են խոսողների կողմից լեզվի քերականական կառուցվածքը յուրացնելու և գործադրելու տեսակետից: Ասացինք, որ արտասանությունը յուրացվում է վաղ հասակում և ընդհանուր դծերով պահպանվում ամբողջ կյանքում: Այդպես չէ քերականությունը: Խոսողները, մանավանդ մշակույթի գործիչները, յուրացնում են այն կանոնական վիճակը, որ գոյություն ունի նրանց գրական կամ գիտական գործունեության սկսելու ժամանակ: Այսպես, Մ. Աբեղյանը ծնվել է 1864 թվականին, բայց նա իր գիտական գործունեությունն սկսել է 1890-ական թվականներին և գրել է այդ ժամանակի լեզվական կանոնի համապատասխան, ինչպես և իր քերականական աշխատություններում իբրև կանոնական համակարգ է ընդունել 90-ական թվականների գրական լեզուն: Վ. Տերյանը ծնվել է 1885 թ., Ս. Զորյանը՝ 1890 թ., Ե. Չարենցը՝ 1897 թ., բայց նրանք բոլորն էլ գրել են գրական լեզվի այն կանո-

նական համակարգով, որ գոյություն ուներ 1900—1920-ական թվականներին, և որը հիմնական գծերով նույն է մեր կողմից իբրև հնի և նորի միջինն ընդունված վիճակի հետ:

բ) Խոսողների լեզվական գործունեությունը ներկայացնում է առաջքնթաց շարժում: Այն հանգամանքը, որ տվյալ ժամանակաշրջանում միասնական հասարակական կյանքով ապրում են տարբեր սերունդներ, անհրաժեշտաբար պահանջում է նաև լեզվական միասնություն և ընդհանրություն: Մենք ասացինք արդեն, որ հասակների խմբավորումն ըստ տասնամյակների պայմանական է: Որոշակիորեն տարբերվում են ու զատվում հեռավոր սերունդները, ասենք 10—20 տարեկաններ և 70—80 տարեկաններ, մինչդեռ միջին սերունդներն այնպես շաղկապված են իրար հետ, որ չնայած հասակային տարբերություններին, հասարակական կյանքում միասնաբար են գործում: Այս իրավիճակն առաջ է բերում լեզվի միօրինակության անհրաժեշտություն իրար հետ համագործակցող սերունդների մոտ և տեղի է ունենում լեզվական երևույթների համահարթում, որ մենք կոչում ենք լեզվական համակերպություն (адаптация): Ավագ սերունդը, որ յուրացրել է որոշ լեզվական կանոն և իր լեզվական գործունեությամբ որոշ ուղղությամբ զարգացրել, այդ կանոնը փոխանցում է հաջորդ սերունդին և, բնականաբար, իր անխուսափելի ազդեցությունը թողնում: Նոր սերունդը, յուրացնելով այդ համակարգը, իր հերթին որոշ ուղղությամբ զարգացնում է այն, և հին սերունդը, որ ամենօրյա հաղորդակցական գործունեությամբ կապված է նոր սերնդի հետ, իր հերթին ազդվում է նրանից, յուրացնում նրա ստեղծած նորը, աստիճանաբար հրաժարվում իր յուրացրած, բայց արդեն հնաբանություն դարձած քերականական ձևերից, բառերից և այլն: Այսպիսով, տեղի է ունենում հին սերունդի լեզվական համակերպությունը նոր կանոնին: Օրինակ, ինչպես ասացինք, Մ. Աբեղյանը գրել է 90-ական թվականների լեզվով և իր ուսումնասիրությունների մեջ էլ այդ համակարգն է ընդունել իբրև կանոն (նորմա), սակայն իր հետագա շրջանի աշխատություններում նա արդեն գգալիորեն հրաժարվել է դրանից և գրել գրեթե մեր արդի լեզվով, եթե չհաշվենք որոշ հնաբանություններ: Ս. Զորյանը գրել սկսել է 10-ական թվականներին, և նրա վաղ շրջանի ստեղծագործություններում կարելի է գտնել որոշ քերականական ձևեր, որոնք այն ժամանակ դեռ գործածական էին, բայց իր հետագա ստեղծագործությունների մեջ աստիճանաբար հրաժարվել է դրանցից և նրա ստեղծագործությունների լեզուն

մեր արդի կանոնական համակարգն ունի։ Եվ այսպես՝ լեզվական համակերպությունը կարևոր դեր է խաղում տարբեր սերունդների լեզվական կանոնների միջև եղած տարբերությունները համահարթելու և միօրինակություն ստեղծելու տեսակետից։

Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ մենք այժմ կարող ենք ժամանակագրորեն որոշել լեզվական այն կանոնի սահմանները, որ մենք իբրև մեր վերլուծությունների հիմք պետք է ընդունենք։ Ուղղախոսական տվյալներից մենք այն եզրակացության հանգեցինք, որ միջին վիճակն են ներկայացնում 1900—1940 թթ. ծնվածները։ Եթե ընդունենք, որ մեր քաղաքացիների հասարակական գործուն դերն սկսվում է 18—20 տարեկանից, ապա կստացվի, որ այդ սերունդի լեզվական գործուն դերն էլ սկսվում է քսանական թվականներից։ Հետևաբար, մեր վերլուծությունների համար մենք իբրև կանոն դիտում ենք 20-ական թվականներից հետո գոյություն ունեցող համակարգը։ Այսպիսի սահմանափակումը թելադրվում է նաև նրանով, որ մեր լեզվական զգացողությունն էլ համընկնում է ժամանակի այդ հատվածին։ Այն լեզվական իրակությունները, որոնք դուրս են մնում վերջին քառասնամյակի լեզվական կանոնի համակարգից և չեն կարող կապվել ոչ բարբառների, ոչ էլ ոճերի հետ, բնականաբար դիտվելու են կամ որպես հնաբանություն (օր. ունիմ բայաձևի գործածությունը Ս. Զորյանի ստեղծագործություններում, չի կամենալ, մատնե ևն ձևերի գործածությունը Վ. Տերյանի մոտ), կամ էլ որպես նորաբանություն (օր. ամուսնի, մարդի և նման ձևերի գործածությունը երիտասարդ գրողների ստեղծագործություններում)։

3. ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Կառուցվածքային լեզվաբանության կարևորագույն հասկացություններից մեկը մակարդակի հասկացությունն է։ Լեզվի բաղադրիչները կազմում են իրար հետ փոխադարձաբար կապված ու միմյանցով պայմանավորված համակարգեր։ Այդ բազադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են ենթադասության կամ գերադասության հարաբերության մեջ, կամ, ինչպես ընդունված է ասել՝ կազմում են մակարդակների սառորակարգություն (հիերարխիա), այսինքն՝ տվյալ կարգի միավորները ենթադասվում և ծառայում են հաջորդ, ավելի բարձր կարգի միավորների համակարգին։ Այս իրո-

զուգյունը թույլ է տալիս լեզուն դիտելու որպես միմյանց վրա բարձրացող, միմյանց հաջորդող մակարդակների կառուցվածք: Այսպես, օրինակ, հնչույթային համակարգը ստորադասվում է ձևույթային համակարգին և ծառայում է ձևույթներ կազմելուն, ձևույթային մակարդակը ստորադասվում է բառային մակարդակին և այլն: Լեզվի կառուցվածքի՝ միմյանց ենթադասվող մակարդակների բաժանումը հնարավորություն է տալիս վերլուծել յուրաքանչյուր մակարդակի միավորները իրենց յուրահատուկ դերով և վեր հանել նրանց փոխադարձ հարաբերությունները միմյանց հետ: Այս տեսակետից էլ, ահա, լեզվաբանական վերլուծության համար վճռական նշանակություն ունի այն, թե ինչ մակարդակների են բաժանում լեզուն: Յավոք սրտի ժամանակակից լեզվաբանության մեջ այդ խնդիրը միանշանակ լուծում չի ստացել: Ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ, օրինակ, ըստ էության, ընդունվում է երկու մակարդակ՝ հնչույթային և ձևույթային, և նույնիսկ ասույթի (высказывание) վերլուծությունը հանգում է ձևույթների ու նրանց դասերի որոշման: Այստեղ բոլորովին դուրս է ընկնում բառը որպես լեզվի միավոր, և ոմանց (օր. Զ. Գրինբերգի) փորձերը՝ բառերն ավտոմատիկ կերպով վերլուծելու ուղղությամբ, դեռևս լիակատար հաջողությամբ պսակված չի կարելի համարել:

Նպատակ չունենալով քննության առնել լեզվական մակարդակների մասին եղած տեսությունները, ստորև մենք համառոտակի շարադրում ենք է. Բենվենիստի տեսությունը, որ մեր կարծիքով առավել ընդունելի է, և որի վրա մենք հենվում ենք՝ լեզվական կառուցվածքի մակարդակները որոշելու և բնութագրելու համար:

Լեզվաբանների միջազգային 9-րդ կոնգրեսում կարդացած զեկուցման մեջ[1] է. Բենվենիստն ընդունում է հետևյալ մակարդակները.

1) **Տարույթային (մերիզմատիկ[2]).** *այս մակարդակը ներկայացնում են հնչույթների տարբերակիչ հատկանիշները, որոնք հնչույթը կազմող տարրերի փունջն են կամ դումարը:*

2) **Հնչույթային.** *այս մակարդակը ներկայացնում են հնչույթները, որպես ձևույթների բաղադրիչներ:*

3) **Նշանային.** *այս մակարդակը ներկայացնում են լեզվի*

---

[1] Э. Бенвенист, Уровни лингвистического анализа, НЛ, IV, М., 1965.

[2] *Մերիզմատիկ բառը Բենվենիստը կազմել է հուն.* merismatos *բառից, որ նշանակում է «սահմանազատում, զատորոշում»: Մենք հարմար գտանք հայերեն տերմինն ստեղծել ոչ թե թարգմանությամբ, այլ միավորների բնույթից ելնելով:*

իմաստակիր միավորները, որոնց նա ընդհանուր կերպով տալիս է բառ *անվանումը։*

4) Մառոգայիճ. այս մակարդակն է ներկայացնում նախադասությունը, որի միակ հատկանիշը ստորոգումն է։

*Այս չորս մակարդակներից առաջինը և չորրորդը ներկայացնում են սահմանային կամ վերջնային մակարդակները. նրանք այն սահմաններն են, որոնց միջև գործառում են (*функционируют*) մյուս մակարդակների միավորները։ «Վերին սահմանն է նախադասությունը, որն ունի հոդավորող (կոնստիտուտիվ) միավորներ, բայց որը... չի կարող ոչ մի ուրիշ, ավելի բարձր միավորի բաղադրությիւն (ինտեգրանտը) լինել։ Ստորին սահմանն է տարրությիւն՝ հնչույթի տարբերակիչ հատկանիշը, որն իր մեջ չի պարունակում լեզվին պատկանող ոչ մի բաղկացուցիչ միավոր։ Հետևաբար, նախադասությունը բնորոշվում է միայն իր հոդավորիչ տարրերով, տարրությիւն բնորոշվում է միայն որպես բաղադրությիւն»*[1]*։*

է. Բենվենիստի այս տեսությունն ունի այն առավելությունը, որ որոշակիորեն միմյանցից սահմանազատելով լեզվի տարբեր մակարդակները, վեր է հանում նրանցից ամեն մեկի կառուցվածքային առանձնահատկությունները և բնորոշում յուրաքանչյուրի միավորների բնույթը։ Առանձնապես կարևոր է բառի և նշանակության (կամ իմաստի) «իրավունքների» պաշտպանությիւնը և վերականգնումը լեզվաբանական վերլուծության մեջ։ «Ձևի և իմաստի հարաբերությիւնը շատ լեզվաբաններ ուղեցին հանգեցնել լոկ ձևի հասկացության, բայց նրանց չհաջողվեց ազատվել նրա լծորդից՝ իմաստից։ Ի՞նչ ասես որ չեն արել, որպեսզի իմաստի վրա ուշադրություն չդարձնեն, խուսափեն և ազատվեն նրանից։ Ջո՞ւր փորձեր. նա, մեդուզայի գլխի նման, միշտ լեզվի կենտրոնումն է մնում՝ կախարդելով նրանց, ովքեր դիտում են իրենց»[2]*։*

Այս բոլորով հանդերձ, Բենվենիստի մոտ էլ կա մի այլ դրույթ, որի հետ մենք համաձայնել չենք կարող։ Ընդունելով նշանների համակարգն իբրև մեկ առանձին մակարդակ, նա ըստ էության նույնացնում է բառերը և ձևույթները։ Ահա թե ինչ է ասում նա այդ մասին. «Հնչույթից մենք անցնում ենք նշանի համակարգին, որը կարող է, պայմաններից կախված, հանդես գալ ազատ ձևի կամ կախյալ ձևի (ձևույթների) տեսքով։ Մեր կողմից կատարվող վերլուծու-

---

1 Э. Бенвенист, Цит. соч., стр. 442.

2 *Նույն տեղում, էջ 443։*

թյան հարմարության համար մենք կարող ենք անտեսել այդ տարբերությունը և ընդունել, որ բոլոր նշանները պատկանում են մեկ դասի, որը գործնականորեն համընկնում է բառի հետ։ Եվ թող թույլ տրվի մեզ, նույն հարմարության նկատառումով, պահպանել այդ բազմակիորեն դատապարտված, բայց անփոխարինելի տերմինը»[1]։ *Այս դրույթը կրկնվում է, ավելի որոշակի ձևով, նշանի սահմանման մեջ. «Նշանը,— գրում է Բենվենիստը,— նախադասության (ընդգծումը մերն է—է. Ա.) այնպիսի նվազագույն միավոր է, որը կարելի է ճանաչել իբրև նույնական մի այլ միջավայրում կամ փոխարինել ուրիշ միավորով նույնական միջավայրում»*[2]։ *Սա չի նշանակում, իհարկե, թե նա բոլորովին դեն է նետում ձևույթ հասկացությունը. նա, այնուամենայնիվ, տարբերում է ձևույթները բառերից, առաջինները համարելով կախյալ ձևեր կամ միավորներ, երկրորդները՝ ազատ միավորներ։ Բայց կարևորը այդ չէ, այլ այն, որ նա դրանք հատկացնում է միևնույն մակարդակին և դրանով իսկ նույնացնում ձևույթների ու բառերի կառուցվածքային ու գործառական (ֆունկցիոնալ) հատկանիշները, մինչդեռ դրանք տարբեր մակարդակներ են ներկայացնում։*

*Լեզվի կառուցվածքի մակարդակները բնորոշվում են նրանով, որ տվյալ մակարդակի միավորները հանդես են գալիս հաջորդ, ավելի բարձր մակարդակի մեջ որպես բաղադրույթներ։ Այսպես, օրինակ, տարրույթային մակարդակի միավորները՝ տարրույթները կամ տարբերակիչ հատկանիշները զանազան միացումներով բաղադրում են հնչույթներ, հնչույթները զանազան կապակցություններով բաղադրում են ձևույթներ և այլն։ Հակառակ գծով վերլուծելու դեպքում բարձր մակարդակի միավորների նվազագույն հատույթները (սեգմենտները) հանգում են ստորին մակարդակի միավորներին, ինչպես, օրինակ, **fառակի** կարող ենք բաժանել **fառ** և **ակի** հատույթներին, որոնցից յուրաքանչյուրը մեկ ձևույթ է, **fառ** ձևույթը կարող ենք բաժանել **f**, **ա**, **ռ** հատույթներին, որոնցից յուրաքանչյուրը մեկ հնչույթ է և այլն։*

Արդ, այս հայեցակետով դիտելով ձևույթները և բառերը, տեսնում ենք, որ նրանք որոշակիորեն տարբերվում են միմյանցից։ Կարևորը այստեղ կախյալ կամ ազատ գործառույթունը չէ. մենք դա ձևույթների և բառերի գլխավոր տարբերությունը չենք համա-

---

1 Э. Бенвенист, Цит. соч., *էջ 439 (ընդգծումները հեղինակինն են)։*

2 *Նույն տեղում, էջ 449։*

րում, ըստ որում բառերի մի կարգն էլ՝ այսպես կոչված սպասարկու բառերը (կապեր, շաղկապներ, զանազան կարգի հոդեր ևն), կախյալ գործածություն ունի: Բառերի ու ձևույթների միջև մենք ուրիշ, ավելի կարևոր տարբերություն ենք գտնում: Ինչպես որ տարրույթները բաղադրում են հնչույթը, հնչույթները՝ ձևույթը, այդպես էլ ձևույթները բաղադրում են բառը: Ինչ վերաբերում է բառերին, ապա նրանք միմյանց հետ միանալով կազմում են բառեր (ներառյալ նաև հարադրությունները), ձևույթների հետ միանալով կազմում են բառեր կամ բառաձևեր և, վերջապես, միմյանց հետ կապակցվելով կազմում են նախադասություն: Մի կողմ թողնելով կապակցությունը, առայժմ առնենք միմիայն մեկ հատկությունը. բառերը կարող են հանդես գալ որպես բառի բաղադրույթներ, ձևույթները չեն կարող հանդես գալ որպես ձևույթի բաղադրույթ: Եթե սրան ավելացնենք և այն, որ բառը կարող է դառնալ նախադասության բաղադրույթ, իսկ ձևույթները՝ ոչ, ապա պարզ կլինի, որ այդ երկու կարգի միավորները՝ բառը և ձևույթը, տարբեր մակարդակներ են կազմում: Այսպիսով, հնչույթային մակարդակին անմիջապես հաջորդող բարձր մակարդակն է ձևույթայինը, ինչպես ընդունված է կառուցվածքային լեզվաբանության տարբեր ուղղությունների կողմից, իսկ հաջորդ, ավելի բարձր մակարդակը մենք համարում ենք բառայինը: Այս մակարդակում բառը հանդես է գալիս որպես ինքնուրույն, ձևով ու բովանդակությամբ ավարտված միավոր: Բայց բառը բազմաբնույթ միավոր է, որով և սկզբունքորեն տարբերվում է իրեն ենթադասվող մակարդակների միավորներից: Մի կողմից բառը ինքնուրույն և ինքնակա միավոր է, որ գործառում է իր մակարդակի մեջ՝ բաղադրելով նորանոր բառեր ու կայուն բառակապակցություններ, մյուս կողմից՝ նա ձևաբանական միավոր է, որ բաղադրում է քերականական ձևեր և վերջապես, երրորդ կողմից՝ նա ավելի բարձր մակարդակի միավորի՝ նախադասության անդամ է: Այս հանգամանքը կարծես թե թելադրում է բառային մակարդակը դիտել երեք տարբեր կողմերով և դրան համապատասխան էլ բաժանել երեք տարբեր մակարդակների, բայց իրականում այդպես չէ: Իբրև ինքնակա, ավարտուն միավորներ բառերը կազմում են մեկուսացած մակարդակ և այստեղ ուսումնասիրության այլ նպատակներ են հետապնդվում և վերլուծության այլ եղանակներ գործադրվում: Բառը որպես ձևաբանական միավոր և նախադասության անդամ նույն միավորն է. ձևավորվելով իբրև ձևաբանական միավոր՝ նա դառնում է ավելի բարձր մակարդակի՝ շարահյուսության

միավորի բաղադրությը, որ ավանդական անվանումով կոչվում է նախադասության անդամ։ Սա նշանակում է, թե նախադասության և առհասարակ խոսքի կառուցմանը ծառայում է ձևաբանական կառուցվածքը։ Իհարկե, ձևաբանական միավորները կարող են նախադասություն կազմել շարահյուսական որոշ կանոնների համաձայն, բայց սա չի բացասում ձևաբանական մակարդակի ինքնուրույնությունը։ Չէ՞ որ յուրաքանչյուր ստորին մակարդակի միավոր հաջորդ մակարդակի միավորների բաղադրությ է դառնում այդ մակարդակին հատուկ օրինաչափությունների համաձայն։ Այսպես, տարրությային մակարդակի միավորները՝ տարրությները կամ տարբերակիչ հատկանիշները հնչույթների բաղադրություններ են դառնում տվյալ լեզվի տվյալ պատմական փուլի հնչույթային համակարգի օրինաչափություններին համապատասխան, իսկ սա նշանակում է, թե տարրույթների որոշ համակցություններ (կոմբինացիաներ) կարող են հնարավոր լինել, որոշ համակցություններ՝ անհնարին։ Օրինակ, ժամանակակից հայերենի տարբերակիչ հատկանիշների համակարգում ունենք շնչեղություն տարրույթը, որ կարող է հանդես գալ միայն պայթականության և խլության տարրույթների համակցությամբ։ Այդպես էլ հնչույթները գործառում են ձևույթային մակարդակում՝ այդ մակարդակի կառուցվածքի համապատասխան և այլն, և այլն։

Այսպիսով, բառային մակարդակին զուգահեռ մենք առանձնացնում ենք ձևաբանական մակարդակը, որին անմիջապես հաջորդում է շարահյուսականը։ Այս վերջին մակարդակի միավորն է շարահյուսությը։ Ինչպես վերը ասացինք, Բենվենիստն այս մակարդակը կոչում է ստորոգային, քանի որ նախադասության բնորոշ հատկանիշը ստորոգումն է։ Քանի որ ստորոգումը չի կարող դիտվել որպես միավոր, ապա բնականաբար նա չի էլ կարող ավելի բարձր մակարդակի բաղադրությ լինել։ «Ստորոգային մակարդակը բովանդակում է լեզվական ասույթի միայն մեկ յուրահատուկ ձև՝ նախադասությունը։ Նա չի կազմում տարբերակվող միավորների դաս, դրա համար էլ չի կարող ավելի բարձր մակարդակի միավորի մեջ մտնել որպես բաղադրիչ մաս։ Նախադասությունը կարող է միայն նախորդել որևէ ուրիշ նախադասության կամ հաջորդել նրան, հաջորդականության հարաբերության մեջ գտնվելով նրա հետ։ Նախադասությունների խումբը չի կազմում նախադասության նկատմամբ ավելի բարձր մակարդակի միավոր։ Ստորոգային մա-

կարդակից ավելի բարձր մակարդակ գոյություն չունի»[1]: Այս դատողությունները միանգամայն ճիշտ են, սակայն միակողմանի: Դա բխում է նրանից, որ նախադասությունը դիտվում է որպես միավոր, որի վերլուծությունը հանգում է բառերին: Բայց իրականում այդպես չէ: Ընդունելով հանդերձ, որ նախադասությունը սահմանային միավոր է, և չկա մի ուրիշ լեզվական միավոր, որը ներկայացներ ավելի բարձր մակարդակ, մենք գտնում ենք, ինչպես և շատ լեզվաբաններ, որ նա ներկայացնում է ավարտված ամբողջությունը յուրահատուկ մակարդակի միավորների համակցության: Դա շարահյուսական մակարդակն է: Այս մակարդակում մենք տեսնում ենք բառային մակարդակին հատուկ երևույթի զուգահեռը, բայց ավելի բազմազան ու ծավալուն դրսևորումով: Բառային մակարդակում, ինչպես արդեն ասել ենք, բառը կարող է միանալ բառի կամ ածանցի հետ և կազմել նոր բառ, այստեղ էլ շարահյուսական միավորները՝ կապակցվելով իրար հետ, կազմում են նախադասություն, երկու կամ ավելի նախադասությունները միանալով իրար կազմում են դարձյալ մեկ նախադասություն: Այստեղ էլ, ուրեմն, ինչպես և բառային մակարդակում, ունենք այն առանձնահատկությունը, որ տվյալ մակարդակի միավորները կարող են կազմել հենց այդ մակարդակի միավորներ: Երկրորդ ընդհանրությունը բառի և նախադասության միջև, իմաստային կողմի ընդհանրությունն է. բառն արտահայտում է հասկացություն կամ հասկացության հարաբերակից պատկերացում, նախադասությունն արտահայտում է միտք: Երկու կարգի իմաստներն էլ անսահմանափակ են. չի կարելի սահմանել, թե որքան հասկացություններ ու պատկերացումներ ունի և կարող է ունենալ մարդը իր ճանաչողական գործունեության ընթացքում, ինչպես և չի կարելի սահմանել, թե որքան և ինչպիսի մտքեր կարող է արտահայտել մարդն իր հաղորդակցական գործունեության ընթացքում: Հասկանալի է, իհարկե, որ երբ խոսքը վերաբերում է նախադասության, ապա այստեղ մենք ունենք բացարձակ անսահմանություն (նկատի ունենք կենդանի լեզուն և ոչ թե սահմանափակ գրական հուշարձաններով ավանդված լեզուն), մինչդեռ բառերի նկատմամբ անսահմանությունը հարաբերական է: Տվյալ լեզվի բառերը, այնուամենայնիվ, գոնե մոտավորապես կարելի է գրանցել ու հաշվել, այսինքն՝ հանգեցնել որոշ քանակի, և իրոք յուրաքանչյուր լեզվի բառարան մոտավորապես ընդգրկում է տվյալ լեզվի բառերը իբրև սահմանափակ, վերջավոր քանակ: Բայց այս-

[1] Э. Бенвенист, Цит. соч., стр. 447.

տեղ էլ այդ սահմանափակումը ստույգ չէ. նախ՝ չկա որևէ բառարան, որն ընդգրկի տվյալ լեզվի մեջ գործածվող բոլոր բառերն անխտիր. ինչպես հայտնի է, բառարան կազմելիս բառերի ընտրություն են կատարում, և դուրս են թողնում մասնագիտական տերմինների մի զգալի մասը: Այնուհետև, բառարանային մեկ բառը հաճախ ունենում է բազմաթիվ, երբեմն նույնիսկ տասնյակների հասնող իմաստներ, ուստի և այդ մեկ բառն ունի իր իմաստների քանակին հավասար բառերի արժեք. օրինակ, Ստ. Մալխասյանցի բառարանում գնալ բառին 20 իմաստ է տրված, ՍՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի հրատարակած ռուսաց լեզվի բառարանում ИДТИ բառի դիմաց՝ 25 իմաստ և այլն: Վերջապես, ինչպես բառերը, այնպես էլ նախադասությունները կարելի է վերլուծել ըստ իրենց բաղադրող միավորների, այսինքն՝ գտնել ձևական միավորները, դրանք որոշ դասերի վերածել և դրանց հիման վրա էլ բառերն ու նախադասությունները որոշ կարգերի մեջ խմբավորել, բայց չի կարելի ո՛չ բառիմաստների, ո՛չ էլ նախադասությունների արտահայտած մտքերի այնպիսի համակարգեր սահմանել, ինչպիսիք ունեն հնչույթներն ու ձևույթները: Այս բոլորն, ահա, ծայրահեղորեն դժվարացնում են բառային և շարահյուսական համակարգերի կառուցվածքային վերլուծությունը: Այդ է պատճառը, որ կառուցվածքային լեզվաբանության տարբեր ուղղություններ տարբեր ճանապարհներով շրջանցում են բառն ու նախադասությունը: Ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը, ձգտելով գտնել լեզվական միավորների որոշման օբյեկտիվ չափանիշներ, գործադրում է անմիջական բաղադրիչների վերածման մեթոդը, որ գործադրվում է ինչպես շարահյուսական, այնպես էլ ձևաբանական միավորների նկատմամբ: Դրանով ըստ էության վերանում է այդ երկու կարգի միավորների տարբերությունը: Ուրիշ լեզվաբաններ շարահյուսական վերլուծությունը հանգեցնում են շարույթային վերլուծության (Ռ. Միկուշ), երրորդները միջին ճանապարհ են որոնում դասական շարահյուսության և հիշյալ ուղղությունների միջև[1], և այլն, և այլն: Անշուշտ, շարահյուսական մակարդակի կառուցվածքային վերլուծությունը կապված է մեծ բարդությունների հետ և այստեղ միավորների տարբերակիչ հատկանիշների որոշումն այնպես պարզ չէ, ինչպես, օրինակ, հնչույթաբանության մեջ: Հայտնի բան է, որ համակարգի բազմազանությունն ու բարդությունը անխուսափե-

1 Տե՛ս, օրինակ, Մ. Վ. Պանովի «Ռուսաց լեզու» հոդվածը «Языки народов СССР» հոդվածուի I հատորում (էջ 55—122):

լիորեն աստիճանաբար մեծանում է ստորին մակարդակից դեպի բարձրը գնալով. տարրույթային մակարդակն ավելի պարզ համակարգ է ներկայացնում, քան հնչույթայինը, հնչույթայինը՝ ավելի պարզ, քան ձևույթայինը և այլն: Այս տեսակետից միանգամայն ճիշտ է Է. Ա. Մակաևի հետևյալ դիտողությունը. «Ստորին մակարդակի տարբերությունը բարձրագույններից ոչ միայն այն է, որ ստորին մակարդակների միագիծ միավորներին (այսինքն՝ միայն արտահայտության պլանում տրված միավորներին) հակադրվում են երկկողմանի միավորներ (այսինքն՝ միաժամանակ և՛ արտահայտության պլանում, և՛ բովանդակության պլանում տրված միավորներ), այլև այն, որ ստորին միավորներից դեպի բարձրագույնները գնալով աճում է մակարդակի հոդավորող միավորների քանակը, մեծանում է տվյալ միավորների կառուցվածքային բարդությունը, մեծանում է նրանց հարացուցային ու շարակարգային հարաբերության բարդությունը, աճում է նրանց փոփոխականության աստիճանը»[1]: Շարահյուսական մակարդակն ստորոգայինին նախորդող ամենաբարձր մակարդակն է և համապատասխանորեն ամենաբարդը: Դրանից էլ բխում է նրա կառուցվածքային միավորների որոշման ու վերլուծության դժվարությունը: Սակայն այդ դժվարությունը անհաղթահարելի չէ, և սովետական լեզվաբաններից ոմանք արդեն շոշափելի հաջողության են հասել այդ բնագավառում: Մենք առանձնապես նկատի ունենք Ա. Մ. Մուխինի ուսումնասիրությունները[2], որոնք, մեր կարծիքով, գիտական հաստատուն հիմքերի վրա են կառուցված: Ելնելով այն ճիշտ սկզբունքից, որ շարահյուսական միավորներն էլ պետք է բնորոշվեն լեզվի մեջ իրենց կատարած իմաստազատիչ դերով և բնութագրվեն որոշակի բաշխումային (դիստրիբուտիվ) դերով, նա այդպիսի միավոր է համարում ոչ շարույթը, այլ սինտաֆեման, որ մենք թարգմանում ենք շարահյուսույթ: Մանրամասնությունների մեջ չմտնելով, մենք էլ շարահյուսույթը կդիտենք որպես շարահյուսական մակարդակի միավոր, որ և հանդիսանում է նախադասության բաղադրույթը: Ինչ վերաբերում է նախադասությանը, ապա նա լեզվական կառուց-

---

[1] Э. А. Макаев, Понятие давления системы и иерархия языковых единиц, ВЯ, 1962, № 5, стр. 49.

[2] А. М. Мухин, Функциональные лингвистические единицы и методы структурного анализа языка, ВЯ, 1961, № 1; Понятие нейтрализации и функциональные лингвистические единицы, ВЯ, 1962, № 5; Функциональный анализ синтаксических элементов (на материале древнеанглийского языка), М.—Л., 1964.

վածքի ամենաբարձր միավորն է, որ ունի ճոդավորիչներ (կոնստ-տուենտներ), բայց ինքը բաղադրույթ չէ, որովհետև իրենից ավելի բարձր մակարդակ գոյություն չունի։ Նախադասությունը ավարտուն միավոր է. իբրև այդպիսին նա ներկայացնում է մի ինչ-որ նոր մակարդակ, հենց այն, որ է. Բենվենիստը կոչում է ստորոգային։ Շարահյուսական բոլոր միավորները՝ բոլոր շարահյուսույթները ծառայում են ստորոգային մակարդակի միավորը կառուցելուն, ուստի և նրանք բաղադրույթներն են նախադասության։ Սակայն խոսքը կարող է դրսևորվել ոչ միայն ստորոգում ունեցող նախադասությամբ, այլև առանց ստորոգման, պարզապես բառերի շարահյուսական կապակցությամբ կամ նույնիսկ առանձին բառերով։ Այդ պատճառով էլ մենք ստորոգային մակարդակի միավորը համարում ենք ոչ թե նախադասությունը, այլ ասույթը (высказывание), *որ ընդհանուր անվանում է բոլոր կարգի շարահյուսական կապակցությունների, որպես խոսքի միավորների, համար։*

Այս բոլորը նկատի ունենալով, մենք լեզվի կառուցվածքը բաժանում ենք հետևյալ մակարդակներին.


1. **Տարրույթային**, *որի միավորն է տարրույթը (հնչույթների տարբերակիչ հատկանիշ կամ տարր)։*
2. **Հնչույթային**, *որի միավորն է հնչույթը։*
3. **Ձևույթային**, *որի միավորն է ձևույթը*[1]։
4. **Բառային**, *որի միավորն է բառը։*
5. **Ձևաբանական**, *որի միավորն է բառաձևը։*
6. **Շարահյուսական**, *որի միավորն է շարահյուսույթը։*
7. **Ստորոգային**, *որի միավորն է ասույթը։*

Եթե այս մակարդակները ներկայացնենք ըստ ստորադասության՝ ստորինից դեպի բարձրագույնը, ապա կստանանք հետևյալ պատկերը (տե՛ս էջ 44)։

Ստորոգային մակարդակը լեզվի սահմանային նպատակն է, ամեն ինչ լեզվի մեջ ծառայում է այդ նպատակին։ Սրանից էլ բխում է այն, որ ասույթը խոսքն է։ Խոսքը կարող է բաղկացած լինել մեկ կամ ավելի ասույթներից և նախադասություններից։ Խոսքն, ուրեմն, կարող է բաժանվել ասույթների, բայց միայն այդքան։ Որոշել, թե խոսքը քանի ասույթ կամ նախադասություն է պարունակում իր մեջ, չի նշանակում կատարել խոսքի լեզվաբանական

---

[1] *Ձևույթային, բառային և ձևաբանական մակարդակների մասին ստորև խոսելու ենք առանձին-առանձին և նրանց բնութագրմանն այստեղ չենք անդրադառնում։*



վերլուծություն: Այդ պատճառով էլ ասույթը չի կարելի դիտել որպես խոսքի բաղադրույթ:

Այս յոթ մակարդակները, ինչպես ասել ենք, ընդհանուր չէ բոլոր լեզուներին, կան լեզուներ, որոնց մեջ ձևույթն ու բառը նույնանում են, կան լեզուներ, որոնք զուրկ են ձևաբանական մակարդակից և, վերջապես, կան լեզուներ էլ, որոնց մեջ շարահյուսական մակարդակը նույնանում է ստորոգայինին (այդպես է ներմարմնավորող լեզուներում): Ըստ այսմ, բոլոր լեզուների համար կարելի է ասել հետևյալը. չկա լեզու, որ չունենա հնչույթ, բառ և ասույթ, քանի որ

շատ լեզուների մեջ բառն ու ձևույթը նույնն է, ապա՝ այս դեպքում ավելի հարմար է է. Բենվենիստի նշանային մակարդակ անվանումը: Մյուս կողմից, քանի որ հնչույթները չեն կարող գոյություն ունենալ առանց տարբերակիչ հատկանիշների կամ տարրերի, ապա՝ չկա լեզու, որ չունենա նաև տարրույթային մակարդակ: Ըստ այսմ, է. Բենվենիստի բնութագրած չորս մակարդակները (տարրույթային, հնչույթային, նշանային կամ բառային և ստորոգային), պետք է դիտել որպես համույթներ (универсалии), որոնք իրենց մասնավոր դրսևորումներով, տարբեր լեզուների մեջ կարող են ունենալ նաև միջակա մակարդակներ: Այդպես է, օրինակ, հայերենում և նրա տիպի լեզուներում, որոնց մեջ այդ համույթային (универсальный) մակարդակներին ավելանում են ձևույթայինը, ձևաբանականը և շարահյուսականը:

Որոշելով ու սահմանազատելով լեզվական կառուցվածքի մակարդակները և դիտելով յուրաքանչյուրն իբրև ուրույն համակարգ, պետք է միաժամանակ հիշել, որ դրանք միմյանցից մեկուսացած չեն, այլ, ընդհակառակն, սերտորեն կապված են միմյանց հետ: Մակարդակների փոխադարձ հարաբերակցությունն ամենից առաջ պայմանավորված է հենց նրանով, որ յուրաքանչյուր մակարդակի միավորները հաջորդ, ավելի բարձր մակարդակի միավորների բաղադրույթներն են, կամ հակառակ՝ վայրընթաց գծով դիտելով՝ տվյալ մակարդակին անմիջապես ստորադասվող մակարդակի միավորները իր հոդավորիչներն են: Օրինակ՝ վերընթաց գծով հնչույթները ձևույթային մակարդակի միավորների բաղադրույթներն են, վայրընթաց գծով՝ ձևույթային մակարդակի միավորների հոդավորիչներն են հնչույթները: Սա ինքնին արդեն նշանակում է, թե տվյալ մակարդակի միավորները գործառում են անմիջապես իրեն հաջորդող մակարդակի ոլորտում: Սա սկզբունքային նշանակություն ունի լեզվաբանական վերլուծության համար: Հիրավի, եթե հնչույթների դերն է լեզվի իմաստային միավորներ կազմելը, ապա նրանց ուսումնասիրությունն էլ կարելի է կատարել հենց միայն այդ միավորների շրջանակներում, որովհետև այդտեղ է, որ իրացվում է նրանց լեզվական դերը: Կարելի է բեր բառը բաժանել բ-ե-ր հատույթներին, բայց դա դեռ բավական չէ, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը հնչույթ համարենք. այդպիսի եզրակացության հանգելու համար մենք պետք է պարզենք, թե՝ ա) դրանցից յուրաքանչյուրը կարո՞ղ է փոխարկվել ուրիշ միավորներով, և բ) այդ փոխարկումը տալի՞ս է արդյոք մի նոր ձևույթ: Տվյալ դեպքում մենք բ-ն կարող ենք փոխարկել կ-ով (կեր), դ-ով (դեր), տ-ով

(աեր), ձ-ով (ձեր), թ-ով (թեր), գ-ով (գեր) և այլն, ե-ն կարող ենք փոխարկել ի-ով (բիր), ա-ով (բար), ո-ով (բոր), ը-ն՝ կ-ով (բեկ), մ-ով (բեմ), ն-ով (բեռ), խ-ով (բեխ) և այլն: Այս հանգամանքը առաջ է բերում հաճախ տարբեր մակարդակներին հատուկ երևույթների խաչավորում կամ ներթափանցում: Այսպես՝ հնչույթաբանական երևույթները կարող են ներթափանցել ձևույթային մակարդակի մեջ, ձևաբանական երևույթները՝ բառային մակարդակի մեջ և այլն: Իբրև օրինակ վերցնենք հետևյալ դեպքերը. գիտենք, որ հին հայերենում ոյ երկբարբառը շեշտից զրկվելով՝ դառնում է ու (գոյն>գունաւոր). սա նշանակում է, թե նախաշեշտ վանկերում ոյ չի կարող լինել, որից ստացվում է ու ձայնավորի և ոյ երկբարբառի չեզոքացում նախաշեշտ վանկերում: Այս երևույթը հնչույթաբանական է, բայց նա, քանի որ հանդես է գալիս ձևույթների մեջ, ստանում է նաև ձևույթաբանական արժեք: Այսպես՝ դրա հետևանքով ունենում ենք մի կողմից գոյն, լոյս, թոյն, յոյն և այլն, մյուս կողմից՝ գուն-(աւոր), լուս-(եղէն), թուն-(աւոր), յուն-(ական) և այլն: Պարզ է, որ գոյն–գուն, լոյս–լուս, թոյն–թուն, յոյն–յուն զույգերը միևնույն ձևույթի տարբերակներն են, իսկ սա նշանակում է, թե հնչույթաբանական պատճառներով մենք ստանում ենք նաև տարբեր ձևերի չեզոքացում, կամ այլ կերպ՝ ձևույթների տարբերակների առաջացում: Ուրիշ մակարդակներից իբրև օրինակ առնենք բառայինը. այնպիսի բաղադրություններ, ինչպիսիք են՝ ճոռեղբայր, միութենական և այլն, ներկայացնում են ձևաբանական իրողություններ, որովհետև կազմված են առաջին բաղադրիչի սեռական հոլովից (հոր-եղբայր, միութեան-ական), բայց նաև շարահյուսական, որովհետև ճոռ–եղբայր հատկացուցչի և հատկացյալի կապակցություն է:

Այս բոլորից հետևում է, որ տարբեր մակարդակներին հատուկ երևույթների խաչավորումներն ու ներթափանցումները օրինաչափ երևույթ են, և յուրաքանչյուր մակարդակի ուսումնասիրության ժամանակ պետք է հատուկ ուշադրության առարկա դարձնել դրանք:

Տարբեր մակարդակների փոխադարձ հարաբերակցության կարևորագույն արտահայտություններից մեկն է լեզվական հոդավորող միավորների համասեռությունը: Երբ վերլուծում ենք տարբեր մակարդակների միավորները, ապա տեսնում ենք, որ բոլորն էլ բնորոշվում են որոշ կարգի ընդհանուր բնույթի հատկանիշներով: Այսպես, ընդունված փաստ է, որ բոլոր մակարդակների միավորներին էլ առավել կամ պակաս չափով հատուկ է փոփոխայնու-

թյունը (вариативность), այսինքն՝ այն, որ այս կամ այն միավորը տարբեր պայմաններում կարող է ունենալ իր զանազան տարբերակները։ Այս ցույց է տալիս, որ տարբեր մակարդակների միավորները համասեռ բնույթ ունեն, և նրանց միջև եղած հարաբերությունները էլ միատեսակ են։ Այս էլ, ահա, իր հերթին հանգեցնում է լեզվական միավորների համասեռության (իզոմորֆիզմի) գաղափարին և տարբեր մակարդակների ուսումնասիրության մեջ վերլուծության նույն եղանակների ու մեթոդների, միավորների բնութագրման նույն չափանիշների կիրառելիության դրույթին։ Ժամանակակից հնչույթաբանության հիմնադիրներից մեկը՝ Ն. Ս. Տրուբեցկոյը, դեռևս 30-ական թվականներին գրել է. «Հնչույթաբանությունը, որպես հնչյունական հակադրությունների գործառույթների (ֆունկցիաների) ուսմունք և ձևաբանությունը, որպես ձևական հակադրությունների գործառույթների ուսմունք, ներկայացնում են երկու բնագավառները միևնույն գիտության, որը պետք է հետազոտի լեզվական արժեքայնությունների հակադրությունների գործառույթները, ըստ որում այս գիտության բոլոր բնագավառները կիրառում են հետազոտության միատեսակ մեթոդներ»[1]։ Տրուբեցկոյի այդ դրույթը իր լայն կիրառումը գտավ կառուցվածքային լեզվաբանության տարբեր ուղղությունների մոտ։ Միևնույն մեթոդների կիրառումն ու միավորների միատեսակ հարաբերություններով բնութագրումն էլ, ահա, հիմք դրեցին համասեռության (իզոմորֆիզմի) տեսության։ Մաթեմատիկական այդ տերմինը լեզվաբանության մեջ գործածեց Ե. Կուրիլովիչը[2], իսկ գործածությունն էլ բերեց դրա լեզվաբանական յուրահատուկ ըմբռնումը, որի ամենահաջող սահմանումը, մեր կարծիքով, հետևյալն է. «Համասեռությունը տարբեր մակարդակների հոդավորող լեզվական միավորների կառուցվածքի միատիպությունն է, որի հետևանքն է (կամ կարող է լինել) այդ միավորների միջև գոյություն ունեցող հարաբերությունների միատիպությունը՝ տարբեր մակարդակներում»[3]։ Համասեռության սկզբունքով է պայմանավորված նաև տարբեր մակարդակների միավորների անվանումների զուգահեռությունը (համմտ. հնչույթներ — ձևույթներ, ենթահնչույթներ — ենթաձևույթ-

---

[1] N. Trubetzkoy, Über eine neue Kritik des Phonembegriffes, „Archiv für vergleichende Phonetik", B. d. I, Hf. 3, 1937, S. 151.

[2] J. Kurilowicz, La notion de l'isomorphisme, TCLP, V, 1949.

[3] Э. А. Макаев, К вопросу об изоморфизме, ВЯ, 1961, № 5, стр. 51.

ներ, գերհնչույթներ—գերձևույթներ են = фонемы — морфемы, аллофоны-алломорфы, архифонемы—архиморфемы):

Սա չի նշանակում, իհարկե, թե տարբեր մակարդակների միավորները նույնացվում են իրար կամ բոլոր մակարդակները կարող են ուսումնասիրվել բացարձակապես միևնույն մեթոդով ու մոտեցումով: Ամեն մի մակարդակ ընդհանուր բնույթի հարաբերություններ հետ կարող է ունենալ նաև մասնավոր, միայն իրեն հատուկ հարաբերություններ, որոնք և կպահանջեն յուրահատուկ մեթոդ ու մոտեցում: Այսպես, օրինակ, տարրույթային մակարդակի վերլուծության մեջ կարելի է կիրառել փոխարկումը, բայց չի կարելի՝ հատույթավորումը, շարահյուսական մակարդակում կարելի է կիրառել փոխակերպումը (трансформация), ձևույթային կամ հնչույթային մակարդակում՝ ոչ և այլն:

4. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Լեզվի կառուցվածքային վերլուծությունը զանազան մակարդակների միավորների հայտնաբերման, նրանց հատկանիշների, դերի ու փոխհարաբերությունների բացահայտման նպատակն ունի: Այդ նպատակին հասնելու համար կիրառվում են լեզվաբանական վերլուծության տարբեր մեթոդներ: Ամերիկյան նկարագրական լեզվաբանությունը, որի առաջացումն ու զարգացումը պայմանավորված էր Ամերիկայի հնդկացիական ցեղերի գրից, հետևաբար նաև բառարաններից ու քերականության գրքերից զուրկ լեզուների ուսումնասիրությամբ, կիրառեց բաշխումային (դիստրիբուտիվ) մեթոդը: Տասնամյակների ընթացքում այդ մեթոդը բավականին կատարելագործվեց և, կարելի է ասել, որ կառուցվածքային լեզվաբանության տարբեր ուղղությունների կիրառած մեթոդներից ամենից ավելի մշակվածն է: Այդ մեթոդը ծառայում է լեզվական միավորների օբյեկտիվ բացահայտմանը: Իմանալու համար, թե ինչպիսի կառուցվածքային միավորներ կարելի է գտնել տվյալ լեզվում, դիմում են կոնկրետ ասույթների հատույթավորման: Բաշխում ասելով հասկանում են այն բոլոր միջավայրերը, որոնց մեջ կարող է հանդես գալ տվյալ միավորը կոնկրետ ասույթում: Այս տեղ, ուրեմն, առաջնակարգ նշանակություն է ստանում միջավայր կամ շրջապատ (окружение) հասկացությունը: Մենք, նկատի ունենալով հայերեն այդ տերմինների անհարմարությունը (նրանց

խիստ մասնավորված իմաստը), գործածել ենք ոլորտ բառը, որ և գործածելու ենք սույն աշխատության մեջ։ Ոլորտ ասելով հասկանում ենք միևնույն մակարդակի միավորների համակցությունը, *կամ այլ կերպ՝* ոլորտը ավյալ միավորին նախորդող ու հաջորդող նույն կարգի միավորների ամբողջությունն է։ *Այսպիսով՝ հնչույթի* ոլորտն են կազմում նախորդող ու հաջորդող հնչույթները, *ձևույթի* ոլորտը՝ նախորդող ու հաջորդող ձևույթները, *բառի* ոլորտը՝ նախորդող ու հաջորդող բառերը։ Վերլուծության հիմքն է կազմում խոսքային շղթան։ Վերլուծությունն սկսվում է այն միավորներից, որոնք լսողը կարող է որոշել առանց իմաստին դիմելու կամ, նույնիսկ, առանց հասկանալու։ Ասենք, թե մենք լսում ենք մեկին, որ խոսում է մեզ անծանոթ լեզվով. այս դեպքում ամենից առաջ մենք կարող ենք որոշել երկու սահմանային դադարները. մարդը չէր խոսում, լուռ էր, ապա սկսեց խոսել, և ունեցանք դադարի առաջին սահմանը՝ խոսքի սկիզբը։ Խոսքը վերջացրեց և դարձյալ լռեց. ունեցանք երկրորդ սահմանը՝ խոսքի վերջը։ Այս երկու սահմանների միջև ընկած են խոսքի միավորները, որոնցից, առանց իմաստին դիմելու, առավել հեշտությամբ մեզ համար որոշելի են հնչյունները։ Ուրեմն մենք ամբողջ ասույթը կարող ենք հատվածավորել (сегментировать) հնչյունների։ Պարզելով հնչյունները, մենք կարող ենք բազմաթիվ ասույթների վերլուծությամբ որոշել, թե այդ հնչյուններից ո՛րը ի՛նչ ոլորտում է հանդես գալիս, այսինքն՝ որոշել յուրաքանչյուրի բաշխումը։ Դրա հիման վրա մենք կարող ենք նաև որոշել, թե մեր լսած ու գրանցած հնչյունները ինչպես են խմբավորվում, ինչպիսի հարաբերության մեջ են գտնվում միմյանց հետ։ Այդ վերլուծությամբ ստացած բազմաթիվ հնչյունները մենք կարող ենք միատեսակ ոլորտների գրանցումով հանգեցնել հնչույթների. օրինակ՝ ասույթի հատվածավորումով մենք ստացել ենք կ, գ, բ, դ և այլ նվազագույն հատվածներ։ Դրանց բաշխումը պարզելով, մենք տեսնում ենք, որ դրանք փոխադարձաբար միմյանց փոխարինելով միևնույն միջավայրում, առաջ են բերում տարբեր ձևույթներ, ասենք՝ կեր, գեր, բեր, դեր։ Սա նշանակում է, որ մեր ստացած հատվածներից յուրաքանչյուրը մեկ հնչույթ է։ Հայտնաբերելով բոլոր հնչույթները և պարզելով նրանց բաշխումը, պարզում ենք նաև յուրաքանչյուրի հնարավոր համակցությունները (կոմբինացիանները) մյուս հնչույթների հետ։ Այնուհետև անցնում ենք ավելի մեծ միավորների՝ ձևույթների հայտնաբերմանը. ասույթների վերլուծությունից մենք տեսնում ենք, որ բեր հնչույթների խումբը կարող

է հանդես գալ գիրք, ճաց, դանակ, գլխարկ և նման հնչույթակապակցությունների հետ (գիրք՝ հաց՝ դանակ՝ գլխարկ բե՛ր), մինչդեռ դեր-ը չի կարող. իր հերթին էլ դեր-ը կարող է հանդես գալ կատարել, խաղալ, հաճելի և նման հնչույթակապակցությունների հետ (դեր կատարել՝ խաղալ, հաճելի դեր և այլն), իսկ բեր-ը չի կարող: Սա ցույց է տալիս, որ մենք ունենք տարբեր դասերի պատկանող ձևույթներ: Այս եղանակով շարունակելով վերլուծությունը, մենք կարող ենք հայտնաբերել բոլոր ձևույթները, խմբավորել նրանք ըստ տարբեր դասերի, ապա՝ դասերն էլ միավորել ավելի մեծ կարգերի մեջ և այլն: Այսպիսով, բաշխումային մեթոդը իրական ասույթների հատույթավորումով ձգտում է պարզել յուրաքանչյուր հատույթի գործառության ոլորտները, նրա հարաբերությունները մյուս՝ նույն կարգի հատույթների հետ և դրանց հիման վրա որոշել յուրաքանչյուր մակարդակի միավորները:

Այս մեթոդը թեև, ինչպես ասացինք, առավել մշակվածն է, բայց խիստ քննադատության է ենթարկվում շատ հիմնավոր պատճառներով: Ամենից ավելի քննադատելին է այն, որ վերլուծության ժամանակ ամբողջ ուշադրությունը բևեռվում է հատույթների վրա, առանց իմաստին անդրադառնալու: Բայց այս մոտեցումը իրեն չի արդարացնում և շատ հաճախ, ուզած չուզած, հարկ է լինում դիմել իմաստին: Այսպես, ենթադրենք, թե բազմաթիվ ասույթների մեջ մենք հայտնաբերել ենք կ և կ՛ հնչյունները, որոնք հանդիպում են միևնույն ոլորտներում (օր. կիր և կ՛իր, կեր և կ՛եր, անկյուն և անկ՛յուն, հարկ և հարկ՛, մեկ և մեկ՛ և այլն): Այսպիսի դեպքերում, եթե դատենք բաշխման սկզբունքով, ապա կհանգենք թյուր եզրակացության. քանի որ կ և կ՛ փոխադարձաբար միմյանց փոխարինող հնչյուններ են, այսինքն՝ հանդես են գալիս բոլորովին միևնույն կապակցություններում, մենք պետք է դրանք տարբեր հընչույթներ համարենք: Միայն իմաստի հաշվառումն է, որ մեզ կազատի այդ թյուրիմացությունից. հենց որ իմանանք, որ կ և կ՛ արտասանությունը չի փոխում իմաստը, որ կեր և կե՛ր, մեկ և մեկ՛ և այլն, նույն իմաստն ունեն, մենք այլևս դրանք սխալ կերպով հնչույթներ չենք համարի, այլ մեկ հնչույթի արտասանական տարբերակները: Այդպես էլ՝ ձևույթների համար:

Այնուհետև. լեզվաբանությունը դիտություն է լեզվի մասին, իսկ լեզուն ուսումնասիրելու համար անհրաժեշտ նախապայման է նրա իմացումը: Իհարկե, կան դեպքեր, երբ գիտնականն ստիպված է գործ ունենալ անծանոթ լեզվի հետ, ասենք թե՝ վերծանելու

անհայտ լեզվով մեզ հասած արձանագրությունը։ Այս դեպքում կիրառելի են այն բոլոր մեթոդները, որոնք որևէ չափով կարող են օգնել խնդրի լուծմանը։ Բայց լեզվաբանությունն, իբրև գիտություն, անծանոթ լեզուների վերծանման գիտությունը չէ, այլ մարդկային լեզվի գիտությունը. նրա առաջնակարգ խնդիրն է լեզուների ուսումնասիրությունը՝ իմացված ու գիտակցված տվյալների հիման վրա։ Ասենք, թե մենք ուսումնասիրում ենք հայերենը, և ունենք հետևյալ երկու ասույթները. կոլտնտեսությունը ամբարել է բավականաչափ կեր։ Աղո՛տ, հայց կե՛ր։ Երկու ասույթների մեջ էլ ունենք կեր հնչույթակապակցությունը, և լեզվաբանը պետք է որոշի, թե դրանք նույն ձևո՞ւյթը կամ բա՞ռն են, թե տարբեր ձևույթներ կամ բառեր։ Կարիք կա՞, արդյոք, դրա համար մոռանալու դրանցից յուրաքանչյուրի իմաստը, և բազմաթիվ ուրիշ ասույթների (անասունների կեր, կանաչ կեր, սննդարար կեր ևն, միրգ կե՛ր, այս մի կտոր ձմերուկն էլ կե՛ր ևն) վերլուծությանը դիմել, երբ հենց այդ ասույթներից գիտենք, որ առաջինում ունենք կեր գոյականը, երկրորդում՝ ուտել պակասավոր բայի հրամայականի եզակի 2-րդ դեմքի ձևը։ Այս տեսակետից մենք միանգամայն համամիտ ենք Ա. Մարտինեին, որ այդ մեթոդի մասին գրում է. «Իրականում ոչ մի լեզվաբան չի համարձակվի վերլուծել և նկարագրել մի լեզու, որից նա ոչինչ չի հասկանում։ Ամենայն հավանականությամբ, այդպիսի ձեռնարկումը, եթե նա կենսագործվեր, կպահանջեր ժամանակի ու ջանքերի այնպիսի վատնում, որ հետազոտության այդօրինակ մեթոդներից կհրաժարվեին նույնիսկ նրանք, ովքեր դրանք համարում են տեսականորեն միակ ընդունելին»[1]։ Սա չի նշանակում, իհարկե, թե մենք բոլորովին հրաժարվում ենք բաշխումային մեթոդից։ Անշուշտ, այդ մեթոդը մենք կիրառելի համարում ենք շատ դեպքերում, բայց գտնում ենք, որ այդ կարգի վերլուծությունը պետք է հենվի իմաստի վրա։

Ժամանակակից լեզվաբանության մեջ աստիճանաբար ավելի ու ավելի մեծ տարածում է ստանում հատույթավորման (սեգմենտացիայի) և փոխարկման (սուբստիտուցիայի) մեթոդը։ Հատույթավորումը տրված լեզվական իրակության (ասույթի, նախադասության, բառի ևն) վերածումը՝ բաժանումն է հոդավորող միավորների. օրինակ՝ տուն բառը հատույթավորել, նշանակում է այն

[1] André Martinet, Éléments de linguistique générale, II éd., Paris, 1961, p. 40 (*ռուս. թարգմ.* I *հրատարակության*, ՀԼ, III, M., 1936, *էջ 398*)։

վերածել ա, ու, և միավորներին։ Փոխարկումը տրված լեզվական իրակությյան (ասույթի, նախադասության, բառի են) հոդավորող միավորների փոխարինումն է նույն կարգին պատկանող ուրիշ միավորներով, օրինակ՝ առուն բառի ա հատույթը կարող ենք փոխարինել f-ով (քուն), բ-ով (բուն), u-ով (սուն) և այլն, գնացի բայաձևի ի հատույթը կարող ենք փոխարկել իր, իմ, իf հատույթներով և այլն։ Այս երկու մեթոդներն, ինչպես տեսնում ենք, սերտորեն կապված են միմյանց հետ, բայց դա չի նշանակում, թե նրանք հավասարապես կիրառելի են բոլոր կարգի միավորների համար։ Այսպես, օրինակ, ձևույթները կարող են և՛ հատույթավորվել, և՛ փոխարկվել, նույնպես և՝ հնչույթները՝ ձևույթների կազմում, մինչդեռ տարրույթները կարող են փոխարկվել, բայց չեն կարող հատույթավորվել, որովհետև նրանք իբրև լեզվաբանական միավորներ կարող են գոյություն ունենալ միայն միմյանց հետ համակցված. մենք կարող ենք բ-ի ձայնեղությունը փոխարկել խլությամբ և կստանանք պ, կարող ենք թ-ի շնչեղությունը փոխարկել ձայնեղությամբ և կստանանք դ, բայց ձայնեղությունը, շնչեղությունը, խլությունը և այլն չեն կարող իրենք իրենց գործածել։ Հնչույթի տարբերակիչ «հատկանիշներից ոչ մեկը չի կարող իրացվել ինքնին, հնչյունական արտասանությունից դուրս, որի մեջ նա դրսևորվում է։ Նրանց միջև չի կարելի հաստատել շարակարգային շարք... Բայց և այնպես նրանցից յուրաքանչյուրի համար հնարավոր է փոխարկումը։ Պայթականությունը կարող է փոխարկվել շփականությամբ, ատամնայնությունը՝ շրթնայնությամբ, շնչեղությունը՝ լեզվայնությամբ և այլն։ ...Այն բանի հետևանքով, որ տարբերակիչ հատկանիշները չեն հատույթավորվում, նրանք չեն կարող կազմել շարակարգային դասեր, բայց քանի որ կարող են փոխարկման ենթարկվել, կազմում են հարացուցային դասեր»[1]։ Ընդհանրապես պետք է ասել, որ հատույթավորման ենթարկվում են շարակարգային դասերը, իսկ փոխարկման՝ հարացուցային դասերը։ Հետևաբար, այն մակարդակները, որոնք կազմում են և՛ հարացուցային, և՛ շարակարգային դասեր, կարող են ենթարկվել և՛ հատույթավորման, և՛ փոխարկման, նրանք, որ կազմում են միայն շարակարգային դասեր, կարող են ենթարկվել միայն հատույթավորման, և, վերջապես, նրանք, որ կազմում են միայն հարացուցային դասեր, կարող են ենթարկվել միայն փո-

[1] Э. Бенвенист, Цит. соч., стр. 436.

խարկման։ Այս տեսակետից տարրույթային մակարդակին հակադրվում է ստորոգային մակարդակը։ Ինչպես ասացինք, այս մակարդակի միավորն է ասույթը, որ ունի հոդավորիչներ, բայց ինքը այլ միավորի բաղադրույթ չէ։ Խոսքը կարելի է բաժանել նախադասույթյունների, որոնք միմյանց նկատմամբ հաջորդականության որոշ հարաբերության մեջ են, բայց խոսքը չի կարելի դիտել որպես հարացույց (պարադիգմա), ուստի և նախադասույթյունը, որպես մի ամբողջական միավոր, կարող է հատույթավորվել, իսկ փոխարկվել չի կարող, մինչդեռ նախադասույթյունը կազմող տարրերը կարող են և՛ հատույթավորվել, և՛ փոխարկվել։

Ինչպես ասացինք, հատույթավորումը մեզ հնարավորություն է տալիս հայտնաբերելու տվյալ մակարդակի միավորների հոդավորիչները, բայց դա դեռ չի որոշում, թե այդ հոդավորիչներից որն է արժութային (ռելևանտ), որը՝ ոչ։ Այդ բանը որոշվում է փոխարկումով։ Ըստ որում տվյալ մակարդակի միավորների արժութայնությունը (релевантность) որոշելու համար կիրառվում են հետևյալ սկզբունքները։

Ամեն մի մակարդակ ստորադասվում է իրեն անմիջապես հաջորդող բարձր մակարդակին, և, համապատասխանորեն, առաջին միավորները կարող են բաղադրույթ լինել միայն երկրորդի միավորների համար։ Սրանից հետևում է այն, որ տվյալ մակարդակի միավորների արժութայնությունը կարելի է որոշել միայն անմիջականորեն գերադասվող մակարդակում ունեցած գործառույթյամբ, բայց ոչ՝ միջնորդաբար գերադասվող մակարդակներում ունեցած գործառույթյամբ։ Այսպես, օրինակ, ժամանակակից հայերենում ունենք /է/ հնչույթը, որ կարող է հանդես գալ հաջորդող բոլոր մակարդակներում. ձևույթաբանական մակարդակում մեկ ձևույթ է (էական, էություն, անէ, է ևն բառերի արմատը), բառային մակարդակում նա բառ է (է «էություն, գոյություն, էակ» իմաստով), ձևաբանական մակարդակում ինքնուրույն բառաձև է (էական և օժանդակ բայի սահմ. ներկայի եզ. 3-րդ դեմք), շարահյուսական մակարդակում՝ նախադասույթյան ինքնուրույն անդամ (օր. լսարանում հինգ հոգի է=կա)։ Արդ, եթե մենք ուզում ենք որոշել, թե արդյոք ժամանակակից հայերենում է հնչյունը հնչո՞ւյթ է, թե ոչ, ապա պետք է դիմենք միայն ձևույթային մակարդակին, քանի որ ավելի բարձր մակարդակներին դիմելիս մենք գործ կունենանք այնպիսի միավորների հետ, որոնք իրենց կազմում կարող են ունենալ բազմաթիվ հնչույթներ և, որ գլխավորն է, իմաստազատիչ հակադրություններ կարող

են կազմել ոչ թե հնչույթները, այլ բոլորովին այլ կարգի միավորներ. շարահյուսական մակարդակում՝ շարահյուսությունների բաղադրիչները, ձևաբանական մակարդակում՝ ձևորդները, բառային մակարդակում՝ հիմույթները, որոնց մասին կխոսվի ստորև։ Այսպիսով, միայն ձևույթներն են այն միավորները, որոնց մեջ հնչույթները առաջ են բերում իմաստազատիչ հակադրություններ։

Տվյալ մակարդակի միավորների կազմում եղած հոդավորիչների փոխարկման մեթոդը հնարավորություն է տալիս հայտնաբերելու երկու կարգի հոդավորիչներ՝ փոխադարձաբար միմյանց փոխարինող և փոխադարձաբար միմյանց բացառող։ Փոխադարձաբար միմյանց փոխարինող հատույթներն էլ կարող են լինել երկու տեսակ՝ իմաստազատիչ հակադրություն ստեղծող և իմաստազատիչ հակադրություն չստեղծող։ Այսպես, օրինակ, տար ձևույթը կարող ենք հատույթավորել տ, ա, ր հատույթներին և փոխարկումով պարզել, որ ր հատույթը կարող է փոխարինվել ռ-ով (տառ), որով կունենանք երկու տարբեր ձևույթներ՝ տար և տառ. քանի որ ր և ռ հատույթները, միմյանց փոխարինելով, առաջ են բերում իմաստային հակադրություն և դրանով իսկ կատարում իմաստազատիչ դեր, ապա նրանք արժույթներ են (տվյալ դեպքում՝ հնչույթներ)։ Վերցնենք մի ուրիշ օրինակ. ինչպես ասել ենք, թ-ն ուժգնացող երկհընչյուններից առաջ սովորաբար արտասանվում է թ (ց արտասանությունն առայժմ անտեսում ենք). դրա հետևանքով մենք կարող ենք խոսքի մեջ միևնույն բառում և միևնույն դիրքում լսել մերթ թ, մերթ՝ թ՛, ասենք՝ գրություն և գրութ՛յուն. ինչպես տեսնում ենք, այս դեպքում էլ թ և թ՛ ազատորեն միմյանց փոխարինում են. այդպես մենք կարող ենք նաև խաչություն, հերոսություն, խաղցրություն և բազմաթիվ այլ բառերի թ հատույթը փոխարկել թ՛-ով (քաջութ՛յուն, հերոսութ՛յուն, քաղցրութ՛յուն), բայց հենց այդ փոխարկումները մեզ ցույց կտան, որ թ-ն և թ՛-ն չեն ստեղծում իմաստային հակադրություններ. բոլոր դեպքերում էլ մենք կունենք նույն –ություն ածանցը։ Սրանից հետևում է այն, որ այստեղ մենք ունենք ոչ թե երկու ինքնուրույն արժույթներ, այլ մեկ արժույթի երկու դրսևորումները կամ տարբերակները։

Վերջապես, փոխադարձաբար իրար բացառող միավորները իրև կանոն կապվում են կառուցվածքի տարբեր ոլորտների կամ պայմանների հետ. իրար փոխադարձաբար բացառող հատույթներից մեկը կարող է լինել տվյալ ոլորտում, մյուսը՝ մի այլ ոլորտում. օրինակ, գրաբարում ի և յ միմյանց բացառող հնչյուններ են. ի-ն

հանդես է գալիս՝ բառասկզբում բաղաձայնից առաջ (ինձ), բառավերջում՝ բաղաձայնից (այդ թվում և՝ յ-ից) հետո (այգի, գնայի), բառամիջում՝ երկու բաղաձայնի կամ բաղաձայնի և այլ վանկ կազմող ձայնավորի միջև (գին, միակ), յ-ն հանդես է գալիս՝ բառասկզբում ձայնավորից առաջ (յատակ), բառավերջում՝ ձայնավորից հետո (շղթայ), բառամիջում՝ երկու ձայնավորների կամ ձայնավորի ու բաղաձայնի միջև (գոյություն, հայր), այլ կերպ ասած՝ ի-ն հանդես է գալիս ձայնավորական ոլորտում, իսկ յ-ն՝ ձայնորդային ոլորտում (երկբարբառի բաղադրիչ կամ բաղաձայն)։ Քանի որ այս հնչյունները միևնույն ոլորտում չեն կարող հանդես գալ և, հետևաբար, չեն կարող ստեղծել իմաստազատիչ հակադրություններ, ապա՝ նրանք միևնույն արժույթի տարբեր դրսևորումներն են կամ տարբերակները[1]։ Այս բոլորից պետք է եզրակացնել, որ՝ 1) փոխադարձաբար միմյանց փոխարինող և իմաստազատիչ հակադրություններ ստեղծող միավորները արժույթներ են (տարբերակիչ հատկանիշ, հնչույթ, ձևույթ են). 2) փոխադարձաբար իրար փոխարինող, բայց իմաստազատիչ հակադրություններ չստեղծող միավորները միևնույն արժույթի տարբերակներն են. 3) փոխադարձաբար իրար բացառող միավորները միևնույն արժույթների տարբերակներն են։

Ինչպես տեսնում ենք, 2-րդ և 3-րդ կետերում ունենք արժույթների տարբերակներ, բայց դրանք միևնույն երևույթը չեն ներկայացնում, ո՛չ էլ միևնույն միավորները։ Երկրորդ կետում նկատի առնված միավորները (թ, թ՛) ազատորեն փոխարինում են իրար միևնույն, բայց միայն մեկ դիրքում, այն էլ միայն հնչյունական մակարդակում, և նույնիսկ հնչյունաբանական տեսակետից էլ այդ երկուսը արտասանական տարբերակներ են. նշանակում է, դրանք կարող ենք դիտել իբրև թ հնչույթի երկու հնարավոր հնչյունական իրացումները յու, յա երկհնչյուններից առաջ։ Ինչ վերաբերում է 3-րդ կետում նկատի առնված միավորներին, ապա նրանք պատկանում են կառուցվածքի մակարդակին. հնչյունական մակարդակում ունենք (գրաբարի համար) երեք իրար մոտ, բայց տարբեր հնչյուններ՝ ձայնավոր, կիսաձայն, բաղաձայն. դրանց հարաբերակցությունը բնորոշվում է ոչ միայն նրանով, որ հնչյունական տեսակետից իրար շատ մոտ են, այլև գլխավորապես նրանով, որ մեկը կա-

1 Միմյանց փոխադարձաբար բացառող միավորները կարող են նաև այլ կարգի հարաբերություններ մեջ լինել, բայց այստեղ մանրամասնություններ մեջ չենք մտնում և խոսում ենք միայն ամենաընդհանուր իրողությունների մասին։

րոզ է վերածվել մյուսին, այսինքն՝ ի-ն կարող է դառնալ յ կիսաձայն (երկբարբառի բաղադրիչ), յ-ն՝ բաղաձայն. Օրինակ՝ ի բանէ, (ի—բաղաձայնից առաջ), յամէ (յ բաղաձայն՝ ձայնավորից առաջ), շղթայ (յ բաղաձայն՝ ձայնավորից հետո), շղթայի (յ կիսաձայն՝ ձայնավորի և բաղաձայնի միջև) և այլն: Այս փոխանցումները թույլ են տալիս մերձեցնելու այդ հնչյուններն իրար և դիտելու դրանք որպես կառուցվածքի այնպիսի միավորներ, որոնք ներկայացնում են միևնույն հնչույթը, բայց տարբեր ոլորտներում: Այս դեպքում, ուրեմն, մենք ունենք միևնույն հնչույթի ենթահնչույթները:

Միավորների հատուկվածության, փոխարկման և արժեքավորման այս սկզբունքով էլ, ահա, առաջնորդվելու ենք մենք մեր վերլուծություններում:

5. ՉԵՋՈՔԱՅՈՒՄ

Հնչույթաբանության, որպես լեզվաբանական գիտակարգի, ձևավորումն ու զարգացումը իրավամբ համարում են դարագլուխ կազմող հեղաշրջում լեզվաբանության մեջ: Այսպիսի գնահատումը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ հնչույթաբանությունը հնարավորություն տվեց ճիշտ կերպով տարբերակելու խոսքային ու լեզվական միավորները և հենց դրանով իսկ ճշգրիտ կերպով լուսաբանելու խոսքայինի ու լեզվայինի փոխադարձ կապն ու հարաբերությունը, այլև նրանով, որ հիմք հանդիսացավ նաև լեզվի մյուս մակարդակների միավորների վերլուծության մեջ նույն կարգի մեթոդների կիրառման: Մենք արդեն տեսանք, որ լեզվի կառուցվածքային միավորների համասեռությունը հնարավորություն է տալիս միևնույն մեթոդները կիրառելու տարբեր մակարդակներում և միևնույն հասկացությունները տարածելու տարբեր մակարդակներում տեղի ունեցող երևույթների վրա: Այդպիսի հասկացություններից մեկն է, ահա, իմաստազատիչ հակադրությունների չեզոքացման սկզբունքը, որ մշակվեց Ն. Տրուբեցկոյի, ապա և ուրիշների կողմից[1], և որ բացարձակ ճանաչում է գտել ժամանակակից լեզվաբանության մեջ:

Հնչույթաբանության մեջ չեզոքացում ասելով հասկանում են երկու իրար մերձավոր կամ «ցեղակից» հնչույթների իմաստազա-

[1] N. Trubetzkoy, Die Aufhebung der phonologishen Gegensätze, TCLP, VI (1936); Н. С. Трубецкой, Основы фонологии, М., 1960; A. Martinet, Neutralisation et archiphonème, TCLP, VI (1936).

տիչ հակադրության վերացումը, որ պայմանավորված կարող է լինել զանազան հանգամանքներով։ Այսպես, օրինակ, ռուսերենում բաղաձայնները միմյանց հակադրվում են, ի թիվս այլ հատկանիշների, նաև ձայնեղություն-խլություն հատկանիշով, սակայն բառավերջում այդ հակադրությունը վերանում է, որովհետև այդ դիրքում հավասարապես կարող են հանդես գալ և՛ ձայնեղներ, և՛ խուլեր միևնույն ձևույթի մեջ. օրինակ՝ из *նախադրությունը կարող է արտասանվել* из (из города) *և* ис (из клуба), лук *«սոխ» կարող է արտասանվել և՛* лук (лук крупный), *և՛* луг (лук зеленый), луг *«մարգագետին» կարող է դարձյալ արտասանվել և՛* лук (луг покрыт снегом), *և՛* луг (луг белеет снежным покровом). *սրա հետևանքով ձայնեղություն-խլություն տարբերակիչ հատկանիշը, որ այլ դիրքերում (օր. բառասկզբում) իմաստազատիչ հակադրություն է ստեղծում, բառավերջում զրկվում է այդ դերից, ուստի և չեզոքանում է։ Հին հայերենում ն-ից առաջ լինում էր միայն* n, *իսկ մ-ից առաջ՝* r *(օր. առն, արմատ), որով և* n—r *հակադրությունը վերանում էր ռնգայինից առաջ. բառասկզբում կարող էր լինել* n, *իսկ* r՝ *ոչ, որի հետևանքով բառասկզբում նույնպես* n—r *հակադրությունը վերանում էր։ Ժամանակակից հայերենում նույնպես բառասկզբում ունենք* n. *միայն մեկ բառ կա, որ սկսվում է* r-*ով (րոպե). փոխառյալ բառերի սկզբում էլ այլ լեզուների* r-*ն դարձնում ենք* n *(ռեկտոր, ռադիո ևն)։ Այս կարգի բառերում հաճախ արտասանում են* r, *ավելի ճիշտ՝* n-*ի և* r-*ի միջինը ներկայացնող մի հնչյուն, որ ավելի մոտ է բ-ին (րեկտոր, բադիո), սակայն դա չի ազդում իմաստի վրա։ Քանի որ բառասկիզբը բացառված դիրք է* r-*ի համար, ապա տեղի է ունենում* n—r *հակադրության չեզոքացում, և* n *կամ* r *արտասանությունը իմաստազատիչ դեր չի կատարում։*

Չեզոքացման երևույթը իր հետ բերում է հնչույթաբանական մի նոր հասկացություն՝ գերհնչույթի հասկացությունը։ Քանի որ տվյալ դիրքում երկու մերձավոր հնչույթները դադարում են իմաստազատիչ դեր կատարելուց, ապա գործառական տեսակետից վերանում է նրանց տարբերակիչ հատկանիշը, և տվյալ դիրքում երևան է գալիս մի հնչույթ, որ ունի երկուսի միայն ընդհանուր հատկանիշները. օրինակ՝ n *և* r *հնչույթների փոխարեն բառասկզբում մենք ունենք* рр*-ուն, որի համար կարևոր չէ մենաթրթիռ կամ բազմաթրթիռ լինելը, քանի որ «որպես իրական (արժութային) են մնում միայն այն հատկանիշները, որոնք ընդհանուր են հակադրության*

երկու անդամների համար»[1]: Այստեղից էլ, ահա, գերհնչույթի (արխիֆոնեմայի) ըմբռնումը. Գերհնչույթը «երկու հնչույթներին ընդհանուր հատկանիշների ամբողջությունն է»[2]:

Իմաստազատիչ հակադրությունների չեզոքացման սկզբունքն ու դրա հետ կապված ըմբռնումները շատ արգասավոր եղան լեզվի կառուցվածքի նաև մյուս մակարդակների ուսումնասիրության համար: Պարզվեց, որ մյուս մակարդակների միավորների իմաստազատիչ ու գործառական հակադրություններն էլ կարող են չեզոքանալ, և հետևաբար, ձևույթային մակարդակում էլ կարող ենք ունենալ գերձևույթ (արխիմորֆեմա), շարահյուսական մակարդակում՝ գերշարահյուսույթ և այլն: Այս բանը գործնականորեն ցույց տալու համար վերցնենք հետևյալ օրինակները:

1. Ձևաբանական մակարդակում ունենք ածականների համեմատության աստիճանները (գեղեցիկ, չանասեր — ավելի գեղեցիկ, ավելի չանասեր — ամենագեղեցիկ (գեղեցկագույն), ամենաչանասեր), որոնք կազմվում են զրո–ավելի–ամենա– կամ –գույն ձևորդներով: Հարաբերական ածականները (օրինակ՝ մետաղյա, ջրային) չունեն բաղդատական և գերադրական աստիճան, այդպես են նաև որակական ածականներից նրանք, որոնք արտահայտում են բացարձակ հատկանիշ, այսինքն՝ այնպիսի հատկանիշ, որը չի կարող տարբեր աստիճաններով և չափերով դրսևորվել. օրինակ՝ մերկ, ամուրի, այրի, բոբիկ են: Նշանակում է, ձևույթների եռանդամ հակադրությունն ըստ համեմատության աստիճանների, այս կարգի ածականների համար չեզոքանում է:

2. Շարահյուսական մակարդակում ունենք գոյականների որոշյալ և անորոշ առումները, որի ցուցիչներն են որոշիչ հոդը և մի անորոշը կամ զրո (հմմտ. ծառը — մի ծառ կամ ծառ), սակայն բացառական, գործիական և ներգոյական հոլովները, ժամանակակից գրական լեզվի կանոնի համաձայն, որոշիչ հոդ չեն ստանում (կարելի է ասել՝ մի մարդուց, բայց կանոնական չէ՝ այն մարդուցը, նույնպես և՝ մի ֆաղաֆում, բայց՝ մեր ֆաղաֆում են): Այսպիսի դեպքերում հակադրությունը չեզոքանում է, եթե անորոշն ու որոշյալը հավասարապես հանդես են գալիս առանց հոդի, և չի չեզոքանում, եթե անորոշը ստանում է մի: Բայց այս դեպքում հակադրության նշութավորված անդամն է դառնում անորոշ առումը:

---

1 Н. С. Трубецкой, Основы фонологии, стр. 87.

2 Նույն տեղում:

Բերված օրինակները բավական են ցույց տալու համար, որ չեզոքացումը հատուկ է ոչ միայն հնչույթաբանական, այլև մյուս մակարդակներին, ըստ որում, ինչպես որ միավորների արժութայնությունն է որոշվում անմիջապես գերադասվող մակարդակում, այդպես էլ՝ չեզոքացումն է: Ըստ այսմ, ստորոգային մակարդակի միավորների չեզոքացման մասին խոսք լինել չի կարող, որովհետև ավելի բարձր մակարդակ չկա: Այս բոլորին պետք է ավելացնել, սակայն, որ որքան ավելի բարձր մակարդակի ենք դիմում, այնքան ավելի բազմաբնույթ, ծավալուն ու բարդ պատկեր են ներկայացնում չեզոքացումները: Այս է պատճառը, որ ձևույթների, քերականական ձևերի ու շարահյուսույթների իմաստազատիչ ու գործառական հակադրությունների չեզոքացման տեսությունը առայժմ այնպես մըշակված ու ավարտուն համակարգ չի ներկայացնում, ինչպիսին ունենք հնչույթաբանության մեջ: Բարդություններից կարելի է հիշել, օրինակ, համանունության և չեզոքացման փոխհարաբերության խնդիրը: Հայտնի է, որ շատ հաճախ ձևականորեն նույնական ձևույթով արտահայտվում են տարբեր իմաստներ, որով ստեղծվում է բառերի ու բառաձևերի համանունություն: Օրինակ՝ Իր գործում աշխի ընկած մարդ, մեքենան անխափան է գործում, գնացքի շարժում կապակցություններում մենք գործում, (է) գործում, շարժում բառաձևերը, որոնք կազմված են -ում միաձև ձևույթով, որոնցից մեկը ներգոյականի վերջավորությունն է, մյուսը՝ շարունակական դերբայի վերջավորությունը, երրորդը՝ գոյականակերտ ածանց: Տվյալ դեպքում մենք ունենք ձևույթների համանունություն. հարց է ծագում. կարելի՞ է, արդյոք, ասել, թե այստեղ ունենք ում ածանցով կազմված գոյականների, ներգոյականի և շարունակական դերբայի ձևաբանական չեզոքացում: Բնականաբար՝ ոչ: Այսպիսի պատասխանի համար բավականաչափ հիմքեր կան, որոնցից կարևորագույնները հետևյալներն են: Ինչպես հնչույթների իմաստազատիչ հակադրության չեզոքացումը հանդես է գալիս ձևույթային մակարդակում (անմիջականորեն գերադաս մակարդակում), այնպես էլ ձևույթների իմաստազատիչ հակադրության չեզոքացումը կարող է հանդես գալ իրեն անմիջապես գերադասվող մակարդակում (բառային և ձևաբանական), իսկ ձևաբանական միավորներինը՝ շարահյուսականում: Արդ, երեք բառաձևերից մեկը (շարժում) պատկանում է բառային մակարդակին, մյուսները՝ ձևաբանական, ուրեմն առաջինի և երկրորդների չեզոքացման մասին խոսք լինել չի կարող, քանի որ չեզոքացման կարող են ենթարկվել միևնույն մակարդակի միավորնե-

րը։ Մյուս երկուսից գործում (ներգ.), գործում (դերբ.) առաջինը կազմում է գոյականի հոլովաձև, երկրորդը՝ բայի դերբայական ձև. հնչույթաբանության մեջ չեզոքանալ կարող են այնպիսի հնչույթները, որոնք մերձավոր զույգեր են կազմում և, հետևաբար, հակադրություն են կազմում մեկ տարբերակիչ հատկանիշով։ Հիշյալ երկու ձևույթները, որոնք ունեն միևնույն -ում ձևը, մերձավոր զույգ չեն կազմում և իրար հակադրվում են իմաստային ու գործառական բազմաթիվ հատկանիշներով. այսպես՝ ներգոյականի ձևույթն ունի գոյականով արտահայտվող տեղի և ժամանակի իմաստ, դերբայական ձևույթը՝ գործողության կերպի իմաստ, առաջինը կարող է գործառել անվանական հիմքերի հետ, երկրորդը՝ բայական, առաջինը կարող է զուգորդվել թվի կարգի հետ (գործերում), երկրորդը զուրկ է թվի կարգից, առաջինը կարող է փոխարկվել ից, ով ձևույթներով, երկրորդը՝ ոչ և այլն։ Այս բոլորը՝ միայն ձևաբանական մակարդակում. բայց մենք կարող ենք դիմել նաև դրանցով կազմված ձևաբանական միավորների գործառությանը շարահյուսական մակարդակում և այստեղ էլ կգտնենք բազմաթիվ հատկանիշներ, որոնցով նրանք բոլորովին սահմանազատվում են միմյանցից։ Այսպիսով, այստեղ մենք ունենք համանուն ձևույթներ, և ինչպես որ բառային մակարդակում նույն ձևն ունեցող, բայց տարբեր իմաստներով բառերը (օր. մարտ «պատերազմ», մարտ «տարվա 3-րդ ամսվա անունը») տարբեր բառեր են, այնպես էլ այստեղ նույն ձևով, բայց տարբեր իմաստներ ու տարբեր գործառություններ ունեցող ձևույթները տարբեր ձևույթներ են։ Ուստի և ներգոյականի ու դերբայական -ում ձևով ձևույթների չեզոքացում չունենք, այլ համանունություն։

Ավելի դժվար լուծելի է այնպիսի ձևույթների ու ձևերի հարցը, ինչպիսիք են, օրինակ, խոսակցական լեզվի բեր (=բերեցի) և բեր (ըղձ. եղ. եզ. 3-րդ դ.), ուր ունենք և՛ ձևույթների, և՛ բայաձևերի ձևական նույնություն, գր (ըղձ. եղ. եզ. 3-րդ դ.), գր (ժխտման դերբայ) և գրեցի (սհմ. անց. կտր. 1-ին դ.), որոնց մեջ ունենք ի ձևույթի և առաջին երկու ձևերի նույնություն. որոշ բարբառների խոնարհման համակարգում մճաք, գճաք են ձևերը՝ համապատասխան հոգն. 1-ին և 2-րդ դեմքերի համար և այլն։ Արդյոք այս դեպքերում էլ համանունությո՞ւն ունենք, թե՞ չեզոքացում։ Այստեղ էլ անհրաժեշտ է որոշ սկզբունքների վրա հիմնված վերլուծություն՝ յուրաքանչյուրի համար։ Հնչույթաբանությունից գիտենք, որ չեզոքացումը կապված է դիրքի կամ ոլորտի (=միջավայրի)

հետ։ Դա նշանակում է, թե երկու հնչույթներ, որոնք որոշ ոլորտներում իմաստազատիչ հակադրություններ են ստեղծում, ինչ-ինչ ոլորտներում այդպիսի հակադրություն չեն ստեղծում, կամ այն պատճառով, որ զույգի մի անդամը տվյալ ոլորտում չի կարող լինել, մյուսը կարող է. (օր. հայերեն n—r հնչույթները բառասկզբում և ռնգայիններից առաջ), կամ երկուսն էլ հավասարապես կարող են լինել առանց իմաստային հակադրություն ստեղծելու (օր. ռուսերենի ձայնեղները և խուլերը բառավերջում), կամ երկուսից ոչ մեկը չի լինում, այլ դրանց փոխարեն հանդես է գալիս մի նոր հնչյուն, որ նման է չեզոքացող հնչույթներին (ռուսերենի շեշտյալ a և o հնչույթներին անշեշտ վանկում փոխարինող ə (=ը) հնչյունը) և այլն։ Նույն պայմաններն է ենթադրում չեզոքացումը նաև մյուս մակարդակներում։ Եթե մենք ընդունենք, որ բեր (=բերեցի) և բերի (ըղձ. եզ. 3-րդ դ.) չեզոքացման դիրք կամ ոլորտ են ի (անցյալի եզ. 1-ին դեմքի վերջավորություն) և ի (ըղձ. եզ. 3-րդ դեմքի վերջավորություն) ձևույթների համար, ապա՝ պետք է ամենից առաջ հաստատենք, որ այդ երկու ձևույթները մերձավոր (ցեղակից) զույգ են կազմում, և որ դրանք հանդես են գալիս միևնույն ոլորտում։ Արդ, նրանց հատկանիշներից ընդհանուր են՝ ա) երկուսն էլ բայաձևի բաղադրույթներ են, այսինքն՝ նրանց գործառության ոլորտն է բայական հիմքը, որով հակադրվում են, օրինակ, սեռական հոլովի ի վերջավորության, որի ոլորտն է անվանական հիմքը. բ) երկուսն էլ միևնույն թվային կարգն են արտահայտում, այսինքն՝ երկուսն էլ եզակի են։ Հատկանիշներից տարբեր են՝ ա) մեկը առաջին դեմքի ցուցիչն է, մյուսը՝ երրորդ. բ) մեկը ներկայի ժամանակային հարաբերության է արտահայտում, մյուսը՝ անցյալ։ Այս բոլորը վերաբերում են իմաստներին. բայց կարող ենք նաև գործառական տարբերություններ գտնել. այսպես՝ ա) մեկի ոլորտն է ներկայի հիմքը, մյուսինը՝ անցյալի հիմքը, բ) մեկը կարող է հարացուցային շարքում կապակցվել ես, մյուսը՝ նա դերանվան հետ։ Այսպիսով՝ երկու ի ձևույթները չեզոքանալ չեն կարող. այս բանում հեշտությամբ կարելի է համոզվել, հենց որ մենք վերցնենք այնպիսի բայեր, որոնց ներկայի և անցյալի հիմքերը տարբեր են (օր. գրել-գրի-գրեցի, գործել-գործի-գործեցի են)։ Դուրս է գալիս, որ ի համանուն ձևույթները սովորաբար համանուն բայաձևեր չեն կազմում և, հետևաբար, բերի համանուն բայաձևերն ստացվում են այլ պատճառով, այն է՝ հիմքերի չեզոքացումով։ Հիրավի, ել խոնարհման անցյալի հիմքը հակադրվում է ներկայի հիմքին ց հիմքակազմիչով, բայց կան բա-

յեր, որոնք խոսակցական լեզվում, անցյալի հիմքի ցոյական ձև չունեն, այսպիսի բայերի երկու հիմքերի հակադրությունը, որ կարող է հանդես գալ ձևաբանական մակարդակում, չի չեզոքանում, քանի որ նրանցից յուրաքանչյուրը իր ուրույն դիրքը կամ ոլորտն ունի (դերանունների հետ կապակցվելը)։ Երկրորդ շարքի ձևերում (գրի, գրեցի, (չեմ) գրի) նույնպես ձևույթների համանունություն ունենք և ոչ չեզոքացում. գրի և գրեցի ձևերի ի ձևույթների մասին արդեն խոսեցինք, ինչ վերաբերում է ժխտական դերբայի և եզ. 3-րդ դեմքի ի վերջավորության, ապա այստեղ դրությունը այլ է. 3-րդ դեմքի ի վերջավորությունն իր համակարգի միավորների հետ հակադրվում է դիմային և թվային իմաստով. գրեմ և գրես ձևերի հետ նա կազմում է եռանդամ հակադրություն և ներկայացնում է աննշույթ (немаркированный) անդամը, գրեն ձևի հետ կազմում է երկանդամ հակադրություն և դարձյալ ներկայացնում է աննշույթ անդամը, որովհետև չունի եզակիության ցուցիչ, մինչդեռ գրեն ունի հոգնակիության ցուցիչ. այս բոլորի հետևանքով այդ ի աննշույթ ձևույթը ձևական հակադրություն չի կարող կազմել ի դերբայական ձևույթի հետ։ Նրանք չեն կարող կազմել նաև իմաստային հակադրություն, որովհետև երկուսն էլ արտահայտում են գործողության կատարելիության իմաստ. ժխտման դերբայի իմաստն են համարում այն, որ նա արտահայտում է գործողության կատարելիություն որպես ժխտման կամ բացառման առարկա (օբյեկտ), բայց ժխտման իմաստը իր մեջ չէ, այլ օժանդակ բայերի ժխտական ձևերի մեջ։ Երրորդ դեմքի ի վերջավորությունն, ինչպես տեսանք, դիմային և թվային կարգերն արտահայտում է միայն համակարգի մեջ՝ հակադրվելով հարացույցի (պարադիգմայի) մյուս միավորներին, եզանակի կարգն արտահայտում է հիմքի ոլորտով, որ նույնն է նաև դերբայական ի ձևույթի համար, և վերջապես արտահայտում է գործողության կատարելիություն որպես իղձ։ Ուրեմն ունենում ենք իմաստային երկու հատկանիշ. կատարելիություն, որ ընդհանուր է երկուսին, ըղձականություն-ժխտականություն, որոնցից ոչ մեկն էլ չի արտահայտվում ի-ով, այլ միայն հարացույցով։ Այսպիսով՝ ի դերբայական ձևույթը և ի վերջավորությունը չեզոքանում են իբրև անկախ ձևերի բաղադրություններ, բայց չեն չեզոքանում կոնկրետ բայաձևերում (օր. չեմ՝ չես՝ չի գրի, բայց գրի, որի ժխտականն է չգրի)։ Ինչպես տեսնում ենք, այստեղ երևույթը շատ ավելի բարդ է, քան հնչույթաբանության մեջ. մեր վերլուծությամբ երկու ի ձևույթները չեզոքանում են իբրև անկախ ձևերի բաղադրություններ, այսինքն՝

միայն վերացարկված միավորներում. բայց չէ՞ որ այդ միավորները բացի իմաստային հատկանիշներից, ունեն նաև գործառական հատկանիշներ. բավական է դիմել այդ հատկանիշներին, և մենք կտեսնենք, որ չեզոքացումը վերանում է, այսպես՝ ժխտման դերբայը կարող է գործառել չեմ, չես, չի, չենք, չեք, չեն ձևերի ոլորաններում, իսկ երրորդ դեմքի ձևը՝ չ ձևույթի ոլորտում (չգրեմ, չգրես, չգրի), սակայն այստեղ արդեն ոչ թե ձևույթների գործառույթյան ոլորտն ունենք, այլ նրանց բաղադրած ձևերի: Այս բոլորից ելնելով կարող ենք եզրակացնել, որ ունենք երկու համանուն ձևույթներ, որոնք չեզոքանում են առաջնային բայաձևերում, որ նրանց համար թույլ դիրք է, և իմաստային հակադրություններ ստեղծում երկրորդային բայաձևերում, որ ուժեղ դիրք է:

Վերջապես, ինչ վերաբերում է օրինակների երրորդ շարքին, հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի վերջավորության նույնության, ապա այստեղ հայտնապես ունենք չեզոքացում, որովհետև ոչ միայն ձևաբանական, այլև շարահյուսական մակարդակում նրանք գործառում են հավասարապես, կամ ավելի ճիշտ՝ մեկ ձևը գործառում է հավասարապես երկու դեմքերի համար (մէք՛ բի՛րիս իք՛=մենք բերում ենք, դուք բի՛րիս իք՛=դուք բերում եք, մեք բիրալ ըf=մենք բերեցինք, դուք բիրալ ըf=դու բերեցիք[1] ևն):

Բերված օրինակներն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ ձևույթաբանական, ձևաբանական և, մանավանդ, բառային ու շարահյուսական մակարդակում չեզոքացումն ունի շատ ավելի բարդ դրսևորումներ, որոնք պահանջում են հատուկ հետազոտություն յուրաքանչյուր առանձին դեպքի համար: Այդ բարդությունն էլ, ահա, առաջ է բերել տարբեր մոտեցումներ չեզոքացման հարցի նկատմամբ և տեղիք տվել հակասական մեկնաբանությունների: Լ. Ելմսլևն, օրինակ, գտնում է, որ ավանդական լեզվաբանության մեջ միաձուլություն (սինկրետիզմ) անվանումն ստացած երևույթը նույնն է, ինչ որ հնչույթային հակադրությունների չեզոքացումը, և երկուսն էլ համարելով միաձուլություն, կոչում է վերացում (устранение) տերմինով[2]: Իբրև օրինակ նա բերում է լատիներենի ուղղական ու հայցական հոլովների միաձուլությունը չեզոք սեռի գոյականների, ինչպես և մի քանի այլ դեպքերի համար, և դանիերենի p և b հնչ-

---

1 Օրինակները վերաբերում են Մեղրու բարբառին:

2 Л. Ельмслев, Пролегомены к теории языка, НЛ, I, (1960), стр. 343—349.

չույթների չեզոքացումը բառավերջում («top բառը կարող է արտասանվել կամ p-ով, կամ b-ով»)։ Ա. Մուխինը, նկատի ունենալով երկու տարբեր երևույթների՝ միաձուլության (սինկրետիզմի) և հընչույթաբանական չեզոքացման նույնացումը Լ. Ելմսլևի մոտ, հակաճառում է նրան ու գրում. «Չի կարելի համաձայնել նաև Լ. Ելմսլևի հետ, որը հավասարության նշան է դնում հնչույթային հակադրության չեզոքացման և այն բանի միջև, ինչ որ ավանդական քերականության մեջ հայտնի է միաձուլություն անվանումով։ Չեզոք սեռի ուղ. և հյց. հոլովների միաձուլությունը լատիներենում, ինչպես և ուրիշ հնդևրոպական լեզուներում, իրենից ներկայացնում է համանունության յուրահատուկ դեպք, երբ երկու ձևերի համընկնելը երևան է գալիս բառերի քերականական մի դասի, ավելի ճիշտ՝ ենթադասի մեջ։ Բայց նույնիսկ այս զուգադիպությամբ հանդերձ լեզվի ձևաբանական կառուցվածքում ուժի մեջ է մնում ուղ. և հյց. հոլովների հակադրությունը (templum «տաճար» — templum «տաճար» (=զտաճար), caput «գլուխ» — caput «գլուխ» (=զգլուխ) *են), քանի որ արտաքուստ նույնական ձևերը այստեղ ունեն տարբեր իմաստներ, որոնք հատուկ են ընդհանրապես գոյականների ուղ. և հյց. հոլովներին լատիներեն լեզվում, անկախ գոյականների այս կամ այն սեռին (արականին, իգականին, չեզոքին) պատկանելուց։ Այլ խոսքով, այստեղ մենք գործ ունենք զրո վերջավորությունների հետ (ուղ. և հյց. հոլովների), որոնք հանդիսանում են լեզվի ձևաբանական կառուցվածքում իրար հակադրվող ձևաբանական երկու գործառական միավորների՝ ձևույթների համակցական տարբերակները»*[1]։ *Մեր կարծիքով այս հակաճառության միայն առաջին մասն է ընդունելի. արդարև, չի կարելի միաձուլության (սինկրետիզմի) բոլոր դեպքերը համարել հակադրությունների չեզոքացում. կան դեպքեր, երբ համաձուլումը հանգեցնում է չեզոքացման, ինչպես լատիներենի չեզոք սեռի բառերի ուղ. և հյց. հոլովներինը, կան դեպքեր էլ, երբ չեզոքացում տեղի չի ունենում։ Օրինակ՝ գրաբարի ե խոնարհման բայերից մի քանիսի անցյալ կատարյալի եզ. առաջին դեմքի ձևը նույնական է ներկա ժամանակի կրավորականի եզ. 3-րդ դեմքի հետ, որ առաջ է բերում համաձուլություն (հմմտ. բերի=բերեցի և բերի=բերվում է, նույնպես և՝ ածի (անց. 3-րդ դ.)—ածի (կր. ներկ. եզ. 3-րդ դ. են)։ Այստեղ, սակայն, չեզոքացում*

[1] А. М. Мухин, Понятие нейтрализации и функциональные лингвистические единицы, ВЯ, 1962, № 5, стр. 54.

չունենք, այլ պարզապես տարբեր բայաձևերի համանունություն, որ հայտնապես երևում է և՛ դրանցից կազմվող երկրորդային բայաձևերից, և՛ շարահյուսական մակարդակում ունեցած գործառությունից։ Այսպես՝ անցյալ կատարյալից կազմվող երկրորդային բայաձև է երկրորդ ապառնին, իսկ ներկայից կազմվող երկրորդային ձև՝ առաջին ապառնին. բերել բայի համար ունենք երկրորդ ապառնիի բերիք, բերցես, բերցէ, բերցուք *ևն ձևերը, իսկ կրավորականի առաջին ապառնիի համար՝* բերիցիմ, բերիցիս *ևն ձևերը. ինչպես տեսնում ենք, ձևաբանության հարացուցային դասում այդ երկու ձևերն իրար հակադրվում են. շարակարգային դասում նույնպես հակադրվում են նրանով, որ առաջինը կարող է կապակցվել ես, իսկ երկրորդը նա դերանվան հետ։ Վերջապես, շարահյուսական մակարդակում նրանց հակադրությունն ավելի ևս ցայտուն է. առաջինը պահանջում է ուղիղ խնդիր՝ հայցական հոլովով, իսկ երկրորդը անուղղակի խնդիր՝ բացառական հոլովով[1]։ Հետևաբար քերականական միաձուլության ոչ բոլոր դեպքերն են կարող բնորոշվել որպես չեզոքացում։ Ինչ վերաբերում է Ա. Մուխինի հակաճառության երկրորդ մասին, ապա դա համարում ենք միանգամայն անընդունելի։ Լատիներենում չեզոք սեռի բառերի ուղղական ու հայցականն իսկապես չեզոքանում են. շարահյուսական մակարդակում նրանք իրենք իրենց չեն կարող իմաստային և գործառական հակադրություն ստեղծել։ Այն դեպքում, երբ արական և իգական սեռերին պատկանող գոյականների ուղղականն ու հայցականը իրենց ձևական հակադրությամբ որոշում են գործառական և իմաստային հակադրությունը, չեզոք սեռի բառերի նույն հոլովաձևերը զրկվում են այդ հատկանիշից. այսպես՝* homo *«մարդ» ուղղական հոլով է, իսկ* hominem *«զմարդ»— հայցական, և եթե հանդիպենք, օրինակ,* Homo locum ornat, non hominem locus= *«մարդն է զարդարում տեղը, և ոչ թե տեղը՝ մարդուն» նախադասությանը, ապա հենց հոլովաձևերը որոշում են, թե ո՛րը ի՛նչ պաշտոն է կատարում նախադասության մեջ։ Այդպես չէ, սակայն, չեզոք սեռի բառերի համար.* pomum *«խնձոր» և՛ ուղղական է, և՛ հայցական, և եթե առնենք հետևյալ նախադասությունները՝* Ex arbore pomum cognoscitur= *ծառից ճանաչվում է խնձորը և* Ex arbore pomum cognoscimus=

---

1 *Գրաբարյան անց. կար. բերի և ներկ. կր. բերի ձևերի համանունությունը հետևանք է բայի ներկայի և անցյալի հիմքերի չեզոքացման, ինչպես այդ տեսանք նաև արդի խոսակցական լեզվի (ես) բերի (=բերեցի) և (նա) բերի (ըղձ. եղ.) ձևերի վերլուծության ժամանակ։*

ծառից ճանաչում ենք խնձորը,— ապա բառաձևի պաշտոնը որոշվում է ոչ թե իրենով, այլ նախադասության մյուս անդամներով. առաջին նախադասության մեջ cognoscitur (=ճանաչվում է) կր. սեռի բայ է և տվյալ նախադասության մեջ միայն pomum բառը կարող է լինել նրա ենթական, երկրորդի մեջ cognoscimus (=ճանաչում ենք) ներգործական սեռի բայ է, որ դրված է հոգն. 1-ին դեմքով. այդ նախադասության մեջ ենթական կարող է լինել միայն nos «մենք», որ աղված է, հետևաբար, pomum կարող է լինել միայն ուղիղ խնդիր։ Ուղ. և հյց. հոլովների նույնպիսի չեզոքացում ունենք նաև գրաբարում՝ անորոշ առումով գործառության ժամանակ (հմմտ. մի կողմից՝ տեսի զմանուկն.. և մանուկն եառս..., մյուս կողմից՝ տեսի մանուկ մի... և մանուկ մի եառս...)։ Տարօրինակ է Ա. Մուխինի այն մեկնաբանությունը, թե իբր լատիներենի ուղ. և հյց. հոլովների ձևական նույնությունը առաջ է բերում դրանց համակցական տարբերակները՝ զրո վերջավորությամբ։ Նախ՝ զրո վերջավորության մասին խոսք լինել չի կարող, քանի որ այդ ձևերն ունեն իրենց վերջավորությունները (առանձնապես II և IV հոլովման բառերը)։ Այնուհետև՝ նրանք կարող են տարբերակներ լինել շարահյուսական դիակարդակում որոշակի շարահյուսությունների (օր. ենթակայի և ուղիղ խնդրի) և իրենց գործառության ոլորտով հակադրվել իրար, ինչպես բերված օրինակներում։ Չևաբանական մակարդակում իրոք յուրաքանչյուրը մեկ հոլովի տարբերակներից մեկն է հենց um, u վերջավորությամբ, բայց ամբողջ հարցն այն է, որ այդ երկու տարբերակները իմաստային և գործառական հակադրություն չեն ստեղծում։ Տարօրինակ է նաև այն, որ նույն հոդվածի մեջ Ա. Մուխինը չեզոքացում է համարում հարաբերական ածականների համեմատության աստիճանից զուրկ լինելը։ Չեզոքացման կարող են ենթարկվել այն արժույթները, որոնք տվյալ հատկանիշով գոնե մի դիրքում իմաստազատիչ հակադրություն են կազմում. խ և ղ հնչույթները կարող են չեզոքանալ, որովհետև նրանք ձայնեղություն-խլություն տարբերակիչ հատկանիշով իմաստազատիչ հակադրություն են ստեղծում (օր. կաղ — կախ), բայց ճ-ն չի կարող մտնել ձայնեղություն-խլություն հակադրության չեզոքացման շրջթայի մեջ, որովհետև նա այդ հակադրությունը չունի էլ, ըստ որում նրա հնչույթային բովանդակության մեջ խլություն հատկանիշը չի մտնում (խլությունը նրա համար հավելական հատկանիշ է)։ Արդ, հարաբերական ածականները չունեն համեմատության աստիճաններ. սա նշանակում է, թե նրանք չեն կարող ստեղծել դրական-

բաղդատական-գերադրական աստիճանների հակադրությունը, հետևաբար և՝ չեն կարող չեզոքանալ։ Նրանք կազմում են ածականների մի դաս, որը զուրկ է «համեմատության աստիճան» հատկանիշից կամ քերականական կարգից։ Այլ բնույթ է ստանում հարցը այնպիսի ածականների վերաբերյալ, ինչպիսիք են ամուր, մերկ, կույր և։ Սրանք պատկանում են ածականների այն դասին, որին հատուկ է համեմատության աստիճանների հակադրությունը, բայց չեն կարող այդպիսի հակադրություններ կազմել իրենց յուրահատուկ իմաստի պատճառով. կարելի է կիսամերկ լինել, բայց չի կարելի մերկ լինել առավել կամ նվազ չափով, չի կարելի ամուրի լինել որոշ չափով և։

Վերը շարադրվածներից կարելի է հանգել հետևյալ ընդհանուր դրույթներին։

1. Չեզոքացումը արժույթների իմաստազատիչ հակադրության բացասումը, վերացումն է նրանց գործառության որոշ ոլորտներում։ Իբրև այդպիսին նա հատուկ է բոլոր մակարդակներին, բացի ստորոգայինից, թեև յուրաքանչյուրի մեջ կարող է յուրահատուկ բնույթ ստանալ։

2. Համանունությունը և միաձուլությունը պարտադիր կերպով չեն հանգեցնում չեզոքացման, թեև որոշ դեպքերում դա հնարավոր է. հետևաբար՝ ձևույթային, բառային, ձևաբանական ու շարահյուսական մակարդակներում համանունությունն ու միաձուլությունը չի կարելի նույնացնել չեզոքացման հետ։

3. Տվյալ մակարդակի միավորները կարող են չեզոքանալ միայն անմիջապես գերադասվող մակարդակի կազմում։ Թեև հնարավոր է, որ տվյալ մակարդակի միավորի չեզոքացումը փոխանցվի նաև հաջորդ մակարդակի այն միավորներին, որոնց բաղադրույթն է ինքը, բայց այդ վերաբերում է արդեն հաջորդ մակարդակի հակադրությունների համակարգին։ Այսպես, երկու ձևույթների իմաստազատիչ հակադրությունը կարող է չեզոքանալ ձևաբանական մակարդակում. այդ չեզոքացումը կարող է չփոխանցվել ձևաբանական միավորներին, բայց կարող է և փոխանցվել. այս դեպքում ձևաբանական միավորների չեզոքացումը պետք է հանդես գա կամ ձևաբանական մակարդակի երկրորդային միավորների մեջ, կամ շարահյուսական մակարդակում։ Օրինակ, 1) վերը բերած օրինակներից ժխտական դերբայի և ըղձական եղանակի եզակի 3-րդ դեմքի ձևույթները չեզոքանում են. այդ չեզոքացումը վերանում է երկրորդային ձևերում և առավել ևս՝ շարահյուսական

մակարդակում։ Այստեղ, ուրեմն, չեզոքացման փոխանցում չկա, և մենք ունենք միայն ձևույթային հակադրության չեզոքացում։ 2) Գրաբարում ե խոնարհման բայերի սահմանական ներկան կրավորական սեռ կազմում է լծորդի փոփոխությամբ (օր. սիրեմ — սիրիմ)։ Կան, սակայն, բայեր, որոնք ներգործական սեռին պատկանելով, ունեն միայն կրավորականի ձև (օր. դատիմ, շահիմ ևն), քանի որ դատիմ և՛ ներգործական է, և՛ կրավորական, ապա տեղի է ունենում ե–ի ձևույթների չեզոքացում, որը փոխանցվում է ձևաբանական միավորներին (բայաձևերին) և հանդես է գալիս շարահյուսական մակարդակում։ Հակառակն է տեղի ունենում անորոշ դերբայում, որ դասական շրջանում ի լծորդը չունի (դատել, բայց ոչ՝ դատիլ, սիրել, բայց ոչ՝ սիրիլ ևն)։ Սա նույնպես փոխանցվում է ձևաբանական միավորներին և հանդես գալիս շարահյուսականում։

4. Չեզոքացման կարող են ենթարկվել նույն կարգի կամ դասի միավորները. իմաստային կամ գործառական հատկանիշներով տարբեր դասեր կազմող միավորների միջև հակադրությունների վերացումը չի կարելի դիտել որպես չեզոքացում։ Օրինակ, բայաձևերի ու հոլովաձևերի միջև ձևական հակադրությունների վերացումը չեզոքացում չէ. գիր բառի սեռականն է գրի, գրել բայի ըղձ. եզ. 3-րդ դեմքը՝ նույնպես գրի, բայց այդ ձևական նույնացումը չեզոքացում չէ, այլ համանունություն, որովհետև երկու ձևերի ի ձևույթները, ինչպես և հենց իրենք՝ այդ երկու ձևերը, իմաստային ու գործառական բոլորովին տարբեր հատկանիշներ ունեն։

5. Չեզոքացում չի կարելի համարել բառերի կամ քերականական ձևերի այս կամ այն դասի միավորների միջև տվյալ կարգի (տվյալ հատկանիշով կամ գործառույթյամբ) հակադրությունների բացակայությունը, եթե դա հետևանք է այն բանի, որ տվյալ դասին առհասարակ հատուկ չէ իմաստային կամ գործառական այդ հատկանիշը։ Օրինակ, գրաբարում ածականները հոլովվում են և կապակցության մեջ հոլովով ու թվով համաձայնում գոյականին, սովորաբար եւտադաս լինելու դեպքում. նախադաս լինելիս սովորաբար չեն համաձայնում. ուրեմն, կապակցության մեջ նախադաս ածականի հոլովների չեզոքացում է տեղի ունենում։ Այդպես չէ, սակայն, ժամանակակից հայերենում. այստեղ ածականը չի հոլովվում, ուստի չեզոքացման մասին խոսք լինել չի կարող։ Նույնը կարելի է ասել, ինչպես տեսանք, նաև հարաբերական դերանունների մասին, որոնք չունեն համեմատության աստիճաններ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ, ԲԱՌԱՅԻՆ ՈՒ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՐԱՑՈՒՅԱՅԻՆ ԵՎ ՇԱՐԱԿԱՐԴԱՅԻՆ ՇԱՐՔԵՐ

Մինչև այժմ մենք խոսել ենք լեզվի կառուցվածքի մակարդակների և նրանց միավորների մասին ընդհանուր առմամբ։ Այժմ, նկատի ունենալով, որ մեր ուսումնասիրության առարկան է ձևաբանական մակարդակը իր երկու (հոլովման ու խոնարհման) կառուցվածքային համակարգերով, որոնք անխզելիորեն կապված են ձևույթային և բառային մակարդակների հետ, ծանոթանանք այդ մակարդակներից յուրաքանչյուրին առանձին-առանձին և որոշենք դրանցից յուրաքանչյուրի միավորներն ու դրանց իմաստային-գործառական հատկանիշները։ Սակայն, նախքան դրանց անցնելը, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել ժամանակակից լեզվաբանության մեջ հաստատված մի ընդհանուր, տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող տարբերակման վրա։ Դա հարացուցային և շարակարգային շարքերի տարբերակումն է։ Սկսած Ֆ. դը Սոսյուրից, լեզվի կառուցվածքի մեջ տարբերում են երկու կարգի հարաբերություններ. Սոսյուրը[1] *դրանք համարում էր զուգորդական (ասոցիատիվ) և շարակարգային (սինտագմատիկ). Լ. Ելմսլևը*[2] *առաջինի փոխարեն առաջարկեց հարացուցային*[3] *անվանումը, որ և բացարձակ գործածություն է ստացել ժամանակակից լեզվաբանության մեջ։ Սովորաբար այս երկու շարքերը տարբերակում են գծա-*

---

1 Ф. де Соссюр, Курс общей лингвистики, М., 1933, стр. 121.

2 Л. Ельмслев, Цит. соч., стр. 289.

3 *Պարադիգմատիկա տերմինը կազմված է ավանդական քերականության պարադիգմա (=հարացույց) տերմինից, որ նշանակում է որևէ բառի բոլոր*

յին շարք և ոչ գծային շարք կազմելու, կամ ժամանակային և ոչ ժամանակային ծավալման հատկանիշներով։ «Շարակարգայնությամբ (սինտագմատիկայով) լայն առումով, հասկանում են հաղորդումը լեզվով։ ...Հաղորդումը միշտ ձգվում է ժամանակի մեջ, նա չափելի է ժամանակի մեջ և ունի, ինչպես ասում են, գծային հայեցակետ։ Հարացուցայնությամբ (պարադիգմատիկայով) լայն առումով հասկանում են հաղորդման բառապաշարը, որ բաղկացած է, իհարկե, ոչ միայն բառերից, այլև ուրիշ տարրերից, օրինակ, բառամասերից (ձևույթներից)... Հասկանալի է, որ բառապաշարը չի կարելի չափել ըստ ժամանակի, դրա համար էլ ժամանակի նկատմամբ ունեցած հարաբերությունը շարակարգայնության (կամ շարակարգային տեսանկյան) և հարացուցայնության (կամ հարացուցային տեսանկյան) սահմանազատիչ հատկանիշն է։ Այս երկու հայեցակետերի հարաբերությունը կարելի է արտահայտել նաև այլ կերպ. հարացուցայնությունն ուսումնասիրում է այնպիսի միավորների դասերը, որոնցից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ տրվյալ հաղորդման մեջ՝ նրա ծավալման տվյալ պահին, այսինքն՝ փոխադարձաբար իրար փոխարինող տարրերի դասը. շարակարգայնությունը ուսումնասիրում է այն տարրերը, որոնք չեն կարող հանդես գալ ասույթի մեջ միևնույն պահին, փոխարինելով իրար, այլ միշտ կամ նախորդում կամ հաջորդում են միմյանց ըստ ժամանակի»[1]։ Այս մեկնաբանություններն, անշուշտ, ճիշտ են, բայց ժամանակակից լեզվաբանական ըմբռնումների տեսակետից սպառիչ չեն։ Բանն այն է, որ Յու. Ստեփանովը հարացուցային և շարակարգային շարքերը կապում է հաղորդման կամ այլ կերպ՝ շարահյուսության և բառաձևերի հետ, մինչդեռ այժմ դրանք շատ ավելի լայն ըմբռնում ունեն։ Արդի լեզվաբանությամբ շարակարգային շարք է ներկայացնում ամեն մի միավոր, որը կազմում է իրար հաջորդող բաղադրիչների շարք։ Ըստ այսմ, շարակարգություն կարող են կազմել բոլոր մակարդակների միավորները, բացի տարրույթայինից, որովհետև այս մակարդակի միավորները չեն կարող նախորդել կամ հաջորդել իրար մեկ հնչույթի մեջ. նրանք կարող են հանդես գալ միասնաբար։ Հարացուցային կարգ կարող են կազմել բոլոր մա-

---

ձևերի տախտակը, որպես հոլովման կամ խոնարհման օրինակ։ Պարադիգմատիկա տերմինի գործածությունը չի փոխում պարադիգմայի այդ իմաստը, թեև վերջինս այժմ գործածվում է նաև «պարադիգմատիկ միավոր» իմաստով։ Մենք էլ համապատասխանորեն գործածում ենք հարացույց (պարադիգմա), հարացուցային (պարադիգմատիկ), հարացուցայնություն (պարադիգմատիկա) տերմինները։

1 Ю. С. Степанов, Цит. соч., стр. 6.

կարդակների միավորները, բացի ստորոգայինից։ Այս պատճառով էլ ավելի նպատակահարմար է մի կողմ թողնել հաղորդումն ու բառերը և տալ ավելի ընդհանրական մեկնաբանություն։ Բացի դրանից, ժամանակային հատկանիշը լեզվի կառուցվածքային միավորների ներքին հարաբերությունը բացահայտող հատկանիշ չէ. նա, իհարկե, լեզվական միավորների դրսևորման ու գործառության կարևոր օբյեկտիվ հանգամանք է, բայց որպես արտալեզվական հատկանիշ։ Մինչդեռ լեզվի կառուցվածքային միավորների հարաբերության բնութագրման համար անհրաժեշտ է հենվել լեզվական հատկանիշների վրա։ Փորձենք, ուրեմն, վերլուծել երկու կարգերը երկու մոտեցումներով և գտնել այն հարաբերությունները, որոնցով նրանք կարող են բնորոշվել։

1. Տրված են հետևյալ միավորները. Խաչիկը, Հայկը, Արամայիսը, մեկնեց, Մեղրի, Դիլիջան, Մոսկվա *միավորները և դրանց հետևյալ համակցությունները կամ կապակցությունները.*

Խաչիկը մեկնեց Մեղրի
Հայկը մեկնեց Դիլիջան
Արամայիսը մեկնեց Մոսկվա։

Ասվում է, որ հարացուցային շարքը կազմում են այն միավորները, որոնք կարող են միևնույն պահին հանդես գալ և փոխարինել միմյանց. իրոք, առաջին նախադասության ենթական է Խաչիկը, *որ կարող ենք փոխարինել Հայկը կամ* Արամայիսը *անուններով. այդպես էլ միմյանց կարող են փոխարինել նաև Մեղրի, Դիլիջան, Մոսկվա։ Հետևաբար, ուղղահայաց գծով դասավորված բառերը կազմում են հարացուցային շարք։ Շարակարգային շարքի միավորները չեն կարող նույն պահին հանդես գալ և փոխարինել իրար, նրանք կարող են միմյանց հաջորդել կամ նախորդել. հիրավի, մենք կարող ենք, օրինակ, առաջին նախադասության միավորների տեղերը փոխել և ստեղծել այլ կարգի հաջորդականություն (Մեղրի Խաչիկը մեկնեց, Խաչիկը Մեղրի մեկնեց են), բայց չենք կարող փոխարինել միմյանցով և ասել, օրինակ,* մեկնեց մեկնեց Մեղրի *կամ* Խաչիկը Խաչիկը Մեղրի *են։ Հետևաբար, հորիզոնական գծով դասավորված (գծային շարք ներկայացնող) բառերը կազմում են շարակարգային շարք։*

2. Տրված են fաղաք, փողոց, գետ, ից, ով, ում *միավորները հետևյալ համակցություններում.*

քաղաք-ից
փողոց-ով
գետ-ում

Ասվում է, որ՝ ա) fաղաf, փողոց, գետ *և բ)* ից, ով, ում *կազմում են հարացուցային շարք, իսկ՝ ա)* fաղաfից, *բ)* փողոցով, *գ)* գետով *կազմում են շարակարգային շարք։ Առաջինները դասավորված են ուղղահայաց, երկրորդները՝ հորիզոնական գծով։*

3. Տրված են կ, ս, ճ, ր, ա *միավորները հետևյալ համակցություններում.*

կ-ա-ր
ս-ա-ր
ճ-ա-ր

Ասվում է, որ կ, ս, ճ *(ուղղահայաց գիծ) կազմում են հարացուցային կարգ, իսկ* կար, սար, ճար՝ *յուրաքանչյուրը մեկ շարակարգային շարք։*

Ունենալով այս օրինակները և վերհիշելով ներածության մեջ ասվածները հատույթավորման ու փոխարկման մասին, պարզենք երկու կարգերի բնույթը։

Առաջին կետի յուրաքանչյուր նախադասություն, երկրորդ կետի՝ յուրաքանչյուր բառաձև, երրորդ կետի յուրաքանչյուր ձևույթ ներկայացնում է մեկ շարակարգային շարք։ Իբրև այդպիսին նրանցից յուրաքանչյուրը կարող է հատույթավորվել. օրինակ՝ Հայկը մեկնեց Դիլիջան նախադասությունը կարող ենք վերածել 3 հատույթի՝ Հայկը, մեկնեց, Դիլիջան. fաղաfից *բառաձևը, որպես ձևաբանական միավոր, կարող է վերածվել երկու հատույթի՝* fաղաf, ից. կար *ձևույթը կարող է վերածվել դարձյալ 3 հատույթի՝* կ, ա, ր։ *Ուրեմն, շարակարգային շարքը կարելի է հատույթավորել կամ, որ նույնն է՝ շարակարգային շարք են կազմում հատույթները։ Այժմ անցնենք հարացուցային շարքին. երեք նախադասությունների մեջ իրար փոխարինող միավորները չենք կարող դիտել որպես ուղղահայաց շարքի հատույթներ. այդպես էլ՝* ից, ով, ում *կամ* կ, ս, ճ *միավորները։ Սրանք ենթակա են փոխարկման, բայց ոչ հատույթավորման իրենց հարացուցային շարքում։ Ուրեմն՝ շարակարգային շարքի միավորները հատույթավորվում են, իսկ հարացուցային շարքի միավորները՝ փոխարկվում։ Գիտենք, որ տվյալ մակարդակի հատույթները այդ մակարդակի միավորների հոդավորիչներն են. նույնպիսի ընդհանուր անվանում ունենալու համար հարացուցային շարքի փոխադարձաբար իրար փոխարինող միավորները կոչենք փոխարկիչներ*[1]*։ Այժմ անդրադառնանք տարբեր մակարդակների ու նրանց միավորների ենթադասության ու գերադասության հարաբերություններին։*

1 *Համապատասխան միջազգային տերմինը կլինի* suբստիտուտոr *կամ* suբստիտուենտ։

1. Ամեն մի մակարդակի միավոր բաղադրույթ է հաջորդող մակարդակի միավորների համար. ամեն մի մակարդակի միավորի մեջ նախորդող մակարդակի միավորները հոդավորիչներ են: Օրինակ՝ հնչույթները բաղադրույթներ են ձևույթային մակարդակի միավորների համար, իսկ ձևույթային մակարդակում՝ ձևույթների մեջ, նրանք հոդավորիչներ են: Առաջին դեպքում ունենք ենթադաս ու գերադաս մակարդակների հարաբերություն, երկրորդ դեպքում՝ գերադասի ու ենթադասի հարաբերություն:

2. Հատույթավորման կարող են ենթարկվել այն մակարդակների միավորները, որոնք ունեն ստորադաս մակարդակ, կամ այլ կերպ՝ հատույթավորման ենթակա են այն միավորները, որոնք ունեն հոդավորիչներ:

3. Փոխարկման կարող են ենթարկվել այն մակարդակների միավորները, որոնք ունեն գերադաս մակարդակ, կամ այլ կերպ, փոխարկվել կարող են բաղադրույթները:

Այս բնորոշումները որոշում են արդեն հարացուցային և շարակարգային շարքերի էությունը: Դրանք ըստ էության տվյալ կարգի միավորների տարբեր հարաբերություններն են. շարակարգային շարքում ունենք տվյալ մակարդակի միավորների համակցությունը: Քանի որ կառուցվածքային մակարդակի ամեն մի միավոր ինքնուրույն, անկախ է, ապա նրանց համակցությունը կարող է լինել միայն որպես գծային շարք. եթե տվյալ մակարդակում չունենք ինքնուրույն միավորներ, ապա չենք կարող ունենալ դրանց շարակարգային շարքը: Տվյալ մակարդակի միավորների համակցությունը հաջորդ մակարդակի մեկ միավոր է. այսպես՝ կ և ա հնչույթների համակցությունը կա ձևույթն է, կա և ն ձևույթների համակցությունը կան բայաձևն է, պարտեզ և ում ձևույթներինը՝ պարտեզում ձևը, մարդ և իկ ձևույթներինը՝ մարդիկ հոգնակի ձևը, մարդիկ, կան, պարտեզում քերականական ձևերի համակցությունն է՝ պարտեզում մարդիկ կան նախադասությունը: Քանի որ ստացված միավորները ներկայացնում են գծային շարք կամ միավորների հաջորդականություններ, ապա նրանք կարող են հատույթավորվել և վերածվել հոդավորիչների: Սա նշանակում է, թե շարակարգային շարքում ունենք հոդավորիչների հարաբերություն: Հետևաբար՝ շարակարգային շարք ասելով ենթակաենք տվյալ համակարգի հոդավորիչների շարքը: Սրանից բխում է, որ՝ ա) շարակարգային շարք կարող են կազմել այն միավորները, որոնք հաջորդ մակարդակում հոդավորիչներ են. բ) ամեն մի մակարդակի յուրաքանչյուր միավորը շարակարգային շարք է ստորադաս մակարդակի միավորների հա-

մար, գ) տարրույթային մակարդակի միավորները հնչույթների բաղադրույթներ են, բայց ոչ հնչույթների հոդավորիչներ (հնչույթը հատույթավորել չի կարելի), ուստի և հնչույթը շարակարգային շարք չէ։

Այլ է հարացուցային մակարդակի միավորների հարաբերությունը։ Այստեղ մենք ունենք ստորին մակարդակի միավորների փոխհարաբերությունը միմյանց հետ. այն, որ քեր, դեր, թեր միավորների մեջ իրար կարող են փոխարինել բ, դ, թ տարրերը, ցույց է տալիս հենց այդ տարրերի հարաբերությունը։ Մենք ասել ենք, արդեն, որ հատույթավորումով ստացված հատույթների նույնացումը ստորադաս մակարդակի միավորների հետ կատարվում է փոխարկման մեթոդով. սա նշանակում է, թե փոխարկիչները ոչ այլ ինչ են, եթե ոչ ստորադաս մակարդակի արժույթներ։ Հիրավի, երբ մենք դեր ձևույթի երեք հատույթներից (դ, ե, ր) առաջինը փոխարինում ենք տ, թ, կ, գ, ֆ-ով (տեր, թեր, կեր, գեր, քեր), երկրորդը՝ ա, ու, ի-ով (դար, դուր, դիր), երրորդը՝ զ, մ, ն, պ-ով (դեզ, դեմ, դեռ, դեպ) և այլն, ապա՝ ստանում ենք իմաստով իրար հակադրվող ձևույթներ, որով և պարզում ենք դ, ե, ր հատույթների արժութայնությունը, այսինքն՝ այն, որ դ-ն հակադրվում է մի կողմից տ և թ-ին, մյուս կողմից՝ գ և բ-ին, ե (է)-ն հակադրվում է ա, ու, ի-ին, ր-ն՝ ն, զ, մ-ին, այլ կերպ ասած, հաստատում ենք, որ նրանք հընչույթներ են։ Բայց ոչ միայն այդ. փոխարկման օգնությամբ մենք բացահայտում ենք հակադրությունների ամբողջ համակարգը, իսկ սա նշանակում է՝ միավորների ներքին հարաբերությունները։ Վերջապես փոխարկումը հնարավորություն է տալիս պարզելու նաև միավորների բաշխումը (դիստրիբուցիան)։ Ասվածներն ավելի հասկանալի դարձնելու համար վերցնենք հետևյալ օրինակը. ունենք գործ–, սեղան–, եմ, ենք, եց, ել, ով, ից ձևույթները, որոնցով կազմված են գործեմ, գործենք, գործել, գործեց, գործով, գործից, սեղանից, սեղանով շարակարգությունները. իբրև այդպիսիք նրանք կարող են հատույթավորվել գործ–ե–մ, գործ–ե–նք, գործ–ե–լ, գործ–ե–ց, գործ–ով, գործ–ից, սեղան–ից, սեղան–ով հատույթներին։ Դրանով մենք կարող ենք պարզել, ասենք, գործ և ե-մ, սեղան և -ով հոդավորիչների հարաբերությունը, բայց դա չի պարզի հիշյալ ձևույթների հարաբերությունների համակարգը։ Որպեսզի դրան հասնենք, պետք է դիմենք փոխարկման. սեղան–ով ձևի –ով հատույթը կարող ենք փոխարկել -ից-ով, ինչպես և -ում, -ի-ով (սեղանում, սեղանի), բայց չենք կարող փոխարկել եմ, ենք, եց, ել հատույթ-

ներով, նույնպես և՝ գործ–ով, կարող ենք փոխարկել –ից, –ում, –ի–ով (գործից, գործում, գործ), մյուս կողմից գործեմ, գործեմք, գործեց, գործել ձևույթների գործ- հատույթը կարող ենք փոխարկել գն–ով (գնել, գնեմ են), ժխտ–ով (ժխտել, ժխտեմ են), բայց չենք կարող փոխարկել սեղան, փողոց, դուռ են ձևույթներով. սրանից հետևում է, որ մենք այստեղ ունենք փոխարկիչների զանազան խմբեր. ա) բառեր (գոյականներ)՝ սեղան, գործ, փողոց, դուռ, բ) բայահիմքեր՝ գործ–, գն–, ժխտ–, դ) բայական վերջավորություններ՝ ել, եմ, եմք, եց, և) հոլովական վերջավորություններ՝ ից, ով, ում, ի: Փոխարկիչների այս խմբերից յուրաքանչյուրը մի դաս է կազմում իր մակարդակում, որի անդամները որոշակի հարաբերությունների մեջ են միմյանց հետ, իրրև բաղադրույթներ հաջորդ մակարդակի միավորների: Սրանից բխում է այն, որ հարացուցային շարքի միավորների հարաբերությունը բաղադրույթների հարաբերություն է, որը ներկայացվում է հարացույցի փոխարկիչների միջոցով: Հետևաբար՝ հարացուցային կարգը տվյալ մակարդակի փոխարկիչների շարքն է: Այս սահմանումը ինքնին ցույց է տալիս, որ հարացուցային կարգ կարող են կազմել բոլոր մակարդակների միավորները, բացի ստորոգայինից, և սա հասկանալի է: Նախադասությունները կազմում են շարակարգային շարք, այն է՝ խոսք, բայց նրանք խոսքի բաղադրույթներ չեն և չեն էլ թվարկվում փոխարկման, ուրեմն՝ փոխարկիչներ էլ չեն: Ի դեպ, սա ցույց է տալիս, որ է. Բենվենիստի դրույթը երկու սահմանային մակարդակների մասին, ինչպես և դրանց և մյուս մակարդակների սահմանազատումը, միանգամայն հիմնավորված է և սկզբունքային նշանակություն ունի լեզվի կառուցվածքի ուսումնասիրության համար:

Ամփոփելով վերն ասվածները, երկու կարգերի բնորոշման հիման վրա կարելի է տալ այդ կարգերի մեջ դրսևորվող հարաբերությունների հետևյալ ընդհանուր սահմանումը. շարակարգային շարքը ներկայացնում է միավորների համակցության հարաբերություն, իսկ հարացուցային կարգը՝ միավորների հակադրության հարաբերություն[1]:

Ինչպես տեսնում ենք, այս սահմանումը հենվում է լեզվի կառուցվածքային մակարդակների ու նրանց միավորների ներքին հա-

1 Ըստ մեզ այս հարաբերությունները բնորոշվում են որպես կոնտրաստ և հակադրություն. շարակարգային շարքի անդամները կոնտրաստ են կազմում, հարացուցային կարգինը՝ հակադրություն (A. Martinét, նույն տեղում, էջ 33):

րաբերությունների վրա և գործ չունի արտալեզվական հանգամանքների հետ։

2. ՁԵՎՈՒՅԹԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Ձևույթային մակարդակը հնչույթայինին անմիջականորեն գերադասվող մակարդակն է։ Նրա միավորներն են ձևույթները։ Ուստի և ամենից առաջ անհրաժեշտ է սահմանել այդ միավորը. ամենից սովորական ու տարածված սահմանումով ձևույթը իմաստի և ձևի միասնության ևվազագույն միավորն է: Այս սահմանումով էլ մենք կառաջնորդվենք մեր վերլուծությունների մեջ։ Սահմանումը բաղկացած է երկու հիմունքից. ա) ձևույթը իմաստի և ձևի միասնություն կազմող միավոր է, բ) ձևույթը այդ կարգի միասնություն կազմող ևվազագույն միավոր է: Այս երկու հիմունքներով սահմանազատվում են ձևույթները մի կողմից այնպիսի միավորներից, որոնք իմաստից զուրկ են, մյուս կողմից՝ այնպիսի միավորներից, որոնք նույնպես իմաստի ու ձևի միասնություն են կազմում, բայց նվազագույն տարրեր չեն։ Հերոսականություն բառը իմաստի և ձևի միասնություն է կազմում, բայց նա նվազագույն միավոր չէ, որովհետև կարող է վերածվել հերոս–ական–ություն հոդավորիչներին, որոնցից յուրաքանչյուրի արժութայնությունը հեշտությամբ կարող ենք որոշել փոխարկման մեթոդով։ Դրանցից յուրաքանչյուրը մի ձևույթ է և կարող է, իհարկե, հատույթավորվել. օրինակ՝ –ական կարող ենք հատույթավորել ա, կ, ա, և հոդավորիչներին, որոնցից յուրաքանչյուրը մեկ հնչույթ է. ուրեմն մենք կարող ենք ունենալ ձևույթից ավելի փոքր միավոր՝ հնչույթ. բայց հնչույթը, իբրև այդպիսին, իմաստակիր միավոր չէ։ Այն դեպքերում, երբ ձևույթը բաղկացած է լինում միայն մեկ հնչույթից, մենք ունենք դարձյալ ձևույթային համակարգի միավոր, որը իբրև այդպիսին վերլուծելի է։ Այստեղ ունենք նույնպիսի հարաբերություն, ինչպիսին ունենք որպես բառ գործածվող ձևույթների (=արմատների) և բառերի միջև։ Ինչպես որ հայր-ը բառ է և կարող է վերլուծվել կամ տարրալուծվել ու հանգեցվել հայր ձևույթին, այնպես էլ գրեմ բայաձևի մ հատույթը ձևույթ է, որ վերլուծությամբ կարող է հանգեցվել /մ/ հնչույթին։ Այս դեպքում տարրալուծել, վերլուծել կամ վերածել նշանակում է հանգեցնել ստորադասվող մակարդակի միավորին։ Սա նշանակում է նաև, թե մեկ հնչույթից բաղկացած ձևույթն էլ կարելի է ենթար-

կել հատույթավորման, դիտելով այն իբրև մեկ հատույթ։ Այն հանգամանքը, որ ձևույթները իմաստի և ձևի միասնություն են կազմում, առաջադրում է երկու հարց. ա) կարո՞ղ են լինել անձև ձևույթներ, բ) կարո՞ղ են լինել իմաստից զուրկ ձևույթներ։

Առաջին հարցին կառուցվածքային լեզվաբանության շատ ներկայացուցիչներ անվերապահորեն դրական պատասխան են տալիս։ Այսպես, օրինակ, ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ ընդհանուր ճանաչում ունեն զրո ձևույթ, զրո ածանց, զրո վերջավորություն հասկացությունները։ Սովետական լեզվաբանների մոտ էլ հաճախ են հանդիպում այդ տերմինները։ Մեր կարծիքով, սակայն, դա ճիշտ չէ։ Կարելի է ընդունել զրո ածանց, զրո վերջավորություն տերմինները, բայց ոչ զրո ձևույթ. երբ ասում են, թե այսինչ ձևը ունի զրո վերջավորություն, կամ զրո ածանց, դրանով պարզապես հասկանում են, որ այսինչ ձևը յուրահատուկ վերջավորություն չունի, և հարացուցային շարքում հակադրություն է կազմում հենց վերջավորության բացակայությամբ. այսպես՝ հայերեն գճացի, գճացիր, գճաց ձևերից 3-րդը դիմային վերջավորություն չունի, բայց քանի որ առաջին երկու դեմքերն ունեն, ապա նրանցից տարբերվում ու նրանց հակադրվում է հենց վերջավորության բացակայությամբ։ Այսպիսի դեպքերում, ուրեմն, տեղին է գործածել զրո վերջավորություն տերմինը։ Եթե համեմատենք աւդեն և պարզառեն բառերը, կտեսնենք, որ երկուսն էլ նույն խոսքի մասին են պատկանում (մակբայ), բայց երկրորդը ունի ածանց, իսկ առաջինը՝ ոչ. այս դեպքում, բառակազմական վերլուծության ժամանակ, կարելի է ասել, թե աւդեն կազմված է արմատից և զրո ածանցից, որ կնշանակի, թե նա պարզ կամ արմատական բառ է և ձևույթային վերլուծության ժամանակ կարող է հանգեցվել միայն մեկ ձևույթի։ Ինչ վերաբերում է զրո ձևույթին, ապա դա ոչ մի հիմք չունի. անձև և իմաստազուրկ ձևույթ լինել չի կարող։ Շատերը այդ տերմինը գործածում են, իհարկե, պայմանականորեն և հենց այն են հասկանում, ինչ որ ասացինք զրո վերջավորության և ածանցի մասին։ Ոմանք էլ գտնում են, որ զրո ձևույթ չի կարելի ընդունել, իսկ զրո ենթաձևույթ՝ կարելի է[1]։ Բայց մեր կարծիքով ո՛չ պայմանական գործածությունը, ո՛չ էլ ենթաձևույթ համարելը չի արդարանում։ Լեզվաբանական սահմանումը պետք է ունենա խստագույն ճշգրտություն, իսկ դա բացառում է զրո ձևույթի ընդունումը։

---

[1] Г. Глиссон, Введение в дескриптивную лингвистику, М., 1959, стр. 120—121.

Երկրորդ հարցը համեմատաբար ավելի բարդ է. լեզուների կառուցվածքում ունենք այնպիսի միավորներ, որոնք իմաստ չունեն, բայց հսկայական դեր են կատարում բառակազմության ու ձևակազմության համակարգում: Այդ միավորներն ավանդական քերականության մեջ ունեն նաև իրենց հատուկ անվանումները՝ հոդակապ, հոլովիչ, խոնարհիչ, բուն ևն: Մտածել, թե դրանք ինչ-որ իմաստ են կրում, չենք կարող. հոդակապը ոչ մի իմաստ չունի և ծառայում է միայն բառի բաղադրիչներն իրար միացնելուն. այն, որ բանավոր և բանվոր տարբեր բառեր են, հոդակապի իմաստի արտահայտություն չէ, այլ բառերի ձևի տարբերություն, որ անհրաժեշտության մղումով առաջ է բերել իմաստների տարբերակում: Դրան կարող էինք հակադրել տնվոր և տնավոր, գործվոր և գործավոր և բազմաթիվ այդ կարգի զույգեր, որոնք իմաստի տարբերություն չունեն: Նույնը կարելի է ասել նաև հոլովիչների ու խոնարհիչների մասին. ճիշտ է, ունենք ծխալ–ծխել, երերալ–երերել ևն զույգեր, որոնց մեջ խոնարհիչների փոփոխությունը զուգորդվում է բայական սեռի փոփոխության հետ, բայց այստեղ էլ երևույթը բացատրվում է խոնարհման համակարգի հետ կապված հանգամանքներով և ոչ թե խոնարհիչների իմաստով: Այնպիսի զուգաձևեր, ինչպիսիք են բանալ–բացել, հաչալ–հաչել, ոռալ–ոռալ, հազալ–հազել ևն խոնարհիչի փոփոխությամբ սեռի փոփոխություն չեն կրում: Այստեղ, իհարկե, գործ չունեն աղալ–աղել, բանալ–բանել և նման զույգերը, որոնք տարբեր արմատներից են կազմվել:

Արդ, պե՞տք է համարել դրանք ձևույթներ, թե ոչ: Ավանդական լեզվաբանության մեջ դրանք ձևույթներ համարվել են, ըստ որում ուշադրության առարկա է դարձել նրանց լեզվական դերը: Նորագույն լեզվաբանական աշխատություններում դրանց վրա քիչ են ուշադրություն դարձնում: Մեր մի ուսումնասիրության մեջ[1] մենք դրանք համարել ենք ձևույթներ և կոչել ենք «ֆունկցիոնալ ձևույթներ»: Լեզվաբաններից ոմանք դրանք անվանում են ներույթներ[2] (ինտերֆիքսներ), առանց անդրադառնալու այն հարցին, թե դրանք

---

1 Է. Աղայան, Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, ՊԲՀ, 1963, № 3, էջ 246—247:

1 Ինտերֆիքս բառացի պետք էր թարգմանել միջածանց կամ ներածանց, ինչպես ունենք պրեֆիքս—նախածանց. բայց առաջինը արդեն գործածվում է ինֆիքս-ի իմաստով, իսկ երկրորդը հարմար չենք գտնում. առհասարակ ածանց կոչելը գոնե հայերենի համար ճիշտ չէր լինի, ուստի և կգտնում ենք ներույթ բառը:

ձևո՞ւյթ են, թե ոչ։ Քանի որ այդ միավորները մեծ գործածություն ունեն բառակազմության ու ձևակազմության մեջ, ունեն նաև որոշակի գործառույթ (ֆունկցիա), ապա թվում է, թե կարելի է համարել ձևույթներ։ Այս դեպքում էլ, սակայն, խախտվում է սահմանումի ճշգրտությունը։ Ավելի հարմար է դրանց գործառույթը կապել հնչույթների գործառության հետ. իրոք, հնչույթների դերն է կազմել, բաղադրել լեզվական միավորների ձևեր, և ներույթները այդպիսի դեր ունեն և ուրիշ ոչինչ։ Ուստի և՝ ներույթները կարող ենք սահմանել այսպես. ներույթ են կոչվում այն հնչույթները, որոնք բառակազմության կամ ձևակազմության մեջ ձևույթները կապակցում են իրար, *կամ որ նույնն է՝* ներույթներ են այն հնչույթները, որոնք հանդես են գալիս երկու իմաստակիր միավորների միջև՝ նրանց միացումների ժամանակ։

Այսպիսի սահմանումը ունի մի շարք առավելություններ, որոնք կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1. Ազատում է ձևույթի սահմանումը հակասությունից և իմաստազուրկ ձևույթներ կանխադրելու (постулировать) *անհրաժեշտությունից։*

2. Հնարավորություն է տալիս դիտելու այդ միավորներն իբրև այնպիսի տարրեր, որոնք կարող են իրենք կախման մեջ լինել միացող կամ միավորվող ձևույթներից, կամ իբրև այնպիսի տարրեր, որոնց նկատմամբ միացող ձևույթներից որևէ մեկն է կախման մեջ, այլ կերպ ասած՝ համարել նրանք կամ ձևական տարրեր կամ գործառական տարրեր։ Այսպես՝ բարդության մեջ ա հոդակապը ձևական տարր է. դա նշանակում է, թե նա չի կարող նախորոշել, թե ինչ ձևույթներ կամ բառեր կարող են հաջորդել իրար, ըստ որում մի կողմից ունենք տնտես, *իսկ մյուս կողմից՝* լավատես, *մի կողմից՝* ջրկիր, *մյուս կողմից* բեռնակիր, *մի կողմից՝* տնատեր, *մյուս կողմից՝* տնտես. *ինչպես տեսնում ենք, այս օրինակների մեջ ա հոդակապը չի նախորոշում ո՛չ նախորդ, ո՛չ էլ հաջորդ ձևույթի բնույթը. նրան կարող են նախորդել և՛ ջր, և՛ տուն, կարող են հաջորդել և՛ տես, և՛ կիր ևն։ Ուրեմն, այստեղ ունենք ձևական ներույթ, որ ինքն է կախման մեջ միացող ձևույթներից կամ ավելի ճիշտ՝ միացման տեխնիկայից։ Խոնարհման մեջ ունենք ա և ե խոնարհիչներ, որոնք չեն կանխորոշում նախորդ ձևույթը կամ հիմքը, բայց կանխորոշում են հաջորդը, որով և՝ որոշում խոնարհման տարբեր հարացույցները (հմմտ. կարդա, բայց՝ գործի, կարդացել, բայց՝ գործել, կարդացող, բայց՝ գործող, կարդացած, բայց՝ գործած ևն)։ Այստեղ, ու-*

բեմն, ունենք գործառական ներույթներ, որոնցից կախման մեջ են հաջորդող ձևույթները։


3. Թույլ է տալիս ներույթների հետ նույնացնել երկու ձևույթների սահմանների միջև հանդես եկող այնպիսի հնչույթներ, որոնց առկայությունը չի կարող բացատրվել տվյալ կառուցվածքով։ Օրինակ՝ orեն *արմատից ունենք՝* օրինական, ապօրինի, orենf, օրինապահ *են բառերը, որոնց* orեն, օրին, (ա)կան, ապ, ի, f, պահ *բաղադրիչները ձևույթներ են,* ա*-ն հոդակապ (ձևական ներույթ), մինչդեռ* orենագետ *բառի* ա*-ն չի կարող ո՛չ ձևույթ համարվել, ո՛չ էլ հոդակապ. նա կարող է բացատրվել պատմականորեն, բայց ոչ մեր արդի լեզվի կառուցվածքով։ Ուրեմն, այդ էլ մենք կարող ենք դիտել իբրև ձևական ներույթ։ Նույնպես և՝ դռնապան, գառնարած, դռնից, ձկնով են բառերում ու քերականական ձևերում և հնչույթը պետք է համարել ձևական ներույթ։*

Քանի որ ներույթները մենք ձևույթ չենք համարում, ապա պարզ է, որ նրանք չեն էլ պատկանում ձևույթային մակարդակին։ Եվ եթե մենք հարկադրված եղանք այստեղ մանրամասնորեն խոսել նրանց մասին, ապա միայն նրա համար, որ անհրաժեշտ էր սահմանազատել նրանք ձևույթներից, իսկ դա անհրաժեշտ է նաև ձևույթների կազմը որոշելու համար։


Այս բոլորից հետո անցնենք ձևույթներին և ելնելով այն փաստից, որ նրանց անհրաժեշտ հատկանիշներն են իմաստը և ձևը, փորձենք դասակարգել նախ իմաստային և ձևական հատկանիշներով։

Հոսանքով բառաձևը կարող ենք հատույթավորել հոս*–*անք*–*ով *հատույթներին, որոնք և կլինեն այդ բառաձևի հոդավորիչները։ Դրանցից ոչ մեկը չի կարող բաժանվել, տարրալուծվել, հատույթավորվել, առանց իմաստը կորցնելու կամ աղավաղելու. մենք կարող ենք* ով *հոդավորիչը բաժանել* ո *և* վ*-ի, բայց դրանցից ոչ մեկն այլևս իմաստ չունի.* անք *կարող ենք բաժանել* ան *և* f*-ի, որոնք ունենք, օրինակ,* կծան, սուտաս*–*ան, հան*–*f, հում*–*f *բառերում, բայց հենց որ համեմատենք սրանք* հոսանք *բառի հետ և պարզենք* -ան *և* f *ձևույթների իմաստը, կտեսնենք, որ մեր հատույթավորումը (անք ↑ ան-ք) աղավաղում է իմաստը։ Սա նշանակում է, թե ձևույթը միասնական է իր ձևով և, հետևաբար, չի կարող բաժանվել ավելի փոքր իմաստակիր միավորների։ Մյուս կողմից, երբ համադրում ենք* հոս, անք, ով *ձևույթների իմաստները միմյանց հետ, ապա տեսնում ենք, որ նրանք տարբեր կարգի իմաստներն են արտահայտում։ Հոս*

ձևույթը համեմատելով հոս–ել, հոս–ուն, հոս–եց *են բառերի հետ, կպարզենք, որ նա արտահայտում է այդ բոլորին ընդհանուր մեկ գաղափար, որ կոնկրետանում, տարբերակվում է իր հետ կցվող ձևույթներով: Այդպես են նաև* տես–նել, տես–ող–ություն, ականա–տես, տես–ական, հետ–ավոր, հետ–ու, հետ–ա–ճալ, կարդ–ալ, կարդ–ացող, ծանր–ություն, ծանր–ա–ճալ, ծանր–որդ *են բառաձևերի մեջ դրսևորվող* տես, հետ, կարդ, ծանր *ձևույթների իմաստները: Քանի որ* հոս, տես, հետ, կարդ, ծանր *և նման ձևույթների իմաստները ընդհանուր են, բայց կարող են տարբերակվել, կոչենք դրանց իմաստը* տարբերակելի *իմաստներ: Տարբերակելի իմաստներն օբյեկտիվ իրականության առարկաների, երևույթների, հատկանիշների են ընդհանուր գաղափարներն են առանց բառային տարբերակման,* հոս– հոսելու *կամ* հոսանքի *ընդհանուր գաղափարն է, բայց ոչ* հոսել *կամ* հոսանք *հասկացություններից որևէ մեկը: Այդ ընդհանուր գաղափարները տարբերակվելով՝ վերածվում են առարկայի, հատկանիշի են հասկացության, այսինքն՝ դառնում են բառի իմաստ: Այս պատճառով էլ* տարբերակելի *իմաստը կոչում են նաև* բառային իմաստ: *Սրանց հակադրվում են այն իմաստները, որոնք տարբերակում են բառային իմաստները կամ ցույց են տալիս բառիմաստների հարաբերությունները միմյանց հետ.* –անք, –ուն, –ել *(հոսանք, հոսուն, հոսել) ձևույթների իմաստները տարբերակում են* հոս–*ձևույթի իմաստը և վերածում առարկայական իմաստի (գոյականի), հատկանիշային իմաստի (ածականի), գործողության իմաստի (բայի) և այլն, մինչդեռ* հոսանք–ի ուղղություն, *ջուր* հոս–եց *են կապակցությունների մեջ* հոսանք–ի, հոս–եց *ձևերի* –ի, –ից *ձևույթները ցույց են տալիս այդ իմաստների հարաբերությունները այլ բառիմաստների հետ:* Այն իմաստներ, որոնք տարբերակելի իմաստներ վերածում են բառային իմաստի (=տարբերակված իմաստի) կամ ցույց են տալիս բառիմաստների հարաբերություններ, կոչվում են fեռականական իմաստներ: *Քերականական իմաստներն էլ երկու տեսակ են. ա) տարբերակելի իմաստներ բառիմաստի վերածող իմաստներ, որոնք կոչվում են* ածանցական իմաստներ, *բ) բառիմաստների հարաբերություններ ցույց տվող իմաստներ, որոնք կոչվում են* վերաբերական իմաստներ: *Բերված օրինակների մեջ* –անք, –ուն, –ել *ձևույթներն ունեն ածանցական իմաստ, իսկ* –ի, –եց *ձևույթները՝ վերաբերական իմաստ: Այսպիսով՝ բոլոր ձևույթների իմաստները կարելի է դասակարգել հետևյալ ձևով.*




Իմաստների այս յուրահատուկ բնույթը պայմանավորում է նաև ձևույթների գործառութ յունը. բառային իմաստների և ածանցական իմաստների միավորումը տալիս է բառիմաստ, համապատասխանորեն առաջին կարգի ձևույթների միավորումը երկրորդների հետ տալիս է բառ: Հոս- ձևույթն ունի բառային իմաստ, -ամբ ձևույթը՝ ածանցական, երկուսի միավորումով ունենք բառիմաստ, որ արտահայտվում է հոսանք բառով: Եթե այդ բառիմաստին միացնենք, օրինակ, ի ձևույթի վերաբերական իմաստը, կստանանք ձևաբանական միավորի իմաստ՝ հոսանքի (գոյականի սեռական հոլով), որ արտահայտվում է բառի քերականական ձևով: Այս ձևույթներից առաջինը (հոս) բառի հիմնական իմաստի կրողն է և բառի հիմնական մասը, -ամբ բառի ածանցական իմաստի կրողն է և ածանցական մասը, երրորդը բառի վերաբերական իմաստի կրողն է և բառի քերականական ձև կազմող մասը: Ուրեմն, կարող ենք այդ ձևույթները կոչել՝ հիմնական ձևույթներ, որոնք բառային իմաստի կրողներն են, և երկրորդական ձևույթներ, որոնք քերականական իմաստի կրողներն են. այս վերջիններն էլ կբաժանենք երկու խմբի՝ ածանցներ, որոնք ունեն ածանցական իմաստ, և ձևորդներ (формант, формативы), որոնք ունեն վերաբերական իմաստներ: Հիմնական ձևույթները ավանդական քերականության մեջ կոչվել են արմատներ, և մենք, մեկ բառով տերմինին առավելություն տալով, գործածելու ենք այդ բառը: Այսպիսով, կունենանք ձևույթների հետևյալ դասերը.



Դրանց իմաստների զուգորդությամբ կունենանք հետևյալ պատկերը.

1. Հիմնական ձևույթներ—տարբերակելի բառային իմաստներ



Այս դասերն իմանալով, մենք այժմ կարող ենք պարզել դրանցից յուրաքանչյուրի գործառույթը, իսկ դրանով էլ պարզել, թե դրանցից յուրաքանչյուրը ի՛նչ կարգի միավորի բաղադրույթ կարող է լինել։

Արմատները, որպես բառային իմաստի կրողներ, կազմում են բառերի հիմնական մասը. շատ արմատներ կարող են իրենք իրենց հանդես գալ որպես բառ։ Այդ դեպքում նրա անկախ գործածությունն արդեն հանգեցրել է բառային իմաստի տարբերակման, այսինքն՝ բառիմաստի. այդպիսի բառերն, ինչպես գիտենք, կոչվում են արմատական կամ պարզ բառեր (օր. ջուր, մարդ, քար են)։ Այստեղ էլ ունենք նույն հարաբերությունը, ինչ որ հնչույթի և ձևույթի միջև. մեկ առանձին հնչույթը կարող է կազմել ձևույթ, մեկ առանձին ձևույթը կարող է կազմել բառ։

Ածանցները, որպես ածանցական իմաստի կրողներ, կարող են տարբերակել բառային իմաստը կամ արդեն տարբերակված բառային իմաստներին նոր տարբերակումներ տալ. ունենք գետ արմատը, որից՝ գիտ–ուն, գիտ–ուն–ություն. –ուն ածանցը արմատի տարբերակելի իմաստը վերածում է բառիմաստի, իսկ –ություն ածանցը՝ գիտուն–ի իմաստը ենթարկում է նոր տարբերակման և ստեղծում է նոր բառիմաստ։

Ձևորդները ցույց են տալիս բառիմաստների (հետևաբար և՝ բառերի) հարաբերություններ, իսկ դա նշանակում է, թե նրանք կազմում են պատրաստի բառերի քերականական ձևեր։

Այս բոլորից էլ, ահա, բխում է հետևյալը. ա) արմատները և ածանցները կազմում են բառեր, ուրեմն նրանք բաղադրույթներ են բառային մակարդակի միավորների, բ) ձևորդները կազմում են բառերի ֆեռակաճական ձևեր, ուրեմն նրանք բաղադրույթներ են ձևաբանական մակարդակի միավորների:

Գործառական, որից և ենթադասության այս տարբերությունը հանգեցնում է նաև մի ուրիշ տարբերության։ Որքան էլ տվյալ լեզուն հարուստ լինի քերականական ձևերով, այնուամենայնիվ այդ ձևերը որոշ սահմանափակ քանակ են կազմում. օրինակ, ժամանակակից հայերենի խոնարհման համակարգը բավականաչափ հա-

դուստ է. բայց այդ հարստությունը սահմանափակվում է դրական խոնարհման 95 ձևով: Եթե այդպես է քերականական ձևերի համար, ապա առավել ևս սահմանափակ են ձևորդները, որովհետև շատ ձևորդներ քերականական ձևերի ամբողջ դասեր են կազմում. այսպես՝ դրական խոնարհման 95 ձևերի մեջ ունենք 34 ձևորդներ (դերբայական վերջավորություններն էլ հաշվելով), որոնք, ինչպես կտեսնենք հետագայում, է՛լ ավելի փոքր թվի են հանգում. ժխտական խոնարհման նույնքան ձևերի համար այդ թվին ավելանում է միայն 2 ձևորդ (չ և մի՛): Այս նկատի ունենալով՝ կարող ենք ասել, որ ձևորդները կազմում են ձևույթների փակ դաս, այսինքն՝ տվյալ լեզվական կառուցվածքն ունի համեմատաբար փոքր քանակ կազմող ձևույթների համակարգ, որ կայուն է իբրև համամանակյա վիճակ: Բայց այս փակ համակարգը, հենց այն պատճառով, որ կարող է արտադրել անսահմանափակ քանակով բառերի քերականական ձևեր, հնարավորություն է տալիս արտահայտելու խոսքի կառուցման համար անհրաժեշտ բոլոր կարգի հարաբերությունները: Ուրեմն, փակ դասի մյուս առանձնահատկությունն այն է, որ նա ունի համակարգային (սիստեմային) բնույթ: Վերջապես, ձևվորդների համակարգը հիմնված է **անպայման հակադրականության վրա**: *Այս արտահայտությամբ մենք հասկանում ենք այն, որ յուրաքանչյուր ձևորդ անպայման ենթադրում է իր հակադրությունը, որից և ստացվում է քերականական ձևերի հակադրությունը: Այսպես, եթե ունենք գոյականների եզակի թիվ, ապա դա անպայմանորեն ենթադրում է առնվազն նաև մեկ ուրիշ թվի, ասենք՝ հոգնակիի, գոյությունը: Այստեղ կարևոր չէ, թե այդ երկուսն էլ ունե՞ն իրենց համար առանձին-առանձին ձևորդներ, թե ոչ, այլ այն, որ մի ձևորդի առկայությունը պոտենցիալ կերպով ենթադրում է հակադրություն կազմող իմաստը, որը կարող է իր նյութական արտահայտությունը գտնել կամ ձևորդների համակարգում կամ ձևաբանական և կամ շարահյուսական համակարգում: Իբրև օրինակ առնենք թվի քերականական կարգը ժամանակակից հայերենում. բայաձևերի համակարգում մենք ունենք եզակիի և հոգնակիի ձևորդներ (հակադրությունն ստեղծվում է ձևույթային մակարդակի միավորների միջև), գոյականների համակարգում՝ միայն հոգնակիի ձևորդ, բայց հենց այս էլ կանխորոշում է հակադրվող ձևերի գոյությունը ձևաբանական մակարդակում, որ արտահայտվում է եր/ներ վերջավորության և զրո վերջավորության հակադրությամբ (հակադրությունն ստեղծվում է ձևաբանական միավորների միջև);*

Ածանցները (նախածանցներ, միջածանցներ, վերջածանցներ) ներկայացնում են հարաբերականորեն փակ դաս. այս հարաբերականությունը բնորոշվում է ոչ միայն նրանով, որ յուրաքանչյուր լեզվի մեջ ածանցները շատ ավելի մեծ քանակ են ներկայացնում, այլև կարող են նորանոր ածանցներով հարստանալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին (փոխառությունների) միջոցներով։ Այսպիսի ազատությունը բացատրվում է ածանցային համակարգի ոչ անպայման հակադրականությամբ, այսինքն՝ տվյալ իմաստով ածանցի գոյությունը չի ենթադրում անպայման հակադիր ածանցական իմաստի գոյությունը. այսպես՝ ունենք փոքրացուցիչ (նվազական) –իկ, –ակ, –ուկ ածանցները, որոնց իմաստը կարելի է բնորոշել իբրև փոքրության հատկանիշ, որ վերագրվում է գոյականի բառիմաստին. այս իմաստը չի ենթադրում անպայման նաև մեծության հատկանիշ գոյականի բառիմաստի մեջ։ Տուն բառը չունի իր բառիմաստի մեջ ոչ մեծության, ոչ էլ փոքրության հատկանիշ, տնակ բառն ունի փոքրության հատկանիշ. այս երկուսի միջև հակադրությունը կարելի է ներկայացնել ոչ թե որպես բացասական և դրական բևեռների, այլ չեզոքության և դրականի հակադրություն (ուրեմն՝ ոչ թե + և —, այլ՝ 0 և +)։ Մի ուրիշ լեզվում նույն ածանցը կարող է ունենալ իր հակադրությունը, օրինակ՝ ռուսերենն ունի փոքրության (-ик) և մեծության (-ище) ածանցներ և այստեղ մի կողմից ունենք ըստ այդ հատկանիշի չեզոքության (дом) և ոչ չեզոքության հարաբերություն (домик, домище), մյուս կողմից՝ փոքրության և մեծության հատկանիշի հակադրություն (домик-домище)։ Այս ձևով կարելի է բոլոր ածանցների համար որոշել հակադրական և ոչ հակադրական հարաբերությունները և կպարզվի, որ հակադրությունները անպայման բնույթ չեն կրում. այն դեպքում, երբ ձևաբանական մակարդակում, ասենք, բայական մեկ դեմքի առկայությունը անպայմանորեն ենթադրում է առնվազն նաև մի ուրիշ դեմքի առկայություն, մեկ հոլովի, օրինակ, ուղղական հոլովի գոյությունը ենթադրում է առնվազն նաև մեկ ուրիշ հոլովի գոյություն, ածանցների համակարգում տվյալ ածանցի գոյությունը անպայմանորեն չի ենթադրում իր հակադրության առկայությունը։ Նույնիսկ այն դեպքերում էլ, երբ առկա են հակադրությունները (օր. թևավոր—անթև), դա ոչ թե համակարգային (սիստեմային) հակադրություն է, այլ՝ պայմանական։ Այսպիսով, պայմանական հակադրություն ասելով մենք հասկանում ենք այնպիսի հակադրությունները, որոնք անհրաժեշտաբար չեն բխում տվյալ համակարգից։

Վերջապես, արմատները կազմում են հարաբերականորեն բաց դաս: Յուրաքանչյուր լեզվի մեջ, յուրաքանչյուր փուլում արմատների քանակը աճում է փոխառությունների միջոցով. եթե մեր արդի լեզվի բոլոր արմատների (ներառյալ նաև գիտատեխնիկական տերմինաբանությունը) ցուցակը կազմեինք և համեմատեինք մի հիանամյակ առաջ գոյություն ունեցած արմատների ցանկի հետ, ապա կգտնեինք հավանաբար մի քանի հազար նորամուտ արմատներ: Այս տեսակետից նա բաց դաս է. մյուս կողմից, ոչ մի լեզվի արմատները չեն կարող կազմել անսահմանություն: Թեև այստեղ գործ ունենք հազարների հետ, հնչույթների մի քանի տասնյակներով, ձևորդների և ածանցների ծայրահեղ դեպքում հարյուրավորներով արտահայտվող քանակի դիմաց, բայց և այնպես արմատներն էլ վերջավոր քանակ են կազմում: Բայց քանի որ այդ քանակն անընդհատ կարող է աճել, ապա այստեղ վերջավոր թիվը նույնքան հարաբերական է, որքան և համակարգի բաց բնույթը: Այս բոլորը նկատի ունենալով է, ահա, որ մենք արմատների դասը համարում ենք հարաբերականորեն բաց դաս:

Ինչպես ածանցների, այնպես էլ արմատների համար կարելի է ընդունել պայմանական հակադրություններ. արմատների համար այս պայմանականությունն ավելի մեծանում է ոչ միայն այն պատճառով, որ գործ ունենք բաց դասի հետ, այլև այն պատճառով, որ հակադրությունը կարող է ստեղծվել բառային մակարդակում, անկախ արմատների համակարգից: Այսպես, սպիտակ գույնի հասկացությունը ենթադրում է անպայման առնվազն նաև մի ուրիշ (= ոչ սպիտակ) գույնի հասկացության գոյությունը, բայց դա չի կարող նշանակել, թե սպիտակ արմատի առկայությունը անպայմանորեն ենթադրում է նաև մի այլ գույնի հասկացություն արտահայտող արմատի գոյություն: Հնարավոր է, որ այդ հասկացությունն արտահայտվի ոչ թե մեկ արմատով, այլ բարդ կամ ածանցավոր բառով (օր. մոխրագույն, շագանակագույն): Ձևորդների համար այդպիսի դեպքերը հանգեցվում են ձևաբանական միավորների հակադրության, զրոյի հարաբերությամբ, մինչդեռ արմատների նկատմամբ զրոյի հարաբերությունն անհնարին է, ըստ որում չի կարելի պատկերացնել զրո+ածանց կամ ձևորդ շարակարգություն:

Ձևույթային մակարդակին գերադասվող մակարդակների միավորների վերլուծման համար անհրաժեշտ է որոշակիորեն սահմանել արմատի ըմբռնումը: Հասկանալի է, որ դրա համար ելակետ պետք է ընդունենք լեզվի տվյալ կառուցվածքի և ոչ թե ստուգաբանական

միավորները։ Իրավունք, իրավաբանություն, անիրավ, իրավ *են բառերի համար կարելի է կանխադրել* իրավ *արմատը, որը թեև ստուգաբանորեն կարող է վերածվել* ի-ր-ավ *բաղադրիչներին և հանգեցվել ի արմատին, բայց չի կարելի արդի կառուցվածքի ձևույթային միավորների վերածել, ըստ որում չունենք ու ածանցը։ Հասցե բառի հաս հատվածը կարելի է նույնացնել հասնել, տհաս են բառերի հաս արմատին, բայց քանի որ չունենք ցե ածանցը, ուրեմն արդի հայերենի համար պետք է կանխադրենք հասցե արմատը, անկախ նրա ստուգաբանությունից.* սոցիալ, սոցիալական, սոցիալիզմ են *բառերի համար պետք է ընդունել* սոցիալ *արմատը,* փիլիսոփա, փիլիսոփայել, փիլիսոփայություն *են բառերի համար՝* փիլիսոփա *արմատը, թեև* սոցիալ *և* փիլիսոփա *արմատական բառեր չեն այն լեզուներում, որոնցից ծագում են։* Դիտմամբ *բառից կարելի է զատել* -ամբ *ձևույթը, որով կմնա* դիտում, *իսկ սրանից էլ* ում-ը, *և կստանանք* դիտ/դետ *արմատը (համմտ. դետ-ք), որովհետև* ամբ *հատվածը կարող ենք նույնացնել* մասամբ, իրավամբ *են բառերի* ամբ *հատվածի հետ և դիտել իբրև մակբայակերտ ածանց, թեև ստուգաբանորեն այս* ամբ *հատվածը հանգում է* ան-ք *տարրերին, որոնցից առաջինը հոլովական հիմքի մաս է (մասն, մասան-ք> մասամբ), իսկ երկրորդը՝ վերջավորություն։ Այսպիսով՝ արմատ է բառային իմաստ կրող յուրաքանչյուր* հնչույթ *կամ* հնչույթային շարք, *որից չի կարելի անջատել լեզվի տվյալ կառուցվածքում գործառող որևէ իմաստակիր միավոր առանց իմաստն աղավաղելու կամ իմաստազրկելու։ Ըստ այսմ՝* հնոց *բառը պետք է դիտել իբրև արմատ, որովհետև թեև կարելի է* -ոց *հատվածը նույնացնել դարբնոց, դպրոց են բառերի* -ոց *ածանցի հետ, բայց չի կարելի* հն *(<հուն) հատվածին իմաստ վերագրել արդի հայերենում, մինչդեռ* հիանալ, հիացում, հիազարհուր, հիասթափություն *են բառերից կարելի է զատել հի արմատը, որին հեշտությամբ կարելի է վերագրել տարբերակելի իմաստ։ Խնդիրն ավելի բարդանում է այնպիսի բառերի համար, ինչպիսիք են* դիրեկցիա, դիրեկտոր, դիրեկտիվ, կոոպերացիա, կոոպերացնել, կոոպերացում, կոոպերատիվ, կոոպերատոր, կոորդինացիա, կոորդինացնել, կոորդինացում, կոորդինատ *են։ Այս բառերի* -ացում, -ացնել *հատվածները հեշտությամբ կարելի է նույնացնել այնպիսի բառերի նույն հատվածի հետ, ինչպիսիք են* հեռ-ացնել, հեռ-ացում, զգաստ-ացնել, զգաստ-ացում *են, թեև առաջինների մեջ ստուգաբանորեն* աց-ը ացիա-ի *հատույթն է, որ զուգադիպելով հայերեն բառերի* ացնել

հատվածի ած-ին, նույնացել է նրա հետ, բայց կարելի՞ է արդյոք ընդունել նաև ցիա, տոր, տիվ ածանցները ժամանակակից հայերենի համար, երբ դրանք ոչ մի հայերեն բառի կամ արմատի հետ չեն գործածվում: Մեր կարծիքով ելակետը պետք է լինի ոչ թե հայերեն արմատների հետ գործածելիությունը, այլ հատուցվածելու հնարավորությունը: Արդի հայերենում այդպիսի շարքեր կազմող փոխառյալ բառերն այնքան շատ են, որ խոսողները գիտակցում են ցիա, տոր, տիվ ածանցները, ուստի և արդի հայերենի համար հիշյալ բառերի արմատները պետք է համարել դիրեկ-, կոռպեր-, կոռուպցիո-:

Եվ այսպես, ձևույթային համակարգը ներկայացնում է միավորների երեք դաս՝ արմատների դաս, ածանցների դաս, ձևորդների դաս, որոնցից առաջին երկուսը բաղադրույթներ են բառային, իսկ երրորդը՝ ձևաբանական մակարդակի համար: Ձևույթները կազմում են փակ դաս, ածանցները՝ հարաբերականորեն փակ դաս, արմատները՝ հարաբերականորեն բաց դաս: Լեզվի կառուցվածքի մեջ յուրաքանչյուր փակ դաս (հնչույթներ, ձևորդներ, բառույթներ) բնորոշվում է անպայման հակադրություններով, որով և ստանում է խիստ համակարգային բնույթ, բաց դասերը բնորոշվում են պայմանական հակադրություններով, որով և պայմանական է դառնում նաև համակարգային բնույթը[1]: Ուստի և՝ ձևորդների դասը բնորոշվում է բացարձակ համակարգայնությամբ, իսկ ածանցների և արմատների դասերը՝ հարաբերական համակարգայնությամբ:

Ձևույթային մակարդակի քննության կարևորագույն խնդիրն է նրա միավորների միջև եղած հարաբերությունների բացահայտումն ու արժույթների որոշումը: Վերը շարադրվածի հիման վրա մենք կարող ենք հերոս-ա-կան-ություն, ան-գիր, գր-ավոր, այգ-ուց, պարտեզ-ից ևն բառերի հերոս-, գիր-, գր-, այգ-, պարտեզ- հատույթները հատկացնել արմատների դասին, -(ա)կան, -ություն, ան-, -(ա)վոր հատույթները՝ ածանցների դասին, իսկ -ից, -ուց հատույթները՝ ձևորդների դասին, բայց չենք կարող որոշել, թե արդյոք գիր, գր, պարտեզ, պարտիզ, -ից -ուց հատույթներից յուրաքանչյուրը մեկ ինքնուրույն ձև՞ույթ է, թե՝ ոչ և, հետևաբար, չենք էլ կարող բացահայտել նրանց փոխհարաբերությունը: Որպեսզի կարողանանք այդ բանը որոշել, անհրաժեշտ է որոշ վերլու-

1 Բաց դասերը, ինչպես կտեսնենք բառային մակարդակի մասին խոսելիս, կարող են իրենց մեջ ունենալ փակ համակարգ կազմող խմբեր կամ ենթադասեր բաց խմբերի կամ ենթադասերի հետ: Այս պատճառով էլ ամբողջ դասին չի կարելի վերագրել խիստ համակարգայնություն:

ծությունների հիման վրա գործնական այնպիսի սկզբունքներ մշակել, որոնց օգնությամբ հնարավոր լինի մեքենայնորեն և օբյեկտիվորեն բացահայտել նրանց արժութաբանությունը։ Դիմենք հետևյալ օրինակների վերլուծությանը։

1. Տրված են **-գետ, գիտ-, լույս, լուս-, կին, կն-, կան-** *արմատները ամենագետ, գիտուն, գիտենալ, լույս, լուսավոր, կին, կնոջ, կանացի բառերում, եր, ներ, իկ ձևորդները՝* **ծառեր, ֆաղաքներ, մարդիկ** *բառաձևերում,* **ից, ուց** *ձևորդները՝* **ֆաղաքից, այգուց** *բառաձևերում. պետք է որոշել, դրանք ինքնուրույն ձևույթնե՞ր պետք է համարել, թե ոչ։*

Առաջին խմբի ձևույթների հարցը լուծվում է հնչույթաբանական հայտնի իրողությամբ. **գիր և գր, լույս և լուս, կին և կն** *զույգերի գոյությունը պայմանավորված է հնչույթաբանական հայտնի իրողությամբ. շեշտակիր* **ի, ու, է** *ձայնավոր հնչույթները և* **ույ, յա** *երկհնչույթները՝ շեշտից առաջ ընկնելով, հաճախ դառնում են՝* **ի, ու, ը,** *կամ* **զրո, է>ի, ույ>ու, յա>է**: *Բերված օրինակների մեջ այդ զույգերի անփոփոխ ձևերը գտնվում են շեշտի տակ, փոփոխվածները՝ շեշտից առաջ։ Ուստի և՝ առաջնորդվելով այդ օրինաչափությամբ և նկատի ունենալով, որ բերված բառերի մեջ այդ արմատների յուրաքանչյուր զույգը մեկ ընդհանուր բառային իմաստ է արտահայտում, կարող ենք դրանք միևնույն արմատի երկու տարբեր ձևերը համարել. այդպիսի ձևերը կոչենք ձևակ (մորֆա)*[1]*։ Հեշտ է համոզվել, որ* **կան** *ձևն էլ նույն հարաբերության մեջ է* **կին** *ձևի հետ, ինչ որ* **կն-ը**։ *Իմաստի բացարձակ նույնությունը ապացուցվում է* **կին-կանայք, կանաց, մարդ-մարդիկ-մարդկանց, ֆաղաք-ֆաղաքներ-ֆաղաքների** *շարքերի անդամների նույնական հարաբերակցությամբ։ Ուրեմն,* **կին** *ձևույթը տարբեր ոլորտներում կարող է հանդես գալ երեք իրարից տարբեր ձևերով՝* **կին, կն, կան,** *որոնցից յուրաքանչյուրը մեկ ձևակ է. որպեսզի տարբերենք ձևակները ձևույթներից, այս վերջիններս կառնենք ձևավոր փակագծերի մեջ և կգրենք մեծատառերով, իսկ ձևակը՝ շեղ փակագծերի մեջ և կգրենք փոքրատառերով, օրինակ՝* {ԿԻՆ} → /կին/, /կն/, /կան/։

Նույնպիսի հարաբերակցություն մենք կարող ենք գտնել նաև ածանցների և ձևորդների միջև։ Այսպես՝ **շարժում-շարժման, հարցում-հարցման** *են զույգերի մեջ ունենք* **ում-մ** *հատույթները, իսկ* **շարժման-շարժմամբ, հարցման-հարցմամբ** *զույգերի մեջ՝* **ան-ամ**

1 Մորֆա *տերմինը լեզվաբանական գրականության մեջ գործածվում է տարբեր իմաստներով, մենք գործածում ենք «ձևակ» տերմինը իբրև մորֆա-ի մեկ իմաստի համապատասխանը։*

հատույթները։ Դժվար չէ նկատել, որ ում և մ ձևերի միջև նույն հարաբերությունը կա, ինչ որ գիր–գր, կին–կն, ջուր–ջր զույգերի միջև, այսինքն՝ այստեղ էլ ունենք շեշտյալ դիրքի և նախաշեշտ դիրքի ձևեր, ուրեմն պետք է ընդունենք {ՈՒՄ} ձևույթը, որ ունի /ում/ և /մ/ ձևակները։ Այլ է ան–ամ զույգի հանգամանքը. այստեղ ունենք ն> մ փոփոխությունը ԲՆ–ից առաջ, որպես առնամանություն ըստ արտասանության տեղի[1]։ Քանի որ հարցման–հարցմամբ, շարժման–շարժմամբ զույգերի անդամները հարաբերվում են միմյանց ճիշտ այնպես, ինչպես՝ բաջության–բաջությամբ, արյան–արյամբ, մի կողմից, և շարժումների–շարժումներով, հարցումներ–հարցումներով, այլև՝ շարժման–շարժումով, հարցման–հարցումով՝ մյուս կողմից, ապա պարզ է, որ դրանք էլ ներկայացնում են ան ձևույթի երկու ձևակները։

Բերված օրինակների մեջ, ինչպես հեշտ է նկատել, ունենք միևնույն ձևույթի տարբեր ձևերը, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս մի որոշակի ոլորտում. օր. գիր շեշտյալ վանկում, գր նախաշեշտ վանկում, ամ (շարժմամբ) բ–ից առաջ, ան մյուս դիրքերում։ Երկրորդ նկատելի իրողությունն այն է, որ այդ ձևակները կազմում են մեկ ձևույթի հարացուցային ձևեր և կարող են զուգադրվել այդ կարգի փոփոխությունների չենթարկվող ձևույթների համապատասխան հարացույցներին։ Այսպես՝

գիր	գրային	փորձ	փորձային
գրի	գրություն	փորձի	փորձություն
գրից	գրագետ	փորձից	փորձագետ
գրով	գրել	փորձով	փորձել
գրեր են	անգիր են	փորձեր են	անփորձ

Այս չորս սյուներից առաջինը և երրորդը կազմում են հոլովման հարացուցային շարք, իսկ երկրորդը և չորրորդը՝ բառակազմության։ Դժվար չէ նկատել, որ առաջին երկու սյուների մեջ գիր և գր ձևերն այնպես են հարաբերում միմյանց, ինչպես երրորդ և չորրորդ սյուների փորձ ձևույթը հարացուցային տարբեր ձևերի մեջ։ Նույն ձևով հարացույցներ կարող ենք կազմել նաև ում–մ, ան–ամ ձևույթների համար, ինչպես՝

շարժում	շարժման	շարժմամբ
հարցում	հարցման	հարցմամբ
ծագում	ծագման	ծագմամբ

1 Այս դիրքում մ—ն հակադրության չեզոքացման մասին տե՛ս մեր «Գրաբարի քերականություն», հ. 1, գիրք Ա, 1964, § 54։

Այստեղ էլ հարացուցային շարքեր են կազմում տարբեր հոլովական հիմքերը, և շարժում–շարժման, շարժման–շարժմամբ հարաբերում են միմյանց այնպես, ինչպես հարցում–հարցման, հարցման–հարցմամբ և ծագում–ծագման, ծագման–ծագմամբ, որով և հաստատվում է զուգահեռ ձևերի ամ–մ, ան–ամ ձևույթների իմաստային և գործառական նույնությունը: Վերջապես՝ երրորդ նկատելի կետն է այն, որ այդ զույգերը ձևով իրար նման են: Այս բոլորից կարող ենք բխեցնել հետևյալ ընդհանուր սահմանումը. Եթե իրար նման երկու կամ ավելի նույնիմաստ ձևեր որևէ մակարդակի (բառային, ձևաբանական, շարահյուսական) հարացուցային շարքերում նույն գործառությամբ փոխարինում են միմյանց տարբեր դիրքորոշումներում, ապա նրանք միևնույն ձևույթի ձևակերներն են:

Ձևակները կարող են լինել դիրքային և համակցական: Դիրքային են այն ձևակները, որոնցից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ մի որոշակի դիրքում. օրինակ գիր–գր, դեզ–դիզ (ել), լույս–լուս (ավոր) *են ձևակները դիրքային են, որովհետև նրանցից առաջիններդը հանդես են գալիս ուժեղ դիրքում (շեշտի տակ), երկրորդները՝ թույլ դիրքում (շեշտից առաջ): Հասկանալի է, որ այս ձևակներից ձևույթի մակարդակին կբարձրացվի այն ձևը, որ հանդես է գալիս ուժեղ դիրքում: Բերված օրինակները, հետևաբար, կներկայացվեն այսպես՝*

$\{ԳԻՐ\} \rightarrow |գիր|, |գր|$ $\{ԴԵԶ\} \rightarrow |դեզ|, |դիզ|$
$\{ԼՈՒՅՍ\} \rightarrow |լույս|, |լուս|$ *են:*

Համակցական են այն ձևակները, որոնց մեջ ձևույթի ձևական (=հնչույթային) կազմի փոփոխությունը պայմանավորված է նախորդող կամ հաջորդող ձևույթներով: Օրինակ՝ ան–ամ *ձևույթներից երկրորդը հանդես է գալիս միայն գործիականի բ-ից առաջ, իսկ առաջինը՝ մյուս բոլոր դեպքերում (օր.* գարուն–գարնան–գարնանից): *Այստեղ էլ ձևույթի մակարդակին է բարձրացվում ոչ կախյալ ձևը. օրինակ՝* $\{ԱՆ\} \rightarrow /ան/, /ամ/$: *Ըստ այսմ* կին, կն, կան *(*կին, կնոջ, կանայք, կանացի*) ձևակները դիրքային են. թեև երրորդը, իբրև կանոն, հանդես է գալիս հոգնակիում, բայց չի բացառվում նաև ածանցների մեջ (օր.* կանացի, կանանոց*): Օրեն,* օրին*(*ական*),* օրենս *ձևակներից առաջին երկուսը դիրքային են, իսկ երրորդը՝ համակցական, որովհետև նա հանդես է գալիս միայն մի այլ արմատից առաջ (օր.* օրենսգետ, օրենսդիր*):*

Ձևույթների և նրանց ձևակների որոշման համար պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները։

1. Հայերենի պատմական զարգացման ընթացքում շատ արմատներ զանազան հնչյունական փոփոխությունների հետևանքով ստացել են զուգաձևեր. դրանցից շատերի նույնությունը հեշտությամբ բացահայտվում է, իսկ ուրիշներինը՝ ոչ։ Օրինակ՝ ունենք բարձրաբերձ, բարձր, բարձել, բառնալ, (համ)բարձվել, *որոնք բոլորն էլ ստուգաբանորեն միևնույն արմատն ունեն* (բարձ, բերձ, բառ–), դարձ–դարձնել–դառնալ, *արմատը՝* դարձ /դառ–, այր–այրական, առ՞ացի, առնական, արու, *արմատը՝* այր/առ–/ար–, ընթեռնել–ընթերցել, *արմատը՝* (ըն)թեռ, (ըն)թերց *և այլն։ Հարց է առաջանում, կարո՞ղ ենք ժամանակակից հայերենում էլ բերված բառախմբերի արմատները նույնացնել, թե ոչ։ Այս որոշել կարելի է հետևյալ ընդհանուր սկզբունքը կիրառելով. եթե երկու կամ ավելի նույնիմաստ ձևերի հնչյունական փոփոխությունները կարող են ժամանակակից լեզվի տվյալներով բացատրվել որպես դիրքային կամ փոխազդեցական փոփոխություններ, ապա այդ ձևերը հանգում են մեկ արմատի, հակառակ պարագայում նրանք տարբեր արմատներ են։ Օրինակ՝* դարձ–դառնալ–դարձնել, բարձել–բառնալ, ընթերցել–ընթեռնել *բառաշարքի մեջ ունենք* rձ *կամ* rց>n *փոփոխությունը, որ տեղի է ունեցել* -ձ-/-ց *առաջ. այս դեպքում կարող ենք ասել, որ* ձ-/-ց *անմիջապես առաջ* ձ *կամ* ց *պայթաշփականները ընկել են, իսկ* r-*ն դարձել է* n[1]. r—n *փոփոխությունը* ձ-/-ց *առաջ կարող ենք գտնել նաև* դուռ(-ձ)—դռնապահ–դռկից–դռացի, արու–արական–առնական–առնացի *բառախմբերի մեջ, որով կհաստատվի տրված բացատրությունը։ Դրանց հակառակ՝* բարձրաբերձ, բարձել, այր–այրական–այրանալ–առնական–առնանալ *բառախմբերի* բերձ–բարձ, այր–առ–, *ինչպես և՝* այր–այրական–արու–արական *բառերի* այր–ար *արմատները չենք կարող հանգեցնել մեկ ձևույթի, որովհետև նրանք ժամանակակից հայերենի տվյալներով չեն կարող բացատրվել որպես դիրքային կամ փոխազդեցական հնչյունափոխությամբ առաջ եկած ձևեր։*

2. Շատ հաճախ ձևույթի անփոփոխ ձևակը հանդես է գալիս այն դիրքում, որտեղ պետք է ունենայինք փոփոխված ձևը, օրինակ՝ լույս–լուսավոր, *բայց* լույսի, լույսեր, պարտեզ–պարտիզպան,

---

1 *Դարձնել, հարցնել* են *բառերի մեջ այդ բանը տեղի չի ունեցել, որովհետև* ձ-/-ց *առաջ արտասանվել է* ր, *որ այժմ էլ հաճախ արտասանվում է։*

բայց՝ պարտեզի, պարտեզներ, հանդես–հանդիսավոր, *բայց՝* հանդեսի *ևն։ Այսպիսի դեպքերում կարելի է ասել, որ փոփոխված ձևերի ոլորտը լրացուցիչ սահմանափակում ունի. ույ–ու, է–ի հնչյունական փոփոխություն ունենք միայն բառային մակարդակում, բայց ոչ ձևաբանականում։ Այլ է պատկերը ու, ի>ը փոփոխության համար. այստեղ մենք ունենք՝ ա) ջուր–ջրկիր–ջրի–ջրեր, գիծ–գծային–գծի–գծեր, բ) գլուխ–գլխավոր–գլխի–գլուխներ, կացին–կացնահարել–կացնի–կացիններ, գ) սերունդ–սերնդի և սերունդի–սերունդներ, թուրֆ–թուրֆի և թրֆի–թուրֆեր–թուրֆերի և թրֆեր–թրֆերի, թուրֆական–թուրֆերեն և թրֆական–թրֆերեն, շիթ–շիթի և շթի–շիթեր ևն։ Այս երեք դեպքերից առաջինում ունենք բացարձակ կանոն, երկրորդում՝ հիշյալ փոփոխությունը որոշ սահմանափակումով (գոյականների հոգնակի թվում փոփոխության չեն ենթարկվում բազմավանկ բառերը) և, վերջապես, երրորդում, հենց միևնույն դիրքում՝ անփոփոխ և փոփոխված ձևը։ Այս դեպքում մենք* սերնդ–, թրֆ–, շթ– *ձևերը կարող ենք դիտել որպես* սերունդ, թուրֆ, շիթ *ձևույթների ազատ ձևակները՝ շեշտից առաջ։*

Ձևույթների միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունները բացահայտելու համար անհրաժեշտ է այժմ քննության առնել այն դեպքերը, երբ՝ ա) երկու կամ ավելի ձևույթներ ձևով նույնական են, իմաստով և գործառությամբ տարբեր, բ) ձևով տարբեր են, իմաստով և գործառությամբ նույնական, գ) ձևով և իմաստով նույնական են, գործառությամբ տարբեր։

Առաջինի համար վերցնենք հետևյալ օրինակները. այր «քարանձավ», այր «տղամարդ» և այր–(այրել բառի արմատը).—մայրիկ, քույրիկ, գլխիկ.—մեղմիկ, քաղցրիկ, անուշիկ.—մարտիկ, ռազմիկ, բացիկ, մրրիկ.—անառիկ, բացառիկ, գռեհիկ, թռուցիկ.—գործ–ի *(սեռ. հոլ.)*—գործի *(ըղձ. եղ. եզ. 3–րդ դ.)։ Առաջին երեք արմատների մասին գիտենք արդեն, որ համանուններ են և դրանից ելնելով մյուսների մասին էլ կարող ենք նույնը ասել. –իկ ածանցի մասին սովորաբար ասվում է, թե բազմիմաստ ածանց է, որ կազմում է գոյականների ու ածականների նվազական–փաղաքշական ձևեր, որևէ հատկություն ցույց տվող ածականներ և ոչ նվազական–փաղաքշական գոյականներ։ Այս դեպքում դրա զուգահեռն են կազմում բազմիմաստ բառերը։ Ըստ գործառության այդ չորս կարգի բառերը, որոնք կազմվում են –իկ ածանցով, տարբեր են. ա) մի կողմից ունենք գոյականներ, որոնք կարող են ստանալ հոլովական և հոգնակերտ վերջավորություն, մյուս դեպքում՝*

ածականներ, որոնք առանց փոխանունության չեն կարող ստանալ այդ վերջավորությունները. բ) մի կողմից ունենք ածականներ, որոնք կարող են կազմել համեմատության աստիճաններ, մյուս կողմից՝ գոյականներ, որոնք չունեն այդ աստիճանները։ Իմաստով էլ այդ երկու խմբերն այնքան տարբեր են միմյանցից (գոյականներ և ածականներ), որ նույնացնել չենք կարող։ Ուստի և՝ կարելի է ասել, թե ունենք գոյականակերտ -իկ և ածականակերտ -իկ համանուն ածանցներ։ Բայց այս երկու կարգերն էլ կարող ենք բաժանել նոր զույգերի. մայրիկ և մատիկ հայտնապես տարբեր են. մեկում ունենք նվազական-փաղաքշական իմաստ, մյուսում՝ գործող անձ կամ որևէ հատկությամբ բնորոշվող գոյական (բացիկ, մրրիկ), այդպես էլ՝ մեղմիկ քնքշական է, գեհիկ, աճառիկ՝ ոչ։ Հետևաբար մենք պետք է ընդունենք նույն -իկ ձևով չորս տարբեր ձևույթներ և կոչենք համանուններ։ Վերջապես՝ գործի (սեռ. հոլ.) և գործի (ըղձ. եղ. եզ. 3-րդ դեմք) ձևերի ի ձևորդի մասին արդեն խոսել ենք և ընդունել, որ դրանք համանուններ են։

Երկրորդ կարգի համար վերցնենք հետևյալ օրինակները. մազ-ներ, վերջ-վախճան.—մեռաղյա-fարե.— հիվանդանոց-դպրոց-դասարան.— քաջաբար-վեհորեն.— ուտ(ել)—կեր(ա).— սեղանի-այգու-քրոջ-դռան.— ծառեր-քաղաքներ են։

Առաջին երկու զույգերը բառեր են, որոնք ավանդական քերականության մեջ կոչվում են համանիշներ կամ նույնանիշներ. այդ անվանումը շատ հարմար է բառային մակարդակի համար և այդպես էլ կընդունենք. ձևույթային մակարդակում, սակայն, դրանք չունեն բառերի այն տարբերակումները (ոճական, կիրառական են), որոնք թույլ են տալիս նույն իմաստով տարբեր բառեր համարել. այսպես՝ մազ և ներ համանիշներ են, բայց նրանցից առաջինը գործածական է բոլոր ոճերում (խոսակցական, ընդհանուր-գրական, բանաստեղծական), երկրորդը՝ միայն բանաստեղծական ոճում և գիտական տերմինաբանության մեջ, իբրև բաղադրույթների անդամ։ Կռիվ և պայfար համանիշներ են, բայց կարելի է ասել՝ նա կռիվ (կամ կռվի) գնաց, բայց չի կարելի ասել՝ նա պայfար (կամ պայfարի) գնաց, ընդհակառակը՝ կարելի է ասել Մենք պայfարի ենք ելել պլանները կատարելու և գերակատարելու համար, բայց չի կարելի ասել Մենք կռվի ենք ելել պլանները կատարելու և գերակատարելու համար։ Այստեղ, ուրեմն, իրոք ունենք տարբեր բառեր, որոնք իրենց գործառության տարբեր ոլորտն ունեն և իմաստային տարբեր ծավալ։ Ինչ վերաբերում է ձևույթային

մակարդակին, ապա դրությունը բոլորովին այլ է։ Որպես ձևույթներ կռիվ և վախճան ունեն տարբերակելի իմաստներ. իբրև այդպիսիք նրանք նույնական են, գործառությամբ՝ նույնպես. երկուսն էլ պոտենցիալ կերպով կարող են անցնել բառային մակարդակը և հանդես գալ իբրև պարզ բառ, երկուսն էլ կարող են նույնպիսի ձևույթների միանալ (կռվել, պայքարել), և այն դեպքերում էլ, երբ մեկը տվյալ ձևույթի համակցությունն ունի, մյուսը՝ ոչ, ապա դա կառուցվածքին չի վերաբերում. այն, որ ունենք կռվարար, բայց չունենք պայքարարար, սա ոչ կառուցվածքից է բխում, ոչ էլ՝ կանոնից. կարող էր լինել նաև հակառակը, բայց այդպես է կիրարկության մեջ։ Այս բոլորը նկատի առնելով, մենք համանիշ արմատները կարող ենք դիտել իբրև մեկ ձևույթի տարբեր դրսևորումներ, և համարել մեկ ձևույթի ենթաձևույթներ. տեսականորեն դա միանգամայն հիմնավորված է. բայց որովհետև դա շփոթ կառաջացներ ենթաձևույթների մեջ, այլև կհանգեցներ բարդ սահմանումների և անհարմար ու երկար ձևակերպումների (օրինակ՝ հարկավոր կլիներ ասել՝ կռվի կամ կռվելու ընդհանուր բառային իմաստն ունեցող ձևույթն ունի երկու ենթաձևույթ՝ կռիվ և պայքար), ապա ավելի լավ ենք համարում այստեղ էլ գործածել համանիշ տերմինը. ուրեմն՝ համանիշ արմատներ ասելով մենք հասկանում ենք միևնույն տարբերակելի բառային իմաստն ունեցող ձևույթի տարբեր նյութական դրսևորումները: Շեշտենք դարձյալ, որ նրանց գործառության տարբերությունները պայմանական են և ոչ կառուցվածքային։

Նույնպիսի հարաբերություն ունենք նաև յա-ե, ոց-(ա)նոց-արան, -ապար-որեն ածանցների միջև, ըստ որում այստեղ էլ նույն պայմանականությունն ունենք. ոչ մի կանոն չկա, որոշելու համար, թե ինչո՛ւ մի դեպքում բառը կազմում ենք յա, մյուս դեպքում ե ածանցով, մի դեպքում՝ ոց, մյուս դեպքում՝ արան ածանցով են։ Միանգամայն հնարավոր էր և կառուցվածքային տեսակետից օրինաչափ դպիր արմատից կազմել դպրարան, ինչպես որ ունենք ուսումնարան, կամ հակառակը՝ ուսումնոց, ինչպես՝ դպրոց, բայց ավանդաբար այդպես է ստացվել լեզվի մեջ (հմմտ.-հիվանդանոց, գժանոց—առողջարան, ճաշարան—հյուրանոց, աշխատանոց—գործարան, դարբնոց—հյուսնարան, վարսավիրանոց—խաղարան են, որոնք կարող էին նաև հակառակը լինել, ասենք՝ հիվանդարան—առողջանոց են)։ Բնորոշ է նաև, որ դրանք շատ հաճախ ազատորեն կարող են իրար փոխարինել և կազմել զույգ բառեր, ինչպես

գործարան–գործանոց, փայտյա–փայտե, երկաթյա–երկաթե, ֆաջա–քար–ֆաջորեն ևն. այդպես կարող են լինել նաև համանիշ արմատները. (օր. հոտավետ–բուրավետ, անուշահոտ–անուշաբույր, գանգրահեր–գանգրամազ ևն)։ Այստեղ էլ, ուրեմն, մենք կարող ենք գործածել հատանիշ ածանցներ[1] անվանումը, նույնպիսի սահմանումով. միևնույն ածանցական իմաստն ունեցող ձևույթի տարբեր հյութական դրսևորումները հատանիշ ածանցներ են:

Բոլորովին այլ հարաբերություն գոյություն ունի ուտ(ել)/կեր *(ա), սեղանի–այգու, քրոջ–դռան, ծառեր–քաղաքներ բառերի* ուտ–/–կեր–, –ի/–ու –ոջ/ան, –եր/–ներ *ձևույթների միջև. այս ձևույթները համանիշ արմատների և ածանցների զուգահեռն են կազմում այն տեսակետից, որ յուրաքանչյուր գոյզը կամ շարքը նույնություն է ներկայացնում ըստ իմաստի, ըստ որում, սրանց իմաստային նույնության և նախորդների իմաստային նույնության միջև որոշակի տարբերություն կա։ Համանիշ արմատները և ածանցները, նույնիսկ բացարձակ նույնիմաստ լինելու դեպքում էլ, բառային մակարդակում որոշ տարբերակումների ենթարկվում են, որ հանգեցնում է բառերի իմաստային կամ գործառական (ոճային, տերմինաբանական, կիրառական ևն) տարբերակման. (համմտ. օր. գործարան և գործանոց, բույր—հոտ ևն), մինչդեռ* –եր/ներ *կամ* ուտ–/կեր– *ձևույթների իմաստները բացարձակապես նույնական են և այդպես էլ մնում են թե՛ բառային և թե՛ ձևաբանական մակարդակում։ Նախորդների և այս վերջինների սկզբունքային տարբերությունը նրանց գործառության մեջ է. –քար և –որեն համանիշները հավասարապես կարող են հանդես գալ միևնույն ոլորտում, մինչդեռ –եր և –ներ չեն կարող. սրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր ոլորտ. այդպես են նաև՝* ուտ–/կեր– *արմատներն ու* –ի/ու/ոջ/ան *ձևորդները։ Այստեղ, ուրեմն, ունենք ոլորտների բաշխում կառուցվածքի մեջ, ըստ որում զուգահեռների գոյությունը պատմական զարգացման արդյունք է և պատկանում է կանոնական մակարդակին[2]։ Եթե այս ձևույթների նկատմամբ կիրառենք բաշխում-*

---

1 *Այս անվանումն էլ նոր չէ և գործածվել է ավանդական քերականության մեջ (տե՛ս, օրինակ,* Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, Եր., 1931, էջ 248.* Ս. Էլյան, *Ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1963, էջ 143 ևն)։*

2 *Համանիշների գործառությունն էլ կարող է կիրարկությունից անցնել կանոնին. այն, որ պայմարառար չունենք, արդեն նորմա է, բայց սա լեզվի պատմական զարգացման արդյունք չէ, այլ կիրարկության, և եթե անհրաժեշտ լինի, ոչ կառուցվածքը, ոչ էլ կանոնը չեն խանգարի այդ բառը գործածելուն։*

յին մեթոդը, ապա կտեսնենք, որ նրանք լրացուցիչ բաշխման մեջ են. եր կարող է հանդես գալ միավանկ բառերի հետ, ևեր՝ բազմավանկ, սեռականի ու վերջավորությունը կարող է համակցվել ուղղականում ի-ով վերջացող բառերի հետ, -վա՝ ժամանակ ցույց տվող բառերի, աև, ց և ոչ՝ սակավաթիվ բառերի հետ, որոնք առանձին խմբեր են կազմում, ի՝ բոլոր այն բառերին, որոնք ներքին թևքման չեն ենթարկվում և մյուս խմբերին չեն պատկանում. ուտ- ներկայի հիմք է և կարող է ընդունել բայի այդ հիմքից կազմվող ձևերի վերջավորություններ, կեր- անցյալի հիմք է և այլն, և այլն: Այս բոլորը նկատի ունենալով՝ այս կարգի նույնիմաստ ձևորդները, ածանցները և արմատները կկոչենք ենթաձևույթներ: Հետևաբար, եթե ձևույթային մակարդակի իմաստով նույն, ձևով տարբեր երկու կամ ավելի միավորներ գործառում են տարբեր ոլորտներում և հակադրություն չեն կարող կազմել դրա հետևանքով, ապա նրանք միևնույն ձևույթի ենթաձևույթներն են: Բերված օրինակների մեջ եր և ևեր հոգնակերտ ձևույթի ենթաձևույթներն են (ինչպես նաև՝ իկ, այք, ք), ի, ու, աև, ոչ, վա, ց սեռականակերտ ձևույթի ենթաձևույթներն են և այլն: Ձևակների մասին խոսելիս մենք ասացինք, որ ձևույթի մակարդակին է բարձրացվում ուժեղ դիրքում հանդես եկող ձևը, ենթաձևույթների մասին այդպես ասել չենք կարող, որովհետև նրանց ոլորտները թույլ կամ ուժեղ դիրքով չի կարելի բնորոշել: Մնում է, ուրեմն, որոշ պայմանականության դիմել. ուտ-/կեր- զույգից ձևույթի աստիճանին կբարձրացնենք ուտ-, որովհետև բայի ելակետային ձևում հանդես է գալիս նա, սեռականի վերջավորությունների համար որպես վերացական և ընդհանրացված ձևույթ կդիտենք հնոց սեռականի ձևորդ արտահայտությունը և կնշանակենք U տառով (սեռական բառի սկզբնատառը), հոգնակիի համար՝ հոգնակերտ ձևորդ արտահայտությունը, որ կնշանակենք Հ տառով (հոգնակի բառի սկզբնատառը): Ենթաձևույթները ձևակներից տարբերելու համար առնելու ենք անկյունավոր փակագծերի մեջ: Ըստ այսմ կստանանք հետևյալ պատկերը. հոգնակերտ՝ { Հ } → [-եր, -ներ], սեռականի ձևորդ՝ {U} → [-ի, -ու, աև, -վա, -ոչ, -ց], ուտել բայի հիմք՝ { ՈՒՏ } → [ուտ-, կեր-]:

Եթե այժմ համեմատենք ենթաձևույթները համանիշ արմատների և ածանցների հետ, ապա կտեսնենք, որ նրանց միջև որոշակի տարբերություն կա, ուստի և անվանման տարբերությունն արդարանում է: Ընդհակառակն, համանիշ արմատների և համանիշ

ածանցների տարբերակումը չի արդարանում, որովհետև դրանց միջև եղած տարբերությունը ձևույթների հարաբերությանը չի վերաբերում, այլ նրանց դասերին։ Ուստի և այստեղ էլ տարբերակումը կարող ենք վերացնել և կոչել ընդհանուր անունով, այն է՝ համանիշ ձևույթներ։

Այսպիսով, վերը թվարկված ձևույթների երկրորդ կարգը (ձևով տարբեր, իմաստով և գործառությամբ նույնական) ըստ իրար հետ ունեցած իմաստի ու գործառական հարաբերությունների բնորոշվում են որպես համանիշ ձևույթներ և ենթաձևույթներ, նկատելով սակայն, որ համանիշ ձևույթներն էլ ըստ էության ենթաձևույթների մի տեսակն են (պայմանական բաշխումով ենթաձևույթներ)։

Երրորդ կարգի՝ ձևով և իմաստով նույնական, գործառությամբ տարբեր ձևույթների համար կարելի է հիշել բայի անցյալ կատարյալի և ըղձականի ապառնիի վերջավորությունները.

գնայի	գնացի
գնայիր	գնացիր
գնար	գնաց
գնայինք	գնացինք
գնայիք	գնացիք
գնային	գնացին

Ինչպես տեսնում ենք, բացի եզակի երրորդ դեմքից, մյուս բոլոր դեմքերի վերջավորությունները նույնն են։ Հարց է առաջանում, թե դրանք նույն ձևո՞ւյթը պետք է համարել, թե համանուններ։ Որպեսզի խնդիրը լուծենք, նախ փորձենք պարզել նրանց իմաստը. հիշյալ վերջավորությունները ցույց են տալիս դեմք և թիվ, որը այնքան պարզ է արտահայտված, որ ապացուցելու կարիք չունի։ Բայաձևերը ցույց են տալիս նաև ժամանակ, որ արտահայտվում է դարձյալ վերջավորություններով. գնամ, գնաս, գնանք, գնաք, գնան ձևերի մ, ս, նք ևն վերջավորություններով կազմվում է ըղձականի ներկան. ներկայի և անցյալի ձևերում հիմքը նույնն է, ուրեմն ժամանակային հակադրությունը հիմքով չի ստեղծվում, այլ վերջավորությամբ։ Վերջապես, գնայի, գնայիր և գնացի, գնացիր ձևերն արտահայտում են նաև եղանակային և կերպային իմաստներ. գնացի կատարյալ կերպ է, սահմանական եղանակ, գնայի կատարելի կերպ է, ըղձական եղանակ։ Հեշտ է համոզվել, որ այս երկու իմաստները հիմքերով են արտահայտվում. եմ, ես և էի, էիր ձևերում նույն ի, իր վերջավորությու-

ները ժամանակային հակադրություն առաջացնում են, կերպային և եղանակային՝ ոչ։ Ուրեմն, վերջավորությունները չունեն կերպի և եղանակի իմաստ։ Արդ՝ ըղձականի անցյալի և սահմանականի անցյալ կատարյալի, այլև օժանդակ բայի ու կամ բայի անցյալ անկատարի վերջավորություններն են ի, իր, իճ, իք, ին, որոնք կազմում են տարբեր բայաձևեր, իմաստով և ձևով նույնական են. գործառության տարբերությունն այն է, որ նրանք մի դեպքում կատարյալի հիմքի հետ են հանդես գալիս, մյուս դեպքում՝ ներկայի, բայց քանի որ նրանք երեք դեպքում էլ (ըղձական, կատարյալ, անկատար) անցյալի ձևեր են կազմում, ապա ըստ էության գործառական տարբերությունը (տարբեր հիմքեր) նրանց նույնությունը չի խախտում։ Հայտնի է, որ միևնույն ձևույթը կարող է տարբեր գործառություններ ունենալ և տարբեր ձևեր կազմել։ իբրև օրինակ մենք կարող ենք հիշել **ձեռ**ն**ե**ս *կամ* **ձեռ**ք**ե**ր**ս** *ձևերի մեջ ներ հոգնակերտի գործառությունը, որ միանգամայն տարբեր է նույն ձևույթի սովորական գործառությունից, բայց և այնպես նույն ենթաձևույթն է։ Հետևաբար, եթե իմաստով և ձևով նույնական ձևույթներ տարբեր համակցություններով տարբեր ձևեր են կազմում կամ տարբեր բառեր, ապա նրանք միևնույն ձևույթն են։ Ածանցների դասից իբրև հարմար օրինակ հիշում ենք -ություն ածանցը, որ ածականներից ու բայահիմքերից կազմում է գործողություն ու հատկություն ցույց տվող վերացական գոյականներ, իսկ գոյականներից՝ հավաքական գոյականներ, բայց նաև գոյականի ցույց տված կարգին պատկանելը կամ բնորոշ հատկանիշն ունենալը (հմմտ. քնքշություն, ամուսնություն, եղելություն, բայց՝ աշակերտություն, գյուղացիություն, բանվորություն ևն)։*

Հիշյալ կարգի ձևույթներին կարելի է ավելացնել ևս մի կարգ, որին պատկանում են նույն ձևույթի տարբեր իմաստով ու տարբեր գործառությամբ ձևերը, ինչպես՝ հայր–հոր, տուն–տան, արյուն–արյան ևն։ Սակայն այսպիսի ձևական տարբերակումները ձևույթային մակարդակի երևույթներ չեն, այլ ձևաբանական, ուստի և քննության կառնվեն համապատասխան տեղում։

Ամփոփելով ձևույթների՝ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունների մասին ասվածները, կարող ենք ընդունել հետևյալ դասակարգումը.

1. *Համանուն ձևույթներ (ձևով նույն, իմաստով ու գործառությամբ տարբեր)։*

2. Համանիշ ձևույթներ (ձևով տարբեր, իմաստով նույնական, գործառույթամբ պայմանականորեն տարբեր)։

3. Ենթաձևույթներ (իմաստով նույն, ձևով և գործառույթյան ոլորտով տարբեր)։

4. Զևակներ (միևնույն ձևույթի տարբեր ձևերը տարբեր ոլորտներով)։

Ելնելով այս դասակարգումից, կարևոր նշանակություն կունենար հայերենի բոլոր ձևույթները (արմատներ, ածանցներ, ձևվորդներ) իմքավորել և ունենալ բոլոր չորս կարգերի լրիվ ցանկերը, բայց դա առանձին ուսումնասիրության նյութ է։ Մեր աշխատության անմիջական առարկան են հոլովման ու խոնարհման համակարգերը, և մենք իր տեղում կդասակարգենք այդ համակարգերում հանդես եկող ձևույթները։

3. ԲԱՌԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Բառի պրոբլեմը կառուցվածքային լեզվաբանության համար, այսպես ասած, գայթակղության քար է դարձել։ Որքա՞ն են ձգտել ազատվել նրանից, լեզվական վերլուծությունները կատարել շրջանցելով այն, բայց վերջ ի վերջո դարձյալ կանգ են առել, է. Բենվենիստի արտահայտությամբ, այդ բազմակիորեն դատապարտված, մենք կավելացնեինք՝ և բազմաչարչար, բայց անփոխարինելի տերմինի առջև։ Բանն այն է, որ իրական ասույթի մեջ առաջին հերթին հեշտությամբ առանձնանում են բառերը և բառախմբերը, որոնցից ոչ մի կերպ չի կարելի խուսափել։ Այս վիճակը մի շարք դժվարությունների առջև է կանգնեցրել լեզվաբաններին, և նրանք, այդ դժվարություններից ազատվելու համար զանազան միջոցների են դիմել։ Որոշ ուղղություններ պարզապես մի կողմ թողնելով բառը, որպես լեզվի կառուցվածքային միավոր, բոլոր վերլուծությունները կատարում են երեք մակարդակների վրա. հնչույթային, ձևույթային, շարահյուսական։ Երկրորդները, հիմնվելով այն անժխտելի փաստի վրա, որ բառը լեզվի անշրջանցելի միավոր է, ավելի նպատակահարմար են գտնում իրրև իմաստային միավոր ընդունել բառը և ձևույթները պարզապես դիտել որպես բառերի ու բառաձևերի բաղադրիչներ։ Այդպես է վարվում, օրինակ, է. Բենվենիստը, որ բառը և ձևույթը հավասարապես դիտում է իրրև նշան, տարբերելով ազատ ձևերը ոչ ազատ՝ կախյալ ձևերից

(ձևույթներից), և ավելացնում է. «Մեր կողմից կատարվող վերլուծության հարմարության համար մենք կարող ենք անտեսել այդ տարբերությունը և բոլոր նշանները դիտել որպես մեկ դասի պատկանող նշաններ, որը գործնականորեն համընկնում է բառին»[1]: Երրորդները, օրինակ, Ա. Մարտինեն, ընդունում են բառը պարզապես իբրև անբաժանելի մենույթներից (մոնեմաներից) կազմված ինքնավար (ավտոնոմ) շարույթ[2]: Չորրորդները, օրինակ, Ի. Ի. Ռևզինը, որպես ելակետային միավոր են ընդունում բառը («բառը խոսքի մեջ կամ բառաձևը»), իսկ ձևույթ հասկացությունը մոդելավորման մեջ դիտում են որպես ածանցյալ, ըստ որում խոսքի մեջ «ձևույթների բաժանումը կարող է ստացվել բառերի բաժանումից ելնելով»[3]: Այսպիսի տարընթացությունները, ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության մեջ, բացատրվում են զանազան հանգամանքներով, որոնցից գլխավորները հետևյալներն են: Բառը բազմաբնույթ միավոր է, և եթե ոչ անկարելի, գոնե ծայրահեղորեն դժվար է տալ բառի այնպիսի սահմանում, որ հավասարապես վերաբերեր բոլոր լեզուների բառերին: Իսկ եթե այդպիսի սահմանում չկա, ապա հնարավոր էլ չէ ընդունել բառը որպես լեզվական կառուցվածքի միավոր: Իրոք, երբ միավորը, եթե ոչ տեսական-ընդհանրացնող, գոնե գործնական սահմանում չունի, ապա անկարելի է վերլուծության ժամանակ ճշգրիտ կերպով որոշել այն, այլ կերպ ասած, եթե չգիտենք, թե ի՛նչ է բառը, ապա չենք էլ կարող ճշգրտորեն որոշել, թե տվյալ ասույթի մեջ ո՛ր միավորն է բառ, և ո՛րը՝ ոչ: Այդ պատճառով էլ նպատակահարմար են համարում մի կողմ թողնել բառը և բոլոր գործառնությունները կատարել այնպիսի միավորների վրա, որոնք տրվում են եթե ոչ բացարձականորեն, ապա գոնե հարաբերականորեն ճշգրիտ սահմանման: Բառից ավելի հարմարը, այս տեսակետից, ձևույթն է:

Խոսելով արմատների մասին, մենք ասացինք, որ նրանք ներկայացնում են հարաբերականորեն բաց դաս: Բառերը ներկայացնում են պարզապես բաց դաս: Ոչ մի ցանկով հնարավոր չէ սահմանափակել բառերի քանակը, որովհետև կյանքն անընդհատ առաջ է բերում նորանոր հասկացություններ, որոնք հանդես են գալիս

---

1 Э. Бенвенист, Цит. соч., стр. 499.

2 А. Martinét, նույն տեղում, էջ 112 (մոնեմա տերմինը Մարտինեի և ուրիշների կողմից գործածվում է ձևույթ տերմինի իմաստով, իսկ ձևույթ (մորֆեմա) տերմինը գործածվում է միայն ձևորդի համար):

3 И. И. Ревзин, Модели языка, М., 1962, стр. 57.

որպես բառաձևի ու բառիմաստի միասնություն։ Եթե այդպես է, ապա հնարավոր չէ կառուցվածքի վերլուծությունը կատարել անվերջ քանակություն կազմող միավորների հիման վրա, որովհետև այդ դեպքում կարելի կլինի սկսել վերլուծությունը, բայց անկարելի կլինի ավարտել։

Լեզվի հնչույթները և երկրորդական ձևույթները ոչ միայն փակ դասեր են կազմում, այլև որոշակի համակարգ են ներկայացնում. բառերը այդպիսի համակարգ չեն կազմում։ Որևէ լեզվի բառերը կարելի է զանազան ենթախմբերի բաժանել և դրանց ներսում որոշ համակարգեր գտնել, բայց ամբողջ բառապաշարը դիտել որպես համակարգ հնարավոր չէ։ Սա պայմանավորված է ոչ միայն այն բանով, որ բառապաշարը բաղկացած է տարբեր շերտերից (հնից եկող բառեր, նորակերտ բառեր, փոխառություններ տարբեր լեզուներից են), որոնք հավասարապես ենթարկվում են լեզվի տվյալ փուլի ձևաբանական ու շարահյուսական կառուցվածքին, այլև գլխավորապես նրանով, որ բառերն արտահայտում են բնության ու հասարակական կյանքի ամենատարբեր և անվերջորեն շատ երևույթների հասկացություններ, որոնք անկարելի է մեկ ընդհանուր համակարգի մեջ ընդգրկել։ Վերջապես, կարևոր է նաև այն, որ բառերի իմաստափոխությունը և նույնիսկ բառերի կոնկրետ գործածությունները չի կարելի սահմանել. ոչ մի բանով չի կարելի որոշել, թե տվյալ բառը ինչպիսի իմաստափոխության կենթարկվի. նույնիսկ արդեն կատարված իմաստափոխությունները, թեև տարբեր դասակարգումներով խմբավորվում են, բայց որոշակի օրինաչափությունների տակ չեն դրվում, ըստ որում մենք չգիտենք, թե ինչո՞ւ հենց ա՛յս բառն է այսինչ իմաստափոխությունը կրել, և ոչ թե դրան համանիշ մի այլ բառ. օրինակ՝ գրաբարում ապրել նշանակում էր «պրծնել, ազատվել մի բանից», որին համանիշ էր ազատիմ. առաջինը փոխել է իմաստը և նշանակում է «կենդանի լինել, մարմնի կենսագործունեությունը պահպանել», իսկ երկրորդն այդ իմաստը չի ստացել. ընդհակառակն, ազատվել ստացել է «ծննդաբերել», իսկ ապրել այդ իմաստը չի ստացել։ Ակն և աչք բառերը ոչ միայն նույնական էին իմաստով (մեկը եզակի, մյուսը հոգնակի), այլև նույն արմատից էին ծագել և երկուսն էլ ստացել են մի քանի նոր իմաստներ (աղբյուրի ակ, աղբյուրի աչք.—մատանու ակ, մատանու աչք.—թոնրի ակ, թոնրի աչք.— փեթակի աչք, փեթակի ակ են), բայց ակն ստացել է նաև «անիվ» իմաստը, որ աչք-ը չի ստացել, իսկ աչք ստացել է «բա-

ժանմունք, դարակ» իմաստները (խանութի աչք, սեղանի աչք), որ ակն չի ստացել։ Այսպիսի օրինակների թիվը կարելի է ուզածին չափ բազմացնել։ Գործածության մեջ էլ այդ կարգի տարբերությունները ավելի շատ են. մեզ համար շատ սովորական են ճերմակ մազ, սպիտակ մազ, ճերմակ ձյուն, սպիտակ ձյուն, բայց անսովոր է սպիտակ ներկ-ի զուգահեռը (ճերմակ ներկ) և այլն։ Այս և այսպիսի երևույթները ոչ մի կերպ չեն առնվում որևէ համակարգի մեջ։

Այս բոլորը, ինչպես տեսնում ենք, բխում են հենց բառապաշարի էությունից։ Բայց կա նաև մի այլ, կարելի է ասել, սուբյեկտիվ պատճառ. կառուցվածքային ձևաբանությունն ու շարահյուսությունը առաջին հերթին զարգացան ամերիկյան լեզվաբանության մեջ։ Անգլերենում, ինչպես գիտենք, պարզ բառերը բառապաշարի հիմքն են կազմում, բարդ բառերը սահմանափակ թիվ են կազմում, այն էլ մեծ մասամբ կցական են, ածանցավոր բառերի մեջ հեշտությամբ սահմանազատվում են ածանցները, ձևաբանության մեջ բառաձևերը շատ քիչ են (սեռական, հոգնակի, բայի մի քանի ձևեր), որոնց մեջ հեշտությամբ որոշվում են ձևորդները, քերականական հարաբերությունները մեծ մասամբ արտահայտվում են ձևական բառերով, այնպես որ, բոլոր տեսակետներից ավելի հեշտ է գործ ունենալ ձևույթների հետ, որովհետև և՛ դրանց որոշումը, և՛ սահմանումը ավելի հեշտ է, քան բառերինը։ Այսպես, •րինակ, շատ ավելի հեշտ է I'll go out *«ես դուրս կգամ» կապակցությունը բաժանել ձևույթների, քան որոշել, թե այդ ամբողջը մե՞կ բառաձև և մե՞կ բառ է, թե չորս բառից բաղկացած կապակցություն։ Նույնպես և՝ ավելի հեշտ է ֆրանսերեն* Je te le donne *«ես այն տալիս եմ քեզ» նախադասությունը բաժանել ձևույթների, քան որոշել, թե քանի բառ կա այդտեղ՝ մե՞կ, երկո՞ւ, թե չորս։ Վերջապես, կառուցվածքային լեզվաբանության կարևորագույն դրույթներից մեկը, լեզվական համասեռությունը (իզոմորֆիզմ) դժվար է տարածել բառային կազմի վրա, որով և բառապաշարը կարծես թե դուրս է մնում մակարդակների ստորակարգության (հիերարխիայի) ընդհանուր համակարգից։ Սրանց հակառակ, այն լեզուներում, որոնց մեջ բառը խոսքի կազմում շարահյուսական և ձևաբանական մեկ ամբողջություն է կազմում, անխուսափելիորեն ծագում է նրա կարևորության, և նույնիսկ ելակետային միավոր համարելու գաղափարը։ Այսպես, օրինակ, խոսելով ռուսերենի վերլուծության համար հիմնական խոսքային միավորն ընտրելու*

մասին (ձևույթ, թե բառ), Ի. Ի. Ռևզինը իբրև այդպիսին ընդունում է բառը, որովհետև «ռուսերենի և մյուս սլավոնական լեզուների համար (ի տարբերություն գերմաներենի և էստոներենի) հիմնական խոսքային միավորը, իբրև կանոն, համընկնում է այն բանին, ինչ որ սովորաբար հասկանում են «բառը խոսքի մեջ» կամ «բառաձև» տերմիններով»[1]։

Այս հակասական վիճակի մեջ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է որոշել բառի միայն իրեն հատուկ հատկանիշները և ըստ այդմ բնութագրել բառային մակարդակը։ Սակայն, նախքան դրան անցնելը, մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակների մի ընդհանուր առանձնահատկության վրա, որ հետևյալն է։ Մինչև բառային մակարդակը մենք գործ ունենք այնպիսի միավորների հետ, որոնք հաջորդող մակարդակի բաղադրություններն են, կամ այլ կերպ՝ տվյալ մակարդակի հոդավորիչները ստորադաս մակարդակի միավորներն են։ Այդ մակարդակներում տվյալ մակարդակի միավորները հարակցությամբ չեն կարող ստեղծել նույն մակարդակի միավոր. երկու կամ ավելի հնչույթների շարքը չի կարող առաջ բերել նոր հնչույթ, երկու կամ ավելի ձևույթների համակցությամբ չի ստեղծվում նոր ձևույթ[2]։ Թևակոխելով բառային, ինչպես և ձևաբանական ու շարահյուսական մակարդակները, մենք կանգնում ենք բոլորովին այլ կարգի երևույթի առջև։ Այս մակարդակներում տվյալ մակարդակի հոդավորիչներն են ոչ միայն ստորադաս մակարդակի միավորները, այլև՝ հենց իր իսկ միավորները։ Այսպես՝ բառը միանալով բառին, կազմում է նոր բառ, այս էլ իր հերթին՝ մի նոր բառ և այդպես՝ մինչև մի որոշ սահման, քերականական ձևը միանալով մի այլ քերականական ձևի տալիս է մի նոր քերականական ձև, շարահյուսությունը միանալով շարահյուսությունին կազմում է մի նոր շարահյուսություն (օր. դերբայական դարձվածը), նախադասությունը միանալով նախադասության՝ կազմում է մի նոր նախադասություն։ Մի կողմ թողնելով շարահյուսական մակարդակը, որ մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է, մի քանի օրինակ բերենք բառային և ձևաբանական մակարդակներից. ունենք ձեռ

---

[1] И. И. Ревзин, Цит. соч., стр. 57.

[2] Խոսքն այստեղ չի վերաբերում պատմական գործընթացին. տվյալ պատմական շրջանի երկու կամ ավելի ձևույթներ կարող են ժամանակի ընթացքում միաձուլվել և վերածվել մեկ ձևույթի (հմմտ. ես-եար>ձեր), բայց դա բոլորովին այլ երևույթ է։

և գիր ձևույթները, որոնցից առաջինը իբրև բառ հանդես է գալիս միայն այլ ձևույթների համակցություններով (հետու, հետանալ են), երկրորդը ինքնին հանդես է գալիս իբրև բառ. դրանց միացումով կազմվել է ճեռագիր բառը, սրա և սյուն բառի միացումով՝ ճեռագրասյուն բառը, ապա՝ շար բառի միացումով՝ ճեռագրասյունաշար և վերջապես՝ -ային ածանցի հավելումով՝ ճեռագրասյունաշարային. այդպես էլ՝ գիր+դարան→գրադարան+(ա)վար→գրադարանավար+ություն→գրադարանավարություն են. ունենք՝ գիր և (ե)լ ձևույթները, որոնց համակցությամբ կազմվում է գրել բայը, սրա հիմքից և -ում ձևույթի միացումով՝ գրում դերբայը, ունենք է և մ ձևույթները, որոնց համակցությամբ կազմվում է եմ բայաձևը, դերբայի և այս բայաձևի համակցությամբ կազմվում է գրում եմ բաղադրյալ բայաձևը (հմմտ. գնալիս է եղել, որ կազմված է երեք բայաձևերի համակցությամբ) են: Սա մի յուրահատկություն է, որից զուրկ են տարրույթային, հնչույթային և ձևույթային մակարդակները, և որը, հետևաբար, կարող է համարվել այդ երեք ստորին և երեք գերադաս մակարդակները տարբերակող հատկանիշ: Բառային, ձևաբանական ու շարահյուսական մակարդակներն, ուրեմն, իրենց միավորները կազմում են ոչ միայն ստորադաս մակարդակի միավորներով, այլև իրենց իսկ միավորներով, և դրան համապատասխան այս մակարդակի միավորների հոդավորիչներն են և՛ ստորադաս մակարդակի, և՛ իր միավորները: Գրում եմ բայաձևը չի կարելի հատույթավորել գր-ում-ե-մ հատույթներին, այլ նախ՝ գրում և եմ, ապա՝ գր-ում և ե-մ հատույթներին, այդպես էլ՝ գրադարանավարություն չի կարելի համարել գր-(ա)-դարան-(ա)-վար--ություն ձևույթների համակցությունը, այլ՝ գրադարանավար բառի և -ություն ձևույթի, ապա՝ գրադարան բառի և վար բայարմատի, և հետո միայն՝ գր(<գիր) արմատի և դարան բառի, որը նույնանում է ձևույթի հետ: Բերված օրինակներում հատույթավորումը սկսվում է վերջից, բայց դա պարտադիր չէ. օրինակ՝ անտեսավարություն բառը պետք է հատույթավորել նախ՝ ան-տեսավարություն, ապա՝ տեսավար-ություն, այնուհետև՝ տեսս-վար և վերջապես՝ ա-ն(<առն)-տես: Այս օրինակները ցույց են տալիս, որ բառային, ինչպես և ավելի բարձր մակարդակներում վերլուծությունն ըստ անմիջական բաղադրիչների առավել արդյունավետն է և ճիշտ: Բայց մեզ այժմ դա չի հետաքրքրում, այլ երևույթն ինքնին: Բառային, ձևաբանական ու շարահյուսական մակարդակների միավորներն իրենք կարող են կերտել նույն մակարդակի միա-

վորներ: Այս երևույթը հարմար ենք գտնում կոչել իմմանակերտություն, իսկ հիշյալ երեք մակարդակները՝ իմմանակերտ մակարդակներ. համապատասխանորեն ստորին մակարդակի միավորների միայն գերադաս մակարդակի միավորներ կերտելը կկոչենք այլակերտություն, իսկ երեք ստորին մակարդակները՝ այլակերտ մակարդակներ: Ստորև կտեսնենք, որ բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներից յուրաքանչյուրն էլ, ինքնակերտ լինելով ինքն իր մեջ, այլակերտ է հաջորդող բարձր մակարդակի նկատմամբ: Այստեղ առայժմ բավականանանք այսքանով և անցնենք բառային մակարդակին ու նրա միավորներին:

Բառային մակարդակը լեզվի կառուցվածքի մեջ գրավում է յուրահատուկ տեղ. նա, մի կողմից՝ մյուս մակարդակների նման գերադասության և ենթադասության հարաբերության մեջ է գտնվում մյուսների հետ, մյուս կողմից՝ կարծես թե դուրս է մնում ստորակարգության (հիերարխիայի) ընդհանուր համակարգից՝ կազմելով ինքնակա համակարգ և գործառելով լոկ խոսքի մեջ: Բառային կազմի այս երկակի բնույթը բխում է հենց բառի էությունից: Բառը իսկապես ինքնակա միավոր է, և նրանից ցածր գտնվող մակարդակները գոյություն ունեն առաջին հերթին բառ կազմելու համար: Լեզուն կարող է ձևորդներ չունենալ, որի հետևանքով չի ունենա նաև բառի քերականական ձևեր, իսկ այդ նշանակում է՝ կարող է չունենալ նաև ձևաբանական մակարդակ, բայց չի կարող չունենալ հնչույթային ու ձևույթային մակարդակներ, որովհետև նա չի կարող նաև չունենալ բառ: Բառը այն ինքնակա միավորն է, որով օբյեկտիվ ու սուբյեկտիվ աշխարհների բոլոր երևույթները ամրանում են մարդու գիտակցության մեջ, ամրանում են անկախ, միմյանցից անջատված հասկացությունների ու նրանց բառային անվանումների միասնությամբ: Լեզվի բառային կազմը տիեզերքն է և այն ամենը, ինչ որ կա նրա մեջ, հասարակությունը, և այն ամենը, ինչ որ կա նրա մեջ, մարդը, և այն ամենը, ինչ որ կա նրա մեջ. բառային կազմը ամեն ինչ է, նյութականացած՝ մարդու գիտակցության մեջ: Բառի միջոցով մարդը անջատում է իրարից առարկան ու հատկանիշը, նրանց հարաբերությունները և իր գիտակցության մեջ անկախ, ինքնագո հասկացություններով ամրացնում. բառի մեջ արտացոլվում է մարդկային ճանաչողության ողջ գործունեության արդյունքը: Այս բոլորն էլ հենց պայմանավորում են բառի անկախությունը, ինքնուրույնությունը, բառի ինքնակայությունը. բառի քերականական ձևերը գոյություն ունեն

միայն կապակցված խոսքի մեջ, ձևույթները՝ միայն բառերի ու նրանց քերականական ձևերի մեջ, հնչույթները՝ միայն բառերի, ապա և՝ ձևույթների մեջ, մինչդեռ բառը գոյություն ունի ինքնին։ Այս տեսակետից նա նման է նախադասության։ Այս երկուսը՝ բառը և նախադասությունը ինքնակա և ավարտուն միավորներ են, և նրանցից առաջինի ստորադասումը երկրորդին հարաբերակից է հասկացության ստորադասությանը՝ մտքին. ինչպես հասկացությունը մտքի մի տարրն է, այդպես էլ բառը՝ նախադասության տարրը։ Մենք ասացինք, թե հնչույթները գոյություն ունեն բառի, ապա և՝ ձևույթի մեջ։ Սա բացահայտորեն հակասում է այն սկզբունքին, որի համաձայն հնչութային մակարդակին անմիջականորեն հաջորդում ու գերադասվում է ձևույթայինը, իսկ սրան էլ՝ բառայինը։ Այդ սկզբունքը սակայն նկատի ունի լեզվի կառուցվածքը համամանակյա մոտեցումով, մինչդեռ մենք նկատի ունենք ծագումաբանական գործընթացը։ Լեզվի ծագման պատմական գործընթացում նախապես եղել են միայն բառեր, և միայն հետագայում, երբ բառերը միմյանց միանալով ստեղծել են բարդ բառեր, ապա՝ ածանցավորներ, ինչպես և՝ հանդես են եկել ձևորդները՝ կազմելով բառերի քերականական ձևեր, բառը հանդես է եկել իբրև ցեղակից բառերի ու նրանց քերականական ձևերի ընդհանուր բառային իմաստը կրող տարր, այսինքն՝ արմատ, իսկ բառի ածանցական ու վերաբերական իմաստները կրող տարրերը՝ իբրև ածանց ու ձևորդ։ **Մոտ, տուն, տես** և նման բառերը հենց պարզապես բառեր են. միայն այն ժամանակ, երբ դրանցից կազմվում են մոտիկ, մոտենալ, մոտեցնել, մոտեցում, տուն, տնային, տնվոր, անտուն, տեսավորել, տեսնել, անտեսանելի, տեսողություն, տեսական ևն, մոտ տուն և տես բառերը դառնում են արմատներ. օրեն բառ էր, բայց այն բանից հետո, երբ նա բաղմաթիվ բառերի հետ միանալով ստացավ «օրինակով, կերպով, նման» ածանցական իմաստը և զրկվեց իր բառային իմաստից, վերածվեց ածանցի։ Այս տեսակետից, այնպիսի լեզուների համար, ինչպիսիք են չինարենը, անամերենը և այլն, ընդհանուր առմամբ, բոլորովին էլ տեղին չէ բառի և արմատի, բառի և ձևույթի տարբերակումը, որովհետև դրանք նույն բանն են։ Անգլերենն էլ ձևաբանական կառուցվածքով շատ նման է դրանց, և այդ է պատճառը, որ նրա կառուցվածքային նկարագրության համար ձևույթային մակարդակը բավարարում է։ Այսպես, ուրեմն, ձևույթները (արմատներ, ածանցներ, ձևորդներ) լեզվի մեջ բառերից հետո են առաջացել իբրև բառից տարբեր դա-

սեր, պատմականորեն նրանք հենց բառեր են, զրկված իմաստային տարբերակումից (արմատ) կամ բառային իմաստից (ածանց և ձևորդ)։

Այս բոլորից հետո, քանի որ բառային մակարդակում մենք գործ ունենք բառի, որպես ավարտուն և ինքնակա միավորի հետ, փորձենք սահմանել այն։

Հենց սկզբից հիշենք դարձյալ, որ անհնարին է տալ բառի բացարձակ ճշգրիտ սահմանում բոլոր լեզուների համար։ Այն սահմանումը, որ մենք տալու ենք, հիմնված է գլխավորապես հայերենի և նրան նման կառուցվածք ունեցող լեզուների տվյալների վրա։ Ուրիշ կարգի լեզուների համար այդ սահմանումից որոշ տարրեր կարող են հանվել կամ, ընդհակառակն, կարող են նոր տարրեր ավելանալ։ Արդ, նախքան մեր սահմանումին անցնելը, հիշենք ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության մեջ և մեքենական թարգմանության բնագավառում ընդունելություն գտած մի քանի սահմանումներ, որով և կունենանք սահմանումների համեմատության եզրեր։ Ջ. Գրինբերգը[1] բառը դիտում է որպես միջուկ, որի սահմանների ներսում չի կարելի տեղադրել բավական թվով այլ միջուկներ, իսկ դրսից կարելի է։ Այս սահմանումը աչքաթող է անում բառի իմաստային կողմը, և բնորոշում է ձևական հիմունքով. այս դեպքում էլ, սակայն, կան ներքին հակասություններ. օրինակ, նա առանձին միջուկներ է համարում մի կողմից անգլերեն kill «սպանել», -ing (շարունակական դերբայի վերջավորությունը), մյուս կողմից՝ farmer «ֆերմեր», որ ունի -er ածանցը։ Այնուհետև, անորոշ է մնում «բավական թվով միջուկներ չեն ներմուծվում» բնորոշումը. կան լեզուներ, որոնց մեջ բառը կարող է ստանալ միջածանց։

Ա. Մարտինեի սահմանումով բառ է «անբաժանելի մենույթներից բաղկացած ինքնավար (ավտոնոմ) շարույթը»[2], ըստ որում, նա գտնում է, որ նպատակահարմար չէ ձգտել ավելի ճշգրիտ սահմանումի՝ ընդհանուր լեզվաբանության մեջ։ Ինչպես տեսնում ենք, այդ սահմանումի մեջ էլ անտեսվում է բառի իմաստային յուրահատկությունը և հաշվի է առնվում միայն նրա կազմությունը։ Մյուս կողմից՝ Ա. Մարտինեն չի տարբերում բառը բառաձևից, որ և, բնականաբար, հանգեցնում է բառային ու ձևաբանական և բառային ու

[1] Joseph H. Greenberg, The definition of linguistic units, իր „Essays in linguistics" ժողովածուում (Նյու-Յորք, 1957), էջ 30—31։

[2] A. Martinét, նույն տեղում, էջ 112։

ձևույթային մակարդակների նույնացման։ Բերենք այդ կարգի մի սահմանում էլ սովետական լեզվաբանությունից։ Պ. Ս. Կուզնեցովը բառը սահմանում է հետևյալ ձևով. «Հնչյունական այն հաջորդականությունը, որը կարող է սահմանափակվել ցանկացած տևողությամբ դադարներով, առնվազն մեկ ինքնուրույն բառ պարունակող հնչյունական հաջորդականություն է։ Այս եղանակով որոշված հընչյունական հաջորդականությունը, որի ներսում չի կարող գետեղվել մի ուրիշ հնչյունական հաջորդականություն, է՛ առանձին, ինքնուրույն բառը»[1]։

Այս բոլոր սահմանումների մեջ, ինչպես տեսնում ենք, նկատի է առնվում բառի ձևական կողմը. սահմանումների նպատակն է ավտոմատիկ կերպով որոշել բառի սահմանները խոսքի մեջ։

Հասկանալի է, որ լեզվաբանության համար բառը չի կարող բնորոշվել լոկ ձևական հատկանիշներով, ուստի և՝ այդ սահմանումները լեզվաբանական համարել չի կարելի։ Դրանք հատուկ նպատակի՝ միայն ձևական վերլուծության ծառայող սահմանումներ են։

Լեզվաբանական մոտեցումը հաշվի է առնում երեք հանգամանք՝ ձևական ինքնուրույնություն, իմաստային տարբերակվածություն (բառային իմաստ) և խոսքի մեջ անկախ գործածություն։ Այս երեք կողմերի հաշվառումով մենք դեռ 1949 թվականին բառը սահմանել ենք հետևյալ ձևով. «Բառ կարող է կոչվել այն հնչյունը կամ հնչյունախումբը, որ ունի կոնկրետացյալ իմաստ և անկախ գոյություն ու գործածություն[2]։ Հետագայում, ճշգրտելով սահմանումի որոշ տարրերը՝ «հնչյուն» և «հնչյունախումբ» բառերը փոխարինել ենք «հնչույթ» և «հնչույթախումբ» բառերով, իսկ «կոնկրետացած իմաստ» կապակցությունը՝ «բառային իմաստ» կապակցությամբ[3]։ Քանի որ վերը արմատների իմաստն էլ համարեցինք տարբերակելի բառային իմաստ, ապա՝ բառի սահմանման մեջ համապատասխան փոփոխությունը պետք է մտցնել։ Այդպիսով կունենանք բառի հետևյալ ընդհանուր սահմանումը. «Բառ է այն հնչույթը կամ հնչույթախումբը, որ ունի բառիմաստ, անկախ, ինքնուրույն գոյություն և գործառություն»։ Այս սահմանումն ընդգրկում է և՛ ձևական հատկանիշը (անկախ, ինքնուրույն միավոր),

---

1 П. С. Кузнецов, Опыт формального определения слова, ВЯ, 1964, № 5, стр. 76.

2 Է. Գ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, 1949, էջ 115։

3 Է. Գ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, 1952 և 1963, էջ 239։

և՛ իմաստայինը (բառիմաստ), և՛ գործառականը (ինքնուրույն գործառութիյուն) և լիովին բնորոշում է հայերենի բառը։ Ինչպես ասացինք, սահմանման որոշ տարրեր կարող են փոխարինվել այլ տարրերով կամ հանվել՝ ուրիշ լեզուների համար. օրինակ՝ շատ լեզուների համար կարելի է հանել «գործառութիյուն»-ը։ Ուրախ ենք, որ մեզանից անկախ գրեթե նույնական սահմանումն է առաջարկում Վ. Մ. Ժիրմունսկին. «Բառը լեզվի այն նվազագույն միավորն է, որ ինքնուրույն է իր իմաստով ու ձևով»[1]։ Վ. Ժիրմունսկին չի խոսում գործածութիյան մասին, թեև նա նկատի ունի հատկապես գերմանական ու սլավոնական լեզուները, որոնց մեջ նույնպես բառերն ունեն ինքնուրույն գործածութիյուն։ Այս արտահայտութիյամբ մենք հասկանում ենք այն, որ բառը խոսքի մեջ էլ չի դառնում մի ուրիշ բառի հատվածը և պահում է իր ձևական առանձնութիյունը, ինքնուրույնութիյունը. օրինակ՝ դեպի fաղաf կապակցութիյան մեջ դեպի բառը հայտնապես կապված է fաղաf բառի հետ. առհասարակ դեպի բառը չի կարող նախադասութիյան ինքնուրույն անդամ լինել, բայց նա ինքնուրույն բառ է, որովհետև ինչպիսի կապակցութիյուն էլ վերցնելու լինենք, նա չի դադարի առանձին միավոր լինելուց, չի վերածվի որևէ բառի բաղադրիչ մասի։ Դեռ ավելին, նա կարող է հեռանալ fաղաf բառից. երկուսի միջև հնարավոր է մուծել բառեր, որ ցույց է տալիս նրա ձևական ինքնուրույնութիյունը (համմտ. դեպի մեր քաղաքը, դեպի մեր սիրելի քաղաքը, դեպի մեր սիրելի հայրենի քաղաքը են)։ Այս տեսակետից շատ ուշագրավ է Վ. Ժիրմունսկու հետևյալ միտքը. «Ձևական տեսակետից նախադրութիյունը ունի, ի հակադրութիյուն ձևույթի, անջատելիութիյուն, որը բառի ձևական ինքնուրույնութիյան մինիմումն է։ Մենք կարող ենք ասել в саду, в твоем саду, в твоем цветущем саду են»[2]։

Ընդունելով վերը տրված մեր սահմանումը՝ մենք բառը կդիտենք որպես բառային մակարդակի ավարտուն միավոր, որը կարող է իր մեջ պարունակել մեկ ձևույթից (պարզ բառ) մինչև մի քանի ձևույթներ ու բառեր (բաղադրյալ բառեր)։ Մենք ասացինք, որ բառային մակարդակը ինքնակերտ մակարդակ է. դա նշանակում է, թե իր միավորները կազմում է ոչ միայն իրեն անմիջապես ստորադասվող մակարդակի, այլև իր իսկ սեփական միավորներից։

[1] В. М. Жирмунский, О границах слова, МСС, стр. 7.
[2] В. М. Жирмунский, Цит. соч., стр. 9.

Սրանից ինքնին հետևում է, որ բառի, որպես բառային մակարդակի ավարտուն ինքնուրույն միավորի, հոդավորիչները կարող են լինել և՛ ձևույթները, և՛ բառերը: Արդ, քանի որ միևնույն մակարդակի համար միևնույն միավորը սահմանել և՛ իբրև ավարտուն միավոր, և՛ իբրև հոդավորիչ, հակասում է մեր ընդունած սկզբունքին, ապա բառային մակարդակի (ինչպես և ավելի բարձր մակարդակների) համար պետք է ընդունենք մի նոր կարգի միավոր, այն, որ տվյալ կարգի ավարտուն միավոր լինելով, կարող է դառնալ նաև հոդավորիչ՝ տվյալ մակարդակի մի ուրիշ միավորի համար: Այդպիսի միավորը մենք կոչում ենք հիմույթ[1]: Ըստ այսմ՝ հիմույթը տվյալ մակարդակի ավարտուն միավոր է որպես նույն մակարդակի մի ուրիշ միավորի հոդավորիչ: *Օրինակ՝* գործարանային, գործարանատեր *բառերը հնարավոր է հեշտությամբ հատույթավորել երեքական հատույթի (գործ-արան-ային, գործ-արան-(ա)տեր) և դրանք նույնացնել ձևույթների հետ. այդպես էլ՝* բարձրալեռնային *բառը կարելի է վերածել* բարձր-(ա)-լեռն-ային *ձևույթներին և ասել, թե այդ բառերը կազմված են այսինչ ձևույթներից, բայց դա ճիշտ չէր լինի. իրականում առաջին բաղադրությունը կազմվել է* գործարան *բառից և* -ային *ածանցից, ուրեմն՝ այստեղ ունենք մեկ հիմույթ, որին ավելացել է մեկ ձևույթ,* գործարանատեր *բաղադրությունը կազմվել է* գործարան *և* տեր *բառերից, ուրեմն՝ երկու հիմույթների միավորում, վերջապես* բարձրալեռնային *բաղադրության մեջ ունենք* բարձր *և* լեռնային *հիմույթները: Մեր բերած օրինակների մեջ հիմույթներից մի քանիսը նույնանում են ձևույթների հետ, որովհետև պարզ (արմատական) բառեր են, բայց դա չի նշանակում, թե միշտ այդպես է. օրինակ՝* հանքարդյունաբերություն *բառի հիմույթներն են* հանք *և* արդյունաբերություն, *որոնցից ոչ մեկն էլ չի կարող նույնացվել ձևույթի հետ: Հիմույթի դերում կարող են հանդես գալ նաև հարադրություններ և կայուն բառակապակցություններ. ինչպես՝* Կարմիր բանակ → կարմիրբանակային, ուղիղ անկյուն →ուղղանկյունի, железная дорога → железнодорожник, прямой угол →прямоугольник *են: Հիմույթների որոշման համար դժվար է գտնել հատույթավորման ձևական ընդհանրական չափանիշ, բայց միշտ էլ կարելի է որոշել՝ հիմք ընդունելով բաղադրիչների իմաստային հարաբերությունը միմյանց*

1 *Ռուսերենի համար կարելի է կազմել* темема *բառը, հետևելով լեզվաբանական տերմինների կազմության ընդհանուր սկզբունքին:*

հետ, նրանց անկախ գոյությունը լեզվի մեջ ևն։ օրինակ՝ բարձրալեռնային բառում հիմույթներն են բարձր և լեռնային. չի կարելի հիմույթ համարել բարձրալեռն, որովհետև այդպիսի բառ չունենք։

Բառի ուսումնասիրության խնդրում ժամանակակից լեզվաբանության մեջ կարևորագույն տեղ է գրավում բառերի դասակարգման հարցը, և այստեղ էլ տարաձայնությունները բավականաչափ շատ են, թեև եղած բոլոր փորձերը ցույց են տալիս, որ առավել ճիշտը ավանդական դասակարգումն է ըստ խոսքի մասերի։ Սա արդարանում է թե՛ ձևական, թե՛ ձևաբանական, թե՛ իմաստային և թե՛ շարահյուսական այն ընդհանուր հատկանիշներով, որոնք բնութագրում են տվյալ խոսքի մասի մեջ մտնող բառերը։ Այստեղ էլ, սակայն, այնքան հակասական տեսություններ են բախվում իրար, որ ըստ էության ոչ մեկն էլ չի կարելի բացարձակապես ճիշտ համարել, թեև յուրաքանչյուրի մեջ, բնականաբար, ճշմարտության հիմնական տարրը անուրանալի է։ Չկամենալով ծանրաբեռնել սույն աշխատությունը տարբեր տեսությունների քննարկումով, հետաքրքրվողներին հղում ենք Ս. Գ. Աբրահամյանի արժեքավոր մենագրությանը[1], որտեղ բավականաչափ մանրամասնորեն քննարկված են զանազան դասակարգումներն ու դրանց սկզբունքները, ինչպես և առաջարկված է հեղինակի դասակարգումը, որ ինքն անվանում է խոսքի մասերի ասպիեռնական դասակարգում։ Այդ դասակարգումը մենք համարում ենք մի առաջընթաց քայլ հարցի գիտական լուծման ճանապարհին և, անշուշտ, հաշվի ենք առնում մեր ստորև կատարվող վերլուծությունների մեջ։ Մենք կանգ չենք առնում նաև կառուցվածքային լեզվաբանության մեջ առաջարկված տարբեր դասակարգումների վրա, մանավանդ, որ այդ բնագավառում, մեքենական թարգմանության պահանջներին համապատասխան, խոսքի մասը նույնացվում է նախադասության անդամի հետ։ Անհրաժեշտ ենք համարում, սակայն, կանգ առնել մի դասակարգման վրա միայն, որը ուշագրավ է խոսքի մասերի իմաստային խմբավորման տեսակետից։ Մ. Վ. Պանովը, իր «Ռուսաց լեզուն» ընդարձակ հոդվածի մեջ, ռուսերեն բառերը բաժանում է նախ երկու խմբի՝ բառային նշանակություն ունեցող (ոչ սպասարկու) բառեր և սպասարկու բառեր (խոսքի մասնիկներ). առաջին

1 Մ. Գ. Աբրահամյան, Չքնքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965, էջ 15—86։

խմբի մեջ տարբերում է 4 խոսքի մաս՝ բայ, ածական, մակբայ, գոյական, իսկ երկրորդ խմբի մեջ՝ նախադրություն (կապ), շաղկապ և բուն մասնիկներ[1] (то, даже, вот ևն)։ Դերանունները բաժանելով 4 իմաստային խմբերի, յուրաքանչյուրը հատկացնում է համապատասխան խոսքի մասին. դերանվանական գոյականներ (ես, դու ևն), դերանվանական ածականներ (այս, այսպիսի ևն), դերանվանական մակբայներ (երբ, որտեղ ևն), դերանվանական բայ (ինչ անել!)։ Թվականները նույնպես բաժանում է չորս խմբի և հատկացնում համապատասխան խոսքի մասերին (գոյական՝ մեկ, երկու ևն, ածական՝ երկրորդ, երրորդ ևն, մակբայ՝ կրկնակի, երկուական ևն, բայ՝ կրկնապատկել, եռապատկել!)։ Այս դասակարգումը հետաքրքրական է այն տեսակետից, որ դերանունների և թվականների մեջ ներքին դասակարգումով բացահայտում է զանազան խմբերի հարաբերակցությունը խոսքի մյուս մասերի հետ ըստ իմաստի։ Բայց դրա հետ միասին նա ստեղծում է խառնաշփոթություն խոսքի մասերի դասակարգման մեջ։ Կանգ չառնելով մանրամասնությունների վրա, նշենք, որ ոչ մի կերպ չի կարելի համաձայնել, օրինակ, удвоить, утроить թվական համարելու հետ։

Իբրև բառերի ըստ խոսքի մասերի դասակարգման ընդհանուր սկզբունք մենք մեր «Լեզվաբանության ներածություն» աշխատության մեջ (1952 թ.) ընդունել ենք բառերի երեք հատկանիշ, որին ավելացնում ենք չորրորդը. ա) իմաստ, բ) ձև, գ) ձևավորում, դ) գործառություն։ Այդ սկզբունքը ճիշտ է ընդհանուր լեզվաբանական տեսակետից, որովհետև շատ լեզուներում բառի ձևը վճռական նշանակություն ունի խոսքի մասային պատկանելությունը որոշելու համար, կամ խոսքամասային իմաստը որոշակիորեն տարբերակվում է միայն խոսքի մեջ ունեցած գործառությամբ և այլն։ Ինչ վերաբերում է առանձին լեզուներին, ապա յուրաքանչյուրի համար այդ չորս հատկանիշներից կարելի է պահել նրանք, որոնք որոշում են տվյալ լեզվի խոսքամասային պատկանելությունը։ Հայերենում, օրինակ, խոսքի մասերը ձևական տարբերակում չունեն, և տվյալ բառի ձևը (հնչույթային կազմը) չի կարող օգնել որոշելու, թե նա ի՛նչ խոսքի մասի է պատկանում, ուստի և ձևական հատկանիշը դուրս կընկնի։ Ձևաբանական հատկանիշը շատ կարևոր հատկանիշ է և որոշակիորեն սահմանազատում է բայը գոյականից ու դերանու-

[1] М. В. Панов, Русский язык, ЯН СССР, I, М., 1966, стр. 71—102.

նից, իսկ այս երեքը՝ բոլոր մյուսներից։ Բայց բայը, գոյականը և դերանունը իրենց խոսքամասային իմաստով այնքան պաշտոորոշ կերպով են հակադրվում իրար, որ ձևաբանական հատկանիշին դիմելը դառնում է ավելորդ. նա խոսքի մասերի որոշման համար, այսպես ասած, հավելական հատկանիշ է։ Հետևաբար հայերենի բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելու համար իբրև գործնական ելակետ ընդունում ենք առայժմ երկու հիմունք՝ խոսքամասային իմաստ և գործառություն։ Գործառություն ասելով նկատի ունենք ոչ միայն բառերի շարահյուսական դերը, այլև նրանց յուրահատուկ հարաբերությունը բառակազմության հետ, ուրեմն՝ նաև գործառությունը բառային մակարդակում։ Այդ սկզբունքներից ելնելով այժմ վերլուծենք տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր և տեսնենք, թե խոսքամասային իմաստի և գործառության ի՛նչ հատկանիշներ կարելի է գտնել։ Վերցնենք բառերի հետևյալ խումբը. **ար, գեղեցիկ, գործել, մեմ, մեկ, արդեն, դեպի, բայց, աճշուշտ, ուֆ, շրխկ**։

1. Առաջին ընդհանուր խմբավորումը, որ կարող ենք կատարել այդ բառերի իմաստների հիման վրա, հետևյալն է. **ար, գեղեցիկ, գործել, մեմ, մեկ, արդեն** *բառերն արտահայտում են առարկայի կամ հատկանիշի հասկացություն, ուրեմն՝ նրանք ունեն հասկացական իմաստ, մինչդեռ մյուսները հասկացական իմաստ չեն արտահայտում, թեև խոսքի մեջ արտահայտելով վերաբերմունք, զգացմունք և այլն, հարաբերակցվում են հասկացությունների հետ։*

Այդ երկու խմբերից յուրաքանչյուրը կարելի է բաժանել ենթախմբերի։

2. Առաջին խումբը բաժանվում է՝ **տարբերակված հասկացություններ** *ունեցող բառերի, ինչպիսիք են* **ար, գեղեցիկ, գործել, արդեն**, *և* **չտարբերակված հասկացություններ**՝ **խոսքամասային ընդհանուր իմաստ ունեցող** *բառերի, ինչպիսիք են* **ճա, մեմ** *և այլն։ Տարբերակված իմաստ ասելով հասկանում ենք այն, որ բառը հանդես է գալիս որպես առարկայի, հատկանիշի ևն հասկացության կրող. ուտ արմատն ունի* **ուտելու** *չտարբերակված (տարբերակելի) ընդհանուր իմաստը, ընդհանուր գաղափարը, իսկ* **ուտել** *այդ գաղափարի մասնավորված, տարբերակված իմաստը՝* **ուտելու**, *որպես գործողության հասկացություն,* **ճան**- *արտահայտում է* **ճանելու** *ընդհանուր գաղափարը, մինչդեռ* **ճանել** *այդ գաղափարի տարբերակված իմաստը, որպես* **ճանելու** *գործողության հասկացություն,*

ճանճ՝ նույն գաղափարի տարբերակված իմաստը, որպես ճանճ առարկայի հասկացություն և այլն։ Ուֆ և անշուշտ բառերը թեև արտահայտում են վերաբերմունք, բայց տարբերակված իմաստ ունեն, քանի որ արտահայտում են որոշակի զգացմունքներ (ցանկություն, իղձ, ողբախություն են) կամ դատողական վերաբերմունք (հավանականություն, կասկած, համոզմունք, անվստահություն են) և դրանցով հարաբերակցվում են համապատասխան հասկացության։ Շրխկ բառը տարբերվում է դրանցից նրանով, որ նա ո՛չ ինչ-որ բանի (առարկայի, հատկանիշի են) հասկացություն է արտահայտում, ո՛չ էլ վերաբերմունք. նա ձայնի նմանաբանական վերարտադրություն է, որ ունի արտահայտչական երանգավորում և խոսքի մեջ էլ արտահայտչական դեր է կատարում։ Ըստ այսմ, այնպիսի բացականչություններ, ինչպիսիք են չու, ֆըշ, ճո, չոշ, և նույնիսկ ներշնչական արտասանությամբ՝ ծրծրծր են, որոնք արտահայտում են խոսողի կամքը, զարմանքը և այլն, պատկանում են ուֆ-ի դասին, իսկ ծիվ-ծիվ, զրնգ, բրրխկ, թիկ-թակ են՝ շրխկ-ի դասին։ Իհարկե, այս երկու դասերի մեջ էլ կարող են փոխանցումներ լինել, ինչպես և մյուսների, բայց դա ավյալ դեպքում կարևոր չէ։ Նա, մենք, այս, այսպիսի և նման բառերը, ինչպես ասացինք, արտահայտում են հասկացական իմաստ, բայց ոչ տարբերակված։ Դրանք ունեն ոչ թե ինչ-որ առարկայի, հատկանիշի կամ առարկաների, հատկանիշների սեռի, դասի, տեսակի հասկացություն, այլ ընդհանրապես առարկայի, ընդհանրապես հատկանիշի են հասկացություն, այսինքն՝ տարբեր խոսքի մասերի ընդհանրացած ու վերացարկված իմաստ, որը խոսքի մեջ մասնավորվում, կոնկրետանում է դիմային (ա, բ, դ դեմքեր), թվային (եզ. և հոգն.), տարածական (խոսողին մոտ, խոսակցին մոտ, երկուսից հեռու) և նման հարաբերություններով։ Այդ պատճառով էլ դերանունների իմաստը համարում ենք չտարբերակված։ Ինչ վերաբերում է դեպի, բայց և նման բառերին, ապա նրանք ևս չտարբերակված իմաստ ունեն, որովհետև արտահայտում են ո՛չ հասկացություն, ո՛չ էլ վերաբերմունք, այլ քերականական հարաբերություն։ Նրանք, իբրև բառեր, անշուշտ ունեն ինչ-որ իմաստ, բայց ոչ թե իբրև հասկացություն, այլ իբրև քերականական հարաբերություն։ Այս հարցը բավական վեճերի առարկա է դարձել. լեզվաբանների մեծագույն մասը գտնում է, որ դրանք արտահայտում են հարաբերություններ, իսկ ոմանք, դրանց հետ և որոշ փիլիսոփաներ, գտնում են, որ հենց այդ հարաբերություններն էլ

պետք է դիտել իբրև առարկաների միջև եղած հարաբերությունների հասկացություն, հետևաբար, դրանց կարծիքով, կապերն ու շաղկապներն էլ արտահայտում են հասկացություններ: Այս կետը լուսաբանելու համար մի փոքր ավելի մանրամասն քննենք այն: Դատելով, որ շաղկապներն ու կապերն էլ «արտահայտում են որոշակի հասկացություններ», Լ. Օ. Ռեզնիկովն իր դրույթը մեկնաբանում ու ձգտում է հիմնավորել այսպես. «Բառի՝ գործառական նշանակություն ունենալը բոլորովին չի նշանակում, թե այդ բառը չի արտահայտում ոչ մի հասկացություն: Որոշ հասկացությունների բովանդակությունը կարող է բաղադրվել ոչ թե առարկայական (թանձրացական), այլ հենց գործառական բնույթ ունեցող հատկանիշներից: Դրանք որոշ հարաբերությունների (կախման, վերաբերության, պատկանելության ևն) հասկացություններն են: ...Սպասարկու բառերը, ինչպես հայտնի է, լիովին բացահայտում են իրենց հարաբերությունների կոնկրետ իմաստը միայն նախադասության մյուս անդամների հետ կապի մեջ մտնելով: Եվ դա հասկանալի է: Չէ՞ որ հարաբերությունը միշտ մի ինչ-որ բանի հարաբերությունն է որևէ բանի նկատմամբ: Դրա համար էլ նրա կոնկրետ իմաստը կարող է հասկանալի լինել միայն մտքի մեջ ներմուծելով նաև հարաբերության որոշակի անդամները: ...Քանի որ կապերն ու շաղկապները ունեն նաև որոշ բառային իմաստ, նրանք կարող են դիտվել իբրև որոշակի հասկացությունների, այն է՝ հարաբերությունների հասկացությունների դրսևորումներ: ...Մենք չենք ժխտում կապերի ու շաղկապների, նրանց գործառական դերի հետ կապված, մյուս խոսքի մասերի համեմատությամբ իմաստաբանական յուրահատուկ առանձնահատկությունների որոշմանն ուղղված ուսումնասիրությունների հնարավորությունը: Ավելին, մենք գտնում ենք, որ այդ յուրահատուկ առանձնահատկություններն անպայման կան և ենթակա են հատուկ լեզվաբանական ուսումնասիրության: ...Սակայն սպասարկու բառերի այդ դերը (երբ նրանց բառային իմաստը կարծես թե «անհետանում է», և նրանք կատարում են միայն քերականական դեր) ածանցյալ է, լրացուցիչ և, համենայն դեպս, չի փոխում նրանց հիմնական դերը, որի մեջ զուգորդվում են բառային ու քերականական իմաստները: Այդ պատճառով էլ մենք չհիմնավորված ենք համարում սպասարկու բառերի բառային լրիվ ժխտումը: Մենք կարծում ենք, որ իրականում կապերն ու շաղկապները ունեն ինչպես կոնկրետ շարահյուսական, այնպես էլ վերացարկված բառային իմաստ: Հետևաբար,

բառի հարաբերական ինքնուրույնության դրույթը կիրառելի է, որոշ սահմանափակումներով, նաև նրանց նկատմամբ։ Իսկ սա, իր հերթին նշանակում է, թե սպասարկու բառերը, ինչպես և լիիմաստները, արտահայտում են որոշակի հասկացություններ»[1]։ *Մեր կարծիքով այս պնդումը զուրկ է գիտական հիմնավորումից. Լ. Օ. Ռեզնիկովը որոշ սխալ ելակետերի վրա հիմնվելով է դատողություններ անում և սխալ եզրակացության հանգելով՝ հանդիմանում է լեզվաբաններին։ Ոչ ոք չի ժխտում սպասարկու բառերի բառային իմաստը. լեզվաբանները գտնում են, որ ամեն մի բառ էլ իմաստ ունի, բայց որպեսզի տարբեր կարգի իմաստները միմյանցից զանազանեն, տարբեր անվանումներ են տալիս ու տարբեր սահմանումներ։ Բառային իմաստ ասելով լեզվաբանության մեջ հասկանում են այն իմաստները, որոնց բովանդակության հիմքն է կազմում հասկացությունը կամ որոնք՝ զգացմունք ու վերաբերմունք արտահայտելով, հարաբերակցվում են դրանց հասկացությունների հետ։ Քերականական իմաստ ասելով հասկանում են այն իմաստները, որոնք զանազան մասնավորեցումներ ու տարբերակումներ են տալիս բառային իմաստներին (ածանցական իմաստներ) կամ ցույց են տալիս* հարաբերություններ *որպես տրամաբանական կատեգորիաներ (վերաբերական իմաստներ)։ Ամեն մի բառ ունի բառիմաստ, կամ պարզապես՝ իմաստ. բայց դա կարող է լինել կամ* բառային իմաստ *կամ* հերականական իմաստ *(մենք, հետևաբար, տարբերում ենք* բառիմաստը *բառային իմաստից)։ Լ. Օ. Ռեզնիկովը դատում է այսպես. ա) Եթե կապերն ու շաղկապները հարաբերություններ են ցույց տալիս, ապա ցույց են տալիս ինչ-որ բառերի, իսկ դրանց միջոցով էլ՝ առարկաների հարաբերություն. բ) այդ հարաբերությունները կոնկրետանում, մասնավորվում են խոսքի մեջ, որովհետև այդտեղ են հանդես գալիս հարաբերության անդամները, բ) քանի որ կապերն ու շաղկապները ցույց են տալիս հարաբերություններ, ապա նրանք արտահայտում են հարաբերությունների հասկացություններ, դ) հետևաբար՝ կապերի ու շաղկապների իմաստը հասկացություն է։ Այդ դատողությունը նա հիմնավորում է այսպես. «Տրամաբանությունը, ինչպես հայտնի է, վերացարկման միջոցով առանձնացնում է իրերի ամենապարզ, առավել ընդհանուր հարաբերություններն արտահայտող հասկացությունների կապի ձևը։ Այդ հարաբերությունների նշանակման համար էլ, ահա, օգտագործվում են այնպիսի սպասարկու բառեր, ինչպիսիք են «և»,*

[1] Л. О. Резников, Понятие и слово, Л., 1958, стр. 68—72.

«մեջ», «կամ», «եթե», «ապա» ևն։ Ճիշտ նույնպես և մաթեմատիկայի մեջ (մասնավորապես երկրաչափության մեջ) այնպիսի սպասարկու բառեր, ինչպիսիք են՝ «առաջ», «հետ», «միջև» ևն օգտագործվում են նշանակելու համար որոշակի հարաբերություններ, որոնք մտածվում են համապատասխան հասկացություններով»[1]։ Որպեսզի այս դատողության սխալը ցույց տանք, դիմենք հետևյալ հասարակ օրինակին. մաթեմատիկայի մեջ գործածվում են >< նշանները՝ «մեծ է», «փոքր է» իմաստներով. «մեծ է», «փոքր է» կապակցությունները արտահայտում են ոչ միայն հասկացություն, այլև միտք։ Հիշյալ նշաններն, ուրեմն, խորհրդանիշներն (սիմվոլներն) են «մեծ», «փոքր» բառերի կամ ավելի ճիշտ՝ «մեծ է», «փոքր է» կապակցությունների։ Մեծության կամ փոքրության հասկացությունը ոչ միայն հատկանիշի հասկացություն է, այլև հարաբերության հասկացություն, երբ երկու միավորներ համեմատում ենք իրար հետ։ Արդ a>b մաթեմատիկական արտահայտությունը ցույց է տալիս մեծության հարաբերություն a և b անդամների միջև, հետևաբար > նշանը ստեղծում, ցույց է տալիս հարաբերություն երկու անդամների միջև. այստեղ ունենք հարաբերություն, իսկ «մեծ», «փոքր» բառերի մեջ՝ հասկացություն. մենք կարող ենք նշանը փոխարինել հենց այդ բառերով ու նրանց կապակցություններով, բայց դրանով ոչինչ չի փոխվի, բացի հարաբերության դրսևորման նյութական ձևից. օրինակ՝ եթե ասենք a-ն մեծ է b-ից, ապա այստեղ էլ ն, մեծ է, ից տարրերը հանգես են գալիս որպես հարաբերության արտահայտիչներ կամ ցուցիչներ. այստեղ, ուրեմն, անկախ հասկացությունն օգտագործվում է երկու միավորների միջև որոշակի հարաբերություն ստեղծելու համար, բայց նա՝ հասկացությունը, չի նույնանում այդ հարաբերության հետ։ Այժմ դիմենք լեզվական օրինակների. 1) Գիրքը պատկանում է Խաչիկին, գիրքը Խաչիկինն է, Խաչիկի գիրքը կապակցությունների մեջ ունենք պատկանելության հարաբերություն երկու առարկաների միջև, ուրեմն՝ առարկաների օբյեկտիվ հարաբերությունը նույնն է. սակայն այդ նույն հարաբերությունը քերականական տարբեր կառուցվածքով է արտահայտվել, կամ որ նույնն է՝ բառերի միջև ստեղծված տարբեր քերականական հարաբերություններով. երեք կապակցություններով արտահայտել ենք առարկաների միջև եղած մի հարաբերություն, որ կազմում է պատկանելություն բառի հասկացությունը, բայց այդ

[1] Л. О. Резников, Цит. соч., стр. 70.

Հասկացությունը բոլորովին կապ չունի քերականական այն հարաբերությունների հետ, որոնք պատկանելության հարաբերություն են ստեղծել բառերի, իսկ դրանց միջոցով էլ առարկաների միջև (ժամանակ, թիվ, դեմք, ստորոգում, սեռական հոլով ևն)։ 2) Ուսանողը կարդում է նախադասության մեջ ստեղծել ենք ուսանող և կարդալ *բառերի (հետևաբար և՝ նրանց հասկացությունների), իսկ դրա միջոցով էլ՝ մեկ մասնավոր առարկայի և գործողության հարաբերություն, բայց այդ հարաբերությունը չի մտնում ոչ* ուսանող, *ոչ էլ կարդալ բառի հասկացության մեջ։ Կարելի է մտածել, թե այս բառերի մեջ ստեղծված հարաբերությունը՝ ստորոգումը, հենց այն հասկացությունն է, որ ունեն քերականական միավորները, բայց դա էլ ճիշտ չէ. է հանգույցը կամ է օժանդակ բայը չի նշանակում ստորոգում, ինչպես և գիրը իմն է նախադասության մեջ է-ն չի նշանակում պատկանելություն կամ հատկացում։ 3)* Ուսանողը կարդում է *նախադասության ստորոգյալը կարող ենք փոխարինել* ուտում է, խոսում է, երգում է, նստում է, սովորում է, գրում է *և բազմաթիվ այլ բառերով. փոխեցինք հասկացությունները, բայց չփոխվեց քերականական հարաբերությունը և ոչ էլ առարկայի ու գործողության միջև եղած հարաբերությունը.* Գիրը պատկանում է Խաչիկին, Գիրը հանձնեցի Խաչիկին, Գիրը մեծ բավականություն պատճառեց *(ձանձրացրեց, ուրախացրեց, վշտացրեց, հոգնեցրեց ևն)* Խաչիկին *նախադասությունների ստորոգյալները տարբեր են. տարբեր են նաև հասկացությունները և դրանց միջև եղած հարաբերությունները (առաջինում՝ պատկանելության, երկրորդում՝ հանձնելու ևն), բայց նույնական են քերականական հարաբերությունները։ Այս օրինակները ցույց են տալիս, որ՝ 1)* տարբեր *բառակապակցություններով կարելի է արտահայտել նույն հասկացությունը (պատկանելության հասկացությունը առաջին երեք օրինակում) իբրև առարկաների միջև եղած նույն հարաբերության հասկացություն. 2)* միևնույն *բառակապակցությամբ (3-րդ խմբի օրինակների ստորոգման հարաբերությունը)* կարելի է արտահայտել տարբեր *հասկացություններ, իբրև առարկաների միջև եղած տարբեր հարաբերությունների հասկացություններ (3-րդ խմբի օրինակներում՝ պատկանելություն, հանձնում ևն). 3)* տարբեր *հասկացություններով կարելի է արտահայտել բառակապակցական տարբեր հարաբերություններ, բայց առարկաների միջև եղած միևնույն հարաբերությունը (1-ին երեք օրինակներում՝ պատկանելության հարաբերությունը),* որ մեր գիտակցության մեջ գո-

յություն ունի որպես տվյալ հարաբերության հասկացություն *(օր. պատկանելություն), 4)* տարբեր բերականական միջոցներով ու տարբեր բերականական իմաստներով կարելի է արտահայտել տարբեր բերականական հարաբերություններ *(1-ին խմբի օրինակներում՝ սեռականի քեր. իմաստ, ստորոգման քեր. իմաստ են և դրանց արտահայտման քերականական միջոցները)*, բայց առարկաների միջև եղած միևնույն հարաբերության հասկացությունը *(պատկանելության հասկացությունը և այդ հարաբերությունը առարկաների միջև 1-ին խմբի օրինակներում)*։ *Ինչպես տեսնում ենք, իրարից բոլորովին տարբեր բաներ են առարկաների միջև եղած հարաբերությունների հասկացությունները և բառերի միջև եղած հարաբերությունները. առաջինները օբյեկտիվ առարկաների հարաբերություններն են վերացարկված և ընդհանրացված մեր գիտակցության մեջ, իբրև հարաբերություն ինքնին, անկախ առարկաներից. երկրորդները բառերի միջև ստեղծված հարաբերություններ են նրանց կապակցության միջոցով, որոնք ոչ թե որևէ հարաբերության հասկացություն են արտահայտում, այլ ստեղծում են հենց որևէ հարաբերություն։* Գիրքը պատկանում է Խաչիկին *նախադասության մեջ պատկանելության հարաբերության հասկացությունն արտահայտում է միայն* պատկանել *բայը, մինչդեռ պատկանելության հարաբերությունն արտահայտում է ամբողջ կապակցությունը, ըստ որում է, -ին, -ը, -ում ձևույթները, որոնք քերականական իմաստ ունեն և ստեղծում են հիշյալ կապակցությունը, ոչ մի կապ չունեն պատկանելություն հասկացության հետ։ Այնուհետև՝ այդ նախադասության մեջ ունենք ստորոգում, որն արտահայտված է դեմքի, թվի, ժամանակի, եղանակի ևն քերականական իմաստները կրող ձևույթներով ու բառաձևերով, բայց դեմքի, թվի, ժամանակի, եղանակի ևն քերականական իմաստները ոչ մի կապ չունեն ստորոգում բառի հասկացության հետ, որը ենթակայի և ստորոգյալի հարաբերության հասկացությունն է։ Նրանք իրացնում, ստեղծում են ստորոգման հարաբերություն, բայց իրենք իրենց մեջ չեն կրում ստորոգում հասկացությունը։ Դեռ ավելին. առաջին հայացքից թվում է, թե մ, ս ևն վերջավորությունները, որոնք արտահայտում են դեմքի, թվի, ժամանակի քերականական իմաստ, պետք է որ նույնանան ժամանակ, դեմք, թիվ հասկացությունների հետ, բայց իրականում այդպես չէ. այս վերջինները ունեն լեզվաբանական տերմինների հասկացությունը (ժամանակի, թվի, դեմքի), մինչդեռ մ, ս ևն բայական վերջավորությունները՝ ոչ.*

Նրանք չեն նշանակում դեմ, թիվ կամ ժամանակ, այլ արտահայտում են այդ լեզվաբանական հասկացությունների հարաբերությունները գործողության հետ՝ իբրև քերականական կարգեր։ Այդպիսին է նաև կապերի ու շաղկապների իմաստը. դեպի ցույց է տալիս կամ արտահայտում է ուղղության քերականական իմաստ, բայց նրա իմաստը ուղղություն հասկացությունը չէ. մեջ ցույց է տալիս կամ արտահայտում է գործողության (վիճակի են) և տեղի հարաբերություն, բայց նա չունի տեղ հասկացությունը, չի նշանակում տեղ։ Այլ կերպ ասած, կապերն ու շաղկապներն էլ արտահայտում են այնպիսի իմաստ, ինչպիսին ձևորդները։ Երբ Հ. Հակոբյանը[1] մի դեպքում գրում է երգդ... ձուլեցին պոեմներդ յոթհարյուր յոթ օրվա միջում, իսկ մյուս դեպքում՝ Մի տարում մեծ գալիքի համար ուժեր ու նյութեր է մթերում, գործածելով օրվա միջում և տարում, ապա միջում նույն իմաստն է արտահայտում, ինչ որ –ում վերջավորությունը տարում բառաձևի մեջ. մենք կարող ենք ասել հինգ տարվա մեջ, հինգ տարվա ընթացքում, հինգ տարում, որոնցում մեջ, ընթացքում բառերը և –ում վերջավորությունը նույն հարաբերությունն են արտահայտում։ Իհարկե, հաճախ կապերն ու շաղկապները որոշ չափով ավելի կոնկրետացած հարաբերություն են արտահայտում, քան համապատասխան քերականական իմաստով վերջավորությունները. օրինակ՝ գործարանի մեջ և գործարանում իմաստով ընդհանուր առմամբ նույնն են, բայց մեջ-ը որոշակիորեն կոնկրետացնում է տեղի հարաբերությունը (նշանակում է՝ գործարանի ներսում), իսկ –ում-ը զուրկ է այդ կոնկրետացումից, նա ցույց է տալիս տեղ, առանց մասնավորապես նշելու՝ ներսո՞ւմ, թե այդ տեղի սահմաններում. դրանից էլ բխում է, օրինակ, գործարանում է աշխատում և գործարանի մեջ է աշխատում ձևերի իմաստային որոշակի տարբերությունը։ Դրանով է բացատրվում նաև այն, որ անձ ցույց տվող բառերի ներգոյականի –ում ձևը չի գործածվում. մարդու մեջ արյունը եռում է կարելի է ասել, մարդում չի կարելի, որովհետև գործողությունը տեղի է ունենում ներսում, և անձը չի կարելի դիտել իբրև ինչ-որ տեղ, որի սահմաններում կատարվում է որևէ գործողություն. նա կամ անձի ներսում է, կամ նրանից դուրս։ Մինչդեռ մարմնում, սրտում, գլխում, փորում և մարմնի մեջ, սրտի մեջ, գլխի մեջ, փորի մեջ կարելի է ասել, որովհետև և՛ ներս, և՛ սահմաններում (ներքինը և մակերեսը) հաս-

---

1 Հ ա կ ո բ Հ ա կ ո բ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. II, էջ 88, 97։

կացուիչյունները տարածվում են դրանց վրա։ Չնայած այս բոլորին, միշտ չէ, որ կապերի ու շաղկապների իմաստն այդպիսի կոնկրետացում ունենում է. գրաբարյան զ և ի նախդիրները զաղաքն, ի քաղաքէ, զքաղաքաւ, *ռուսերեն* в *և* к *նախդիրները* в саду, к городу *են բառերի հետ այդպիսի կոնկրետացում չունեն. ժամանակակից հայերենում Հոր կողմից պատժվեց, Ճորից պատժվեց նախադասուիչյունների մեջ կողմից բառը և -ից բացառականի վերջավորուիչյունը (հորից) քերականական իմաստով նույնն են։ Այս բոլորի եզրակացուիչյունն այն է, որ կապերն ու շաղկապները ունեն բառիմաստ, բայց նրանց բառիմաստը հասկացուիչյուն չէ, այլ քերականական իմաստ, և իբրև այդպիսին հասկացական տարբերակում չունի։*

3. Առաջին ենթախմբի բառերից քար *արտահայտում է առարկայի հասկացուիչյուն (առարկայնուիչյուն),* գեղեցիկ, գործել, արդեն, մեկ *արտահայտում են հատկանիշի հասկացուիչյուն (ընդհանուր անունով կոչենք* որակայնուիչյուն*)։*

4. Որակայնուիչյուն ցույց տվող բառերից գործել *ունի գործընթացային (պրոցեսուալ) հատկանիշի հասկացուիչյուն, այլ կերպ ասած, նա ցույց է տալիս փոփոխվող հատկանիշ, մինչդեռ* մեկ, գեղեցիկ *և* արդեն *փոփոխականուիչյուն չեն արտահայտում, նրանք ունեն ոչ գործընթացային հատկանիշի իմաստ։*

5. Ոչ գործընթացային հատկանիշ արտահայտող բառերից մեկ *և* գեղեցիկ *ցույց են տալիս առարկայի հատկանիշի հասկացուիչյուն, իսկ* արդեն՝ *հատկանիշի հատկանիշ. այս տարբերուիչյունը կարելի է մեկնաբանել նաև այլ տեսանկյունով. առաջինները արտահայտում են ինքնակա հատկանիշի հասկացուիչյուն, իսկ* արդեն*-ը ոչ ինքնակա, մի ուրիշ հատկանիշի զուգորդող հատկանիշի (հանգամանքի, պարագայի ևն) հասկացուիչյուն, ուրեմն՝ կունենանք առարկայի հատկանիշ—հատկանիշի հատկանիշ կամ ինքնակա հատկանիշ—զուգորդող հատկանիշ հակադրուիչյունը։*

6. Վերջապես, ինքնակա հատկանիշ ունեցող բառերից գեղեցիկ *ցույց է տալիս որպիսուիչյուն (որակային ինքնակա հատկանիշ), մեկ՝ քանակային հատկանիշ. զուգորդող հատկանիշ ունեցող բառերը ցույց են տալիս և՛ մեկը, և՛ մյուսը։*

7. Երկրորդ խմբի բառերը բաժանվում են երկու ենթախմբի. քերականական իմաստ ունեցող բառեր (դեպի, բայց) և արտահայտչական (էքսպրեսիվ) իմաստ ունեցող բառեր։

8. Քերականական իմաստ ունեցող բառերից բայց արտահայ-

տում է կապակցական իմաստ, իսկ դեպի՝ վերաբերական իմաստ, այլ կերպ ասած, շաղկապները կապակցում, կապում են իրար հետ ասույթի միավորները (նախադասության անդամներ, նախադասություններ), մինչդեռ կապերը հարաբերություններ են ստեղծում նախադասության անդամների միջև, ցույց են տալիս տվյալ բառի (կապական խնդրի) քերականական հարաբերությունն ու պաշտոնը ասույթի մեջ։

9. Արտահայտչական իմաստ ունեցող բառերից ոչ արտահայտում է զգացմունք, իսկ անշուշտ՝ մտածական վերաբերմունք[1]։

Այս վերջին երկու կարգերից դուրս է մնում շրջիկ բառը. ավանդական քերականությունը այդ կարգի բառերը հատկացնում է ձայնարկություններին, բայց ձայնարկությունները զգայական վերաբերմունք են արտահայտում, մինչդեռ շրջիկ, թրջիկ, զրնգ ևն զգացմունք չեն արտահայտում։ Նրանց իմաստը կարելի է կոչել բնաձայնություն և հենց բնաձայնությամբ է, որ դրանք հակադրվում են արտահայտչական իմաստ ունեցող բառերի մյուս երկու դասերին։

Ուրեմն, բնաձայնություն ասելով հասկանում ենք նմանությունը որևէ գործողության, երևույթի, առարկայի ևն հանած ձայնին։

Ըստ գործառական հատկանիշների հիշյալ բառերը խմբավորվում են այսպես.

1. Բառերը, որպես բառային մակարդակի միավորներ, հանդիսանում են հասկացությունների անվանումներ, նրանք ունեն անվանողական դեր. բայց ոչ բոլոր բառերն են այդպես։ Քար, գեղեցիկ, մեկ, գործել, արդեն բառերն ունեն անվանողական դեր, իսկ մեծ, ուֆ, անշուշտ, դեպի, բայց, շրջիկ բառերը այդպիսի դեր չունեն։

2. Անվանողական դեր չունեցող բառերից մեծ ցույց է տալիս խոսող անձ հոգն. թվով. նա ունի ցուցողական դեր, իսկ ուֆ, անշուշտ ունեն արտաձայնչական (էքսպրեսիվ) դեր. այս դերով բնորոշվում է նաև շրջիկ բառը։

3. Քար, գեղեցիկ, գործել, շրջիկ բառերը կարող են հանդես գալ որպես հիմույթներ. նրանցից բաղադրյալ բառեր են կազմվում։ Մի քանի պարզ մակբայներից կազմված բառեր ունենք (ուշանալ, մշտական, շտապել), բայց դրանք մակբայ են և ածական. իբրև կանոն մակբայներից նոր բառեր չեն կազմվում։ Դերանուններից

---

1 Ս. Գ. Աբրահամյան, նույն տեղում, էջ 507։

բառեր կազմվում են, թեև սահմանափակ թվով։ Ձայնարկություններից ունենք ավաղել, ավաղաճ, ափսոսալ, ափսոսաճ, վայել, ինչպես և ուֆ անել, ախ ֆաշել են բաղադրություններ։ Ծղանակավորող բառերից, կապերից ու շաղկապներից բառեր չեն կազմվում։ Այսպիսով, մի կողմից կունենանք բառեր, որոնք կարող են հիմույթ լինել (հիմույթային բառեր), մյուս կողմից՝ բառեր, որոնք ժամանակակից հայերենում հիմույթ չեն կարող լինել (ոչ հիմույթային բառեր)։

4. Քար, գեղեցիկ, գործել, մեմ, մեկ, արդեն նախադասության անդամ կարող են լինել, մինչդեռ դեպի, բայց, անշուշտ, ուֆ, շրթխկ ինքնին նախադասության անդամ չեն կարող լինել (փոխանվանական գործածությունները մի կողմ ենք թողնում)։

5. Երկրորդ խումբը կազմող բառերից դեպի և բայց ասույթի մեջ կախյալ դիրք ունեն. նրանց առկայությունը պայմանավորված է ասույթի միավորներով ու նրանց միջև եղած հարաբերություններով, նրանք քերականական դեր են կատարում, մինչդեռ անշուշտ, ուֆ, շրթխկ բառերը ինքնավար միավորներ են, որոնք քերականական դեր չունեն։

6. Նա, մեմ են բառերը տարբերակված հասկացություններ արտահայտող բառերին, ինչպես և նախադասություններին, փոխարինելու դեր են կատարում, մյուս բառերը այդպիսի դեր չեն կատարում (նվաստս, ծառաս, Ձերդ գերազանցությունը, ժողովրդական՝ ախպերս (ախպորս ասեմ) և նման արտահայտությունները դերանվանական իմաստով են գործածվում և այդ պատճառով էլ կարող են փոխարինելու դեր կատարել)։

7. Դեպի և բայց բառերը թեև երկուսն էլ կախյալ միավորներ են, սակայն դեպի-ն՝ համակցության մեջ մտնելով լիիմաստ բառի հետ, նրա հետ միասին կազմում է նախադասության մեկ անդամ, ուրեմն նրա շարահյուսական դերը բնորոշվում է համակցությամբ[1], իսկ բայց-ը նախադասության անդամ չի կազմում ուրիշ բառի հետ, նա զուրկ է համակցական դերից և ունի, ինչպես ասացինք, կապակցելու, շաղկապելու դեր։

Ինչպես տեսնում ենք, իմաստային հատկանիշի վրա հենվելով՝ բառերը նախ խմբերի բաժանեցինք, ապա՝ ենթախմբերի և այդպես շարունակեցինք, մինչև որ ամեն մի բառ առանձին մնաց միայն իրեն հատուկ հատկանիշով։ Այս նկատառումով էլ, ահա, Ս.

1 Նախադրությունների ու նախդիրների համակցական դերը շատ ավելի ցայտուն է գրաբարում (միևնույն նախդիրը կամ նախադրությունը տարբեր հոլովներով խնդիր ունենալով տարբեր էլ բառաձևեր է կազմում)։

Աբրահամյանը առաջարկել է իր աստիճանական դասակարգումը։ Այդ դասակարգման դրական կողմն այն է, որ վեր է հանում առանձին խոսքի մասերի իմաստային ընդհանրություններն ու հակադրությունները և դրանով իսկ բացահայտում առավել ընդհանուր իմաստների ու մանավոր խոսքամասային իմաստների ստորակարգությունը (ընդհանրապես հատկանիշի հասկացություն, ապա՝ փոփոխական հատկանիշ և կայուն հատկանիշ են)։ Դրա հետ միասին այդ դասակարգման առաջին աստիճանում խոսքի մասերը բաժանվում են երեք խմբի, որով խախտվում է ստորին աստիճաններում կիրառված երկանդամ հակադրությունների սկզբունքը։ Այդ դասակարգումից մենք վերցրել ենք զգացմունքային վերաբերմունք—մտածական վերաբերմունք հակադրությունը ձայնարկությունների և եղանակավորող բառերի համար։ Բոլոր մյուս իմաստային հատկանիշները, բացի №№ 2, 7, 8-ից, բնութագրված են մեր «Լեզվաբանության ներածության» մեջ[1], թեև այլ անվանումներով։ Ելնելով վերը թվարկված հատկանիշներից՝ մենք կիրառում ենք հնչույթաբանության (նաև ձևաբանության ու շարահյուսության) մեջ ընդունված երկատման (դիխոտոմիայի) մեթոդը։ Ինչպես գիտենք, հնչույթային հատկանիշներն էլ կարելի է աստիճանականությամբ ներկայացնել. այսպես՝ ձայնավորություն-բաղաձայնություն վերաբերում է բոլոր հնչույթներին, ձայնեղություն-խլություն միայն բաղաձայններին, ռնգայնություն—ոչ ռնգայնություն՝ միայն ն և մ-ին (հայերենում) և այլն[2]։ Բայց չնայած դրան, հնչույթների բոլոր հատկանիշները վեր հանելու, նրանց հնչույթային բովանդակությունը պարզելու, ինչպես և ուղղակի ու երկանդամ հակադրություններով ներկայացնելու համար, մի կողմ են թողնում այդ աստիճանականությունը։ Այդ մեթոդով էլ առաջնորդվում ենք մենք։ Վերը բերված բառերի խոսքամասային իմաստների ու գործառական առանձնահատկությունների վերլուծության հիմամբ ունենում ենք հատկանիշների հետևյալ հակադրությունները.

Ա. Իմաստային

1. *Հասկացական իմաստ—ոչ հասկացական իմաստ*
2. *Տարբերակված իմաստ—չտարբերակված իմաստ*

---

1 Էդ. Աղայան, *Լեզվաբանության ներածություն, 1949 և հետագա հրատարակություններ։*

2 *Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս է. Ը. Ա ղ ա յ ա ն, Գրաբարի քերականություն, հ. 1, դիրք Ա, էջ 191—196։*

3. Առարկայնություն—որակայնություն
4. Գործընթացայնություն—ոչ գործընթացայնություն
5. Ինքնակա հատկանիշ—զուգորդող հատկանիշ
6. Որակային հատկանիշ—քանակային հատկանիշ
7. Քերականական իմաստ—արտահայտչական իմաստ
8. Վերաբերական իմաստ—կապակցական իմաստ
9. Զգացմունքային վերաբերմունք—մտածական վերաբերմունք
10. Բնաձայնություն—ոչ բնաձայնություն

Բ. Գործառական

1. Անվանողական—ոչ անվանողական
2. Ցուցողական—արտահայտչական
3. Հիմույթային—ոչ հիմույթային
4. Նախադասության անդամ—ոչ անդամ
5. Փոխարինող—չփոխարինող
6. Ասույթի ինքնավար միավոր—կախյալ միավոր
7. Համակցական—ոչ համակցական

Այսպիսով, հայերենի խոսքի մասերի համար կունենանք ընդամենը 17 տարբերակիչ հատկանիշ։

Այժմ, հիմք ընդունելով այդ հատկանիշները, փորձենք վերը թերված բառերը բնորոշել դրանցով. բառերից յուրաքանչյուրը մեկ խոսքի մասի ներկայացուցիչ է, իսկ դա նշանակում է, թե տվյալ բառի հատկանիշները բնորոշում են որևէ խոսքի մաս։ Հատկանիշների վերագրումը կատարվում է +, —, 0 նշաններով. առաջինը (+) ցույց է տալիս, որ բառը ունի հակադրության առաջին հատկանիշը, երկրորդը (—) ցույց է տալիս, որ բառն ունի հակադրության երկրորդ հատկանիշը, իսկ երրորդը (0) նշանակում է, թե տվյալ հակադրությունը տվյալ բառի վրա չի տարածվում։ Հասկանալի է, որ հակադրությունների մեջ առաջին և երկրորդ տեղերը պայմանական են. առարկայնություն—որակայնություն հակադրությունը կարելի է շրջել և դարձնել որակայնություն—առարկայնություն, բայց դրանից ոչինչ չի փոխվի (տե՛ս տախտակ № 3)։

Այժմ, ելնելով այդ տախտակից, փորձենք բնութագրել հայերենի խոսքի մասերը և նրանց տարբերակիչ հատկանիշները։

1. Գոյական.— Ունի № 1, 2, 3, 11, 13, 16 հատկանիշները + նշանով, № 14-ը՝ ± նշանով. նշանակում է՝ գոյականն ունի ա-

Աղյուսակ 3

		Հատ	Դեղեցիկ	Մեկ	Ես, դու, նա, մենք, դուք, նրանք	Գործել	Արդեն, ուշ	Ոչ	Անշուշտ	Թեթև	Ցած	Երբեմն
1	Հասկացական իմաստ — ոչ հասկացական իմաստ	+	+	+	+	+	+	+	+	−	−	+
2	Տարբերակված իմաստ — չտարբերակված իմաստ	+	+	+	+	+	+	+	+	−	−	+
3	Առարկայնություն — որակայնություն	0	+	−	+	+	−	0	0	0	0	0
4	Գործընթացայնություն — ոչ գործընթացայնություն	0	−	−	±	0	−	0	0	0	0	0
5	Ինքնակա հատկանիշ — դուրսդող հատկանիշ	0	+	+	±	0	−	0	0	0	0	0
6	Որակային հատկանիշ — քանակային հատկանիշ	0	+	−	±	0	±	0	−	0	0	0
7	Բերականական իմաստ — արտահայտչական իմաստ	0	0	0	−	0	0	−	−	+	0	0
8	Վերաբերական իմաստ — կապակցական իմաստ	0	0	0	−	0	0	0	−	0	0	0
9	Զգացական վերաբերմունք — մտածական վերաբերմունք	0	0	0	−	0	0	0	−	+	0	0
10	Բնաձայնություն — ոչ բնաձայնություն	0	0	0	−	0	0	0	−	0	0	0
11	Անվանողական դեր — ոչ անվանողական դեր	+	+	+	−	+	+	−	−	−	−	−
12	Ածողական դեր — արտահայտչական դեր	0	0	0	−	+	0	−	−	0	−	−
13	Հիմնային դեր — ոչ հիմնային դեր	+	+	+	−	+	+	−	−	−	−	−
14	Նախադասություն անդամ — ոչ անդամ	+	+	+	−	+	+	−	−	−	−	−
15	Փոխարինող — ոչ փոխարինող	0	+	0	−	0	0	+	−	−	−	−
16	Ինքնավար միավոր — կախյալ միավոր	0	0	0	−	0	0	0	−	+	−	+
17	Համակցական դեր — ոչ համակցական դեր	0	0	0	−	0	0	0	−	0	−	0

ռարկայնության (3) տարբերակված (2) հասկացական (1) իմաստ, բառային մակարդակում ունի անվանողական (1) և հիմույթային (13) դեր, նախադասության մեջ կարող է լինել ինքնուրույն անդամ (14), կարող է նաև չլինել, այդ պատճառով էլ դրված են ± նշանները միասին. եթե նախադասության անդամ չէ, կոչական բառ է, հետևաբար ինքնավար միավոր է։ Այս հատկանիշով գոյականը նույնանում է ձայնարկությունների, եղանակավորող բառերի ու նմանաձայնությունների հետ, ինչպես և՝ 14-րդ հատկանիշով, եթե գործածվում է իբրև կոչական բառ։

2. Ած ական.— Ունի № 1, 2, 5, 6, 11, 13, 14 հատկանիշները + նշանով, № 3, 4-ը՝ — նշանով։ Նշանակում է՝ ածականն ունի որակայնության (3) ոչ գործընթացային (4) ինքնակա (5) որակային հատկանիշի (6) տարբերակված (2) հասկացական (1) իմաստ, բառային մակարդակում՝ անվանողական (11) և հիմույթային (13) դեր, շարահյուսական մակարդակում՝ նախադասության անդամի (14) դեր։

3. Թվական.— Ունի № 1, 2, 5, 11, 13, 14 հատկանիշները + նշանով, № 3, 4, 6 հատկանիշները՝ — նշանով։ Նշանակում է՝ թվականն ունի որակայնության (3) ոչ գործընթացային (4) ինքնակա (5) քանակային հատկանիշի (6) տարբերակված (2) հասկացական (1) իմաստ, բառային մակարդակում՝ անվանողական (11) և հիմույթային (13) դեր, շարահյուսական մակարդակում՝ նախադասության անդամի (14) դեր։

4. Դերանուն.— Ունի № 1, 12, 13, 14, 15 հատկանիշները + նշանով, № 2, 11 հատկանիշները՝ — նշանով, № 3, 4, 5, 6 հատկանիշները՝ ± նշաններով։ Նշանակում է՝ դերանունն ունի որակայնության կամ առարկայնության (3) ոչ գործընթացային (4) ինքնակա կամ գուգորդող (5) որակային կամ քանակային (6) հատկանիշի չտարբերակված (2) հասկացական (3) իմաստ, բառային մակարդակում ունի ոչ անվանողական (11) ցուցողական (11) և հիմույթային (13) դեր, շարահյուսական մակարդակում՝ նախադասության անդամի (14) և փոխարինող դեր (15)։ Դերանվան հատկանիշներից ուշագրավ են. չտարբերակվածությունը, որով նա նույնանում է ձայնարկությունների, կապերի, եղանակավորող բառերի, շաղկապների ու նմանաձայնությունների հետ, որոնց բոլորին, սակայն, հակադրվում է հասկացական իմաստով. ունի հետևաբար չտարբերակված հասկացական իմաստ, որ է խոսքամասային իմաստը։ Երեք հատկանիշ ունի ± նշաններով, որովհետև դերա-

Նուններըը կարող են ունենալ առարկայնության (գոյականի) և որակայնության (ածականի, թվականի (չափի ու քանակի), մակբայի) խոսքամասային իմաստ. իբրև որակայնություն արտահայտող բառեր դերանունները կարող են ցույց տալ ինքնակա կամ զուգորդող, որակային կամ քանակային հատկանիշներ։

5. Բայ.— Ունի № 1 ,2, 4, 11, 13, 14 հատկանիշները + նշանով, № 3 հատկանիշը՝ — նշանով։ Նշանակում է՝ արտահայտում է որակայնության (3) գործընթացային (4) տարբերակված (2) հասկացական (1) իմաստ, բառային մակարդակում ունի անվանողական (11) և հիմույթային (13) դեր, շարահյուսական մակարդակում՝ նախադասության ինքնուրույն անդամի (14) դեր։

6. Մակբայ.— Ունի № 1, 2, 11, 14 հատկանիշները+նշանով, № 3, 4, 5, 13 հատկանիշները՝ — նշանով, № 6 հատկանիշը ± նշանով։ Նշանակում է՝ մակբայն ունի որակայնության (3) ոչ գործընթացային (4) զուգորդող (5) որակային կամ քանակային (6) հատկանիշի տարբերակված (2) հասկացական (1) իմաստ, բառային մակարդակում ունի անվանողական (11), բայց ոչ հիմույթային (13) դեր, շարահյուսական մակարդակում՝ նախադասության ինքնուրույն անդամի (14) դեր։

7. Ձայնարկություն.— Ունի № 2, 9, 13, 16 հատկանիշները + նշանով, № 1, 7, 10, 11, 12, 14, 15 հատկանիշները՝ — նշանով։ Նշանակում է՝ ձայնարկությունն ունի զգացմունքի (9) արտահայտչական (7) տարբերակված (2) ոչ հասկացական (1) և ոչ բնաձայնական (10) իմաստ, բառային մակարդակում՝ ոչ անվանողական (11) արտահայտչական (12) հիմույթային (13) դեր, շարահյուսական մակարդակում՝ նախադասության ոչ անդամի (14), չփոխարինող (15), ինքնավար միավորի (16) դեր։

8. Եղանակավորող բառեր.— Ունեն՝ № 2, 16 հատկանիշները + նշանով, № 1, 7, 9, 10, 11, 12, 13, 14, 15 հատկանիշները՝ — նշանով։ Նշանակում է՝ եղանակավորող բառերն ունեն մտածական (9) վերաբերմունքային (7) տարբերակված (2) ոչ հասկացական (1) և ոչ բնաձայնական (10) իմաստ, բառային մակարդակում ունեն ոչ անվանողական (11) արտահայտչական (12) ոչ հիմույթային (13) դեր, շարահյուսական մակարդակում՝ չփոխարինող (15), նախադասության ոչ անդամ (14) ինքնավար միավորի (16) դեր։

9. Կապ.— Ունի № 7, 8, 17 հատկանիշները + նշանով, № 1, 2, 11, 13, 14, 15, 16 հատկանիշները՝ —նշանով։ Նշանակում է՝

կապն ունի քերականական (7) վերաբերական (8) չտարբերակված (2) ոչ հասկացական (1) իմաստ, բառային մակարդակում՝ ոչ անվանողական (11) ոչ հիմույթային (12) դեր, շարահյուսական մակարդակում՝ նախադասության ոչ անդամի (14), չփոխարինող (15) համակցական (17) կախյալ միավորի (16) դեր։

10. Շաղկապ.—Ունի № 7 հատկանիշը + նշանով, № 1, 2, 8, 11, 13, 14, 15, 16, 17 հատկանիշները՝ — նշանով։ Նշանակում է՝ շաղկապն ունի կապակցական (8) քերականական (7) չտարբերակված (2) ոչ հասկացական իմաստ, բառային մակարդակում ունի ոչ անվանողական (11) ոչ հիմույթային (13) դեր, շարահյուսական մակարդակում՝ նախադասության անդամ չհանդիսացող (14), չփոխարինող (15) ոչ համակցական (17) կախյալ միավորի (16) դեր։

11. Նմանաձայնություն.— Քերականությունների մեջ նմանաձայնությունները հատկացվում են ձայնարկություններին, բայց մեր կարծիքով դա չի արդարանում. իմաստային ընդհանրություն չկա ձայնարկության և նմանաձայնության միջև. առաջինն արտահայտում է զգացմունք (հոգեկան ապրում, ցանկություն, ֆիզիկական զգացում են), մինչդեռ շրթխկ, ծիվ-ծիվ, ճրզ-վրզ և նման բառերը ոչ մի գործ չունեն զգացմունքների հետ. նրանք բնության երևույթների, առարկաների, կենդանիների հանած ձայների վերարտադրություն են հնչյուններով։ Այդ նկատի ունենալով՝ մենք առանձնացնում ենք որպես առանձին խոսքի մաս։ Տախտակում նա ունի № 2, 10, 13, 16 հատկանիշները + նշանով, № 1, 7, 11, 12, 14, 15 հատկանիշները՝ — նշանով։ Նշանակում է՝ նմանաձայնությունն ունի տարբերակված (1) ոչ հասկացական (2) արտահայտչական (7) բնաձայնության (10) իմաստ, բառային մակարդակում ունի ոչ անվանողական (11), արտահայտչական (12), հիմույթային (13) դեր, շարահյուսական մակարդակում՝ նախադասության անդամ չհանդիսացող (14) չփոխարինող (15), ինքնավար միավորի (16) դեր։

Այժմ, երբ արդեն գործնականորեն բնութագրել ենք յուրաքանչյուր խոսքի մաս ըստ տարբերակիչ հատկանիշների, անդրադառնանք այդ հատկանիշներին։ Տախտակի մեջ իմաստային հատկանիշներին (1—10) հաջորդում են գործառական հատկանիշները։ Երբ ուշադրությամբ համեմատում ենք որևէ խոսքի մասի այդ կարգի հատկանիշները, տեսնում ենք, որ նրանք մեծ մասամբ զուգահեռներ են կազմում։ Այսպես՝ առաջին հատկանիշով առաջին վեց խոսքի մասերը հակադրվում են հաջորդ հինգին. նույն պատկերն է ներկայացնում նաև № 14 հատկանիշի հակադրությունը, ինչպես և՝

№ 17-ը։ Նույնական հակադրություն ունեն նաև № 8 և № 17 հատկանիշները։

Արդ, քանի դեռ մեր նպատակն էր վեր հանել յուրաքանչյուր խոսքի մասի բոլոր առանձնահատկությունները և դրանց օգնությամբ ճշգրիտ գաղափար կազմել իմաստային յուրահատկության մասին, մենք իբրև աշխատանքային ելակետ ընդունեցինք երկու հիմունք՝ իմաստային և գործառական։ Դա մեզ հնարավորություն տվեց վերլուծությունների միջոցով պարզել խոսքի մասերի իմաստների և նրանց գործառության կապը, գործառական հատկանիշների օգնությամբ ճշգրտել խոսքի մասերի, մասնավորապես կապի, շաղկապի և նմանաձայնության խոսքամասային իմաստը։ Սակայն, այժմ, երբ այդ տվյալներն ունենք մեր տրամադրության տակ, կարող ենք արդեն վերանայել մեր ընդունած աշխատանքային հիմունքը։ Բանն այն է, որ ինչպես պարզ կերպով երևում է տախտակից, միայն 1—10 հատկանիշները բացահայտում են արդեն յուրաքանչյուր խոսքի մասի բովանդակությունը, իսկ գործառական հատկանիշները միայն լրացնում են դրանք։ Քանի որ խոսքի մաս կոչվածը բառերի խոսքամասային իմաստով է բնութագրվում, ապա պարզ է, որ մենք կարող ենք մի կողմ թողնել լրացուցիչ հատկանիշները և իբրև հայերենի խոսքի մասերի դասակարգման հիմունք ընդունել միայն խոսքամասային իմաստը։ Ըստ այդմ, վերը բերված տախտակը կկրճատենք և կստանանք հետևյալ պատկերը (տե՛ս տախտակ № 4)։ Հատկանիշների վերագրման մեջ որոշ փոփոխություններ ենք կատարել, որոնք բացատրվում են հետևյալ հանգամանքներով։

Ա) Դերանվան համար նախորդ տախտակում 3, 4, 5, 6 հակադրությունների դիմաց նշանակել ենք $\pm$ նշան. քանի որ մենք այդ տախտակը, ամբողջությամբ վերցրած, կազմել ենք իբրև աշխատանքային տախտակ, որի մեջ պետք է արտացոլվեին յուրաքանչյուր խոսքի մասի բոլոր իմաստային հատկանիշները, ապա անհրաժեշտ էր ցույց տալ, որ դերանունը կարող է ունենալ ինչպես ածականի, այնպես էլ մակբայի, ինչպես ածականի, այնպես էլ թվականի և նույնիսկ բայի խոսքամասային իմաստ։ Այդ բոլորը նշելուց հետո, երբ ընդհանրացնում ենք հատկանիշները և վերցնում միայն նրանք, որոնք կարևոր, իսկապես տարբերակիչ դեր են կատարում և կազմում են տվյալ խոսքի մասի բովանդակությունը, բնականաբար այդ երկրորդական հատկանիշները դուրս են մնում։

		Գոյական	Ածական	Թվական	Դերանուն	Բայ	Մակբայ	Յատկացուցիչ-բայական	Նախդիր	Շաղկապ	Հոդակապ-յուչական
1	Հասկացական իմաստ (Հ) — ոչ հասկացական իմաստ ($\overline{Հ}$)	+	+	+	+	+	+	–	–	–	–
2	Տարբերակված իմաստ (Տ) — չտարբերակված իմաստ ($\overline{Տ}$)	+	+	+	–	+	+	+	–	–	+
3	Առարկայնություն (Ա) — որակայնություն ($\overline{Ա}$)	+	–	–	0	–	–	0	0	0	0
4	Գործընթացայնություն (Գ) — ոչ գործընթացայնություն ($\overline{Գ}$) . .	0	–	–	0	+	–	0	0	0	0
5	Ինքնակա հատկանիշ (Ի) — զուգորդող հատկանիշ ($\overline{Ի}$)	0	+	+	0	0	–	0	0	0	0
6	Որակային հատկանիշ (Ո) — քանակային հատկանիշ ($\overline{Ո}$)	0	+	–	0	0	0	0	0	0	0
7	Ցերականական իմաստ (Ց) — արտահայտչական իմաստ ($\overline{Ց}$) . .	0	0	0	0	0	0	–	+	+	–
8	Վերաբերական իմաստ (Վ) — կապակցական իմաստ ($\overline{Վ}$)	0	0	0	0	0	0	0	+	–	0
9	Զուգական վերաբերմունք (Զ) — մոնոմական վերաբերմունք ($\overline{Զ}$)	0	0	0	0	0	+	–	0	0	0
10	Բնութայնություն (Բ) — ոչ բնութայնություն ($\overline{Բ}$)	0	0	0	0	0	0	0	0	0	+

* Փակագծերի մեջ նշանակված տառերը հակադրությունների առաջին եզրի բառի սկզբնատառն են, նրանց վրա դրված գծիկը հակադրության երկրորդ եզրի՝ բացասականն հատկանիշի նշանն է։

Տախտակում թողնված հատկանիշները կազմում են խոսքի մասերի խոսքամասային բովանդակությունը: Դերանվան, իբրև խոսքի մասի, բովանդակության մեջ մտնում են հասկացական և չտարբերակված իմաստային հատկանիշները: Թեև դերանունը կարող է դրսևորվել միայն առարկայանության կամ որակայնության չտարբերակված իմաստով, որակայնության դերանունն էլ կարող է դրսևորվել կամ ածականի, կամ մակբայի, կամ թվականի խոսքամասային իմաստով, այնուամենայնիվ այդ իմաստները խոսքամասային հակադրություն չեն ստեղծում: Այստեղ ունենք նույնպիսի հարաբերություն, ինչ որ հնչույթաբանության մեջ՝ հնչույթների ու ենթահնչույթների միջև: Ժամանակակից հայերենում, ինչպես վերն ասել ենք, թ հնչույթը կարող է իրացվել անպայմանորեն կամ որպես թ կամ որպես թ՛ հնչյուն (համմտ. արթուն, հարություն), բայց որովհետև հնչյունական այդ հատկանիշները իմաստազատիչ հակադրություն չեն ստեղծում, չեն էլ մտնում թ-ի հնչույթային բովանդակության մեջ: Այդպես էլ դերանունը կարող է իրացվել կամ իբրև անձնական (առարկայնություն), ասենք՝ ես, մենք ևն, կամ իբրև ցուցական (այս, այդպիսի), կամ իբրև անորոշ և այլն. դրանցից յուրաքանչյուրը ցույց է տալիս առարկայնության կամ որակայնության (ինքնակա կամ զուգորդող, որակային կամ քանակային) չտարբերակված հասկացական իմաստ և հենց այդ էլ մտնում է դերանվան խոսքամասային բովանդակության մեջ. մյուս հատկանիշները (ինքնակա-զուգորդող, որակային-քանակային) չեն մտնում խոսքամասային բովանդակության մեջ, որովհետև չկա մի ուրիշ խոսքի մաս, որն արտահայտեր դարձյալ չտարբերակված հասկացական իմաստ, բայց ցույց չտար առարկայնության կամ որակայնության հատկանիշ: Այս պատճառով էլ, առարկայնության կամ որակայնության, ինչպես և զուգորդող կամ ինքնակա, որակային կամ քանակային հատկանիշի իմաստ արտահայտող դերանունները կդիտվեն իբրև դերանվան ենթախոսքամասեր, այսինքն՝ այն, ինչ-որ սովորական լեզվով կոչում ենք դերանվան տեսակներ: Ուստի և՝ № 3, 4, 5, 6 հակադրությունների դիմաց նշանակել ենք զրո:

Բ) Մակբայի համար նախորդ տախտակում № 6 հակադրության դիմաց նշանակել ենք $\pm$, իսկ այս տախտակում՝ զրո: Հարաբերությունը նույնն է. ամեն մի բառ, որ ցույց է տալիս ոչ ինքնակա, զուգորդող հատկանիշի հասկացական տարբերակված իմաստ, մակբայ է. այն, որ զուգորդող հատկանիշը կարող է լինել որա-

կային (ձևի մակբայ) կամ քանակային (չափ ու քանակի մակբայ), ինչպես և տարածական (տեղի մակբայ), ժամանակային (ժամանակի մակբայ), ոչ մի կարևորություն չունի խոսքամասային բովանդակության համար, որովհետև չունենք հասկացական տարբերակված ոչ գործընթացային զուգորդող հատկանիշի իմաստ արտահայտող մի ուրիշ խոսքի մաս, որը հակադրվեր մակբային քանակային-որակային հատկանիշով։

Գ) Ինչ որ ասացինք դերանվան ու մակբայի մասին, վերաբերում է նաև մյուս խոսքի մասերին. ամեն մի խոսքի մաս էլ ունի իր տեսակները. օրինակ՝ գոյականն ունի երկու տեսակ՝ հատուկ անուն, հասարակ անուն, ըստ իմաստի՝ թանձրացական, վերացական, շաղկապն ունի երկու տեսակ՝ ստորադասական, համադասական։ Այդ տեսակներն էլ հենց հանդիսանում են խոսքի մասերի ենթախոսքամասերը։

Ամփոփելով տախտակի տվյալները՝ խոսքի մասերից յուրաքանչյուրի բովանդակությունը կարող ենք ներկայացնել հետևյալ բանաձևերով.

1. Գոյական.— ՀՏԱ (հասկացական տարբերակված առարկայնության իմաստ)։

2. Ածական.— ՀՏ$\overline{\text{ԱԳ}}$ԻՈ (հասկացական տարբերակված ոչ առարկայնության (որակայնության) ոչ գործընթացային ինքնակա հատկանիշի իմաստ)։

3. Թվական.— ՀՏ$\overline{\text{ԱԳ}}$ԻՈ$\overline{}$ (հասկացական տարբերակված ոչ առարկայնության ոչ գործընթացային ինքնակա ոչ որակային (քանակային) հատկանիշի իմաստ)։

4. Դերանուն.—ՀՏ$\overline{}$ (հասկացական չտարբերակված իմաստ)։

5. Բայ.— ՀՏ$\overline{\text{Ա}}$Գ (հասկացական տարբերակված որակայնության գործընթացային հատկանիշի իմաստ)։

6. Մակբայ.— ՀՏ$\overline{\text{ԱԳ}}$Ի (հասկացական տարբերակված որակայնության ոչ գործընթացային զուգորդող հատկանիշի իմաստ)։

7. Զայնարկություն.— $\overline{\text{ՀՏՔՁՔ}}$ (ոչ հասկացական տարբերակված արտահայտչական զգացական վերաբերմունքի իմաստ)։

8. Եղանակավորող բառեր.— $\overline{\text{ՀՏՔՁՔ}}$ (ոչ հասկացական տարբերակված արտահայտչական մտածական վերաբերմունքի իմաստ)։

9. Կապ.— $\overline{\text{ՀՏ}}$ՔՎ (ոչ հասկացական չտարբերակված քերականական վերաբերական իմաստ)։

10. Շաղկապ.—$\overline{\text{ՀՏՔՎ}}$ *(ոչ հասկացական չտարբերակված քերականական կապակցական իմաստ)։*

11. Նմանաձայնություն.— $\overline{\text{ՀՏՔ}}\text{Բ}$ *(ոչ հասկացական տարբերակված արտահայտչական բնաձայնության իմաստ)։*

Այս բանաձևերից ելնելով, մենք կարող ենք որոշել խոսքի մասերի հակադրությունները միմյանց հետ. օրինակ՝ գոյականի և դերանվան համար ունենք ՀՏԱ *և* $\overline{\text{ՀՏ}}$ *բանաձևերը, որից բխում է* $\text{Տ} : \overline{\text{Տ}}$ *հակադրությունը. դերանվան և ձայնարկությունների համար՝* $\overline{\text{ՀՏ}}$ *և* $\overline{\text{ՀՏՔՁԲ}}$ *բանաձևերը, որից բխում է* $\overline{\text{ՀՏ}} : \overline{\text{ՀՏ}}$ *հակադրությունը (դերանունն ունի հասկացական չտարբերակված իմաստ, ձայնարկությունը ոչ հասկացական տարբերակված իմաստ). դերանվան և նմանաձայնության համար ունենք* $\overline{\text{ՀՏ}}$ *և* $\overline{\text{ՀՏՔԲ}}$ *բանաձևերը, որից բխում է* $\text{Հ} : \overline{\text{Հ}}$ *հակադրությունը (երկուսն էլ չտարբերակված իմաստ ունեն, բայց դերանունը՝ հասկացական, մյուսը՝ ոչ հասկացական), ածականի և թվականի համար ունենք* $\text{ՀՏ}\overline{\text{Ա}}\text{ԳԻՈ}$ *և* $\text{ՀՏ}\overline{\text{Ա}}\text{ԳԻ}\overline{\text{Ո}}$ *բանաձևերը, որից բխում է* $\text{Ո} : \overline{\text{Ո}}$ *հակադրությունը և այլն։*

Ստորև բերում ենք բոլոր խոսքի մասերի տարբերակիչ հատկանիշների հակադրությունները մի տախտակով. հակադրությունների մեջ առաջին եզրը ներկայացնում է ձախակողմյան (հորիզոնական գծով) խոսքի մասը, երկրորդը՝ վերևի (ուղղահայած գծով) խոսքի մասը։ (Տե՛ս տախտակ № 5)։

Տախտակի մասին պետք է ասել հետևյալը։

1. Ամեն մի խոսքի մաս մի ուրիշի հետ հակադրված է երկու անգամ, որով և ստացել ենք երկուական հակադրություններ նույն անդամներով, բայց նրանց շրջված տեղով։ Դա միանգամայն հասկանալի է. գոյական-բայ հակադրությունը կարտահայտվի որպես $\text{Ա} : \overline{\text{Ա}}$ *(առարկայնություն-որակայնություն), իսկ բայ-գոյական հակադրությունը* $\overline{\text{Ա}}$—Ա *(որակայնություն-առարկայնություն), բայց այդ երկուսն էլ ըստ էության միևնույն հակադրությունն են ներկայացնում, ուստի և մեկը պետք է թողնել, մյուսը՝ հանել (կթողնենք այն, որի երկրորդ անդամն է բացասական նշան կրում)։*

2. Հակադրությունների զգալի մասը կրկնվում է նաև անփոփոխ կերպով. օրինակ՝ գոյականի համար հորիզոնական գծով ունենք $\text{Ա} : \overline{\text{Ա}}$ *հակադրությունը չորս այսնակում, ուղղահայաց գծով՝* $\overline{\text{Ա}} : \text{Ա}$ *հակադրությունը դարձյալ չորս անգամ. դա բխում է նրանից, որ տվյալ խոսքի մասը մի քանիսին հակադրվում է միևնույն հատկանիշով։ Օրինակ՝ գոյականը հակադրվում է ածականին, թվակա-*

	Գ	Բ	ա ց.	Թ	Մ	Դ	Ջ	Ռ	Շ	Կ	Ն
	ՀՏԱ	ՀՏԱԳ	ՀՏԱԳՒՈ	ՀՏԱԳՒՈ	ՀՏԱԳՒՈ	ՀՏ	ՀՏՖՋՀ	ՀՏՖՋՀ	ՀՏՖՒՀ	ՀՏՖՒՀ	ՀՏՖՒՀ
Գոյական ՀՏԱ		Ա:Ա	Ա:Ա	Ա:Ա	Ա:Ա	Տ:Տ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ
Բայ ՀՏԱԳ	Ա:Ա		Գ:Գ	Գ:Գ	Գ:Գ	Տ:Տ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ
Ածական ՀՏԱԳՒՈ	Ա:Ա	Գ:Գ		Ո:Ո	Ի:Ի	Տ:Տ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ
Թվական ՀՏԱԳՒՈ	Ա:Ա	Գ:Գ	Ո:Ո		Ի:Ի	Տ:Տ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ
Մակբայ ՀՏԱԳՒ	Ա:Ա	Գ:Գ	Ի:Ի	Ի:Ի		Տ:Տ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ
Դերանուն ՀՏ	Տ:Տ	Տ:Տ	Տ:Տ	Տ:Տ	Տ:Տ		Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ
Հայնաբկություն ՀՏՖՋՀ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ		Ջ:Ջ	Ռ:Ռ	Ռ:Ռ	Ռ:Ռ
Նպատակավորող բառիկ ՀՏՖՋՖ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Ջ:Ջ		Ռ:Ռ	Ռ:Ռ	Ռ:Ռ
Շաղկապ ՀՏՌՎ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Ռ:Ռ	Ռ:Ռ		Վ:Վ	Ռ:Ռ
Կապ ՀՏՌՎ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Ռ:Ռ	Ռ:Ռ	Վ:Վ		Ռ:Ռ
Նմանաձայնություն ՀՏՖՖԲ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Հ:Հ	Բ:Բ	Բ:Բ	Ռ:Ռ	Ռ:Ռ	

նին, բային, մակբային միևնույն հատկանիշով (առարկայնություն-որակայնություն), դերանունը՝ գոյականին, ածականին, բային, մակբային միևնույն հատկանիշով (տարբերակվածություն—ոչ տարբերակվածություն) և այլն։ Բոլոր այդպիսի նույնական հակադրությունները մենք առել ենք շրջանակների մեջ։ Այդ շրջանակները ցույց են տալիս, որ տվյալ հատկանիշով միմյանց կարող են հակադրվել խոսքի մասերի ամբողջ խմբեր։ Այստեղ էլ նույն երևույթն ունենք, ինչ-որ հնչույթային հակադրությունների մեջ. օրինակ՝ ձայնավորություն-բաղաձայնություն, ձայնեղություն-խլություն հատկանիշներով միմյանց հակադրվում են հնչույթների ամբողջ խմբեր։ Ելնելով դրանից մենք այդ բոլոր կրկնվող հակադրությունները կարող ենք վերածել մեկական հակադրության։

3. Վերը, խոսելով բանաձևերի միջոցով խոսքի մասերի հակադրությունը բխեցնելու մասին, ասացինք, որ դերանվան և ձայնարկության համար ստանում ենք $\overline{ՀՏ}:\overline{Հ}Տ$ հակադրությունը, սակայն տախտակում այդ, ինչպես և շատ ուրիշ հակադրություններ, վերածել ենք միանիշ անդամների հակադրության, այնպես որ անխտիր ստացել ենք միայն մեկական հատկանիշների հակադրություններ։ Սա նույնպես օրինաչափ է. դերանվան և ձայնարկության համար ունենք $\overline{ՀՏ}:\overline{Հ}Տ\overline{ՔՁ}$ բանաձևն ըստ տարբերակիչ հատկանիշների, բայց այդ հատկանիշները բոլորը անհրաժեշտ չեն դերանվան ու ձայնարկության հակադրության համար։ ՔՁ հատկանիշներն արդեն ավելորդ են, որովհետև դերանունը այդ հատկանիշների դիմաց ունի զրո. անհրաժեշտ չեն նաև $\overline{Տ}:Տ$ հատկանիշները, որովհետև դերանունն ու ձայնարկությունը տարբեր դասերի են պատկանում, որոնց ընդհանուր հակադրությունն են ներկայացնում հասկացական իմաստ (Հ)—ոչ հասկացական իմաստ ($\overline{Հ}$) հատկանիշները։ Նույնն է նաև հնչույթաբանության մեջ. կ և է հնչույթների համար բավական է արդեն ձայնավորություն-բաղաձայնություն հակադրությունը. մյուս բոլոր հատկանիշները, որոնք մտնում են այդ հնչույթների բովանդակության մեջ, ոչ մի կարևորություն չունեն դրանց հակադրության համար։ Մյուս հատկանիշները կարող են ցույց տալ տարբեր հակադրությունների հարաբերությունը միմյանց հետ. օրինակ՝ ըստ թավություն-անորսություն հակադրության կ և է հընչույթները թավ են, պ և ի հնչույթները՝ անոսր. նշանակում է, կ և է հնչույթների միջև կա նույն հարաբերությունը, ինչ որ՝ պ և ի-ի միջև, կամ կ և պ-ի միջև կա նույն հարաբերությունը, ինչ որ՝ է և ի-ի միջև և այլն։ Տվյալ դեպքում, խոսքի մասերի վերաբերյալ նույնպի-

		Գ	Բ	Ա	Թ	Մ	Դ	Ձ	Ե	Է	Ը	Թ
		ՀՏՄ	ՀՏԱԳ	ՀՏԱԳՍՈ	ՀՏԱԳՍՈՒ	ՀՏԱԳԻ	ՀՏ	ՀՏՓՁԻ	ՀՏՓԶԻ	ՀՏՓԿ	ՀՏՓԿՎ	ՀՏՓՖ
1	Գույական ՀՏՄ			Ա:Ա								
2	Բայ ՀՏԱԳ				Գ:Գ							
3	Ածական ՀՏԱԳԻՈ					Ի:Ի	Տ:Տ			Չ:Չ		
4	Թվական ՀՏԱԳՍՈՒ											
5	Մակբայ ՀՏԱԳԻ											
6	Դերանուն ՀՏ											
7	Հայնարկություն ՀՏՓՁԻ							Ձ:Ձ				
8	Կապակավորող բառեր ՀՏՓՁՒ									Ք:Ք		
9	Կապ ՀՏՓՎ											
10	Շաղկապ ՀՏՓՎ									Կ:Կ	Ք:Ք	
11	Նմանձայնություն ՀՏՓԲ							Բ:Բ				

սի բան կարող ենք ասել, օրինակ, ձայնարկությունների ու շաղկապների և գոյականի ու դերանվան մասին. գոյականը հարաբերում է դերանվան այնպես ($ԶՏ : \overline{ԶՏ}$), ինչպես ձայնարկությունը շաղկապին ($\overline{ԶՏ} : \overline{ԶՏ}$), կամ՝ գոյականը հարաբերում է ձայնարկությանն այնպես ($ԶՏ : \overline{ԶՏ}$), ինչպես, դերանունը՝ շաղկապին ($\overline{ԶՏ} : \overline{ԶՏ}$) և այլն։

Այս երեք կետերում ասվածները հաշվի առնելով, տալիս ենք նախորդ տախտակի ընդհանրացած հակադրությունները (տե՛ս տախտակ № 6)։

Այս ամբողջ տախտակում ունենք ընդամենը 11 հակադրություն. $Ա : \overline{Ա}$, $Գ : \overline{Գ}$, $Ո : \overline{Ո}$, $Տ : \overline{Տ}$ (I), $Հ : \overline{Հ}$, $Ջ : \overline{Ջ}$, $Տ : \overline{Տ}$ (II), $Բ : \overline{Բ}$, $Վ : \overline{Վ}$, $Ք : \overline{Ք}$, $Ի : \overline{Ի}$։ Դրանցից ամենամեծ ընդգրկումն ունի $Հ : \overline{Հ}$ հակադրությունը, որ բոլոր խոսքի մասերը բաժանում է երկու խմբի (1—6, 7—11), այնուհետև՝ $Տ : \overline{Տ}$ (I և II) հակադրությունները, որոնք երկու խմբերը բաժանում են երկուական ենթախմբերի (1—5 և 6, 7—8, 11 և 9—10), $Ա : \overline{Ա}$ հակադրությունը բաժանում է բայը, ածականը, թվականը, մակբայը գոյականից, $Գ : \overline{Գ}$ հակադրությունը՝ ածականը, թվականը, մակբայը բայից, $Ի : \overline{Ի}$ հակադրությունը՝ ածականն ու թվականը մակբայից, $Բ : \overline{Բ}$ հակադրությունը՝ նմանաձայնությունը ձայնարկությունից և եղ. բառերից, $Ք : \overline{Ք}$ հակադրությունը՝ նմանաձայնությունը շաղկապից ու կապից, $Ո : \overline{Ո}$ հակադրությունը՝ ածականը թվականից, $Ջ : \overline{Ջ}$ հակադրությունը՝ ձայնարկությունը եղանակավորող բառերից և, վերջապես, $Վ : \overline{Վ}$ հակադրությունը՝ շաղկապը կապից (հմմտ. Ս. Աբրահամյանի նշվ. աշխ. էջ 77—82)։

Հակադրությունների հիման վրա կարելի է խոսքի մասերի մեջ էլ տարբերել մերձավոր կամ «ազգակից» զույգերն ու խմբերը։ Դրանք են. 1. թվական և ածական—մակբայ, որոնց հակադրությունը կլինի նախ $Ի : \overline{Ի}$ (թվական և ածական—մակբայ.—ինքնակա հատկանիշ—զուգորդող հատկանիշ), ապա՝ $Ո : \overline{Ո}$ (ածական—թվական.—որակային հատկանիշ—քանակային հատկանիշ). 2. նմանաձայնություն—ձայնարկություն և եղանակավորող բառեր, որոնց հակադրությունը կլինի նախ՝ $Բ : \overline{Բ}$, ապա $Ջ : \overline{Ջ}$ (ձայնարկություն—եղանակավորող բառեր, 3) կապ—շաղկապ, որոնց հակադրությունն է $Վ : \overline{Վ}$։

Այդ հակադրություններից $Հ : \overline{Հ}$, $Տ : \overline{Տ}$, $Ա : \overline{Ա}$, $Գ : \overline{Գ}$, $Ի : \overline{Ի}$, $Ք : \overline{Ք}$ բազմաբնույթ (многомерные) հակադրություններ են, իսկ $Ո : \overline{Ո}$, $Ջ : \overline{Ջ}$,

վ։վ՝ միանաբնույթ (одномерные)։ Այս ընդհանուր հակադրություններից կարելի է բխեցնել մասնավոր հակադրություններ. օրինակ, գոյականի և ածականի համար կունենայինք Ա։Ո, գոյականի և ձայնարկության համար՝ Ա։Զ, մակբայի և եղանակավորող բառերի համար՝ Ի։$\overline{Զ}$ և այլն։ Սրանց հիման վրա էլ, արդեն, հնարավոր է որոշել բազմաբնույթ համասեռ հակադրությունները։ Օրինակ, բայի և մակբայի հակադրությունը կարելի է ներկայացնել իբրև հակադրությունների շղթա (Գ։$\overline{Գ}$, Ի։$\overline{Ի}$), հետևաբար նրանց հակադրությունը կլինի համասեռ բազմաբնույթ, իսկ բայի և ածականի հակադրությունը՝ տարասեռ։

Ձմտնելով հակադրությունների ավելի մանրամասն վերլուծության մեջ՝ այստեղ անհրաժեշտ ենք համարում հիշել լեզվական կառուցվածքի մակարդակների համասեռության (իզոմորֆիզմի) մասին վերը ասվածները և շեշտել, որ խոսքի մասերի համակարգն էլ ներկայացնում է փակ համակարգ (ավելի փակ, քան նույնիսկ հնչույթայինը), որ ունի ընդամենը 11 միավոր. հակադրությունների այն տեսակները, որոնք հատուկ են հնչույթներին, գտնում ենք նաև այստեղ, բայց շատ ավելի սահմանափակ չափով, որ բխում է միավորների սահմանափակությունից։ Այս զուգահեռությունը անհրաժեշտություն է ստեղծում քննելու նաև այն հարցը, թե արդյոք, խոսքի մասերի միջև էլ կարո՞ղ է լինել չեզոքացում, թե ոչ։ Առաջին հայացքից թվում է, թե այստեղ չեզոքացումը ավելի մեծ չափերով պետք է տեղի ունենա, քան բոլոր մյուս մակարդակներում, որովհետև խոսքի մասերի միջև տեղի ունեցող փոխանցումները (փոխանունությունը) ամենասովորական երևույթն է։ Բայց հարց է ծագում. արդյո՞ք փոխանունությունը չեզոքացում է։ Բերենք մի քանի օրինակ.

1. Աշակերտն ունի կարմիր, կապույտ, կանաչ, դեղին մատիտներ. կարմիրը ամենից շատ է գործածել։

2. Խավար գիշերը պատել էր երկիրը։

3. Գիշերային խավար է իջել երկրին։

4. Ջրաճապատ գնացքը մոտենում էր կայարանին։

5. Ջրաճապատը մոտենում էր կայարանին։

6. Ջրաճապատը կրակի տակ էր առել թշնամու ամրությունները։

7. Կամաց գնա՝ գալիս եմ, հեծիդ ընկերը ես եմ։

Առաջին օրինակի մեջ կարմիր ածականը փոխանվանաբար գործածվել է որպես գոյական, իր մեջ առնելով նաև գոյականի

իմաստը. Նա իր բովանդակությամբ հավասար է կարմիր մատիտը կապակցության. փոխանունությունն իրացվել է ը հոդով. կարող էինք ասել՝ կարմրից ձեռ չի բաշում, կարմրով նկարում է ևն: Սրանց մեջ էլ փոխանունությունն իրացվել է հոլովական վերջավորություններով: Այս բոլոր դեպքերում էլ փոխանունությունը իրացվում է քերականական միջոցներով, ածականն օժտվում է գոյականին հատուկ ձևերով և ստանում, ներառում է իր մեջ նաև նրա իմաստը և պաշտոնը. ռուսերենում նույնպիսի փոխանունությունը իրացվում է սեռի և թվի համաձայնեցումով (հմմտ. он в магазине увидел белые, черные и синие сорочки, купил синюю): *Քանի որ այստեղ բառի ստացած նոր իմաստը և նրա շարահյուսական դերը արտահայտվում են քերականական ձևավորումով, ապա՝ չեզոքացում չկա: Սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ քերականական ձևի այդ հատկանիշները չեն լինում, բայց խոսքային իրադրությամբ որոշվում է և՛ շարահյուսական պաշտոնը, և՛ հավելյալ՝ գոյականի, իմաստը:*

Երկրորդ և երրորդ օրինակների մեջ խավար *բառը գործածվել է՝ առաջինում որպես ածական, երկրորդում՝ որպես գոյական. խավար բառը խոսքից դուրս էլ ունի և՛ գոյականի, և՛ ածականի իմաստ: Այդպես են նաև՝* սուր *(ած. և գ.),* քաջ *(ած. և գ.) ևն: Այս բոլոր դեպքերում ունենք համանունություն, որ, ինչպես ասել ենք, գործ չունի չեզոքացման հետ:*

4-րդ, 5-րդ և 6-րդ օրինակներում զրահապատ *բառը մի անգամ գործածված է որպես ածական, երկու անգամ՝ որպես գոյական. 5-րդ նախադասության մեջ նա նշանակում է «զրահապատ գնացք, զրահագնացք», որ իմացվում է ինչպես նախորդ նախադասությունից, այնպես էլ կայարան բառից: Սա նույն փոխանունությունն է, ինչ որ ունենք առաջին օրինակում, ուստի և չեզոքացում չունենք: Երրորդ նախադասության մեջ (6-րդ օրինակ)* զրահապատը *չի նշանակում անպայման* զրահագնացք, *այլ՝ ընդհանրապես* զրահապատ մեքենա *(զրահանավ, զրահագնացք, զրահամեքենա ևն), և այդ իմաստը պայմանավորված չէ ո՛չ խոսքային հանգամանքներով, ո՛չ էլ փոխանվանությամբ.* զրահապատ *բառը և՛ ածական է (=զրահով պատված) և՛ գոյական (=զրահավորված ռազմական փոխադրամիջոց): Դրանից կարելի է ենթադրել, որ այդ բառն էլ պատկանում է* խավար, սուր *և նմանների կարգին, և իրականում այդպես էլ է: Երկրորդ եզրում բայարմատ ունեցող բարդությունները կարող են լինել և՛ ածական, և՛ գոյական*

(հմմտ. գրչագիր ձեռագիր, գրչագիրը շատ աղավաղումներ է կատարել. այդպես էլ՝ կողմնակից, դաշնակից, կուսակից ևն)։

Վերջապես՝ 7-րդ օրինակի հետիդ բառն էլ հետ կապի գոյական գործածությունն է, որպես փոխանունություն։

Այսպիսով, բերած օրինակներից ոչ մեկն էլ չեզոքացման հետ կապ չունի։

Այժմ առնենք հետևյալ օրինակները.

Արագ ընթացք	Արագ գնաց։
Հպարտ մարդ	Հպարտ է քայլում։
Նա խիստ հայացք ունի	Նախագահը խիստ հանդիմանեց նրան։
Փաջ զինվոր	Նա քաջ կռվեց։

Այս օրինակների մեջ արագ, հպարտ, խիստ, քաջ բառերը գործածվել են առաջին շարքում որպես ածականներ, երկրորդ շարքում՝ որպես մակբայներ. ասել, թե քաջ և՛ ածական է, և՛ մակբայ, ճիշտ չէ, որովհետև նա արտահայտում է ինքնակա հատկանիշի իմաստ. նա միայն ածական է։ Դա հաստատվում է նաև նրանով, որ մակբայական իմաստի համար ունենք արագորեն, հպարտորեն, խստորեն, քաջաբար ձևերը, որոնցով երկրորդ շարքի հետ կարող ենք կազմել հետևյալ երկու շարքերը.

Արագ գնալ	Արագորեն գնալ
Հպարտ քայլել	Հպարտորեն քայլել
Խիստ հանդիմանել	Խստորեն հանդիմանել
Քաջ կռվել	Քաջաբար կռվել։

Այս երկու շարքերում արագ–արագորեն, հպարտ–հպարտորեն, խիստ–խստորեն, քաջ–քաջաբար զույգերի անդամները նույնական են թե՛ իմաստով, թե՛ դերով (պաշտոնով) և թե՛ գործառության ոլորտով։

Ուրեմն, շարահյուսական մակարդակում այս կարգի կապակցությունների մեջ չեզոքանում են բառակազմական հակադրությունները. բառակազմության մեջ ունենք արագ–արագորեն, հպարտ–հպարտորեն, խիստ–խստորեն, քաջ–քաջաբար զույգերը, որոնց իմաստային հակադրությունը հիմնված է ածականի զրո և մակբայի –որեն, –աբար ածանցների հակադրության վրա։ Ուստի՝ բառակազմության մեջ մակբայի ու ածականի չեզոքացում չունենք։ Այլ է պատկերը շարահյուսական մակարդակում. այստեղ մակբայը կարող է հանգես գալ թե՛ –որեն, –աբար ածանցներով, թե՛ առանց դրանց, այսինքն՝ զրո ածանցով։ Հենց սա էլ, ահա, հանգեցնում է ածականի և մակբայի չեզոքացման։

Վերցնենք ուրիշ օրինակներ.

Գնացքն առաջ է շարժվում։ Մեքենան գնացքից առաջ հասավ կայարան։ Գնացքի առաջ կանգնել էր մեքենավարը։ Առաջ մտածի՛ր, հետո խոսի՛ր։ Նախ մտածիր, ապա խոսիր։ Եթե գաս, ապա միասին կաշխատենք։

Այս օրինակների մեջ մեզ հետաքրքրում են առաջ և ապա բառերը. առաջ բառը 1-ին օրինակում մակբայ է, երկրորդում՝ նույնպես, երրորդում՝ կապ, չորրորդում՝ դարձյալ մակբայ. ապա բառը 4-րդում մակբայ է, 5-րդում՝ շաղկապ։ Ինչպես տեսնում ենք, այս բառերը ևս կատարում են տարբեր շարահյուսական դեր՝ միևնույն ձևով, այլ կերպ ասած, հանդես են գալիս որպես տարբեր խոսքի մասեր։ Ունե՞նք այստեղ մակբայի և կապի չեզոքացում, թե ոչ։ Չունենք, որովհետև առաջ բառը, ինչպես վերը հիշած խավար, սուր ևն, ունի երկու խոսքի մասի իմաստ, ուրեմն այստեղ էլ առկա է համանունությունը. դա հաստատվում է նրանով, որ այդ նախադասությունների մեջ առաջ բառը գործածվել է շարահյուսական բոլորովին այլ դերքերում. 1, 2, 4-րդ օրինակներում նա հանդես է եկել ստորոգյալի հետ որպես նախադասության ինքնուրույն անդամ, իսկ 3-րդում հանդես է եկել գնացք բառի հետ համակցական դերով։

Այս վերլուծություններից կարող ենք բխեցնել հետևյալ ընդհանուր սահմանումները։ 1. Եթե տվյալ բառը միևնույն ձևով հավասարապես հանդես է գալիս երկու կամ ավելի խոսքի մասերի ոլորտում՝ համապատասխանորեն արտահայտելով տարբեր խոսքամասային իմաստներ այն բանի հետևանքով, որ տարբեր խոսքի մասերի համար այդ բառը տարբեր ձևեր չունի և չեն կարող կազմվել, ապա ունենք համանունություն։ Այսպես, օրինակ, սուր բառը շարահյուսական մակարդակում հանդես է գալիս և՛ իբրև ածական (հատուկ) և՛ իբրև գոյական (գենքը)[1]*, այսինքն՝ տարբեր խոսքի մասերի ոլորտներում կատարում է տարբեր շարահյուսական դեր և համապատասխանորեն արտահայտում է մի դեպքում ածականի, մի դեպքում՝ գոյականի իմաստ (համմտ. սուր դանակ, երկսայրի սուր). այդ բառից ածականի կամ գոյականի հատուկ ձև չունենք, և դա է պատճառը, որ նույն ձևով երկու խոսքամասային իմաստներն էլ արտահայտում է։ Այդպես և՝ խավար (ած. և գ.), առաջ (մակբայ և կապ), ապա (մակբայ և շաղկապ) և նման բառերը, որոնք տարբեր խոսքամասային իմաստների համար տարբեր*

1 *Այստեղ նկատի ենք առնում միայն այդ իմաստները։*

ձևեր չունեն (չենք կարող ասել՝ առաջուրեն մտածիր, ապայուրեն խոսիր)։ Հաճախ այդ կարգի բառերը տարբեր իմաստներով կարող են գործածվել միաժամանակ իբրև մեկը մյուսի լրացում (օրինակ՝ սուր սրերով սրատեցին թշնամուն), սակայն սովորաբար այդպիսի գործածութիւնից խուսափում են, ոճական տեսակետից տհաճ կրկնութիւններ չստեղծելու համար։

2. Եթե տվյալ խոսքի մասին պատկանող բառը նույն ձևով հանդես է գալիս մի ուրիշ խոսքի մասի ոլորտում՝ փոխարինելով նրա հատուկ ձևավորում ունեցող իր հակադրությանը, ապա տեղի է ունենում խոսքամասային չեզոքացում։ *Այսպես, բաջ բառը ածական է. բաջ կոչվեց կապակցության մեջ նա հանդես է եկել մակբայական ոլորտում և փոխարինել է մակբային հատուկ ձևավորում ունեցող բաջաբար բառին, որով և վերացել է բաջ և բաջաբար միավորների հակադրությունը, ուստի և՝ այստեղ ունենք չեզոքացում։ Սրանից ելնելով, չեզոքացման սահմանումը կարող ենք ձևակերպել նաև այսպես.* եթե միևնույն ոլորտում տվյալ խոսքի մասին պատկանող և իրեն հատուկ ձևավորում ունեցող բառին զուգորեն փոխարինում է մի այլ խոսքի մասի ձևավորում ունեցող բառ, արտահայտելով նույն իմաստը, ապա տեղի է ունենում չեզոքացում։ *Այս ձևակերպումը, թեև որոշ չափով ձգձգված է և ունի կրկնություններ, բայց մեզ ավելի հարմար է թվում, որովհետև ներառում է փոխարինող խոսքի մասի յուրահատուկ ձևավորումը, որից հետևում է, որ չեզոքանալ կարող են ոչ միայն պարզ, այլև ածանցավոր ձևերը։ Օրինակ՝ ուժգին, շեշտակի, անսահման ածականներ են և ձևավորված են որպես ածականներ. դրանց համապատասխան մակբայներն են ուժգնորեն, շեշտակիորեն, անսահմանորեն, որոնք, իրենց հերթին, ձևավորված են իբրև մակբայ. առաջինները, սակայն, իրենց ձևավորումը չփոխելով՝ կարող են ազատորեն հանդես գալ երկրորդների ոլորտում, ինչպես՝*

ուժգին *ձայն*	ուժգնորեն *գոչել*
շեշտակի *հարված*	շեշտակիորեն *հարվածել*
անսահման *սեր*	անսահմանորեն *սիրել*

բայց և՝

ուժգին *գոչել*
շեշտակի *հարվածել*
անսահման *սիրել*

ինչպես տեսնում ենք, այստեղ չեզոքանում են տարբեր խոսքի մասերի ձևավորում ունեցող բառերը։

Չեզոքացման համար մեր բերած օրինակները վերաբերում են ածականներին ու մակբայներին, և դա հասկանալի է, ժամանակակից հայերենում չեզոքանում են միայն ածականները և մակբայները, մյուս խոսքի մասերի չեզոքացումը առանձին բառերի է վերաբերում։

Քանի որ խոսքի մասերին վերագրում ենք այնպիսի երևույթ, որ հատուկ է հնչույթային ու ձևույթային մակարդակներին, ապա դա իր հետ բերում է նաև այդ երևույթի հետ կապված մի այլ խընդիր։ Հնչույթային և ձևույթային մակարդակներում, ինչպես գիտենք, չեզոքացումը հանգեցնում է գերհնչույթին (արխիֆոնեմա) և գերձևույթին (արխիմորֆեմա)։ Հարց է առաջանում, խոսքի մասերի չեզոքացումը ինչի՞ է հանգեցնում։ Առաջնորդվելով տարբեր մակարդակների իրողությունների համասեռության սկզբունքով, մենք գտնում ենք, որ այստեղ էլ հանդես է գալիս **գերխոսքամասը**։ *Չեզոքացման դիրքում հակադրության անդամների յուրահատուկ հատկանիշները կորցնում են իրենց արժեքը, և արժութային բնույթ են ստանում այն հատկանիշները, որոնք ընդհանուր են երկու անդամներին էլ։ Տվյալ դեպքում, իրենց արժեքը կորցնում են* **իմաստ—ոչ իմաստ** *հատկանիշները և իբրև տարբերակիչ հատկանիշ է հանդես գալիս երկուսին ընդհանուր* **որակային** *հատկանիշը, որով հակադրվում են թվականին։ Քանի որ որակային հատկանիշը արժութային է ածականի համար, և քանի որ ածականի ձևն է հանդես գալիս մակբայի ոլորտում, ապա՝ գերխոսքամասն է ածականը։*

Բառերի ըստ խոսքի մասերի դասակարգումից բացի կարելի է նաև այլ կարգի դասակարգումներ կատարել։ Դրանցից ամենից սովորականը դասակարգումն է ըստ կազմության։ Այս դասակարգումը բավականաչափ մշակված է ավանդական քերականության մեջ։ Բառերը ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ, բաղադրյալ բառերը՝ բարդ, հարաբարդ, ածանցավոր և բարդ-ածանցավոր։ Ըստ բաղադրության եղանակի բարդությունները լինում են իսկական և անիսկական, անիսկականներն էլ իրենց հերթին՝ կցական, կրկնավոր, հարադրական։ Մ. Աբեղյանի աշխատություններում, մասնավորապես «Հայոց լեզվի տեսության» մեջ այդ բոլորն այնքան խոր ու բազմակողմանիորեն են հետազոտված, որ այստեղ դրանց անդրադառնալու հարկ չկա։ Սակայն բառի կառուցվածքը պարզելու համար անհրաժեշտ կլիներ քննել բոլոր բաղադրյալ բառերը և որոշել դրանց հնարավոր տիպարները։ Չհա-

մարելով այդ սույն աշխատության նյութ, մենք չենք զբաղվում դրանով և բավականանում ենք մի քանի ընդհանուր տիպարներ բնութագրելով։

Ժամանակակից հայերենում բառի ձևույթային կազմը կարելի է բնորոշել հետևյալ ընդհանուր սխեմայով՝ ժխտ. ածանց + ա-ծանց... + արմատ + ... + ածանց + ...ածանց: Այս սխեմայի տարբերից, բացի առաջինից, մյուսները կարող են կրկնվել երկու կամ երեք անգամ։ Ժխտական ածանցից առաջ մի ուրիշ ժխտական մասնիկ կարող է լինել միայն քերականական ձևերում, արմատին նախորդել կարող են բացի ժխտականից, ոչ ավելի քան երկու ածանց, հաջորդել կարող են երկու, երեք, սակավ դեպքերում՝ չորս արմատ, արմատին անմիջապես կարող են հաջորդել ածանցներ, ապա՝ արմատ և դարձյալ ածանցներ։ Այդ ընդհանուր սխեման ներկայանում է բազմաթիվ տիպերով, որոնցից բերում ենք մի քանի բնորոշները, սկսելով պարզ բառից (համառոտության համար նշանակում ենք. Ա—արմատ, ա—ածանց, ձ—ձևորդ, f—քերականական ածանց, և—ներույթ)։

1. Ա.—տուն, ծառ, լավ
2. ԱԱ.—ջրկիր, հացթուխ, տնտես
   ԱնԱ.—գր-ա-դարան, սեղան-ա-տուն, առ-և-տուր, այր-ու-ձի
3. աԱ.—մակ-դիր, ան-վարժ
   անԱ.—ենթ-ա-կա, ստոր-ա-դաս
   աաԱ.—ան-շաղ-կապ, ան-ընդ-մեջ
   անանԱ.—ենթ-ա-ստոր-ա-դաս
   աանԱ.—ան-ենթ-ա-կա, ան-ստոր-ա-գիր
4. Աա.—ան-ակ, հող-ային, հիմ-ք, բան-վոր
   Անա.—գր-ա-վոր, բան-ա-վոր
   Աաա.—հիմ-ք-ային, հոս-ուն-ություն
   Անաա.—հերոս-ա-կան-ություն, բան-ա-վոր-ություն
   Աանա.—դպր-ոց-ա-կան
   Անանա.—մտ-ա-վոր-ա-կան
   Աաաա.—հիմ-ք-այն-ություն
   Անանաա.—մտ-ա-վոր-ա-կան-ություն
5. աԱա.—ստոր-երկր-յա, ան-վարժ-ություն, ընդ-գրկ-ում
   աանԱա.—ենթ-ա-հող-ային
   աաԱա.—վեր-ընդ-հատ-ում, վեր-ընդ-ուն-ում

անաաա.—վեր-ա-տար-ած-ում

աաննաա.—վեր-արտ-ա-գր-ություն, վեր-արտ-ա-դրություն

անաանաա.—ենթ-ա-ստոր-ա-դաս-ություն

6. *աանաա.—ան-բն-ա-կան*

աննաաա.—ենթ-ա-հիմ-ք-ային

աննանաա.—վեր-ա-դաս-ա-վոր-ում

աանաաա.—վեր-ընտր-ա-կան-ություն, ան-խոհ-ա-կան-ություն

աաաանանաա.—չ-մշտ-նջ-են-ա-վոր-ա-կան

7. *աաա.—տն-տես-ություն, հոգ-ած-ություն*

8. *աաա.—տն-տես-վար*

աննննն.—լր-ա-գր-ա-վաճառ

աննննաննա.—հեռ-ա-գր-ա-սյուն-ա-շար

9. *աաննա.—տն-այն-ա-գործ, գործ-արան-ա-տեր*

աաննաա.—տն-այն-ա-գործ-ական

աննաաա.—ազնվ-ա-բար-ո(յ)-ություն

աննննաա.—հեռ-ա-խոս-ա-վար-ուհի, գր-ա-դարան-ա-գիտություն

աննանաա.—ճակատ-ա-գր-ա-կան-ություն

աաննանաաա.—հնչ-յուն-ա-կապ-ա-կց-ություն

10. *աձ.—աղ-ացք*

աձաա.—ընթ-ացք, մոռ-ացություն

աաձ.—քայլ-ընթ-ացք, չր-աղ-ացք

աձքա.—հոգ-ացող-ություն, զգ-ացող-ություն

11. *աք.—գր-ող, հատ-ած*

աքք.—հատ-վ-ած

աքա.—տես-ող-ություն

12. *աձքք—զգ-ացվ-ած*

աձքքա.—զգ-ացվ-ած-ություն

13. *աաաքքա.—ան-բավ-արար-վ-ած-ություն*

աաքքա.—գեր-բնակ-վ-ած-ություն

աաննաքքա.—գեր-ծանր-ա-բեռն-վ-ած-ություն

աննաքքաա.—բամբակ-ա-գործ-վ-ած-ք-ային

աաննաաքնա.—բնակ-արան-ա-կառ-ուց-ող-ա-կան

14. *աաննաքաա.—ան-հաղթ-ա-հար-ել-ի-որեն*

աաաքաա.—ան-վեր-ծան-ել-ի-ություն

աաննաքաա.—ան-գն-ա-հատ-ել-ի-որեն

աաձքաա.—ան-դառ-ն-ալ-ի-որեն

Անանանձք.—բան-ա-ստեղծ-ա-կան-ա-ցն-ել
աանԱնԱքաա.—ան-վեր-ա-կազմ-ա-կերպ-ել-ի-ություն

Այս 14 խմբերի մեջ բերված են բառերի հիմնական տիպերից մի քանիսը միայն, ո՛չ առանձին խմբերի տիպերը և ո՛չ էլ, մանավանդ, խմբերը չեն ընդգրկում բոլոր տեսակները. բոլորովին չենք բերել բառաձևերը (հոլովաձևեր, բայաձևեր): Այսքանն էլ, սակայն, բավական է գաղափար կազմելու համար, թե որքան հարուստ ու բազմազան է հայերենի բառն իր ձևույթային կազմով: Այդ առթիվ կարելի է հետևյալ համեմատությունը կատարել. Մ. Վ. Պանովը՝ վերլուծելով ժամանակակից ռուսերենի բառերն ըստ ձևույթային կազմի, տալիս է 7 խումբ, ընդամենը 30 տիպարով[1]: Այդ ցանկում հաշվի են առնված նաև բոլոր բայաձևերը, բայց ներույթավոր ձևերն առանձին տիպարներ չեն համարվել: Մեր ցուցակում ունենք ընդամենը 57 տիպար, առանց քերականական ձևերի: Ներույթավոր ձևերը առանձին տիպարներ ենք համարել. եթե դրանք միացնենք իրենց զուգահեռ ոչ ներույթավոր ձևերին, ապա կստանանք 40: Ուրեմն, մեր միայն բառակազմության ոչ լրիվ տիպարները ավելի բազմազան են, քան ռուսերենի բառակազմության ու ձևակազմության բոլոր տիպարները միասին վերցրած: Որքա՜ն ավելի մեծ կլիներ, ուրեմն, տարբերությունը, եթե միացնեինք նաև քերականական ձևերը:

Ժամանակակից լեզվաբանության մեջ, հատկապես վերջին երեք տասնամյակներում, կարևորագույն խնդիրներից մեկն է իմաստների ձևական վերլուծության և ավտոմատիկ որոշման պրոբլեմը: Վերը մենք խոսքի մասերի հատկանիշները որոշելով, յուրաքանչյուր խոսքի մաս հանգեցրինք որոշ բանաձևի: Այդ բանաձևերի համաձայն կարելի է ավտոմատիկ կերպով որոշել տվյալ բառի խոսքամասային պատկանելությունը, եթե մեզ տրված են այդ բառի իմաստային հատկանիշները: Բայց որտեղի՞ց մենք գիտենք, թե, օրինակ, հայր բառն ունի առարկայնության հասկացական տարբերակված իմաստ.—Միայն լեզվի իմացությամբ, մեր ներքին ըմբռնումով: Չկա որևէ չափանիշ կամ միջոց, որն օբյեկտիվորեն և մեքենայորեն որոշեր նրա իմաստային այդ հատկանիշները: Եթե այսպես է, ապա ավելի դժվարին է նրանց բառիմաստի ավտոմատիկ որոշումը: Եվ այդ է պատճառը, որ հակառակ այդ բնագավառում կատարված հսկայական աշխատանքին, առայժմ իմաստ-

[1] М. В. Панов, Русский язык, ЯН СССР, I, стр. 69—70.

ների ձևական նկարագրությունը դեռևս մեծ հաջողությունների չի հասել։ Ջանազան տեսություններն ու մեթոդները (կառուցվածքային, վիճակագրական, մաթեմատիկական, հոգեբնախոսական են) միայն մասամբ են լուծում խնդիրը, այն էլ բառերի որոշ մեկուսացած խմբերի նկատմամբ։ Այդ տեսությունների ու մեթոդների քննությունը, սակայն, մեր աշխատության սահմաններից դուրս է[1]։

4. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Ինչպես ասել ենք արդեն, ձևաբանական մակարդակը գերադասում է միաժամանակ երկու մակարդակի՝ բառային և ձևույթային, որ նշանակում է, թե նրա միավորների հոդավորիչներն են մի կողմից բառերը, մյուս կողմից՝ ձևույթները։ Այս իրողությունը առաջին հայացքից կարծես թե հակասում է լեզվի կառուցվածքային մակարդակների աստրակարգության սկզբունքին և խախտում այն, բայց իրականում այդպես չէ։ Այստեղ երկու մակարդակների ենթադասությունն իր զուգահեռն ունի բառային մակարդակում, բայց մի փոքր այլ բնույթով։ Բառային մակարդակի հոդավորիչները, ինչպես արդեն ասել ենք, արմատներն են և ածանցները, կամ հիմույթները և արմատներն ու ածանցները. այս դեպքում մեզ հետաքրքրում են ոչ թե հիմույթները, այլ արմատներն ու ածանցները։ Այս երկուսը ձևույթային մակարդակի միավորներն են և, իբրև այդպիսիք, կրում են ձևույթ ընդհանուր անվանումը։ Բայց չէ՞ որ դրանք, թե՛ իրենց իմաստով և թե՛ գործառույթամբ որակապես տարբեր են. առաջիններն ունեն տարբերակելի բառային իմաստ, որ և նրանց պոտենցիալ հնարավորություն է տալիս վերածվելու բառի, դառնալու ինքնուրույն բառ (պարզ կամ արմատական բառ), մինչդեռ ածանցները զուրկ են այդ հնարավորությունից։ Բայց սա հենց լեզվի էությունն է։ **Լեզվի ամբողջ ճոռինվածությունը (մեխա-**

---

1 *Ցանկացողներին հանձնարարում ենք հետևյալ աշխատությունները.* Ю. Д. Апресян, Современные методы изучения значений и некоторые проблемы структурной лингвистики, ПСЛ, 1963; О. С. Ахманова, И. А. Мельчук, Е. В. Подучева, Р. М. Фрумкина, О точных методах исследования языка, М., 1961; В. Д. Небылицын, Современное состояние факториального анализа, ВП, 1960, № 4; Его же, Факториальная структура интеллекта, ВП, 1961, № 2; Ю. С. Степанов, Основы языкознания, М., 1966.

նիզմը) ստեղծված է այնպես, որ ծառայի երկու նպատակի՝ հասկացությունների ձևավորման և մտքերի ձևավորման: *Առաջինը լեզուն իրականացնում է բառեր կերտելով (նույնիսկ պարզ բառն էլ բառակերտություն է), երկրորդը՝ նախադասություններ կերտելով: Բայց որպեսզի բառեր կերտվեն, պետք է որ լինեն բառային իմաստով օժտված միավորներ, և որպեսզի նախադասություններ կերտվեն, անհրաժեշտ են միմյանց հետ հարաբերության մեջ մտնող հանկացություններով օժտված միավորներ: Այս է, ահա, որ յուրահատուկ, ինքնակա բնույթ է տալիս երկու մակարդակներին՝ բառայինին և շարահյուսականին, որոնցից առաջինը, այնուամենայնիվ, ստորադասվում է երկրորդին՝ լեզվի գերագույն նպատակի՝ մտքերի փոխանակությունը, հաղորդակցումն իրականացնելու համար: Այդ նույնն է պատճառը, որ բառն ու ասույթը լեզվի բացարձակորեն անհրաժեշտ և անխուսափելի տարրերն են: Կարող են լինել (և կան) լեզուներ, որոնք զուրկ են ածանցներից ու ձևորդներից, բայց չկա լեզու, որը զուրկ լինի բառից և ասույթից*[1]: *Այս տեսակետից ելնելով, կարելի է ասել, որ լեզվի համար բացարձակորեն անհրաժեշտ են հնչույթները, բառերը և ասույթները. առանց դրանց չկա մարդկային լեզուն: Մինչդեռ ձևորդները և դրանց վրա հիմնված ձևաբանությունը բացարձակ անհրաժեշտություն չեն, թեև պատմականորեն առաջանալով ու հաստատվելով տվյալ լեզվում, դրանք դառնում են նրա կառուցվածքի անհրաժեշտ ու անխուսափելի տարրը: Հենց սա էլ բնորոշում է ձևաբանական մակարդակի բնույթն ու դերը: Ձևաբանական մակարդակը բառային ու շարահյուսական մակարդակներն իրար կապող կամուրջն է, բառերը շարահյուսական մակարդակի համար «պատրաստող», «մշակող» մակարդակը: Սա նշանակում է, թե ձևաբանական մակարդակը լեզվի կառուցվածքի մեջ կատարում է, այսպես ասած, «վերամշակող» դեր. ինչպես որ ատաղձը համապատասխան մշակման է ենթարկվում կահագործարանում տվյալ իրը սարքելու համար, այդպես էլ բառը ձևաբանական մակարդակում «մշակման» է ենթարկվում, ձևավորվում է համապատասխան նախադասություն կառուցելու համար: Եվ ինչպես որ կահույքը սարքելիս կահագործի տրամադրության տակ են դրվում մի կողմից ատաղձի մշակման զանազան*

---

1 *Այդպիսի լեզուների համար բառի և արմատի, ինչպես և առհասարակ ձևույթի տարբերակում չկա էլ. այս դեպքում բառային և ձևույթային մակարդակներն էլ նույնանում են:*

միջոցներ, մյուս կողմից՝ զանազան նյութեր (սոսինձ, մեխ ևն), որոնք հնարավորություն են տալիս մշակված, պատրաստի մասերը իրար միացնելու և նրանց զանազան դերերը (բացում, փակում ևն) ապահովելու, այդպես էլ ձևաբանական մակարդակի տրամադրության տակ են դրվում, բացի բառերից, նաև ձևորդներն ու տվյալ լեզվին հատուկ բոլոր ձևաբանական միջոցները, որոնցով նա ապահովում է բառերի համակցությունը նախադասության մեջ՝ նրանց դերի համապատասխան: Ձևաբանական մակարդակի այսպիսի բնութագրումը ինքնին հանգեցնում է այն դրույթին, որ բառը, նախքան նախադասության անդամ դառնալը, պետք է մտնի ձևաբանական մակարդակը և այստեղից միայն՝ շարահյուսականը: Սրան չի հակասում այն փաստը, որ կան լեզուներ, որոնց մեջ բառերը ինքնին արդեն, հենց բառային մակարդակում քերականորեն ձևավորված են: Այդպես է օրինակ, ռուսերենում, այդպես էր գրեթե բոլոր հին հնդևրոպական լեզուների մեջ բառերի որոշ դասերի (գոյականներ, ածականներ ևն) համար: Ռուսերենում стена «պատ» բառն արդեն քերականորեն ձևավորված է. նա ունի իգական սեռի եզակի թվի ուղղական հոլովի ձևը, зеленый «կանաչ» բառը ածական է՝ արական սեռի ձևավորումով. այդ բառերի ձևն արդեն բավական է, որոշելու համար, թե որն է գոյական և որը՝ ածական, դրանց հետ նաև քերականական մի շարք հատկանիշներ (սեռ, թիվ ևն), մինչդեռ հայերեն ինում և կում բառերի նույնիսկ խոսքամասային պատկանելությունը չի կարող որոշվել ձևով: Բայց դա մեր ասածին չի հակասում: Բառը, որպես բառային մակարդակի միավոր ձևավորված լինելու դեպքում ներկայացնում է ձևաբանական մակարդակի համապատասխան հարացույցի ելակետային ձև: Փայտանյութը կարող է կահագործարան մտնել առանց նախնական մշակման, հենց իբրև փայտանյութ, բայց կարող է գործարան մտնել նաև նախնական մշակումից հետո, իբրև ատաղձ, որը, ինչպես և անմշակ փայտանյութը, հատուկ մշակման պետք է ենթարկվի տվյալ կահույքը պատրաստելու համար: Մեր ասածին չի հակասում նաև այն փաստը, որ որոշ լեզուներում բառը, առանց ձևաբանական «մշակման», առանց քերականական յուրահատուկ ձևավորումների, նախադասության մեջ զանազան պաշտոններով է հանդես գալիս: Այսպիսի լեզուները զուրկ են ձևաբանական համակարգից, և դա լեզվաբանության համար նորություն չէ: Այդ երեք կարգի լեզուների կառուցվածքի տարբերության մասին պատկերացում կազմելու համար կարելի է հետևյալ կոպիտ

համեմատությանը դիմել։ Երեք շենք են կառուցվում. մեկի համար շինհրապարակ են բերվել տաշած քարեր և պատը շարելու համար այդ քարերը միայն մասնակի ձևափոխումների են ենթարկում ու շարում. երկրորդի համար բերված են անտաշ քարեր, բայց նախքան շարվածքի մեջ դնելը տաշում են և անհրաժեշտ ձև ու ծավալ տալիս. երրորդ շենքի համար բերված են անտաշ քարեր, որոնք հենց այդպես էլ շարում են՝ միմյանց հետ հարմարեցնելով՝ «քարը քարին նստացնելով ու իրար բռնացնելով»։ Այս երեք շենքերի քարերի նման են երեք կարգի լեզուների բառերը[1]։

Այսպես, ուրեմն, բառերը նախքան շարահյուսական մակարդակին անցնելը, մտնում են ձևաբանական մակարդակը և ստանում քերականական ձևավորում։ Այս դեպքում բառը ձևաբանական մակարդակի համար դառնում է համապատասխան ձևաբանական հատկացույցի (հոլովման, խոնարհման, համեմատության աստիճանների) ելակետային ձևը, որ կոչում են բառույթ։ Հայր բառը որպես բառային մակարդակի միավոր յուրահատուկ քերականական ձևավորում չունի. ձևաբանական մակարդակում նա բառույթ[2] է և ներկայացնում է գոյականի հոլովման հարացույցի ելակետը՝ զրո վերջավորությամբ։ Ըստ այսմ՝ բառույթը տվյալ կարգի ձևաբանական հարացույցի ելակետային ձևն է։ Բառույթի և բառի այսպիսի սահմանազատումը ունի այն կարևոր նշանակությունը, որ՝ 1) հնարավորություն է տալիս բառը դիտելու որպես ինքնուրույն և ինքնակա միավոր, անկախ քերականական ձևավորումից, 2) սկզբունքորեն հնարավոր համարելու քերականորեն ձևավորված և չձևավորված բառերի գոյությունը բառային մակարդակում ոչ միայն տարբեր լեզուների, այլև միևնույն լեզվի համար (տես ստորև), 3) բառերը, որպես բառային մակարդակի միավորներ, ազատել այսպես կոչված զրո վերջավորությունից և դա վերագրել միայն բառույթներին[3]. դրա փոխարեն բառերի համար պետք է գոր-

---

1 Շենքերի համար կարելի է ասել, թե տաշած քարերով կառուցումը գերադասելի է, լեզուների երեք տիպերի համար նույնը չի կարելի ասել։

2 Բառույթ տերմինը կազմված է որպես լեմսեմա բառի համապատասխանը, լեքսեման ժամանակակից լեզվաբանության մեջ, ինչպես և շատ տերմիններ, գործածվում է տարբեր իմաստներով։ Մենք գործածում ենք միայն նրա մեկ իմաստին համապատասխան (բառն իբրև ձևաբանական միավոր)։

3 Հայտնի է, որ զրո վերջավորության մասին բավական սուր վեճեր են եղել և կան սովետական լեզվաբանության մեջ (տե՛ս, օրինակ, *О. П. Суник* և *В. М. Аврорин*-ի բանավեճը „Морфологическая структура слов в языках различных типов“ (М.—Л., 1963) *ժողովածուում*)։

ծածել զրո ածանց տերմինը, եթե խոսքը վերաբերում է պարզ և ածանցավոր բառերի հակադրությանը:

Ձևաբանական մակարդակը բնութագրելու համար պետք է հիշել այն, ինչ որ ասել ենք բառային մակարդակի մասին խոսելիս: Այնտեղ մենք բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակները կոչեցինք ինքնակերտ մակարդակներ: Սա ինքնին արդեն բացատրում է այն փաստը, որ ձևաբանական մակարդակում էլ տվյալ բառաձևը կարող է բաղադրություն դառնալ նույն ձևաբանական մակարդակի մի այլ՝ ավելի ծավալուն բառաձևի համար: Բառային մակարդակում մենք այդ նույնը տեսանք բաղադրյալ բառերի կազմության մեջ, ըստ որում, պահպանեցինք ավանդական քերականության մեջ ընդունված և գիտականորեն իրեն լիովին արդարացնող անվանումները (պարզ բառ, բաղադրյալ բառ, բարդ, հարաբարդ, ածանցավոր, բարդ-ածանցավոր): Այստեղ, սակայն, մեր ուշադրության առարկան է նույն երևույթի զուգահեռը ձևաբանական և շարահյուսական մակարդակում: Քանի որ երեք ինքնակերտ մակարդակներին էլ հատուկ է իրենց միավորներից նոր, ավելի ծավալուն միավոր ստեղծելը, ապա մենք այստեղ գործ ունենք կառուցվածքային տեսակետից միևնույն սկզբունքի վրա հիմնված երևույթի հետ: Որպեսզի այս բանը պարզ լինի, դիմենք հետևյալ օրինակներին: Ունենք տուն պարզ բառը, որ իբրև հիմույթ է ծառայում՝ տնային, տնտես և այլ բառերի, սրանք էլ՝ տնայնագործ, տնտեսվար և այլ բառերի, որոնք, իրենց հերթին, հիմույթներն են տնայնագործական, տնտեսվարություն և այլ բառերի և, այդպես, մինչև հնարավոր բառակազմական սահմանը: Ձևաբանական մակարդակում ունենք գրեմ բայաձևը, որից՝ պիտի գրեմ նոր բայաձևը, սրանից էլ՝ չպիտի գրեմ և այլն: Շարահյուսական մակարդակում ունենք Արշակը գնաց տուն. Վարդանը մնաց ընկերոջ մոտ նախադասությունները. դրանց միացումով կազմում ենք՝ Արշակը գնաց տուն, իսկ Վարդանը մնաց ընկերոջ մոտ մեկ նախադասությունը: Երբ այս երեք մակարդակներից բերած օրինակները համեմատում ենք միմյանց հետ, տեսնում ենք, որ բոլոր դեպքերում էլ տեղի է ունենում միևնույն կարգի իրողությունը՝ միևնույն մակարդակի շրջանակներում նույն մակարդակի մի այլ միավոր ստանալու համար: Ուրեմն մենք կարող ենք ինքնակերտությունը բնորոշել իբրև ծավալում: Ըստ այմ՝ Ծավալումը տվյալ մակարդակի միավորի միացումն է իր կամ ստորակարգ մակարդակի միավորների հետ՝ նույն մակարդակի մի նոր միավոր ստանալու

համար: Բառային մակարդակում ծավալումը հանգեցնում է բաղադրությունների զանազան տեսակներին, ձևաբանական մակարդակում՝ բաղադրյալ բառաձևերի զանազան տեսակներին, շարահյուսական մակարդակում՝ բաղադրյալ շարահյուսությունների և բարդ նախադասությունների տարբեր տեսակներին:

Այս բոլորից հետո պարզ է արդեն, թե ինչու ձևաբանական մակարդակը գերադասվում է միաժամանակ երկու մակարդակի՝ բառային և ձևույթային: Համապատասխանորեն յուրաքանչյուր ձևաբանական միավոր կարող է հատույթավորվել երկու կարգի հոդավորիչների՝ բառույթների և ձևորդների: Այն հանգամանքը, որ բառը անփոփոխ ձևով կարող է ձևաբանական մակարդակում հանդես գալ որպես բառույթ, ոչ մի տարօրինակություն չի ներկայացնում: Սա նույն երևույթի զուգահեռն է, ինչ որ տեսել ենք ձևույթային և բառային մակարդակներում. մեկ հնչույթը կարող է կազմել մեկ ձևույթ, մեկ ձևույթը կարող է կազմել մեկ բառ, և միայն մեկ բառն էլ կարող է կազմել մեկ բառույթ: Բայց որովհետև բառույթը ձևաբանական հարացույցի մեկ (ելակետային) ձևն է, ապա այն բոլոր դեպքերում, երբ բառն առանց որևէ ձևորդի հանդես է գալիս որպես բառույթ (ինչպես և բառաձև), մենք պետք է կանխադրենք զրո վերջավորություն: Այսպես, օրինակ, ծառ, սեղան բառերը որպես բառույթներ գոյականի եզ. ուղղական հոլովին են, ուստի և նրանք իբրև բառույթներ ունեն զրո վերջավորություն: Ոչ միայն բառը, այլև ձևույթը (արմատը) կարող է հանդես գալ որպես ձևաբանական ինքնուրույն միավոր զրո վերջավորությամբ, ինչպես՝ դիր արմատ և դիր՝ դնել բայի եզ. հրամայականի 2-րդ դեմք:

Որպեսզի կարողանանք որոշել բառերի ու բառույթների հարաբերությունը, մեզ անհրաժեշտ է պարզել, թե խոսքի մասերից ո՛րը ինչպիսի ձևաբանական հարացույց ունի և հարացույցի ի՛նչ ելակետային ձև[1]:

1. Գոյական.—ունի հոլովման հարացույց՝ եզակի և հոգնակի թվով, սակավ բառեր՝ միայն հոգնակի թվով, ելակետային ձևն է ուղղական հոլովը, միայն հոգնակի (հավաքական) թիվ ունեցողների համար (մերոնք, խաչիկենք ևն) հոգնակի ուղղական հոլովը:

2. Բայ.—ելակետային ձևն է անորոշ դերբայը, որ ունի իր հատուկ ձևավորումը որպես բառ:

3. Ածական.—ելակետային ձևն է դրական աստիճանի ձևը, որ

1 Նկատի ունենք միայն հայերենը:

յուրահատուկ ձևավորում չունի, ուստի և կարող ենք վերագրել զրո վերջավորություն։

4. Թվական.— ելակետային ձևն է քանակականի ձևը. թվականի մյուս տեսակները կարելի է դիտել որպես հարացուցային ձևեր։

5. Դերանուն.—խոսքամասային իմաստների համաձայն ունի այն ելակետային ձևը, ինչ որ համապատասխան խոսքի մասը։

6. Մակբայ.— ելակետային ձևն է դրական աստիճանը (եթե ունի), որի համար իբրև ձևավորիչներ են հանդես գալիս –ոբեն, –աբար, –(ա)պես ածանցները, կերպով (նաև՝ կերպ), նման, առանց և այլ ձևական բառերը կամ զրո ածանցը։

Խոսքի մասերից ձայնարկությունը, եղանակավորող բառերն ու նմանաձայնությունները ձևաբանական դասեր չեն կազմում, ինչպես և նախադասության անդամ չեն լինում, իսկ դա նշանակում է, թե նրանք բառույթներ էլ չեն։

Կապը և շաղկապը, ինչպես գիտենք, քերականական իմաստներ ունեն և ձևորդների դեր են կատարում, բայց նրանց այդ դերը որոշակիորեն տարբեր է։ Կապերը համակցական դեր ունեն. նրանք կազմում են շարահյուսությունների քերականական ձևեր, ուստի և կարող են համարվել ձևաբանական մակարդակի հոդավորիչներ և գործառական տեսակետից նույնացվել ձևորդների հետ։ Ինչ վերաբերում է շաղկապներին, ապա նրանք ունեն կապակցական դեր, որ կարող է իրացվել միայն շարահյուսական մակարդակում, ուստի և նրանք դառնում են այդ մակարդակի հոդավորիչներ։

Ինչպես ասացինք, թե՛ բառերը և թե՛ ձևորդները ձևաբանական մակարդակի միավորների մեջ հանդես են գալիս որպես հոդավորիչներ։ Բայց ո՞րն է ձևաբանական մակարդակի այն միավորը, որ դառնում է շարահյուսական մակարդակի միավորների բաղադրությը և նախադասության մեջ հանդես է գալիս որպես հոդավորիչ։ Շարահյուսական մակարդակի համար այդպիսին է բառի յուրաքանչյուր fեռակաճական *ձև, որ ընդունված է կոչել* բառաձև (словоформа)։ *Հայ լեզվաբանական գրականության մեջ այդ տերմինը գործածված է ինչպես այդ, այնպես էլ բառի ձև (=բառի հնչույթային կազմ) իմաստով, առանց խորության։ Կարծում ենք, որ երկու իմաստների անվանումները տարբերակելը անհրաժեշտություն է, ուստի և* բառաձև *գործածելու ենք միայն «քերականական ձև» իմաստի համար, մյուսին թողնելով* բառի ձև *անվանումը։ Քանի որ բառույթը յուրաքանչյուր խոսքի մասի հարացույցի ելակետային ձևն է, ապա նա էլ մի բառաձև է։*

Բառաձևերը կարելի է դասակարգել և դասակարգում են ըստ կազմության. ավանդական քերականության մեջ այդ դասակարգումը սովորաբար տարածում են բայերի, որոշ դեպքերում նաև հոլովաձևերի վրա, տարբերելով պարզ և բաղադրյալ բառաձևերը: Այս մոտեցումը արդարանում է նրանով, որ բայաձևերի մեջ այդ տարբերակումը առանձնահատուկ նշանակություն ունի: Սակայն ձևաբանական մակարդակում մեզ հարկավոր է այնպիսի տարբերակում, որը բնութագրի բոլոր կարգի բառաձևերի ընդհանուր կազմությունը: Դրա համար վերլուծենք հետևյալ բառաձևերի կազմությունը. ա) գրեմ, գրես, գրի, բ) չգրեմ, չգրես, չգրի, գ) գրելու եմ, պիտի գրեմ, դ) գրfում, մարդու մեջ, ե) լավագույն, ամենալավ, ամենից (բոլորից) լավ: Այս բառաձևերից առաջին խումբը կազմում են բայի ըղձական եղանակի պարզ ձևերը, երկրորդը՝ դրանցից կազմված ժխտականները, երրորդը՝ սահմանականի բաղադրյալ ձևը և հարկադրականի նույնպես բաղադրյալ ձևը, 4-րդը՝ ներգոյական հոլովի պարզ և բաղադրյալ ձևերը, 5-րդը՝ գերադրական աստիճանի պարզ և բաղադրյալ ձևերը: Մենք պայմանական կերպով բայաձևերին վերաբերող «պարզ ձև» անվանումը տարածեցինք նաև հոլովաձևերի ու գերադրական ձևերի վրա, ըստ որում կազմության սկզբունքով դրանք նույնական են: Այդ հինգ խմբերում ընդգրկված օրինակների համեմատությունը ցույց է տալիս, որ «պարզ» և «բաղադրյալ» անվանումները վերաբերում են բայաձևերի կազմության եղանակին. եթե բայաձևը կազմված է հիմքի և վերջավորությունների միացումով, կոչվում է պարզ, իսկ եթե կազմված է դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ, կոչվում է բաղադրյալ: Դրանց զուգահեռն են կազմում գործիական հոլովի և համեմատության աստիճանների կազմության համար բերված օրինակները: Քանի որ այդ բոլոր դեպքերում ունենք միևնույն երևույթը, բառաձևերի կազմության միևնույն տիպը, ապա «պարզ» և «բաղադրյալ» անվանումը կփոխարինենք լեզվաբանության մեջ շատ սովորական՝ համադրական և վերլուծական բառաձևեր ընդհանուր անվանումներով, առաջինները թողնելով բայաձևերի համար, ինչպես որ կա քերականությունների մեջ: Ուրեմն, ձևաբանական մակարդակում ունենք համադրական բառաձևեր, որոնք իրենց բոլոր բաղադրիչներով կազմում են մեկ բառ (գրեմ, չգրեմ, գրքում, լավագույն) և վերլուծական բառաձևեր, որոնք ներկայացնում են առանձին բառերի հարադրություն (գրելու եմ, պիտի գրեմ, մարդու մեջ, ամենից լավ): Բերված օրինակների մեջ դրսևորվում է նաև մի այլ երևույթ. գրեմ և չգրեմ հավասարա-

պես համադրական ձևեր են, բայց նրանցից երկրորդը կազմված է առաջինից, նույնպես և՝ պիտի գրեմ կազմված է առաջինից և պիտի բառից։ Քանի որ մի բառաձևը կարող է մի ավելի ծավալուն բառաձևի բաղադրիչը դառնալ, ապա նպատակահարմար է սկզբնական ձևերը կոչել առաջնային բառաձև, իսկ դրանից կազմվողները՝ երկրորդային, երրորդային և այլն։ Ըստ այսմ՝ գրել առաջնային բայաձև է, գրելիս, գրելու՝ երկրորդային, հայր և հոր առաջնային հոլովաձևեր են, հորով՝ երկրորդային, գրելու եմ՝ երրորդային։ Այսպիսի տարբերակումը կարևոր նշանակություն ունի երկու տեսակետից. նախ՝ նա ցույց է տալիս բառաձևի ծավալման աստիճանը, ապա՝ հնարավորություն է տալիս ճշգրտելու ձևաբանական մակարդակում ձևույթների չեզոքացման դիրքերը (իբրև օրինակ հիշենք դերբայական ի և ըղձականի ի ձևույթների չեզոքացումը՝ առաջնային ձևերում.— գրի — դերբայ, գրի — ըղձ. եղ. եզ. 3-րդ դեմք)։ Իբրև գործնական սահմանում բառաձևերի ծավալման աստիճանականության համար ընդունենք հետևյալը. եթե բառաձևն ունի միայն մեկ ձևորդ կամ դրա արժեքն ունեցող ներքին փոփոխություն, առաջնային ձև է, երկու ձևորդով՝ երկրորդային, և այդպես՝ շարունակ։ Ըստ այսմ, վերլուծական ձևերը, որոնք կազմվում են առնվազն երկու բաղադրիչներից, որոնցից մեկը միշտ բառաձև է, ամենապարզ կազմության մեջ արդեն երկրորդային են։

Մինչև այժմ ասվածները վերաբերում են ձևաբանական մակարդակի նյութական տարրերին՝ հոդավորիչներին ու նրանց կազմած բառաձևերին։ Այժմ անցնենք իմաստային կողմին։ Ինչպես բազմիցս ասել ենք, ձևորդները արտահայտում են վերաբերական իմաստներ. իբրև այդպիսիք նրանք բառին տալիս են այս կամ այն վերաբերական իմաստը, ստեղծելով տվյալ կարգի բառաձևը, որով և հնարավորություն են ստեղծում կապակցելու բառերը միմյանց հետ որոշակի քերականական հարաբերությամբ և բաղադրելու նախադասությունը։ Այն բոլոր իմաստները, որոնք մենք վերը կոչեցինք քերականական իմաստ ընդհանուր անվանումով, կարող են լեզվի մեջ հանդես գալ կամ որպես ածանցական կամ որպես վերաբերական իմաստ։ Այն, ինչ որ տվյալ լեզվում հանդես է գալիս որպես վերաբերական իմաստ, մի ուրիշ լեզվում կարող է դրսևորվել իբրև ածանցական իմաստ և նույնիսկ՝ բառային իմաստ։ Ժամանակակից ռուսերենում գոյականների սեռը վերաբերական իմաստ է, իսկ հայերենում՝ ածանցական իմաստ, որովհետև նա դրսևորվում, իրացվում է միայն բառային մակարդակում, իբրև –ուհի ա-

ժանցի իմաստ, որով կազմվում են բառեր անձ ցույց տվող գոյականների իգական սեռի համար. պատճառական բայերի քերականական իմաստը հայերենում վերաբերական է, ռուսերենում՝ բառային (հմմտ. կարդացնել— дать, заставить читать)։ Նշանակում է, չկա բացարձակ չափանիշ՝ որոշելու, թե ի՛նչ իմաստներ անպայմանորեն պետք է դրսևորվեն որպես ածանցական, և ի՛նչ իմաստներ՝ որպես վերաբերական իմաստ։ Յուրաքանչյուր լեզու ունի իր քերականական կառուցվածքը, վերաբերական իմաստների իր համակարգը և դրանց արտահայտման միջոցներն ու եղանակները, թեև, իհարկե, քիչ չեն նաև ընդհանրությունները։ Քերականական այն իմաստները, որոնք լեզվի մեջ հանդես են գալիս որպես վերաբերական իմաստներ՝ ստանալով իրենց բերականական արտահայտությունը, կոչվում են բերականական կարգեր։ *Քերականական արտահայտությունը* այն յուրահատուկ ձևն է, որով դրսևորվում, արտահայտվում է տվյալ քերականական իմաստը։ Բայց ձև կոչվածը լեզվաբանության ամենածավալուն, ամենաընդարձակ ու առաձգական հասկացություններից մեկն է. նա սկսվում է հնչույթից և ավարտվում է խոսքով. մեկ հնչույթը կարող է մեկ իմաստի կրողը լինել, հետևաբար՝ դառնալ այդ իմաստի ձևը, բայց մեկ իմաստի ձևը կարող է լինել ամբողջ նախադասությունը (խոսքն այստեղ մտքի մասին չէ, այլ առանձին՝ բառային կամ քերականական իմաստի)։ Լեզվի հորինվածքությունը կառուցված է այնպես, որ եթե տրվյալ իմաստը իր ձևով չի տարբերվում իր մակարդակում, պետք է տարբերվի հաջորդ, ավելի բարձր մակարդակներից որևէ մեկում։ Այսպես, օրինակ, վերը բերված սեռականի ի և ըղձական եղանակի եզ. 3-րդ դեմքի ի ձևույթները՝ համանուններ լինելով, չեն կարող իրենց իմաստով տարբերակվել ձևույթային մակարդակում, բայց նրանք տարբերակվում են ձևաբանական մակարդակում (հմմտ. սեղանի, աշխատի), նույն 3-րդ դեմքի ի ձևորդը և ժխտական ներբայի ի ձևորդը իմաստով չեն տարբերակվում ոչ ձևույթային մակարդակում, ոչ էլ ձևաբանական մակարդակի առաջնային անկախ բառաձևերում (աշխատի՝ երկուսի համար), բայց տարբերվում են հարացույցի մեջ և երկրորդային բառաձևերում. *մի կարդա* կապակցությունը և՛ հրամայականի արգելականի վերլուծական բառաձև է, և՛ հորդորական կապակցություն. դրանք անկախ կերպով իրարից չեն տարբերվում, բայց խոսքի մեջ տարբերվում են շեշտով. արգելականն ուժգին շեշտ է կրում մի ձևույթի վրա (*մի՛ կարդա*), հորդորականը՝ կարդա բառաձևի վերջին վանկի վրա (*մի կարդա՛ = ապա*

կարդա, խնդրեմ՝ կարդա ևն), ըստ որում այստեղ շեշտը ուժգնանում է և միանգամից իջնում (ավարտային շեշտ). ոգևորվել բայաձևն ունի և՛ կրավորական, և՛ չեզոք սեռերի իմաստ, որոնց ձևորդն է վ-ն։ Արդ, այդ ձևորդի երկու իմաստները (կրավորական սեռ, չեզոք սեռ) չեն կարող տարբերակվել ոչ ձևույթային, ոչ էլ ձևաբանական մակարդակներում, նրանք տարբերակվում են շարահյուսական մակարդակում (համմտ. Որդին ոգևորվեց հորից կամ Հոր կողմից, որդին ոգևորվեց Հոր խոսքերով)։ Կավե անոթը ապակու նմա՛ն ճրնշեց և կավե անոթը ապակո՛ւ նման ճնշեց նախադասությունների իմաստները չի կարելի տարբերակել ոչ ձևաբանական, ոչ էլ շարահյուսական-քերականական միջոցներով, բայց նրանք տարբերակվում են շեշտով և ելևէջավորումներով. առաջին դեպքում՝ ուժգին շեշտը նման բառի վրա, նշանակում է՝ կավե անոթը հնչեց, ինչպես որ հնչում է ապակին (նմանեցվում, հավասարեցվում են կավե անոթը և ապակին), երկրորդ դեպքում՝ ուժգին շեշտը ապակու բառաձևի վրա, նշանակում է՝ կավե անոթը ապակու ձայն (հնչյուն) հանեց (նմանեցվում, հավասարեցվում են կավե անոթի և ապակու հանած ձայները)։ Նույնպես և՝ դա մեզ fի՛չ օգնեց (=դա մեզ նվազ չափով օգնեց) և դա մեզ fիչ օգնե՛ց (=դա մեզ մի փոքր (որոշ չափով, ինչ-որ չափով) օգնեց). առաջին դեպքում ունենք օգնել– ու բացասական գնահատական (համարյա թե կամ գրեթե չօգնեց), երկրորդում՝ դրական (թեև քիչ, բայց և այնպես օգնեց)։ Վերջապես վերցնենք այսպիսի մի նախադասություն. Հոտը հեռացավ։ Սա կարող է ունենալ երկու իմաստ՝ «Ոչխարների (այծերի ևն) խումբը շարժվեց դեպի հեռուն» և «տվյալ տեղում եղած (տարածված) բույրը չքացավ՝ վերացավ»։ Այս երկու իմաստները ոչ մի լեզվական միջոցով չեն տարբերակվում, և մենք չգիտենք, թե ո՛րը հասկանանք։ Այստեղ, արդեն, կամ պետք է դիմենք նախադասությունը ուրիշ կերպ ձևավորելուն (օր. ոչխարների բառն ավելացնել, կամ հոտ բառը փոխել որևէ համանիշով, կամ բայը փոխել՝ մի դեպքում հեռու գնաց կամ ուղղակի գնաց, մյուս դեպքում՝ ցնդեց, վերացավ ևն) և կամ արտալեզվական միջոցների, այսինքն՝ ամբողջ խոսքի բովանդակությունից իմանալ, թե այդ իմաստներից որն է նկատի առնըվում։ Օրինակների այս ամբողջ շարքի մեջ, բացի վերջինից, բոլոր այն միջոցները, որոնցով դրսևորվում, հայտնի է դառնվում տվյալ իմաստը, լեզվական ձև են։ Ուրեմն, և՛ հնչույթը, և՛ ձևույթը, բառը, բառաձևը, բառերի կապակցությունը, և՛ շեշտը, ելևէջավորումը,

դադարը[1] և այլն, լեզվական ձև են։ Նրանցից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ ոչ միայն իբրև իր բուն իմաստի կրող, այլև երկրորդաբար արտահայտել այնպիսի իմաստներ, որոնք ինքնին իրենց կրող միավորների ձևով չեն տարբերակվում, և դրանով իսկ դառնալ նաև այդ իմաստի ձև. բերված օրինակներից հիշենք ոգևորվեց բայաձևը, որի կրավորական իմաստի համար իբրև ձև է հանդես գալիս շարահյուսությը (բացառականով խնդիր), իսկ չեզոք սեռի համար՝ դրա բացակայությունը։ Այն բոլոր դեպքերում, երբ տվյալ իմաստը չի տարբերակվում լեզվական միջոցներով, ուրեմն՝ լեզվական ձևով (ինչպես «Հոտը հեռացավ» օրինակի համար), տարբերակվում է արտալեզվական միջոցներով (խոսքային իրադրություն, խոսքի բովանդակություն, տրամաբանական իմաստ, կենսափորձ, դիմաշարժ ևն)։ Հասկանալի է, որ արտալեզվական միջոցները, որքան էլ կարևոր ու հետաքրքիր՝ հաղորդակցման գործընթացի ուսումնասիրության համար, ոչ մի արժեք չունեն լեզվի կառուցվածքի տեսակետից։ Ինչ վերաբերում է լեզվական միջոցներին, ապա նրանք բոլորն էլ կարևոր են լեզվի կառուցվածքի ուսումնասիրության համար։ Եթե այդ միջոցները կարելի է դիտել իբրև ձև, ապա դրանից ինքնին բխում է, որ քերականական իմաստները կարող ենք դիտել որպես քերականական կատեգորիաներ, եթե նրանք արտահայտվում են այդ միջոցներից որևէ մեկով։ Սա էլ իր հերթին պահանջում է որոշել, թե տվյալ վերաբերական իմաստը ո՛ր մակարգակում է առանում իր ձևական դրսևորումը և դրա հիման վրա բնութագրել այն որպես ձևաբանական կամ շարահյուսական քերականական կարգ։ Այս երկուսի տարբերակումը շատ կարևոր է մեր հետագա վերլուծությունների համար, ուստի և փորձենք հանգամանորեն բացահայտել դրանց տարբերությունները։ Դրա համար անհրաժեշտ է նախ որոշ հատկանիշներով տարբերել իմաստների բառային, ձևաբանական ու շարահյուսական արտահայտության ձևերը. այդ բանի համար վերցնենք հետևյալ օրինակները. ոսկեձույլ շղթա, ոսկեղեղձ շղթա, ոսկյա (ոսկե) շղթա, ոսկու շղթա, ոսկուց ձուլված շղթա, ոսկի շղթա։ Այս բոլոր կապակցությունների մեջ ունենք միևնույն իմաստը, որ ցույց է տալիս առարկաների միջև եղած հարաբերությունը, որ է ելանյութի և նրանից ստացված (պատրաստված) իրի հարաբերություն. այդ հարաբերությունը իբրև քե-

[1] Խոսքի մեջ բառային շեշտը, նախադասության ելևէջավորումը և դադարները ընդհանուր անունով կոչվում են վերհատվածային (սուպրասեգմենտային) միավորներ կամ տարրեր։

քականական իմաստ պայմանականորեն կոչենք ելանյութի իմաստ[1]։ Քանի որ բոլոր այդ կապակցությունները միևնույն քերականական իմաստն են արտահայտում, ապա նրանք ներկայացնում են միևնույն շարահյուսությունը, որը, սակայն, դրսևորվում է զանազան ձևերով. առաջին երեք կապակցություններում ելանյութի իմաստն արտահայտված է բառերի իմաստով (ոսկեձույլ, ոսկեղեն, ոսկյա), 4-րդ և 5-րդ օրինակներում՝ ձևորդների իմաստով (ոսկու, ոսկուց), իսկ 6-րդում՝ բառերի կապակցության իմաստով։ Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում են վերջին երկուսը, որովհետև դրանք են արտահայտում վերաբերական իմաստ։ Արդ, ոսկու, ոսկուց բառաձևերը իրենց ու, ուց ձևորդներով արտահայտում են ելանյութի բերական իմաստը, մինչդեռ ոսկի շղթա կապակցության ոսկի բաղադրիչը իբրև բառաձև այդ իմաստը չունի. այստեղ ելանյութի իմաստն արտահայտվում է շարահյուսական միջոցով՝ որոշչի և որոշյալի կապակցությամբ, որպես բառերի քերականական յուրահատուկ հարաբերություն։ Քանի որ ոսկու, ոսկուց բառաձևերն իրենց ձևավորումով արտահայտում են ելանյութի իմաստ, ապա՝ այդ քերականական իմաստը հանդես է գալիս որպես ձևաբանական կարգ[2], և քանի որ ոսկի շղթա, պողպատ վաճառ և նման կապակցությունների մեջ նույն իմաստը դրսևորվում է ո՛չ թե բառաձևի, այլ բառերի շարահյուսական կապի միջոցով, ապա այս դեպքում էլ նույն քերականական իմաստը հանդես է գալիս որպես շարահյուսական կարգ։ Ասվածներից կարելի է հետևյալ եզրակացություններին հանգել.

1. Օբյեկտիվ իրականության հարաբերությունները լեզվի մեջ կարող են հանդես գալ որպես բառային, ածանցական կամ վերաբերական իմաստներ, ինչպես նաև՝ միաժամանակ որպես այդ երեք կարգի կամ դրանցից երկու կարգի իմաստներ։ Լեզվի, որպես հաղորդակցման միջոցի դերի իրականացման համար կարևոր չէ, թե տվյալ հարաբերությունը, հատկանիշը և այլն իբրև ի՛նչ իմաստ է հանդես գալիս։ Հաղորդման համար անհրաժեշտ է, օրինակ, ելանյութի իմաստն արտահայտել. թե լեզուն դա ինչպե՞ս կարտահայտի, կարևոր չէ։ Այդպես չէ, սակայն, լեզվի կառուցվածքի համար. այստեղ այդ իմաստների յուրաքանչյուր տեսակը պայմանավորում է

---

1 *Օգտվում ենք Մ. Աբեղյանի «նյութի սեռական» և «նյութի բացառական» անվանումներից։*

2 *Այստեղ և հետագայում ոճական նկատառումով գործածելու ենք ձևաբանական կարգ, շարահյուսական կարգ, բայց թողնելով «քերականական» բառը։*

նաև յուրաքանչյուր մակարդակի կառուցվածքային բովանդակությունը։

2. Միևնույն վերաբերական իմաստը կարող է արտահայտվել թե՛ որպես ձևաբանական, թե՛ որպես շարահյուսական կատեգորիա, և այս դեպքում դրանցից յուրաքանչյուրում ստանում է տվյալ մակարդակին հատուկ իր քերականական արտահայտությունը (ձևը)։

Այս եզրակացությունների մեջ բնորոշված երևույթները կարևոր են լեզվական կառուցվածքի համար այն տեսակետից, որ դրանք հնարավորություն են տալիս նույնացնել տարբեր մակարդակներում և տարբեր ձևերով արտահայտված նույնական իմաստները իբրև քերականական կարգեր։ Սակայն դա չի կարելի դիտել որպես բացարձակ երևույթ, ուստի և հարկավոր է վեր հանել նաև դրա հակադրությունը կազմող երևույթը, այսինքն՝ այն, որ տվյալ քերականական իմաստը իր արտահայտությունն ստանալով ձևաբանական մակարդակում ու լինելով ձևաբանական կարգ, չի նույնանում շարահյուսական կարգին, և կամ, տվյալ իմաստն իր արտահայտությունն է ստանում միայն շարահյուսական մակարդակում և հանդես է գալիս որպես միայն շարահյուսական կարգ։ Առաջինի համար վերցնենք որևէ հոլով, ասենք՝ բացառականը, և նրա քերականական իմաստը։ Բացառական հոլովը, ինչպես գիտենք, ունի իր ուրույն վերջավորությունը (-ից, -ուց), որով արտահայտվում է «հանջատման» վերաբերական իմաստը։ Քանի որ ձևաբանական մակարդակում ունենք այդ իմաստի յուրահատուկ բառաձևը, ապա՝ պարզ է, որ մենք այդ իմաստը պետք է համարենք ձևաբանական կարգ։ Նախադասության մեջ բացառական հոլովը կարող է հանդես գալ զանազան պաշտոններով և համապատասխանորեն կազմել տարբեր շարահյուսություններ (ներգործող խնդիր, անջատման անուղղակի խնդիր, պատճառի պարագա, ժամանակի պարագա ևն)։ Յուրաքանչյուր շարահյուսությը ներկայացնում է մեկ շարահյուսական կարգ, հետևաբար բացառական հոլովը կարող է տարբեր շարահյուսությների հոդավորիչ լինել, իսկ սա արդեն նշանակում է, թե բացառական հոլովի իմաստը, որպես ձևաբանական կարգ, չի նույնանում շարահյուսական այն կարգերից որևէ մեկի հետ, որոնց հոդավորիչն է ինքը։ Այն, որ հնարավոր է դարձնում բացառականի բազմազան շարահյուսությների կազմելը, նրա արտահայտած իմաստի և այդ շարահյուսությների իմաստների միջև եղած ընդհանրությունն է, իսկ այն, որ այդ ընդհանուր իմաստը դրսևորվում, իրացվում է տարբեր շարահյուսությների միջոցով, շարահյուսական

միավորների տարբեր հարաբերությունների կամ, քերականական լեզվով ասած՝ նախադասության տարբեր անդամների միջև շարահյուսորեն ստեղծված տարբեր հարաբերությունների արտահայտությունն է։ Ուրեմն, այստեղ մի կողմից ունենք բացառականի հոլովաձևը և նրա իմաստը՝ որպես ձևաբանական կարգ, իսկ մյուս կողմից՝ զանազան շարահյուսություններն իրենց իմաստներով, որպես շարահյուսական կարգեր։

Վերցնենք այժմ մի ուրիշ օրինակ՝ գոյականի որոշյալ և անորոշ առումները։ Այդ առումներից մեկը՝ որոշյալը ունի իր ձևորդը՝ որոշիչ հոդը, և միշտ նրանով է արտահայտվում. նույնիսկ այն դեպքերում, երբ գոյականը ուրիշ միջոցներով արդեն որոշյալ է դառնում (ցուցական դերանուններ, անձնական դերանուն, հատկացուցիչ ևն), դարձյալ հոդը պարտադիր կերպով պետք է լինի գոյականի ուղղական և տրական հոլովների հետ։ Անորոշի համար որպես ցուցիչ գործածվում է սովորաբար մի-ն որպես անորոշ հոդ, որը սակայն կարող է չլինել, կամ փոխարինվել զանազան անորոշ դերանուններով (ինչ-որ, որևէ, ինչ-ինչ ևն). անորոշի համար, ուրեմն, իբրև բացարձակ ձև պետք է դիտել ոչ թե այդ բառերը, այլ պարզապես որոշիչ հոդի բացակայությունը, կամ այլ կերպ՝ զրո հոդը։ Արդ, որոշյալի և անորոշի առումները ձևաբանակա՞ն կարգ են, թե շարահյուսական։ Այն հանգամանքը, որ որոշյալի և անորոշի առումները պայմանավորված են խոսքով, կարծել է տալիս, թե դրանք պետք է դիտել որպես շարահյուսական կատեգորիա։ Հիրավի, տվյալ գոյականի որոշյալ կամ անորոշ առումը պայմանավորված է միայն խոսքային իրադրությամբ կամ խոսքի նախընթաց հատվածով։ Եթե տվյալ գոյականի մասին արդեն խոսվել է կամ առանց դրան էլ հայտնի (ծանոթ, որոշ) է, ապա գործածվում է որոշյալ առումով, իսկ եթե այդպես չէ, դրվում է անորոշ առումով։ Սակայն, մյուս կողմից էլ այդ որոշյալի իմաստը արտահայտվում է իրեն հատուկ ձևորդով, որ, ինչպես գիտենք, ձևաբանական մակարդակի հոդավորիչն է. բանվոր և բանվորը տարբեր բառաձևեր են, որոնցից մեկը ներկայացնում է ուղղական հոլովի եզ. թվի անորոշի, մյուսը՝ որոշյալի ձևը, առաջինը՝ առաջնային բառաձև է, երկրորդը՝ երկրորդային։ Նշանակում է, այստեղ մենք ունենք ձևաբանական կարգ, որ նույնությամբ փոխանցվում է շարահյուսականին (ավելի մանրամասն տե՛ս ստորև)։

Վերջապես՝ վերցնենք երրորդ օրինակը՝ անձի և իրի առումը։ Այս կատեգորիան հատուկ է միայն նախադասության մեկ անդամի՝

ուղիղ խնդրին, որ իրի առումով գործածվելիս ունենում է ուղղականի ձևը, իսկ անձի առումով գործածվելիս՝ տրականի ձևը։ Ձևաբանական մակարդակում այդ հոլովները չունեն անձի կամ իրի տարբերակում նույնիսկ այն դեպքերում, երբ գոյականը իր իմաստով արդեն անձ է ցույց տալիս։ Օրինակ՝ հայր և ձեռ գոյականներից առաջինը անձ է ցույց տալիս, երկրորդը՝ ոչ անձ, բայց ուղղական հոլովի ձևը ոչնչով այդ բանը չի արտահայտում. դա բխում է բառի իմաստից։ Նույնն է նաև տրական հոլովը. նա միշտ էլ միևնույն ձևը ունի, որ բոլորովին անկախ է անձի ու իրի առումներից և բացարձակապես անտարբեր է դրանց նկատմամբ։ Այստեղ, ուրեմն, ունենք ոչ թե բառաձևերով արտահայտվող, այլ բառաձևերի շարահյուսական հարաբերությամբ արտահայտվող քերականական իմաստ, ո՛չ թե ուղղականի և տրականի բառաձևեր, այլ դրանց հարաբերությունը ներգործական սեռով արտահայտված ստորոգյալի հետ։ Նշանակում է, անձի և իրի առումը ժամանակակից հայերենում շարահյուսական կարգ է։ Մի այլ լեզվում, իհարկե, կարող է հակառակը լինել. ռուսերենում, օրինակ, շնչավորի և անշունչի քերականական իմաստը ձևաբանական կարգ է, որովհետև նա դրսևորվում, արտահայտվում է բառաձևերով, հոլովական ձևերի տարբերությամբ. միևնույն հոլովման պատկանող գոյականը, որպես շնչավոր, հայցականում ունենում է սեռականի ձևը, իսկ անշունչ առարկա ցույց տվող գոյականը՝ ուղղականի ձևը. այս տարբերակումը պայմանավորված չէ բառերի շարահյուսական իմաստով, այլ բխում է հոլովվող բառի իմաստից։ Հայերենում ճիշտ հակառակն է. անձի կամ իրի առումը կարող է հակասության մեջ լինել բառի իմաստի հետ, այսինքն՝ անձ ցույց տվող գոյականը կարող է լինել ուղիղ խնդիր իրի առումով, իսկ իր (ավելի ճիշտ՝ ոչ անձ) ցույց տվող գոյականը՝ անձի առումով. օրինակ՝ Նա երկու ֆայր ունի։ Գաղթի ժամանակ Աբսենը մի որբ տղա գտավ և վերցրեց իր հետ։ Արթան հրամայեց կենդանի բռնել առյուծին (Հ. Շիրազ)։ Ո՞վ չի հարցնում դեռ զարմանահար, թե ով է ծնել այս ծաղկին (Հ. Շիրազ)։ Դեռ աղջամուղջը պարուրել էր երկրին (Հ. Քոչար)։ Առաջին երկու նախադասություններում ֆայր և տղա բառերը գործածվել են իրի առումով, թեև անձ են ցույց տալիս, իսկ հաջորդ երեքում՝ առյուծ, ծաղիկ և երկիր բառերը գործածվել են անձի առումով, թեև անձ չեն ցույց տալիս։

Քերականական կարգերի այս վերլուծություններից կարող ենք բխեցնել հետևյալ սահմանումները.

1. Եթե տվյալ բերականական իմաստն արտահայտվում է ձևաբանական մակարդակում՝ իրեն հատուկ բառաձևով, ապա նա ձևաբանական կարգ է։

2. Եթե տվյալ բերականական իմաստն արտահայտվում է միայն շարահյուսական մակարդակում՝ նախադասության մեջ, բառերի հարաբերությամբ կամ շարահյուսական այլ միջոցներով, ապա՝ նա շարահյուսական կարգ է։

3. Ձևաբանական կարգը կարող է նույնությամբ հանդես գալ շարահյուսական մակարդակում և դառնալ նաև շարահյուսական կարգ։

4. *Ձևաբանական կարգն իր ընդհանուր իմաստով շարահյուսական մակարդակում կարող է ստեղծել նախադասության անդամների զանազան կոնկրետ հարաբերություններ, և դառնալ տարբեր շարահյուսությունների բաղադրություն՝ առաջ բերելով* տարբեր շարահյուսական կարգեր, որոնց հետ նա չի նույնանում։

Այն հանգամանքը, որ ձևաբանական կարգը կարող է այդպիսին համարվել միայն այն դեպքում, եթե նա հանդես է գալիս յուրահատուկ բառաձևով, կարևոր նշանակություն ունի ամեն մի լեզվի ձևաբանական կառուցվածքի ուսումնասիրության համար։ Այդ սահմանումը պարզապես նշանակում է, թե որ որ չկա տվյալ իմաստի յուրահատուկ ձևը, այնտեղ չկա նաև այդ բերականական կարգը։ Այս տեսակետից մենք միագամայն համամիտ ենք Ա. Մարտինեի հետևյալ դատողությանը, որ լիովին համապատասխանում է մեր սահմանումի ոգուն. «Ոչ մի քերականական կամ բառային կարգ չի կարող վերագրվել տվյալ լեզվին, եթե նա չի դրսևորվում հնչյունական տարբերություններով, որոնք բնութագրում են նրան և հակադրում նույնպիսի կարգին. օրինակ, չի կարելի խոսել սուորադասական եղանակի մասին, եթե տվյալ լեզուն չունի սուորադասականի համար սահմանական եղանակի ձևերից տարբեր ձևեր, ինչպես je sache «*կիմանայի*», *տարբեր է* je sais-*ից «գիտեմ»։ ...Չի կարելի խոսել եզակիի և հոգնակիի մասին, եթե մենք գործ ունենք այնպիսի լեզվի հետ, որի մեջ չկա հոգնակիի և համապատասխան եզակի թվի ձևական տարբերություն։ ...Պետք է, հենց սկզբից իսկ իբրև սկզբունք ընդունել այն, որ մենք չպետք է համոզված լինենք, թե այն լեզվում, որի ուսումնասիրությանը ձեռնամուխ ենք լինում, գոյություն ունեն բոլոր այն տարբերակումները, բոլոր այն հնչյունաբանական ու քերականական կարգերը, որոնք մեզ լավ ծանոթ են մեր նախկին լեզվական փորձից։ Դրա փոխարեն մենք կարող ենք*

ապասել, որ կգտնենք այդ լեզվում ձևական արտահայտություն ունեցող այնպիսի տարբերակումներ, որոնց մասին մենք պատկերացում էլ չենք ունեցել։ Մեզ չպետք է զարմացնի ո՛չ քերականական ժամանակի բացակայությունը, ո՛չ անտարբերությունը ներգործականության կամ կրավորականության արտահայտման նկատմամբ, ո՛չ սեռի կարգի բացակայությունը, ո՛չ երկու տեսակ մեծ-երի տարբերությունը, որոնցից մեկը ներառում է խոսողին, մյուսը՝ բացառում, ո՛չ տարբերությունը բայական այն ձևերի, որոնք ցույց են տալիս տեսանելի և անտեսանելի երևույթներ, և այն ձևերի, որոնք ցույց են տալիս տեսողության դաշտից դուրս գտնվող երևույթներ։ Չպետք է մտածել, թե ամեն լեզվում նախադասությունը բնորոշվում է ենթակայի առկայությամբ, անպայման գոյություն ունեն ածականներ և տարբերակված են բայն ու գոյականը»[1]։ *Այս ամբողջ հիանալի մեկնաբանության մեջ մի պնդում կա, սակայն, որ պետք է մերժել։ Ա. Մարտինեն գտնում է, որ «ոչ մի քերականական կամ բառային կարգ չի կարող վերագրվել լեզվին, եթե նա չի դրսևորվում հնչյունական տարբերություններով* (si elle n'y correspond pas á des différances phoniques). *Քերականական կարգի ձևական արտահայտության այսպիսի նեղ ըմբռնումը և միայն հնչյունական տարբերությունների հետ կապելը չի համապատասխանում լեզուների տվյալներին։ Լեզուների մեջ կան զանազան քերականական միջոցներ*[2], *և դրանցից որով էլ որ դրսևորվի քերականական իմաստ, նա կներկայանա որպես քերականական կարգ։ Միանգամայն իրավացի է Լ. Վ. Շչերբան, որ գրում է. «Քերականական իմաստների (կամ կարգերի) արտաքին ցուցիչներ կարող են լինել բառի փոփոխելիությունը և մասնիկները, ինտոնացիան և բառերի դիրքը, օժանդակ բառերն ու շարահյուսական կապերը, ինչպես և լեզվի շատ ուրիշ միջոցներ»*[3]։ *Ամբողջ հարցն այն է, որ յուրաքանչյուր լեզվի ուսումնասիրության ժամանակ քերականական կարգերը որոշելու և բնութագրելու հետ պետք է նախ պարզել, թե տվյալ կարգը ձևաբանակա՞ն է, շարահյուսակա՞ն, թե և՛ մեկը, և՛ մյուսը։ Իհարկե, կան քերականական միջոցներ, որոնք իրենք արդեն որոշում են այդ. օրինակ՝ ներքին թեքումով և մասնիկավո-*

---

1 A. Martinét, *նույն տեղում, էջ 43—44։*

2 *Քերականական միջոցների մասին տե՛ս մեր «Լեզվաբանության ներածություն», գլ. IV, § 65։*

3 Л. В. Щерба, О частях речи в русском языке, «Избранные работы по русскому языку», М., 1957, стр. 64.

րումով արտահայտվող քերականական իմաստը, իբրև ընդհանուր կանոն, ձևաբանական կարգ է, եթե նա հարացուցային բառաձև է կազմում, բառերի դասավորությամբ արտահայտվող իմաստը շարահյուսական կարգ է և այլն։ Բայց կան դեպքեր էլ, երբ տվյալ միջոցով արտահայտվող տարբերակումը մի լեզվում ձևաբանական կարգերի տարբերակում է առաջ բերում, մի այլ լեզվում՝ շարահյուսական։ Այսպես, օրինակ, ռուսերենում рýки «ձեռքեր» *և* рукú «ձեռքի» *բառաձևերը (հոգն. ուղղական և եզ. սեռական) տարբերակվում են, տարբեր բառաձևեր են դառնում միայն շեշտի տարբեր դիրքով (մի դեպքում շեշտված է առաջին վանկը, մյուսում՝ երկրորդը). քանի որ այստեղ շեշտը բառաձևեր կազմելու միջոց է, ըստ որում այդ ձևերը հոլովման հարացույցի ձևեր են, ապա՝ նա տարբերակում է եզ. սեռականի և հոգն. ուղղականի իմաստները, որոնք հանդես են գալիս որպես ձևաբանական կարգեր։ Այդպես կլիներ նաև այն դեպքում, եթե ռուսերենն այդ երկու հոլովները, որպես բառաձևեր, կազմելու համար ուրիշ ոչ մի միջոց չունենար։ Այլ է վիճակը հայերենում. այստեղ նույնպես կարող ենք գտնել այնպիսի դեպքեր, երբ իմաստի տարբերակումը կատարվում է միայն շեշտի դիրքով. օրինակ՝* **Արտում դեզե՛ր կան և ձրա տեսածը խոտի դեզ էր. Նկողը ձա էր և նթե ձա ուշադիր ձայեր...** *ասույթների մեջ դեզեր և դեզ էր, ձա էր և ձայեր զույգերը արտասանությամբ տարբերվում են միայն շեշտի դիրքով (վերջավանկում և վերջավանկից առաջ), և դրանով էլ միայն իմացվում է, որ մեկը գոյականի հոգնակիի ձևն է, մյուսը՝ եզակի թվի և էր բայաձևի կապակցությունը, մեկը՝ ձա դերանվան և էր բայաձևի կապակցությունն է, մյուսը՝ ձայել բայի ըղձականի եզ. 3-րդ դեմքը։ Այս բոլոր դեպքերում ունենք շեշտով տարբերվող իմաստներ, հետևաբար և՝ շարահյուսական մակարդակի հակադրություններ, ուստի և հայերենում շեշտի դիրքը չի կարող հանդես գալ որպես ձևաբանական կարգի արտահայտման միջոց։ Ժամանակակից հայերենում իբրև ձևաբանական կարգերի ձևավորման միջոց գործադրվում են մասնիկավորումը, ներքին թեումը և բարդությունը (վերլուծական բառաձևերի համար)։ Այս իրողությունը կարևոր է մեր հետագա վերլուծությունների համար, ուստի և մենք այդ կընդունենք իբրև ելակետային դրույթ բառաձևերի բնութագրման համար։*

Բառագիտության մեջ գոյություն ունի բառերի մենիմաստություն և բազմիմաստություն հասկացությունը։ Այդ հասկացությունը հավասարապես կիրառելի է նաև ձևորդների նկատմամբ. կան մե-

նիմաստ ձևորդներ, որոնք արտահայտում են միայն մեկ քերականական իմաստ, և կան բազմիմաստ ձևորդներ, որոնք արտահայտում են մեկից ավելի քերականական իմաստներ։ Այսպես, օրինակ, գrfով և գrfերով բառաձևերում –ով ձևորդը կազմում է գործիական հոլով. նա, ուրեմն, ունի միայն գործիականի իմաստ և բացարձակապես անտարբեր է ուրիշ քերականական իմաստների (օր. թվի) նկատմամբ, իր հերթին էլ եr հոգնակերտ ձևորդը միայն հոգնակիի իմաստ է արտահայտում և բացարձակապես անտարբեր է հոլովական իմաստների նկատմամբ։ Այդ պատճառով էլ, երբ անհրաժեշտ է լինում կազմել գոյականի մի ձև, որը պետք է արտահայտի և՛ հոգնակիության, և՛ որևէ հոլովի իմաստ, մենք ստիպված ենք հոգնակերտ ձևորդը և հոլովական ձևորդը միաժամանակ ավելացնել բառին (գրք-եr-ով)։ Այլ է պատկերը գrեմ, գrեա, գրrենք, գrեք բայաձևերի մեջ. այստեղ մ, ս, նք, ք ձևորդներից յուրաքանչյուրը արտահայտում է մի քանի քերականական իմաստ. օրինակ՝ մ ձևորդն արտահայտում է դեմքի (առաջին դեմք), թվի (հզակի թիվ) և ժամանակի (ներկա ժամանակ) քերականական իմաստներ, այդպես էլ՝ մյուսները։ Նշանակում է եr հոգնակերտը և ով հոլովակերտը մենիմաստ ձևորդներ են, իսկ մ, ս, նք, ք ձևորդները՝ բազմիմաստ։

Ինչպես նախորդ մակարդակների, այնպես էլ ձևաբանական մակարդակների միավորների հարաբերությունները որոշելու համար կարևոր է բացահայտել ոչ միայն նրանց հակադրությունները, այլև դրանց չեզոքացումը։ Խոսելով ընդհանրապես լեզվական միավորների հակադրության չեզոքացման մասին, մենք ասացինք, որ դա կարող է դրսևորվել միայն անմիջապես հաջորդող մակարդակում, որովհետև հակադրություններն էլ կարող են դրսևորվել գերադաս մակարդակում։ Այս նույնը, բնականաբար, վերաբերում է նաև ձևաբանական մակարդակի միավորներին։ Իսկ սա նշանակում է, թե ձևաբանական կարգերի և դրանք արտահայտող բառաձևերի հակադրությունները կարող են չեզոքանալ շարահյուսական մակարդակում։ Սակայն ձևաբանական մակարդակը, ինչպես և շարահյուսականը (մասամբ նաև բառակազմականը) ունի այն առանձնահատկությունը, որ այստեղ միավորները ներկայացնում են կազմության բազմաստիճանություն, իսկ սա կարող է հանգեցնել առաջնային ձևերի չեզոքացման երկրորդային բառաձևերի մեջ, երկրորդայինները՝ երրորդայինների մեջ և այլն, կամ ընդհակա-

ռակն, առաջնային ձևերում հանդես եկող ձևույթների չեզոքացումը երկրորդային բառաձևերում վերացնելուն: Վերը այդպիսի մի փաստի մասին խոսել ենք արդեն. վերլուծելով ժխտականի ի ձևորդի և ըղձականի եզ. 3-րդ դեմքի ի ձևորդի հակադրությունները, մենք եկանք այն եզրակացության, որ դրանք համանուններ են, որոնք հակադրվում են իրար ձևաբանական համակարգում ինչպես իմաստով, այնպես էլ գործառությամբ, բայց միաժամանակ պարզեցինք, որ առաջնային ձևերում տեղի է ունենում դրանց հակադրության չեզոքացում: Այս հանգամանքները հաշվի առնելով, փորձենք մի քանի օրինակներով պարզաբանել ձևաբանական միավորների հակադրության չեզոքացումը, և որոշ սկզբունքներ գտնել այստեղ էլ համանունությունը չեզոքացումից տարբերելու համար: Ամենից առաջ, նկատի ունենանք, որ եթե հնչույթային ու ձևույթային մակարդակներում ստորին մակարդակների միավորների չեզոքացում է տեղի ունենում այն բանի հետևանքով, որ տվյալ դիրքում հավասարապես հանդես են գալիս երկու՝ ուրիշ դիրքերում հակադրվող միավորները առանց հակադրություն ստեղծելու, ապա՝ իբրև կանոն, ունենք անմիջապես գերադասվող մակարդակի միավորների համանունություն: Մյուս կողմից, զանազան ձևորդների համանունությունը մի կողմից, և հիմքերի համանունությունը մյուս կողմից, առաջ են բերում բազմաթիվ համանուն ձևեր ձևաբանական մակարդակում (օրինակ, գործի սեռ. հոլով գործ բառի, գործի ըղձ. եզ. 3-րդ դեմք և գործի ժխտ. դերբայ, այդպես և՝ վար-վարի, վարելվարի (3-րդ դ.), վարի (ժխտ. դ.) և այլն): Հասկանալի է, որ այս համանուններն իմաստով հեշտությամբ տարբերակվում են հենց իրենց հարացույցների մեջ և երկրորդային բառաձևերում, բայց կան դեպքեր, երբ համանունությունը հանգեցնում է չեզոքացման ձևաբանական մակարդակում, որը կարող է վերանալ շարահյուսական-նում և կամ պահպանվել: Այսպես օրինակ, որոշյալի և անորոշի առումները ձևաբանական մակարդակում չեզոքանում են սեռականի, բացառականի, գործիականի և ներգոյականի հոլովաձևերում. նրանց համար ուժեղ դիրք են ներկայացնում միայն ուղղականի և տրականի հոլովաձևերը: Ձևաբանական մակարդակում այս չեզոքացումը, որ պայմանավորված է որոշիչ հոդի (որոշյալ առումի քերականական իմաստն արտահայտող ձևույթի) գործառական առանձնահատկությամբ, առաջ է բերում և՛ որոշյալ և՛ անորոշ ձևերի համանունություն: Շարահյուսական մակարդակում այդ չեզոքացումը մեծ մասամբ վերանում է զանազան շարահյուսական

կապակցությունների օգնությամբ (ցուցանակներ, անձնական դերանունների սեռականը որպես հատկացուցիչ, որոշող բառեր իբրև որոշիչ (ծանոթ, հայտնի, հիշյալ ևն), մի, ինչ-որ, որևէ անորոշները և այլն), բայց չնայած դրան, դարձյալ որոշ դեպքերում պահպանվում է չեզոքացումը։ Եվ քանի որ չեզոքացման վերացումն էլ պայմանավորված է ոչ թե այդ ձևերի յուրահատուկ գործառույթամբ, այլ շարահյուսական միջոցների կիրառումով, ապա՝ մենք կարող ենք ասել, որ հիշյալ հոլովաձևերում տեղի է ունենում որոշյալ և անորոշ առումների հակադրության չեզոքացում ինչպես ձևաբանական, այնպես էլ շարահյուսական մակարդակում։ Նույն երևույթի պատճառով առաջ է գալիս սեռական հոլովի ու տրականի անորոշ առումով ձևի համանունություն, որ և հանգեցնում է դրանց չեզոքացմանը՝ շարահյուսական մակարդակում (այդ մասին ավելի հանգամանորեն կխոսենք ստորև)։ Այս երկու օրինակներում էլ, ինչպես հեշտությամբ պարզվում է, ձևույթային մակարդակի միավորների չեզոքացման հետևանքով առաջացած բառաձևերի համանունությունն է, որ հանգեցնում է տարբեր ձևաբանական կատեգորիաների չեզոքացմանը՝ շարահյուսական մակարդակում։ Այժմ դիմենք այնպիսի օրինակների, որոնց մեջ չեզոքացումը համանունության հետևանք չէ։ Ժամանակակից հայերենում տրական և ներգոյական հոլովները թե՛ ձևով և թե՛ իմաստով տարբեր են, և իրենց գործառույթյան ոլորտներով էլ հակադրվում են իրար շարահյուսական մակարդակում, բայց այդ հակադրությունը վերանում է տեղի պարագայի ոլորտում բազմաթիվ բառերի համար, որոնք հավասարապես կարող են և՛ տրականով, և ներգոյականով դրվել. օրինակ՝ Ծովափին է ապրում—Ծովափում է ապրում,—Լեռան լանջին տարածվել է նախիրը—լեռան լանջում տարածվել է նախիրը.—Լեռան գագաթին ձյուն է եղում—լեռան գագաթում ձյուն է եղում և այլն։ Այս չեզոքացումը չի վերաբերում այն դեպքերին, երբ և՛ տրականը, և՛ ներգոյականը գործածվում են իրրև տեղի պարագա, բայց տարբեր իմաստներով. օրինակ՝ Գլխին մազ չկա—Գլխում խելք չկա.—Կրծքին շքանշաններ կան—Կրծքում ցավեր կան.—Ծառին ծիտ է թառել—Ծառում՝ փչակ կա և այլն, որոնց մեջ տրականով տեղի պարագան ցույց է տալիս արտաքին մակերեվույթը (=վրան), իսկ ներգոյականով՝ ներսը (=մեջ)։ Այդ կապակցությունների փոխարկման դեպքում տրականների համար կունենանք գլխի վրա, կրծքի վրա, ծառի վրա, իսկ ներգոյականի հա-

մար՝ գլխի մեջ, կրծքի տակ, ծառի մեջ[1]*։ Իմաստային հակադրության չեզոքացում տեղի է ունենում նաև նյութի սեռականի և նյութի բացառականի համար. օրինակ՝* **Գառան մորթու գտակ—Գառան մորթուց գտակ.—Մաճուղի վերարկու.—Մաճուղից վերարկու և այլն.** *սակայն այսպիսի զուգահեռները շատ քիչ են, ուստի և չեզոքացումը մասնակի դեպքեր է ընդգրկում։*

Մինչև այժմ բերված օրինակները վերաբերում էին այնպիսի դեպքերի, երբ չեզոքանում են համանուն ձևերը, կամ տարբեր բառաձևերը՝ միևնույն դերը կատարելով։ Այս երկրորդները շարահյուսական մակարդակում հանդես են գալիս իբրև միևնույն շարահյուսության տարբերակներ (հնթաշարահյուսություններ)։ Բայց կա նաև շարահյուսական մակարդակում շարահյուսական միավորների հակադրության չեզոքացում, այդ միավորները կազմող բառաձևերի նույնության հետևանքով։ Այսպես, օրինակ, բացառական հոլովը նախադասության մեջ հանդես է գալիս և՛ ներգործող խնդրի դերում, և՛ պատճառի պարագայի։ Սա հանգեցնում է այն բանին, որ հաճախ նախադասության այդ երկու անդամների հակադրությունը վերանում է, և բացառականը կարող է դիտվել հավասարապես թե՛ իբրև ներգործող խնդիր, թե՛ իբրև պատճառի պարագա։ Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ կրավորական ձև ունեցող բայը նաև չեզոք սեռի իմաստ է արտահայտում։ Օրինակ՝ **Ծառերի կատարները շարժվում են քամուց** *նախադասության մեջ* **քամուց** *կարելի է դիտել որպես պարագա (Ծառերի կատարները շարժվում են քամու պատճառով) և որպես ներգործող խնդիր (Ծառերի կատարները շարժվում են քամու կողմից), որի փոխակերպումը կլինի՝*

---

1 Վ. Առաքելյանը իր «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» աշխատության մեջ (էջ 112) թվելով մի խումբ բառեր (երես, ոտ, ուս, դեմք... գետին, ճանապարհ, կուր, գագաթ, ծայր, սեղան, քար, ծառ ևն), գտնում է, որ «այս բառերի ներգոյականը մեծ մասամբ խորթ է մեր լեզվին, ուստի սրանց տեղի հոլովը տրականն է, որ արտահայտում է մակերես, ծայր, հարթություն, հակառակ ներգոյականի, որ փոս, գոգավորություն, ներսը դրսևորող տարածական հոլովն է»։ Այս մեկնաբանության հետ դժվար է համաձայնել։ Ներգոյական հոլովը փոսի կամ գոգավորության տարածական հոլով չէ. Այգում աշխատում է, Փողոցում աղմուկ է, Ջրում լողում է կապակցությունների մեջ գոգավորության ոչ մի իմաստ էլ չկա, այլ՝ պարզապես մի բանի սահմաններում։ Բացի դրանից, բոլորովին չի կարելի համաձայնել այն մտքի հետ, թե սեղանում, ծառում, գլխում, ծնոտում, պատում, երդիկում են բառերի ներգոյականը «խորթ է մեր լեզվին» (հմմտ. նաև՝ նույնի «Հայերենի շարահյուսություն», հ. 1, Եր., 1958, էջ 342—343)։

Քամին շարժում է ծառերի կատարները: *Այսպիսի դեպքերում ունենք միաժամանակ նաև չեզոք և կրավորական սեռերի հակադրության չեզոքացում: Այդ չեզոքացումը տեղի չի ունենում, երբ ներգործող խնդիրը անձ ցույց տվող գոյական է (համմտ. Հայրը սիրվում է որդուց, աշակերտը քաջալերվում է ուսուցչից ևն): Չեզոքանական համանունության հետևանքով հաճախ չեզոքանում է նաև սեռականով հատկացուցչի և շահի (հոգուտ մեկի) անուղղակի խնդրի հակադրությունը. օրինակ՝ Մ. Մեծարենցի Հայտնի բանաստեղծության «Այս գիշեր տոն է, հոգվույս՝ կիրակի» նախադասության* հոգվույս կիրակի (է) *հատվածում* հոգվույս *կարելի է դիտել որպես հատկացուցիչ (հոգուս կիրակի) և որպես շահի անուղղակի խնդիր (հոգուս համար կիրակի), առաջինն ունի այնպիսի զուգահեռներ, ինչպիսիք են՝ այսօր իմ հանգստի օրն է, իմ անվանակոչությունն է և այլն, երկրորդը՝ այսօր ինձ համար հանգստի օր է, ինձ համար տոն է և այլն:*

Այս բոլորի հիման վրա կարող ենք ձևաբանական միավորների հակադրությունների չեզոքացումը բնութագրել հետևյալ ձևով.

1. Եթե երկու համանուն բառաձևեր՝ իրենց գործառույթամբ սովորաբար հակադրվելով իրար, շարահյուսական որոշ ոլորտներում հանդես են գալիս հավասարապես միևնույն պայմաններում և դրանով իսկ զրկվում իմաստային տարբերակումից, ապա այդ դիրքերում նրանք չեզոքանում են: Այս կարգին են պատկանում վերջին երկու օրինակները:

2. Եթե երկու տարբեր բառաձևեր որոշ օրինաչափությամբ գործառում են շարահյուսական տվյալ ոլորտում և կազմում նույն շարահյուսության տարբերակները (ենթաշարահյուսությունները), ապա նրանք այդ դիրքում չեզոքանում են: Այս կարգին է պատկանում տրականի և ներգոյականի չեզոքացումը:

3. Եթե տարբեր բառաձևեր կազմող ձևերդներից մեկը որևէ պատճառով չի կարող գործառել տվյալ ոլորտում, որի հետևանքով նրանից կազմվելիք բառաձևին փոխարինում է հակադրության մյուս բառաձևը, ստեղծվում է բառաձևերի համանունություն ձևաբանական մակարդակում, և տվյալ քերականական կատեգորիաների հակադրության չեզոքացում՝ շարահյուսական մակարդակում: Այս կարգին է պատկանում որոշյալ և անորոշ առումների չեզոքացումը:

Կարևոր է որոշել, թե չեզոքացման դեպքում ո՛ր բառաձևն է հանդես գալիս գերբառաձևի դերում: Վերջին (3-րդ) դեպքի համար

հարցը հեշտությամբ լուծվում է անորոշի ձևի օգտին, ոչ միայն այն պատճառով, որ չեզոքացման դիրքում միայն այդ ձևն է հանդես գալիս, այլև այն պատճառով, որ անհրաժեշտության դեպքում նա կարող է նշույթավորվել (маркироваться)՝ ստանալով մի անորոշը, մինչդեռ որոշյալը չի կարող հոդ ստանալ (համմտ. մի ուսանողի գիրքը, բայց՝ այն ուսանողի գիրքը)։ Այն դեպքում, երբ երկու տարբեր հոլովների հակադրությունը չեզոքանում է տվյալ դիրքում (միևնույն շարահյուսությունը կազմելով), ապա՝ գերբառաձևն է ներկայացնում այն բառաձևը, որը տվյալ իմաստով կարող է հանդես գալ նաև այն դեպքերում, երբ մյուսը չի կարող, կամ եթե հանդես գա, իմաստային հակադրություն կստեղծի։ Այսպես, օրինակ, տրականի և ներգոյականի չեզոքացման համար բերված օրինակներում գերբառաձևը պետք է համարել ներգոյականը, որովհետև նույն իմաստով նա գործածվում է իրրև տեղի պարագա բոլոր դեպքերում, մինչդեռ տրականը, սակավ դեպքերից բացի, տեղի պարագա լինելով՝ իմաստային հակադրություն է ստեղծում (համմտ. գըլխին-գլխում, ծառին-ծառում ևն)։ Վերջապես համանուն ձևերի համար գերբառաձևը պետք է համարել այն, որի միակ ձևն է համանունը. օրինակ, Մ. Մեծարենցից բերված օրինակի համար գերբառաձևը պետք է համարել սեռականի հոլովաձևը, որովհետև անհոդ ձևը միակն է նրա համար, մինչդեռ տրականն ունի նաև հոդավոր ձև։ Այս դեպքում ելակետն այն է, որ չեզոքացման դիրքում պահպանվում են հակադրվող միավորների ընդհանուր հատկանիշները, վերանում՝ տարբերակիչ հատկանիշները. ուստի և գերբառաձևն է երկուսի ընդհանուր ձևը, որը մեկի համար միակ հնարավորն է։

* * *

Սրանով ավարտում ենք լեզվի կառուցվածքային այն մակարդակների նկարագրությունը, որոնց առանձնահատկություններն իմանալը անհրաժեշտ է մեր հետագա վերլուծությունների համար։ Շարահյուսական մակարդակը թեև շատ հետաքրքիր է իր բազմազան երևույթներով, բայց մեր ուսումնասիրության սահմաններից դուրս է։ Այնուամենայնիվ, քանի որ մեր վերլուծությունների ժամանակ հաճախ դիմելու ենք այդ մակարդակի օրինակներին, ապա անհրաժեշտ ենք համարում համառոտ տեղեկություն տալ այդ մակարդակի հիմնական միավորի մասին։ Շարահյուսական մակարդակի նվազագույն միավորը, ինչպես ասել ենք, շարահյուսությն է։ Այդ տերմինը մենք փոխառել ենք Ա. Ա. Մուխինից, ուստի և իբրև

գործնական սահմանում էլ ընդունում ենք նրա հետևյալ բնորոշումը. «Շարահյուսությը (շարահյուսական ինվարիանտը) իր բոլոր տարբերակների համար ընդհանուր շարահյուսական-իմաստային հատկանիշների ամբողջությունը կամ փունջն է»[1]: Շարահյուսության դերում կարող են հանդես գալ ինչպես առանձին տարրեր, այնպես էլ տարրերի համակցություններ: Շարահյուսությը ներկայացնում է շարահյուսական-իմաստային միավոր. նա չի նույնանում նախադասության անդամի հետ: Դրանց տարբերությունը ցուցադրելու համար հիշենք վերը բերած օրինակները. ոսկեձույլ (ոսկեղեն, ոսկյա, ոսկե) շղթա, ոսկուց ձուլած շղթա, ոսկու շղթա, ոսկե շղթա. այս բոլոր օրինակներում, ինչպես ասել ենք, ունենք շարահյուսական-իմաստային միևնույն միավորը՝ ելանյութի շարահյուսությը, որը դրսևորվում է տարբեր միջոցներով ու տարբեր միավորներով, որոնցից յուրաքանչյուրն, իհարկե, ունի իր մասնավոր իմաստը (որակական ածական, հարաբերական ածական, նյութի սեռական, նյութի բացառական, դոյական որոշիչ), բայց դրանք բոլորն էլ իրենց մասնավոր իմաստով հանդերձ արտահայտում են նույն շարահյուսական բովանդակությունը: Նշանակում է, այստեղ ելանյութի շարահյուսությն արտահայտված է տարբեր նախադասության անդամներով (որոշիչ, հատկացուցիչ, դերբայական լրացում) կամ դրանց տարբեր ձևերով (ոսկեձույլ, ոսկյա, ոսկե, ոսկի—բոլորն էլ որոշիչներ են), որոնք հանդես են գալիս որպես շարահյուսական անայլակի (ինվարիանտի) տարբերակներ: Մի ուրիշ օրինակ. Այս տունը Աւրամայիսին է պատկանում և Այս տունը Աւրամայիսինն է նախադասությունների մեջ ունենք պատկանելության շարահյուսությը, որ մի դեպքում արտահայտվել է պատկանում է ստորոգյալով, իսկ մի դեպքում՝ սեռական հատկացուցչի և է հանգույցի կապակցությամբ, որի մեջ հատկացյալը զեղչվել է, և փոխարինվել և հոդով: Նշանակում է, այստեղ էլ ունենք միևնույն անայլակի (ինվարիանտի)՝ պատկանելության շարահյուսության տարբերակները: Վերը բերված օրինակների մեջ ելանյութի շարահյուսությը արտահայտված է կամ շարահյուսական մեկ տարրով (որոշիչ, հատկացուցիչ՝ մեկական բառաձևով) կամ երկու տարրով (դերբայական երկանդամ լրացում). կարող են լինել նաև ավելի թվով տարրերի կապակցությամբ արտահայտված շարահյուսություններ: Ուրեմն՝ տարրերի քանակը չի փոխում շարահյուսության, որպես շարահյուսական իմաստային միավորի, էությունը:

[1] А. М. Мухин, Цит. соч. стр. 271.

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՐԴ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. ՀՈԼՈՎ ԵՎ ՀՈԼՈՎՈՒՄ

Հոլովումը ժամանակակից հայերենի ձևաբանական կառուցվածքի կարևորագույն իրողություններից մեկն է։ Հոլովման օգնությամբ գոյականը (նաև դերանունը) իր բառաձևերով արտահայտում է զանազան քերականական կարգեր և խոսքի կազմում հարաբերության մեջ մտնելով խոսքի այլ անդամների հետ՝ քերականական տարբեր հարաբերություններ արտահայտում։ Ինչպես արդեն բացատրել ենք, խոսքի մեջ ստեղծված բառերի հարաբերությամբ արտահայտվում են առարկաների հարաբերությունները։ Այսպիսով հոլովումը, չափազանց կարևոր դեր է խաղում խոսքի կառուցման մեջ, և իզուր չէ, որ դեռ հին աշխարհի քերականներից սկսած հոլովի քերականական կարգն ուշադրության կենտրոնում է եղել։ Այս հանգամանքը, բնականաբար, պահանջում է ամենից առաջ սահմանել հոլովը որպես քերականական կարգ և դրա հիման վրա ուսումնասիրել տվյալ լեզվի հոլովներն ու հոլովման կառուցվածքը։ Ինչպես հայ, այնպես էլ ռուսական և արտասահմանյան լեզվաբանության մեջ կան հոլովի բազմաթիվ ու բազմազան սահմանումներ։ Այդ սահմանումները՝ ունենալով ընդհանուր հիմունքներ, հաճախ արտահայտում են նաև մասնավոր տարբերություններ, ուստի և՝ նախքան հոլովի մասին մեր բնութագրությանն ու բնորոշմանն անցնելը, բերենք եղած սահմանումներից մի քանիսը։ Դա ոչ միայն հնարավորություն կտա ընթերցողներին ծանոթություն տալու տարբեր մոտեցումների մասին,

այլև դրանց օգնությամբ ճիշտ կողմնորոշում գտնելու հարցի լուծման համար։

Մ. Աբեղյանը հոլովը սահմանում է այսպես. «Ի՞նչ է հոլովածը, եթե ոչ հոլովելի բառերի զանազան ձևերը (Form), որ կազմվում են մեծ մասամբ հոլովական վերջավորություններով»[1]։ Հ. Աճառյանը հետևյալ ձևով է բնորոշում հոլովը. «Այն մասնիկները, որոնք կցվելով անուններին կամ դերանուններին, որոշում են նրանց առնչությունները ուրիշ բառերի հետ, առանց սակայն նրանց հիմնական իմաստը փոխելու և միայն մի հանգամանք կամ պարագա են ավելացնում նրան, կոչվում են հոլովական մասնիկներ, իսկ այն բառը, որին կցվել է հոլովական այս կամ այն մասնիկը, նրա հետ միասին վերցրած՝ դառնում է հոլով»[2]։ Ինչպես տեսնում ենք, այս երկու սահմանումներն ըստ էության նույնն են, տարբերությունն այն է, որ Մ. Աբեղյանը գործածում է հոլովը բնորոշող ընդհանուր տերմին՝ ձև, իսկ Հ. Աճառյանը՝ մասնիկ-ի օգնությամբ է բնորոշում հոլովը։ Պրոֆ. Ա. Ղարիբյանը հոլովումը և հոլովը բնութագրում է այսպես. «Գոյականների կարևոր քերականական հատկանիշն է նրանց հոլովումը, այսինքն՝ վերջավորություններ ստանալը կամ բառի վերջնամասը փոխելը՝ զանազան հարաբերություններ արտահայտելու նպատակով»[3]։ Պրոֆ. Գ. Սևակը, որ քննադատում է Մ. Աբեղյանի վերը բերված սահմանումը, ցավոք սրտի իր կողմից հոլովի սահմանում չի տալիս. «Յուրաքանչյուր հոլով,—գրում է նա,—ինչպես և լեզվական ամեն մի իմաստ, անշուշտ պետք է արտահայտվի որոշ ձևով։ Ձևը հոլովի իմաստի (բովանդակության) պայմանական արտահայտությունն է։ Դրանք հակադրությունների միասնություն են հանդիսանում, և այդ հակադրամիասնության մեջ առաջնությունը, իհարկե պատկանում է բովանդակությանը, այսինքն՝ հոլովի իմաստին՝ բառահարաբերական կոնկրետ այս կամ այն իմաստին»[4]։ Սովետական ռուս լեզվաբաններից Վ. Վինոգրադովը գտնում է, որ «հոլովը անվան ձևե-

---

1 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի հոլովները, Վաղարշապատ, 1908, էջ 4 (ընդգծումները իրենն են)։

2 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. III, Եր., 1957, էջ 313։

3 Ա. Ս. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1954, էջ 178։

4 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 256։

է, որն արտահայտում է նրա հարաբերությունը խոսքի մեջ ուրիշ բառերի հետ»[1]: Գրեթե նույնպիսի սահմանում է տրվում նաև ռուսերենի ակադեմիական երկհատոր քերականության մեջ. «Հոլովն արտահայտում է գոյականի շարահյուսական ֆունկցիաները, ստեղծելով գոյականի հարաբերությունը նախադասության ուրիշ անդամների հետ իր տվյալ հոլովական ձևով»[2]: Բերենք մի երկու սահմանում էլ այլ լեզուների քերականություններից: Վ. Ադմոնին հոլովը սահմանում է այսպես. «Հոլովը ծառայում է այն բանին, որպեսզի արտահայտի գոյականների և բոլոր գոյականական ու գոյականացած բառերի շարահյուսական ֆունկցիան իրենց ձևաբանական կառուցվածքով»[3]: Վ. Յունգի սահմանումով՝ «հոլովը որևէ հոլովելի բառի ձևն է, որը արտահայտում է նրա հարաբերությունը նախադասության ուրիշ բառերի հետ»[4]: Մենք որոշ դիտավորությամբ բերեցինք այսքան շատ սահմանումներ, առանց մեկնաբանությունների, որպեսզի տարբեր մոտեցումներով տրված սահմանումներն իրար հետ զուգադրելով՝ հեշտությամբ բացահայտենք դրանց տարբերությունները: Արդ, այդ բոլոր սահմանումների մեջ կա մի ընդհանուր կետ, այն, որ հոլով է գոյականի ձևերից յուրաքանչյուրը: Սահմանումներից առաջին երկուսը հենց այդտեղ էլ ավարտվում են. մյուս սահմանումների մեջ դրան ավելացնում են՝ ա) «զանազան հարաբերություններ» արտահայտելը (Ա. Ղարիբյան), բ) բառի հարաբերությունը նախադասության ուրիշ բառերի (անդամներ) հետ (Վ. Վինոգրադով, Վ. Յունգ), գ) շարահյուսական ֆունկցիան (ակադեմ. քերականություն, Վ. Ադմոնի): Մ. Աբեղյանը, թեև հոլովի սահմանման մեջ չի մտցնում շարահյուսական հարաբերությունները, բայց բացատրության մեջ ասում է հետևյալը. «Այդ ձևերը ցույց են տալիս զանազան կախման հարաբերություններ՝ տեղի, ժամանակի, պատճառի են, որոնց իմաստով՝ անունն ու դերանունը խոսքի մեջ կապվում են մի ուրիշ բառի հետ»[5]: Քննենք, ուրեմն, հոլովի այս բոլոր կողմերը: Ամենից առաջ մենք էլ, իհարկե, պետք է դիտենք հոլովը որպես հոլովվող բառի **բառաձևերից մեկը**: Սա նշանակում է, թե որևէ լեզվի գոյա-

---

1 В. В. Виноградов, Русский язык, М., 1947, стр. 167.

2 «Грамматика русского языка», т. 1, 1960, стр. 118.

3 W. G. Admoni, Der deutsche Sprachbau. Theoretische Grammatik der deutschen Sprache, Leningrad, 1960, S. 98.

4 W. Jung, Kleine Grammatik der deutschen Sprache, Leipzig, 1953, S. 128.

5 *Մ. Աբեղյան, նույն տեղում, էջ 4:*

գոյականների հոլովման և նրանց հոլովների մասին խոսք կարող է լինել այն դեպքում միայն, եթե այդ լեզվում գոյականն ունի առնվազն երկու տարբեր ձև՝ տարբեր հոլովական իմաստների համար։ Այդպիսին է անգլերենը, որ ունի միայն գոյականի երկու ձև և համապատասխանաբար՝ երկու հոլով. ընդհանուր հոլով (common case), ստացական հոլով (possessive case)։ Ուր որ գոյականը չունի տարբեր ձևեր հոլովական իմաստների համար, այլ կերպ՝ ուր որ գոյականը միայն մեկ ձև ունի, այնտեղ չկա հոլով, հետևաբար և՝ հոլովում։ Այդպիսին է ֆրանսերենը, որ գոյականների ո՛չ հոլով ունի, ո՛չ հոլովում, թեև ունի գոյականի եզակի և հոգնակի թվի ձևեր։

Երկրորդ կարևոր հանգամանքը, որ պետք է հաշվի առնել հոլովի բնութագրման համար, և որի մասին շեշտվում է վերի սահմանումներից շատերի մեջ, այն է, որ հոլովը ստեղծում է հարաբերություններ հոլովվող բառի և նախադասության այլ անդամների միջև։ Սա հոլովի, որպես բառաձևի ու նրա արտահայտած քերականական իմաստի դերն է խոսքի կառուցման մեջ։ Մենք շատ անգամ ենք ասել արդեն, որ յուրաքանչյուր մակարդակի միավոր բաղադրույթ է հաջորդ՝ դերադաս մակարդակի միավորների համար։ Հոլովը բառաձև է, հետևաբար նա ձևաբանական մակարդակի միավորն է և, իբրև այդպիսին, շարահյուսական միավորների բաղադրույթ։ Սա հոլովի, որպես բառաձևի, բաղադրական դերն է, նրա դերը լեզվի կառուցվածքի մեջ, ինչպես որ, ասենք, հնչույթի դերն է կազմել, կառուցել կամ կերտել ձևույթային մակարդակի միավորներ՝ ձևույթներ։ Բայց որոշել լեզվական տվյալ միավորի դերը, դեռ չի նշանակում բնորոշել այն, բացահայտել նրա բովանդակությունը։ Չէ՞ որ հնչույթի բովանդակությունն էլ չի բնութագրվում նրա բաղադրական դերով, այլ հենց հնչույթի ներունակ հատկանիշներով։ Տվյալ դեպքում բառաձևի բաղադրական կամ կառուցողական դերով սահմանել հոլովը, նշանակում է նույնացնել բառաձևի բովանդակությունը նրա դերի հետ։ Բացի դրանից, այն սահմանումները, որոնք տրվում են հոլովին նրա շարահյուսական դերի հիմունքով (բառերի հարաբերություններ կամ շարահյուսական ֆունկցիա), հավասարապես կարող են վերաբերել բոլոր կարգի բառաձևերին, եթե հանենք «գոյական» կամ «անուն» բառերը։ Ձևաբանական մակարդակի մասին խոսելիս մենք ասել ենք արդեն, որ բառերը՝ անցնելով ձևաբանական մակարդակին, փոխարկվում են բառաձևերի, իսկ բառաձևերն էլ կազմում են շարահյուսական

միավորներ՝ իրենց շարահյուսական հարաբերություններով։ Այսպիսով, որքան էլ մեծ է հոլովի, որպես բառաձևի, շարահյուսական դերը, այնուամենայնիվ հոլովի սահմանման մեջ մենք այն չենք մտցնի։ Այս տեսակետից մենք ճիշտ չենք համարում նաև Վ. Շմիդտի[1] այն դրույթը, թե հոլովի բնորոշման համար իբրև ելակետ պետք է ունենալ՝ 1. նրա տրամաբանական-քերականական ֆունկցիան, որով նա արտահայտում է օբյեկտիվ իրականության հարաբերությունների մտածական արտացոլումները, 2. նրա դերը խոսքի կառուցման մեջ, և 3. նրա ձևը։ Հոլովի դերը խոսքի կառուցման, շարահյուսական մակարդակի միավորներ բաղադրելու կամ կերտելու մեջ, չի տարբերվում ձևաբանական մակարդակի մյուս միավորների՝ այլ կարգի բառաձևերի (օր. բայաձևերի) դերից, ուստի և դա չի կարող միայն հոլովի հատկանիշը համարվել։ Սակայն եթե վերի սահմանումներից հանենք «հարաբերությունը» կամ «ֆունկցիան», էլ ի՞նչ կմնա.—միայն ձևը, ինչպես առաջին երկու սահմանումների մեջ։ Բայց ճի՞շտ է դա, արդյոք։ Ո՛չ, ճիշտ չէ։ Մենք ասել ենք արդեն, որ լեզվի մեջ ինչպես ձևն, ընդհանրապես, այնպես էլ բառաձևերը արտահայտում են իմաստներ։ Մյուս կողմից՝ խոսելով քերականական կատեգորիաների մասին, ասել ենք, որ դրանք կարող են հանդես գալ որպես ձևաբանական կարգեր այն դեպքում, եթե իրենց արտահայտությունը, իրենց քերականական ձևն ունեն ձևաբանական մակարդակում, այլ կերպ ասած, եթե նրանք արտահայտվում են բառաձևերով։ Ուրեմն, հոլովի բնորոշման երկու կարևորագույն հիմունքներից մեկը նրա իմաստն է։ Վերի սահմանումների հեղինակներից ոչ մեկը դրա վրա ուշադրություն չի դարձնում, ավելի ճիշտ՝ բոլորը դա փոխարինում են հարաբերությամբ կամ ֆունկցիայով և դրանով իսկ նույնացնում հոլովական իմաստը հոլովի շարահյուսական դերի հետ։ Առանձին են մնում Գ. Սևակը և Վ. Շմիդտը, որոնք թեև սահմանում չեն տալիս, բայց առաջնակարգ են համարում հոլովական իմաստը։ Հոլովի իմաստը չի նույնանում ոչ միայն շարահյուսական հարաբերության, մանավանդ շարահյուսական գործառույթի, այլև նախադասության մեջ արտահայտած նրա իմաստի հետ։ Այստեղ ունենք նույնպիսի հարաբերություն, ինչպիսին կա մի կողմից բառի ու

[1] W. Schmidt, Grundfragen der deutschen Grammatik, Berlin, 1965, S. 122.

Նրա շարահյուսական պաշտոնի, մյուս կողմից՝ բառային իմաստի և նրա խոսքային մասնավոր իմաստի միջև։ Չէ՞ որ ոչ մի բառ, ինչպես և բառույթ, չենք կարող սահմանել որպես ենթակա կամ ուղիղ խնդիր, կամ տեղի պարագա և այլն։ Անհեթեթություն կլիներ ասել, թե բառը լեզվի այն միավորն է, որ կատարում է, ասենք, ենթակայի պաշտոն նախադասության մեջ կամ, թեկուզ՝ այն միավորը, որ խոսքի մեջ կատարում է նախադասության անդամի պաշտոն։ Ճիշտ նույնպես էլ անհեթեթություն կլիներ ասել, թե բառի իմաստը խոսքի մեջ արտահայտած նրա այս կամ այն իմաստն է։ Բարեբախտաբար, այդպիսի անհեթեթություններ չեն արտահայտվել լեզվաբանության մեջ, թեև վերջին տասնամյակներում, խոսքի և լեզվի սահմանազատման հիման վրա արտահայտվել է այն թյուր կարծիքը, թե բառն այնքան իմաստ ունի, որքան՝ խոսքային դործածություն. բայց սա նույնպիսի անմտություն է, ինչպիսին կլիներ, օրինակ, այն պնդումը, թե բույսերի այնքան տեսակ կա, որքան՝ բուսական առանձնյակ։ Այդպիսին է նաև հոլովի իմաստի և նրա շարահյուսական մասնավոր իմաստների հարաբերությունը։ Ամեն մի հոլով արտահայտում է մի որևէ քերականական (վերաբերական) իմաստ. մենք այստեղ չենք զբաղվի ոչ քերականական իմաստների առաջացման, ոչ նրանց և տրամաբանական կարդերի հարաբերությամբ։ Ծանկացողները կարող են դրանց մասին բավականաչափ տեղեկություններ ստանալ մեր մի այլ աշխատության մեջ[1]։ Այստեղ ուզում ենք շեշտել միայն, որ յուրաքանչյուր հոլովաձև արտահայտում է որևէ ընդհանրացած քերականական կարգ, որը խոսքի մեջ կարող է ունենալ բազմաթիվ մասնավոր դրսևորումներ և համապատասխանորեն հանդես գալ իբրև զանազան մասնավոր իմաստներ։ Այդ իմաստներն իբրև հիմք, հենարան կամ աղբյուր ունեն հոլովի ընդհանուր իմաստը, որի կոնկրետացած, մասնավոր իմաստն են, բայց հոլովական իմաստը չի նույնանում դրանցից ոչ մեկի հետ։ Այս տեսակետից մենք միանգամայն ճիշտ ենք համարում Ռ. Յակոբսոնի այն պնդումը, թե ամեն մի հոլով ունի իր ընդհանուր իմաստը, որպես յուրաքանչյուր հոլովաձևի իմաստային անալյակ[2] (ինվարիանտ)։ Առավել ևս սխալ

---

[1] *Է. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Եր., 1963, էջ 354—375։*

[2] R. Jakobson, Beitrag zur allgemeine Kasuslehre, TGLP, № 6, 1938, S. 258; Р. О. Якобсон, Морфологические наблюдения над славянским склонением, s.~Gravenhage, 1958, стр. 2.

է հոլովական իմաստը նույնացնել հոլովաձևի շարահյուսական հարաբերության կամ մանավանդ՝ նրա շարահյուսական պաշտոնի հետ։ Սեռականի հոլովաձևը մեծ մասամբ կատարում է հատկացուցչի պաշտոն՝ արտահայտելով հատկացուցչի շարահյուսական հարաբերությունը հատկացյալի հետ, բայց սխալ է կարծել, թե սեռականի հոլովական իմաստը հատկացուցչի հարաբերությունն է կամ պաշտոնը։ Այն բոլոր դեպքերում, երբ հոլովի իմաստը բնորոշվում է որպես շարահյուսական հարաբերություն կամ գործառույթ, նույնացվում են քերականական կարգերը բառերի շարահյուսական հարաբերությունների կամ գործառույթների հետ։ Իսկ սա հիմնովին սխալ է։ Շարահյուսական պաշտոնը և բառերի միջև շարահյուսական հարաբերություն ստեղծելը հոլովի, որպես քերականական կարգի, գործառույթն է, ֆունկցիան, դերը և ո՛չ թե ինքը՝ քերականական կարգը։ Այն, որ հրացանը գործադրվում է սպանելու համար, չի նշանակում, թե հրացանը սպանություն է։ Իսկ եթե այդպես է, ապա չի կարելի հոլովը, որպես քերականական կարգ, նույնացնել իր գործառույթի հետ և սահմանել իբրև շարահյուսական հարաբերություն կամ «ֆունկցիա»։ Հոլովի իմաստը չի կարելի նույնացնել նաև խոսքի մեջ նրա արտահայտած իմաստներից կամ ավելի ճիշտ՝ իմաստային առումներից որևէ մեկի հետ։ Այդ իմաստային առումները հոլովական իմաստի կոնկրետ դրսևորումներն են, խոսքային իրացումները։ Ճիշտ այնպես, ինչպես «առանձին հնչյունները գոյություն ունեն այն չափով, որ չափով նրանք հնչույթների իրացումներն են»[1], այդպես էլ հոլովների իմաստային առումները գոյություն ունեն այն չափով, որչափով նրանք հոլովական իմաստի դրսևորումներն են։ Վերը, քերականական կարգերի մասին խոսելիս, ասացինք, որ դրանք վերաբերական իմաստներ են։ Ձևական բառերի իմաստները բնորոշելիս էլ ասացինք, որ նրանք արտահայտում են օբյեկտիվ աշխարհի գանազան հարաբերությունները։ Օբյեկտիվ իրականության առարկաները, երևույթները, հատկանիշները ևն, ինչպես և նրանց միջև եղած հարաբերությունները լեզվի մեջ հանդես են գալիս կամ որպես բառային իմաստներ, որոնք հարաբերակցվում են հատկացությունների, կամ որպես քերականական իմաստներ, որոնք հարաբերակցվում են տրամաբանական կարգերին[2]։ Հոլովները քե-

[1] Н. В. Трубецкой, Цит. соч., стр. 49.

[2] Քերականական և տրամաբանական կարգերի հարաբերակցության, ինչպես և պատմականորեն նրանց միջև եղած կապի խզման մասին տե՛ս մեր հիշյալ աշխատության նշված մասը։

թականական կարգեր են. նրանք, ուրեմն, արտահայտում են առարկաների միմյանց հետ և հատկանիշների հետ ունեցած հարաբերություններն արտացոլող զանազան տրամաբանական կարգեր. հետևաբար՝ յուրաքանչյուր հոլով էլ արտահայտում է առարկայի որևէ հարաբերության տրամաբանական կարգ: Իհարկե, սա չի նշանակում, թե տրամաբանական ու քերականական կարգերը նույնանում են. տրամաբանական կարգերը մեր գիտակցության մեջ կարող են հանդես գալ և հանդես են գալիս նաև հասկացության ձևով (համմտ. պատկանելություն, անջատում բառերը և դրանց արտահայտած հարաբերություններն իբրև տրամաբանական և քերականական կարգեր), ինչպես և՝ կարող են լեզվի մեջ հանդես գալ որպես «անտրամաբանական» քերականական կարգեր (համմտ. անձի առումը իրերի համար): Այստեղ կարևորը այդ չէ, այլ այն, որ յուրաքանչյուր քերականական կարգ անմիջականորեն կամ միջնորդաբար, համամանակյա կերպով կամ պատմականորեն կապված է որոշ տրամաբանական կարգի հետ: Արդ, քանի որ հոլովում ունեցող լեզուներում կան անպայմանորեն մեկից ավելի հոլովական իմաստներ, որոնք համապատասխանում են հոլովների թվին, ապա անհրաժեշտ է տալ հոլովական իմաստի ընդհանուր սահմանումը: Մյուս կողմից, քանի որ արդեն խոսեցինք քերականական իմաստների ու տրամաբանական կարգերի հարաբերակցության մասին, ապա մենք այլևս չենք դիմի տրամաբանական կարգեր արտահայտությանը, այլ կգործածենք քերականական իմաստ արտահայտությունը: Այսպիսով կունենանք հոլովական իմաստի, իբրև լեզվաբանական հասկացության, հետևյալ ընդհանուր սահմանումը.

Հոլովական իմաստը առարկայի և հատկանիշների կամ այլ առարկաների միջև եղած հարաբերությունների բերականական իմաստն է:

Այս սահմանումը չի հակասում այն բանին, որ յուրաքանչյուր հոլովի ընդհանուր իմաստ կարող է դրսևորվել խոսքի մեջ բազմաթիվ կոնկրետ իմաստներով, այլ ընդհակառակն, հնարավորություն է տալիս գտնել այդ մասնավորների կապը մի կողմից՝ միմյանց հետ, մյուս կողմից՝ ընդհանուրի հետ[1]: Այստեղ էլ կարող ենք զուգահեռ

1 Ռ. Յակոբսոնը, ճիշտ կերպով գտնելով, որ հոլովական իմաստները պետք է դիտել որպես անայլակներ (ինվարիանտներ), դրանց մասնավոր դրսևորումները, «մասնավոր» հոլովական իմաստները հավասարապես համարում է «համակցական տարբերակներ» (նույն տեղում): Այս դրույթի հետ չի կարելի համաձայնել, չէ՞ որ տվյալ հնչույթի բոլոր կոնկրետ դրսևորումները՝ հնչյունները, նրա համակցական տարբերակները չեն:

անցկացնել հնչույթաբանական երևույթի հետ. այն հանգամանքը, որ հնչույթը դրսևորվում, իրացվում է բազմազան հնչյուններով, չի խախտում հնչույթի և հնչյունի միասնությունը: Նույն ձևով էլ, հոլովի խոսքային մասնավոր իմաստները ընդհանուր իմաստի իրացումները, նրա իրական ու կոնկրետ դրսևորումներն են և իրենց բազմազանությամբ չեն խախտում ընդհանուրի և մասնավորի միասնությունը:

Այժմ, երբ ունենք հոլովական իմաստի սահմանումը, հենվելով այն բանի վրա, որ յուրաքանչյուր հոլով ունի իր ձևը, կամ այլ կերպ՝ յուրաքանչյուր հոլով մի բառաձև է, որ ունի իր հոլովական իմաստը, կարող ենք նաև հոլովը սահմանել իբրև հոլովվող բառի մի բառաձև, որ արտահայտում է հոլովական իմաստ: Բայց քանի որ մենք արդեն գիտենք հոլովական իմաստի բնորոշումը, ապա նրա վրա հենվելով կարող ենք տալ հոլովի, որպես ձևաբանական կարգի (կատեգորիայի) հետևյալ սահմանումը. հոլովը հոլովվող բառի մի բառաձև է, որ արտահայտում է առարկայի և հատկանիշի կամ առարկայի և մի այլ առարկայի հարաբերությունների բերականական իմաստ: Սրան համապատասխան էլ՝ հոլովումը բառերի բոլոր հոլովաձևերի կազմության համակարգն է:

Հոլովի սահմանումն ունենալով, մենք արդեն կարող ենք խոսել և՛ նրա բաղադրական դերի, և՛ գործառական առանձնահատկությունների, և՛ համակցական յուրահատկությունների մասին: Ասացինք, որ հոլովը որպես բառաձև, շարահյուսության բաղադրյալն է: Սա չի նշանակում, իհարկե, թե յուրաքանչյուր հոլով կազմում է միայն մեկ շարահյուսություն: Նախադասության մեջ նրա անդամների՝ ավանդական քերականությամբ սահմանված խիստ սահմանափակ քանակով արտահայտվում են բազմազան հարաբերություններ և դրանց համապատասխան վերաբերական իմաստներ: Հոլովների թիվը սովորաբար շատ ավելի քիչ է, քան նախադասության անդամներինը, և շատ ավելի քիչ՝ քան շարահյուսություններինը: Բայց սա տարօրինակ չէ. ավելին՝ դա օրինաչափ է: Ամեն մի ստորին մակարդակի միավորներ ավելի փոքրաթիվ են, քան դրանց բաղադրած միավորների քանակը՝ անմիջապես հաջորդող մակարդակում: Հնչույթները շատ ավելի քիչ են, քան նրանց բաղադրած ձևույթները, ձևույթները շատ ավելի քիչ են, քան նրանցով կազմվող բառերը, ձևորդները շատ ավելի քիչ են, քան նրանցով կազմվող բառաձևերը, նույնպես և՝ բառաձևերը շատ ավելի քիչ են, քան նրանցով կազմվող շարահյուսությունները: Սա օրինաչափորեն բխում է այն իրողու-

թյունից, որ տվյալ մակարդակի միավորները հաջորդ մակարդակի միավորներ կազմելու համար միմյանց հետ կարող են զանազան համակցություններ մեջ մտնել։ Այս բանը հավասարապես վերաբերում է նաև բառաձևերին, հետևաբար՝ նաև հոլովաձևերին։ Յուրաքանչյուր հոլովաձև նախադասության մեջ կարող է հանդես գալ զանազան կապակցություններով և դրան համապատասխան՝ արտահայտել տարբեր հարաբերություններ։ Այսպես, օրինակ, նույն բացառականը տարբեր հարաբերություններ, ուստի և տարբեր կոնկրետ իմաստներ է արտահայտում հետևյալ կապակցություններում. ամոթից շիկնել, խելքից պակաս, ճորից նամակ ստանալ, մանից սարսափելի, բաղաքից հեռանալ, մանուղից վերարկու և այլն։ Դրան հակառակ՝ հաճախ տարբեր հոլովներ կարող են միևնույն շարահյուսությունը կազմել, հետևաբար, միևնույն կոնկրետ իմաստն արտահայտել։ Այդ իրողության համար վերը մի քանի օրինակներ բերել ենք արդեն, և ասել, որ այդպիսի դեպքերում տեղի է ունենում հոլովական հակադրությունների չեզոքացում։

Ինչպես հնչույթները և ձևույթները, այնպես էլ բառաձևերն ունեն իրենց գործառության ոլորտները, ըստ որում գործառական առանձնահատկությունները հաճախ պայմանավորված կարող են լինել ոչ միայն շարահյուսական հարաբերությամբ, կամ հոլովի ընդհանուր իմաստով, այլև այն բառերի իմաստով, որոնց հետ կապակցվում են. այսպես՝ մի կողմից ունենք՝ բաջությամբ՝ վճռականությամբ լի, խնդությամբ համակված, մյուս կողմից՝ գեղեցկությունից մեծամտացած՝ փքված, հաջողություններից գլուխը կորցրած, մի կողմից՝ լավ կյանքի կարոտ, մյուս կողմից՝ լավ օրից զուրկ և այլն։ Այս կարգի երևույթները առաջ են բերում ոչ միայն հոլովների գործառական առանձնահատկություններ, այլև նրանց կապակցելիության (сочетаемость) *յուրահատկություններ։ Այս բոլոր հանգամանքները պետք է ուսումնասիրել շարահյուսական մակարդակում, որ մեր նպատակից դուրս է, բայց մենք դրանք հաշվի կառնենք մեր վերլուծությունների ժամանակ՝ ըստ անհրաժեշտության։*

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ

Աշխարհաբարի հոլովների հարցը բազմաթիվ վեճերի առարկա է դարձել և է՛։ Մ. Աբեղյանը իր 1908 թվին հրապարակած «Աշխար-

հաբարի հոլովները» աշխատության մեջ[1] հանգամանորեն ուսումնասիրելով աշխարհաբարի հոլովական ձևերը և նրանց կիրառությունները, ինչպես և՝ գրաբարյան հոլովների պատմական զարգացումը, հանգեց այն եզրակացության, որ աշխարհաբարն ունի հինգ հոլով և հոլովների թվից հանեց սեռականն ու հայցականը։ Այդ կարծիքի դեմ արտահայտվեց Ստ. Մալխասյանցը, գտնելով, որ աշխարհաբարն ունի և՛ սեռական, և՛ հայցական։ Սակայն այն բանի հետևանքով, որ մայրենի լեզվի քերականության դասագրքերը հենց ինքը՝ Մ. Աբեղյանը կազմեց (հետագայում՝ նաև իր աշակերտները), և մանավանդ՝ աշխարհաբարի քերականական կառուցվածքի երկարամյա հետազոտությունների արդյունքներն ամփոփելով իր կոթողային աշխատություններում՝ գիտական ասպարեզում էլ բացարձակ հեղինակություն դարձավ, նրա տեսությունը երկար ժամանակ տիրապետող հանդիսացավ հայ քերականագիտության մեջ։ Երևսունական թվականներին, դպրոցական նոր դասագրքերի հրատարակվելու առիթով՝ կրկին այդ հարցը բանավեճի առարկա դարձավ։ Մ. Աբեղյանը, որ հայտնի իրադրություններ մեջ, զրկված էր բարձրագույն ուսումնական հաստատություններում դասախոսելու իրավունքից, հռչակված իբրև ֆորմալիստ, իդեալիստ և հակամարքսիստ, հնարավորություն չունեցավ նաև մասնակցելու բանավեճին։ Բանավեճի մեջ վճռական նշանակություն ունեցավ Գ. Սևակի «Սերունդների կռիվը» հոդվածը[2], որի մեջ նա քննադատում էր Մ. Աբեղյանի տեսության թույլ կողմերը, և գտնում, որ աշխարհաբարում կա և՛ հայցական, և՛ սեռական հոլով։ Ինչպես իր ժամանակին Մ. Աբեղյանի տեսությունը, այնպես էլ նրա ժխտումը տիրապետող դարձավ սովետահայ լեզվաբանության մեջ գլխավորապես այն պատճառով, որ շրջանառության մեջ դրված դասագրքերը պատկանում էին այս նոր ուղղության կողմնակիցներին, Մ. Աբեղյանի դասագրքերը հանված էին գործածությունից, իսկ գիտական ուսումնասիրությունները՝ անմատչելի երիտասարդ սերունդին և ուսուցչությանը։ Բայց կար և այլ պատճառ. Մ. Աբեղյանի արտաքուստ կուռ համակարգը ուներ ներքին հակասություններ, որոնք և իրավացիորեն քննադատվում էին։ Եվ այսպես, շուրջ 30 տարի մեր արդի լեզվին նվիրված քերականագիտական ուսումնասիրություննե-

1 Դրանից առաջ նա իր «Աշխարհաբարի քերականության» մեջ (1906) արդեն հանել էր սեռական և հայցական հոլովները։

2 Գ. Սևակ, Սերունդների կռիվը քերականության բնագավառում, «Կուլտուրական ֆրոնտ», 1934, №№ 33, 34։

րի մեջ և դասագրքերում միակ ճանաչված տեսությունն է եղել այն, որ ժամանակակից հայերենում կա յոթ հոլով. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական։ Մեր գիտական աշխատությունների մեջ էլ, այն պատճառով, որ մենք մինչև 1963 թվականը չէինք զբաղվում ժամանակակից հայերենի հարցերով, այլև Մ. Աբեղյանի տեսության ներքին հակասությունների պատճառով, հետևել ենք այդ տեսակետին։ Սակայն 1963 թվականին զբաղվելով ժամանակակից հայերենի խոնարհման համակարգով, ապա և՝ 1964 թվականին հանձնարարություն ստանալով կազմել ժամանակակից հայերենի ձևաբանության դպրոցական դասագիրք, մենք ստիպված եղանք հանգամանորեն զբաղվել հոլովման և հոլովների հարցով։ Մեր ուսումնասիրությունները բերեցին մեզ բոլորովին նոր եզրակացության, որից ելնելով՝ մենք Մ. Աբեղյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ՀՍՍՀ ԳԱ Հոբելյանական գիտական սեսիայում կարդացած մեր զեկուցման մեջ, խոսելով հոլովների տեսության մասին, այն դրույթն առաջ քաշեցինք, որ այդ տեսության գնահատումը պետք է վերանայել։ Այնուամենայնիվ, մեր և Հ. Բարսեղյանի կազմած դպրոցական դասագրքում մենք հոլովների քանակը պահեցինք անփոփոխ, ըստ որում փոփոխություն կատարելուց առաջ անհրաժեշտ էր գիտականորեն հիմնավորել դա հատուկ ուսումնասիրությամբ։ Այդ խնդրին է նվիրված, ահա, սույն հատվածը[1]։

Նախքան բուն վերլուծություններին անցնելը, անհրաժեշտ ենք համարում համառոտ կերպով շարադրել Մ. Աբեղյանի և նրա հետևորդների հիմնական դրույթները։

Մ. Աբեղյանի սահմանումը վերը բերել ենք. այդ սահմանումից ելնելով, նա գտնում է, որ «հոլովների մասին սովորեցնել կնշանակե երկու բան սովորեցնել. նախ՝ թե տրված բառը քանի տեսակ ձև կամ հոլով կարող է ունենալ և որոնք են այդ ձևերը, և երկրորդ՝ թե ամեն ձև կամ հոլով ինչպիսի և քանի տեսակ կախման հարաբերություն կարող է ցույց տալ խոսքի կապակցության մեջ. ուրիշ խոսքով, որոնք են այս կամ այն հոլովի գործածությունները, որովհետև ամեն հոլով միայն մի տեսակ հարաբերություն չի ցույց տալիս, այլ մի քանի, երբեմն և շատ»[2]։ Այս դրույթով առաջնորդվելով, նա

1 Այս աշխատությունը հիմնականում ավարտված էր արդեն, երբ «Սովետական դպրոց»-ում բանավեճ սկսվեց հոլովների մասին։ Մենք այդ բանավեճին չենք անդրադառնում։

2 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի հոլովները, էջ 4։

Հանգամանորեն վերլուծում է իր նախորդների աշխատություններում սեռական և տրական, հայցական և ուղղական համարված հոլովաձևերի կիրառությունները,— և սա այդ աշխատության գիտական անժխտելի արժեքն է,— և հանգում հետևյալ ընդհանուր հետևության.

«1. Պետք է որոշ կերպով տարբերել իրարուց հոլով ըստ ձևի և հոլով ըստ նշանակության կամ կիրառության միայն։

2. Մեր աշխարհաբար լեզուն ըստ ձևի (formell) *միայն հինգ հոլով է զանազանում, ուստի ձևաբանության մեջ* (Formenlehre) *միայն հինգ հոլով պիտի դնել։*

3. Ինչպես կոչականը, նույնպես և հայցականն ու սեռականը միայն ըստ նշանակության կարելի է հոլով համարել. ուստի դրանց ուսումը պետք է մանի շարահյուսության մեջ։

Սեռական *հոլովը պիտի պահել 2-րդ հոլովի իբրև անվան լրացում կամ վերադիր գործածության համար, ինչպես և հայցական տեսմինը ոչ թե ձևի համար պիտի գործածել, այլ ուղղականի և տրականի հոլովական ձևերի իբրև անցողական բայերի սեռի խընդիր գործածության համար։ Այսպես վարվում են արդեն մեր քերականները կոչական հոլովի համար, որ ըստ ձևի առանձին հոլով չեն դնում»*[1]։ *Այս վերջին դրույթից ելնելով՝ նա իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ (1912), «Հոլովների նշանակությունն և կիրառությունը» բաժնում, ըստ նշանակության ընդունում է. ուղղական, կոչական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական*[2]։ *Անհրաժեշտ է նշել, որ հետևողականորեն կիրառելով իր սկզբունքը, նա անձնական և ցուցական դերանունների սեռականն էլ համարում է ստացական ածականներ։*

Ինչպես տեսնում ենք, Մ. Աբեղյանը հոլովների որոշման շատ որոշակի ելակետ ունի. հոլովը ձև է. որքան ձև կարող է ունենալ հոլովվող բառը, այնքան էլ հոլով կա։ Հոլովը որպես ձև, խոսքի մեջ արտահայտում է «կախման հարաբերություններ», ուստի և՝ շարահյուսության մեջ այնքան հոլով պետք է ընդունել, որքան հոլովական նշանակություն կա. հոլովական նշանակությունը այն «կախման հարաբերություններն» են, որոնք հոլովական ձևը ցույց է տալիս խոսքի մեջ։ Դժվար չէ նկատել այս մոտեցման սկզբունքային սխալը։ Նախ՝ Մ. Աբեղյանը նույնացնում է շարահյուսական

---

1 *Նույն տեղում, էջ 83—84։*

2 *Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր. 1965, էջ 399—469։*

հարաբերությունը և կիրառությունը հոլովական նշանակության հետ, որ ճիշտ չէ։ Այդ մասին բավականաչափ հանգամանորեն խոսել ենք, և այլևս դրա վրա կանգ չենք առնի։ Նույնացնելով հոլովական նշանակությունը շարահյուսական հարաբերությունների հետ, նա ըստ էության խզում, անջատում է իրարից հոլովի ձևը և նրա նշանակությունը։ Երկուսի անկախ, իրարից անջատված ուսումնասիրությունը բնականաբար հանգեցնում է տարբեր արդյունքների. ամեն մի գոյական կարող է միայն հինգ հոլովաձև ունենալ, ուրեմն կա հինգ հոլով. ամեն մի ձև կարող է «մի քանի, երբեմն և շատ» հարաբերություններ ցույց տալ խոսքի մեջ, ուրեմն կան ըստ նշանակության շատ հոլովներ։ Մնում է զարմանալ, որ ուղղականն իբրև կոչական առանձին հոլովական նշանակություն համարելով, այդպիսին չի համարում նաև, օրինակ, ուղղականն իբրև որոշիչ, կամ չի անջատում բացառականի այնքան տարբեր նշանակությունները, ինչպիսիք են ներգործող խնդրի իմաստը և տեղի կամ պատճառի պարագայինը։ Հիրավի, ինչո՞ւ հենց ութ հոլով է ընդունում ըստ նշանակության և ոչ ավելի, ինչո՞ւ կոչականը առանձին հոլով է համարում շարահյուսության մեջ, իսկ, ասենք, պատճառականն հոլով չի ընդունում։ Այն պատճառով, որ այստեղ ելակետը հոլովի պաշտոնն է, որ ինքն էլ հատկապես շեշտում է իր մի այլ աշխատության մեջ[1]։ Բայց քանի՞ պաշտոն կարող է ունենալ գոյականը նախադասության մեջ կամ ավելի լայն ձևով՝ նախադասության քանի՞ տեսակ անդամներ կան.— ենթակա, ստորոգյալ, ուղիղ խընդիր, հանգման անուղղակի խնդիր, միջոցի անուղղակի խնդիր, անջատման անուղղակի խնդիր, պարագաներ, հատկացուցիչ, որոշիչ, բացահայտիչ (10), ավելացնենք նաև՝ կոչական բառեր, միջարկություններ և միջանկյալ բառեր, շաղկապներ, որոնք նախադասության անդամ չեն, բայց նրա կազմի մեջ են մտնում.— ընդամենը՝ 14։ Արդ, ստորոգյալը բայ է, որոշիչը՝ ածական, բացահայտիչը հոլովով համաձայնում է բացահայտյալի հետ, ուրեմն առանձին հոլովական նշանակություն չի կարող համարվել, միջարկությունները, շաղկապները ևն հոլովելի բառեր չեն, մնում են ուրեմն՝ ենթակա, հատկացուցիչ, ուղիղ խնդիր, 3 անուղղակի խընդիր, պարագա և կոչական բառ[2], ընդամենը՝ 8։ Ահա և հոլովական

1 Մ. Աբեղյան, Հայցական հոլովը մեր աշխարհաբարում, Վաղարշապատ, 1909, էջ 5։

2 Մ. Աբեղյանը նախադասության անդամների և հոլովական նշանակությունների այսպիսի թվարկում չի տալիս. դա մենք բխեցնում ենք նրա ընդհանուր դրույթից և ընդունած հոլովական նշանակությունների քանակից։

նշանակությունները. ուրեմն, այն ինչ որ հոլովական նշանակություն է համարվում, կարելի է ներկայացնել հետևյալ հավասարությամբ. բառի պաշտոն խոսքի մեջ = շարահյուսական հարաբերություն = հոլովի նշանակություն: Այսպես, ահա, անջատելով հոլովական իմաստը հոլովական ձևից և այն նույնացնելով շարահյուսական պաշտոնի հետ, Մ. Աբեղյանը ընդունում է 8 հոլով ըստ նշանակության, 5 հոլով ըստ ձևի: Հիշենք հոլովի և շարահյուսական պաշտոնի նույնացումը, որովհետև դա միայն Մ. Աբեղյանին չի վերաբերում:

Այժմ դիմենք հակառակ տեսության փաստարկներին: Քննադատելով Մ. Աբեղյանի տեսությունը և որակելով դա ֆորմալիստական, Գ. Սևակը գրում է. «Զևը հոլովի իմաստի (բովանդակության) պայմանական արտահայտությունն է: Դրանք հակադրությունների միասնություն են հանդիսանում, և հակադրամիասնության մեջ առաջնությունը, իհարկե, պատկանում է բովանդակությանը, այսինքն հոլովի իմաստին՝ բառահարաբերական այս կամ այն կոնկրետ իմաստին»[1]: Այս բոլորը միանգամայն ճիշտ է. մեզ չպետք է թյուրիմացության մեջ ձգի նաև «այս կամ այն կոնկրետ իմաստ» արտահայտությունը և մտածել տա, թե այստեղ Գ. Սևակը նկատի ունի որևէ հոլովի մասնավոր իմաստները խոսքի մեջ: Այդպես չէ, բառահարաբերական կոնկրետ իմաստ արտահայտությունը նա հակադրում է ընդհանրապես հոլովական իմաստ հասկացությանը, այսինքն՝ տվյալ հոլովի, օրինակ՝ գործիականի իմաստը՝ առհասարակ հոլովական իմաստին: Մեր այս բացատրությունը բխում է նրա ամբողջ հատվածի ընդհանուր բովանդակությունից: Այնուհետև Գ. Սևակը գրում է. «Հոլովական իմաստի և հոլովական ձևի անխզելի կապը ժխտել չի կարելի, բայց յուրաքանչյուր դեպքում այս կամ այն լեզվի հոլովները և նրանց թիվը որոշելիս պետք է ելնել ոչ ձևից և ոչ էլ միայն իմաստից, քանի որ ամեն մի հոլով մի շարք, երբեմն նաև բազմաթիվ իմաստներ (ֆունկցիաներ) է արտահայտում, ինչպես տարբեր իմաստները երբեմն նման ձևերով են արտահայտվում»[2]: Այս էլ միանգամայն ճիշտ է. կարևոր է նաև, որ հոլովի մի շարք իմաստները, իբրև ֆունկցիաներ, հակադրում է հոլովական իմաստին, թեև ոչ պարզորոշ կերպով: Եվ, վերջապես՝ այս բոլորի վերջաբանը. «Յուրաքանչյուր հոլով անպայման պետք է

---

1 Գ. Սևակ, նույն տեղում, էջ 256:

2 Նույն տեղում, էջ 259:

ունենա յուր ձևը, բայց այս չի նշանակում, թե յուրաքանչյուր հոգով անպայման յուր տարբեր ձևը պետք է ունենա»[1]։ Այս եզրակացությունը եթե սխալ չէ, ապա՝ անհանդուրժելիորեն թերի է, և ահա թե ինչու։ Լեզվական երկու իմաստներ՝ բառային թե քերականական, կարող են միևնույն ձևն ունենալ. այս դեպքում, ինչպես ասել ենք, ունենք համանուններ։ Եվ, ինչպես դարձյալ ասել ենք, տվյալ մակարդակի համանունները տարբերակվում են հաջորդ մակարդակում կամ ձևական, կամ գործառական (ֆունկցիոնալ) և կամ համակցության-կապակցելիության հատկանիշներով։ Եթե ոչ մի մակարդակում այս հատկանիշներից որևէ մեկով տարբեր իմաստները իրարից չեն զատվում և չեն հակադրվում իրար, ապա մենք ոչ թե երկու, այլ մեկ միավոր ունենք, ո՛չ թե համանուններ, այլ մեկ ձևույթ կամ բառ և այլն։ Մեր ասածը բացատրելու և հիմնավորելու համար բերենք հետևյալ օրինակները. ունենք սուր *հնչյունախումբը որպես մեկ բառային ձև, որ ունի երկու տարբեր իմաստներ՝* սուր = հատու, սուր = սուսեր. *բառային մակարդակում դրանք իրենց ձևով չեն տարբերվում, բայց հենց ձևաբանականում արդեն տարբերակվում են. առաջինից կարող ենք կազմել ավելի* սուր, ամենասուր *բառաձևերը, երկրորդից՝* սրի, սրից, սրով, սրեր *ևն բառաձևերը։ Նշանակում է ունենք երկու բառ՝* սուր *(ածական) և* սուր *(գոյական)։ Է՛լ ավելի որոշակի է դառնում տարբերակումը շարահյուսական մակարդակում՝ նրանց տարբեր դերերով ու կապակցությամբ (մեկը՝ գոյականի հետ որպես որոշիչ, մյուսը՝ անկախ կամ գոյականի հետ որպես հատկացուցիչ և այլն)։ Կարող են լինել դեպքեր, երբ ձևական հատկանիշները ոչ մի մակարդակում չօգնեն, և այդ դեպքում հանդես կգան ուրիշ միջոցներ, օրինակ՝* մարտ *(ամիսը) և* մարտ *(պատերազմ) ձևական ոչ մի տարբերակում չունեն ո՛չ բառային, ո՛չ հոլովական ձևով. ընդունենք, որ երկուսն էլ կարող են հոգնակի ձև ունենալ (կարելի է գուցե ասել՝ այսպիսի մարտեր (= այս մարտ ամսվա նման մարտ ամիսներ) շատ ենք անցկացրել), համենայն դեպս, դա հաշվի չառնենք. շարահյուսական մակարդակում դրանք երկուսն էլ կարող են կապակցվել վերջանալ բայի հետ, և կստանանք մարտը վերջացավ երկիմաստ նախադասությունը։ Թվում է, թե առհասարակ այլևս լեզվական տեսակետից տարբերակման ձևական կամ գործառական հնարավորություն չկա, բայց այդպես չէ. մեկի հետ կարող ենք*

1 Նույն տեղում (ընդգծումը մերը չէ)։

գործածել ամիս բառը, մյուսի հետ ոչ. ընդհակառակն, երկրորդի հետ կարող ենք գործածել օդային, ծովային, հրետանային ևն բառերը, առաջինի հետ՝ ոչ: Ուրեմն, այս դեպքում էլ մենք ունենք տարբերակման հնարավորություն, և դրանց տարբեր բառեր համարելը հիմնված է լեզվի օբյեկտիվ տվյալների վրա: Մի օրինակ էլ բերենք ձևաբանական մակարդակից. ժամանակակից հայերենում ա խոնարհման հրամայականի եզակին, ըղձականի եզակի երրորդ դեմքը և ժխտական դերբայը միևնույն ձևն ունեն (օր. խաղալ-խաղա). մենք այստեղ ունենք համանունություն՝ երեք բառաձև միևնույն ձևով: Թեև այդպես անկախ վերցրած նրանք նույնական են, բայց իրենց խոնարհման հարացույցում արդեն տարբերակվում են (դու խաղա՛, ես խաղամ, դու խաղաս, նա խաղա. մի՛ խաղա, չխաղա, չեմ (չես, չի) խաղա ևն): Այսպիսով, համանունները տարբեր միավորներ են, ունեն իրենց ձևը և բովանդակությունը, բայց ինչ-ինչ պատճառներով նրանց ձևերը զուգադիպում, նույնանում են տվյալ մակարդակում: Այդ նույնական ձևերը տարբեր միավորներ (տարբեր ձևույթներ, բառեր, բառաձևեր) համարելը հիմնվում է այն փաստի վրա, որ դրանք եթե ոչ նույն, ապա գերազաս մակարդակներում հակադրվում են իրար իրենց գործառույթյամբ, ոլորտով, համակցելիությամբ և այլ հատկանիշներով և դրանով իսկ բացահայտում իրենց իմաստային հակադրություն: Այս բոլորը հաշվի առնելով՝ այժմ դառնենք հակառակ ուղղությամբ. կարելի՞ է արդյոք տարբեր միավորներ համարել այն ձևը, որը ոչ մի մակարդակում չի դրսևորում տարբեր իմաստներ ո՛չ իր գործառույթյամբ, ո՛չ իր ոլորտով, ո՛չ իր համակցելիությամբ և, հետևաբար, տարբեր միավորների հակադրություն չի ստեղծում: Ո՛չ, չի կարելի: Այս միտքը բացատրելու համար դիմենք հետևյալ օրինակին: Ժամանակակից հայերենում ունենք ըստ սեռի տարբերակված բառերի այնպիսի զույգեր, ինչպիսիք են՝ հայր–մայր, եղբայր–քույր, աղամարդ–կին, պապ–տատ, եզ–կով, խոյ–մաքի և այլն: Այս զույգերից առաջինները ցույց են տալիս արական, երկրորդները՝ իգական սեռի գոյականներ: Քանի որ դա համապատասխանում է գոյականների իրական կամ բնական սեռին (ПОЛ), ապա մենք այդտեղ ունենք սեռի տրամաբանական կարգ, որը, սակայն, քերականական կարգ չենք կարող համարել, որովհետև իր քերականական արտահայտությունը չունի ո՛չ ձևաբանական, ո՛չ էլ շարահյուսական մակարդակում: Արդ, բազմաթիվ բառեր, որոնց ցույց տված գոյականները նույնպես ունեն իրական սեռ, այդպիսի տարբերակում

չունեն, ինչպես՝ աղվես, գայլ, կապիկ, արտույտ են։ Այս բառերը հավասարապես ցույց են տալիս երկու սեռն էլ և հավասարապես կարող են գործադրվել թե՛ մեկ, թե՛ մյուս սեռի ներկայացուցչի համար (օրինակ՝ արու գայլ, էգ գայլ, գայլը ցնկնեց (վերաբերում է միայն էգին) և այլն)։ Քանի որ այս կարգի կապակցությունների մեջ այդ բառերը կարող են մերթ արուին վերաբերել, մերթ՝ էգին, չի՞ նշանակում արդյոք, որ աղվես, գայլ, արտույտ և նման բառերը նույնպես արական և իգական ձևեր են, և նույնպիսի զույգեր պիտի համարել, ինչպես՝ խոյ–մաքի են, այն տարբերությամբ միայն, որ դրանք նույն ձևն ունեն, իսկ նրանք՝ տարբեր։ Ոչ, չի նշանակում։ Այս բառերի ո՛չ իմաստը, ո՛չ ձևը, ո՛չ գործածությունը չի դրսևորում սեռային հատկանիշ, դրանք սեռի նկատմամբ անտարբեր են, սեռի կարգից զուրկ։ Այդպես պետք է մտածել նաև բառաձևերի մասին։ Եթե տվյալ բառաձևը ոչ մի հատկանիշով չի կարող տարբեր իմաստներ դրսևորել, ապա նա մեկ բառաձև է, եթե նույնիսկ շարահյուսական մակարդակում հանդես է գալիս տարբեր, անգամ միմյանց հակադիր պաշտոններում։ Իբրև օրինակ կարող ենք առնել բայի դեմքի կարգը ռուսերենում։ Այստեղ, ինչպես գիտենք, բայի ներկային (անկատար կերպի), կատարյալ կերպի բայերի պարզ ապառնիին, ինչպես և հրամայականին հատուկ է դեմքի քերականական կարգը, որ արտահայտվում է դիմային վերջավորություններով։ Սահմանականի անցյալը և ստորադասական եղանակը զուրկ են դիմային վերջավորություններից, և միևնույն ձևը հավասարապես կարող է կապակցվել երեք դեմքերի հետ. այդ ձևերն, ուրեմն, չունեն ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ, ո՛չ երրորդ դեմքի իմաստ, թեև խոսքի մեջ նրանք կարող են վերագրվել դրանցից որևէ մեկին։ Հարց է առաջանում, կարո՞ղ ենք ասել, թե, օրինակ, անցյալի ձևերն ունեն դեմք, կամ արտահայտում են դեմքի կարգ։ Ոչ, չենք կարող, որովհետև ոչ մի հատկանիշով նրանց մեջ չի տարբերակվում որևէ դեմքի իմաստ։ «Սահմանական եղանակի անցյալ ժամանակի ձևերում և ստորադասական եղանակի ձևերում բայի 1-ին և 2-րդ դեմքերն արտահայտվում են միայն անձնական դերանուններով, իսկ 3-րդ դեմքի կարգը՝ դերանուններով կամ գոյական անուններով»[1]։ Նշանակում է, այս ձևերը դեմքի կարգ չունեն։ Այդպիսի օրինակներ կարելի է բերել նաև ուրիշ լեզուներից։ Ամփոփելով ասվածները, կարող ենք եզրակացնել, որ՝ ա) ամեն մի ձևաբանական կարգ իր ձևը պետք է ունենա, բ) երկու կամ ավելի քերա-

[1] «Грамматика русского языка», т. 1, стр. 467.

կանական կարգեր կարող են միևնույն ձևով արտահայտվել, գ) եթե այդ կարգերը որևէ գործառական, համակցելիության կամ այլ հատկանիշով շարահյուսական մակարդակում հակադրվում են իրար և դրանով իսկ բացահայտում իրենց իմաստային ինքնուրույնությունը, ապա դրանք տարբեր միավորներ՝ տարբեր բառաձևեր են, դ) եթե այդ կարգի տարբերակում չկա, և տվյալ ձևը կարող է հավասարապես հանդես գալ այդ երկու կարգերի ոլորտներում, ապա ունենք մեկ միավոր, մեկ բառաձև, որի բովանդակությունն են կազմում այդ երկու կամ ավելի կարգերը միասին, առանց տարբերակման և, հետևաբար, չկա այդ կարգերի հակադրություն:

Այս դրույթներից ելնելով էլ, ահա, քննենք նախ ուղղական և հայցական հոլովների հարցը: Մ. Աբեղյանը, ելնելով այն փաստից, որ հայցականի համար առանձին ձև չկա, գտնում է, որ հայցական հոլով չկա: Հակառակ տեսությունը՝ ընդունելով հանդերձ, որ հայցականի համար առանձին հոլովաձև չկա, պնդում է, թե հայցական հոլով ունենք, որովհետև նախադասության մեջ ենթական և ուղիղ խնդիրը հակադիր իմաստներ են արտահայտում և չեն կարող մեկ հոլով համարվել, թեկուզ և նույն ձևն ունենան: Սրան իբրև տեսական հիմնավորում է ծառայում Գ. Սևակի այն թեզը, թե պարտադիր չէ, որ ամեն մի հոլով «իր տարբեր ձևն ունենա»: Այդ թեզի մասին մենք խոսեցինք արդեն. այժմ խոսենք նախադասության մեջ ունեցած պաշտոնների մասին: Լեզվաբանության մեջ ավանդաբար գործածվող հոլովների անվանումները, որոնք հունարենից անցել են մեզ և լատիներենի միջոցով՝ ամբողջ աշխարհին, պայմանական տերմիններ են դարձել և մեծ մասամբ չեն համապատասխանում հոլովների այժմ գիտակցվող իմաստներին: Դա հատկապես վերաբերում է սեռականին և հայցականին: Բացի դրանից, հոլովական իմաստները հարաբերությունների վերացարկված ու ընդհանուր տրամաբանական կատեգորիաներ են արտահայտում, որոնք դրժվար է մատչելի ու պարզ սահմանումներով ներկայացնել: Այդ պատճառով էլ ավանդական քերականության մեջ դրանք բացատրվում են շարահյուսական կատեգորիաների միջոցով, որ հեշտացնում է նաև հոլովների ուսուցումը: Սրանից ստացվում է այն, որ սեռականը նույնանում է հատկացուցչի հետ, հայցականը՝ ուղիղ խնդրի հետ, ուղղականը՝ ենթակայի հետ և այլն: Այսպիսով, հոլովի իմաստը նույնանում է նախադասության անդամի հետ, այսինքն՝ հենց այն, որ արտահայտված է վերի սահմանումների մեջ, և որի սխալը մենք բացահայտեցինք: Բայց այսքանով հարցը չի

փակվում. մենք տեսանք, որ Մ. Աբեղյանը ճիշտ այնքան հոլով էր ընդունում ըստ իմաստի կամ, որ նույնն է՝ այնքան հոլովական նշանակություն, որքան պաշտոնով կարող է հանդես գալ գոյականը նախադասության մեջ։ Այս նույնացումը նրան չէր խանգարում ձևաբանության մեջ հինգ հոլով պահելու, որովհետև այստեղ ելակետը ոչ թե իմաստն էր կամ իմաստը և ձևը միասին, այլ միայն ձևը։ Հակառակ ուղղության մեջ հոլովական իմաստի և շարահյուսական դերի (պաշտոնի) նույնացումը տրամաբանորեն այլ եզրակացության է հանգեցնում։ Եթե հոլովը ձևի և բովանդակության միասնություն է, իսկ իմաստի տեսակետից կա 8 հոլով՝ շարահյուսության մեջ, ապա՝ նույնքան էլ հոլով պետք է ընդունել ձևաբանության մեջ, անկախ այն բանից՝ դրանցից յուրաքանչյուրն ունի՞ առանձին ձև, թե ոչ։ Ինչպես տեսնում ենք, եզրակացությունը միանգամայն տրամաբանական է։ Մ. Աբեղյանի տեսությունը իր մեջ է կրում իր բացատումը. եթե չի կարելի ընդունել հոլովական ձև առանց իմաստի, իսկ հոլովական իմաստները 8-ն են, ապա կա 8 հոլով։ Մնում է հարցնել միայն, թե ինչո՞ւ 8-ի փոխարեն 7 հոլով են ընդունում։ Բայց դրա բացատրությունը շատ պարզ է։ Եթե կարելի է առանձին հոլով չհամարել գոյական որոշչի հարաբերությունը, ապա առավել ևս հարմար է առանձին հոլով չհամարել կոչականը, որովհետև կոչական բառերը չեն արտահայտում շարահյուսական հարաբերություն, նրանք նախադասության անդամ էլ չեն, այլ, ինչպես վերը ասել ենք, խոսքի ինքնավար միավոր։ Ուստի և՝ կարելի է իբրև կոչական բառ գործածված գոյականը դիտել որպես ուղղականի դրրսևորումներից մեկը, կամ նույնիսկ քերականական ձև էլ չհամարել։ Մեր կարծիքով առաջինն ավելի ճիշտ է, որովհետև կոչականը կարող է հոգնակի թվով դրվել, որ նշանակում է, թե նա քերականական ձևավորում ունի, բառաձև է և, հետևաբար ուղղական։ Այժմ անցնենք ուղղականին և հայցականին։ Ինչպես տեսանք, թե՛ Մ. Աբեղյանը և թե՛ նրա հակառակորդները հայցականի իմաստն են համարում ուղիղ խնդրի պաշտոնը։ Հոլովի իմաստի և հոլովի շարահյուսական պաշտոնի (=դերի, ֆունկցիայի) կամ հարաբերության այդ նույնացումը այնքան ծանրացել է լեզվաբանների պատկերացումների վրա, որ նույնիսկ Գ. Սևակը, որը, ինչպես տեսանք, իր տեսական դրույթների մեջ դիտում է հոլովական իմաստը որպես յուրահատուկ քերականական կատեգորիա, լեզվական փաստերի գործնական վերլուծության մեջ, ցավոք, դարձյալ հանգում է այդ նույնացման։ Բերելով «Նա ինձ կանչեց», «Նա ինձ գիրք տվեց»,

«Նա Աբամին տեսավ», «Նա Աբամին գիրք տվեց» նախադասությունները, Գ. Սևակը գրում է. «Այս օրինակների մեջ նույն ձևերով արտահայտված (ընդգծված) բառերը հոլովական միանգամայն տարբեր իմաստներ (ֆունկցիաներ, պաշտոններ) ունեն, որոնք երբեք նույնացվել չեն կարող, սակայն ձևական քերականության մեջ նրանք դիտվում են իբրև նույն հոլովը՝ տրականը»[1]։ Հասկանալի է, որ այսպիսի նույնացման դեպքում արդեն ուրիշ ելք չի մնում, քան ընդունել, որ ունենք հայցական հոլով, որը ձևով մերթ ուղղականին է նման, մերթ տրականին, քանի որ ուղիղ խնդրի պաշտոնով հանդես եկող նախադասության անդամը այդ երկու ձևերից մեկը կարող է ունենալ։ Ճի՞շտ է այս մոտեցումը, արդյոք։ Բնականաբար՝ ոչ։ Վերը մենք խոսել ենք շարահյուսական և ձևաբանական կատեգորիաների մասին և գիտենք, որ՝ 1) միևնույն ձևաբանական կարգը կարող է հանդես գալ տարբեր շարահյուսական գործառույթներով (ֆունկցիաներով, պաշտոններով) և արտահայտել տարբեր շարահյուսական հարաբերություններ ու տարբեր կոնկրետ իմաստներ (օրինակ՝ բացառականի հոլովաձևն իբրև ներգործող խնդիր, պատճառի պարագա, տեղի պարագա, անջատման անուղղակի խնդիր, ժամանակի պարագա են), 2) տարբեր ձևաբանական կարգեր կարող են հանդես գալ միևնույն շարահյուսական գործառույթով (ֆունկցիայով, պաշտոնով) և արտահայտել միևնույն շարահյուսական հարաբերությունը և միևնույն կոնկրետ իմաստը (օրինակ՝ տրականը և ներգոյականը որպես տեղի պարագա հակադրության չեզոքացման դիրքում), 3) տարբեր ձևաբանական կարգեր կարող են հանդես գալ տարբեր շարահյուսական գործառույթով (ֆունկցիայով, պաշտոնով) և արտահայտել տարբեր շարահյուսական հարաբերություններ, բայց միևնույն կոնկրետ իմաստը (օրինակ՝ սեռականի, բացառականի կամ ածականի ձևերը որպես հատկացուցիչ, խնդիր, որոշիչ, բայց բոլորն էլ՝ ելանյութի իմաստով)։ Արդ, ուղիղ խնդիրը նախադասության անդամ է, որը շարահյուսորեն ցույց է տալիս ենթակայի, գործողության և այդ գործողությունը կրող առարկայի հարաբերությունը. այստեղ ուրեմն ունենք շարահյուսական պաշտոն և հարաբերություն, ըստ որում այդ պաշտոնով կարող են արտահայտվել շարահյուսական տարբեր հարաբերություններ և համապատասխանորեն տարբեր իմաստներ։ Օրինակ՝ ուղիղ խնդիրը կարող է արտահայտել գործո-

---

1 Գ. Սևակ, նույն տեղում, էջ 258—259 (բոլոր ընդգծումները իրենն են)։

ղության և դրա կրողի, գործողության և դրա հետևանքի կոնկրետ իմաստներ, կրող առարկայի ծավալային (ամբողջի և մասի) իմաստ (հմմտ. ջուր խմել—ջրից խմել, ռուս. ВЫПИТЬ *МОЛОКО,* ВЫПИТЬ *МОЛОКА և այլն)։ Այս բոլոր իմաստներն ու հարաբերություններն արտահայտվում են շարահյուսական մեկ կարգով՝ ուղիղ խնդրով։ Հանրահայտ ճշմարտություն է, որ միևնույն քերականական իմաստը կարող է արտահայտվել տարբեր եղանակներով ու միջոցներով։ Դա վերաբերում է նաև ուղիղ խնդրին. լեզուների մեջ ուղիղ խընդիրը կարող է արտահայտվել թե՛ ձևաբանական և թե՛ շարահյուսական միջոցներով։ Ֆրանսերենում նա արտահայտվում է շարահյուսական միջոցով (բառերի դասավորությամբ), որովհետև գոյականները հոլով չունեն։ Այն լեզուներում, որոնք հոլով ունեն, ուղիղ խնդրի կարգը կարող է արտահայտվել տարբեր հոլովներով։ Անգլերենում ինչպես ենթական, այնպես էլ ուղիղ խնդիրը (այլև նախադասության ուրիշ անդամներ) հավասարապես արտահայտվում են միևնույն հոլովով (ընդհանուր հոլովով), բայց հենց դրա պատճառով էլ ենթակայի և ուղիղ խնդրի տարբերակումը իրացվում է շարահյուսական միջոցով (դասավորությամբ)։ Շատ լեզուներում ուղիղ խնդրի կարգն արտահայտվում է հայցական հոլովով, սակայն կան լեզուներ էլ, որոնց մեջ բացի հայցականից կարող է արտահայտվել նաև ուրիշ հոլովներով։ Այսպես, օրինակ, ռուսերենում ուղիղ խնդիրը բայի դրական ձևի հետ արտահայտվում է հայցական հոլովով, բայց կան բայեր, որոնց հետ ուղիղ խնդիրը դրվում է սեռական հոլովով (օր.* желать славы; свободы хочу, независимости *ևն). Եթե բայը ժխտական մասնիկ ունի, ուղիղ խնդիրը դրվում է սեռական հոլովով (օր.* Не взял с собою *ключа;* Тот *сердцы* в груди не носил *ևն)*[1]։ *Այսպիսի կապակցությունները «հարաբերակից են այն բառակապակցություններին, որոնց մեջ կախյալ բառն արտահայտվել է հայցական հոլովով գոյական անվամբ»*[2]։ *Սակայն ժխտական մասնիկ ունենալու դեպքում էլ ուղիղ խնդիրը կարող է դրվել հայցական հոլովով (օր.* Эй, Барюшка, не накликай *беду!* (Гончаров); Райский... не подразнил *бабушку...* (Гончаров) *ևն)։*

Լիտվաներենում նույնպես ուղիղ խնդիրը դրվում է հայցական կամ սեռական հոլովներով, ըստ որում որոշ դեպքերում սեռակա-

---

1 «Грамматика русского языка», т. II, ч. I, 1961, стр. 120—122, 559—560.

2 *Նույն տեղում, էջ 121։*

նով խնդիրն իմաստով հակադրվում է հայցականով խնդրին, որոշ դեպքերում՝ չի հակադրվում. Տ. Վ. Բուլիգինան սեռականի գործածությունը, որպես խնդիր, ներկայացնում է հետևյալ ձևով.

«1. Խնդրի սեռական, որ հակադրվում է հայցականին։

2. Խնդրի սեռական, որը չի հակադրվում հայցական հոլովին»[1]։ Մոնղոլական լեզուներում «հայցական հոլովը ուղիղ խնդրի արտահայտման միակ միջոցը չէ»[2]։ Այսպիսի օրինակների թիվը կարելի է բազմացնել. բայց բավականանանք այսքանով, նշելով միայն, որ ենթակայի համար էլ միակ հոլովը ուղղականը չէ. նա կարող է դրվել նաև սեռական, տրական և այլ հոլովներով։ Ուղիղ խնդրի արտահայտման, նրա հոլովի մասին պետք է ասել նաև հետևյալը։ Հնդեվրոպական լեզուներից շատերում պատմական զարգացման ընթացքում ուղղական և հայցական հոլովները ձևով նույնացել են, իսկ սա էլ հանգեցրել է այն բանին, որ պատմականորեն առաջ է եկել մեկ հոլով, որով հավասարապես արտահայտվում են և՛ ենթական, և՛ ուղիղ խնդիրը։ Այս երևույթի հիանալի բացատրությունը տալիս է Վ. Մ. Ժիրմունսկին. «Ոչ սակավ դեպքերում ուղիղ խնդրի հոլովն էլ (հայցականը) ենթարկվել է նույնպիսի սղման, և այդ դեպքում համընկնում է ուղղական հոլովին.... Ըստ որում, ուղղական և հայցական հոլովի միօրինակացումը որոշ դեպքերում տեղի է ունենում ոչ թե պարզ հնչյունական սղումով, այլ քերականական նմանեցումով՝ այդ հոլովներից մեկի կամ մյուսի օգտին։ Համաբանությունը, ինչպես միշտ այդպիսի դեպքերում, մեխանիկական զուգորդական գործընթաց չէ, ինչպես կարծում էին երիտքերականները. նա բացահայտում է համակարգի ներքին զարգացման տենդենցը։ Ելակետային ձևը առանց ցուցիչի ամրանում է ենթակայի և խնդրի ձևերում, որոնց մեջ առարկան հանդես է գալիս որպես այդպիսին (իր անվանողական ձևով)։ Մյուս հոլովները ցույց են տալիս առարկայի (հասկացության) հարաբերությունները ուրիշ առարկաների (հասկացությունների) հետ»[3]։ Այս բոլորից պետք է եզրակացնել, որ

1. Հայցական հոլովը ուղիղ խնդրի արտահայտման միակ հոլովը չէ։

---

[1] Т. В. Булыгина, Некоторые вопросы классификации частных падежных значений, ВСОГ, стр. 257.

[2] Г. Д. Санжеев, Несколько замечаний о структуре слова и его границах, МСС, стр. 271.

[3] В. М. Жирмунский, О границах слова, МСС, стр. 20.

2. Պարտադիր չէ, որ ուղիղ խնդիրը տվյալ լեզվում միայն մեկ ձոլովով արտահայտվի. նա կարող է արտահայտվել նաև տարբեր ձոլովներով:

3. Պարտադիր չէ, որ ենթական և ուղիղ խնդիրը արտահայտվեն տարբեր ձոլովներով. նրանք կարող են արտահայտվել նաև միևնույն ձոլովով:

Այս դրույթները որպես ելակետ ընդունելով՝ անցնենք հայերենին: Մեր ուղղական և հայցական հոլովների ձևական նույնացումը լուծվում է շատ հեշտությամբ: Դեռ դրաբարում այդ հոլովները եզակիում ձևական տարբերակում չունեին. նրանք տարբերվում էին միայն հոգնակիում, ըստ որում ուղղականն ուներ f ցուցիչը (մի քանի բառերի համար՝ իկ), հայցականը՝ ս: Եզակի հայցականի համար որպես հայցականի կողմնակի ցուցիչ հանդես էր գալիս զ նախդիրը, որի հիմնական դերն էր որոշյալ առումը ցույց տալ: Սրա հետևանքով, եզակիում անորոշ առման դեպքում ուղղականի և հայցականի բառաձևերի չեզոքացում էր տեղի ունենում. նույն բառաձևը կարող էր լինել և՛ ենթակա, և՛ ուղիղ խնդիր: Բայց որովհետև ուղիղ խնդրի ուժեղ դիրքերից (հոգնակի և որոշյալ եզակի) գիտենք, որ նա դրվում է հայցական հոլովով, ապա՝ պետք է ընդունենք, որ թույլ կամ չեզոքացման դիրքում էլ ուղիղ խնդիրն ունի հայցականի մասնավոր իմաստ, թեև, կրկնում ենք, իբրև բառաձևեր ուղղականն ու հայցականը չեզոքանում են, և գերբառաձևի դերում հանդես է գալիս ուղղականը (հակադրության աննշույթ անդամը): Այս վիճակը հանգեցնում է այն բանին, որ դեռ 5-րդ դարում, գուցե և նրանից առաջ, ուղղականի և հայցականի ձևերն սկսում են շփոթվել միմյանց հետ. վիպասանության հատվածներում մենք դրա լավագույն օրինակն ունենք (ընկէց ի մէջ օրիորդին Ալանաց. Եւ շատ ցաւեցոյց զմէջ փափուկ օրիորդին): Սրա հետագա զարգացումը, մանավանդ հոգնակերտ ձևույթների համակարգի փոփոխության հետևանքով[1], ավարտվում է հայցականի և ուղղականի ձևերի բացարձակ նույնացմամբ. բառի անվանողական կամ ավելի ճիշտ բացարձակ ձևը հանդես է գալիս և՛ ենթակայի, և՛ ուղիղ խնդրի պաշտոններում, ըստ որում, բառի բացարձակ ձևը թեև ընդհանրապես համընկնում է նախկին ուղղականի

---

[1] *Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս մեր «Որակական անցումները լեզվի մեջ» հոդվածը (ԳԱՏ, 1952, № 9) և «Լեզվաբանության ներածություն», 1963, էջ 504—507:*

ձևին, բայց հաճախ նույնանում է նաև հայցականին (հմմտ. բաղնիս, ծախս, կաս, ժղ. բալնիս=բանալի ևն)։ Այսպիսով, ահա, հայերենում էլ տեղի է ունենում այն երևույթը, ինչ որ տեղի է ունեցել ուրիշ հնդևրոպական լեզուներում, և «ելակետային ձևը առանց ցուցիչի ամրանում է ենթակայի և ուղիղ խնդրի ձևերում»[1]։ Այսքանը՝ պատմական գործընթացի մասին։ Այժմ անցնենք համամանակյա կառուցվածքային վերլուծության։ Սառը կաճաշել է և Սառը կարեցին նախադասությունների մեջ միևնույն բառաձևը (ծառը) հանդես է եկել տարբեր պաշտոններում՝ ենթակայի և ուղիղ խնդրի։ Ասում են, թե դրանք տարբեր հոլովներ են (առաջինը՝ ուղղական, երկրորդը՝ հայցական) հենց այն պատճառով, որ մեկը ենթակա է, մյուսը՝ ուղիղ խնդիր։ Սակայն, որպեսզի ընդունենք, որ տարբեր հոլովներ՝ ուղղական և հայցական ունենք, ապա լեզվի մեջ թեկուզ մեկ դեպքում այդ երկուսը պետք է օբյեկտիվորեն տարբերվեն, հակադրվեն միմյանց եթե ոչ ձևով, ապա՝ գործառությամբ, կապակցելիությամբ և կամ որևէ ուրիշ հատկանիշով։ Բայց ունե՞նք, արդյոք, այդպիսի հակադրություն։ Ո՛չ, չունենք։ Այն բոլոր կապակցությունները, որոնց մեջ կարող է հանդես գալ ուղղական համարվածը, հանդես է գալիս նաև երկրորդը, իսկ այս նշանակում է, թե ենթակայի և ուղիղ խնդրի հակադրությունը, որպես նախադասության անդամների հակադրություն, դրսևորվում է ո՛չ թե հոլովներով, այլ բոլորովին այլ միջոցներով։ Բերենք օրինակներ.

Ջուրը հոսում է առվով։	Նա վերջացրեց գործը։
Ջուրը խմեց։	Գործը վերջացավ։
Կացինը ճեղքեց փայտը։	Քամին շարժում է դալար ճյուղերը։
Կացինը վերցրեց փայտահատը։	Քամուց շարժվում են դալար ճյուղերը։

Այս նախադասությունների մեջ ջուրը, կացինը, գործը, ճյուղերը բառերից յուրաքանչյուրը մեկ անգամ գործածվել է որպես ենթակա, մեկ անգամ՝ որպես ուղիղ խնդիր։ Ինչո՞վ են որոշվում այդ տարբեր պաշտոնները. բառաձևերո՞վ, դրանց տարբեր ներքին իմաստներո՞վ, բառերի դասավորությա՞մբ. ո՛չ, դրանցից և ո՛չ մեկով, այլ միայն՝ ստորոգյալի իմաստով։ Այդ բոլոր օրինակ-

1 Վ. Մ. Ժ ի ր մ ո ւ ն ս կ ի, նույն տեղում, էջ 20։

ների մեջ նույն բառաձևի ենթակա կամ ուղիղ խնդիր լինելը պայմանավորված է միայն ստորոգյալի սեռով և իմաստով. ջուրը խմեց նախադասության մեջ խմեց ներգործական սեռի է, պահանջում է ուղիղ խնդիր, և որովհետև ուրիշ գոյական չկա, ապա ուղիղ խնդիր կարող է լինել միայն ջուրը. մենք կարող ենք ավելացնել գառը, ձին, մարդը են բառերը (օր. ջուրը խմեց գառը), և այս դեպքում էլ ընտրությունը կլինի նույն բառի օգտին, որովհետև խմել բայի իմաստից հայտնի է, որ ջուրը կխմվի, իսկ գառը՝ ոչ։ Ինչպես տեսնում ենք, այստեղ ուղիղ խնդրի պաշտոնը իր ներքին իմաստով չի որոշվում, այլ նախադասության ուրիշ անդամների սեռով, բառային իմաստով և այլն։ Արտաքուստ թվում է, թե այստեղ էլ ունենք այնպիսի երևույթ, ինչպիսին էր մարտը վերջացավ նախադասության մեջ, բայց իրականում այդպես չէ. դրանք բոլորովին տարբեր երևույթներ են։ Մարտ (պատերազմ) և մարտ (ամիսը) բառերն ունեն իրենց տարբեր բառային իմաստները և նրանց կապակցելիությունը, ասենք, օդային կամ ամիս բառի հետ պայմանավորված է հենց բառային իմաստով. լեզվական փորձից գիտենք, որ պատերազմ բառային իմաստը կարող է կապակցվել օդային բառի իմաստի հետ, իսկ ամսվա անունը՝ ամիս բառի հետ (հունվար ամիս, փետրվար ամիս են), ուստի և՝ այդ կապակցությունները մեզ թելադրում են, թե տվյալ խոսքի մեջ մարտ բառը ո՛ր իմաստով է գործածված. նրանք բացահայտում են այդ բառի իմաստը, որ ունի անկախ խոսքից։ Ինչ վերաբերում է Ջուրը խմեց գառը նախադասության, ապա՝ թեև այստեղ էլ խմեց բացահայտում է, թե ո՛րն է ենթական, և ո՛րը՝ ուղիղ խնդիրը, բայց բոլորովին էլ ոչ քերականական (ձևաբանական կամ շարահյուսական) հատկանիշով. պոտենցյալ կերպով հենց այդ նախադասության մեջ ենթական կարող է լինել թե՛ մեկը և թե՛ մյուսը։ Եվ եթե մենք, այնուամենայնիվ, ընտրությունը կատարում ենք գառը բառի օգտին, ապա դա ոչ թե ձևաբանական կամ շարահյուսական որևէ հատկանիշի օգնությամբ, այլ՝ խմել բառի բառային իմաստի. ուրեմն՝ այստեղ էլ կապակցությունը բացահայտում է բառային (և ոչ քերականական) իմաստը, և դրա հիման վրա էլ արդեն մենք որոշում ենք ենթական ու խնդիրը։ Որպեսզի մեր ասածը պարզ լինի, բերենք մի ուրիշ օրինակ. Ճարը և ապակին բառաձևերը հավասարապես կարող են հանդես գալ և՛ ենթակայի, և՛ ուղիղ խնդրի դերում, և եթե կազմենք Ճարը կարեց ապակին, ապա ոչ մի բան մեզ չի ասի, թե ո՛րն է ենթական. մենք կարող ենք շրջել բառերի

տեղերը (ապակին կտրեց քարը, քարը ապակին կտրեց, ապակին քարը կտրեց, կտրեց քարը ապակին, կտրեց ապակին քարը) և դարձյալ չենք իմանա, թե ո՛րն է ենթական և ո՛րը՝ ուղիղ խնդիրը. այսպիսի դեպքերում նույնիսկ տրամաբանական շեշտն էլ կարող է չօգնել. կարելի է ասել՝ Քա՛րը կտրեց ապակին, ուժգին շեշտը դնելով առաջինի վրա, բայց դա չի նշանակում անպայման, թե կտրողը քարն է. հնարավոր է նաև հակառակը, կտրողը ապակին է, իսկ տրամաբանական շեշտը ցույց է տալիս, որ ապակին քա՛ր է կտրել և ոչ թե մի այլ բան: Այդ նախադասության մեջ ենթական և ուղիղ խնդիրը կարող են որոշվել միայն բոլորովին այլ միջոցներով, այսինքն՝ այն բանով, որ իմանանք, թե խոսքը ինչպիսի քարի մասին է. եթե դա տուֆ է կամ ունի, ասենք, փափուկ, փխրուն և նման բառերով որոշիչ, ապա՝ ենթական ապակին է, իսկ եթե որձաքար է, ապա՝ ենթական է քարը: Նույնպես և՝ Գիրքը ծածկեց թուղթը, Փայտը ջարդեց կացինը և նման բազմաթիվ նախադասությունների մեջ կարելի է ենթական և ուղիղ խնդիրը որոշել միայն խոսքային իրադրությունից, այսինքն՝ իմանալով, թե տվյալ դեպքում, տվյալ խոսքի մեջ ո՛րն է ծածկողը կամ կտրողը և ո՛րը՝ ծածկվողը կամ կտրվողը (գրքո՞վ թուղթը ծածկվեց, թե՞ գիրքը՝ թղթով, փայտից կացի՞նը ջարդվեց, թե փա՞յտը՝ կացնով): Այդպիսի նախադասությունները հայերենում շատ սովորական են, և միշտ էլ դրանց ենթական և ուղիղ խնդիրը որոշվում են միայն խոսքի ընդհանուր իմաստով, զանազան որոշող բառերով, իրենց բառային իմաստով և նման միջոցներով. օրինակ՝ Ռենտգենյան ապարատների փոխարինիչները «չերմացույց» են կոչում մասնագետները» («Սովետական Հայաստան» հանդես, 1966, № 3, էջ 39): Այս նախադասության ենթական է մասնագետները, որովհետև գիտենք, որ մասնագետները կարող են կոչել որևէ բան որևէ անունով. եթե այդ բառը փոխարինենք, ասենք, սարքերը բառով և գրենք. «Ռենտգենյան ապարատների փոխարինիչները «չերմացույց» են կոչում սարքերը», ապա ստիպված կլինենք մտածել, թե «փոխարինիչները» ինչ-որ գործիքներ են, որոնք կարող են կոչել մի բան մի անունով, կամ էլ՝ դրանք անձեր են, բայց այս երկրորդը հայտնապես բացառվում է, որովհետև հատկացուցիչը (ապարատների) այդպիսի մեկնաբանությունը անկարելի է դարձնում. բայց կարելի է փոխել կապակցությունը, դարձնել ռենտգենյան ապարատների կատարելագործողները և այս դեպքում դարձյալ անձի իմաստը (ոչ առումը) կբացահայտի ենթական: Բերենք դարձյալ ուրիշ օրինակներ.

1. Ջուրը խմեց։
2. Ջուրը խմվեց։
3. Հեռվից քաղաքը տեսավ։
4. Հեռվից քաղաքը տեսնվեց։
5. Հեռվից քաղաքը երևաց։
6. Նրա աչքերի առջև բարձրանում էր մեր փառահեղ լեռը։
7. Նա բարձրանում էր լեռը։
8. Լեռը ճեղքվեց երկրաշարժից։
9. Լեռը պատռեց երկրաշարժը։

Այս օրինակներից առաջինում ջուր ուղիղ խնդիր է, երկրորդում՝ ենթակա. դա որոշվում է միայն բայի սեռով և բայիմաստից. եթե խմել բառը փոխենք թափել բառով, կստանանք ջուրը թափեց, ջուրը թափվեց, առաջինը այդ ձևով, խոսքից դուրս, իբրև մեկուսացած նախադասություն թերի է, որի հետևանքով էլ չգիտենք ջուրը բառի պաշտոնը, բայց մենք կարող ենք լրացնել. Գերաճներ ջուրը թափեց ծովը, Նա ջուրը թափեց ճատակին. *նույն բառը, նույն բայաձևի միևնույն իմաստի հետ է կապակցվել, բայց մի դեպքում ենթակա է, մյուսում՝ ուղիղ խնդիր. ահա և երկրորդ նախադասությունը՝* Նա աղբը ջուրը թափեց, *որի մեջ ջուրը տեղի պարագա է, երկրորդում (ջուրը թափվեց) թվում է, թե հարցը շատ պարզ է. ենթական է ջուրը. դա, իհարկե, այդպես էլ է, բայց ահա և դրա ծավալումը՝* Ծառի ամբողջ պտուղը ջուրը թափվեց, *որի մեջ ջուրը տեղի պարագա է։ Բերված նախադասություններից 3-րդում* fաղաfը *ուղիղ խնդիր է, 4-րդում և 5-րդում ենթակա. դրանք որոշվում են միայն բայի սեռով. 3-րդում ուրիշ գոյական չկա, ուստի և տեսնել ներգործական բայի հնարավոր խնդիրն է միայն* fաղաfը. *սակայն մենք կարող ենք ծավալել այդ նախադասությունը և դարձնել՝* Կովի այդ ծանր օրերին fաղաfը տեսավ, որ դիմադրությունը աննշանին է, *որի մեջ* fաղաfը *մի այլ բառային իմաստ է ստացել (քաղաքի բնակչությունը) և այլևս ուղիղ խնդիր չէ. եթե մենք բոլոր լրացումները հանեինք և թողնեինք* fաղաfը տեսավ, որ..., *դարձյալ միակ հնարավոր ենթական է, իսկ եթե դարձնենք Հեռվից նա* fաղաfը տեսավ, որ դեռ այրվում էր, *ապա հնարավոր ենթական է միայն նա, իսկ ուղիղ խնդիրը՝* fաղաfը։ *Չորրորդ և հինգերորդ նախադասությունների մեջ* fաղաfը *ենթակա է, որովհետև* տեսնվեց, երևաց *առարկայների միակ հնարավոր ենթական է* fաղաfը. *դրանք էլ կարող ենք ընդարձակել և ասել՝* Հեռվից fաղաfը զարդարող աշտարակը տեսնվեց՝ երևաց, *որով* fաղաfը *կդառնա կողմնակի ուղիղ խնդիր։ Հաջորդ երկու նախադասություններում ունենք բարձրանալ չեզոք բայը. դրանցից առաջինում ենթակա է լեռը, որովհետև չկա որևէ ուրիշ բառաձև, որը հնարավոր լիներ դիտել իբրև ենթակա,*

իսկ երկրորդում՝ որովհետև կա նա բառը, որը կարող է միայն ենթակա լինել, ուստի և՝ լեռը նախադասության մի այլ անդամ է՝ տեղի պարագա, բայց մենք կարող ենք ասել՝ նա և լեռը ծածկվել էին իրիկնային մշուշով, և այստեղ լեռը կրկին ենթակա կդառնա նա-ի հետ։ Վերջապես՝ 8-րդ և 9-րդ օրինակներից առաջինում լեռը ենթակա է, որովհետև ուրիշ բառաձև չկա, որը կարելի լիներ ենթակա համարել, իսկ երկրորդում ուղիղ խնդիր է, որովհետև կա երկրաշարժ բառաձևը, որը ենթակա է, ըստ որում տրամաբանորեն երկրաշարժը կարող է պատռել լեռը, իսկ հակառակը՝ ոչ։ Բայց մենք կարող ենք այդ բառը փոխել և գրել՝ լեռը պատռեց մթության ծոցը (համմա. «Լույսը բացվում էր, և լեռը, պատռելով մթության ծոցը, իր ձյունափայլ գագաթն էր վեր պարզում») և այդ դեպքում ենթական է լեռը՝ նույն տրամաբանական պատճառով։

Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, որ գոյականի ուղիղ ձևը հանդես է գալիս բոլորովին տարբեր ոլորտներում, կատարում է նախադասության տարբեր անդամների պաշտոն և տարբեր հարաբերությունների մեջ մտնում նախադասության մյուս անդամների հետ, բայց այս բոլորը որոշվում է ո՛չ թե այդ ձևով, այլ նախադասության մյուս անդամների միջոցով։ Երբ մատ բառը կապակցվում է ամիս բառի հետ, ապա՝ դա որոշվում է ո՛չ թե ուրիշ հանգամանքներով, այլ հենց իր՝ մատ բառի իմաստով, այն բանով, որ նա ամսվա անուն է. երբ մատ բառը կապակցվում է օդային, ցամաքային, հրեղանային, հրացանային բառերի հետ, ապա դա բխում է հենց իր իմաստից. կռիվը կարող է լինել օդում կամ ցամաքում, հրեղանու կամ հրացանի միջոցով, մինչդեռ ամիսը ոչ օդային կարող է լինել, ոչ ցամաքային ևն։ Ուրեմն, այստեղ բառիմաստն ինքն է որոշում, թե ինչ իմաստ ունեցող բառերի հետ կարող է կապակցվել, ճիշտ այնպես, ինչպես՝ խմել բառի իմաստն է որոշում, որ ջուրը խմվող կարող է լինել, իսկ գարը՝ խմող, բայց որ ջուրը ենթակա կարող է լինել, թե ուղիղ խնդիր, դա որոշում է բայի սեռը (ջուրը խմեց, ջուրը խմվեց)։ Նշանակում է, գոյականի ելակետային ձևը հավասարապես կարող է հանդես գալ թե՛ ենթակայի և թե՛ ուղիղ խնդրի, թե՛ ստորոգելիական վերադրի և թե՛ զանազան պարագաների, թե՛ գոյական որոշիչի և թե՛ կոչականի պաշտոններում. թե այդ պաշտոններից որով է հանդես եկել տվյալ կապակցության մեջ, որոշվում է ոչ թե իր հոլովական իմաստով, այլ կապակցության տարբեր միջոցներով, սկսած զանազան բառերից մինչև տրամաբանական դատողությունն ու խոսքային իրա-

դրությունը: Այս բոլորից հետևում է, որ բառի բացարձակ կամ ա-վանդողական ձևը, որպես բառույթ, այսինքն՝ հոլովման համակարգի ելակետային բառաձև, ունի ընդհանուր, քերականականորեն չմասնավորված իմաստ, որը նախադասության մեջ կարող է մասնավորվել ու հանդես գալ որպես ենթակայի, ուղիղ խնդրի, պարագայի ևն իմաստ. մենք չենք ասում ուղղականի կամ հայցականի, այլ ենթակայի, ուղիղ խնդրի, պարագայի ևն իմաստ, որովհետև սրանք շարահյուսական կարգեր են, իսկ առաջինները՝ ձևաբանական: Մեր հոլովման համակարգում ունենք իբրև ելակետային բառաձև, իբրև բառույթ, գոյականի բացարձակ ձևը կամ անվանողական ձևը և համապատասխանաբար՝ նրա ընդհանուր իմաստը կամ բացարձակ իմաստը, որ խոսքի մեջ կարող է իրացվել զանազան կոնկրետացումներով կամ մասնավորեցումներով, ստանալ շարահյուսական զանազան դրսևորումներ, ինչպես և՝ բոլոր մյուս հոլովական իմաստները: Ասվածներից պարզ է արդեն, որ մենք, ելնելով լեզվի օբյեկտիվ տվյալներից, գտնում ենք, որ մեր գրական լեզվում հայցական հոլով չկա: Բայց սա նշանակում է, թե չկա նաև ուղղական հոլով, այն իմաստով, ինչ իմաստով այդ անվանումը գործածվում է, օրինակ, ռուսերենի, լատիներենի և այլ լեզուների համար (ուղղականն իբրև հայցականի հակադրություն). մենք ունենք բառի ելակետային ձև կամ բացարձակ ձև, որն իր մեջ ներառում է ուրիշ լեզուների և՛ ուղղականի, և՛ հայցականի հոլովական իմաստները: Այս սկզբունքից ելնելով մենք ավելի հարմար ենք գտնում այդ անվանումների փոխարեն գործածել ուղիղ հոլով (կամ բացարձակ, ելակետային բառաձև) անվանումը, և այդպես կվարվենք, ուր որ դրա հատուկ անհրաժեշտությունն զգացվի. բայց որպեսզի դարավոր գործածություն ունեցող և համընդհանուր ճանաչում գտած տերմինը փոխելու անախորժ դերը չստանձնենք, մենք թողնում ենք ուղղական անվանումը իբրև պայմանական անվանում (ինչպես բոլոր հոլովների անուններն առհասարակ) մեր բնութագրած իմաստի համար, որպես ուղիղ հոլով կամ բացարձակ, ելակետային բառաձև տերմինների համանիշ: Եվ այսպես, մենք ունենք ուղիղ հոլով կամ ուղղական հոլով, որ ունի բացարձակ իմաստ և որը ներառում է իր մեջ ինչպես ենթակայի և ուղիղ խնդրի, այնպես էլ պարագայի, ստորոգելիական վերադրի և այլ շարահյուսական իմաստները: Այստեղ էլ, ուրեմն, մենք ունենք այնպիսի հարաբերություն, ինչպես հնչույթաբանության մեջ. մենք վերը խոսել ենք արարատյան բարբառի խոսվածքների կ և ճ՛ (f և չ՛, գ և ջ՛) հնչյունների մասին. իբրև հնչյուններ դրանք բոլորովին տարբեր են

միմյանցից, բայց իբրև հնչույթ՝ մեկ են. դրանք մեկ հնչույթի երկու դրսևորումներն են, երկու ենթահնչույթները: Մեր ուղիղ հոլովի մեջ էլ միաձուլվել են ուրիշ լեզուների ուղղական և հայցական կոչվող հոլովների իմաստները, որոնք մեր լեզվում դարձել են այդ մեկ, ընդհանուր հոլովական իմաստի իրական դրսևորումները խոսքի մեջ, եթե կարելի է այսպես ասել, ենթիմաստները (аллосемы):

Մեր այս եզրակացությանը առերևույթ հակասում է այն փաստը, որ ուղիղ խնդրի պաշտոնում հանդես է գալիս նաև մի այլ բառաձև: Հիրավի, Մ. Աբեղյանի հակառակորդների փաստարկներից մեկն էլ այդ է հենց. չէ՞ որ ուղիղ խնդիրը հանդես է գալիս երկու ձևով. իբր առումով՝ ուղղականի ձևով, անձի առումով՝ տրականի ձևով: Հետևաբար հայցականը մի հոլով է, որ ունի երկու տարբեր ձև երկու առումների համար: Այս դեպքում էլ, ինչպես տեսնում ենք, պաշտոնի նույնության հիման վրա նույնացվում են հոլովները, ըստ որում այդպես պնդողների համար աներևակայելի է թվում մտածել, թե ուղիղ խնդիրը կարող է դրվել նաև մի ուրիշ հոլովով. մեկ որ ուղիղ խնդիր է, ապա նա պետք է լինի միայն հայցական հոլովով, որովհետև ուղիղ խնդիրը, այդ պատկերացման համաձայն, չի կարող դրվել որևէ ուրիշ հոլովով: Բայց մենք վերը տեսանք, որ հայցական հոլովը ուղիղ խնդրի միակ հոլովը չէ, ինչպես որ ուղղականն էլ ենթակայի միակ հոլովը չէ: Այս տեսակետից շատ ուշագրավ են անգլերենը և ֆրանսերենը: Անգլերենում, ինչպես ասացինք, գոյականները ունեն ընդհանուր հոլով և սեռացական հոլով. ուղիղ խընդիրը (ինչպես և ենթական) դրվում է ընդհանուր հոլովով. անձնական դերանունները նույնպես ունեն երկու հոլով, բայց ոչ թե ընդհանուր և սեռացական, այլ՝ ուղղական ու խնդրային (objective case), և ուղիղ խնդիրը դրվում է խնդրային հոլովով, ուրեմն՝ մի դեպքում ընդհանուր հոլովով, մյուս դեպքում՝ խնդրային: Ֆրանսերենը գոյականների հոլովում չունի. բայց անձնական դերանունների այսպես կոչված շեշտյալ ձևերն ունեն ուղղականի ձև և հայցական-տրականի ձև. և՛ ուղիղ խնդիրը, և՛ անուղղակի խնդիրը դրվում են այս երկրորդ ձևով: Եթե վերն ասածներին ավելացնենք նաև այդ և այդպիսի բազմաթիվ փաստեր, որոնք ընձեռում են տարբեր լեզուներ, ապա պարզ կլինի, որ այդ առարկությունը որևէ արժեք չունի: Մնում է միայն տեսնել, թե ուղիղ խնդրի այդ ձևը տրական հոլո՞վ է, թե ինչ-որ մի ուրիշ հոլով: «Հայցական» և «ուղղական» կոչված հոլովների նույնությունը հաստատելու համար

մենք բազմաթիվ կապակցություններ բերեցինք և դանազան փոխակերպություններով ցույց ավեցինք, որ տարբեր պաշտոնները պայմանավորված են ոչ թե քննվող բառաձևի իմաստով, այլ կապակցության մյուս անդամներով։ Այդ նույնը կատարենք նաև այստեղ։ Եթե մենք կարդանք որևէ տեքստում Բժիշկներին հանձնեցին *կապակցությունը, իբրև առանձին նախադասություն, ապա* բժիշկներին *կհամարենք ուղիղ խնդիր, որովհետև* հանձնեցին *ներգործական բայով արտահայտված ստորոգյալի համար նա միակ հնարավոր ուղիղ խնդիրն է. մենք, իսկապես, ունենք մի ավելի ընդարձակ նախադասություն, որի մեջ* բժիշկներին *ուղիղ խնդիր է և այդ հատկապես բացահայտվում է ամբողջ նախադասության մրտքից («Գերիներից այսօր միայն բժիշկներին հանձնեցին»)։ Բայց մենք ունենք նաև մի այլ նախադասություն՝ («Գերագույն սովետի նիստերի դահլիճում բժիշկներին հանձնեցին կառավարական պարգևներ») և այստեղ նույն* հանձնեցին *ստորոգյալի մոտ միևնույն* բժիշկներին *բառաձևը դարձել է հանգման ուղղակի խնդիր. ահա երկու նախադասությունների համառոտությունը.*

Բժիշկներին հանձնեցին։

Բժիշկներին հանձնեցին պարգևներ։

Ինչո՞վ է պայմանավորված պաշտոնի այդ փոխանցումը. նրանով, որ առաջինում բացի բժիշկներին *բառից ուրիշ ոչ մի անդամ չկա, որ հնարավոր լիներ համարել ուղիղ խնդիր, մինչդեռ երկրորդում կա* պարգևներ *բառաձևը, և միայն դա՛ կարող է համարվել ուղիղ խնդիր, որովհետև հակառակ դեպքում նա ավելորդ է դառնում։ Բայց սա նշանակում է, թե* Բժիշկներին հանձնեցին *կապակցության մեջ էլ, եթե հենց այդպես ավարտենք նախադասությունը,* բժիշկներին *կարող է լինել և՛ ուղիղ խնդիր, և՛ անուղղակի խնդիր, որը կարող է որոշվել խոսքի ընդհանուր բովանդակությունից։ Օրինակ.*

1. Այսօր պետք է հանձնեին գերիներին։ Սահմանի վրա երրանց խմբերի բաժանեցին ըստ կոչումների և ըստ մասնագիտությունների։ Բժիշկներին հանձնեցին։ Այնուհետև ուզում էին հանձնել հրամանատարներին, բայց հանձնաժողովը պահանջեց հանձնել նախ կանանց, անկախ կոչումից ու մասնագիտությունից...

2. Դահլիճում հավաքվել էին ուսուցիչներ և բժիշկներ։ Քեմում ծածանվում էր փոխանցիկ դրոշը։ Նա պետք է հանձնվեր մրցության մեջ հաղթողներին։ Բժիշկներին հանձնեցին։ Նրանք էին շահել մրցությունը։

Ինչպես տեսնում ենք, այս երկու հատվածներում, որոնք մենք համառոտել ենք ընդարձակ գրական ակնարկներից, բժիշկներին *բառի պաշտոնը որոշվում է միայն խոսքի ընդհանուր բովանդակությամբ, իսկ սա նշանակում է, թե այդ բառաձևը չունի այնպիսի հատկանիշ, որը որոշեր, թե երկու պաշտոններից որում է հանդես եկել։ Սրանից էլ հետևում է, թե մենք այդ երկու կապակցություններում էլ ունենք միևնույն հոլովը, որը, ըստ հանգամանքների, կարող է լինել ուղիղ խնդիր կամ անուղղակի խնդիր։ Բերված օրինակի մեջ* բժիշկներին *բառի պաշտոնների փոխանցման մեջ ունենք նույնպիսի հարաբերություն, ինչպիսին ունենք հետևյալ նախադասությունների մեջ՝ տրական հոլովաձևերում։* Նա մոտեցավ բնկերոջը։ Գնացք մոտեցավ խաղաքին։ *Այս օրինակներում* բնկերոջը *և* խաղաքին *տրական հոլովի բառաձևեր են. առաջինը անուղղակի խնդիր է, երկրորդը՝ տեղի պարագա, եթե մտածենք իրրև «ո՞ւր հասավ» հարցի պատասխան, և անուղղակի խնդիր, եթե մտածենք իրրև ինչի՞ն հասավ հարցի պատասխան։ Սրանց մեջ, ինչպես տեսնում ենք, վճռական դերը պատկանում է ոչ թե հոլովաձևին, որը հավասարապես կարող է հանդես գալ այդ պաշտոններով, այլ գոյականի բառային իմաստին։*

Այսպես, ուրեմն, մեր լեզվում ուղիղ խնդրի պաշտոնում հանդես են գալիս երկու հոլով՝ ուղիղ կամ ուղղական հոլովը և տրական հոլովը, և այստեղ լեզվաբանի համար ոչ մի տարօրինակ բան չկա։ Նախադասության կառուցվածքը կարելի է ներկայացնել իրրև բազմաթիվ ոլորտների կամ դիրքերի գումար. այդ ոլորտներից յուրաքանչյուրը հատուկ է մեկ շարահյուսության, և եթե տվյալ բառը պետք է հանդես գա տվյալ ոլորտում կամ դիրքում, ապա նա վերածվում է այն բառաձևին, որը այդ շարահյուսության բաղադրիչն է։ Այսպես, մի ոլորտ է ներգործող անուղղակի խնդրի ոլորտը, մի այլ ոլորտ՝ միջոցի անուղղակի խնդրինը, և եթե մենք որևէ բառ ուզենք գործածել այդ ոլորտներում, նա պետք է ստանա առաջինի համար բացառականի հոլովաձևը, երկրորդի համար՝ գործիականի։ Եթե տվյալ ոլորտում հավասարապես հանդես են գալիս երկու տարբեր հոլովներ, այլ կերպ ասած՝ եթե տվյալ պաշտոնով և տվյալ նույնական իմաստով կարող են գործածվել երկու տարբեր հոլովաձևեր, ապա՝ այդ դիրքում տեղի է ունենում այդ հոլովաձևերի հակադրության չեզոքացում։ Այդպիսի չեզոքացման համար մենք վերը բերեցինք տրականի և ներգոյականի օրինակը՝ տեղի պարագայի ոլորտում, քանի որ ուղիղ խնդրի ոլորտում (ու-

ղիղ խնդրի պաշտոնում՝ դիրքում), հանդես են գալիս ուղղական (=ուղիղ) հոլովը և տրականը, ապա՝ այստեղ ունենում ենք այդ երկու հոլովաձևերի հակադրության չեզոքացում: Այս դեպքում, սակայն, առաջ է գալիս մի այլ հակադրություն՝ անձի և իրի առումների հակադրությունը: Ըստ որում այս հակադրությունը չի բխում հիշյալ հոլովաձևերի հոլովական իմաստից, հաճախ չի բխում նաև գոյականի բառային իմաստից, այլ միայն գործառությունից, հոլովաձևերի կիրառությունից՝ խոսողի հայեցողությամբ: Իբրև ընդհանուր երևույթ կարելի է արձանագրել միայն, որ անձ ցույց տվող գոյականները որոշյալ լինելու դեպքում ուղիղ խնդիր են դառնում տրականով: Թե ինչպես է տրականը դարձել անձ ցույց տվող գոյականների ուղիղ խնդրի հոլով, հիանալի կերպով բացատրել է Մ. Աբեղյանը: Դա «սկսվել է դերանուններից և գրաբարում արդեն տեսնում ենք դրա սկիզբն անձնական դերանունների մեջ՝ ց–մեզ, ց–ձեզ, ց–ձեզ, որոնց նմանությամբ ասվել են և ինձ, սրան, դրան, նրան ևն, և ապա անձի անունները, երբ որոշ են: Բայց մի անգամ, որ տրականը անցել է հայցականի տեղ, դրա հետևանքն այն է լինում, որ նմանությամբ որոշ անձի անուններից այս կիրառությունն անցել է մասամբ և անորոշ անձի և կենդանիների անունների վրա, և այժմ անցնում է նույնիսկ անշունչ առարկաների վրա»[1]: Հաճախ անշունչ առարկայի անունը անձի առումով գործածելը թելադրվում է ենթական և ուղիղ խնդիրը տարբերելու անհրաժեշտությամբ. օրինակ՝ ընկուզենին ճնշել է թթենուն (*հ. Հուրունց*) նախադասության մեջ թթենուն գործածված է անձի առումով, որովհետև ընկուզենին ճնշել է թթենին ձևով երկիմաստություն կստացվեր: Այսպես, ահա, ուղղականի և տրականի հիերառությունը ուղիղ խնդրի պաշտոնում հանգեցնում է նրանց հոլովական իմաստների հակադրության չեզոքացման, բայց մյուս կողմից առաջ է բերում նոր քերականական իմաստի՝ անձի և իրի առման հակադրություն: Սրանով իսկ ստեղծվում է **երկու հոլովաձևերի** լրացուցիչ բաշխում (дополнительная дистрибуция). *մեկը՝ ուղղականը, հանդես է գալիս իրի առման դիրքում, իսկ տրականը՝ անձի առման դիրքում: Նրանք իրենց հոլովական իմաստներով այդ դիրքերում չեն հակադրվում իրար, բայց հակադրություն են ստեղծում շարահյուսական կարգի երկու միավորների՝ անձի և իրի քերականական իմաստների միջև՝ դառնալով այդ կարգի արտահայտման միջոցը: Ըստ այսմ, անձի և իրի առումը, որպես շա-*

1 *Մ. Աբեղյան, Աշխարհաբարի հոլովները, էջ 72:*

բահյուսական կարգ, հատուկ է ուղիղ խնդրին, և գործ չունի ձևաբանական մակարդակի հետ. իսկ սա նշանակում է, թե նա չի կարող հիմք հանդիսանալ հայցական հոլովի գոյությունը հաստատելու համար։

Մեր ասածներից արդեն բխում է ինքնին, որ մենք ընդունում ենք տրական հոլովի գոյությունը։ Բայց, ինչպես գիտենք, Մ. Աբեղյանը նույնպես ընդունում է տրական հոլով և դուրս գցում սեռականը։ Իրավացի՞ է, արդյոք, նա, թե՝ ոչ։ Մեր կարծիքով լեզվի օբյեկտիվ տվյալները դա չեն արդարացնում։ Ընդունելով, որ սեռական հոլով չկա, Մ. Աբեղյանը անձնական և ցուցական դերանունների իմ, fn, մեր, ձեր, սրա, դրա ևն ձևերն էլ չի ընդունում իբրև սեռական և համարում է ստացական ածականներ։ Այս մոտեցումը չի արդարանում։ Գրաբարում անձնական ստացականների սեռականը և ստացական դերանունները նույն ձևն ունեն։ Դրանց տարբերությունը պայմանավորված է միայն համաձայնությամբ. եթե դերանվանական ձևը հոլովով և թվով համաձայնում է գոյականին, ապա՝ ունենք ստացական (թագաւորացն մերոց), իսկ եթե չի համաձայնում, կարող ենք համարել թե՛ մեկը և թե՛ մյուսը (հմմտ. Ի մեր թագաւորաց անսովոր ձևը)։ Լատիներենում ստացականների և անձնականների սեռականի որոշակի տարբերություն կա կիրառության մեջ. խնդրի սեռականի համար (genitivus obiectivus) *գործածվում է անձնականների սեռական հոլովը (օր.* amor patris *«Հոր սերը=սեր առ Հայր»,* amor mei= *«իմ սերը=սեր առ իս»), իսկ ենթակայի սեռականի համար* (genitivus subiectivus) *գործածվում են ստացականները (օր.* amor patris *«Հոր սերը (մեկի նկատմամբ)»,* amor meus *«իմ սերը (մեկի նկատմամբ)» ևն)*[1]*։ Գրաբարում այսպիսի տարբերակում չունենք, բայց մի ուրիշ դեպքում կա ավելի որոշակի տարբերություն. անցյալ դերբայի և նրանից կազմված բաղադրյալ բայաձևի հետ գործածվում է անձնականների սեռականը (իմ տեսեալ, նորա եկեալ է), բայց ոչ երբեք՝ ստացականները։ Արդ, այս գործածությունը ենթակայի և ոչ լրացման պաշտոնում մենք կարող ենք դիտել իբրև ինքնուրույն դեր, իսկ որոշչի կամ հատկացուցչի դերը՝ կախյալ դեր։ Ածականների համաձայնեցման աստիճանական վերացման պատմական գործընթացում ինչպես ածականները, այնպես էլ ստացականները զրկվեցին հոլովումից։ Սա հանգեցրեց անձնական դերանվան սեռականի և ստացական դերանվան նույնացման։ Այդ*

[1] E. C. Woodcock, A new Latin syntax, London, 1959, p. 57.

նույնացման ժամանակ ո՞րը պահպանվեց՝ սեռակա՞նը, թե սոցցականը. սա որոշել անկարելի է, որովհետև դրանք ձևով արդեն նույնական էին։ Բայց այն փաստը, որ սեռականն էր ինքնուրույն գործածության ձևը, պետք է մտածել, որ դա էլ պահպանվեց։ Սակայն սա ոչ մի կարևորություն չունի. արդի հայերենի համար իմ, ին են սեռական կամ սոցցական լինելը պետք է որոշել համամանակյա մոտեցումով՝ ելնելով մեր հոլովման համակարգից։ Մ. Աբեղյանը սեռականը հանելու համար ունի նաև այս փաստարկը. բացառական, գործիական և ներգոյական հոլովները տրականից են կազմվում, իսկ դա նշանակում է, թե սեռական հոլով չկա, այլապես՝ կկազմվեին սեռականից։ Այս փաստարկը ևս ոչ մի արժեք չունի. գրաբարում էլ, թեև ընդունված է ասել, թե բացառականն ու գործիականը սեռականից են կազմվում, իրականում այդպես չէ. այն դեպքերում, երբ տվյալ բառը տրականի համար ունի իր առանձին ձևը, բացառականը կազմվում է տրականից. այսպես՝ ես, իմ, ինձ, բցո. յիսէն (<յինձնէն), սոցցական՝ մեր, մերոյ, մերում, բցո. մեռմէ, այդպես և՝ ձիս, ձնոյ, տր. ձնում, բցո. ի ձմէ, աչ, աչոյ, աչում, բցո. յաչմէ և այլն։

Այժմ անցնենք հոլովաձևերին և նրանց գործառության։ Գոյականների սեռական և տրական հոլովները անորոշ առումով ունեն միևնույն ձևը. սա հանգեցնում է այն բանին, որ նրանք հավասարապես կարող են հանդես գալ տարբեր պաշտոններում, և այդ պաշտոնները որոշվում են ոչ թե իրենցով, այլ կապակցության զանազան միջոցներով։ Եթե այդպես լիներ միշտ, ապա՝ մենք հիմք չէինք ունենա երկու հոլով ընդունելու։ Բայց այդպես չէ։ Մենք առայժմ մի կողմ կթողնենք դերանունները, որովհետև նրանց սեռականն էլ, ինչպես տեսանք, Մ. Աբեղյանը մերժում է։ Ուստի առնենք գոյականները. ինչպես բազմիցս ասել ենք, տվյալ ձևը տարբեր միավորներ համարելու համար պետք է նկատի ունենալ ոչ միայն նրա իմաստը և դերը, այլև գործառությունը և կապակցելիությունը։ Արդ, սեռականը որոշյալ առման համար թույլ դիրք է, նա որոշիչ հոդ չի ստանում, ինչպես և՝ բացառականը, գործիականն ու ներգոյականը, մինչդեռ տրականը ստանում է. դա շատ կարևոր ձևաբանական հատկանիշ է, և հենց միայն սրանով կարելի է հաստատել, որ սեռականն ու տրականը տարբեր հոլովներ են, թեև միևնույն վերջավորությամբ։ Սակայն այստեղ էլ հանդես է գալիս մի ուրիշ հարց. արդյոք չի՞ կարելի մտածել, թե նույն տրական հոլովը մի դիրքում հոդ ստանում է, իսկ մի ուրիշում չի

ստանում։ Մ. Աբեղյանը հենց այդպես էլ մտածում է. «Ինչպես մյուս հոլովները գործածվելով իբրև վերադիր ածական՝ և հոդ չեն առնում, դրանց նմանությամբ և 2-րդ հոլովը իբրև վերադիր դադարել է հոդ առնելուց»[1]։ Թե հոդ չստանալը վերադիր լինելուց է, թե ոչ, այդ մասին մենք խոսել ենք. տրականն էլ հոդ չի ստանում հետադրությունների հետ, բայց նա վերադիր ածական չէ։ Բայց այժմ դա մեզ չի հետաքրքրում, այլ այն, թե անհոդ և հոդավոր ձևերը տարբե՞ր հոլովներ են։ Որպեսզի կանխակալ կերպով հոլովների անուններ չտանք, պայմանական կերպով որոշիչ հոդ չստացող ձևը կոչենք Ա ձև, ստացողը՝ Բ ձև։ Արդ, ունենք հետևյալ նախադասությունները.

Մոր կարոտը տանջում է նրան։
Մորը կարոտ մնաց։
Որբին ընկեր եղիր, ծերին՝ ապավեն։
Որբի ընկերը եղիր, ծերի՝ ապավենը։
Շահենի ծանոթը լճի մոտ զբոսնում է։
Շահենին ծանոթ մարդը լճի մոտ զբոսնում է։
Շահենի ծանոթ մարդը լճի մոտ զբոսնում է։

Այս նախադասությունների մեջ ունենք մայր, որբ, ծեր, Շահեն բառերը Ա և Բ ձևերով. պետք է իմանալ, նույն հոլո՞վն են դրանք, թե տարբեր հոլովներ են։ Մ. Աբեղյանը՝ այդ կարգի օրինակներ բերելով, զանազան փոխակերպությունների միջոցով (օր. Իմ ծանոթ տիկնոջը = տիկնոջը, որ ինձ ծանոթ է)[2] տրամաբանական դատողություններով բոլորը հանգեցնում է տրականի։ Բայց այդ փոխակերպումները միակ հնարավորը չեն և հետևաբար, սուբյեկտիվ են. իմ ծանոթ տիկնոջը կարելի է փոխակերպել՝ ա) տիկնոջը, որ ինձ ծանոթ է = տիկնոջը, որ ինձ ճանաչում է, բ) տիկնոջը, որին ես ծանոթ եմ = տիկնոջը, որին ես ճանաչում եմ։ Քանի որ հայտնի չէ, թե այդ փոխակերպումներից որն է ճիշտը, ապա երկու փոխակերպությունն էլ կամայական են, ըստ որում չի բացառվում նաև երրորդ փոխակերպությունը[3]։ Ահա այդ կամայականությունից խուսափելու և օբյեկտիվ տվյալներ ունենալու համար դիմենք

---

1 Մ. Աբեղյան, նույն տեղում, էջ 41։

2 Նույն տեղում, էջ 28։

3 Համանման նրա ծանոթ տիկնոջը կապակցությունը կարելի է փոխակերպել՝ ա) տիկնոջը, որ նրան ծանոթ է, բ) տիկնոջը, որին նա ծանոթ է, գ) նրա տիկնոջը, որ ծանոթ է (որին ճանաչում ենք)։

ավելի վստահելի միջոցի՝ փոխարկման մեթոդին։ Հիշյալ բառերը մենք կարող ենք փոխարինել դերանվանական ձևերով.

1. *Քո կարոտը տանջում է նրան։*
2. *Քեզ կարոտ մնաց։*
3. *Ինձ ընկեր եղի՛ր, նրան՝ ապավեն։*
4. *Իմ ընկերը եղիր, նրա՝ ապավենը։*
5. *Նրա ծանոթը լճի մոտ զբոսնում է։*
6. *Նրան ծանոթ մարդը լճի մոտ զբոսնում է։*
7. *Նրա ծանոթ մարդը լճի մոտ զբոսնում է։*

Ինչպես տեսնում ենք, այս փոխարկումների մեջ նախորդների Ա ձևին համապատասխանում են fn, իմ, նրա *ձևերը, իսկ Բ ձևին՝* fեզ, ինձ, նրան *ձևերը։ Քանի որ այս փոխարկումները չեն փոխում նախադասության կառուցվածքը և հակադրություն չեն ստեղծում փոխարկիչների շարահյուսական դերի կամ պաշտոնի միջև, ապա նրանք նույն պաշտոնն են կատարում։ Գիտենք, որ Հենց Մ. Աբեղյանի պնդումով՝* ինձ, fեզ, նրան *անձնական դերանունների տրականի հոլովաձևն են. պարզ է, որ դրանցով փոխարինված բառաձևերն էլ տրական են։ Բայց սա արդեն մի այլ եզրակացություն էլ է բերում.* իմ *և* ինձ, fn *և* fեզ, նրա *և* նրան *տարբեր ձևեր են, որոնցից առաջիններն Մ. Աբեղյանը համարում է ստացական ածականներ։ Ընդունենք, թե այդպես է։ Բայց այդ դեպքում ի՞նչ են* մոր, որբի, Շահենի *(Ա) ձևերը. դարձյա՞լ ստացական ածականներ։ Բնականաբար՝ ոչ։ Դրանք փոխարկվում են* իմ, fn, նրա *ձևերով, ուրեմն՝ տրական չեն, բայց գոյականի հոլովական ձև են։ Հետևությունը պարզ է.* մոր, որբի, Շահենի *և* իմ, fn, նրա *մեկ հոլովաձև են, իսկ* մորը, որբին, Շահենին *և* ինձ, fեզ, նրան *մի այլ հոլովաձև. երկրորդները, ինչպես Մ. Աբեղյանն էլ ընդունում է, տրականի հոլովաձևն են։ Պարզ է, որ առաջիններն էլ սեռականի հոլովաձևն են։ Եվ եթե* մոր, որբի, Շահենի *ձևերը սեռական են, ապա՝* իմ, fn, նրա *նույնպես սեռական են և ոչ՝ ստացական դերանուն կամ ածական։ Ուշագրավ են* Շահենին ծանոթ մարդը *և* Շահենի ծանոթ մարդը *կապակցությունները, որոնց մեջ տրականի և սեռականի ձևերը փոխարկում են միմյանց։ Արտաքուստ թվում է, թե այստեղ էլ ունենք երկու հոլովաձևերի այնպիսի նույնություն, ինչպես, ասենք,* ջուրը խմեց *և* ջուրը խմվեց *կապակցությունների մեջ, բայց իրականում այդպես չէ։ Այս երկու օրինակներում* ջուրը *բառի պաշտոնը որոշվում է* խմեց *և* խմվեց *բայաձևերով. ինչպես կա-*

պակցության կառուցվածքը, այնպես էլ նրա անդամների հարաբերությունը փոխողն, ուրեմն, բայաձևն է, մինչդեռ սեռականի և տրականի ձևերի համար այդպես չի կարելի ասել. ընդհակառակն, այս դեպքում կապակցության կառուցվածքի և նրա անդամների փոխհարաբերության փոփոխությունը պայմանավորված է Շահենի և Շահենին ձևերով։ Որպեսզի դա ավելի պարզ լինի, վերցնենք երկու կապակցությունները առանց առաջին անդամի. (Շահենին) ծանոթ մարդը և (Շահենի) ծանոթ մարդը. երկուսն էլ կլինեն ծանոթ մարդը. ունենք որոշչի և որոշյալի կապակցություն։ Եթե այդ կապակցությանն ավելացնենք Շահենի ձևը, կունենանք համադասական ծավալում, այսինքն՝ Շահենի և ծանոթ բառաձևերը միմյանց նկատմամբ համադասական հարաբերության մեջ են, նրանցից մեկը մյուսի լրացումը չէ, երկուսն էլ հավասարապես լրացումն են մարդը բառի, մեկը՝ որոշիչ, մյուսը՝ հատկացուցիչ. սխեմատիկ ձևով այդ երկանդամ ու եռանդամ կապակցությունների անդամների հարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

1. Ծանոթ մարդը։ 2. Շահենի (ծանոթ մարդը)։

Անդամների այս հարաբերությունը համապատասխանում է մեր հատկացուցիչ և հատկացյալի կապակցությանը, որ ներկայացնում է շրջանակային կառուցվածք, որի երկու անդամների միջև կարող ենք գետեղել ուզած թվով լրացումներ, եթե նրանք հատկացուցչին են վերաբերում։ Օրինակ՝

Մեր fաղաfը. մեր գեղեցիկ fաղաfը. մեր այս գեղեցիկ fաղաfը. մեր այս բազմադարյան գեղեցիկ fաղաfը. մեր հանրապետության այս հնամենի, բայց միշտ նոր ու գեղեցիկ fաղաfը են։

Այլ է դառնում ծանոթ մարդը կապակցության կառուցվածքը և անդամների հարաբերությունը, երբ ավելացնում ենք Շահենին բառաձևը. այս դեպքում ունենում ենք ստորադասական ծավալում, ըստ որում Շահենին լրացումն է (խնդիր) ծանոթ-ի, իսկ ծանոթ-ը՝ մարդը բառի։ Սխեմատիկ ձևով այդ հարաբերությունը կարելի է արտահայտել այսպես. 1. Ծանոթ մարդը, 2. Շահենին ծանոթ մարդը կամ (Շահենին ծանոթ) մարդը։

Ինչպես տեսնում ենք, այստեղ Շահենի և Շահենին բառաձևերն են փոխում կապակցության կառուցվածքը, իրե՛նք՝ այդ ձևերն են որոշում իրենց պաշտոնը և ոչ թե կապակցության մյուս

անդամները, ինչպես ենթակայի և ուղիղ խնդրի դեպքում էր: Այս տարբերությունը ավելի պարզորեն ցուցադրելու համար վերցնենք երկու ուրիշ կապակցություններ:

1. Նամակը տվեցին ինձ:

2. Նամակը տրվեց ինձ:

Առաջինում նամակը ուղիղ խնդիր է, երկրորդում՝ ենթակա, և դա պայմանավորված է միայն տալ բայի սեռով. նույն բառաձևը հանդես է գալիս տարբեր պաշտոններով և ո՛չ միայն կապակցության կառուցվածքը, այլև ի՛ր պաշտոնը ինքը չի որոշում, այլ ստորոգյալը: Ծավալենք այդ կապակցությունը **գրած** *և* **գրված** *բառաձևերով.*

1. Գրած (գրված) նամակը տվեցին ինձ:

2. Գրած (գրված) նամակը տրվեց ինձ:

Երկու բայաձևերն էլ հավասարապես դրվում են թե՛ խնդրի և թե՛ ենթակայի վրա. այստեղ էլ ենթական կամ խնդիրը ավելացված բառի նկատմամբ ունեն տարբեր հարաբերություններ. նամակը ենթական գրած բառաձևի հետ կողմնակի խնդրի հարաբերություն ունի, գրված բառաձևի հետ՝ կողմնակի ենթակայի, թեև, իհարկե, երկու դեպքում էլ ունենք որոշչի և որոշյալի կապակցություն. այդ հարաբերությունը կարելի է արտահայտել այսպես.

1. Գրած նամակը տվեցին ինձ:

2. Գրված նամակը տվեցին ինձ:

Նույնպես և երկրորդ կապակցության ենթական.

1. Գրած նամակը տրվեց ինձ:

2. Գրված նամակը տրվեց ինձ:

Ինչպես տեսնում ենք, նամակ բառն «անտարբեր» է ավելացվող որոշչի նկատմամբ, և ինքը չի որոշում ստեղծվող ներքին հարաբերությունը:

Այժմ ծավալենք այդ կապակցությունները **Տիգրանի** *և* **Տիգրանին** *բառաձևերով.*

1. Տիգրանի գրած նամակը տվեցին ինձ:

2. Տիգրանի գրված (?) նամակը տվեցին ինձ:

3. Տիգրանին գրած նամակը տրվեց ինձ:

4. Տիգրանին գրված նամակը տրվեց ինձ:

Սրանցից երկրորդը կարծես թե բացառվում է, և թվում է, թե Տիգրանի *բառաձևը չի կարող այդ կապակցության մեջ հանդես գալ. եթե* Տիգրանի *փոխարեն դնենք ընկերոջ բառը, կարող ենք ասել մի ընկերոջ գրված նամակը*[1]*, եթե դա էլ փոխարինենք դերանվանական ձևով, կունենանք* իզ (ինձ, նրան *ևն) գրված նամակը և* ֆո (իմ, նրա *ևն) գրված նամակը, որ կարելի է դիտել որպես զուգահեռ նրա մաշված (նոր, թանկագին ևն) վերարկուն կապակցության և երկուսի հարաբերությունը կներկայանա այսպես.*

1. Նրան գրված նամակը, որի զուգահեռն է (Շահենին ծանոթ) մարդը։

2. Նրա գրված նամակը կամ նրա (գրված նամակը), որի զուգահեռն են. Շահենի (ծանոթ մարդը), նրա (մաշված վերարկուն), նրա (նոր վերարկուն) և այլն։

Այսպիսով, Տիգրանի *գրած նամակը տվեցին ինձ կառուցվածքը դառնում է տեսականորեն հնարավոր, ըստ որում* Տիգրանի *հավասարապես և՛ տրական է, և՛ սեռական, որովհետև հանդես է գալիս թույլ կամ չեզոքացման դիրքում (անորոշ առում)։*

Մյուս կապակցությունների (1, 2, 4) անդամների հարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

(Տիգրանի գրած) նամակը տվեցին ինձ։ (1)

(Տիգրանին գրած) նամակը...(3)

(Տիգրանին գրված) նամակը...(4)։

Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ Տիգրանի *և* Տիգրանին *բառաձևերն են որոշում հարաբերությունները։ Եթե այժմ* Տիգրանի *և* Տիգրանին *ձևերը փոխարկենք նրա և նրան ձևերով, ապա՝ այդ երեք կապակցություններում կունենանք.*

---

1 *Քանի որ այս կապակցությունը կանոնական է, ապա պոտենցիալ կերպով չի բացառվում նաև* Տիգրանի *գրված նամակը որպես կառուցվածք. չէ՞ որ կարող ենք ասել մի ինչ-որ Տիգրանի գրված նամակը, որի մեջ Տիգրանի կարող է լինել և՛ տրական, և՛ սեռական։ Սակայն* Տիգրանի *գրված նամակը տվեցին ինձ միանգամայն կանոնավոր նախադասություն կդառնա, եթե* Տիգրանի *բառաձևը բուժով անջատենք գրված-ից (Տիգրանի՝ գրված նամակը տվեցին ինձ)։*

Նրա գրած նամակը։ (1)
Նրան գրած նամակը։ (3)
Նրան գրված նամակը։ (4)

Վերջապես, եթե փորձենք հանել գրած *և* գրված *բառերը, ապա բոլոր չորս կապակցությունները կվերածվեն մեկի՝*

Տիգրանի նամակը տվեցին ինձ։

Հարաբերությունները բոլորովին փոխվեցին, բոլորի համար միայն մեկ ձևը հանդես եկավ, իսկ մյուսը բացառվեց, որովհետև ունենք մեկ ոլորտ՝ գոյականի կապակցությունը գոյականի հետ, որ է՝ հատկացուցչի և հատկացյալի կապակցություն, իսկ դա սեռականի ոլորտն է։

Վերը բերված օրինակների մեջ մոր կարոտը *և* մորը կարոտ, ծերի ընկերը *և* ծերին ընկեր *կապակցությունների մեջ կա նաև մի այլ, շատ կարևոր իրողություն. այդ զույգերից առաջիններում* մոր, ծերի *անհոդ են, կարոտը, ընկերը՝ հոդով, երկրորդների մեջ, ընդհակառակն,* մորը, ծերին *հոդով են, կարոտ, ընկեր՝ անհոդ։ Պատճառը միանգամայն պարզ է. առաջիններում ունենք սեռական հոլով, որը կապակցվում է գոյականի հետ, որ կարող է հոդ ստանալ, իսկ երկրորդներում հոդը* մոր, ծերի *ձևերը տրական է դարձնում, որ չի կարող կապակցվել գոյականի հետ. նրանք կապվում են* կարոտ, ընկեր *բառերին, որպես ստորոգյալի բաղադրիչների, ստորոգելիական վերագիրների հետ։ Առաջինների հոդը բացառում է երկրորդներինը, և հակառակը։ Տեսականորեն կարելի է ընդունել* մորը կարոտը *հաջորդականությունը, բայց այս դեպքում միմյանց հաջորդող այդ բառաձևերի միջև քերականական կապ չի լինի։ Մենք կարող ենք ասել* Մորը կարոտը նրա տանջում է *(= Մորը տանջում է նրա կարոտը), անսովոր, բայց ոչ բացառվող շարադասությամբ, որ միանգամայն թուլլատրելի է բանաստեղծական խոսքի մեջ, և* մորը *բառաձևը թեև նախորդում է* կարոտը *բառաձևին, սակայն ոչ թե նրա, այլ ստորոգյալի հետ է կապվում։ Այսպիսով, տեսականորեն հնարավոր են դառնում, օրինակ,* ընկերոջ ելույթը *և* ընկերոջը ելույթը, ուսանողի գիրքը *և* ուսանողին գիրքը *հաջորդականությունները, որոնցից* ընկերոջ, ուսանողի *ձևերը կարող են փոխարկվել և՛* իմ *(քո, մեր, ձեր ևն), և՛* ինձ *(քեզ, մեզ, ձեզ ևն) ձևերով, մինչդեռ* ընկերոջը, ուսանողին՝ *միայն և միայն* ինձ *(քեզ, մեզ, ձեզ ևն) ձևով, ըստ որում առաջին դեպքում ունեցած քերականական կապը խզվում է։ Երկու հաջորդականությունների համար կարելի է բերել հետևյալ ասույթները.*

1. Մի ընկերոջ վերարկուն դուր չեկավ (=ա) Մի ընկերոջ (=իմ, fn) վերարկուն դուր չեկավ, բ) Մի ընկերոջ (ինձ, fեզ) վերարկուն դուր չեկավ, *որոնցից առաջինը կարելի է ծավալել միայն խնդիր տրականով (Մի ընկերոջ վերարկուն դուր չեկավ մեզ), իսկ երկրորդը՝ միայն հատկացուցիչ սեռականով (Մի ընկերոջ իմ վերարկուն դուր չեկավ)։*

2. Ընկերոջը (=ինձ, fեզ) վերարկուն դուր չեկավ, *որը կարող է ծավալվել միայն հատկացուցիչ սեռականով (ընկերոջը իմ վերարկուն դուր չեկավ)։*

Հոդը, այսպիսով, սեռականի և տրականի համանուն հոլովաձևը տարբերակում, վերածում է միայն տրականի, այլ կերպ ասած, ուր որ սեռականի և տրականի համանուն ձևի վրա կա հոդ, ունենք միայն և միայն տրական հոլով և նրան հատուկ շարահյուսական հարաբերություններ ու պաշտոններ։ Դրանով էլ պայմանավորված է այն, որ սեռականի շարահյուսական դիրքում անկարելի է տրականի հոդավոր ձև դնել, ինչպես որ անկարելի է նաև ինձ, fեզ ևն տրականները դնել. օրինակ՝ Ընկերոջ ելույթը մեզ գոհացրեց առաջին ընկերոջ հատկացուցիչը չենք կարող փոխարկել ընկերոջը, ինչպես և ինձ, fեզ ևն ձևերով, առանց իմաստի ու շարահյուսական կառույցի փոփոխության։ Քանի որ այդ փոխարկումը առաջ է բերում իմաստի և կառույցի հակադրություն (ընկերոջ ելույթը մեզ գոհացրեց—ընկերոջը ելույթը գոհացրեց), ապա պարզ է, որ ունենք տարբեր ձևաբանական միավորներ՝ տարբեր հոլովաձևեր։

Այս վերլուծություններից բխում են հետևյալ դատողությունները.

1. *Դերանունների իմ, fn, ձեր ևն և ինձ, fեզ, ձեզ ևն ձևերը տարբեր ձևեր են, որոնցից առաջիններն, ըստ Մ. Աբեղյանի, ստացականներ են, երկրորդները՝ տրական հոլով։*

Ենթադրենք թե այդպես է։

2. *Քանի որ վերը բերված օրինակների մեջ մորը, որբին, Շահենին ձևերը փոխարկվում են ինձ, fեզ, նրան ձևերով, իսկ մոր, որբի, Շահենի ձևերը՝ իմ, fn, նրա ձևերով, ապա՝ մորը, որբին, Շահենին և մոր, որբի, Շահենի նույնպիսի տարբեր ձևեր են, ինչպիսիք են անձնական և ցուցական դերանունների տրականը և «ստացականները»։*

3. *Եթե ինձ, fեզ, նրա տրական հոլով են, ապա՝ տրական են նաև մորը, որբին, Շահենին, և եթե իմ, fn, նրա «ստացականներ»*

են, ապա՝ «ստացականներ» են նաև մոր, որբի, Շահենի բառաձևերը։

4. Գոյականների «ստացականներ» բառաձևը, որն արտահայտում է պատկանելության, հատկացման, վերագրման, վերաբերության են մասնավոր իմաստներ, ունի մեկ հոլովական ընդհանուր իմաստ, որը կազմում է ուրիշ լեզուների սեռական կոչվող հոլովի իմաստը։ Եթե այդպես է, ապա՝ բերված օրինակների մոր, որբի, Շահենի «ստացականները» գոյականի սեռական հոլովի բառաձևն են։

5. Քանի որ մոր, որբի, Շահենի բառաձևերը սեռականի հոլովաձև են, ապա՝ իմ, ֆո, ճրա ևն դերանվանական ձևերն էլ սեռական են և ոչ ստացական ածականներ կամ դերանուններ։

Հետևաբար՝ մեր գրական լեզուն ունի սեռական և տրական, իբրև առանձին հոլովներ։

Ինչպես վերն ասել ենք, բոլոր այն դեպքերում, երբ այս կամ այն պատճառով չեզոքանում է որոշյալի կամ անորոշի առումը, ձևով նույնանում են սեռականն ու տրականը, և առաջանում է դրանց հակադրության չեզոքացում։ Այդ չեզոքացումը բացարձակ է անորոշ առումով երկու հոլովների բոլոր գործածությունների համար, ուստի և անորոշ առումը թույլ կամ չեզոքացման դիրք է սեռականի ու տրականի համար։ Մ. Աբեղյանը հոդ չտանալը կապում է գոյականի վերադիր լինելու հետ, և դա հիմնավորելու, ապա՝ դրա օգնությամբ էլ սեռականի գոյությունը բացատրելու համար՝ Երեխաները մի հասակի են, հագուստը նոր ձևի է ևն կապակցությունները նույնանում են սա էլ ֆո հասակին է, սա էլ ֆո խելքին է կապակցությունների հետ[1], իսկ մասին կապը դիտում է իբրև ոչ իսկական հետադրություն[2]։ Բայց դրանց հետ համաձայնել չի կարելի։ Երեխաները մի հասակի են, Հագուստը նոր ձևի է և նման կապակցությունների մեջ ունենք որոշիչ սեռական (նոր ձևի = նորաձև, մի հասակի = հասակակից), մինչդեռ սա էլ ֆո հասակին է, սա էլ ֆո խելքին է և նման կապակցությունների մեջ տրական, որ Վ. Առաքելյանը կոչում է «նմանության կամ համապատասխանության տրական»[3]։ Ինչ վերաբերում է մասին կապին, ապա նա մեր արդի լեզվի մեջ իսկական կապ է և նախկին գոյականական իմաստի հետքն

1 Մ. Աբեղյան, նույն տեղում, էջ 52—53։

2 Նույն տեղում, էջ 30։

3 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, էջ 99։

էլ չի դրսևորում։ Իրողությունն այն է, որ տրականը որպես կապի խնդիր հոդ կարող է ստանալ ետադաս լինելու դեպքում (նախադրությունների հետ). հոդ սովորաբար չի ստանում նախադաս լինելու դեպքում (ետադրությունների հետ), թեև սա էլ բացարձակ կանոն չէ (համմտ. նրա կամքին հակառակ, ներս մտնելուն պես ևն)։ Ըստ այսմ, գոյականների սեռական և տրական հոլովների թույլ դիրք է դառնում նաև կապական խնդրի դիրքը. սրա հետևանքն այն է լինում, որ հաճախ դժվար է որոշել, թե ավյալ կապը սեռակա՞ն, թե տրական է պահանջում։ Սրանից էլ բխում է նաև այն, որ մի շարք ետադրությունների խնդրառությունը որոշելիս գոյականների համար դնում են սեռական, իսկ առաջին ու երկրորդ դեմքի անձնանունների համար՝ տրական։

Այսպիսով՝ ունենք սեռական և տրական հոլովների միատեսակ վերջավորություն գոյականների համար. այն բանի հետևանքով, որ սեռականը հոդ չի ստանում, տրականի վրա որոշիչ հոդը հանդես է գալիս իբրև տարբերակիչ հատկանիշ, որով ստանում ենք մի կողմից՝

սեռ. Ծառի, այգու, եղբոր, աղջկա ևն
տր. Ծառի, այգու, եղբոր, աղջկա ևն

մյուս կողմից՝

սեռ. Ծառի, այգու, եղբոր, աղջկա ևն
տր. Ծառին, այգուն, եղբորը, աղջկան ևն։

Այս երկրորդ շարքն էլ, ահա, որոշյալ առումը, ներկայացնում է սեռականի ու տրականի հակադրության ուժեղ դիրքը. հակադրության անդամներից նշույթավորն է տրականը, ուստի և չեզոք դիրքում իբրև գերբառաձև հանդես է գալիս սեռականը։ Ձևաբանական այս չեզոքացումը վերանում է շարահյուսական մակարդակում՝ շարահյուսական միջոցներով, բացի հետադրությունների հետ կազմվող կապական խնդրի դիրքից, որի մեջ չեզոքացումը պահպանվում է։ Անձնական ու ցուցական դերանունների սեռականը և տրականը ունեն տարբեր ձևեր, երկուսն էլ նշույթավոր են և ձևաբանական չեզոքացում չունեն։

Եվ այսպես՝ ժամանակակից հայերենն ունի վեց հոլով.

1. *Ուղղական*
2. *Սեռական*
3. *Տրական*
4. *Բացառական*

5. Գործիական։
6. Ներգոյական։

3. ՀՈԼՈՎՆԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Նախորդ հատվածում մենք խոսեցինք հոլովների իմաստների և դրանց մասնավոր դրսևորումների կամ իրացումների մասին։ Այն հանգամանքը, որ հոլովները խոսքի մեջ հանդես են գալիս բազմաթիվ կոնկրետ իմաստներով, որոնք կապվում են բառի շարահյուսական պաշտոնի և հարաբերությունների հետ, հանգեցրել է, ինչպես տեսանք, հոլովական իմաստների ու շարահյուսական պաշտոնների նույնացման։ Սա էլ իր հերթին պատճառ է դարձել այն բանի, որ ձևաբանության մեջ հոլովների իմաստները բնորոշվել են խոսքի կազմում նրանց ունեցած առավել սովորական, հետևաբար և՝ հիմնական պաշտոնով (օր. սեռականը հատկացուցչի իմաստն է, հայցականը ուղիղ խնդրի իմաստն է ևն), իսկ հոլովների շարահյուսության մեջ («Հոլովների կիրառությունները») յուրաքանչյուր կոնկրետ հարաբերություն դիտվել է որպես մեկ իմաստ։ Ստեղծվել է ավանդական, այսպես կոչված, «ատոմիստական» մոտեցումը հոլովական իմաստների բնութագրմանը, որը ըստ էության բացատում է տվյալ հոլովի ընդհանուր իմաստը։ Այսպիսի վիճակ ստեղծվել է գրեթե բոլոր քիչ թե շատ ուսումնասիրված լեզուների, այդ թվում նաև հայերենի հոլովների նկարագրության մեջ։ Այսպես, օրինակ, Մ. Աբեղյանը, որ սեռական հոլովի գոյությունը չի ընդունում, շարահյուսության մեջ[1] դնում է սեռականի 11 նշանակություն, տրականի 6 նշանակություն, որոնցից յուրաքանչյուրն իր ստորաբաժանումներն էլ ունի. Վ. Առաքելյանը[2] սեռականի 18 մասնավոր իմաստ է դնում, տրականի՝ 28 և այլն։ Այսպիսի նկարագրության մեջ դրականն այն է, որ վեր են հանվում հոլովների բոլոր կիրառություններն ու մասնավոր իմաստները։ Սակայն մյուս կողմից էլ դրա թերությունն այն է, որ ուշադրությունը բևեռելով առանձին, մասնավոր իմաստների ու կիրառությունների վրա, մի կողմ է թողնվում ընդհանուրը և, որ գլխավորն է, չեն բացահայտվում այդ առանձինների կառուցվածքային յուրահատկություններն ու ընդհանրությունները։ Հենց այս հանգամանքն է, որ նորագույն

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965, էջ 419—448։

2 Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, էջ 70—126։

շրջանում անհրաժեշտություն է առաջացրել հոլովների ու նրանց իմաստների ընդհանուր դասակարգման և դրա տեսական սկզբունքների մշակման։ Մենք նկատի ունենք Լ. Ելմսլևի, Յու. Կուրիլովիչի, Ռ. Յակոբսոնի, Հ. Սյորենսենի, Ա. դե Գրոոտի, Ա. Իսաչենկոյի և այլոց աշխատությունները, որոնց մեջ արժեքավոր փորձեր են արվում այդ ուղղությամբ։ Չզբաղվելով այդ բնագավառում արտահայտված տեսությունների քննությամբ,—տեսություններ, որոնց մեջ ընդունելի դրույթների հետ կան նաև շատ քննադատելի կետեր, մենք փորձում ենք այստեղ դասակարգել հայերենի հոլովների ընդհանուր իմաստները, բնականաբար հաշվի առնելով այն ամբողջ դրականը, որ պարունակվում է հիշյալ հեղինակների, այլև շատ ուրիշների ուսումնասիրությունների մեջ։ Հոլովների կիրառությունների և շարահյուսական մասնավոր իմաստներին վերաբերող տվյալների համար օգտվում ենք Մ. Աբեղյանի «Շարահյուսությունից» և Վ. Առաքելյանի վերը նշված աշխատությունից, որոնք, կարելի է ասել, փաստական հսկայական նյութի ընդգրկման տեսակետից սպառիչ բնույթ ունեն։ Ինչ վերաբերում է հոլովների ընդհանուր իմաստների բնութագրմանն ու դրանց դասակարգմանը, ապա՝ այստեղ բացարձակապես ինքնուրույն ենք ինչպես այդ, այնպես էլ վերը թվարկված հեղինակներից։ Իբրև ընդհանուր սկզբունքներ մենք ընդունում ենք հետևյալ դրույթները։

1. Ամեն մի հոլով, իբրև բառաձև, քերականական արտահայտություն է կամ ձևը որևէ վերաբերական իմաստի։

2. Իբրև այդպիսին յուրաքանչյուր հոլովական իմաստ առարկաների՝ միմյանց միջև և առարկաների ու հատկանիշների միջև եղած օբյեկտիվ հարաբերությունների բարձրագույնս վերացարկված ու ընդհանրացված տրամաբանական կարգերի լեզվական արտահայտությունն է կամ դրսևորումը՝ ձևաբանական կառուցվածքի մեջ, որպես քերականական վերաբերական (ոչ ածանցական) իմաստ։

3. Լինելով ընդհանրացված և վերացարկված քերականական իմաստ, ամեն մի հոլովական իմաստ խոսքի կառուցվածքում, իր բառաձևի զանազան շարահյուսական պաշտոնների ու նախադասության անդամների միջև ստեղծված շարահյուսական հարաբերությունների միջոցով, դրսևորվում է մասնավոր, կոնկրետ իմաստներով։

4. Ելնելով ընդհանուրի և մասնավորի այդ հարաբերակցություններից, մենք, Ռ. Յակոբսոնի նման, հոլովական իմաստները դիտում ենք որպես անալյականեր (ինվարիանտներ), իսկ մասնավոր

իմաստները, հակառակ Ռ. Յակոբսոնի, որ դրանք համարում է տարբերականներ (վարիանտներ), դիտում ենք իբրև անայլականների իրացումներ կամ նրանց իրական դրսևորումներ, այսինքն՝ դրանց միջև տեսնում ենք նույնպիսի հարաբերություն, ինչպիսին կա հնչույթների ու հնչյունների միջև։

5. Եթե տվյալ հոլովական ընդհանուր իմաստն ունի այնպիսի դրսևորումներ (մասնավոր իմաստներ), որոնք որոշակիորեն հակադրվում են միմյանց և կարող են դրվել իբրև ինքնուրույն հոլովական իմաստ, ապա՝ մենք դրանք համարում ենք մեկ ընդհանուր հոլովական իմաստի ենթիմաստները (ալլոսեմանները)։

Այդ ընդհանուր դրույթներից ելնելով՝ փորձենք բնութագրել յուրաքանչյուր հոլովի ընդհանուր իմաստը՝ մասնավոր իմաստների հիման վրա։

1. Ուղղական հոլով.— Ամենասովորական, հետևաբար և հիմնական գործառույթն է ենթակայի պաշտոնը. համապատասխանորեն խոսքի մեջ դրսևորվող կարևորագույն իմաստն է գործողի, մի բան անող կամ լինողի շարահյուսական կատեգորիան։ Մյուս մասնավոր իմաստներն են, ըստ գործառույթների, կոչականի (որի հետ նաև պատկերացման առարկայի), գոյական որոշչի, ստորոգելիական վերադրի իմաստները, որոնք իրենց հերթին կարող են ավելի մասնավոր իմաստների վերածվել։ Քանի որ, ինչպես ցույց տվեցին վերլուծությունները, ժամանակակից հայերենում հայցական հոլով չկա, ապա՝ ուղղական հոլովին են անցնում նաև այն իմաստները, որոնք մեր քերականության մեջ վերագրվել են հայցական հոլովին կամ համարվել հայցականի նշանակություն։ Դրանցից ամենագլխավորն է ուղիղ խնդրի շարահյուսական իմաստը՝ իր ցույց տվող և իրի առումով գործածվող գոյականների համար. մյուս իմաստներից հիմնականներն են. ժամանակի, տեղի, չափի ու քանակի, նպատակի պարագայական և գնահատման (գնի կամ արժեքի) խնդրի իմաստները։ Ըստ այսմ, ուղղական հոլովը, որ մենք անվանեցինք նաև ուղիղ հոլով կամ բառի բացարձակ (անվանողական) ձև, ստանում է համապարփակ բովանդակություն։ Եվ դա զարմանալի չէ. ուղիղ հոլովի ոչ միայն ձևը, այլև իմաստն է բացարձակ։ Մյուս հոլովներից յուրաքանչյուրը ունի որևէ քերականական իմաստ, որը ընդհանրապես հոլովական իմաստի մեկ դրսևորումն է, ինչպես, որ, ասենք, բացառականի մասնավոր իմաստներն էլ ընդհանրապես բացառականի հոլովական իմաստի դրսևորումներն են։ Ուրեմն, յուրաքանչյուր հոլովական իմաստ մենք կա-

*բող **ենք** դիտել որպես առհասարակ հոլովական իմաստի մի կոնկրետացումը ձևաբանական մակարդակում։ Այսպիսին չէ սակայն ուղիղ հոլովի իմաստը. նրա բովանդակությունն է կազմում բառային իմաստը իր ամբողջ ծավալով և խոսքամասային (իմաստային) հատկանիշով. դա նրան հնարավորություն է տալիս խոսքի մեջ հանդես գալ շարահյուսական զանազան գործառույթներով ու հարաբերություններով և խոսքի մեջ ստանալ իր քերականական (շարահյուսական) կոնկրետ իմաստները։ Ուղղական (=ուղիղ) հոլովի իմաստային այս «համապարփակությունը» մեկուսացած իրողություն չէ մեր արդի լեզվի ձևաբանական կառուցվածքում, այլ միայն մի դրսևորումը որոշակի ընդհանրական երևույթի։ Դա այն է, որ յուրաքանչյուր ձևաբանական հարացույցի ելակետային ձև զուրկ է քերականական-ձևաբանական կոնկրետացումից, որ նրան հնարավորություն է տալիս շարահյուսական մակարդակում հանդես գալու զանազան գործառույթներով և համապատասխանորեն արտահայտելու տարբեր քերականական իմաստներ։ Այսպես, ածականի դրական աստիճանը ոչ ձևական, ոչ էլ իմաստային տեսակետից քերականորեն նշույթավորված չէ, ըստ էության նա չեզոք կամ անտարբեր է համեմատության աստիճանների նկատմամբ, նա ածականի բացարձակ ձևն է բացարձակ բառիմաստով, իսկ դա էլ հնարավորություն է տալիս նրան շարահյուսական մակարդակում արտահայտելու ոչ միայն դրական, այլև բաղդատական ու գերադրական աստիճանների քերականական իմաստներ՝ շարահյուսական միջոցներով (համմտ. Նա լավ ուսանող է։ Նա Սուրիկից լավ ուսանող է։ Նա բոլորից լավ ուսանողն է)։ Այսպես էլ թվականների հարացույցում բացարձակ թվականները կարող են գործածվել թե՛ դասականների և թե՛ բաշխականների իմաստով։ Վերջապես, ավելի ցայտուն է այդ տեսակետից անորոշ դերբայը, որ խոնարհման հարացույցի ելակետային ձևն է, ունի միայն բայական բառիմաստ (գործընթացային հատկանիշ և սեռ), զուրկ է խոնարհումով արտահայտվող քերականական իմաստներից (դեմք, թիվ, ժամանակ ևն), իսկ դա էլ հնարավորություն է տալիս նրան շարահյուսական մակարդակում հանդես գալու ոչ միայն բայական, այլև գոյականական (գործողության անվան) գործառույթներով։ Այս տեսակետից ավելի ճիշտ է ուրիշ լեզուների «անորոշ բայ», քան մեր «անորոշ դերբայ» անվանումը։ Այսպիսով, ձևաբանական հարացույցների ելակետային ձևերի քերականորեն աննշույթ լինելը, քերականական մասնավոր իմաստներից զուրկ լինելը մեր լեզվի ձևաբանական*

կառուցվածքի մեջ յուրահատուկ համակարգ է կազմում։ Մենք վերը թվեցինք ուղղական (= ուղիղ) հոլովի զանազան իմաստները, սակայն բոլորովին էլ չսպառեցինք դրանք։ Այսպես, օրինակ, ուղիղ հոլովը կարող է փոխարինել նպատակի պարագա տրականին, ինչպես՝ **թատրոն գնալ, ժողով գնալ, ուխտ գնալ են,** *խոսակցական լեզվում (որից անցել է գրականին), կարող է հանդես գալ մատուցման տրականի դերում, ինչպես՝* **գործերս համալսարան տվեցի, փաստաթղթերը արխիվ հանձնեցին են,** *տեղի պարագայի դերում՝* **ներգոյականի իմաստով, ինչպես՝ Գիրքը տունն եմ թողել, Երևան է աշխատում, Կիրովական է մնում, Մոսկվա է սովորում,** *կարող է դառնալ նույնիսկ կապական խնդիր, ինչպես՝* **դեպի ես, առանց այդ և այլն, և այլն։** *Իհարկե, այդ բոլոր գործածությունները չի կարելի համարել կանոնական և հանձնարարելի գրական լեզվի համար, թեև գործածվում են, բայց հատկանշական են այն տեսակետից, որ ցույց են տալիս ուղիղ հոլովի գործածության, կարելի է ասել, համապարփակությունը։ Այս տեսակետից ժամանակակից հայերենի ուղիղ հոլովը շատ նման է անգլերենի ընդհանուր հոլովին։ Այս նկատի ունենալով էլ, մենք ուղղական (=ուղիղ) հոլովի իմաստը կոչում ենք բացարձակ իմաստ, իսկ դա նշանակում է, թե նա ձևաբանական մակարդակում քերականական կոնկրետացում չունի։ Ինչ վերաբերում է շարահյուսական մակարդակին, ապա այստեղ որոշակիորեն կարելի է տարբերակել հետևյալ քերականական հիմնական իմաստները, որոնց զանազան կոնկրետացումներն են մյուսները։*

Ա) **Գործող առարկայի կամ անձի (ենթակայի) իմաստ,** *որը բոլորից առանձնանում է իբրև ամենահիմնականը, և որը կկոչենք* **ենթակայի ուղղական։**

Բ) **Գործողությունը կրող առարկայի (ուղիղ խնդրի) իմաստ,** *որը նախորդի հակադրությունն է կազմում. կկոչենք* **խնդրի ուղղական։**

Գ) **Պարագայական իմաստ,** *որ ինչպես կտեսնենք, հատուկ է բոլոր հոլովներին, բացի սեռականից։ Ըստ այսմ կարելի է ասել, որ ամեն մի հոլովական իմաստ (բացի սեռականի իմաստից), իր մեջ պոտենցիալ կերպով ներառում է պարագայական իմաստը զանազան կոնկրետացումներով։ Օրինակ՝ ուղղականն իբրև տեղի պարագա կարող է ցույց տալ նպատակակետ (գնաց քաղաք, գնացքը մեկնեց Սևան են), հանգման՝ ժամանման վայրը (Հասանք Սևան, Գնացքը ժամանեց Երևան են), շարժման ուղղություն (Ճանապարհի կեսից նրանք թեքվեցին հյուսիս՝ ձախ՝ մի ուրիշ կողմ*

(=դեպի հյուսիս՝ ձախ՝ մի ուրիշ կողմ), ճանապարհը ձգվում է հարավ ևն), տեղը որպես գործողության առարկա, որ կարելի է կոչել պարագայական խնդիր (բարձրանալ ծառը՝ սարը՝ տանիքը, նավ՝ գնացք նստել՝ բարձրանալ) և այլն, և այլն։ Քանի որ ուղղականի իմաստը մենք բնորոշեցինք որպես բացարձակ իմաստ առանց քերականական կոնկրետացման, ապա պարագայական իմաստը կդիտենք որպես բացարձակ իմաստի շարահյուսական իրացումներից մեկը, մինչդեռ մյուս հոլովների համար այդպես չենք վարվի, որովհետև նրանց պարագայական իմաստներն ուղղակիորեն բխում են հոլովական ընդհանուր իմաստից։ Այս ենթիմաստը կկոչենք պարագայական ուղղական։

Դ) Որոշչային իմաստ, որ արտահայտում է գոյական որոշիչը. այս իմաստի դրսևորումն է նաև ստորոգելիական վերադրի քերականական իմաստը, ըստ որում նա հանդես է գալիս որպես առարկային վերագրվող հատկանիշի (տեսակի, պաշտոնի, զբաղմունքի, վիճակի ևն) անուն։

Կոչականը, ինչպես և նրան հարաբերակից պատկերացման և լինելության, վերնագրային են ուղղականները, որոնք շարահյուսական հարաբերություններ չունեն նախադասության անդամների հետ, յուրահատուկ խոսքային դրսևորումներն են հենց բացարձակ իմաստի՝ առանց քերականական կոնկրետացման, ըստ որում այդ բոլոր դեպքերում գոյականը հանդես է գալիս անվանողական դերով։

Այս երկուսը, որոշչայինը և կոչականը (դրա հետ նաև լինելության, վերնագրային են) պետք է դիտել որպես միևնույն իմաստի տարբեր գործառույթները. գոյական որոշիչը, ստորոգելիական վերադիրը առանց հոդի, ինչպես կտեսնենք ստորև՝ նաև ենթական, ուղիղ խնդիրը են առանց որոշիչ հոդի կամ անորոշ դերանվան, հանդես են գալիս որպես տեսակի, հատկանիշի (հատկության, զբաղմունքի, պաշտոնի, կոչման, վիճակի ևն) անվանում. կոչականն էլ, ինչպես ասել ենք, հանդես է գալիս անվանողական դերով, ուստի և կարող ենք բոլորը համարել մեկ ենթիմաստ և կոչել անվանումի ուղղական։

Այսպիսով, ուղղական հոլովի համար ունենք շարահյուսական չորս հիմնական իմաստներ, որոնք նրա բացարձակ իմաստի շարահյուսական իրացումները կամ դրսևորումներն են։ Այդ իմաստներից յուրաքանչյուրն էլ իր հերթին ունի իր զանազան մասնավոր՝ խոսքային իրացումները, որոնք այս դեպքում կարևոր չեն։ Այդ

չորս իմաստները, որպես շարահյուսական իմաստներ, որոշակի կերպով առանձնանում, սահմանազատվում են միմյանցից թե՛ իրենց արտահայտած հարաբերություններով և թե՛ իրենց գործառությամբ։ Բայց քանի որ դրանք մեկ հոլովի ընդհանուր իմաստի դրսևորումներն են, ապա՝ մենք կարող ենք դրանք դիտել որպես ենթիմաստներ։ Ուրեմն՝ ուղղական հոլովն ունի բացարձակ իմաստ, որ դրսևորվում է չորս ենթիմաստով (ենթակայի, խնդրի, պարագայական, անվանումի)։

2. **Սեռական հոլով.**— Ամենաստվորական և հիմնական իմաստն է հատկացումը (ստացականությունը), որ ցույց է տալիս, թե առարկան ում կամ ինչին է պատկանում։ Սրա տարբեր դրսևորումներն են մասնական, խնդրի, ենթակայի սեռականները, որոնց մեջ դարձյալ արտահայտվում է հատկացում. մասնական սեռականի մեջ հատկացումը մասի վերագրումն է ամբողջին, խնդրի և ենթակայի սեռականների մեջ՝ իբրև առարկա (գոյական) հանդես եկող գործողության վերագրումը առարկային, որպես գործողի (ենթակայի) կամ գործողությունը կրողի (ուղիղ խնդրի)։ Հատկացման իմաստի դրսևորումը կարելի է համարել նաև ժամանակի ու տեղի սեռականները, որոնք տվյալ առարկան վերագրում են որոշ տեղի կամ ժամանակի, իբրև դրանց հատուկ երևույթ կամ առարկա (հմմտ. աշնան քամի, գրքերի պահարան են), բայց հենց այդ հատուկ դարձնելով էլ որոշում են առարկան։ Այսպիսով, վերագրումը ստանում է հատկություն, որակ, գործադրության բնույթ կամ միջոց (հմմտ. ձեռքի աշխատանք, հիսուն տարվա ընկեր են) ցույց տվող իմաստ, իսկ դրանով էլ հատկացման իմաստը փոխանցվում է բնութագրման իմաստի և հանգում որոշիչ սեռականին։ Հետևաբար թե՛ հատկացման, թե՛ վերաբերության, թե՛ որոշչային մասնավոր իմաստները կարելի է ընդհանուր անունով կոչել **վերագրման** իմաստ, որ և սեռականի հոլովական իմաստն է։ Ըստ այսմ, սեռականը արտահայտում է առարկաների հարաբերության քերականական իմաստ, և նույնիսկ այնպիսի գործածությունները, ինչպիսիք են՝ աշխատանքի է, մի հասակի են, գործի է ևն, պետք է դիտել իբրև զեղչված գոյականի սեռականով լրացում կամ կապի խնդրի սեռական։ Այս տեսակետից ժամանակակից հայերենի սեռականի հոլովական իմաստը շատ ավելի նեղ է, քան գրաբարինը, ռուսերենինը, մանավանդ լիտվաներենինը, որոնց մեջ սեռականի իմաստը նաև առարկայի ու գործողության հարաբերություն է արտահայտում։ Ըստ որում ժամանակակից հայերենի սեռականը նույն-

ինչ որպես խնդրի կամ ենթակայի մասնավոր իմաստ կրող հոլով դարձյալ հանդես է գալիս առարկաների հարաբերության իմաստով (համմտ. Տիգրանի նամակը=Տիգրանի գրած նամակը, Տիգրանին գրված նամակը, շենքի կառուցումը=շենքը կառուցելը, շենքի կառուցվելը ևն)։ Առանձին են մնում այնպիսի օրինակները, ինչպիսիք են՝ սայլի շրջվելիս, ընկերոջ խոսելիս ևն, բայց դրանք էլ ժամանակակից հայերենում շատ սակավ գործածական են, և, որ գլխավորն է, դերբայի վրա են դրվում, որ կարելի է դիտել որպես գործողության ժամանակի առարկայնացում՝ այդ կարգի կապակցությունների մեջ։ Բայց եթե այդպես էլ չհամարենք, ոչ մի բան չի փոխվի, որովհետև մեկ մասնակի կիրառություն առանձին կարևորություն չունի, մանավանդ, որ այդ դեպքում էլ ունենք վերագրման իմաստ։ Այս բոլորը մեզ հնարավորություն են տալիս սեռականի բոլոր մասնավոր իմաստները դիտելու որպես իր ընդհանուր՝ վերագրման իմաստի իրացումներ կամ դրսևորումներ։

3. Տրական հոլով.— Ամենասովորական ու հիմնական իմաստն է հանգման իմաստը. թե՛ մատուցման խնդիրը, թե՛ հանգման խնդիրը և թե՛ հանգման տեղի պարագան ցույց են տալիս այն առարկան կամ անձը, որին հանգում է կամ գործողությունը, կամ մի այլ առարկա։ Պարագայական իմաստը ցույց է տալիս տեղի, ժամանակի, այլև չափի ու քանակի, պատճառի են զանազան մասնավոր իմաստներ։ Մյուս բոլոր իմաստներն էլ (շահի և վնասի, փոխադարձ գործողության, հաղորդման են) առաջինի կամ երկրորդի ավելի մասնավոր արտահայտություններն են։ Առանձին մասնավոր իմաստ է կազմում ուղիղ խնդրի շարահյուսական իմաստը, որը սակայն կապվում է դարձյալ, գոնե պատմականորեն, հանգման ընդհանուր իմաստի հետ։ Նա սկիզբ է առնում այնպիսի բայերի խնդրառությունից, ինչպիսիք են տիրել, ճաղթել, դիմադրել, սպառնալ ևն, որոնք գրաբարում էլ տրականով խնդիր էին ստանում, ապա՝ անձնական դերանունների հայցականի ու տրականի պատճառով անցնում բոլոր ներգործական բայերի խնդրին fեզ, մեզ, ձեզ ձևերի համար, իսկ այստեղից էլ՝ ընդհանրանում աճն ցույց տվող գոյականների և, վերջապես, անձի առումով գործածվող գոյականների խնդրի համար։ Ըստ այսմ, տրականի ընդհանուր հոլովական իմաստն է հանգման fեռականական իմաստը, որի ենթիմաստներն են.

1. Հանգման շարահյուսական իմաստը։

2. Ուղիղ խնդրի շարահյուսական իմաստը՝ անձերի և անձի առման համար։ Այս իմաստով, ինչպես ասել ենք, տրականը և

ուղղականը լրացուցիչ բաշխման մեջ են, որ պատմականորեն բացատրվում է հայցական հոլովի վերացումով։

4. Բացառական հոլով.— Ամենից հիմնական իմաստն է անջատման, հեռացման իմաստը, որից բխում են գործողության աղբյուրի (ներգործող խնդրի), մասնականի, ինչպես և նյութի բացառականի իմաստները։ Այդ իմաստից են բխում նաև պարագայական զանազան մասնավոր իմաստները։ (Այսպես՝ պատճառի պարագան կապվում է գործողության աղբյուրի իմաստի հետ՝ պատճառն իբրև ներգործող, մի բան առաջ բերող հանգամանք (հմմտ. հիվանդությունից մաշվեց, ամոթից կարմրեց են), տեղի պարագան իբրև ելման կետ, ժամանակինը՝ որպես ելման ժամանակակետ և այլն։ Քանի որ անջատում, հեռացում, սերում կամ ծագում բառերը համեմատաբար մասնավոր, ավելի կոնկրետ հարաբերություններ են ցույց տալիս, ապա մենք, նկատի ունենալով, որ բացառականի համար ավելի բնորոշ է ելման առարկայի իմաստը (առարկա, որից բխում, ելնում, ծագում է մի բան), հարմար ենք գտնում գործածել ելման առավել ընդհանուր անվանումը[1]։ Այսպիսով՝ բացառականի ընդհանուր հոլովական իմաստն է ելման էական իմաստը։ Քանի որ թե՛ խնդիրը և թե՛ պարագայական մասնավոր իմաստները բխում են այս ընդհանուր իմաստից, ապա մենք դրանք տարբեր ենթիմաստներ չենք համարում։ Այդ ընդհանուր իմաստի շարահյուսական դրսևորումներից մեկը՝ մասնական իմաստը հնարավորություն է տալիս բացառականին հանդես գալու նաև կրող խնդրի դիրքում և լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ լինելու ուղղականի հետ՝ առաջ բերելով շարահյուսական-իմաստային հակադրություն ծավալային տեսակետից. ըստ այսմ, ուղիղ խնդիրը իրացվելով տարբեր հոլովներով (ուղղական, տրական, բացառական), հնարավորություն է ստանում արտահայտելու, բացի իր հիմնական շարահյուսական իմաստից (կրող առարկա), նաև այլ շարահյուսական իմաստներ, այն է՝ անձի ու իրի առման և ծավալային՝ մասի ու ամբողջի (ավելի ճիշտ՝ անորոշ քանակի կամ չափի) քերականական կարգերի հակադրություն։

5. Գործիական հոլով.— Ամենատարածական ու գլխավոր իմաստն է միջոցի խնդրի իմաստը, որով ցույց է տրվում այն առարկան, որի օգնությամբ իրացվում, իրականացվում է գործո-

---

1 Վ. Առաքելյանը ելման բացառական է համարում անջատման բացառականի մի տեսակը (նույն տեղում, էջ 128)։

ղութիւնը։ Այս ընդհանուր իմաստի դրսևորումներն են թե՛ միջոցի և թե՛ զանազան պարագաների մասնավոր իմաստները։ Այսպես, պատճառի պարագան ցույց է տալիս այն հանգամանքը, որով իրականանում, տեղի է ունենում մի բան, ձևի պարագան ցույց է տալիս գործողության իրացման եղանակը, կերպը, ձևը, ժամանակի պարագան՝ այն ժամանակամիջոցը, որի ընթացքում իրացվում է կամ տեւում է գործողությունը, տեղի պարագան՝ այն տարածությունը, որով ընթանում, իրացվում է գործողությունը և այլն։ Այսպիսով, գործիականի մասնավոր իմաստները ցույց են տալիս գործողության իրացման միջոցը, գործիքը, պատճառը, տեղը, եղանակը և այլն։ Դրանից ելնելով էլ մենք գործիականի ընդհանուր իմաստը կանվանենք իրացման բեռականական իմաստ:

6. Ներգոյական ոլով.— *Ունի միայն պարագայական իմաստ, որ ցույց է տալիս գործողության տեղը, որպես որոշ տարածական սահման գործողության համար (գործողությունը կատարվում, տեղի է ունենում, տարածվում է տվյալ սահմանների մեջ), և ժամանակը, որպես ժամանակային սահման։ Ըստ այսմ,* գործիականի ոլովական իմաստն է գործողության տարածական ու ժամանակային սահմանափակման բեռականական իմաստը, *որ համառոտակի կկոչենք պարզապես* սահմանափակման իմաստ: *Խոսելով սեռականի մասին, մենք ասացինք, թե նա միակ հոլովն է, որը պարագայական իմաստ չունի և, առհասարակ, միայն առարկաների հարաբերության իմաստ է արտահայտում. ներգոյականը հակառակ բևեռն է կազմում. նա միակ հոլովն է, որ միայն պարագայական իմաստ ունի։ Այս իմաստով նա գործողության հետ կապվում է ոչ իբրև գործողությանն անմիջականորեն մասնակցող, այլ երկրորդաբար նրա հետ կապվող առարկա, այն ըստ ժամանակի և տարածության որոշող ու սահմանափակող գոյական։*

Հոլովների՝ յուրաքանչյուրին հատուկ իմաստները բնութագրելուց հետո, մենք այժմ կարող ենք որոշ խմբավորումներ կատարել ըստ այդ իմաստների գործառական հատկանիշների՝ շարահյուսական մակարդակում։ Ամենից առաջ, բնականաբար, ուղղական հոլովն առանձնանում է մյուսներից բացարձակ իմաստով. ուրեմն՝ այս տեսակետից մենք կարող ենք ունենալ բացարձակ իմաստ—ոչ բացարձակ իմաստ *հակադրությունը։ Սեռականը ունի միայն առարկաների հարաբերության, նրանց՝ վերագրման իմաստ. եթե սա անվանենք* առարկայական հարաբերության բեռականական իմաստ, *ապա բոլոր մյուս հոլովական իմաստներն ընդհանուր ա-*

նունով կարող ենք կոչել ճատկանշային հարաբերության բերական իմաստ, որի մեջ կմտնի առարկայի հարաբերությունը ինչպես գործողության, այնպես էլ ոչ գործընթացային հատկանիշների հետ։ Հատկանշային հարաբերության իմաստ ունեցող հոլովներից տրականը, բացառականը, գործիականը, այլև ուղղականն իր բացարձակ իմաստով, արտահայտում են գործողությանը մասնակցող կամ հատկանիշի հետ անմիջականորեն և երկրորդայնորեն կապվող առարկաների քերականական իմաստներ, մինչդեռ ներգոյականը արտահայտում է միայն երկրորդայնորեն կապվող առարկաների քերականական իմաստ։ Այս երկու իմաստները պայմանական ընդհանուր անվանումով կոչենք մասնակցության և ոչ մասնակցության իմաստներ։ Առաջինի մեջ կմտնեն ենթակայական ու խնդրային իմաստները, երկրորդի մեջ՝ պարագայական իմաստները։ «Մասնակցության իմաստներ» արտահայտող հոլովներից ուղղականը, տրականը և բացառականը իրենց ենթիմաստներով անմիջականորեն են կապվում գործողության հետ, իսկ բացառականը, գործիականը, ինչպես և տրականը իր առաջին ենթիմաստով, կապվում են գործողության հետ երկրորդաբար կամ անուղղակիորեն։ Ուստի և՝ կունենանք ուղղակի կամ անմիջական մասնակցության և անուղղակի կամ միջնորդական մասնակցության իմաստներ։ Մասնակցությունը կարող է լինել երկկողմանի կամ միակողմանի. ուղղականն իր բացարձակ իմաստով կարող է հանդես գալ գործողի և գործողության կրողի մասնավոր իմաստներով, մինչդեռ տրականը, բացառականն ու գործիականը հանդես են գալիս միայն միակողմանի[1] մասնավոր իմաստներով (խնդրային իմաստներով)։ Սեռական հոլովը, որ առարկայական հարաբերության իմաստ է արտահայտում, կարող է բնորոշվել նաև հատկանիշների անվանումների (առարկայնության վերածված հատկանիշների) հարաբերությամբ և մենք կարող ենք կանխադրել (постулировать) նրա համար երկրորդային կամ մակաբերական մասնակցության իմաստ, իսկ տրականի, բացառականի և գործիականի համար՝ առաջնային մասնակցության իմաստներ։ Ուղղականը, հետևաբար, իր բացարձակ իմաստով կունենա և՛ երկրորդային, և՛ առաջնային մասնակցության մասնավոր իմաստներ,

1 Այսպես կոչված ենթակայական տրականը և բացառականը շարահյուսական կառուցվածքի տեսակետից խնդիրներ են և ենթակա, գործող առարկա են տրամաբանական տեսակետից (հմմտ. Եվ ասածուն լսելի եղավ Եսայիի զղջումն ու իմաստալից խոսքը (Ավ. Իսահակյան), որի մեջ ենթական է խոսքը)։

ըստ որում թե՛ սեռականը կարող է երկկողմանի մասնակցության իմաստ արտահայտել (կողմնակի խնդիր, կողմնակի ենթակա), թե՛ ուղղականը, թեև ուղղականն իբրև կողմնակի ենթակա կարող է հանդես գալ միայն չեզոք բայերի հետ (հմմտ. «Քամին բարձրանալն ու գլխարկը գլխից թռչելը մեկ եղավ», ժողովն սկսվելը, Բեմը բացվելը ևն)։ Մասնակցության իմաստ արտահայտող հոլովներից տրականն ու բացառականը ցույց են տալիս գործողության ուղղվածություն, մինչդեռ գործիականը ուղղվածություն ցույց չի տալիս, ուստի և կունենանք ուղղվածության և ոչ ուղղվածության բերականական (շարահյուսական) մասնավոր իմաստներ։ Ուղղվածություն արտահայտող հոլովներից տրականը ցույց է տալիս գործողության կամ նրան ենթարկվող առարկայի (ուղիղ խնդրի) հանգման, իսկ բացառականը՝ գործողության կամ ենթարկվող առարկայի ելման հարաբերությունը, որի համապատասխան էլ կունենանք հանգման ուղղվածություն և ելման ուղղվածություն։ Ուղղական հոլովը կարող է ցույց տալ ինչպես ելման (գործողության աղբյուրի՝ հեղինակի), այնպես էլ հանգման (կրող խնդրի) ուղղվածություն, որ բխում է նրա մասնակցության երկկողմանի բնույթից։ Պարագայական իմաստների համար կունենանք սահմանափակման իմաստ ներգոյականի, ուղղականի և գործիականի համար (հմմտ. Մի ժամում հասնել, Հինգ օրով բացակայել, Մի ամիս մնալ ևն)—ոչ սահմանափակման իմաստ՝ ուղղականի, տրականի ու բացառականի համար։ Մյուս կողմից, պարագայական իմաստներն էլ կարող են ցույց տալ ուղղվածություն և ոչ ուղղվածություն, իսկ ուղղվածությունն էլ՝ հանգման կամ ելման հարաբերություն։

Եթե իմաստների այդ բոլոր գործառական հատկանիշներից առնենք հիմնականները՝ առաջնայինները և մի կողմ թողնենք երկրորդայինները, որպես ոչ հիմնական, ածանցական հատկանիշներ, ապա կունենանք հետևյալ հակադրությունները.

1. Առարկայական հարաբերություն—հատկանշային հարաբերություն

2. Մասնակցություն—ոչ մասնակցություն

3. Ուղղակի (անմիջական) մասնակցություն— անուղղակի (միջնորդական) մասնակցություն

4. Ուղղվածություն—ոչ ուղղվածություն

5. Հանգման ուղղվածություն—ելման ուղղվածություն

6. Սահմանափակում—ոչ սահմանափակում։

Բացարձակ իմաստ—ոչ բացարձակ իմաստ հակադրությունն

այստեղ հանել ենք, որովհետև նա նշանակում է պարզապես գործառական հատկանիշի քերականական նշույթի բացակայություն, այլ կերպ ասած, նա չի կարող դիտվել որպես շարահյուսական-քերականական հատկանիշ։

Այս բոլոր հակադրությունները կարելի է ներկայացնել հետևյալ տախտակով (տախտակ № 7)։ Փակագծերում դրված տառերը դարձյալ առաջին տառերն են, բացի մեկից, որի համար վերցրել ենք երկրորդ տառը, նույնությունից խուսափելու համար։

Ինչպես երևում է տախտակից, ուղղական հոլովը բոլոր հակադրություններին մասնակցում է ± նշանով, իսկ դա ցույց է տալիս նրա իմաստի բացարձակությունը։ Մյուս հոլովներից առավել ընդարձակ իմաստներ ունեն տրականը, բացառականը և գործիականը, իսկ սեռականն ու ներգոյականը շատ ավելի նեղ իմաստ ունեն։

Տախտակի տվյալները կարելի է ամփոփել հետևյալ ձևով. այն իմաստները, որոնց դիմաց նշանակված է զրո, կհամարենք տվյալ հոլովին չվերաբերող և հաշվի չենք առնի. այն իմաստները, որոնք ունեն + կամ — նշան, կհամարենք նշված իմաստներ և համապատասխանորեն կնշանակենք իրենց տառերով, վերջապես, այն իմաստները, որոնք ունեն ± նշանը, կհամարենք աննշույթ իմաստներ, այսինքն՝ տվյալ հոլովի համար չտարբերակված գործառական հատկանիշներ, որի հետևանքով էլ տվյալ հոլովը կարող է հանդես գալ հակադրության թե՛ դրական և թե՛ բացասական հատկանիշով (օր. տրականը՝ և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության)։ Իմաստային հատկանիշների նշվածությունը կնշանակենք ն տառով, իսկ աննշույթ լինելը՝ ե տառով՝ վրան դնելով գծիկ (բացասական նշվածություն)։ Այսպես, օրինակ, սեռական հոլովի համար կունենանք ն (ամ), որ նշանակում է, թե նա ունի առարկայական հարաբերության իմաստ և գործողությանը չի մասնակցում. մյուս բոլոր իմաստները սեռականի բնութագրության մեջ չեն մտնում, որովհետև նրանք ածանցվում են մասնակցության գործառույթից։ Ուղղական հոլովը բոլոր հատկանիշների համար ունի ± նշանը, ուստի և ոչ մի հատկանիշով նշված չէ. նրա բացարձակ իմաստը հնարավոր է դարձնում բոլոր հատկանիշներն ստանալ շարահյուսական մակարդակում։ Հետևաբար ուղղականի համար կարելի է ընդունել չնշվածություն բոլոր հատկանիշների, որ և նշանակված է ± նշանով։

	Իմաստներ	Հոլովներ					
		ուղղական	սեռական	տրական	հայցական	գործիական	ներգոյական
1	Առարկայական հաբաբերություն (ա)—հատկանշային հարաբերություն ($\bar{ա}$)	±	+	—	—	—	—
2	Մասնակցություն (մ)—ոչ մասնակցություն ($\bar{մ}$)	±	—	+	+	+	—
3	Ուղղակի մասնակցություն (ու)—անուղղակի մասնակցություն ($\bar{ու}$)	±	0	±	±	—	0
4	Ուղղվածություն (ղ)—ոչ ուղղվածություն ($\bar{ղ}$)	±	0	+	+	—	—
5	Հանգման ուղղվածություն (հ)—ելման ուղղվածություն ($\bar{հ}$)	±	0	+	—	0	0
6	Սահմանափակում (ս)—ոչ սահմանափակում ($\bar{ս}$)	±	0	—	—	±	+

Ըստ այսմ, տախտակի ամփոփումով կունենանք հետևյալ պատկերը՝

Ու. = $\bar{ն}$ (ամուղհս)
Ս. = ն ($\bar{ամ}$)
Տ. = ն ($\bar{ամ}$ղհ$\bar{ս}$) $\bar{ն}$ (ու)
Բ. = ն ($\bar{ամ}$ղհ$\bar{ս}$) $\bar{ն}$ (ու)
Գ. = ն ($\bar{ամ}$հ$\bar{ս}$) $\bar{ն}$ (ու)
Ն. = ն ($\bar{ամուս}$)

4. ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Ա. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Եզակի թիվ

I. Ուղղական հոլով.—Հոլովների կազմությունը բնութագրելու համար, բնականաբար, անհրաժեշտ է առաջին հերթին խոսել ելակետային ձևի կամ գոյական բառույթի ձևաբանական կառուցվածքի մասին։ Հայագիտության մեջ ընդունված կարծիք է այն, որ

հայերենում գոյականը եզակի ուղղականի որևէ վերջավորություն չունի։ Գրաբարի համար սա, իհարկե, արդարանում է։ Սակայն աշխարհաբարում այդպես չէ։ Բազմաթիվ բառերի վերջում ուղղականն ունի ի, որ չի պահպանվում եզակի թեք հոլովներում. այսպես՝ ունենք.

Ուղղ.	այգ-ի	որդ-ի	ոսկ-ի
Սեռ.	այգ-ու	որդ-ու	ոսկ-ու
Տր.	այգ-ու(ն)	որդ-ու(ն)	ոսկ-ու(ն)
Բ.	այգ-ուց	որդ-ուց	ոսկ-ուց
Գ.	այգ-ով	որդ-ով	ոսկ-ով
Ն.	այգ-ում	—	ոսկ-ում

Ինչպես տեսնում ենք, բոլոր հոլովների հիմքն է ուղղականի ձևը՝ հանած վերջահնգ ի ձայնավորը։ Որպեսզի երևույթը պարզ լինի մեզ համար, համեմատենք ուղղականում ուրիշ ձայնավորներով վերջացող բառերի հոլովումը։

Ու.	շղթա	երեկո	առու	ժողովածու	րոպե
Ս.	շղթա-յ-ի	երեկո-յ-ի	առվ-ի	ժողովածու-ի	րոպե-ի
Տ.	« -ից	-ից	-ից	-ից	-ից
Բ.	« -ով	-ով	-ով	-ով	-ով
Ն.	« -ում		-ում	-ում	-ում

Այս օրինակները ցույց են տալիս, որ առհասարակ ուղղականի վերջահնգ ձայնավորը պատկանում է հոլովական հիմքին (ու> վ փոփոխությունը ձևաբանական ոչ մի դեր չունի)։ Եթե այդպես է, ապա՝ այգի, որդի, ոսկի և նման բառերի ուղղականի վերջահնգ ի ձայնավորը պետք է դիտել որպես ուղղական հոլովի վերջավորություն՝ այն բազմավանկ բառերի համար, որոնք առանց դրան հանդես գալ չեն կարող։ Այս հանգամանքը նկատի ունենալով մենք մեր և Հ. Բարսեղյանի կազմած դպրոցական դասագրքում ու հոլովման ենթարկվող բառերը բաժանել ենք երկու խմբի, որոնցից առաջին խումբը բնորոշել ենք որպես ի վերջավորություն ունեցող բառեր։ Սա այնքան պարզ բան է, որ առանձին հիմնավորման կարիք չի զգում. եթե բառավերջի հնչույթը կամ հնչույթների խումբը չի պատկանում հիմիին և բառաձևերի կազմության ժամանակ փոխարինվում է հարացուցային վերջավորություններով, ապա իմն էլ վերջավորություն է։ Այսպիսով, ժամանակակից հայերենի մի խումբ բազմավանկ բառերի ուղղականն ունի ի վերջավորությունը։ Նման խումբն են կազմում նաև ազգակցություն կամ

կողմնակցություն ցույց տվող հավաքական գոյականները, որոնք եզակի թիվ չունեն, ուստի և դրանց մասին կխոսենք հոգնակի թվի կառուցվածքը բնութագրելիս։ Մյուս բոլոր կարգի գոյականները ուղղական հոլովում նյութական ձևույթով արտահայտված վերջավորություն չունեն, և քանի որ մյուս հոլովներից տարբերվում ու նրանց հակադրվում են հենց դրանով, ապա՝ նրանց կվերագրենք զրո վերջավորությունը, որի համար գործածելու ենք ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված նշանը ∅։ Ըստ այսմ՝ ուղղականի համար եզակիում կունենանք երկու հնարավոր կազմություն.

ա) հիմք (=բառի քացարձակ ձև)+ ∅

բ) հիմք (=անկախորեն չգործածվող բառամաս)+-ի

II. **Սեռական և տրական հոլովներ.**— Այս երկու հոլովների ձևերը, ինչպես արդեն գիտենք, նույնական են (առնում ենք անկախ որոշյալի և անորոշի առումներից)։

Տրական և սեռական հոլովների կազմությունը զուգորդվում է ձևաբանական և ձևահնչութաբանական զանազան երևույթների հետ. դրանց կառուցվածքային բնութագրությունը տալու համար բերենք արդի հայերենի սեռական հոլովի եզակիի բոլոր հնարավոր ձևերը՝ ուղղականի զուգադրությամբ.

1.	բանվոր—բանվոր-ի	սիրտ—սրտ-ի	առու—առվ-ի
2.	որդի—որդ-ու	ձի—ձի-ու	ամուսին—ամուսն-ու
3.	թոռ—թոռ-ան	ձուկ—ձկ-ան	շարժում—շարժմ-ան
4.	օր—օր-վա	ամիս—ամս-վա	տարի—տար-վա
5.	ընկեր—ընկեր-ոջ	քույր—քր-ոջ	տեր—տիր-ոջ
6.	աղջիկ—աղջկա		
7.	սեր—սիրո	սուգ—սգ-ո	հույս—հուս-ո
8.	ծնունդ—ծննդ-յան	գալուստ—գալստ-յան	հանգիստ—հանգստ-յան
9.	մահ—մահ-վան		
10.	տուն—տան	արյուն—արյան	մեծություն—մեծության
11.	հայր—հոր	մայր—մոր	եղբայր—եղբոր
12.	անուն—անվան		
13.	կայսր—կայսեր	դուստր—դստեր	
14.	(տեգր—տեդրոր)		
15.	(քույր—քվոր)		
16.	(վան—վանա)	(էջմիածին—էջմիածնա)	

Ամենից առաջ զբաղվենք վերջավորություններով. այս 16 տիպերից №№ 10—15-ը սեռականում ունեն զրո վերջավորություն, մյուս 10-ը՝ ի, ու, ան, վա, ոջ, ա (I), ո, յան, վան, ա (II) վերջավորություններից որևէ մեկը: Տվյալ դեպքում մեզ համար, իհարկե, կարևոր չէ, թե այդ վերջավորություններից ո՛րը գործածության ինչպիսի՛ կենսունակություն ունի. առայժմ մեզ զբաղեցնում են միայն սեռականի հնարավոր կազմությունները: Այդ 10 վերջավորություններից ան և ա (I), վա և վան իրենց ակնբախ նմանությամբ կարող են դիտվել որպես մեկական ձևորդի ձևակներ, և քանի որ դրանցից ավելի մեծ ընդգրկում ունեն ան և վա, ապա դրանք կդիտենք որպես հիմնական ձևեր, իսկ ա և վան դրանց դիրքային տարբերակները, որովհետև դրանց գործածությունը պայմանավորված է միայն որոշակի բառերով (բառերն էլ յուրատեսակ դիրք են վերջավորությունների համար): Ըստ այսմ՝ սեռականի ձևորդը, որ վերը պայմանականորեն համարել են {U}, կունենա հետևյալ ենթաձևույթները. {U}→[ի], [ու], [ան→/ան/, /ա/], [վա→/վա/, /վան/], [ոջ], [ո], [յան], [ա], [#]:

Համեմատելով ուղղականի և սեռականի ձևերը միմյանց հետ՝ նկատում ենք, որ շատ բառեր սեռականում, բացի վերջավորության փոփոխությունից, կրում են փոփոխություններ նաև հոլովական հիմքի մեջ, ինչպես՝ սիրտ–սրտի, առու–առվի, շարժում–շարժման, ftույր–frոջ, տուն–տան են: Այդ փոփոխությունները կարելի է բաժանել երկու կարգի. մի կարգը կազմում են այն ձևվերը, որոնց մեջ հիմքային ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությունը զուգորդվում է սեռականի նյութական ձևույթի հավելման հետ, մյուս կարգն են ներկայացնում նրանք, որոնց հիմքի փոփոխությունը զուգորդվում է սեռականի զրո վերջավորության հետ: Այսպես՝

Ա. կարգ	Բ կարգ
Սիրտ–սրտի	տուն–տան
առու–առվի	արյուն–արյան
ձուկ–ձկան	մեծություն–մեծության
ձմեռ–ձմռան	հայր–հոր
ամառ–ամառան	մայր–մոր
քույր–քրոջ	եղբայր–եղբոր

տեր-տիրոջ	*անուն-անվան*
հույս-հուսո	*կայսր-կայսեր*
քույն-քնի	*դուստր-դստեր*
(սառույց-սառցի)	*(տեգր-տեգրոր)*
(ձյուն-ձնի)	*(քույր-քվոր)*
տարի-տարվա	

Հեշտ է նկատել, որ առաջին շարքի բառերում հիմքի մեջ կատարվող փոփոխությունները ձևաբանական արժեք չունեն, նրանք ոչ մի իմաստ չեն կրում, ըստ որում հոլովական իմաստն արտահայտում է հիմքին ավելացող նյութական ձևույթը, որով և հակադրություն է ստեղծվում ուղղականի և տրական-սեռականի միջև։ Սրան իբրև ապացույց կարող է ծառայել այն, որ նույն փոփոխությունները ունենք նաև խոնարհման և բառակազմության մեջ. եթե դրանք հոլովական իմաստները տարբերակելուն ծառայեին, ապա պետք է հանդես գային միայն հոլովման համակարգում։ Այստեղ, ուրեմն, ունենք ձևահնչութաբանական երևույթ, որ դրսևորվում է շեշտակիր ձայնավոր հնչյունների հերթագայությամբ՝ նախաշեշտ վանկում։ Այս հերթագայությամբ, ինչպես վերը տեսել ենք, ստեղծվում են միևնույն ձևույթի տարբեր ձևակները, որոնք ոչ թե իմաստային, այլ գործառական հակադրության մեջ են՝ ըստ համակցության։ Ըստ այսմ, **ար-, աղ-, ձկ-** *են ձևերը* **սիրտ, առու, ձուկ** *հիմքերի համակցական (կոմբինատոր) տարբերակներն են, կամ ինչպես վերը ասել ենք՝* **{ՍԻՐՏ}, {ՋՈՒԿ}, {ԱՌՈՒ}** *են ձևույթները դրսևորվում են երկուական ձևակներով՝ /սիրտ/→/սրտ-/, /ձուկ/ → /ձկ-/, /առու/ → /առվ-/։*

Ժամանակակից հայերենի հոլովման համակարգում հնարավոր են ձայնավորների հետևյալ հերթագայությունները[1]*.*

1. Ի>ը, ∅ , վ.— սիրտ-սրտի, ամուսին-ամուսնու, տարի-տարվա

2. Ու>ը, ∅ . —ձուկ-ձկան, գլուխ-գլխի

3. Ու>վ.— առու-առվի, անուն-անվան

4. է>ի, ∅ —տեր-տիրոջ, ձմեռ-ձմռան

5. Ույ>ու, ըվ, ը, ∅ —հույս-հուսո, լույս-լուսո, (քույր-քրվոր), քույր-քրրոջ, քույն-քրնի, (սառույց-սառցի)

---

1 *Օրինակները բերում ենք հնչյունական տառադարձությամբ։*

6. Յու>ը, ∅ — ձյուն-ձընի, ալյուր-ալրի, արյուն-արնի
7. Ա> ∅ — ամառ-ամռան, (բերան-բերնի)

Այս հերթագայություններից առաջին հինգը, առավել կամ պակաս ընդգրկումով, հատուկ են մեր արդի լեզվի թե՛ գրական և թե՛ խոսակցական ոճերին, ուստի և նրանք հանդես են գալիս, այսպես ասած, չեզոք ոճում, որպես կանոնական երևույթ։ Ա>∅, ույ>ը, է>∅ հերթագայությունները, իբրև կանոնական և չեզոք ոճի երևույթ, ընդգրկում են մեկական բառ։ Ույ>ու հերթագայությունը գրական ոճին է հատուկ, այն էլ որպես հնաբանություն։ Ույ>ով, ույ> ∅, ույ>ը, ∅, ա>∅ (բերան-բերնի) հերթագայությունները հատուկ են ժողովրդական խոսակցական ոճին, ուստի և գրական լեզվի համար կանոնական չեն։ Մնում է ավելացնել, որ հիշյալ հերթագայությունների ընդգրկման համար որևէ կանոն չկա (հմմտ. գիրք–գրքի, բայց՝ դիրք–դիրքի, թումբ–թմբի, բայց՝ ռումբ–ռումբի, գին–գնի, բայց՝ ցին–ցինի են). դա ավանդական երևույթ է, օրինաչափությունը այլևս գործուն չէ, ուստի և կարելի է իմանալ միայն լեզվական փորձով ու զգացողությամբ[1], իսկ ուսուցման և այլ նպատակների համար անհրաժեշտ կլինի կազմել համապատասխան բառացանկեր։ Եթե սրան ավելացնենք նաև այն, որ հաճախ միևնույն բառը կարող է և՛ հնչյունափոխված և՛ անհնչյունափոխ հիմք ունենալ սեռական-տրականում (օր. թուրք–թրքի և թուրքի, ֆուրդ–ֆրդի և ֆուրդի, շուրք–շուրքի և շրքի են), իսկ հոգնակիում միայն միավանկ հիմքերն են ենթարկվում այդ հնչյունափոխություններին, և այն էլ ոչ բոլոր դեպքերում (հմմտ. գլուխ–գլխի, բայց գլուխ–ներ, անկողին–անկողնու, բայց անկողիններ, ֆույր–ֆրջ, բայց ֆույրեր, լուր–լրի, բայց՝ լուրեր, հուր–հրի, բայց՝ հուրեր են), ապա՝ պարզ կլինի, որ այդ հերթագայությունները չունեն ոչ մի իմաստային արժեք։ Ըստ այսմ, հերթագայությունները կդիտենք որպես ձևահընչույթաբանական երևույթ, իսկ դրանց հետևանքով առաջացող զույգ ձևակները (անհնչյունափոխ և հնչյունափոխված) կհամարենք չեզոք հիմքեր կամ ձևաբանորեն աննշույթ (немаркированный) հիմքեր։ Հոլովաձևերի բանաձևերը կազմելու համար հոլովական հիմքի համար գործածելու ենք Հ սկզբնատառը. չեզոք կամ

---

1 Հաճախ լեզվական փորձն ու զգացողությունն էլ չեն օգնում. այս աշխատության մեքենագրությունը կարդալիս նկատեցինք, որ սերունդ բառի համար գործածել ենք սերնդի և սերունդի ձևերը և միօրինակություն ստեղծեցինք՝ ամենուրեք պահելով երկրորդը։ Նորը հաղթում է։

անշույթ լինելը կարտահայտենք դրա աջ կողմից, վերևում դրվող զրոյով (Հ°)։

Երկրորդ շարքի բառերում վիճակը բոլորովին այլ է. այստեղ տրական և սեռական հոլովը, ինչպես և ուղղականը, ունի դրո վերջավորություն, որով առաջանում է ձևույթային համանունություն ուղղականի և տրական-սեռականի համար։ Ձևույթների նույնությունը, սակայն, չի հանգեցնում հոլովաձևերի նույնության, որովհետև հակադրություն է ստեղծում հիմքային ձայնավորի կամ երկհընչյունի փոփոխությամբ։ Այս դեպքում, ուրեմն, հիմքում տեղի ունեցող հնչյունափոխությունը սեռականի և տրականի համար ունի ձևաբանական արժութայնություն։ Սա էլ արդեն բնութագրում է հոլովման, տվյալ դեպքում տրական և սեռական հոլովների կազմության, երկու տիպ։ Մի դեպքում ունենք նյութապես արտահայտված վերջավորություն, որով ստանում ենք տրական-սեռականի վերջավոր ձև՝ չեզոք հիմքով, իսկ մյուս դեպքում՝ զրո վերջավորություն, որով ստանում ենք տրական-սեռականի անվերջավոր ձև՝ նշույթավոր հիմքով, որը կարտահայտենք Հ-ի աջ կողմից, վերևում դրվող + նշանով, իսկ ներքին փոփոխության համար կգործածենք լեզվաբանական սովորական նշանը՝ >։ Քանի որ սեռականի կազմությամբ որոշվում են նաև հոլովումները, ապա հենց այստեղ էլ կընդունենք երկու տիպի հոլովում՝ առաջին հոլովում կամ թեում՝ վերջավոր սեռականով, և ներքին հոլովում՝ անվերջավոր սեռականով։ Ըստ այսմ կունենանք ուղղականի և տրական-սեռականի հոլովաձևերի հետևյալ բանաձևերը (վ տառով նշանակում ենք նյութական ձև ունեցող վերջավորությունը)

Ու. 1. Հ⁰— # 2. Հ⁰—ի

Ս. 1. Հ⁰—վ 2. Հ+—#

Այս բանաձևերի համապատասխան կունենանք.

ա) ուղղականի երկու տիպ. չեզոք հիմքով անվերջավոր ձև (բանվոր, թոռ, օր ևն), չեզոք հիմքով վերջավոր ձև (այգ-ի)։

բ) Տրականի և սեռականի երկու տիպ. չեզոք հիմքով վերջավոր ձև (բանվոր-ի, սրտի, թոռան ևն) և նշույթավոր հիմքով անվերջավոր ձև։

Այս երկու տիպերն էլ բնութագրում են տրական-սեռականի կազմության երկու սկզբունքը. եթե կա նյութական վերջավորություն՝ հիմքը չեզոք է, եթե չկա վերջավորություն՝ հիմքը նշույթավոր է։ Մյուս հոլովներում հիմքը միշտ չեզոք է, անկախ այն բա-

նից, թե որ ձևից է կազմվում, ուստի և Հ տառի հետ 0,+նշանները չենք գործածի։

Սեռական և տրական հոլովների կազմության մասին պետք է նկատել նաև հետևյալը։ Եթե հիմքը վերջավորվում է որևէ ձայնավորով, ապա՝ դրա և վերջավորության ձայնավորի միջև արտասանվում է յ ձայնակապը. օրինակ՝

Ու. Կաթսա, բոպե, երեկո, ժողովածու, Բաֆֆի

Ս. Կաթսա-յ-ի, բոպե-ի, երեկո-յ-ի, ժողովածու-ի, Բաֆֆի-ի

Այս ձայնակապը, հայերենի ուղղագրական կանոնների համաձայն, գրվում է միայն ա և ո ձայնավորներից հետո, բայց արտասանվում է նաև մյուս ձայնավորներից հետո (բոպեյի, ժողովածույի, Բաֆֆիյի)։ Հասկանալի է, որ ձայնակապը որևէ ձևաբանական դեր չունի, ուստի և կարող է միայն ներույթ համարվել։ Ձայնակապը հանդես է գալիս եզակի թվի նաև մյուս հոլովներում, և, բնականաբար, նույն ներույթն է. ուստի և մյուս հոլովների կազմության մասին խոսելիս դրան չենք անդրադառնա։ Այսպիսով, սեռականի կազմության առաջին բանաձևը կունենա երկու տարբերակ.

Հ⁰—վ, Հ⁰—յ-վ։

Այժմ անցնենք սեռականի և տրականի տարբեր ենթաձևույթների գործառույթյանը կամ ավելի ճիշտ՝ բաշխմանը (դիստրիբուցիային)։

Ա) Վերջավոր տրական–սեռական

1. (Ի) ժամանակակից հայերենի սեռականի ամենակենսունակ վերջավորությունն է և այդ պատճառով էլ ոլորտի դրական սահմանում տալ հնարավոր չէ։ Իբրև ընդհանուր բնութագրություն կարելի է ասել. ի վերջավորությամբ տրական և սեռական հոլով կազմում են այն բոլոր գոյականները և գոյականաբար գործածվող բառերը, որոնց սեռականը մյուս վերջավորություններով չի կազմվում, ոչ էլ ներքին թեքումով։ Բայց այս էլ բացարձակ չէ. հաճախ մյուս ձևերով կազմվող սեռականը փոխարինվում է այս կազմությամբ, ինչպես՝ ամիս–ամսվա և ամսի, ժամ–ժամվա և ժամի (*ժամի վեցին, ժամի քանի՞սն է և ոչ՝ ժամվա 6-ին, բայց՝ վեց ժամվա ընթացքում*), ընկեր–ընկերոջ և ընկերի (*«Հոգնել եմ նոր ընկերի ու հին ցարի արանքում».—Հ. Թումանյան*), աղկողիճ–աղկողնու և աղկողնի ևն։

2. *(Ու)* Այս վերջավորությունն ստանում են ուղղականում ի վերջավորություն ունեցող բառերը, իբրև բայանուն գործածվող անորոշ դերբայը, ալի, ելի ածանցներով կազմված գոյականները, հաճախ նաև այդ նույն ածանցներով կազմված ածականները գոյականաբար գործածվելիս (թեև դրանց համար ավելի սովորական է ի վերջավորությամբ տրականսեռականը) և անկողին, մարդ, ամուսին, ձի, թի, դի բառերը, որոնք ուղղականի նյութական վերջավորություն չունեն։

3. *(Ան)* Այս ենթաձևույթն ունի երկու ձևակ (ան) և (ա)։ Առաջինով սեռական ունեն. ա) ում ածանցով կազմված բայանունները (շարժում, ուսում են), բ) հետևյալ միավանկ բառերը, որոնք գրաբարում ունեցել են և վերջահանգ ձայնորդը՝ գաղտնավանկ ը-ից հետո. բեռ, բուռ, գառ, դուռ, եզ, թոռ, լեռ, ծոռ, ծունկ, կուռ, հիմ, ձուկ, մուկ, նուռ, շուրթ։ Գեղարվեստական գրականության մեջ հանդիպում են նաև կտուր–կտրան, լուծ–լծան, գուռ–գռան են, որոնք բարբառային են և գրական լեզվի կանոնին խորթ։ գ) Մանուկ բառը։

Երկրորդ ձևակով՝ (ա) տրական-սեռական ունի միայն աղջիկ բառը։

4. *(Վա)* Ունի երկու ձևակ՝ /վա/ և /վան/։ Առաջինը սեռական է կազմում ժամանակ ցույց տվող հետևյալ բառերից. օր. ժամ, շաբաթ, ամիս, տարի (որ ունի և՝ տարու սեռականը), կեսօր, այսօր, վաղը, էգուց, երեկ, առավոտ, գիշեր, ցերեկ, ժամանակ, ինչպես և՝ ամառ, ձմեռ, գարուն, աշուն ժողովրդական լեզվի բառերը և առաջ, անգամ, ճաշ բառերը՝ ժամանակի իմաստով. /վան/ ձևակով սեռական ունի մահ բառը։ Շատ բառեր, որոնք սեռականում ունեն (վա), ժողովրդական լեզվում ունեն (վան), որից և թափանցում են գրական լեզվի՝ մեջ (հմմտ. «կըլիներ դառը գիշերվան կեսը» (Հ. Թումանյան), օրվան մի օր ևն)։

5. *(Ոջ)* Կազմում է կին, ֆույր, տեր, ընկեր, տիկին, աներ, սկեսուր, տալ, երբեմն նաև՝ տեգր, բառերի սեռականը։

6. *(ՅԱՆ)* Կազմում է հանգիստ, ծնունդ, գալուստ, առավոտ, երեկո բառերի սեռականը, որոնցից առաջին երեքի համար արդի գրական կանոնին ավելի հարազատ են հանգստի, ծննդի, գալստի ձևերը։ Առավոտ բառի համար ավելի սովորական են առավոտվա, առավոտի, իսկ երեկո բառի համար՝ երեկոյի Առավոտյան, երեկոյան ձևերը սեռական ու տրական պետք

% համարել, և ոչ՝ ածական կամ մակբայ, որովհետև գործառում են հոլովական ձևերով (հմմտ. առավոտյան աստղ, առավոտյան եկավ, գիշերը մոտենում էր առավոտյան ևն), իսկ խոսակցական լեզվում դառնում են նաև բացառական հոլովի հիմք (առավոտյանից, երեկոյանից, փոխանակ՝ առավոտից կամ առավոտվանից, երեկոյից)։ Այնուամենայնիվ, գրական լեզվում զարգացումը տանում է դեպի ածականացում և մակբայացում։ Առհասարակ չան ենթաձևույթով սեռականը պետք է որակել իբրև հնաբանություն։

7. (Ո) կազմում է սեր, ճույս, լույս, սուգ բառերի սեռականը. ճույս, լույս, սուգ բառերը արդի գրական լեզվի կանոնական համակարգում ունեն ճույսի, լույսի, սգի ձևերը, և ճուսո, լուսո, սգո ձևերը հնաբանություն են։ Ինչ վերաբերում է սեր բառին, ապա՝ թեև կարելի է գրականության մեջ գտնել սերի ձևը, բայց կանոնականն է սիրո։

8. (Ա) Այս ձևույթով մեր գրական լեզվում ունենք մի քանի աշխարհագրական անունների սեռական-տրականի ձևը (Գեղամա լիճ, Սևանա լիճ, Լոռվա ձոր, Վանա լիճ են). պահոտհում է նաև անձնանունների ա-ով սեռական (Տրդատա, Տիգրանա են)։ Այս բոլորն էլ հնաբանություններ են, որոնք կամ արդեն դուրս են մղվել գրական լեզվի կանոնից, կամ պահպանվել են իբրև բաղադրյալ աշխարհագրական անունների քարացած ձևեր։ Հետևաբար, այս վերջավորությունը կհանենք սեռական-տրականի ենթաձևույթների շարքից։

Բ) Անվերջավոր սեռական և տրական

Անվերջավոր սեռականը և տրականն ունենում են նշույթավոր հիմք, այսինքն՝ հոլովի իմաստն արտահայտվում է հիմքային ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությամբ։ Այդ փոփոխությունները հետևյալներն են.

9. (այ>ո) ենթարկվում են միայն հայր, մայր, եղբայր բառերը և դրանցով կազմված բարդությունները, եթե դրանք վերջին եզրումն են։

10. (ու>ա) ենթարկվում են՝ 1. ություն ածանցով կազմված հավաքական և վերացական գոյականները (քաջություն-քաջության)։

2. Շուն, տուն, ձյուն, սյուն, արյուն, աճկյուն բառերը,

որոնցից ձյուն, սյուն, արյուն, անկյուն բառերն ունեն նաև ի ենթաձևույթով վերջավոր ձև, որը ավելի սովորական է դառնում և ձգտում է կանոնի մակարդակին:

1. (∅ > ա) փոփոխություն ունենք անուն բառում, որի ու-ն, հերթագայության կանոններով, ա-ից առաջ դառնում է վ (անուն > անուան > անվան)[1]:

12. (ը > ե) փոփոխություն ունենք միայն դուստր, կայսր բառերում (դստեր, կայսեր), որոնց համար ավելի սովորական է դուստրի, կայսրի:

13. (ը > ո) ունենք միայն տեգր–տեգոր ձևում, որ ժողովրդական խոսակցական է. կանոնական ձևը պետք է համարել տեգրի, թեև ունենք նաև տեգրոջ:

14. (ույ > ըվո) ունենք fույր–fըվոր ձևում, որ բարբառային է, թեև հանդիպում է գեղարվեստական գրականության մեջ:

Տրական հոլովը անորոշ առման համար բոլոր դեպքերում նույն ձևն ունի, ինչ որ սեռականը: Որոշյալ առման համար հակադրություն ստեղծվում է այդ երկու հոլովների միջև որոշիչ հոդով, որ սեռականը չի ստանում, իսկ տրականն ստանում է: Այսպես, օրինակ՝

	Ս.	Տ.
Որոշյալ	բանվոր-ի	բանվոր-ի-ն
Անորոշ	բանվորի	

Միակ բառը, որ բացի որոշիչ հոդից, սեռականի և տրականի տարբեր ձևեր էլ ունի՝ որոշյալ առումով գործածվելիս, սեր բառն է:

	Ս.	Տ.
Որոշյալ	սիրո	սիրուն կամ սիրույն
Անորոշ	սիրո	

Տրականի որոշյալ առման ձևերը հանդես են գալիս որպես երկրորդային ձևեր, իսկ անորոշը՝ առաջնային: Տրականի հոլովաձևը մի քանի հոլովներում իբրև հիմք է հանդես գալիս բացառական,

1 Տարամանակյա մոտեցումով այդ բառում ունենք ուա երկբարբառի վերածումը վա (բաղաձայն + ձայնավոր) կապակցության:

գործիական և ներգոյական հոլովների համար։ Անվանական հոլովման համար, իհարկե, կարելի է սեռականին վերագրել այդ դերը, բայց քանի որ դերանվանական հոլովման մեջ այդ հնարավոր չէ, ուստի և ավելի նպատակահարմար է իբրև հիմք ընդունել տրականը։ Ըստ որում, եթե սեռականը և տրականը տարբեր ձևեր ունեն, սեռականը տրականի հիմքն է, տրականը՝ բացառականի (տե՛ս դերանվանական հոլովումը)։

III. Բացառական հոլով.—Բացառական հոլովի վերջավորությունն է ից կամ ուց։ Այս երկու վերջավորություններն էլ բաղադրյալ վերջավորություններ են, որոնք ստացվում են սեռականի ի կամ ու ենթաձևույթների և բացառականի բուն ց վերջավորության դումարով[1]. դա հայտնապես երևում է նրանից, որ եթե տրականն ունի [ի], բացառականն էլ ունենում է ից, իսկ եթե տրականն ունի [ու], բացառականն էլ լինում է ուց։ Այդպես լինելով հանդերձ, ից վերջավորությունը բացառական է կազմում այն բոլոր բառերի համար, որոնց սեռականի վերջավորությունը [ու] չէ։ Ըստ այսմ բացառականի ձևույթը կհամարենք {ի}, որի ենթաձևույթներն են [ից] և [ուց]։ Այս ենթաձևույթների բաշխումը, այսպիսով, շատ պարզ է. միակ դիտողությունը, որ պետք է անել, այն է, որ սեր բառի բացառականը կազմվում է տրականի որոշյալի ձևից, ուստի և ունենում է [ուց] ենթաձևույթը։

Ավելի կարևոր է այն, որ [ից] ենթաձևույթն ստանում է և ներույթը ան, վա հոլովումներում և աղջիկ բառի բացառականում։ Դրա հետևանքով ստանում ենք.

Տ. բանվոր-ի, դռ-ան, աղջկա, օր-վա
Բ. բանվոր-ից, դռ-ն-ից, աղջկա-ն-ից, օր-վա-ն-ից։

Այսպիսով, [ից] ենթաձևույթի համար կունենանք երկու ձևակ՝ աճներույթ (ից) և ներույթավոր (նից)։ Քանի որ ան հոլովման մեջ դրանք կարող են ազատորեն փոխարինել իրար, առանց իմաստային կամ գործառական տարբերակման, ապա կարող ենք համարել ազատ ձևակներ (համմտ. թոռից և թոռնից, ձկից և ձկնից են)։ Այնուամենայնիվ, բացի դուռ բառից, մյուսների համար արդի գրականում ավելի սովորականը և կանոնականն է աննույթ ձևը (օր. ծուկից կամ ծնկից, բայց ոչ՝ ծնկնից, բոից կամ բուից, բայց ոչ՝ բոնից, են)։ Վա հոլովման համար ներույթավոր ձևը

1 Պատմականորեն դա զրաբարյան հոգնակի սեռ., տր., բզո. հոլովների ց վերջավորությունն է (օո. աղբիւր-աղբերց, հայր-հարց, գետ-գետոյ-գետոց են)։

միակն է, եթե բացառականը կազմվում է տրականից, և, ընդհակառակն, աններույթ ձևն է միակը, եթե կազմվում է ուղղականի հիմքից (համմտ. օրվանից-օրից)։ Այս հոլովման մեջ, ուրեմն, երկու ձևակները, առաջին հայացքից, լրացուցիչ բաշխման մեջ են և հանդես են գալիս որպես դիրքային տարբերակներ։ Այս բանը որոշվում է ոչ միայն նրանով, որ տարբեր հիմքերով է պայմանավորված, այլև նրանով, որ տարբեր բառերի հետ է կապվում։ Այսպես՝ օր բառն ունի օրվանից և օրից ձևերը, որոնցից մեկը կազմված է տրականի հոլովաձևից, մյուսը՝ ուղղականի. դրան համապատասխան էլ ունենք մի դեպքում ներույթավոր, մյուս դեպքում՝ աններույթ վերջավորույթյուն, վաղը բառի համար ունենք միայն վաղվանից ձևը, որ կազմված է տրականից, իսկ ժամ բառի համար՝ ժամից, որ կազմված է ուղղականից։ Եթե նկատի ունենանք, որ օր, ժամ, ամիս, կեսօր, առավոտ, գիշեր բառերը կարող են հոլովվել նաև ի հոլովումով, ապա՝ կստացվի այն, որ հիմքերի փոփոխությունը առաջ է գալիս հոլովական փոխանցման հետևանքով։ Իսկ սա նշանակում է, թե վա հոլովման համար ունենք բացառականի ներույթավոր ձևակը, և այն դեպքերում, երբ դրան փոխարինում է աններույթ ձևակը, ապա առկա է ոչ թե վա, այլ ի հոլովումը։ Այսպիսով, վա հոլովման ենթարկվող բառերի համար կարող ենք ունենալ հետևյալ պատկերը.

Ու.	օր	կամ օր	բայց՝ ցերեկ
Տ.	օր-վա	օր-ի	ցերեկ-վա
Բ.	օր-վա-ն-ից	օր-ից	ցերեկ-վա-ն-ից։

Միայն վա հոլովումով են հոլովում շաբաթ, այսօր, վաղը, էգուց, երեկ, ցերեկ. տարի բառը բացառականում ունի տարվանից և տարուց (իբրև ու հոլովման բառ)։

Բացառականի հոլովաձևի կազմության համար անհրաժեշտ է իմանալ, թե նրա հիմքը ուղղականի՞, թե տրականի ձևն է։ Այդ մասին դպրոցական դասագրքերում ասվում է, որ, օրինակ, ի հոլովման բացառականը կազմվում է ուղղականից (ուղղականին ավելացնելով –ից), իսկ ո ներքին հոլովումինը՝ սեռականից։ Այդ տարբերակումը միանգամայն ճիշտ է, ուստի և մենք էլ հոլովումներով կբնորոշենք հիմքերը։ Ըստ այդմ, կարելի է ընդունել հետևյալ կանոնները։

Բացառականը կազմվում է.

ա) Ուղղականի ձևից՝ ա ներքին հոլովման և ան արտաքին հո-

լովման բառերի համար (տուն-տնից, շարժում-շարժումից, քաջություն-քաջությունից, թող-թողից)։

բ) Տրականի հիմքից՝ ի և ու հոլովման բառերի համար (բանվոր-բանվորից, առու-առվի—առվ-ից, այգի-այգու—այգ-ուց, անկողին-անկողնու—անկողնուց ևն)։

գ) Տրականի ձևից՝ ոջ, վա արտաքին հոլովման և ո ներքին հոլովման բառերի համար (ընկերոջ-ընկերոջից, ցերեկվա-ցերեկվանից, հայր-հոր—հոր-ից), ինչպես և՝ աև հոլովման պատկանող զարուն և աշուն բառերի համար (գարնանից, աշնանից)։

IV. Գործիական հոլով.—Գործիականն ունի -ով և -ք վերջավորությունները, որոնք երկուսն էլ պարզ վերջավորություններ են. ք վերջավորություն ստանում են ա ներքին հոլովման -ություն ածանցով բառերը. նույն հոլովման պատկանող արյուն բառն ունի արյամբ ձևը, որ այժմ արդեն հնաբանություն է։ Մյուս բոլոր դեպքերում գործիականը կազմվում է ով վերջավորությամբ։ Նույնը պետք է ասել նաև աև հոլովման ում ածանցով բառերի մասին, որոնց գործիականի ը-ով ձևը (զեկուցմամբ, ուսմամբ) հնաբանություն է։ Ըստ այսմ, գործիականի ձևորդը կհամարենք {Գ}→[ով] և [ը] ենթաձևորդներով։

Գործիականի հոլովաձևի հիմքը լինում է.

1. Ուղղականի ձևը՝ աև արտաքին և ա ներքին հոլովման բառերի համար (լեռ-լեռան—լեռով, շարժում-շարժման—շարժումով), այև ու հոլովման միավանկ բառերի, ալի, ելի ածանցներով և մի քանի այլ բառերի համար (բանալիով, մատանիով)։

2. Տրականի հիմքը՝ ի և ու հոլովման բառերի համար (բանվոր-բանվորի—բանվորով, սիրտ-սրտի—սրտով, առու-առվ-ի—առվով, այգ-ի-այգու—այգ-ով)։

3. Տրականի ձևը՝ ոջ, վա արտաքին, ո ներքին հոլովման բառերի համար, ինչպես և այն բոլոր դեպքերում, երբ վերջավորությունն է [ը] (քրոջ-ով, հոր-ով, քաջությամ-ը, զեկուցմամ-ը)։ Այս երկրորդ դեպքում, ինչպես վերը ասել ենք, ունենք ն>մ հնչունափոխությունը, որով առաջանում է տրականի աև վերջավորության, ինչպես և -ություն ածանցի համակցական (կոմբինատոր) ձևակը։

Գործիականի [ով] ենթաձևույթը նույնպես կարող է ունենալ ներույթավոր ձև, բայց շատ սահմանափակ բառերի համար։ Դրանք են. աղջիկ-աղջկանով, դուռ-դռնով (նաև՝ դռով, որպես խոսակ-

ցական ձև), նուռ–նռնով և նռտով, ձուկ–ձկնով և ձկով, բեռ–բեռով և բեռնով, լեռ–լեռով և լեռնով:

V. Ներգոյական հոլով.—Ներգոյականի համար ժամանակակից հայերենն ունի երկու ձև՝ համադրական և վերլուծական: Այս երկու ձևերի բաշխումը պայմանավորված է բառերի իմաստով: Անձերի ու կենդանիների հատուկ և հասարակ անունները, վերացական գոյականների մեծագույն մասը, ինչպես և ում ածանցով կազմված բայանունները, –ություն ածանցով կազմված հավաքականներն ու վերացականները կազմում են ներգոյականի վերլուծական ձև, իսկ մյուս գոյականները՝ համադրական: Համապատասխանորեն ներգոյականի համար ունենք երկու ձևույթ՝ –ում համադրական ձևի և մեջ կապը՝ վերլուծականի:

Համադրական հոլովաձևը կազմվում է տրականի հիմքից ի, ու, աև, վա հոլովումներում և ուղղականի ձևից՝ ա ներքին հոլովման մեջ: Ոչ և ո հոլովումները, որոնց հնթարկվում են միայն անձ ցույց տվող գոյականներ, համադրական ձև չունեն:

Համադրական ձևի -ում ձևորդը հնում ուներ ներույթավոր ձև աև և վա հոլովման բառերի համար, բայց այժմ դրանք գրեթե ամբողջությամբ փոխարինվել են աններույթ ձևով, բացի աև հոլովման մի քանի բառերից (դռնում, նռնում, ձկնում ևն):

Վերլուծական ձևը կազմվում է մեջ կապի և հոլովվող բառի սեռական հոլովաձևի կապակցությամբ:

Այն բառերը, որոնք ունեն ներգոյականի համադրական ձև, նույնպես կարող են մեջ կապով կապակցություններ կազմել, բայց այս դեպքում՝ իմաստային որոշակի տարբերությամբ:

Ամփոփելով այս բոլորը, հոլովների վերջավորությունների և հոլովաձևերի կազմության համար կունենանք հետևյալ պատկերը (տե՛ս տախտակ № 8):

Տախտակի 6-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ սյունակների վերջավորությունները, ինչպես ասել ենք, առանձին բառերի սեռականն են կազմում, այն էլ՝ մեծ մասամբ ոչ կանոնական ձևեր (հնաբանություն կամ ժողովրդական-խոսակցական ոճ), ուստի և կմնան 1, 2, 3, 4, 5, 8, 9-րդ սյունակները, որոնք ներկայացնում են քիչ թե շատ կենսունակ և կանոնական հոլովումներ: Ըստ այդմ, կունենանք եզակի թվի համար հետևյալ հոլովումները.

1. Արտաքին հոլովումներ.— ի, ու, աև, վա, ոչ

2. Ներքին հոլովումներ.—ո, ա

3. Այլաձև հոլովումներ.—*արտաքին՝* յան, ո, *ներքին՝* ե, ո:

Տ ա խ տ ա կ 8

	Արտաքին հոլովում							Ներքին հոլովում					Անարմատ	Արմատավոր
	ծառ	այգի	լեռ	օր	ընկեր	հան-դիպում	աղբ	հայր	տուն, արյուն	կայսր	տեգր	անուն		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		
Ուղղական	Ø—#	-ի	Ø—#					Ø—#					—#	—ը(ն)
Սեռական / Տրական	-ի	-ու	-ան/ա	-վա/-վան	-ոջ	-յան	-ո / -ու,	-ի(ա > ո)—#	-ի(ու > ա)—#	-ի(ը > ե)—#	-ի(ը > ո)—#	-ի(Ø > ա)—#	—#	—ը(ն)
Բացառական	-ից	-ուց	-(ն)ից		-ից		-ուց	-ից					—#	
Գործիական	-ով		-(ն)ով		-ով			-ով/-ը	-ով			-ով/-ը	—#	
Ներգոյական	-ում			—	-ում			—	-ում	—		-ում	—#	

Հոգնակիի կազմությունը.—*Ժամանակակից հայերենի հոլովման համակարգի մեջ հոգնակի թվի քերականական կարգն արտահայտվում է առանձին ձևույթներով, որ իբրև կանոն մենիմաստ է, այսինքն՝ բացի հոգնակի թվի իմաստից, որևէ այլ քերականական իմաստ չի արտահայտում։ Բացառություն են կազմում f, այf, երf ձևույթները, որոնք թվի իմաստի հետ արտահայտում են նաև ուղղական հոլովի իմաստ և, հետևաբար, բազմիմաստ են։*

Եզակի թիվը որևէ նյութական ձևույթով չի արտահայտվում, ուստի և գոյականների եզակին թվի տեսակետից ձևաբանորեն աննշույթ է, հակառակ հոգնակիին, որ միշտ նշույթավոր է։ Հոգնակի թվի ձևերը ցույց են տալիս առարկայի մեկից ավելի քանակություն, մինչդեռ եզակիի ձևերը քանակություն ցույց չեն տալիս. եզակին աննշույթ է ոչ միայն ձևական, այլև իմաստի տեսակետից, ըստ որում եզակիի ձևերը կարող են ցույց տալ և՛ մեկ առարկա, և՛ առարկաների շատություն (եզակին հոգնակիի իմաստով), և՛ առարկաների բազմություն առանց քանակային բնութագրման (հավաքական գոյականներ), և՛ քանակային բնութագրության բացակայություն առհասարակ (վերացական գոյականներ)։ Վերացական գոյականները կարող են առնվել մասնավոր դեպքերի ու իրողությունների, երևույթների մասնավոր դրսևորումների իմաստով և այդ դեպքում նրանք կարող են կազմել հոգնակիի ձև. օրինակ՝ **Իր կյանքում նա շատ դառնություններ ու ուրախություններ է տեսել** *Նախադասության մեջ* **դառնություններ, ուրախություններ** *բառերը նշանակում են* **դառնության՝ ուրախության պատճեր** *(առիթներ, դեպքեր ևն)։ Նույնպես և՝* **Քանի սերեր... զուր հանգցրի** *(Վ. Տերյան) նախադասության մեջ* **սերեր** *հոգնակին վերաբերում է* **սիրո** *կոնկրետ արտահայտություններին կամ դրսևորումներին, որպես առանձին-առանձին իրողություններ։ Հավաքական գոյականները, որոնք ցույց են տալիս ավյալ հավաքական ամբողջությունն իբրև միավոր, հոգնակիում արտահայտում են այդ միավորի (կատեգորիայի ևն) քանակային շատություն (հմմտ. զորք-զորքեր, ժողովուրդ-ժողովուրդներ, «տարբեր երկրների* **ուսանողություններ**» *(«Ս. Հայաստան»), ամբոխներ ևն)։ Եթե գոյականը ցույց է տալիս այնպիսի նյութեր, որոնց քանակը որոշվում է ծավալով կամ չափով, բայց ոչ համրանքով, ապա հոգնակին վերաբերում է դրանց տարբեր տեսակներին (օր. գինիներ, ցո-*

բեններ, շաքարներ են)։ Սրանց հակառակ, կան հավաքականներ, որոնք ցույց են տալիս հավաքական ամբողջություն, ազգակիցների կամ կողմնակիցների խումբ, հոգնակիի ձևով։ Այսպիսով, մի կողմից ունենում ենք գոյականներ, որոնք իրենց բուն իմաստով հոգնակի չունեն, իսկ մյուս կողմից՝ գոյականներ, որոնք եզակի չունեն. առաջինները՝ անհոգնական, երկրորդները անեզական գոյականներ են։

Եզակիի և հոգնակիի չեզոքացում է տեղի ունենում թվական որոշիչների հետ (համմտ. Հինգ ուսանող, հինգ ուսանողներ), ուստի և դա գոյականների քերականական թվի թույլ դիրք է։

Ժամանակակից հայերենի հոգնակերտ ձևույթներն են. եր, ներ, f, իկ, այf, (երf)։ Ինչպես վերը ասել ենք, դրանցից իբրև ձևույթ կընդունենք {Հ}, իսկ ենթաձևույթներ՝ [եր], [ներ], [ք], [իկ], [այք], [երք]։ Հոգնակերտ ենթաձևույթների գործառական բաշխումը ներկայացնում է հետևյալ պատկերը։

1. [եր].— Հոգնակի է կազմում միավանկ բառերի (ինչպես՝ ծառեր, տներ, քարեր են), այլև այն բարդ բառերի, որոնց վերջին եզրի միավանկ բաղադրիչը գոյականի իմաստ ունի բարդության մեջ (օր. արոտավայր-եր, դասագրք-եր)։

1. [ներ].—Հոգնակի է կազմում բազմավանկ բառերի (ինչպես՝ տղաներ, քաղաքներ են), այլև այն բարդ բառերի, որոնց վերջին եզրի միավանկ բաղադրիչը բայարմատ է կամ բայիմաստ ստացած գոյական (օր. վիպագիր-ներ, ժամացույց-ներ, մեծատուն-ներ են)։

3. [(ն)եր].— այս ձևույթով հոգնակի ունեն. ա) Ան հոլովման ենթարկվող միավանկ բառերը (բեռ, դուռ, լեռ, թոռ են), բ) այդ հոլովման չենթարկվող մատ, ոտ, կուռ, ձեռ, հարս, ոդ, ռուս։ Կան բառեր, որոնք հոլովվում են և՛ ան, և՛ ի հոլովումներով. դրանք առաջին դեպքում ստանում են ներ, երկրորդ դեպքում՝ եր։ Այսպես՝ ծունկ, ծնկան, ծնկներ և ծնկի կամ ծունկի, ծունկեր. շուրթ–շրթան (հնացած և ժողովրդական) –շրթներ և շուրթի–շուրթեր. ոռնգ–ռնգան (հնացած) –ռնգներ կամ ռունգներ և ռունգի–ռունգեր են։ Ոտ և ձեռ բառերի՝ արդի գրական լեզվի ավելի հարազատ ձևերն են ոտf, ձեռf, որոնց հոգնակին է ոտfեր, ձեռfեր։ Մատ, ոտ բառերն ունեն նաև հոգնակիի խոսակցական-ժողովրդական մատեր, ոտեր ձևը։

Այս (ն)եր հոգնակերտն ստացող բառերը, բացի ռուս

բառից, գրաբարում վերջացել են և-ով (բեռն, գառն են), որը եզակի ուղղականում ընկել է, բայց պահպանվել է հոգնակիում և շատ բառերի բացառականում (նաև գործիականում ու ներգոյականում)։ Բացառականի վերջավորությունների մասին խոսելիս մենք -(ն)ից վերջավորությունը համարեցինք -ից-ի ներույթավոր ձևը։ Նույն բանն է նաև այստեղ. հոգնակիում երևան եկող և հնչույթը պետք է դիտել իբրև ներույթ, որով այս -ն(եր) հոգնակերտը կդառնա (եր)-ի ներույթավոր տարբերակը։ Բայց քանի որ դա նույնանում է (ներ) հոգնակերտի հետ, ապա ավելի նպատակահարմար է գործնականորեն (և ոչ՝ տեսականորեն) համարել նույն հոգնակերտը, մանավանդ որ արդեն բոլոր առանձին վերջավորությունները դիտում ենք որպես հոգնակերտ ձևույթի ենթաձևույթները։

4. [ք].— *հոգնակերտ ուղղականի այս բազմիմաստ վերջավորությունն ունեն. ա) ազգակցություն կամ խմբակցություն (կողմնակցություն էլ) ցույց տվող հավաքական գոյականները, որոնք անեզական են (մերոնք, ձերոնք, Վարդանանք, Վանդունք, Հակոբենք, պապոնք են), բ) ու հոլովման այն գոյականները, որոնք ուղղականում ունեն -ի վերջավորությունը, մասնավորապես ցի ածանցով կազմված գոյականները (որդիք, գյուղացիք, լեռնցիք, ֆրանսիացիք են)։ Երկրորդ կարգի բառերի այսպիսի հոգնակին արդի գրական լեզվի համար հնաբանություն է, մինչդեռ առաջին կարգի բառերի համար՝ միակ կանոնականը։*

5. [իկ].— *կազմում է միայն մարդ բառի հոգնակին. հոլովական իմաստից զուրկ է. ուստի և մարդիկ հոգնակիի ուղղականի համար պետք է կանխադրել հոլովական զրո վերջավորություն, ինչպես և՝ [եր], [ներ] ենթաձևույթներով հոգնակիների համար։ Ինչպես ասել ենք աշխատության սկզբում, Բաֆֆին գործում է մարդիկներ, Ստ. Զորյանը՝ մարդեր ձևը, բայց երկուսն էլ անհատական լեզվին են պատկանում։*

6. [այք].—*հոգնակի է կազմում կին, այլև՝ պառռ, տիկին, աղա, երեխա բառերից (կանայք, պարոնայք, տիկնայք, տղայք, երեխայք)։ Այս բոլորից միայն կանայք ձևն է կանոնական. մյուսները հնաբանություններ են, որոնք ունեն ոճական արժեք։ Կանայք ձևի հիմքն է կին արմատի դիրքային ձևակը՝*

(կան). այf ձևույթը բազմիմաստ է և արտահայտում է ինչպես հոգնակիի, այնպես էլ ուղղականի իմաստ։

7. [երք].—*Այս ենթաձևույթով ունենք* տղերf, աղջկերf, երեխերf *հոգնակիները, որոնք ժողովրդական ձևեր են, և գեղարվեստական գրականության մեջ գործածվում են ոճական արժեքով։ Ուստի և ավելի ճիշտ է այս վերջավորությունը դիտել որպես հոմանիշ ձևորդ։*

ՀՈԳՆԱԿԻԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Գոյականի հոլովումը հոգնակի թվում գրեթե հասել է միօրինակության. բոլոր այն բառերը, որոնք հոգնակին կազմում են [եր] կամ [ներ] ենթաձևույթներով, հոգնակիում հոլովվում են ի հոլովման վերջավորություններով, ինչպես՝

Ու.	*քաղաք-ներ*	*այգի-ներ*	*հայր-եր*	*օր-եր*
Ս.	*քաղաք-ներ-ի*	*այգի-ներ-ի*	*հայր-եր-ի*	*օր-եր-ի*
Տ.	*քաղաք-ներ-ի(ն)*	*այգի-ներ-ի(ն)*	*հայր-եր-ի(ն)*	*օր-եր-ի(ն)*
Բ.	*քաղաք-ներ-ից*	*այգի-ներ-ից*	*հայր-եր-ից*	*օր-եր-ից*
Գ.	*քաղաք-ներ-ով*	*այգի-ներ-ով*	*հայր-եր-ով*	*օր-եր-ով*
Ն.	*քաղաք-ներ-ում*	*այգի-ներ-ում*	*(հայր-եր-ում)*	*օր-եր-ում*

Բոլոր մյուս ենթաձևույթներով հոգնակիները այս ընդհանուր հարացույցից շեղվում են միայն ուղղականում և սեռական-տրականում, ըստ որում տրականի ձևը դառնում է բացառականի, գործիականի ու ներգոյականի հոլովաձևերի հիմքը։ Քանի որ հոգնակի թվի [ք], [իկ], [այք], [երք] ենթաձևույթներով կազմությունները շեղում են ներկայացնում ընդհանուր կանոնից և սահմանափակվում են առանձին բառերով, ապա իրավացի կերպով համարվում են անկանոնություններ։ Նույնը վերաբերում է նաև սեռական-տրականին. այսինքն՝ սրանց ձևերն էլ անկանոն ձևեր են, ընդհանրական հարացույցի ձևերի կողքին։ Այս բնորոշումից դուրս են մնում [ք] ենթաձևույթով հավաքական հոգնակիները, որոնք բառակազմական, իմաստային ու հոլովման առանձին տիպ են ներկայացնում։ Սրանց բառակազմական առանձնահատկությունը ոչ միայն այն է, որ նրանք կազմվում են յուրահատուկ ածանցներով (-աճ-f, ուճ-f, -եճ-f, ոճ-f), այլև այն, որ իբրև բառ էլ նրանք նշույթավորված են որպես հոգնակի ուղղական հոլով։ Այլ կերպ ասած, նրանք ունեն ուղղականի նյութական վեր-

չավորություն, առանց որի իբրև բառ էլ չեն կարող գոյություն ունենալ, ինչպես –ի վերջավորությամբ բառերը։ Հիշենք, որ բառային մակարդակում հոլովական ոչ մի վերջավորություն չենք վերագրում այն բառերին, որոնք ձևաբանական մակարդակում եզ. ուղղականի համար ունեն հոլովական զրո վերջավորություն։ Իմաստային տեսակետից դրանց առանձնահատկությունն այն է, որ ցույց են տալիս ազգակցությամբ, գործունեությամբ, հայացքներով ևն մեկ խմբավորում կազմող անձանց ամբողջություն, իբրև հոգնակի։ Ուրիշ լեզուներում, օրինակ՝ ռուսերենում, անեզական բառերը ձևով հոգնակի են, բայց իմաստով եզակի (օր. НОЖНИЦЫ, ШТАНЫ ևն), ըստ որում ցույց են տալիս մեկ առարկա, մինչդեռ մեր այդ անեզական բառերը իմաստով էլ հոգնակի են։ Վերջապես, այդ բառերի ձևաբանական առանձնահատկությունն այն է, որ նրանց սեռականը և տրականը ներկայացնում են բոլորովին այլ կազմություն, քան մյուսները։ Այս բոլորի հիման վրա էլ, ահա, այս բառերի հոլովումը համարվում է առանձին՝ ց հոլովում։ Այսպես, ուրեմն, հոգնակի թվում, բացի հոլովման վեր-ը բերված հարացույցից, ունենք ևս մի հարացույց, որը միանգամայն կանոնական է և կենսունակ։ Սեռականի և տրականի ձևույթն է ց, որ ավելանում է ուղղականի հիմքին, այսինքն՝ հոգնակի ուղղականի բառաձևի այն մասին, որ ընկած է f վերջավորությունից առաջ։ Մյուս հոլովների հիմքն է տրականի ձևը։ Ահա այս հոլովման հարացույցը։

Ու.	*մերոն-ք,*	*վարդանան-ք,*	*վանդուն-ք,*	*Զալոյեն-ք*
Ս.	*մերոն-ց,*	*վարդանան-ց,*	*վանդուն-ց*	*Զալոյեն-ց*
Տ.	*մերոն-ց,*	*վարդանան-ց,*	*վանդուն-ց*	*Զալոյեն-ց*
Բ.	*մերոնց-ից*	*վարդանանց-ից*	*վանդունց-ից,*	*Զալոյենց-ից*
Գ.	*մերոնց-ով,*	*վարդանանց-ով,*	*վանդունց-ով,*	*Զալոյենց-ով*
Ն.	—	—	—	—

Անկանոն հոլովումները ուղղական և սեռական-տրականում ունեն հետևյալ վերջավորությունները՝

Ու. -իկ	*-այք, (-երք)*	*-ի-ք*
Ս. Տ. -անց	*-անց, (-անց, ի)*	*-ոց*

Մյուս բոլոր հոլովների հիմքը, ինչպես ասել ենք, տրականի ձևն է (-երf հոգնակերտի համար նաև ուղղականի ձևը), իսկ վերջավորությունները՝ -ից, -ով, -ում։

Ըստ այսմ, ունենք հետևյալ անկանոն հոլովումները.

Ու.	մարդ-իկ,	կան-այք,	տղեր-ք,	գյուղաց-ի-ք
Ս. Տ.	մարդկ-անց,	կան-անց,	տղեր-անց, տղերք-ի	գյուղաց-ոց
Բ.	մարդկանց-ից,	կանանց-ից,	տղերք-ից տղերանց-ից	—
Գ.	մարդկանց-ով,	կանանց-ով,	(տղերք-ով),	—
Ն.	(մարդկանց-ում)	(կանանց-ում),	(տղերք-ում)	

Այս չորս տիպերից չորրորդը հնաբանություն է, երրորդը պատկանում է ժողովրդական-խոսակցական ոճին, իսկ առաջինը և երկրորդը միակ կանոնականներն են՝ մարդ և կին բառերի համար: Տիկին բառը, որ ունի տիկնայք և տիկնանց ձևերը, այժմ ավելի սովորական է կանոնավոր հոգնակիով (տիկիններ). պարոն բառի պարոնայք ձևը, որ ունի ոճական արժեք, սեռականի ու տրականի ձև չունի և գործածվում է միայն կանոնավոր հոգնակիի ձևով: Տղա բառի տղայք հնաբան ձևը ունի նույնպես հնաբան տղայոց սեռական-տրականի ձևը:

Իբրև հնաբանություն, առավելապես գիտական, պատմա-բանասիրական գրականության մեջ, հաճախ հանդիպում է -ություն ածանցով կազմված բառերի [ք]-ով հոգնակին և, համապատասխանորեն, դարձյալ իբրև հնաբանություն, հոգնակի սեռականն ու տրականը կազմվում են [ց]-ով, որի հիմքն է եզակի տրականի ձևը (օր. քաջություն-ից—քաջությանց, տարբերություն-ից—տարբերությանց են:)

Մի կողմ թողնելով հնաբանություններն ու ժողովրդական-խոսակցական ձևերը, հոգնակիի հոլովման համար կստանանք վերջավորությունների հետևյալ ընդհանուր պատկերը (տե՛ս տախտակ № 9):

Այսպիսով, հոգնակիի համար ունենում ենք երկու կանոնավոր հոլովում (ի և ց) և երկու անկանոն հոլովում (իկ և այք):

Հոգնակիի համար կարելի է անել հետևյալ ընդհանուր դիտողությունները.

1. Անձերի ու կենդանիների հատուկ և հասարակ անունները, որոնք եզակիում ներգոյականի համադրական ձև չունեն, հոգնակիում կարող են ունենալ (մարդկանցում, որդիներում, ձիերում են), ըստ որում մեջ կապով կազմվող վերլուծական ձևը, բացի բուն ներգոյականից, արտահայտում է նաև այլ իմաստներ՝ «թվում, շարքում» (=ռուս. среди.— աշակերտների մեջ շատերն են ընդու-

	ծառ	քաղաք, լեռ	մերոն-	մարդ	{կին} → [կան]
Ո.	-եր	-ներ	-ք	-իկ	-այք
Ս. Տ.	-ի		-ց	-անց	
Բ.	-ից				
Գ.	-ով				
Ն.	-ում				

նակ=среди учеников), «միջև» (բանավոր-ծառայողների մեջ մրցութիւն ծավալվեց), մասնական բացառականի իմաստ (ուսանողների մեջ աչքի է ընկնում Գառնիկը) և այլն։ Չնայած դրան, հայրերում, ընկերներում, մարդկանցում են չի կարելի դեռևս կանոնական ու հանձնարարելի համարել։

2. Անհոգնական գոյականները, որոնք հոգնակի ձևով արտահայտում են կոնկրետ իմաստներ (տեսակ, կատեգորիա, իրողութիւն են), բնականաբար ունենում են ներգոյական հոլով՝ հենց այդ կոնկրետ իմաստների համար (համմտ. հերոսութիւն, որ եզ. ներգոյական չունի, բայց հոգն. հերոսութիւններ (=հերոսական գործեր՝ արարքներ), ներգոյականը՝ հերոսութիւններում)։

3. Կանոնավոր հոգնակիների որոշյալը, ինչպես և եզակիում, ձևաբանորեն արտահայտվում է բ/ն որոշիչ հոդով՝ ուղղականում և սրտականում (համմտ. քաղաքներ-քաղաքների, բայց՝ քաղաքները, քաղաքներին), մինչդեռ անկանոն հոգնակիների որոշյալն արտահայտվում է միայն ուղղականում՝ դարձյալ որոշիչ հոդով, իսկ սրտականում որոշիչ հոդ չի դրվում։ 3 հոլովման մեջ ուղղականն էլ որոշիչ հոդ չի ստանում։ Այս հոլովման, ինչպես և անկանոն հոլովումների, սեռական-սրտականի հոդավոր ձևը որոշյալ սրտական չէ, այլ սեռականից կազմված փոխանուն (համմտ. մերոնցը, խաչիկենցը, մարդկանցը են)։

4. Հոգնակիում հոլովումը իրացվում է միայն վերջավորութիւններով, ուստի և ներքին թեքումը վերանում է։ Հոգնակերա-

բոլոր վերջավորություններն ավելանում են եզակի ուղղականի ձևին, բացի կին բառի ձևերից, որոնց համար իբրև հիմք է ծառայում նույն արմատի /կան/ ձևակը:

5. Հոգնակիի ի հոլովման մեջ ուղղականը ունի հոլովական զրո վերջավորություն, այդպես է նաև մարդ բառի հոգնակին. ց կանոնավոր և այf անկանոն հոլովումների ուղղականը ունի f, այf վերջավորությունները, որոնք ոչ միայն հոգնակի թվի, այլև ուղղական հոլովի իմաստ են արտահայտում: Այդպես է նաև ոչ կանոնական երf հոգնակերտը, եթե սեռականն ունի –անց վերջավորությունը (տղեր-ք—տղերանց), և այդպես չէ, եթե ունի –ի վերջավորությունը (տղերք-տղերք-ի). այս դեպքում ուղղականի համար, բնականաբար, կանխադրվում է զրո հոլովական վերջավորությունը: Եզակի ուղղականում ի վերջավորությունն ունեցող գոյականների հնաձև –f-ով հոգնակի ուղղականում ունենք –ի հոլովական, և –f հոգնակի վերջավորությունները, որոնք դուրս են քննում սեռական-տրականում (գյուղաց-ի-ք—գյուղաց-ոց): Ըստ այսմ, թե՛ կանոնավոր և թե՛ անկանոն հոլովումների համար ուղղականի և սեռական-տրականի հիմքերը նույնական են, ուստի և չեզոf:

6. Նույնպիսի բնութագիր ունեն նաև սեռական-տրական հոլովների վերջավորությունները. ուր որ ուղղականն ունի հոլովական զրո վերջավորություն, սեռական-տրականի վերջավորությունը արտահայտում է միայն հոլովական իմաստ, և, հակառակը, ուր որ ուղղականն ունի հոլովական նյութապես արտահայտված վերջավորություն, սեռական-տրական հոլովների վերջավորությունը նույնպես բազմիմաստ է, այսինքն՝ արտահայտում է և՛ թվի, և՛ հոլովի իմաստ: Ըստ այսմ, –անց վերջավորությունը, որ նաև թվի իմաստ ունի կաճանց (նաև տիկնանց) ձևում, չեզոքանում է մարդկանց, այլև՝ տղերանց ձևերում, ըստ որում նրան նախորդում է հոգնակերտ ձևույթը (-իկ, –եր): Մյուս երեք հոլովների վերջավորությունները զուրկ են թվի իմաստից և արտահայտում են միայն հոլովական իմաստ թե՛ կանոնավոր և թե՛ անկանոն հոլովումներում: Ըստ այսմ, հոգնակիի հոլովման մեջ կունենանք երեք կարգի վերջավորություններ. ա) միայն թվի քերականական կարգ արտահայտող (նշույթավորված ըստ թվի), բ) միայն հոլովի քերականական կարգ արտահայտող (նշույթավորված ըստ հոլովական իմաստի), գ) միաժամանակ թվի և հոլովի քերականական կարգեր արտահայտող: Եթե առաջինի համար գործածենք նշույթավոր

Տ ա խ տ ա կ 10

Հոլովներ	Ո ւ.				Ս.				Տ.				Բ.	Գ.	Ն.
Հոլովումներ	ի	ց	իկ	այք	ի	ց	իկ	այք	ի	ց	իկ	այք	էց	ով	ում
Վերջավորություններ	-եր, -ներ	ք	-ից	-այք	-ի	-ց	-անց	-անց	-ի	-ց	-անց	-անց			
Նշությավոր հոդնակի	+	+	+	+	−	+	0	+	−	+	0	+	−	−	−
Նշությավոր հոլով	−	+	−	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Նշությավոր սրոշյալ	+	−	(+)	(+)	−	−	−	−	+	−	−	−	−	−	−

հոգնակի, իսկ երկրորդի համար նշույթավոր հոլով, ավելացնելով նաև նշույթավոր որոշյալ հատկանիշը այն ձևերի համար, որոնք կարող են հոդ ստանալ, ապա բոլորը կարող ենք ներկայացնել հետևյալ տախտակով (տե՛ս տախտակ № 10)։

Ինչպես տախտակը ցույց է տալիս, ըստ թվի նշույթավորված են ուղղականի բոլոր ենթաձևույթները և սեռական-տրականի միայն երկու ձևույթները՝ [ց], [անց], ըստ հոլովի նշույթավորված են ուղղականի միայն երկու ենթաձևույթները (ք, այք) և սեռական-տրականի բոլոր ենթաձևույթները. որոշյալի համար նշույթավորվել կարող են երկու ենթաձևույթները [եր, ներ], իկ, այք (մարդիկ և կանայք) հոգնակերտների հոդավոր ձևը հնաբանություն է (համմտ. այն մարդիկը, թագավորի կանայքը), իսկ [ք] ձևորդը ց հոլովման մեջ՝ բոլորովին չի ընդունում. տրականի միայն մեկ ձևորդը [ի] կարող է նշույթավորվել, մյուսները՝ չեն կարող։ Բացառականի, գործիականի և ներգոյականի վերջավորությունները նշույթավորված են միայն հոլովով, և աննշույթ են թվի ու որոշյալի իմաստների համար. այս հոլովների ձևերում թվի հակադրությունն ստեղծվում է հիմքով։ Սեռականը, ի տարբերություն տրականի, բոլոր հոլովներում աննշույթ է որոշյալի իմաստի համար։ Ուղղական հոլովի այն ձևերը, որոնք ունեն նշույթավոր որոշյալ, ունեն նաև առաջնային և երկրորդային ձևեր, մինչդեռ ց հոլովման համար երկրորդային ձև չկա։ Բացառական, գործիական հոլովներն ունեն միայն երկրորդային ձևեր։ Սեռականն ու տրականը ի և իկ հոլովումներում ունեն երկրորդային ձևեր, իսկ ց և այք հոլովումներում՝ առաջնային, բայց տրականը կարող է ունենալ նաև երկրորդային ձև որոշյալի համար՝ ի հոլովման մեջ, մինչդեռ սեռականը չի կարող։

* * *

Ամփոփելով հոլովական վերջավորությունների, եզակի ու հոգնակի թվերի և որոշյալ ու անորոշ առումների մասին մինչև այժմ ասվածները, կարելի է բոլորը ներկայացնել հետևյալ երկու տախտակներով։ Առաջին տախտակում բերված են յուրաքանչյուր հոլովի բոլոր կոնկրետ վերջավորությունները՝ առանց հոլովումները նշելու, իսկ երկրորդում տրված են հոլովումները և յուրաքանչյուր հոլովի վերջավորությունը (տե՛ս տախտակներ №№ 11, 12)։ Քանի որ անորոշը հյութական ձևույթով չի նշվում, ապա № 12 տախ-

Տախտակ 11

		Եզակի		Հոգնակի[1]	
		Հոլովական վերջավորություն	Որոշյալի վերջավորութ.	Անորոշ	Որոշյալ
Ու.	Հ°	—, -ի	-ը(ն)	-եր — #, -ներ — #, -ք, -այք, -իկ — #, (-երք), (-ի-ք)	-եր — #-ը, -ք — #, -այք-ը, -իկ — # -- #, -երք-ը, (-ի-ք-ը)
	Հ$^{+}$	— #	-ը(ն)		
Ս.	Հ°	-ի, -ու, -ան(-ա), -ոջ -վա(-վան), (-ո), (-յան)	— #	-ի, -ց, -անց, (-(եր)-անց, -(երք)-ի), (-ոց)	— #
	Հ$^{+}$	— #	— #		
Տ.	Հ°	-ի, -ու, -ան (-ա), -ոջ, -վա(-վան), (-ո), (-յան)	ը(ն), -(ու)ն(ույն)	-ի, -ց, -անց, (-(եր)-անց, -(երք)-ի), (-ոց)	-ի-ն, -ց, -անց — #, (-(եր)-անց-ը, -(երք)-ի-ն) (-ոց-)
	Հ$^{+}$	— #	ը(ն)		
Բ.	Հ	-ից(նից), -ուց	— #	-ից	— #
Գ.	Հ	-ով(նով), -բ	— #	-ով	— #
Ն.	Հ	-ում	— #	-ում	— #

[1] Այն ձևերը, որոնց հոլովի համար # վերջավորություն նշանակված չէ, հոլովի իմաստը նշույթավորված է հոգնակերտ ձևույթով կամ նրան նախորդող հոլովական վերջավորությամբ։

Խ ղ ա կ ի քի վ

	Ու.	Ս.	Տ.	Բ.	Գ.	Ն.
Կաճռճավոր հոլովումներ						
Ի հոլովում	չ°—#-ը	չ°-ի—#	չ°-ի-ն	չ-ից—#	չ-ով – #	չ-ում—#
Ու »	չ°-ի-ն	չ°-ու-	չ°-ու-ն	չ-ուց—#	չ-ով—#	չ-ում—#
Ան »	չ°—#-ը	չ°-ան(ա)—#	չ°-ան(ա)-ը	չ-ից(նից)—#	չ-ով(նով)—#	չ-ում(-նում)-#
Վա »	չ°—#-ն	չ°-վա(վան)-	չ°-վա(վան)-ն	չ-ից(նից)—#	չ-ով(նով)—#	չում(նում)—#
Ոչ »	չ°—#-ը	չ°-ոչ—#	չ°-ոչ-ը	չ-ից—#	չ-ով—#	—
Ա ներքին հոլ.	չ+—#-ը	չ+—#—#	չ+—#-ը	չ-ից—#	չ-ով/ը—#	չ-ում—#
Ո » »	չ+—#-ը	չ+—#—#	չ+—#-ը	չ-ից—#	չ-ով—#	—
Այլաձև հոլովումներ						
Ո արտաքին հոլ.	չ°—#-ը	չ°-ո—#	չ°-ո(ու, ույ)ն	չ-ից—#, չ-ուց—#	չ-ով—#	չ-ում—#
Ծան » »	չ°—#-ը	չ°-յան—#	չ°-յան-ը	չ-ից—#	չ-ով—#	չ-ում—#
Ա » »	չ°—#-ը	չ°-ա—#	չ°-ա-ն	չ-նից—#	չ-նով—#	—
Վան » »	չ°—#-ը	չ°-վան—#	չ°-վան-ը	չ-ից—#	չ-ով—#	—
Ե ներքին հոլ.	չ+—#-ը	չ+—#—#	չ+—#-ը	չ-ից—#	չ-ով—#	—

Խ ղ ա կ ի քի վ

	Ու.	Ս.	Տ.	Բ.	Գ.	Ն.
Կաճռճավոր հոլովումներ						
Ի հոլովում	չ°—#-ը	չ°-ի—#	չ°-ի-ն	չ-ից—#	չ-ով – #	չ-ում—#
Ու »	չ°-ի-ն	չ°-ու-	չ°-ու-ն	չ-ուց—#	չ-ով—#	չ-ում—#
Ան »	չ°—#-ը	չ°-ան(ա)—#	չ°-ան(ա)-ը	չ-ից(նից)—#	չ-ով(նով)—#	չ-ում(-նում)-#
Վա »	չ°—#-ն	չ°-վա(վան)-	չ°-վա(վան)-ն	չ-ից(նից)—#	չ-ով(նով)—#	չում(նում)—#
Ոչ »	չ°—#-ը	չ°-ոչ—#	չ°-ոչ-ը	չ-ից—#	չ-ով—#	—
Ա ներքին հոլ.	չ+—#-ը	չ+—#—#	չ+—#-ը	չ-ից—#	չ-ով/ը—#	չ-ում—#
Ո » »	չ+—#-ը	չ+—#—#	չ+—#-ը	չ-ից—#	չ-ով—#	—
Այլաձև հոլովումներ						
Ո արտաքին հոլ.	չ°—#-ը	չ°-ո—#	չ°-ո(ու, ույ)ն	չ-ից—#, չ-ուց—#	չ-ով—#	չ-ում—#
Ծան » »	չ°—#-ը	չ°-յան—#	չ°-յան-ը	չ-ից—#	չ-ով—#	չ-ում—#
Ա » »	չ°—#-ը	չ°-ա—#	չ°-ա-ն	չ-նից—#	չ-նով—#	—
Վան » »	չ°—#-ը	չ°-վան—#	չ°-վան-ը	չ-ից—#	չ-ով—#	—
Ե ներքին հոլ.	չ+—#-ը	չ+—#—#	չ+—#-ը	չ-ից—#	չ-ով—#	—

Հոգնակի թիվ

(ու = ուղղականի ձև, ուհ = ուղղականի հիմք, ա = սրբականի ձև, հա = սրբականի հիմք)

	Ու.	Ս.	Տ.	Բ.	Գ.	Ն.
Կանոնավոր հոլովումներ						
Ի հոլովում	Հ-եր — #, Հ-ներ — #	Հ(ու)-ի	Հ(ու)-ի-ն	Հ(հա)-ից	Հ(հա)-ով	Հ(հա)-ում
Ø հոլովում	Հ-ք	Հ-ց		Հ(ա)-ից	Հ(ա)-ով	Հ(ա)-ում
Անկանոն հոլովումներ						
Իկ հոլովում	Հ-իկ — #	Հ(ու)-ակց	Հ(ու)-ակց	Հ(ա)-ից	Հ(ա)-ով	Հ(ա)-ում
Այք »	Հ-այք	Հ(ուհ)-անց	Հ(ուհ)-անց	Հ(ա)-ից	Հ(ա)-ով	Հ(ա)-ում
(Իք) »	Հ-իք	Հ(ու)-ի-ն կամ Հ(ուհ)-անց	Հ(ու)-ի-ն կամ Հ(ուհ)-անց	Հ(ա)-ից կամ Հ(ա)-ից	Հ(հա)-ով կամ Հ(ա)-ից	Հ(ա)-ում
(Իք)	Հ-ի-ք	Հ(ուհ)-ոց	Հ(ուհ)-ոց	—	—	—

տակի եզակիի մասում անորոշին առանձին սյունակ չենք հատկացրել. հոգնակիում որոշյալը և անորոշը առանձնացրել ենք, որպեսզի անորոշի սյունակում ավելի ցայտուն արտահայտվեն հոգնակերտ և հոլովակերտ վերջավորությունները: Այս ձևերը, որպես անորոշ, պետք է ունենային զրո նշանը նաև այդ քերականական կարգի համար, բայց դա սյունակը կլցներ զրոներով, ուստի և՝ դրանք հանում ենք՝ կանխադրելով բոլորի համար անորոշի զրո վերջավորությունը որպես ինքնին հասկանալի տարր: Որոշյալի ձևերում երկու զրո (##) նշաններից վերջինը վերաբերում է որոշյալի վերջավորությանը, նախորդը՝ հոլովի:

Երկու տախտակների տվյալները ի մի բերելով՝ կարելի է կազմել հոլովաձևերի հետևյալ ընդհանուր կառուցվածքային տիպերը՝ անորոշի համար, ըստ որում որոշյալը ներկայացնում է միայն ուղղականի և տրականի նույն հոլովաձևերը՝ որոշիչ հոդով (բանաձևերի մեջ վ=հոլովական նյութապես արտահայտված վերջավորություն, հ=հոգնակերտ ձևույթ, բ=բազմիմաստ (հոլովի և թվի) ձևույթ, ը=որոշիչ հոդ):

	Եզակի	Հոգնակի
Ու.	Հ° — #, Հ°-վ, Հ⁺ — #	Հ—հ— #, Հ—բ, (Հ—վ—բ)
Մ.	Հ°—վ, Հ⁺ — #	Հ—հ—վ—, Հ—բ
Տ.	Հ°—վ, Հ⁺ — #	Հ—հ—վ, Հ—բ,
Բ.	Հ—վ	Հ—վ
Գ.	Հ—վ	Հ—վ
Ն.	Հ—վ	Հ—վ

Որոշյալի համար կունենանք.

Ու. Հ°—#—ը, Հ°—վ—ը Հ—հ—ը, Հ—բ— #, (Հ—վ—բ—ը)
Տ. Հ—վ—ը, Հ⁺ — # —ը Հ—հ—վ—ը, Հ—բ— #, (Հ—բ—ը):

Մյուս հոլովները որոշյալի ձև չունեն:

Բ. ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Գոյականի խոսքամասային իմաստ ունեցող և հոլովվող դերանունները հոլովման տեսակետից բաժանվում են երեք խմբի. ա) անվանական հոլովում ունեցող դերանուններ (նույն, մյուս, ամենքը, ինչ ևն), բ) դերանվանական հոլովում ունեցող դերա-

նուններ (ես, դու, մենք ևն), գ) խառն հոլովում ունեցող դերանուններ։ Առաջին խմբի դերանուններով այստեղ չենք զբաղվի, որովհետև նրանք արդեն նկարագրված անվանական հոլովումներին ոչինչ չեն ավելացնում։ Ուստի և անցնենք մյուս երկու խմբին։

I. Դերանվանական հոլովում.— *Դերանվանական հոլովում ասելով հասկանում ենք դերանուններին հատուկ հոլովաձևերի կազմության այն յուրահատկությունը, որ բառի ուղղական, սեռական ու տրական և եզակի ու հոգնակի թվերը բոլորովին տարբեր, իրարից չկազմվող հիմքեր, հաճախ նույնիսկ առանձին արմատներ են. այսպես, օրինակ, ես դերանվան հոգնակին է մենք, դու դերանվան սեռականն է fn, տրականը՝ fեզ ևն։ Այս կարգին են պատկանում 1-ին դեմքի՝ ես, մենք և 2-րդ դեմքի դու, դուք դերանունները, որոնց հոլովումը հետևյալ պատկերն ունի.*

	Եզակի	Հոգնակի
Ու.	*ես, դու*	*մենք, դուք*
Ս.	*իմ, քո*	*մեր, ձեր*
Տ.	*ինձ, քեզ*	*մեզ, ձեզ*
Բ.	*ինձ-նից, ինձ-անից, քեզ-նից (-անից)*	*մեզ-նից (-անից), ձեզ-նից (-անից)*
Գ.	*ինձ-նով, ինձ-անով, քեզ-նով (-անով*	*մեզ-նով (-անով), ձեզ-նով (-անով)*
Ն.	*ինձ-նում, ինձ-անում քեզ-նում (-անում)*	*մեզ-նում (-անում), ձեզ-նում (-անում)*

Այս հոլովման մասին կարելի է անել հետևյալ ընդհանուր դիտողությունները։

1. Բացառական, գործիական ու ներգոյական հոլովումների վերջավորությունները և կազմությունը նույնն են անվանական ի հոլովման նույն հոլովների կազմության ու վերջավորությունների հետ։ Բոլորի հիմքն է տրականի հոլովաձևը. վերջավորություններն են -ից, -ով, -ում ձևույթների ներույթավոր ձևակները՝ (-նից), (-նով), (-նում), որոնք ունեն նաև երկու ներույթով տարբերակներ՝ (-ան-ից), (ան-ով), (-ան-ում)։ Սա մեզ հնարավորություն է տալիս նույնացնելու այդ հոլովների կառուցվածքը անվանական հոլովման նույն հոլովների կառուցվածքի հետ և բոլորը ներկայացնել մեկ՝ Հ°+վ բանաձևով, ինչպես որ ունենք այնտեղ։

2. ես, իմ, ինձ, fո ձևերը հնարավոր չէ անդամատել և վերածել հիմքերի ու վերջավորությունների. դրանցից յուրաքանչյուրը ամբողջությամբ վերցրած կարող է դիտվել որպես համապատասխան հոլովի նշույթավորված հիմք՝ զրո վերջավորությամբ: Ըստ այդմ կունենանք դրանց՝ նույնպես մեկ ընդհանուր բանաձևը, այն է՝ $Հ^{+}+\#$:

3. Մենք–դուք, մեր–ձեր, մեզ–ձեզ զույգերի մեջ կարող ենք անջատել f, r, զ տարրերը որպես վերջավորություններ, որով կունենանք մեն–, մե, դու–, ձե–, fե– հիմքերը. մեն– հիմքից կարող ենք անջատել –ն տարրը և դիտել որպես ներույթ (պատմականորեն նա այդպիսին էլ է), որով մենք ձևի հիմքն էլ կլինի մե–: Քանի որ f, r, զ դիտում ենք որպես վերջավորություններ, ապա՝ դու–, ձե– հիմքերը ազատվում են հոլովական իմաստից: Դու– ձևույթը համընկնում է 2-րդ դեմքի եզակի ուղղականի հիմքին, ուստի և երկրորդ դեմքի համար կարող ենք կանխադրել դու– ընդհանուր ձևույթը, որով նա կազատվի նաև թվի կարգից: Սրան համապատասխան նախորդ կետի բանաձևին կավելանա մեկը ևս, այն է՝ $Հ^{\circ}—\#$: Բանաձևի մեջ նախորդի նշույթավոր հիմքը դարձել է անշույթ ըստ հոլովի: Ըստ այսմ, 2-րդ դեմքի {դու} ձևույթը չունի ո՛չ հոլովի, ո՛չ էլ թվի վերջավորություն. նա քերականորեն (ձևաբանորեն) նշված է միայն դեմքով: Եզակի սեռականին ու տրականին ուղղականը հակադրվում է հիմքի տարբերությամբ (աննշույթ–նշույթավոր), իսկ հոգնակիի ուղղականին՝ վերջավորությամբ ($\#$-ք): Քանի որ զ վերջավորությունը տրական է կազմում և՛ եզակիում (քեզ) և՛ հոգնակիում (ձեզ), ապա՝ մենք կարող ենք եզակի տրականի fե– հիմքը նույնացնել սեռականի fո հիմքի հետ, ազատելով հոլովական իմաստից, և դիտել այդ երկուսը որպես մեկ ձևույթի ենթաձևույթներ: Հոգնակիում ձե հիմքը ունի առանձին հոլովական վերջավորություններ սեռականի և տրականի համար, ուստի և զերծ է հոլովական իմաստից, բայց նա հակադրվում է եզակիի fո–, fե– ենթաձևույթներին թվով, ուստի և նշույթավորված է ըստ թվի: Վերջապես, բոլոր հիմքերը թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեմքերի, անխտիր նշույթավորված են ըստ դեմքի քերականական կարգի: Առաջին դեմքի մե– ձևույթը նշույթավորված չէ ըստ թվի. ուղղականում նա հակադրվում է եզակիին f վերջավորությամբ, իսկ սեռականին ու տրականին՝ նրանով, որ նրանք նշույթավոր են նաև հոլովով: Այս բոլորից ելնելով, կարելի է տալ յուրաքանչյուր հիմքի հետևյալ բնութագիրը (դ=դեմքի իմաստ, լ=հոլովի

իմաստ, թ=թվի իմաստ, տառի վրա դրված գծիկը ցույց է տալիս, որ տվյալ իմաստով նշույթավորված չէ, բ = բազմիմաստ (հոլով և թիվ ցույց տվող) վերջավորություն)։

1-ին դեմ f	2-րդ դեմ f
ես = դթլ	*դու — = դթլ*
իմ = դթլ	*քո — = դթլ*
ինձ = դթլ	*քե — = դթլ*
մե = դթլ	*ձե — = դթլ*

Ձևույթների այս նույնացումների ու բնութագրումների հիման վրա կարող ենք այժմ տալ յուրաքանչյուր հոլովաձևի հիմքի բանաձևը (Հ(հիմք)-ին հաջորդող տառերը ցույց են տալիս թե ո՛ր իմաստի համար է վերջավորություն ստանում տվյալ հոլովաձևը, որով և պարզվում է, թե ինչ է արտահայտում հիմքը)։

1-ին դեմք

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	*Հ⁺ — # — #*	*Հ⁺ — բ*
Սեռ.	*Հ⁺ — # — #*	*Հ⁺ — լ*
Տր.	*Հ⁺ — # — #*	*Հ⁺ — լ*
Բ.	*Հ⁺ — լ*	*Հ⁺ — լ*
Գ.	*Հ⁺ — լ*	*Հ⁺ — լ*
Ն.	*Հ⁺ — լ*	*Հ⁺ — լ*

2-րդ դեմք

Ուղ.	*Հ⁺ — # — #*	*Հ⁺ — բ*
Սեռ.	*Հ⁺ — # — #*	*Հ⁺ — լ*
Տր.	*Հ⁺ — լ*	*Հ⁺ — լ*
Բ.	*Հ⁺ — լ*	*Հ⁺ — լ*
Գ.	*Հ⁺ — լ*	*Հ⁺ — լ*
Ն.	*Հ⁺ — լ*	*Հ⁺ — լ*

Այս բոլորի ընդհանրացումով կստանանք հոլովաձևերի հետևյալ կառուցվածքային երեք տիպերը. Հ⁺ — ≠ — ≠, Հ⁺ — լ, Հ⁺ — բ։

Բոլոր հիմքերի վրա դրված է + նշանը, որովհետև բոլորն էլ նշույթավորված են առնվազն մեկ քերականական իմաստով։ Այդ բանաձևերի հիման վրա կարող ենք բոլոր հիմքերը բաժանել երեք խմբի՝ ըստ իրենց նշույթավորված քերականական իմաստի.

1. Հ$^+$— բ = դիմ (դու-) .— միայն դեմքով նշույթավորված
2. Հ$^+$ — լ = դիմ (մե-, քե-, ձե- և ինձ-, քեզ-, մեզ-, ձեզ-, որպես Բ., Գ., Ն. հոլովների հիմքեր) .—դեմքով և թվով նշույթավորված
3. Հ$^+$— = դիմ (ես, իմ, ինձ, քո).—դեմքով, թվով և հոլովով նշույթավորված։

Այժմ, երբ հիմքերի իմաստները գիտենք, կարող ենք պարզել նաև վերջավորությունների իմաստը.

1. {Զ} — տրականի հոլովական իմաստ (քե-զ, մե-զ, ձե-զ)։
2. {Ր} — սեռականի հոլովական իմաստ (մե-ր, ձե-ր)։
3. {Ֆ} → /ք/, /(ն)ք/ — հոգնակի թվի և ուղղական հոլովի իմաստ (մե-(ն)ք, դու-ք)։

Բացառական, գործիական և ներգոյական հոլովների վերջավորությունների մասին արդեն գիտենք։

Հոլովական վերջավորությունների և հիմքերի իմաստները իմանալով, կարող ենք, արդեն, որոշել նաև նրանց համակցությունները. այսպես՝ զ ձևույթը չի կարող հանդես գալ ես, իմ, ինձ, ֆn ձևերի հետ, որովհետև նրանք հոլովով նշույթավորված են, ինձ– հիմքի հետ, որովհետև սա համակցվում է միայն –ցից, –ցով, –ցում ձևույթների հետ, դու հիմքին, որովհետև նա համակցվում է միայն f ձևույթին, մնում են, ուրեմն, մե–, fե– և ձե–: Այդ ձևով էլ մյուսները։

II. Խառն հոլովում.— Այսպես ենք կոչում այն դերանունների հոլովումը, որոնք անվանական հոլովումների տարբեր ձևեր ունեն եզակի ուղղականում ու սեռականում, տրականը կազմվում է սեռականից, մյուս հոլովները՝ տրականից. այսպիսով, այս կարգի բառերը եզակիի մյուս հոլովումներում և ամբողջ հոգնակիում ունեն անվանական հոլովում։ Ահա այս հոլովման պատկերը.

Եզակի

Ու. Սա	դա	նա	ինքը
Ս. Սրա	դրա	նրա	իր (իրա, յուր)

Տ.	Սրան	դրան	նրան	իրենն (իրանն)
Բ.	Սրանից	դրանից	նրանից	իրենից (իրանից)
Գ.	Սրանով	դրանով	նրանով	իրենով
Ն.	Սրանում	դրանում	նրանում	իրենում

Հոգնակի

Ու.	Սրանք	դրանք	նրանք	իրենք
Ս.	Սրանց	դրանց	նրանց	իրենց (իրանց)
Տ.	Սրանց	դրանց	նրանց	իրենց (իրանց)
Բ.	Սրանցից	դրանցից	նրանցից	իրենցից (իրանցից)
Գ.	Սրանցով	դրանցով	նրանցով	իրենցով (իրանցով)
Ն.	Սրանցում	դրանցում	նրանցում	իրենցում (իրանցում)

Այս հոլովման հոգնակին, ինչպես պարզ կերպով երևում է, ամբողջությամբ նույնանում է ց անեզական հոլովման հետ: Հոգնակիի, ինչպես և եզակի բացառականի, գործիականի, ներգոյականի հիմքն է եզակի տրականի ձևը: Այս բոլոր հոլովաձևերի մեջ, ուրեմն, որևէ նոր երևույթ չկա, բացի նրանից, որ հոգնակիի ուղղականի հիմքն է դառնում եզակի տրականը:

Մյուս հոլովաձևերը կարելի է բնութագրել հետևյալ ձևով:

Ուղղական և սեռական հոլովները՝ սա, դա, նա ցուցականների համար՝ միմյանցից տարբերվում են նրանով, որ ուղղականը ներկայացնում է որևէ բաղաձայն + ա: Սրա հիման վրա կարող ենք այդ հոլովաձևերը բնութագրել երկու ձևով. ա) որպես նշույթավորված հիմքեր՝ զրո վերջավորությամբ, բ) որպես մեկ աննշույթ հիմք՝ հոլովական վերջավորություններով: Առաջին դեպքում հարկադրված կլինենք այդ երկու հոլովները ներկայացնել՝ Ու. Հ°—#, Ս. Հ+ (∅ > բ) — # բանաձևերով, այսինքն՝ կանխադրել ուղղականի բաղաձայնի և ա ձայնավորի միջև զրո հնչույթի դիմաց սեռականի r հնչույթը, որ զուգահեռ է աուս–անվան հիմքերի ∅ > ա փոփոխությանը: Սակայն այս բնութագրությունը, բացի ձևերի կազմության նկարագիրը բարդացնելուց, խախտում է նաև դրանց և ին–իր ձևերի միասնությունը: Այդ պատճառով էլ պետք է ընդունել երկրորդ բնութագիրը, այսինքն՝ սա–սրա ձևերում հիմքը համարել ս–, իսկ -ա, -րա ուղղականի և սեռականի վերջավորություններ՝

1 Հիմքը նախահունչ բաղաձայնը համարելն արդարանում է նաև պատմականորեն՝ այդ դերանունների ստուգաբանությամբ:

Սա մեզ հնարավորություն կտա իմ-իր ձևերի մեջ էլ անջատել ի- հիմքը և -ենք-, -ր վերջավորությունները, որոնցից -ր-ն կնույնացնենք -րա ձևույթի հետ, որ արդարանում է ժողովրդական-խոսակցական լեզվի ի-րա ձևով: Այս -րա և -ր վերջավորությունները նույնն են անձնականների ր վերջավորության հետ, ուստի և՝ րա-ն կհամարենք նրա տարբերակը: -Ա և -ենք- վերջավորությունները կհամարենք ուղղական հոլովի վերջավորության ենթաձևույթներ՝ բաշխումային հարաբերությամբ (բաղաձայն հիմքի հետ՝ -ա, ձայնավոր հիմքի հետ՝ -նք): Իմ-ը դերանվան սեռականի հնատիպ ձևը՝ յուր, որ այժմ գործածությունից դուրս է գալիս, կբնութագրենք իբրև յու-ր, որի մեջ վերջավորությունը նույն ր-ն է, իսկ յու- կհամարենք ի- հիմքի տարբերակը (ձևակը): Այսպիսով, ուղղականի ու սեռականի բոլոր չորսական ձևերի համար կունենանք՝ Հ + վ բանաձևը: Այս դերանունները ցույց են տալիս նաև դեմքի հարաբերություն. սա ցույց է տալիս առաջին դեմքին (խոսողին) մոտ գտնվող առարկա, դա՝ երկրորդ դեմքին (խոսակցին) մոտ գտնվող առարկա[1], նա և՛ անձնական դերանուն է, և՛ ցուցական, ուրեմն՝ ցույց է տալիս՝ ա) խոսակցությանը չմասնակցող անձ կամ առարկա, բ) խոսողից ու խոսակցից հեռու գտնվող առարկա. իմ-ը 3-րդ դեմքի անձնական դերանուն է: Ըստ այսմ, սա, դա նա դերանունների ս, դ, ն հիմքերը նշույթավորված են ըստ դեմքի, իսկ իմ-ը դերանվան ի- հիմքը նշույթավորված չէ. այս ձևում դեմքի ցուցիչն է ր հոդը (համմտ. ինքս, ինքդ): Այս բոլորը նկատի ունենալով՝ վերի բանաձևը կբաժանվի երկուսի՝

$$Հ^{+} — վ,\ Հ^{\circ} — վ — ր:$$

Ուղղականի ու սեռականի հոլովաձևերի այս բնութագրությունը բացատրում է նաև եզակի տրականի կազմությունը. նա կազմվում է սեռականի ձևից՝ ն վերջավորությամբ (սրա-ն, դրա-ն, նրա-ն). իմ-ը դերանվան տրականն է իրեն և ժողովրդական խոսակցական լեզվի իրան ձևը: Առաջին ձևի մեջ ունենք -են վերջավորությունը, երկրորդում՝ -ն, որ ավելանում է իրա սեռականին. քանի որ վերջավորությունն է -ն, ապա ե հնչույթը կհամարենք ներույթ, որով կստանանք տրականի վերջավորության ներույթավոր տարբերակը:

---

1 Նկատի ունենք ընդհանուր իմաստը և ոչ՝ դրա դանազան մասնավոր դրսևորումները:

Այս վերլուծությունները մեզ բերում են այն եզրակացության, որ դերանունների խառն հոլովումն էլ ներկայացնում է անվանական հոլովման կառուցվածքը, բայց ուղղականի, սեռականի և տրականի այնպիսի վերջավորություններով, որոնք չկան անվանական հոլովական ձևերում (ուղղ. ա, -ներ, սեռ. ուս, -ուր, տր՝. ն(են)։

Այս տիպի հոլովման են պատկանում նաև իւար և միմյանց փոխադարձ դերանունները։ Դրանցից առաջինի սեռականի ու տրականի հիմքը կհամարենք իւա-, իսկ վերջավորությունը՝ ր, որ նույնանում է -ուս/ր վերջավորության հետ։ Երկրորդի հիմքն է միմյան-, վերջավորությունը՝ ց. հոլովումը նույնն է, ինչ որ նախորդների հոգնակին, այն տարբերությամբ, որ ուղղականի ձև չունի։ Նույն ց հոլովման են ենթարկվում որ դերանվան հոգնակին (որոնք) և ոմն դերանվան հոգնակին, որի եզակին (ոմնի, ոմից) կանոնական չէ։ Որոնք և ոմանք ձևերն ունեն մերոնք, վարդանանք ձևերի կառուցվածքը (հիմք + ածանց + վերջավորություն)։

Վերջապես, խառը հոլովում ունի նաև ով դերանունը, որի սեռականն ու տրականը նույն ձևն ունեն՝ բոլորովին տարբեր ուղղականից (ում). ուղղականը ընդհանրացված հիմք է՝ զրո վերջավորությամբ, որով հակադրվում է ոչ միայն եզ. սեռական-տրականին, այլև հոգնակի ուղղականին, ուստի և նրա բանաձևը կլինի Հ°—#—# (հոլովի և թվի զրո վերջավորություններ)։ Սեռականի և տրականի ձևը ունի նշանակված հիմք՝ հոլովական զրո վերջավորությամբ։ Բացի ուղղականից, մյուս հոլովները հոգնակի ձև չունեն. ձևաբանորեն նրանք ունեն եզակիի կառուցվածք՝ Հ+վերջավորություն (զրո կամ նյութական), բայց ըստ իմաստի ու գործառության այս ձևերի մեջ թվի քերականական կարգը չեզոքանում է (համմտ. Դասախոսը դիմեց ուսանողներին.— ո՞ւմ։ Ուսանողը հարց տվեց դասախոսին.— ո՞ւմ։ Արամը ծնողներից նամակ ստացավ.— ումի՞ց։ Արամը եղբորից նամակ ստացավ.— ումի՞ց։ Բայց՝ Արտաշեսը նայեց ծառերին.—ինչերի՞ն։ Արտավազդը մոտեցավ սեղանին.— ինչի՞ն)[1]։ Այսպիսով, սեռական-տրականի (և մյուսների) ձևում էլ թվի իմաստը նշանակված չէ, ուստի և դրանց համար նույնպես կունենանք երկու զրո վերջավորություն ըստ հոլովի՝ նշանակա-

---

1 Խոսքի մեջ այս (ի՞նչ) հարցականի եզակին էլ կարող է գործածվել հոգնակիի փոխարեն, բայց իմաստային տարբերությամբ. օր. Նա նայում է հեռավոր լեռնագագաթներին.—ինչերի՞ն կամ ինչի՞ն։ Երկրորդ դեպքում հարցը նշանակում է ի՞նչ բանի։

վոր հիմքով (Հ⁺ — # —#)։ Քանի որ թվի համար ուղղականը (և մյուսները) նույնպես նշույթ չունեն, ապա այդ քերականական կարգի համար եզակի բոլոր ձևերը կհամարենք չեզոք, մանավանդ որ ով եզակին էլ կարող է գործածվել որպես հարցական՝ հոգնակիով դրված գոյականի համար, հատկապես այն դեպքում, երբ դրանք անորոշ են (Համմտ. Ուսանողներ եկան.—ո՞վ եկավ.— ուսանողներ)։ Թվի տեսակետից ուղղականն էլ չեզոք համարելը հնարավորություն կտա հանելու երկու զրոներից մեկը և ընդունել հետևյալ բանաձևը. Ու. Հ⁰— #, Ս. Տ. Հ⁺ — #, որոնց միջև հակադրություն ստեղծվում է աննշույթ և նշույթավոր հիմքերով։

Հոգնակի ուղղականը ունի ով-fեr ձևը, այսինքն՝ եզակի ով չեզոք հիմքը և -fեr հոգնակերտը, որի մեջ պատմականորեն կարելի է առանձնացնել երկու հոգնակերտ վերջավորություն (ք-եր), բայց համամանակյա նկարագրության համար դա ոչ մի արժեք չունի, ուստի և -fեr վերջավորությունը կդիտենք որպես հոգնակերտ -եr ենթաձևույթի f ներույթով ձևակը։

Ով դերանվան բացառականի և գործիականի հոլովաձևերը կազմվում են -ից, -ով վերջավորություններով կամ դրանց ներույթավոր ձևակներով։ Սրանց բանաձևն է՝ Հ°—վ։ Իբրև հարցական-հարաբերական, ով դերանունը գործածվում է անձերի հատուկ և հասարակ անունների համար, ուստի և ներգոյականի համադրական ձև չունի։

Ամփոփելով խառը հոլովման բառերի մասին ասվածները, կարող ենք որոշել հոլովաձևերի արտահայտած քերականական իմաստները և ներկայացնել նրանց կառուցվածքի բանաձևերը։

1. Սա, դա, ճա

Ու.	սա — դթլ — Հ⁺ — # — լ	սրանք—դթլ — Հ⁺ — բ
Ս.	սրա—դթլ— Հ⁺ — # — լ	սրանց—դթլ — Հ⁺ բ
Տ.	սրան—դթլ—Հ⁺ — # — լ	սրանց—դթլ — Հ⁺ — բ
Բ. Գ. Ն.	սրանից սրանով սրանում	— դթլ — Հ⁺ — # — լ	սրանցից սրանցով սրանցում	դթլ—Հ⁺—լ

2.	Ինքը—դթլ—Հ⁺ — # — լ	իրենք—դթլ—Հ⁺—բ
	իր—դթլ—Հ⁺ — # — լ	իրենց—դթլ—Հ⁺ —բ
	իրեն—դթլ—Հ⁺ — # — լ	իրենց—դթլ—Հ⁺ —բ

իրենց
իրենով
իրենում } *դ̄թլ* Հ+ — լ

իրենցից
իրենցով
իրենցում } *դ̄թլ* — Հ+ — լ

3. *Իրար—դ̄թլ* Հ° — # — լ
իրար—դ̄թլ Հ° — # — լ
իրարից—դ̄թլ Հ° — # — լ
իրարով—դ̄թլ Հ° — # — լ

4. *Միմյանց—դ̄թլ—Հ°—բ*
միմյանցից
միմյանցով } *դ̄թլ* Հ+ — լ

5. *Որ—դ̄թլ—Հ° — #*
որի—դ̄թլ—Հ° — լ
որի(ն)—դ̄թլ—Հ° — լ
որից—դ̄թլ—Հ° — լ
որով—դ̄թլ—Հ° — լ
որում—դ̄թլ—Հ° — լ

որոնք—դ̄թլ—Հ°—բ
որոնց—դ̄թլ—Հ°—բ
որոնց—դ̄թլ—Հ°—բ
որոնցից
որոնցով
որոնցում } *—դ̄թլ=Հ+ — լ*

6. *Ոմն—դ̄թլ—Հ° — #*

ոմանք—դ̄թլ—Հ°—բ
ոմանք—դ̄թլ—Հ°—բ
ոմանց—դ̄թլ—Հ°—բ
ոմանցից—դ̄թլ—Հ+ — լ
ոմանցով—դ̄թլ—Հ+—լ

7. *ով—դ̄թլ—Հ+ — #*
ում—դ̄թլ—Հ+ — #
ում—դ̄թլ—Հ+ — #
ումից
ումով } *—դ̄թլ — Հ+ — լ*

ովքեր—դ̄թլ—Հ+ — հ — #

Այս բոլորի հիման վրա կարելի է այժմ բնութագրել հիմքերի արտահայտած քերականական իմաստները.

1. *Ս, դ, ն, ի — դ̄թլ*
2. *Սրան-, դրան-, նրան-, իրեն (որպես հիմքեր) — դ̄թլ*
3. *իրա—դ̄թլ*
իրար — դ̄թլ

4. *միմյան* — $\overline{դթլ}$

5. *որ* — $\overline{դթլ}$

որոն — $\overline{դթլ}$

6. *ոմն* — $\overline{դթլ}$

7. *ով* — $\overline{դթլ}$

ում — $\overline{դթլ}$

Ինչպես տեսնում ենք, դեմքի քերականական իմաստ արտահայտում են միայն առաջին երկու խմբի հիմքերը, մյուսները զուրկ են դեմքի քերականական կարգից: Մյուս երկու կարգերի համար կարելի է կատարել հետևյալ խմբավորումները.

ա) ոմն, ով, ում *արտահայտում են թվի և հոլովի իմաստներ:*

բ) ս, դ, ն, ի, սրան-, դրան-, նրան-, իրա-, իրար-, միմյան-, որոն-, ոման- *չեն արտահայտում ո՛չ հոլովի, ո՛չ էլ թվի իմաստ:*

Այս խմբավորումների հիման վրա էլ կարող ենք որոշել վերջավորությունների իմաստները հետևյալ ձևով.

1. ա, ևf—*ուղղական հոլովի իմաստ*
2. ra, r—*սեռական հոլովի իմաստ*
3. ն—*տրական հոլովի իմաստ*
4. f—*հոգնակիի և ուղղականի իմաստ*
5. g—*հոգնակիի և սեռական-տրականի իմաստ*
6. fեr—*հոգնակիի և ուղղականի իմաստ:*

Դերանվանական և խառը հոլովումների հիմքերի ու վերջավորությունների բնութագրությունները ամփոփվում են հետևյալ տախտակների մեջ[1]*:*

Տախտակ 13

Դերանվանական հիմքեր

Հիմքեր	*Նշույթավորված են*		
	դեմքով	*թվով*	*հոլովով*
1. *Ես, իմ, ինձ, ք*ո	+	+	+
2. *Մե-, քե-, ձե-*	+	+	—
3. *Դու, ս-, դ-, ն-, ի-*	+	—	—
4. *Ոմն*	0	+	+
5. *Ով, ում*	0	+	+
6. *Ոման-, ք*ըա-, *միմյան-* . . .	0	—	—

1 *Չենք տալիս բայաոական, գործիականի և ներգոյականի հիմքերը, որոնք նույնանում են անվանական հոլովումների հիմքերի և վերջավորությունների հետ:*

Դերանվանական վերջավորություններ

Հոլովներ	Վերջավորություններ	Վերջավորության արտահայտած քերականական կարգերը	
		թիվ	հոլով
Ուղղական	1. [ք] → /ք/, /նք/	+	+
	2. [-քեր]	+	+
	3. (-ա)	—	+
	4. (-նք)	—	+
	5. (#)	—	+
Սեռական	1. [-ր] → /ր/, /րա/	—	+
	2. [-ց]	+	+
	3. (#)	—	+
Տրական	1. (-ն)	—	+
	2. [-ց]	+	+
	3. (#)	—	+

* * *

Ամփոփելով անվանական և դերանվանական հոլովումների նկարագրությունը՝ կարող ենք ներկայացնել բոլոր վերջավորությունները իրենց տարբերակներով ու արտահայտած քերականական իմաստներով։ Քանի որ վերջավորությունները դիտում ենք որպես մեկ ձևորդի ենթաձևորդներ, ապա՝ որպես վերացական ընդհանուր ձևորդի նշան (սիմվոլ) կընդունենք յուրաքանչյուր հոլովի սկզբնատառը։

Տ ա խ տ ա կ 15

Ձևույթ	Ենթաձևույթ	Ձևակներ	Քերականական կարգեր			
			եզակի		հոգնակի	
			թիվ	հոլով	թիվ	հոլով
{Ու}	1. [ի]		—	+		
	2. [եր]	/եր/, /քեր/			+	—
	3. [ներ]				+	—
	4. [ք][1]	/ք/, /նք/			+	+
	5. [այք]				+	+
	6. [իկ]				+	—
	7. [երք]				+	+
	8. [ք][2]				+	—
	9. [ա]		—	+		
	10. [նք]		—	+		

1	2	3	4	5	6	7
{Ս}	1. [ի]		—	+	—	+
	2. [ու]		—	+		
	3. [ան]	/ան/, /ա/	—	+		
	4. [ոջ]		—	+		
	5. [վա]	/վա/, /վան/	—	+		
	6. [ո]		—	+		
	7. [յան]		—	+		
	8. [ց]				+	+
	9. [անց]				+	+
	10. [-ոց]				+	+
	11. [բ]	/բ/, /բա/	—	+	—	+
{Տ}	սեռականի 1—10 ենթաձևույթները					
	11. [ու]	/ու/, /ույ/	—	+		
	12. [ն]		—	+		
{Ք}	1. [ից]	/ից/, /նից/, /անից/	—	+	—	+
	2. [ուց]		—	+		
{Գ}	1. [ով]	/ով/, /նով/, /անով/	—	+	—	+
	2. [ը]		—	+		
{Ն}	1 [ում]	/ում/, /նում/, /անում/	—	+	—	+

5. ՀՈԼՈՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ

Մինչև այժմ մենք խոսել ենք հոլովաձևերի կազմության մասին՝ որոշելով այն բոլոր ենթաձևույթները, որոնցով կազմվում է հոլովներից յուրաքանչյուրի հոլովաձևը: Քանի որ տվյալ հոլովի հոլովական վերջավորությունները որպես ձևորդներ տվյալ հոլովաձևն են կազմում բառերի որոշ դասի համար, ապա մենք այդ ձևորդների միջև եղած հարաբերությունը բնորոշել ենք որպես լրացուցիչ բաշխման հարաբերություն: Դրա հիման վրա էլ մենք այն բազմաթիվ վերջավորությունները, որոնցով կազմվում է տվյալ հոլովաձևը, համարել ենք այդ հոլովի վերացական-ընդհանուր ձևույթի ենթաձևույթները: Այժմ մեզ անհրաժեշտ է պարզել յուրաքանչյուր հոլովի հոլովական ձևերի, իբրև բառաձևերի, հարաբերությունը միմյանց հետ: Սեռական հոլովի եզակիի համար անվանական հոլովման մեջ ունենք հետևյալ կանոնական ձևերը.

բանվոր-ի	*օր-վա*	*ծննդ-յան*	*հոր*	*սիր-ո*
որդ-ու	*ընկեր-ոջ*	*մահ-վան*	*անվան*	
թռռ-ան	*աղջկա*	*տան*	*կայսեր*	

Այս բոլոր ձևերը, անկախ այն բանից, թե ինչպիսի կենսունակություն և բառերի ինչպիսի քանակային ընդգրկում ունեն, ներկայացնում են սեռական հոլովի ձևը՝ բառերի տարբեր դասերի համար: Դրանցից բոլորն էլ նույն հարաբերությունն ունեն մյուս հոլովների հետ. բանվոր-ի ձևն այնպես է հարաբերում բանվոր, *բանվորից են ձևերին, ինչպես* օրվան *ձևը՝* or, *օրվանից ձևերին, անվան ձևը՝* անուն, *անունից ձևերին, հոր ձևը՝* հայր, *հորից ձևերին և այլն, իսկ սա նշանակում է, թե սեռականի այդ բոլոր 13 ձևերն էլ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ են միմյանց հետ: Դրանից ելնելով, մենք այդ բոլոր հոլովաձևերը կհամարենք սեռական հոլովի վերացական-ընդհանուր հոլովաձևի ենթահոլովաձևերը: Ըստ այդմ, անվանական հոլովման մեջ սեռականն ունի 13 ենթահոլովաձև եզակի թվում և 3 ենթահոլովաձև հոգնակի թվում (բանվորներ-ի, մերոնց, մարդկանց): Այսպես պետք է բնութագրել նաև բոլոր մյուս հոլովների տարբեր ձևերը, որոնք ստացվում են տարբեր հոլովումներով, և, հետևաբար, ընդգրկում են բառերի տարբեր դասեր՝ ստեղծելով լրացուցիչ բաշխման հարաբերություն: Ստորև բերում ենք բոլոր հոլովաձևերի հնարավոր կանոնական ենթահոլովաձևերը (տե՛ս էջ 276):*

Տախտակի տվյալները կարելի է ամփոփել հետևյալ ձևով.

1. *Ուղղականի համար եզակիում ունենք երկու ենթահոլովաձև՝ իբրև տիպարներ, հոգնակիում՝ 6,*
2. *Սեռականի համար՝ եզակիում 13, հոգնակիում՝ 3,*
3. *Տրականի համար՝ եզակիում 14, հոգնակիում՝ 3,*
4. *Բացառականի համար՝ եզակիում 6, հոգնակիում՝ 2,*
5. *Գործիականի համար՝ եզակիում 4, հոգնակիում՝ 2,*
6. *Ներգոյականի համար՝ եզակիում 2, հոգնակիում՝ 2:*

Ինչպես վերը ասել ենք, մի քանի ենթաձևույթներ ունեն իրենց ձևակները. օրինակ, բացառականի համար ունենք ից *և* ից: *Դրա հետևանքն այն է լինում, որ տվյալ հոլովի տվյալ ենթահոլովաձևն էլ ունենում է երկու հնարավոր ձև. օրինակ՝ լեռ բառի բացառական հոլովի ձևն է՝ լեռից և լեռնից: Այս կարգի տարբեր հոլովաձևերի միջև ունենք երկու հնարավոր կազմություններ, որոնք պայմանավորված են ոչ թե տվյալ հոլովը կազմող ձևորդների բաշխումով,*

ե զ ա կ ի

Ու. *Բառի բացարձակ ձևը, որ ներկայացնում է 3 տիպար՝ անվերջավոր (± վերջավորութ.) և վերջավոր (-ի վերջավորութ.)*

Ս. *քաղաքի, ալգու, լեռան, օրվա, ընկերոջ, հոր, տան, աղջկա, ծննդյան, մահվան, անվան, կայսեր, սիրո*

Տ. » » » » » » » » » » », *սիրո (սիրու-)*

Բ.	*քաղաքից, ալգուց,*	*օրվանից, ընկերոջից, հորից,*	*աղջկանից*	
Գ.	*քաղաքով*	*ընկերոջով*	*աղջկանով*	
Ն.	*քաղաքում*	*(ընկերոջ՝ հոր՝*	*աղջկա մեջ)*	

հ ո գ ն ա կ ի

Ու. *տներ, քաղաքներ, լեռներ, մարդիկ, կանայք, մերոնք*

Ս. } *Տ.* }	*տների,*	*մարդկանց,*	*մերոնց*
Բ.	*տներից*	*մարդկանցից*	
Գ.	*տներով*	*մարդկանցով*	
Ն.	*տներում*	*մարդկանց մեջ*	

այլ նրանց տարբեր ձևակների ազատ գործառույթյամբ՝ միևնույն պայմաններում։ Սրանից ելնելով էլ, այդ կարգի տարբեր հոլովաձևերը կհամարենք միևնույն ենթահոլովաձևի կամ հոլովաձևի ազատ տարբերակները. ըստ այսմ՝ լեռից և լեռնից բացառականի եզակի թվի մեկ ենթահոլովաձևի ազատ տարբերակներն են։ Այդպես պետք է բնութագրել նաև բոլոր մյուս համանման դեպքերը (օր. լեռով և լեռնով, լեռում և լեռնում են)։

Վերջապես միևնույն բառի համար այս կամ այն հոլովի տարբեր ձևեր առաջ են գալիս նաև հոլովումների փոխանցման հետևանքով. այսպես, օրինակ, ընկեր բառի սեռականն է ընկերոջ և ընկերի, անկողին բառի սեռականը՝ անկողնու և անկողնի և այլն։ Այս կարգի զուգահեռ ձևերը չի կարելի նույնացնել ազատ տարբերակների հետ, որովհետև սրանք ստացվում են ոչ թե միևնույն ձևույթի կամ ենթաձևույթի տարբեր ձևակների, այլ տարբեր ենթաձևույթների գործառույթյան հետևանքով։ Այստեղ ըստ էության խախտվում է ենթաձևույթների լրացուցիչ բաշխման կարգը, և մեկ ենթաձևույթի ոլորտին պատկանող բառն անցնում է մի այլ ենթաձևույթի ոլորտին։ Բերված օրինակներից ընկեր բառը պատկանում է ոջ հոլովման (սեռականի [ոջ] ենթաձևույթի ոլորտ), բայց ընկերի ձևով անցնում է –ի հոլովման (սեռականի [ի] ենթաձևույթի ոլորտ), անկողին բառը պատկանում է ու հոլովման (սեռականի [ու] ենթաձևույթի ոլորտ), բայց ենթարկվում է նաև ի հոլովման (սեռականի [ի] ենթաձևույթի ոլորտ)։ Այս նկատի ունենալով, մենք այդպիսի զուգահեռ ձևերը, ազատ տարբերակներից զանազանելու նպատակով, կոչում ենք հոլովական զուգաձևեր։ Հոլովական զուգաձևերը լեզվի մեջ հանդես են գալիս տարբեր պատճառներով և համապատասխանորեն ներկայացնում են տարբեր կարգեր կամ սեռակներ։ Այսպես. տարի բառը, որպես ուղղականի վերջավոր ձև, ենթարկվում է ու հոլովման, իսկ ըստ իմաստի, որպես ժամանակ ցույց տվող բառ, ենթարկվում է -վա հոլովման. այստեղ զուգաձևերի առկայությունը պայմանավորված է ձևաբանական համակարգին հատուկ երևույթներով (հոլովում ըստ ձևի և հոլովում ըստ իմաստի)։ Ճաշ բառն իր գլխավոր իմաստով գործածվելիս ենթարկվում է ի հոլովման, իսկ «ճաշի ժամանակը» իմաստով՝ վա հոլովման, այդպես էլ անգամ (հինգ անգամից, այս անգամվանից), առաջ (դռան առաջին նստելու մեծ քար կա, առաջվա եռանդը չունի) և այլն։ Այս բառերի հոլովական զուգաձևությունը պայմանավորված է նրանց տարբեր իմաստներով։ Քանի որ տարի, ճաշ,

առաջ, անգամ և նման բառերի հոլովական ղուգաձևերը բխում են մեր արդի լեզվի համակարգում գործող այն օրինաչափություններից, որոնցով պայմանավորված է տարբեր ենթահոլովաձևերի կառուցվածքը (բառի ձև, տարբեր իմաստներ), ապա դրանք պետք է համարել զուգաձևեր ըստ կառուցվածքի: Այլ պատճառներ են գործում ընկերի–ընկերոջ, ամսվա–ամսի, անկողնու–անկողնի, կայսեր–կայսրի, ծննդյան–ծննդի, սգո–սգի, հրոջ–իվոր, տեգրոջ–տեգրի–տեգոր, լեռան–լեռի, նռան–նուռի և այլ այդպիսի բազմաթիվ զուգաձևերի առաջացման մեջ. այստեղ մի կողմից ունենք գրական լեզվի կանոնական ու ոչ կանոնական, ժողովրդական-խոսակցական կամ պարզապես բարբառային ձևերի գործածություն (քրոջ–քվոր, տեգրոջ–տեգոր), մյուս կողմից՝ հին, ավանդաբար պահպանված, լեզվի այժմյան հոլովական ձևերի համակարգին չպատկանող ձև և արդի համակարգին համապատասխանող ձև (կայսեր–կայսրի, սգո–սգի, ծննդյան–ծննդի ևն), երրորդ կողմից՝ հոլովման արդի համակարգին համապատասխանող զուգաձևեր (ընկերոջ–ընկերի, ամսվա–ամսի, անկողնու–անկողնի ևն), որոնցից առաջիններն թեև կանոնական, բայց ընդգրկում են փոքրաթիվ բառերի մասնավոր խմբեր, իսկ երկրորդները ներկայացնում են առավել կենսունակ և ընդհանրական հոլովումը: Այս երրորդ դեպքում, ուրեմն, գործում է լեզվի ներքին զարգացման ընդհանուր ձգտումը, որ տանում է դեպի հոլովաձևերի միօրինակացում: Այս բոլոր դեպքերում էլ զուգաձևերը ներկայացնում են լեզվի տարբեր ոճերին հատուկ ձևեր, ուստի և դրանք կարելի է կոչել **զուգաձևեր ըստ ոճերի** կամ **ոճական զուգաձևեր**: Բերված օրինակներից **հրոջ–իվոր, տեգրոջ–տեգոր** ներկայացնում են գրական և ժողովրդական կամ բարբառային ոճերի ձևերը, **կայսեր–կայսրի, սգո–սգի, ծնընդյան–ծննդի**՝ հնաբան և արդի գրական ոճերը, **ընկերոջ–ընկերի, անկողնու–անկողնի, տեգրոջ–տեգրի**՝ գրական-կանոնական և նորաբան ոճերը:

Այսպիսով, յուրաքանչյուր հոլովի տարբեր հոլովաձևերի միջև կարող ենք ունենալ երեք կարգի հարաբերություն՝ **բաշխումային** (դիստրիբուտիվ), **տարբերակային** և **զուգաձևային**:

Հոլովական ձևերի հարաբերությունները բնութագրելու համար մենք նկատի չունեցանք որոշյալ առման ձևերը, որովհետև դրանք հոլովաձևերին տալիս են մի նոր քերականական իմաստ և բնականաբար չեն կարող մտնել այն շարքերի մեջ, որոնք կազմում են ենթահոլովաձևերը, տարբերակները և զուգաձևերը: Բայց հենց

այս էլ առաջադրում է մի նոր հարց. որոշյալի առումը, հետևաբար նաև բ/ն հոդը, կապ ունի՞, արդյոք, հոլովաձևերի հետ, թե՝ նրանցից անկախ է։ Եթե՝ այո, ապա հոլովաձևերի կառուցվածքը չի կարելի քննել առանց որոշյալի ձևերի, իսկ եթե՝ ոչ, ապա հոլովաձևերի ուսումնասիրության մեջ չպետք է ներառել այդ ձևերը։ Այս խնդիրը կարևոր է մանավանդ այն պատճառով, որ մենք գոյականների սեռականը և տրականը առանձին հոլովներ համարելու համար իբրև կռվան ենք ընդունել տրականի հոդավոր ձևը։ Արդ, խնդրի լուծման համար մենք պետք է դիմենք այլ լեզուների և մեր լեզվի տվյալներին։ Ժամանակակից գերմաներենում հոդերը անկախ են հոլովաձևերից նրանով, որ բոլոր հոլովներն էլ հավասարապես կարող են ստանալ անորոշ կամ որոշյալ հոդ, բայց միևնույն ժամանակ նրանք կախման մեջ են հոլովներից իրենց համաձայնության։ Հոդերը դրվում են իրենց հետ կապված գոյականի հոլովով ու թվով։ Սակայն դա միայն հոդերին չէ հատուկ, այլև ածականներին, ստացական դերանուններին և այլն, ուստի և հոդերի, որպես ձևաբանական միավորների, անկախությունը չի խախտում։ Անգլերենում անորոշի a և որոշյալի the հոդերը հավասարապես դրվում են երկու հոլովների հետ, ուստի և դարձյալ անկախ են։ Գրաբարում ն որոշիչը դրվում է բոլոր հոլովաձևերի հետ, ուստի և հոլովաձևերից ոչ մի կախում չունի, մինչդեռ զ նախդիրը իբրև որոշյալի հոդ դրվում է միայն հայցական հոլովի վրա, այն էլ միայն որոշյալ լինելու դեպքում։ Մեր գրական լեզվում էլ, մինչև դարիս սկզբները, որոշյալ հոդը դրվում էր բոլոր հոլովաձևերի վրա, բացի սեռականից, իսկ արդի արևմտահայերենում դրվում է նաև սեռականի վրա։ Արդի գրական լեզվում ստացական հոդերը դրվում են բոլոր հոլովաձևերի վրա։ Այս բոլոր դեպքերում, բացի գրաբարյան զ-ից, հոդերը անկախ են հոլովաձևերից, նրանք «անտարբեր» են հոլովաձևերի նկատմամբ։ Այն բոլոր հոդերը, որոնք «անտարբեր» են հոլովաձևերի նկատմամբ, չեն կարող դիտվել իբրև հոլովաձևի ցուցիչ նույնիսկ այն դեպքերում, երբ նրանք նույնաձև հոլովների տարբերակման, որոշման դեր են կատարում. օրինակ՝ գերմաներեն des Studenten և dem Studenten կապակցություններից առաջինում Studenten սեռական է, երկրորդում՝ տրական, որ որոշվում է միայն հոդի օգնությամբ, որովհետև առաջին դեպքում հոդն ունի սեռականի des ձևը, երկրորդ դեպքում՝ տրականի dem ձևը։ Թեև այստեղ հոդը իր ձևով որոշում է գոյականի հոլովը, բայց նա հոլովական ցուցիչ չէ, հոլովաձևի բաղադրիչ չէ. այստեղ

ունենք բոլորովին այլ երևույթ, որ հետևյալն է. գերմաներենում հոդը, այլև ածականը, ստացական դերանունը ևն ինչպես ասացինք, համաձայնում են գոյականին սեռով, հոլովով և թվով. եթե տվյալ հոդը դրված է, ասենք, արական սեռով, եզակի թվով և տրական հոլովով, ապա պարզ է, որ գոյականն էլ նույն սեռը, թիվը և հոլովն ունի։ Դա նույն երևույթն է, ինչ որ, օրինակ, գրաբարյան ſor իմոյ և ſor իմում կապակցությունների մեջ ſor բառաձևի որոշումը ստացական դերանվան միջոցով. առաջինում ſor սեռական է, որովհետև նրան հոլովով համաձայնեցված ստացականի ձևը (իմոյ) սեռական է, իսկ երկրորդում՝ նույն ձևը (հօր)՝ տրական է, որովհետև ստացականի ձևն էլ (իմում) տրական է։ Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ ստացականի ձևերը հոլովների տարբերելու, որոշելու միջոց են դառնում, բայց նրանք, իհարկե, հոլովաձևերի ցուցիչներ չեն։ Այլ է պատկերը, երբ հոդը կամ նախդիրը կախման մեջ է հոլովաձևից, այսինքն՝ երբ նա դրվում է միայն որոշ հոլովաձևի վրա. այս դեպքում հոդը, բացի իր հիմնական դերից, ինքնին ձեռք է բերում նաև մի երկրորդ դեր՝ տվյալ հոլովի ցուցիչի դեր նույնիսկ այն դեպքում, երբ դրա կարիքը չկա։ Օրինակ, գրաբարում, ինչպես ասացինք, զ որոշյալը դրվում է միայն հայցական հոլովի հետ և հենց դրանով էլ հանդես է գալիս նաև որպես հայցականի ցուցիչ. գեաս (այս գեաը) բառաձևը և՛ ուղղական է, և՛ հայցական, իսկ զգեաս՝ միայն հայցական, զգիրսն (գրքերը) հոգնակի հայցական է և միայն հայցական, որ ունի իրեն հատուկ u վերջավորությունը, բայց զ-ն դարձյալ ցուցիչի դեր է կատարում, թեև դրա անհրաժեշտությունը չկա։ Այս տեսանկյունով էլ, ահա, պետք է լուծել առաջադրված հարցը։ Ժամանակակից գրական հայերենում որոշիչ հոդը կարող է դրվել միայն ուղղականի և տրականի վրա, այսինքն՝ նա ուղղակի կախման մեջ է հոլովաձևերից, որ նշանակում է, թե «որոշիչ» հոդը մեր լեզվում ստացել է հոլովական ցուցիչի դեր, որով և որոշակիորեն տարբերվում է ստացական հոդերից, որոնք «անտարբեր» են հոլովաձևերի նկատմամբ, հետևաբար, զուրկ են հոլովական ցուցիչի դերից. բնկերոջը ձևը կարող է լինել միայն տրական, մինչդեռ բնկերոջս կարող է լինել և՛ սեռական, և՛ տրական։ Քանի որ այդպես է, ապա բ/ն հոդը պետք է դիտել իբրև հոլովական ցուցիչ, ավելի ճիշտ՝ նրան պետք է վերագրել նաև հոլովական ցուցիչի դեր։ Բայց այս դեպքում ծագում է մի այլ հարց. չէ՞ որ նա կարող է դրվել ուղղական և տրական հոլովների վրա. ուրեմն ո՞ր հոլովի ցուցիչն

է՝ ե՛վ մեկի, և՛ մյուսի. սա տարօրինակ է թվում, բայց այդպես է. ուղղականն ու տրականը (և սեռականը) ունեն տարբեր հոլովաձևեր, ուստի և նույնական հավելյալ ցուցիչը չի խանգարում նրանց ձևական տարբերակման։ Բայց կան դեպքեր էլ, երբ նույնական վերջավորությունների և նույնական հիմքերի պատճառով ստեղծվում է ուղղականի ու տրականի (անորոշ առումով՝ նաև սեռականի) հոլովաձևերի համանունություն. օրինակ՝ այգ և այգի բառերը ուղղականի բառաձևեր են. առաջինի սեռականը և տրականը (անորոշ առումով) ունի այգ-ի ձևը, որ համանուն է երկրորդի ուղղականին, որոշյալ առումով այգ բառի տրականն է այգ-ի-ն, որ համանուն է այգի-ն ուղղականին. այդպես են նաև՝ ճոր «փոս» (ուղ.) և ճոր (հայր բառի տր.), այրին (ուղ.) և այր-ի-ն (այր բառի տր.), բարին (ուղ.) և բարին (բար բառի տր.) և այլն։ Հոդի, որպես հոլովական ցուցիչի բնորոշումը պահանջում է վիճաբանական ավյալներով լեզվաբանական հիմնավորում, ուստի և անհրաժեշտ ենք համարում վերլուծել արդի հայերենի «որոշիչ» կամ «որոշյալ» կոչվող հոդի հիմնական գործառույթները։

1. Ամենաընդհանուր գործառույթն է գոյականի ուղղական և տրական հոլովների ձևերը նշել որպես որոշյալ. այս իմաստին հակադրվում է անորոշ առումը, որի ցուցիչն է մի անորոշ դերանունը, որ արդի լեզվում կարծես թե աստիճանաբար դառնում է անորոշ հոդ, ինչպես և՝ ոևէ, ինչ-որ, ինչ-ինչ անորոշ դերանունները։ Իբրև ընդհանուր կանոն ուղղականի և տրականի ձևերը խոսքի մեջ գործածվում են որոշիչ հոդով, անորոշ դերանունով (առավելապես մի) և կամ առանց մեկի և մյուսի։ Այսպիսով ուղղականի և տրականի ձևերը շարահյուսական մակարդակում կազմում են եռանդամ հակադրություն, ինչպես՝

Ու. Բանվոր,	մի բանվոր,	բանվորը
Ս. Բանվորի,	մի բանվորի,	բանվորին

Այս շարքերի մեջ մի անորոշով կապակցությունները մենք առայժմ պայմանականորեն հոլովման հարացույցի մեջ ենք մտցնում։

Բերված շարքերի մեջ ունենք իմաստային հետևյալ հակադրությունը. առանց ցուցիչի ձևերը չեզոք են անորոշի և որոշյալի իմաստի տեսակետից, նրանք պարզապես զուրկ են այդ քերականական կարգից. ուստի և ստանում ենք չեզոքություն—ոչ չեզոքություն հակադրությունը. բանվոր, բանվորի ձևերը չեզոքություն

հատկանիշն ունեն, մի բանվոր, բանվորը, մի բանվորի, բանվորին՝ ոչ չեզոքությունն հատկանիշը։ Ոչ չեզոքությամբ բնորոշվող ձևերը կազմում են անորոշ–որոշյալ հակադրությունը։ Ուղղականի և տրականի չեզոք ձևերը խոսքի մեջ գործածվում են կամ անվանողական դերով կամ որպես տեսակի, հատկանիշի (զբաղմունքի, պաշտոնի, մասնագիտության, վիճակի ևն) անվանումներ։ Օրինակ՝ «Ընկե՛ր, մի՛ ծխիր այստեղ», «Պրոլետարնե՛ր, բոլոր երկրների միացեք» ասույթների մեջ ընկեր, պրոլետարներ կոչականները ուղղականի չեզոք ձևեր են, որոնք գործածված են անվանողական դերով. «Մարդ եկավ, ոչ թե գազան», «Նա լեռան գագաթից քար գլորեց». «Խաչիկը բժիշկ է». «Դասախոս Միքյանը եկավ» ասույթների մեջ մարդ, քար, բժիշկ, դասախոս բառերը ուղղականի չեզոք ձևեր են և գործածված են որպես տեսակի, հատկանիշի (զբաղմունքի ևն) անուններ։ Ուշագրավ է, որ «Մարդ եկավ, ոչ թե գազան» ասույթի համար կարելի է ինչ հարցը տալ (ի՞նչ եկավ)։ Այն պատճառով, որ բացի ուղղականից ու տրականից, ուրիշ ոչ մի հոլովաձև որոշիչ հոդ չի ստանում, առաջ է գալիս եռանդամ հակադրության խախտում մյուս հոլովաձևերի համակարգում. այստեղ ունենում ենք չեզոք–անորոշ հակադրությունը մի անորոշով և դրանից զուրկ ձևերի միջև, ըստ որում խոսքի մեջ չեզոք ձևը կարող է գործառել թե՛ բուն չեզոքի, թե՛ որոշյալի և թե՛ անորոշի ոլորտում, այլ կերպ ասած՝ մի անորոշը չեզոքությունը որոշակիորեն դարձնում է անորոշ, թեև առանց դրան էլ չեզոք ձևը կարող է գործածվել անորոշի առումով։ Օրինակ՝ «Հնագետները պեղումների վայրում մարդու կմախք գտան» ասույթի մեջ մարդու սեռականի չեզոք ձև է, գործածված է իբրև բուն չեզոք, որպես տեսակի անուն (ինչի՞ կմախք). Ա. Խահակյանի «Աբու-Լալա Մահարի»-ի «Առավ իր ուղտերի փոքրիկ քարավանը՝ պաշարով ու պարենով, և մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերի վրա, գաղտնի հեռացավ քաղաքից» հատվածի մեջ ուղտերի, քաղաքից սեռականի և բացառականի չեզոք ձևեր են, որոնք ասույթի մեջ որոշված, որոշյալ են (իր հատկացուցիչը, Բաղդադ անունը որոշում, հայտնի են դարձնում)։ «Ուսանողի գիրքը նստարանի վրա է մնացել» ասույթի մեջ ուսանողի սեռականի չեզոք ձևն է, որ գործածված է անորոշ իմաստով. կարելի էր ասել «մի ուսանողի գիրքը...» և կունենայինք անորոշի ցուցիչը։ Այսպիսով, այն հոլովաձևերը, որոնք հոդ չեն կարող ստանալ, զրկվում են որոշյալի քերականական կարգն արտահայտելու ձևաբանական միջոցից,

Հետևաբար և այդ քերականական իմաստից։ Ըստ այսմ, Հոլովման հարացույցը՝ չեզոք—անորոշ—որոշյալ քերականական իմաստների համար ներկայացնում է հետևյալ պատկերը.

Չեզոք	Անորոշ	Որոշյալ
Ու. քաղաք	*մի քաղաք*	*քաղաքը*
Ս. քաղաքի	*(մի) քաղաքի*	
Տ. քաղաքի	*մի քաղաքի*	*քաղաքին*
Բ. քաղաքից	*(մի) քաղաքից*	
Գ. քաղաքով	*(մի) քաղաքով*	
Ն. քաղաքում	*(մի) քաղաքում*	

Ինչպես երևում է հարացույցից, որոշյալի առումը հատուկ է միայն ուղղականին և տրականին, ուստի և՝ ժամանակակից հայերենում չեզոք և որոշյալ իմաստներ ունի ոչ թե գոյականն առհասարակ, այլ միայն գոյականի ուղղական և տրական հոլովները. մյուս հոլովներն ունեն չեզոք իմաստ։ Որոշյալ առման ցուցիչն է որոշիչ հոդը, որ ունի ը (բաղաձայնից հետո), և (ձայնավորից հետո) ենթաձևույթները. բարեհնչունության համար ասույթի մեջ ը ենթաձևույթը փոխարինվում է ն-ով, որ արտասանվում է և կամ ըն (համմտ. ուսանողն ասաց)։ Այս կանոնը թեև բերվում է քերականության դասագրքերի մեջ, բայց պարտադիր չէ. խոսակցության մեջ էլ ավելի շատ ը ձևույթը պահվում է ձայնավորից առաջ, ուստի և դա կարելի է դիտել իբրև ոչ կառուցվածքային հատկանիշ։ Սա հնարավոր է դարձնում ը և ն դիտելու որպես որոշիչ հոդի ենթաձևույթներ լրացուցիչ բաշխման հարաբերությամբ՝ տարբեր ոլորտներով (դիրքերով), իսկ ձայնավորից առաջ հանդես եկող և կամ ըն՝ ն ենթաձևույթի ազատ ձևակները։

2. Ժամանակակից հայերենում հոդի գործառույթներից մեկը և կարևորագույնը այլ խոսքի մասերի պատկանող բառերին գոյականի առումով օժտելն է. ընդունված է ասել, թե ածականը, թվականը, բայը և այլն՝ որոշիչ հոդ ստանալով, առնվում են իբրև գոյական կամ գործածվում են գոյականաբար, և դա ճիշտ է, իհարկե։ Բայց ի՞նչ է նշանակում դա. այն, որ որոշիչ հոդը բայ, ածական, թվական և այլն ձևավորում է որպես գոյական բառույթ, ձևավորում է որպես գոյականի ելակետային ձև, որպես ուղղական հոլով։ Սրա ապացույցն այն է, որ հոդն այս դեպքում հենց միայն այն դերն է կատարում, ինչ որ մյուս հոլովների հոլովական

վերջավորությունները. այսպես՝ ուտելուց, ուտելով, գեղեցիկի, գեղեցիկից, հինգերորդից բառաձևերը ուտել բայի, գեղեցիկ ածականի, հինգերորդ դասական թվականի գոյականաբար առնված ձևերն են և նույնիսկ կապակցությունից դուրս դա հայտնի է, որովհետև նրանք ստացել են գոյականին հատուկ ձևաբանական հատկանիշ, գոյականի ձևավորում, այն է՝ հոլովական վերջավորություն: Եթե գոյականի վերածելը, գոյական դարձնելը հոդի դերն է, ապա բոլոր հոլովաձևերի հետ էլ պետք է դրվեր հոդ: Քանի որ այդպես չէ, քանի որ հոդը միայն ուղղականի (նաև տրականի) վրա է դրվում, ապա նա նույն արժեքն ունի, ինչ որ մյուս հոլովների հոլովական վերջավորությունները: Իսկ դրանից ինքնին բխում է այն, որ հոդը այս դեպքում հանդես է գալիս որպես ուղղական հոլովի ձևավորիչ: Այս տեսակետից շատ կարևոր է այն, որ ը/ն հոդը պահպանվել կարող է նաև մի (որևէ, ինչ-որ) անորոշների հետ, մինչդեռ գոյականների անորոշ դերանունը կամ ածականը բացառում է հոդը (համմտ. Այդքան կարմիր ու սպիտակ վարդեր ունես, մեկը տուր ինձ:—Ո՞րը տամ:—Որևէ կարմիրը: Բայց՝ որևէ վարդ և ոչ երբեք՝ որևէ վարդը): Եզրակացությունը պարզ է. չեզոքի, անորոշի և որոշյալի առումը (շարահյուսական կարգ) հատուկ են գոյականին, չեզոքի և որոշյալի իմաստը (ձևաբանական կարգ)՝ գոյականի միայն ուղղական և տրական հոլովներին. սրա արդյունքն էլ այն է լինում, որ ինչ բառ էլ որ իր ուղիղ ձևի վրա որոշիչ հոդ ունենա, հանդես է գալիս որպես գոյականի ուղղական հոլով, իսկ հոդի հետ ունենալով նաև տրականի վերջավորություն՝ դառնում է գոյականի տրական հոլով: Այս է, ահա, որ հոդին տալիս է հոլովական ցուցիչի դեր: Ինչպես առաջին, այնպես էլ այս կետում նշված դերով հանդես են գալիս հոդի ը և ն ենթաձևույթները ն/րն ազատ ձևակներով:

3. Մեր արդի լեզվի կառուցվածքում կարևոր դեր է խաղում փոխանանունությունը հատկապես սեռականով (հատկացուցիչ- հատկացյալի) կապակցությունների արտահայտման համար: Ջանքերի, ժամանակի և տեղի (գրության մեջ) ինչպիսի՜ խնայողություն, կրկնություններից խուսափելու ինչպիսի՜ հնարավորություն՝ միայն մի հոդի շնորհիվ: Ահա միայն մի նախադասություն. «Աշակերտները շարադրություն են գրել: Ուսուցիչը 18 աշակերտի շարադրությունն գնահատել է «բավարար», 16 աշակերտի շարադրությունն՝ «լավ», 5 աշակերտի շարադրությունն՝ «գերազանց» և միայն մեկ աշակերտի շարադրությունն՝ «անբավարար», չորս անգամ կրկնված է «աշակերտի շարադրություն» կապակցությունը մեկ նախադասու-

թյան մեջ. բայց ահա թե ինչ է անում հոդը. «Ուսուցիչը 18-ինը գնահատել է «բավարար», 16-ինը՝ «լավ», 5-ինը՝ «գերազանց» և միայն մեկինը՝ «անբավարար»: Փոխանուն սեռականը հոդի օգնությամբ հնարավորություն ստեղծեց դուրս ձգելու «աշակերտի շարադրությունը» կրկնվող կապակցությունը այդ նախադասությունից: Փոխանուն սեռականով հատկացյալը և հատկացյալի հատկացյալն արտահայտելը մեր հոդի կարևորագույն գործառույթներից մեկն է, և այստեղ էլ նա հանդես է գալիս որպես ուղղական (և տրական) հոլովի ձևավորիչ, ըստ որում այս դեպքում նա չի կարող փոխարինվել մի-ով (չի կարելի ասել՝ մի (որևէ, ինչ-որ) աշակերտի և հասկանալ, ասենք, «մի աշակերտի շարադրություն». հնարավոր է միայն՝ աշակերտինը, անկախ նրանից, թե կա՞ արդյոք մի կամ որևէ ուրիշ անորոշ դերանուն): Այս գործառույթով հանդես են գալիս ը և ը՝ պարզ կամ առաջնային փոխանունության ժամանակ, երբ սեռականը ներառում է իր մեջ հատկացյալը՝ ուղղական հոլովով, ինչպես՝ մեր տունը=մերը, Սարգսի տունը=Սարգսինը և այլն: Դրանցից ը, որ պատմականորեն սեռականի և հոդի միացումն է ը-ին, դրվում է սեռականի ձայնավորով վերջացող ձևերին (աշակերտի-նը, որդու-նը, աղչկա-նը, երեկվա-նը), իսկ ը՝ բաղաձայնով վերջացող ձևերի վրա, եթե նրանց տրական հոլովը որևէ պատճառով որոշիչ հոդ չի ստանում (մարդկանցը, կանանցը, մերոնցը, իմը, մերը, ձերը, նրանցը ևն): Եթե սեռականի բաղաձայնով վերջացող ձևը նույնն է տրականի հետ, և տրականը կարող է որոշիչ հոդ ստանալ, ապա փոխանուն սեռականը նույնանում է տրականի որոշյալի ձևին, որի պատճառով էլ այդպիսի փոխանուն սեռական սովորաբար չի գործածվում. օրինակ՝ ձորը, եղբորը, ընկերոջը, լեռանը տրականի ձևերն են, և իբրև փոխանուն սեռական հանձնարարելի չեն: Այդպիսի դեպքերում սովորաբար փոխում են հոլովումը (ընկերինը, լեռինը,) կամ ավելի հաճախ դնում են կրկնակի փոխանունության հոդ:

Կրկնակի փոխանունությամբ սեռականի ձևին ավելացվող հոդով փոխանուն սեռականը ներառում է ինչպես իր հատկացյալը, այնպես էլ հատկացյալի հատկացյալը, որով ունենում ենք երկու սեռականի և մեկ ուղղականի իմաստ՝ մեկ բառաձևով. օրինակ՝ «Իմ գրքի կազմը կապույտ է, քոնինը՝ մոխրագույն» ասույթի մեջ fոնինը *բառաձևը հավասար է* fո գրfի կազմը *կապակցության: Կրկնակի փոխանունություն ստեղծելու համար սեռականի բաղաձայնով վերջացվող ձևերին ավելացվում է ինը բաղադրյալ վերջա-*

վորութիւնը (ընկերոջինը, իմինը, մերինը, ձերինը, եղբորինը ևն), իսկ ձայնավորով վերջացող ձևերին՝ ինը բաղադրյալ վերջավորութիւնը (Արշակինինը, նրանինը, քոնինը, աղջկանինը, ամառվանինը ևն)։ Բոլոր հոլովումները չեն, որ կարող են ունենալ կրկնակի փոխանուն սեռականը. ու հոլովման համար պարզ և կրկնակի փոխանուն սեռականները նույնն են. ուղղու գիրը և ուղղու գրի կազմը հավասարապես լինում են ուղղունը (Հոր գլխի մազերը դեռ չեն թափվել, իսկ որդունը արդեն թափվել է). աև և ա ներքին հոլովման բառերի համար այդ վերջավորութիւնը դրվում է ուղղականի վրա (հմմտ. թոռինը, տնինը, շարժումինը ևն)։ Այս դեպքում էլ սակայն, թեև վերջավորութիւնը կրկնակի փոխանունինն է, բայց իմաստով թե՛ պարզ և թե՛ կրկնակի փոխանուն է։

Մի կողմ թողնելով սեռականի պարզ և կրկնակի փոխանունութեան մանրամասնութիւնները, քննութեան առնենք այդ փոխանունութիւնն ստեղծող վերջավորութիւնները։ Պարզ փոխանուն սեռականի ուղղական հոլովի վերջավորութիւնն է ր, որի ներուիթավոր ձևակն է նը (հմմտ. իմ, մեր, մարդկանց, քոնը, Արշակինը ևն)։ Կրկնակի փոխանուն սեռականի ինը վերջավորութիւնը բաղադրված է սեռականի ի վերջավորութիւնից և պարզ փոխանունութեան ձևույթի նույն ներուիթավոր նը ձևակից։ Սա նշանակում է, թե այդ կրկնակի փոխանունութեան բառաձևում ունենք պարզ փոխանուն սեռականի ի վերջավորութիւնը, որին ավելանում է նը՝ նորից ուղղական կազմելու համար. այսպես՝ ունենք իմը, ֆոնը, Սահակինը պարզ փոխանուն սեռականները. դրանց սեռականի հոլովաձևն է իմի, ֆոնի, Սահակինի. այս սեռականներից, որոնք ձայնավորով են վերջանում, կրկին կազմվում է փոխանունի՝ նը ձևակով, և ստացվում են իմինը, ֆոնինը, Սահակինը ուղղականի ձևերը։ Այս բաղադրյալ վերջավորութիւնն է, ահա, որ առնվում է իբրև անկախ մասնիկ և դրվում այն ձևերի վրա, որոնք պարզ փոխանուն սեռական չեն կարող կազմել. ընկերոջ ձևը չունի պարզ փոխանուն սեռական, որովհետև ընկերոջը տրականի ձևն է, ուստի և նրանից կազմվում է ընկերոջինը կրկնակի փոխանունը. ագռավ, արյուն ձևերը չունեն պարզ փոխանուն սեռական, ուստի և դրանցից կազմվում են ագռինը, արյունինը կրկնակի փոխանունները, որոնք սովորաբար արտահայտում են պարզ փոխանուն սեռականի իմաստ (հմմտ. Գոմի կաուրը հողից է, տնինը՝ թիթեղից. արյան գույնը = արյունինը ևն)։ Նույն –ինը բաղադրյալ վերջավորութիւնը ունի –նինը ձևակը, որ դրվում է սեռականի՝ ձայնավորով վերջացող

ձևերի վրա (Սահակի-նինը, քո-նինը, նրա-նինը ևն). այստեղ էլ և-ն կարելի է համարել ներույթ։ Թե՛ պարզ և թե՛ կրկնակի փոխանուն սեռականների մեջ մեզ համար տվյալ դեպքում կարևոր է այն, որ երկու դեպքում էլ հոդը հանդես է գալիս որպես ուղղականի հոլովաձև կազմող տարր։

Մենք չենք անդրադառնում հոդի մյուս գործառույթների վրա, ինչպիսիք են՝ ընդհանրացնող (օր. մարդը մահկանացու է), ծավալային ամբողջություն արտահայտող (օր. ուսանողությունը դուրս է եկել ցույցի) և այլն։ Մեր առաջադրած խնդրի լուծման համար քննված երեք գործառույթները բավական են։ Այդ քննությունները մեզ բերում են այն եզրակացության, որ որոշիչ հոդը ժամանակակից հայերենում կատարում է ուղղական ու տրական հոլովաձևերի կազմիչի դեր՝ արտահայտելով այդ հոլովներով դրված գոյականների որոշյալ իմաստ։ Իբրև այդպիսին նա կազմում է ուղղականի ու տրականի հոլովաձևերի մի տարբերակը, որ շարահյուսական մակարդակում հակադրության մեջ է մի-ով կազմվող՝ անորոշի տարբերակի հետ։ Այս հակադրությունը վերանում է՝

ա) փոխանուն սեռականների մեջ, երբ ը/ն հոդը հանդես է գալիս միայն որպես հոլովակազմիչ, և անորոշի առումը տրամաբանորեն բացառվում է հենց փոխանուն սեռականի պատճառով։ Այս դեպքում, եթե սեռականը անորոշ դերանունով որոշիչ ունի, ապա փոխանուն սեռականի փոխարեն դրվում է ուղղակի սեռական՝ հատկացյալի սղումով (հմմտ. Այս գիրքը ուսանողի գիրքն է = Այս գիրքը ուսանողինն է։ Այս գիրքը մի (ինչ-որ, որևէ) ուսանողի գիրքն է = Այս գիրքը մի (ինչ-որ, որևէ) ուսանողի է)։

բ) Այն բոլոր դեպքերում, երբ ուղղականի կամ տրականի որևէ ենթահոլովաձևը որոշիչ հոդ ստանալ չի կարող, իսկ մի կարող է ստանալ (օրինակ՝ Հանուն այս բարի գործի։ Հանուն մի բարի գործի)։ Այս կարգին են պատկանում նաև անկանոն և գրաբարատիպ հոգնակի ուղղականի ու տրականի ձևերը, որոնք որոշիչ հոդ չեն ստանում։

Այսպիսով, ի տարբերություն բոլոր մյուս հոլովների, ուղղականն ու տրականը ունեն յուրաքանչյուր հոլովաձևի որոշյալի տարբերակը, բացառյալ ը կետում նշված հոգնակիներից։ Քանի որ այս տարբերակն անմիջականորեն հակադրվում է անորոշի առմանը, ապա անհրաժեշտ է պարզել, թե անորոշի ձևն էլ, որ մենք վերը պայմանականորեն մոցրինք հարացույցի մեջ, պե՞տք է համարել

հոլովների վերլուծական բառաձև, թե ոչ։ Մենք գտնում ենք, որ այդպիսին չէ՝ հետևյալ պատճառներով.

ա) **Մի** անորոշը դրվում է բոլոր հոլովների հետ, ուստի և հոլովաձևերից անկախ է։

բ) **Մի** անորոշը ազատորեն կարող է փոխարինվել ուրիշ անորոշ դերանուններով (համմտ. մի ուսանող, ինչ-որ ուսանող, որևէ ուսանող են)։ Խոսակցական լեզվում (այժմ նաև գրականում) հաճախ այդ դերանունների հետ լինում է նաև մի, ինչպես՝ մի որևէ բժիշկ (կամ՝ որևէ մի բժիշկ), մի ինչ-որ բժիշկ (կամ՝ ինչ-որ մի բժիշկ), նույնիսկ՝ մի ոմն բժիշկ և այլն, բայց այսպիսի կապակցություններում մի-ն թվականի իմաստ ունի։

գ) **Մի** անորոշը գործածվում է միայն գոյականների եզակի թվի հոլովաձևերի հետ. հոգնակիում նրա փոխարեն գործածվում են ինչ-որ, ինչ-ինչ, որոշ, մի քանի անորոշ դերանունները

Այս բոլորը ցույց են տալիս, որ մի-ն իր գործառույթամբ որակապես տարբերվում է որոշիչի հոդից, ուստի և նրա ու հոլովաձևերի հարակցությունը պետք է դիտել որպես շարահյուսական կապակցություն և ոչ թե՝ վերլուծական բառաձև։ Սրանից հետևում է այն, որ հոլովական հարացույցի մեջ ուղղական և տրական հոլովներն ունեն երկուական ձև՝ չեզոք և որոշյալ.

Եզակի	Հոգնակի
Ու. Բանվոր, բանվորը	բանվորներ, բանվորները
Տ. Բանվորի, բանվորին	բանվորների, բանվորներին

Չեզոք ձևը շարահյուսական մակարդակում հանդես է գալիս կամ բուն չեզոքության առումով, կամ անորոշի առումով. վերջինս իրացվում, դրսևորվում է շարահյուսական միջոցներով, մինչդեռ բուն չեզոքությունն իրացվում, դրսևորվում է հենց հոլովաձևով. այդ պատճառով էլ մենք **ք**աղաք, **ք**աղաքի ձևերը համարում ենք ոչ թե անորոշ, ինչպես ընդունված է քերականական գրականության մեջ, այլ չեզոք ձևեր։ Բոլոր մյուս հոլովները, զուրկ լինելով երկրորդ տարբերակից, ձևաբանական մակարդակում չունեն չեզոք–որոշյալ հակադրությունը։ Նրանց համար չեզոք ձևը երկու իմաստներն ընդգրկող, իր մեջ առնող միաձույլ (սինկրետիկ) ձև է, որն, ըստ անհրաժեշտության, շարահյուսական մակարդակում կարող է տարբերակվել որպես որոշյալ, անորոշ կամ չեզոք՝ շարահյուսական միջոցներով։ Ըստ այսմ, ձևաբանական մակարդակում ունենք միայն երկու հոլովի՝ ուղղականի և տրականի երկու ֆեռակաճական

իմաստներ՝ չեզոք և որոշյալ, իսկ շարահյուսական մակարդակում՝ բոլոր հոլովների չեզոք, անորոշ և որոշյալ իմաստներով կիրառություն՝ շարահյուսական միջոցներով (համապատասխան որոշիչներով)։

Ուղղական և տրական հոլովաձևերի երկու տարբերակների հակադրությունը ձևաբանական մակարդակում առաջ է բերում նաև նրանց գործառական հակադրություն շարահյուսական մակարդակում։

Ուղղական հոլովի համար կարելի է նշել այդ տարբերակների հետևյալ երկու գլխավոր գործառական հատկանիշները.

ա) Այն բոլոր դիրքերում, որոնց մեջ գոյականը գործածվում է առանց անվանողական դերով կամ որպես տեսակի կամ հատկանիշի (զբաղմունքի, պաշտոնի, վիճակի ևն) անուն, կարող է հանդես գալ միայն ուղղականի չեզոք ձևը։ Այդպիսի շարահյուսական դիրքեր են կոչականի, գոյական որոշչի և որոշչային ստորոգելիական վերադրի պաշտոնները։ Այս դիրքերում որոշյալ տարբերակի հանդես գալը, եթե դա հնարավոր է, առաջ է բերում իմաստային-շարահյուսական հակադրություն։ Օրինակ՝ Սարգիսը դպրոցի դիրեկտոր է նախադասության մեջ դիրեկտոր ուղղական հոլովաձևը (չեզոք տարբերակը) գործածվել է իբրև որոշչային ստորոգելիական վերադիր և նախադասությունը լրացական կապակցության վերածելու դեպքում կդառնա գոյական որոշիչ (Դպրոցի դիրեկտոր Սարգիսը), մինչդեռ Սարգիսը դպրոցի դիրեկտորն է նախադասության մեջ դիրեկտորն ուղղական հոլովաձևը (որոշյալ տարբերակը) գործածվել է իբրև բացահայտչային կամ նույնացման ստորոգելիական վերադիր և նախադասությունը լրացական կապակցության վերածելու դեպքում կդառնա բացահայտիչ (Սարգիսը՝ դպրոցի դիրեկտորը)։ Այս կարգի հակադրություն ներկայացնող դիրքում ուղղականը չի կարող հանդես գալ անորոշի առումով. Սարգիսը դպրոցի մի դիրեկտորն է ասելու դեպքում կունենայինք ոչ թե անորոշ (ինչ-որ դիրեկտոր), այլ դիրեկտորներից մեկն է իմաստը։ Մյուս երկու դիրքերում՝ կոչականի և գոյական որոշչի պաշտոններում որոշյալ տարբերակի գործառությունը բացառվում է (որոշյալի բացառված դիրք), քանի որում չեզոքը որոշյալով փոխարկելու դեպքում առաջ է գալիս շարահյուսական հարաբերության ու պաշտոնի փոփոխություն, որ նշանակում է, թե փոխվում է նաև դիրքը (հմմտ. Հիվանդանոցի գլխավոր բժիշկ Խաչիկը և Հիվանդանոցի գլխավոր բժիշկը՝ Խաչիկը։ Բարեկամնե՛ր, եկե՛ք. բարեկամները թող գան)։ Որո-

շիչ գոյականի և լրացյալի, ինչպես և որոշչային ստորոգելիական վերադրի և ենթակայի միջև եղած հարաբերությունն առաջին հայացքից թվում է, թե պետք է դիտել իբրև ածականի (ածականաբար առնված գոյականի) և գոյականի շարահյուսական հարաբերություն, բայց իրականում այդպես չէ։ Որոշիչ գոյականն ու որոշչային ստորոգելիական վերադիրը ուղղական հոլովով դրված գոյական են և արտահայտում են լրացական հարաբերություն՝ զանազան կապակցական մասնավոր հոլովական իմաստներով («իմաստային առումներով»), ինչպես՝ ելանյութի (պողպատ վահան, արծաթ դրամ), նույնացման (արքա Տիգրան, բժիշկ Վահան), բնութագրման կամ նմանեցման (ծով աչքեր, մետաքս մազեր), անվանումի (Տիգրան Թագավոր, Սմբատ սպարապետ, մայիս ամիս) և այլն։

բ) Անձ ցույց տվող հասարակ գոյականների ուղղական հոլովը ուղիղ խնդրի դիրքում (ուղիղ խնդրի պաշտոնով) կարող է հանդես գալ միայն չեզոք կամ անորոշ առումով, ստեղծելով հակադրություն հատկանիշի (պաշտոնի, զբաղմունքի, վիճակի ևն) անվան և անորոշ (անհայտ, անծանոթ) անհատի շարահյուսական իմաստների (հմմտ. Նա մարդ տեսավ. Նա մի մարդ տեսավ; Դերասան հրավիրեցին. Մի (ինչ-որ) դերասան հրավիրեցին)։ Այս հակադրությունը սովորական է եզակի թվի համար, թեև չի բացառվում նաև հոգնակի թիվը (հմմտ. Դերասաններ հրավիրեցին (և ոչ թե գրողներ, բժիշկներ ևն) և Ինչ-որ դերասաններ հրավիրեցին)։ Այդ դիրքում կարող է հանդես գալ նաև տրականը (օրինակ՝ Մի մարդու տեսավ, դերասանների հրավիրեցին), որով տեղի է ունենում ուղղական ու տրական հոլովների չեզոքացում՝ անձի և իրի առումների հակադրությամբ։

գ) Բոլոր մյուս դիրքերում (ենթակա, իրի առման ուղիղ խնդիր, պարագաներ) հավասարապես կարող են հանդես գալ ուղղականի որոշյալ և չեզոք տարբերակները, վերջինս՝ չեզոքի և անորոշի շարահյուսական առումներով։

Այստեղ էլ, սակայն, ունենք որոշ սահմանափակումներ. այսպես՝ մարդկանց հատուկ անունները, եթե նրանք ցույց են տալիս տվյալ անունը կրող անձ, դրվում են միայն որոշյալի առումով իսկ եթե գործածվում են սոսկ անվանողական դերով, այսինքն՝ ցույց են տալիս ինչ-որ մեկի անունը, դրվում են անորոշի շարահյուսական առումով. օրինակ՝ Պետրոսը մեկնեց Մոսկվա. Մի ինչ-որ (ինչ-որ մի) կամ ոմն Պետրոս մեկնեց Մոսկվա։ Այս երկրորդ նախադասության մեջ մի ինչ-որ կամ ոմն Պետրոս նշանակում է՝

Պետրոս անունով մեկը՝ մի մարդ։ Այս դեպքում ուրեմն բացառվում է չեզոք առումը։

Տեղի հատուկ անունները որպես հանգման տեղի պարագա հաճախ դրվում են չեզոք տարբերակով, որոշիչ հոդ չեն ստանում, թեև ըստ էության որոշյալ են (օրինակ՝ Հասանք Երևան՝ Սևան՝ Լոռի ևն)։ Այսպիսի կապակցությունները առաջացել են անվանողական որոշիչ գոյական+գոյական կապակցություններից (Հասանք Երևան քաղաք(ը) կամ քաղաքին՝ Սևան լիճը ևն), ուստի և արանք անցնում են առաջին կետին ու դառնում անվանողական գործառության դիրք։

դ) Բոլոր փոխանուն ուղղականներն ունեն միայն որոշյալ տարբերակը և գործառում են այդ ձևով, բացի այն դեպքերից, երբ խոսքային իրադրությամբ պայմանավորված՝ գոյականի սղում է տեղի ունենում (օրինակ՝ Տեսավ մի գանգրահեր տղա և կանչեց. ո՛վ, գանգրահե՛ր, ե՛կ այստեղ)։ Այսպիսի դեպքերում փոխանուն ածականը պետք է դիտել իբրև մականուն։

Եթե ահմանափակումների մասին ասվածներն ամփոփենք, ապա կտեսնենք, որ շարահյուսական մակարդակում ուղղական հոլովի անվանումի ենթխաստան է, որ կարող է գործառել միայն չեզոք առումով, իսկ մյուսները գործառում են չեզոք—անորոշ—որոշյալ առումով։

Տրական հոլովի համար այսպիսի որոշակի դիրքերով սահմանափակումներ չկան։ Միակ դիրքը, որի մեջ տրականի հոդավոր տարբերակը չի կարող հանդես գալ՝ կապական խնդրի դիրքն է բուն ետադրությունների հետ (հմմտ. գործի համար)։ Վերը մենք տեսանք, որ Մ. Աբեղյանը դա բացատրում է նրանով, որ այդպիսի կապերը դեռևս պահպանել են իրենց գոյական իմաստը և այդ պատճառով էլ առնում են գոյական վերադիր (=հատկացուցիչ), որը հոդ ստանալ չի կարող։ Իբրև դրա ապացույց նա բերում է այն փաստը, որ հաճախ անձնական դերանուններն էլ դրանց հետ դրվում են սեռական հոլովով (օր. իմ համար)։ Բայց այս բացատրության հետ դժվար է համաձայնել. այդտեղ մենք ունենք բոլորովին այլ երևույթ։ Ինչպես ասել ենք, այն բոլոր դեպքերում, երբ տրականը հոդից զուրկ է, ձևապես նույնանում է սեռականին, որով և ստացվում է երկու հոլովաձևերի համանունություն։ Այս բանը չի խանգարում այդ երկու հոլովների տարբերակմանը և չի վերացնում նրանց հակադրությունը շարահյուսական մակարդակում այն բոլոր դեպքերում, երբ այդ հոլովները հանդես են գալիս տարբեր

դիրքերում (օր. հատկացուցչի և հանգման անուղղակի խնդրի)։ Դրան հակառակ, եթե որևէ դիրքում հավասարապես կարող են հանդես գալ և՛ սեռականը, և՛ տրականը (առանց հոդի), ապա տեղի է ունենում այդ երկու հոլովների չեզոքացում։ Այդպիսի դիրք է հենց կապի խնդրի դիրքը։ Թե՛ սեռականը և թե՛ տրականը կարող են լինել կապի խնդիր. տրականը հատկապես գործողությունների հետ մեծ մասամբ հոդ չի ստանում։ Դա հանգեցնում է երկու հոլովների չեզոքացման. լեզվի գործածության մեջ դա նշանակում է երկու հոլովների տարբերակման անկարելիություն։ Հիրավի, այն, որ գործի մասին և գործի համար կապակցություններից առաջինում գործի սեռական է, իսկ երկրորդում՝ տրական, մենք ոչ մի կերպ որոշել ու հաստատել չենք կարող։ Միակ բանը, որ մեզ կարող է թելադրել այդ՝ անձնական դերանունների կապակցությունն է (հմմտ. իմ՝ քո՝ մեր՝ ձեր մասին, ինձ՝ քեզ՝ մեզ՝ ձեզ համար)։ Բայց խոսողական գործունեության ժամանակ մարդիկ այսպիսի վերլուծություն ու համեմատություններ չեն կատարում, և առավել ընդհանրական ու կենսունակ երևույթը իշխում է նրանց գիտակցության մեջ ու խոսողության գործընթացում։ Տվյալ դեպքում, իբրև կապական խնդիր և՛ սեռականը, և՛ տրականը հանդես են գալիս առանց հոդի։ Այն փաստը, որ գոյականների տրականը կարող է հոդ ստանալ, իսկ սեռականը՝ ոչ, թելադրում է, թե հոդառության բացառման բոլոր դեպքերում ունենք միևնույն սեռական հոլովը։ Իհարկե, խոսողները, որ հաճախ գաղափար էլ չունեն հոլովների մասին, չեն մտածում՝ սեռակա՞ն է, թե՞ տրական, բայց նրանք լեզվական փորձով նույնացում են կատարում կապի խնդրի անհոդ ձևերի և գոյականի այն ձևի, որը հոդ ստանալ չի կարող, այսինքն՝ հատկացուցչի ձևի։ Երբ խոսողը նույնացնում է գործի մասին և գործի համար կապակցությունների գործի ձևերը որպես մեկ ձև, ապա սրանք էլ նույնացնում է գործի վերջը՝ կեսը՝ հաջողությունը կապակցությունների գործի ձևի հետ, որի զուգահեռն են իմ, ին, մեր, ձեր ձևերը. դրանով իսկ նա նույնացնում է գործի համար կապակցության գործի ձևը դարձյալ իմ, ին, մեր, ձեր ձևերի հետ, այսինքն՝ գիտակցում է որպես մեկ ձև։ Սրան նպաստում է և այն, որ հենց դերանունների մեջ էլ այդ նույնացումը կա. սա, դա, նա դերանուններն ունեն սեռականի ու տրականի տարբեր ձևեր, որոնցից կապական խնդրի դերում հանդես է գալիս սեռականի ձևը։ Պատմականորեն դա, իհարկե, տրական է, բայց խոսողի համար գոյություն չունի լեզվի պատմություն. նրա համար

կա միայն լեզվի տվյալ վիճակը, իսկ տվյալ վիճակում սրա համար և սրա վերարկուն կապակցությունների մեջ առկա է միևնույն ձևը՝ սեռականի ձևը։ Եվ քանի որ այս դերանունների ու գոյականների հետ համար կապի խնդիրը սեռականի ձևն ունի, ապա ես, դու, մենք, դուք դերանունների հետ էլ սեռականն է դրվում։ Այս ձևով է, ահա, որ ինձ պես, ինձ վրա, ինձ համար ևն կապակցությունները փոխարինվում են իմ պես, իմ վրա, իմ համար ևն ձևերով։ Խոսելով սեռականի ու տրականի չեզոքացման մասին, ասել ենք, որ այդ դեպքում գերբառաձևն է սեռականի հոլովաձևը։ Սա հիմնավորվում է շատ պարզ եղանակով. երկու միավորների հակադրության չեզոքացումը ոչ այլ ինչ է, եթե ոչ նրանց տարբերակիչ (հակադրություն կազմող) հատկանիշների վերացում և միայն ընդհանուր հատկանիշների պահպանում։ Սեռականի ու տրականի ձևաբանական հակադրությունը հիմնված է մեկի մշտապես անհոդ, մյուսի՝ հոդավոր տարբերակի ձևական տարբերության վրա. վերացնել այդ հատկանիշների հակադրությունը, նշանակում է ունենալ երկուսի էլ անհոդ ձևերը։ Եվ որովհետև այդ ընդհանուր ձևը սեռականի միակ ձևն է, ապա հենց սեռականը պետք է համարել գերբառաձև, այսինքն՝ այն բառաձևը, որ երկուսի համար էլ ընդհանուր է և որը առկա է տրականի նաև հոդավոր ձևի մեջ։ Գերբառաձևի այս հիմունքով որոշելը միանգամայն արդարանում է լեզվի օբյեկտիվ տվյալներով, այն բանով, որ եթե սեռականի ու տրականի չեզոքացում է տեղի ունենում, ապա խոսողների կողմից երկուսն էլ ըմբռնվում են իբրև սեռական, ինչպես այդ տեսանք կապի խնդրի տրականը սեռականով փոխարինելու մասին խոսելիս։ Լեզուն ինքն է գտել, ինքն է «որոշել» գերբառաձևը։ Իսկ դա շատ կարևոր է երկու տեսակետից։ Նախ՝ եթե սեռական հոլովն է, որ հանդես է գալիս որպես գերբառաձև, ապա չի կարելի չընդունել սեռականն իբրև ինքնուրույն հոլով։ Երկրորդ՝ եթե տրականի հոդավոր ձևը՝ որոշյալ տարբերակն է, որ հակադրություն է ստեղծում սեռականի ու տրականի հոլովաձևերի միջև, ապա տրականի համար որպես ուժեղ տարբերակ, իբրև արժութային ձև, իբրև անայլակ պետք է ընդունել հենց այդ տարբերակը, և որովհետև այդ տարբերակը համապատասխանում է անձնական դերանունների (և ցուցականների) միայն և միայն տրական հոլովին, ապա դա էլ չի կարելի չհամարել ինքնուրույն հոլով։ Այլ կերպ ասած, այս փաստերը կրկին հաստատում են մեր այն պնդումը, թե ժամանակակից հայերենը ունի սեռական և տրական, որպես առանձին հոլովներ։

Վերջապես կապի խնդիրների մասին ասվածները մեզ թերում են այն եզրակացության, որ միանգամայն ճշմարիտ է դպրոցական դասագրքերի այն սահմանումը, ըստ որի ետ, համար, վրա մոտ, պես («նման» իմաստով) և այլ ետադրությունները գոյականների սեռական հոլով են պահանջում (համմտ. սեղանին մոտ, որի մեջ մոտ ածական է, և սեղանի մոտ, որի մեջ մոտ կապ է)։

Հոլովաձևերի չեզոք և որոշյալ տարբերակների քննությունից հետո անհրաժեշտ ենք համարում խոսել նաև ուրիշ հոլովների այնպիսի տարբերակների մասին, որոնք արտահայտում են, բացի հոլովական իմաստից, նաև այլ կարգի քերականական իմաստներ։ Այստեղ ամենից առաջ, բնականաբար, խոսք կարող է լինել անձի և իրի առումների մասին։ Հայտնի է, որ ժամանակակից հայերենում ուղղական և հայցական առանձին հոլովների գոյությունն ընդունողների հիմնական կռվանը այն է, թե հայցականն ունի իր սեփական ձևը, քանի որ միայն նա է արտահայտում անձի և իրի առումների իմաստը։ Հիրավի, մյուս հոլովներից ոչ մեկը, ինչպես ընդունված է, չի արտահայտում այդպիսի առման իմաստ, իսկ հայցականը, ըստ այդ տեսության, արտահայտում է և այդ առումների համար ունի տարբեր ձևեր։ Վերը մենք համառոտակի խոսել ենք այդ մասին և ասել, որ անձի և իրի առման քերականական կարգը ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական կարգ է։ Փորձենք հիմնավորել այդ։ Մենք արդեն գիտենք, որ տվյալ քերականական իմաստը կարող է ձևաբանական կարգ համարվել այն դեպքում միայն, եթե նա իր արտահայտությունը գտնում է ձևաբանական մակարդակում։ Կարո՞ղ ենք, արդյոք, ասել, որ անձի և իրի առումը իր արտահայտությունն է գտնում ձևաբանական մակարդակում։ Ո՛չ, չենք կարող։ Այն բոլոր դեպքերում, երբ տվյալ քերականական իմաստն իր արտահայտությունն է գտնում ձևաբանական մակարդակում, ապա այդ իմաստն արտահայտող բառաձևը հենց ձևաբանական մակարդակում որոշված, տարբերակված, նշույթավորված է իբրև այդպիսին։ Օրինակ՝ ինչպես վերը տեսանք, գոյականների ուղղական և տրական հոլովներն արտահայտում են չեզոքի ու որոշյալի քերականական իմաստները և ունեն դրանց ձևավորումը. յուրաքանչյուրի իմաստը ձևաբանորեն նշված է հենց ձևաբանական մակարդակում։ Շարահյուսական մակարդակում այդ հոլովները կարող են հանդես գալ իբրև անորոշ, բայց որովհետև այդ առումը իր ձևաբանական արտահայտությունը չունի, ապա՝ ձևաբանական կարգ չէ, այլ շարահյուսական։ Ռուսերենում արական

սեռի գոյականների հայցականի ձևավորումը պայմանավորված է շնչավոր—ոչ շնչավոր հակադրությամբ, առաջին դեպքում հայցականն ունենում է սեռականի, իսկ երկրորդ դեպքում՝ ուղղականի ձևը։ Շնչավոր—ոչ շնչավոր տարբերակումը ձևաբանական կարգ է, և հայցականը ձևաբանորեն նշվում է իբրև մեկը կամ մյուսը հենց ձևաբանական մակարդակում։ Ժամանակակից հայերենում ժամանակ ցույց տվող բառերը ենթարկվում են -վա հոլովան. ուրեմն -վա հոլովումը ձևաբանորեն նշում է բառի իմաստը որպես ժամանակի իմաստ. այստեղ էլ, ուրեմն, բառիմաստը, որպես իմաստների յուրահատուկ կարգ, իր արտահայտությունն է գտնում ձևաբանական մակարդակում, որով և ժամանակի իմաստը դառնում է իբրև ընդհանրապես ժամանակի քերականական կարգ։ Սա այնքան որոշակի տարբերակում է իմաստների, որ եթե ժամանակի իմաստ չունեցող բառը խոսքի մեջ գործածվի -վա հոլովման ձևավորումով, կստանա ժամանակի իմաստ։ Վերը բերել ենք արդեն այդպիսի օրինակները (ճաշ, անգամ, առաջ) և այստեղ ավելորդ ենք համարում կրկնել[1]։ Արդ, անձի և իրի առման համար ձևաբանական ոչ մի նշում չունենք, ձևաբանորեն ոչ մի առանձնահատկություն ցույց չի տալիս, որ, օրինակ, ծաղիկ, առյուծ, երկիր բառերը նշված են անձի առումով, մինչդեռ խոսքի մեջ, ինչպես ցույց ենք տվել վերը բերված օրինակներում, նրանք կարող են գործածվել անձի առումով։ Ճիշտ այդպես էլ, ձևաբանական ոչ մի հատկանիշ ցույց չի տալիս, թե բանվոր, բանվորը և բանվորի, բանվորին ձևերից ո՛րն է անձ և ո՛րը իր. այդ զույգերի մեջ ունենք ոչ որոշյալ և որոշյալ հակադրություն, որ նշված է ձևաբանորեն, մինչդեռ խոսքի մեջ ուղիղ խնդրի դերում բանվոր բառը, անձ ցույց տվող բառ լինելով, կարող է գործածվել և՛ անձի, և՛ իրի առումով։ Այնուհետև. եթե տվյալ քերականական իմաստն իր արտահայտությունն է գտնում ձևաբանական մակարդակում և ձևավորվում է որպես ուրույն բառաձև, ապա շարահյուսական մակարդակում էլ այդ բառաձևն է հանդես գալիս բոլոր այն դեպքերում, երբ դրա իմաստն է առկա։

---

1 Այդպիսի տարբերակման առաջին օրինակը և, մեր կարծիքով, -վա հոլովման սաղմը մաճ բառի հոլովումն է։ Այդ բառը, ինչպես գիտենք, ենթարկվում էր -ու, և -ուան հոլովումներին. սկզբնապես -ուան հոլովումը գործածվել է ժամանակի իմաստով (ի մահուանն իւրում = իր մահվան ժամանակ, մեռնելիս), բայց հետագայում իմաստային տարբերակումը մթագնվել է։ Եվ որովհետև տրականի ձևը ավելի շատ գործածվել է ժամանակի իմաստով, ապա դա էլ գերակշռություն է առացել, մինչև որ դարձել է միակ կանոնական ձևը մեր արդի լեզվում։

Օրինակ՝ ռուսերենում շնչավորների արական սեռի հայցականի ձևը միևնույնն է, անկախ այն բանից՝ հայցականը գործածվում է ուղիղ խնդրի՞, թե՞ որևէ ուրիշ պաշտոնով։ Ժամանակակից հայերենում ուղղականն ու տրականը ունեն որոշյալի հատուկ ձև, և այդ բառաձևն է հանդես գալիս այն բոլոր դիրքերում, որոնց մեջ գոյականը կարող է որոշվել, որոշյալ լինել իբրև անձ կամ առարկա։ Ժամանակ ցույց տվող բառերը –վա հոլովման են ենթարկվում, և եթե մի բառ առնվում է ժամանակի իմաստով և այդ հոլովումով է ձևավորվում, ապա այդ ձևավորումը պահպանում է բոլոր պաշտոններում. օրինակ՝ ճաշվա գալ, ճաշվանից հետո, օրը մոտենում է ճաշվան և այլն (այդպես է նույնիսկ փոխանվանական գործածության ժամանակ. օրինակ՝ Նա ուներ երկու բաժակ՝ առավոտվա և ճաշվա. առավոտվանով 100 գրամ օղի էր խմում, ճաշվանով՝ մի շիշ գինի)։ Սրանք, իհարկե, ժողովրդական-խոսակցական լեզվի օրինակներ են, բայց հիմա մեզ համար այդ չէ կարևորը, այլ այն, որ ձևաբանորեն արտահայտված իմաստը պահպանում է իր ձևավորումը շարահյուսական մակարդակում, անկախ շարահյուսական պաշտոնից։ Արդ, այդպե՞ս է, արդյոք, անձի առումը։ Ո՛չ, այդպես չէ. անձի առման քերականական իմաստն արտահայտող՝ ենթադրյալ հայցականի ձևը կարող է հանդես գալ միայն ուղիղ խնդրի պաշտոնում. բոլոր մյուս պաշտոններում «հայցականը» անձի և իրի առման ձևերի տարբերակում չունի, մինչդեռ անձի իմաստ ունեցող գոյականները մնում են իբրև այդպիսիք բոլոր պաշտոններում։ Այս բոլորից բխում է միայն մեկ հետևություն. անձի և իրի առումը ժամանակակից հայերենում ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական կարգ է։ Քանի որ այդպես է, ապա փորձենք ցույց տալ, թե ինչ է ներկայացնում իրենից այդ քերականական կարգը։ Այս բանի համար ամենից առաջ պետք է որոշ ճշգրտում կատարել։ Ընդունված և ընդհանրացած կարծիք է այն, թե երբ ուղիղ խնդիրը դրվում է տրականի ձևով, ապա գոյականը հանդես է գալիս անձի առումով, իսկ եթե դրվում է ուղղականի ձևով, ուրեմն հանդես է գալիս իրի առումով։ Սա բացահայտ թյուրիմացություն է, որ անձի և իրի իմաստները անձի և իրի առումների հետ շփոթելու, դրանք միմյանցից չտարբերելու հետևանք է։ «Ամբոխի մեջ նա կորցրեց իր ընկերոջը», «Նա կարդացել է այս գիրը» նախադասությունների մեջ ընկերոջը տրականի ձևով ուղիղ խնդիր է, գիրը՝ ուղղականի ձևով, բայց ո՛չ ընկերոջը բառն է գործածվել անձի ա-

ռումով, ո՛չ էլ գիրքը՝ իրի առումով[1]։ «Հետախույզները գերեցին թշնամու երկու զինվոր», «Ով է ստեղծել թեկուզ այս ծաղկին» (Հ. Շիրազ) նախադասությունների մեջ զինվոր անձ ցույց տվող բառ է, գործածվել է որպես ուղիղ խնդիր ուղղականի ձևով, ծաղկին՝ իր ցույց տվող բառ է և իբրև ուղիղ խնդիր դրվել է տրականի ձևով. զինվոր բառը գործածվել է իրի առումով, ծաղկին՝ անձի առումով։ Ի՞նչ է նշանակում սա. այն, որ ժամանակակից հայերենում բառերը բաժանվում են երկու դասի՝ անձերի կամ անձ ցույց տվող բառերի դաս, և իրերի կամ իր ցույց տվող բառերի դաս։ Այս բաժանումը, որ ինչպես կտեսնենք, ձևաբանական մակարդակում էլ իր արտահայտությունը գտնում է, շարահյուսական մակարդակում որպես քերականական իմաստ իր որոշակի դրսևորումն է ստանում ուղիղ խնդրի դիրքում կամ պաշտոնում։ Այն բոլոր դեպքերում, երբ ուղիղ խնդիրը անձ է ցույց տալիս, դրվում է տրական հոլովով, և այն բոլոր դեպքերում, երբ ուղիղ խնդիրը իր է ցույց տալիս, դրվում է ուղղական հոլովով։ Սա անձի և իրի քերակա-

---

1 Արդի հայերենի հոլովներին նվիրված բանավեճի ժամանակ պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը, ցույց տալու համար, որ ունենք հայցական հոլով, բերեց «Գերուն և զենքերը հանձնեցին...» նախադասությունը, որի փոխակերպության մեջ (գերին և զենքերը հանձնվեցին) գերին և զենքերը հավասարապես դարձել են ուղղական։ Այս օրինակի միտքն այն է, թե քանի որ փոխակերպության մեջ երկուսն էլ վերածվում են միևնույն հոլովին, ապա ուղիղ խնդրի պաշտոնում էլ նրանք դրված են միևնույն՝ հայցական հոլովով։ Հասկանալի է, որ հետևությունը ճիշտ չէ։ Փոխակերպության մեջ միևնույն հոլովին վերածվելը հետևանք է այն բանի, որ նրանք երկուսն էլ դարձել են ենթակա, ինչպես որ առանց փոխակերպության երկուսն էլ ուղիղ խնդիր են։ Ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքում նախադասության քերականական ենթական դրվում է միայն ուղղական հոլովով, ուստի և նախադասության ինչպիսի՛ անդամ էլ և ի՛նչ հոլովով էլ դրված գոյական որ փոխակերպությամբ ենթակա դառնա, կվերածվի ուղղական հոլովի։ Օրինակ՝ «Սկզբից օղի խմեցին, ապա՝ քաղցրահամ գինուց». օղի դրված է ուղղական հոլովով (ենթադրյալ հայցական), գինուց՝ բացառական. փոխակերպությամբ երկուսն էլ ենթակա դարձնելու դեպքում կունենանք. «Սկզբից օղի խմվեց, ապա քաղցրահամ գինի(ն)», որի մեջ երկուսն էլ վերածվել են ուղղականի։ Այդպես է նաև այլ դեպքերում։ Օրինակ՝ «Եվ աստծուն լսելի եղավ խայտի ղղումն ու իմաստալից խոսքը» (Ա. Իսահակյան) «Եվ աստված լսեց...» «Գետինը ծածկվել է ձյունով», «Ձյունը ծածկել է գետինը», «Տերևները շարժվում են զեփյուռից», «Զեփյուռը շարժում է տերևները», «Օրենսգիրքը նախատեսում է», «Օրենսգրքում նախատեսվում է», «Օրենսգիրքը նախատեսում է» և այլն։ Այսպիսով, տարբեր ձևերի վերածվելը միևնույն ուղղական հոլովին, չի նշանակում, թե այդ տարբեր ձևերը միևնույն հոլովն են, այլ միայն այն, որ ենթական բոլոր դեպքերում էլ դրվում է ուղղական հոլովով։ Օրինակը չի ծառայում նպատակին։

նական իմաստն է որպես շարահյուսական կարգ, որ հիմնված է բառիմաստի վրա։ Այս քերականական կարգի մասնակի դրսևորումն ունենք նաև այլ դեպքերում։ Այսպես, օրինակ, հասնել բայը կարող է ունենալ և՛ ուղղականով, և՛ տրականով լրացում (Հասավ քաղաք։ Գործարանը հասավ առաջավոր գործարաններին). առաջին դեպքում ցույց է տրվում տեղը, գոյականն առնվում է իբրև տեղ, երկրորդ դեպքում՝ իբրև առարկա, որին մի բան հանգում է։ Անձ ցույց տվող բառերը կարող են դրվել միայն տրական հոլովով՝ առանց այդպիսի տարբերակման։

Բառիմաստի վրա հիմնված անձի և իրի բերականական կարգից բացի, կա նաև անձի և իրի առում, որ դարձյալ հանդես է գալիս իբրև շարահյուսական բերականական կարգ։ Դա այն է, որ անձ ցույց տվող, անձերի դասին պատկանող բառը խոսքի մեջ գործածվում, առնվում է որպես իր և դրվում է ուղղական հոլովով, իսկ իր ցույց տվող, իրերի դասին պատկանող գոյականը խոսքի մեջ գործածվում, առնվում է որպես անձ, անձնավորվում է և դրվում տրական հոլովով։ Հարց է առաջանում, թե ինչպե՞ս է, որ հնարավոր է դառնում անձ ցույց տվող բառն առնել իբրև իր և հակառակը։ Սրա պատասխանը վերևում տրված է արդեն։ Անձերի դասին պատկանող գոյականները, և առհասարակ գոյականները, բացի որոշ անձնավորություն ցույց տալուց, հանդես են գալիս նաև որպես անձերի, զբաղմունքի, պաշտոնի, կոչման, վիճակի ևն անվանում և այն բոլոր դեպքերում, երբ անձ ցույց տվող գոյականը գործածվում է իրի առումով, առնվում է այդ իմաստով։ Ձինվոր բռնեցին՝ գերեցին կապակցության մեջ զինվոր ցույց չի տալիս անձ, այլ՝ զինվորական աստիճան՝ կարգ, և հարցման ժամանակ էլ կտրվի ի՞նչ հարցը (ի՞նչ բռնեցին՝ զինվո՞ր, թե հրամանատար), այդ պատճառով էլ դրված է իրի առումով, մինչդեռ «Մի զինվորի սպանեցին» կապակցության մեջ նույն բառը ցույց է տալիս անձ, իբրև անհատ, թեև անորոշ է, և այդ պատճառով էլ դրված է տրական հոլովով՝ ըստ իմաստի, որովհետև պատկանում է անձերի դասին։ Որ իրոք այդ այդպես է, լավագույնս ապացուցվում է հետևյալ փաստերով.

ա) Անձ ցույց տվող գոյականները որոշյալ լինելու դեպքում ուղիղ խնդիր են դառնում միայն տրական հոլովով։

բ) Մարդկանց հատուկ անունները ուղիղ խնդիր են լինում միայն տրական հոլովով։

Երկու դեպքում էլ տրական հոլովով դրվելը պայմանավորված

է այն բանով, որ գոյականը ցույց է տալիս որոշակի անձ, անհատ, այսինքն՝ գործառում է իբրև անձերի դասին պատկանող բառ։

գ) Անձերի հատուկ անունները կարող են ուղիղ խնդրի (ավելի ճիշտ՝ կրկնակի ուղիղ խնդրի) դերում հանդես գալ ուղղական հոլովով այն դեպքում միայն, եթե գործառում են անվանողական դերով (հմմտ. Տղային Արմեն կոչեցին)։

դ) Վերածման, համարումի, անվանումի և նման բայերի հետ կրկնակի ուղիղ խնդիրներից առաջինը, բուն ուղիղ խնդիրը, եթե անձերի դասին պատկանող բառ է, միշտ տրականով է դրվում, իսկ երկրորդը՝ միշտ ուղղականով, որովհետև առաջինը ցույց է տալիս մի որոշ անձ՝ անհատ, իսկ երկրորդը հանդես է գալիս անվանողական կամ որոշչային դերով (հմմտ. Մի պատմաբանի դիրեկտոր նշանակեցին։ Նրան լավ ուսուցիչ են համարում)։

Ինչ վերաբերում է իրերի դասին պատկանող գոյականները անձի առումով գործածելուն, ապա դա բացատրվում է հետևյալ հանգամանքներով։

ա) Անձի առումով գործածվում են գերազանցապես կենդանիների հասարակ անունները, որոնք արդեն շփման կետ ունեն անձերի դասի հետ հենց նրանով, որ շնչավոր են։ Շնչավոր լինելը հեշտությամբ հանգեցնում է նաև անձնավորելուն, մանավանդ որ ուրիշ դեպքերում էլ հաճախ նույն դասի մեջ են առնվում։ Օրինակ՝ եզանել բայի հետ կենդանիների անուններն էլ, անձ ցույց տվող բառերի նման, միայն տրական հոլովով են դրվում. կենդանիների անունների ներգոյական հոլովն էլ վերլուծական ձևով է կազմվում (առյուծի մեջ, կովի մեջ), ինչպես անձ ցույց տվող բառերինը և այլն։

բ) Ոչ շնչավոր առարկաների անձի առումը գերազանցապես բանաստեղծական խոսքի մեջ է հանդիպում, ուստի և անձնավորման սովորական երևույթն է, որ կարող է նաև ուրիշ շարահյուսական պաշտոններով հանդես եկող գոյականների վրա տարածվել (օր. Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ պար չես բռնում մանկական... էլ չխոսեց Արաքսը... մեջքը... ուղղուց...»։ Ռ. Պատկանյան)։ Ուղիղ խնդրի դերում հանդես եկող անշունչ առարկաների անձնավորումը հաճախ պայմանավորվում է խնդրառու բայի իմաստով. օրինակ՝ Ո՞վ է ծնել այս ծաղկին նախադասության մեջ ծաղկին դրված է անձի առումով ծնել բայի իմաստի թելադրանքով (նույնպես և՝ խավարը պարուրել էր երկրին)։

գ) Հաճախ իրերի դասին պատկանող բառը տրականով ուղիղ

խնդիր դարձնելը թելադրվում է խոսքը երկիմաստությունից ազատելու, ենթական ու խնդիրը տարբերելու անհրաժեշտությամբ (համմա. Ընկուզենին ճնշել էր թթենուն)։

Եվ այսպես, շարահյուսական մակարդակում ունենք անձերի և իրերի բեռականական կարգ և անձի ու իրի առման բեռականական կարգ, որոնցից յուրաքանչյուր զույգի մեջ հակադրություն ստեղծվում է ուղիղ խնդրի դիրքում՝ տրական և ուղղական հոլովների միջոցով։ Անձի ու իրի առումը ձևաբանական կարգ չէ, ուղիղ խնդրի տարբեր ձևերը՝ տարբեր առումների համար, մեկ հոլովի ձևեր չեն, ուստի և հերքվում է այն պնդումը, թե իբր հայցականը ունի մերթ ուղղականի, մերթ տրականի ձև և հենց այդ պատճառով էլ առանձին հոլով է։

Ինչպես տեսել ենք հոլովների կազմության մեջ, ներգոյական հոլովը կազմվում է երկու եղանակով՝ համադրական (հոլովական վերջավորությամբ) և վերլուծական (մեջ կապով)։ Ամեն մի գոյական կարող է ունենալ ներգոյականի վերլուծական ձև, բայց ոչ բոլոր գոյականները կարող են ունենալ համադրական ձև։ Այս երկու ձևերի ուսումնասիրությունը երևան է հանում հետևյալ երևույթները։

1. Այն բոլոր դեպքերում, երբ գոյականը կարող է գործածվել թե՛ մեկ և թե՛ մյուս ձևով, ունենք բուն ներգոյական (համադրական ձև) և երկրորդային (վերլուծական) ներգոյական։ Այս երկու ձևերը հակադրվում են իրար ոչ միայն կազմությամբ, այլև իմաստով։ Առաջինը՝ բուն ներգոյականը, ցույց է տալիս գործողության տեղն ու ժամանակը՝ որոշ սահմանափակումով. օրինակ՝ fաղաfում, գործարանում, ջրում ձևերը ցույց են տալիս, որ գործողությունը տեղի է ունենում fաղաfի, գործարանի, ջրի սահմանների ընդգրկումով կամ ծավալով։ Երկրորդը՝ վերլուծական ներգոյականը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում, ընթանում է նշված տեղի (կամ ժամանակի), որպես առարկայի (կամ ժամանակային միավորի) ներսում. այս դեպքում, ուրեմն, գործողությունը ոչ թե ընդգրկում է առարկան իր ծավալով կամ սահմաններով, այլ միայն նրա ներքին տարածությունը (կամ կետը), նրա մեջը՝ ներսը։ Օրինակ՝ fաղաfի մեջ, գործարանի մեջ, ջրի մեջ ձևերը ցույց են տալիս fաղաfի, գործարանի, ջրի ներքին տարածությունը, ներսը։ Առաջինի՝ բուն ներգոյականի իմաստը մենք անվանել ենք սահմանափակման իմաստ, ուստի և երկրորդինը՝ վերլուծական ներգոյականինն էլ կկոչենք ներփակման իմաստ։ Այսպիսով, այն բոլոր

դեպքերում, երբ ներգոյականն ունենում է երկու տարբերակները զուգահեռաբար, ապա դրանք հակադրություն են կազմում սահմանափակման և ներփակման իմաստներով։

2. Այն բոլոր բառերի համար, որոնք զուրկ են համադրական ձևից, բնականաբար հիշյալ երկու իմաստների հակադրությունը վերանում է, և վերլուծական ձևը հավասարապես գործառում է և՛ սահմանափակման, և՛ ներփակման իմաստներով, ըստ խոսքային հանգամանքների (կապակցության ընդհանուր իմաստ, բառիմաստ են)։ Քանի որ այս կարգի բառերը բավականաչափ մեծ թիվ են կազմում, ապա դրանց ազդեցությամբ նախորդ կետում նշված բառերի երկու ձևերի իմաստային հակադրությունն էլ հաճախ թուլանում է, չեզոքանում, մանավանդ ժամանակի ներգոյականի համար։ Այսպես, օրինակ, ինչ orում և ինչ orվա մեջ կապակցությունների orում և orվա մեջ ձևերի իմաստային հակադրությունն այնքան ցայտուն չէ, ինչպես, ասենք, գործարանում և գործարանի մեջ ձևերինն է։

3. Համադրական ներգոյականից զուրկ բառերը բաժանվում են երկու խմբի. մի խումբը զուրկ է այդ ձևից ըստ բառիմաստի, իսկ մյուս խումբը՝ ըստ ձևի։ Այսպես, ներգոյականի կազմության համար բացարձակ կանոն է այն, որ անձ ցույց տվող բառերը, ո՛ր հոլովման էլ պատկանելիս լինեն, համադրական ձև չունեն. չի կարելի ասել բանվորում, ընկերում, մորում, frոջում, բոռ(ն)ում, կայսրում, որդում և այլն։ Այստեղ, ուրեմն, ներգոյականի կառուցվածքը դրսևորում է իմաստային պայմանավորվածություն և զուգահեռն է կազմում շարահյուսական մակարդակում իր արտահայտությունն ստացած անձերի ու իրերի դասերի տարբերակման։ Հետևաբար, ներգոյականի կազմության մեջ էլ (իսկ սա նշանակում է՝ ձևաբանական մակարդակում) անձերի և իրերի դասերը իրենց տարբերակումն ունեն ձևաբանորեն։ Մյուս խմբի բառերը, որոնց ներգոյականը սովորաբար վերլուծական ձևն ունի, իմաստային յուրահատուկ դաս չեն ներկայացնում։ Դրանք -ում և -ություն ածանցներով կազմված բառերն են։ Սրանց համար համադրական ձևից զուրկ լինելը պետք է դիտել իբրև պայմանական կանոն, որովհետև ոչ կառուցվածքային, ոչ էլ իմաստային որևէ առանձնահատկություն չի խանգարում համադրական ձևն ունենալուն։ Դրա լավագույն ապացույցն է այն, որ՝ ա) այդ կարգի բառերի հոգնակին ազատորեն գործածվում է ներգոյականի համադրական ձևով (համմտ. շարժումներում, ցնցումներում, ենթադրություններում,

կոլտնտեսություններում, դասախոսություններում, զեկուցումներում, բախումներում, պետություններում, վարժություններում և այլն, և այլն), բ) շատ բառեր եզակիում էլ արդեն սովորաբար գործածվում են ներգոյականի համադրական ձևով (օրինակ՝ շարժումում, զեկուցումում, կոլտնտեսությունում, պետությունում, ընտեսությունում և այլն)։ Այսպիսով, այս կարգի բառերի ներգոյականի գերազանցապես վերլուծական ձևի գործածությունը կառուցվածքային երևույթ չպետք է համարել։ Ըստ այսմ, ներգոյականի միայն վերլուծական ձև ունենալը կարող ենք բնորոշել իբրև բառիմաստով պայմանավորված ձևաբանական առանձնահատկություն։ Մեր լեզվի արդի վիճակում բառերի այս դասն ընդարձակվել է կենդանիների հասարակ և հատուկ անուններով. ավելի սովորական է առյուծի մեջ, եզան մեջ, կատվի մեջ, շան մեջ, մկան մեջ ևն, քան թե՝ առյուծում, եզում (?), կատվում, շնում, մկ(ն)ում (?) ևն։ Իսկ սա նշանակում է, թե զարգացումը հանգեցրել է շնչավորների դասի և անշունչների դասի տարբերակմանը։

Այսպիսով, ներգոյական հոլովի համադրական և վերլուծական ձևերը կարող ենք ընդունել իբրև երկու տարբերակներ, որոնք երկակի իմաստային հակադրություն են ստեղծում մի կողմից՝ շնչավորների և անշունչների դասերի միջև, մյուս կողմից՝ սահմանափակման և ներփակման հոլովական իմաստների։ Այս բոլորը կարելի է ներկայացնել հետևյալ տախտակով։

Բառերի դասեր	Ներգոյականի կազմություն	Սահմանափակման իմաստ—ներփակման իմաստ
Շնչավորներ	բանվորի մեջ	0
Անշունչներ	գործարանի մեջ	— (ներփակման)
	գործարանում	+ (սահմանափակման)

* * *

Այս գլխում ասվածները կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1. Յուրաքանչյուր հոլով ունի տարբեր ձևեր՝ բառերի տարբեր դասերի համար, որ պայմանավորված է հոլովակերտ ձևույթի տարբեր ենթաձևույթների գործառույթամբ։ Նույն հոլովի այդ կարգի տարբեր ձևերը միմյանց նկատմամբ բաշխումային հարաբերու-

ֆյան մեջ են գտնվում և հանդես են գալիս իբրև տվյալ հոլովաձևի ենթահոլովաձևեր։

2. Շատ բառեր իրենց սովորական կամ ավանդական հոլովումն ունենալով, հաճախ ենթարկվում են նաև մի այլ հոլովման, որի հետևանքով միևնույն բառի միևնույն հոլովը ունենում է երկու կամ նույնիսկ երեք ձև (օր. տեգոր, տեգրոջ, տեգրի)։ Այսպիսի ձևերը գտնվում են իմաստային, ազատ կամ ոճական տարբերակների հարաբերության մեջ, և կոչվում են հոլովների զուգաձևեր։

3. Ժամանակակից հայերենի հոլովման համակարգի մեջ արտահայտվում են որոշյալի և ոչ որոշյալի (չեզոքի) քերականական կարգը միայն ուղղական ու տրական հոլովներով։ Բոլոր մյուս հոլովները զուրկ են դրանից, ուստի և նրանց ձևերը չեզոք են այդ տեսակետից։ Որոշյալ-անորոշ-չեզոք առումները շարահյուսական միջոցներով են արտահայտվում, ուստի և դրանք շարահյուսական քերականական կարգ են ներկայացնում։ Ուղղականի և տրականի որոշյալի և ոչ որոշյալի ձևերը պետք է դիտել որպես հոլովաձևեր։

4. Ժամանակակից հայերենում անձերի ու իրերի դասերը և անձի ու իրի առումը, որոնք դրսևորվում են շարահյուսական մակարդակում՝ ուղիղ խնդրի հոլովով (տրական-ուղղական) որպես շարահյուսական քերականական կարգ են հանդես գալիս։ Նույն տարբերակումը ձևաբանական մակարդակում իր արտահայտությունն է ստանում ներգոյականի կազմության մեջ՝ վերածվելով շնչավորների և անշունչների դասերի հակադրության, որոնցից առաջինն ունենում է միայն վերլուծական ձև, երկրորդը՝ և՛ վերլուծական, և՛ համադրական ձևեր՝ սահմանափակման և ներփակման հոլովական իմաստների հակադրությամբ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՅԸ ԵՎ ՆՐԱ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ[1]

Ժամանակակից հայերենի համակարգում առանձնակի տեղ է գրավում բայը իր ձևերի ճոխությամբ, կիրառության արտակարգ ճկունությամբ, իմաստային նրբերանգումների ու քերականական կարգերի բազմազանությամբ։ Հենց այս է պատճառը, որ աշխարհաբարի ուսումնասիրության սկզբնավորման ժամանակից ի վեր բայը եղել է և մնում է հետազոտողների ուշադրության կենտրոնում։ Բայի կամ բայական համակարգի առանձին կողմերի ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ հոդվածներ, դասագրքերի ու քերականական ընդհանուր բնույթի աշխատությունների ծավալուն հատվածներ և առանձին մենագրություններ ունենք հրապարակի վրա։ Առանձնապես պետք է նշել Հ. Բարսեղյանի, Մ. Ասատրյանի և Ա. Աբրահամյանի մենագրական ուսումնասիրությունները[2], որոնք իրենց ընդգրկումով գրեթե սպառում են իբրև հետազոտության առարկա ընտրած նյութը։ Բոլոր այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են ժամանակակից հայերենի բային, կարելի է ամենաընդհանուր կերպով բնութագրել հետևյալ

---

1 *Բային նվիրված այս հատվածը նախապես տպագրվել է ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում» (1963, № 5) և «Պատմա-բանասիրական հանդեսում» (1963, № 3). Հոդվածի որոշ դրույթներ վերանայել ենք ու փոխել՝ սույն աշխատության ընդհանուր սկզբունքներին համապատասխան։*

2 *Հ. Խ. Բ ա ր ս ե ղ յ ա ն, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, Մ. Ե. Ա ս ա տ ր յ ա ն, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959, Ա. Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, Բայը ժամանակակից հայերենում, 1, Երևան, 1952։*

ձևով։ Ինչպես առհասարակ աշխարհաբարի, այնպես էլ նրա համակարգի էական բաղադրիչներից մեկի՝ բայի ու նրա խոնարհման ուսումնասիրության պատմության մեջ նոր էտապ են սկզբնավորում մեծավաստակ հայագետ Մ. Աբեղյանի աշխատությունները ոչ միայն իրենց բազմակողմանի ընդգրկումով ու գիտական վերլուծությունների բացառիկ խորությամբ, այլև նոր մոտեցումով։ Մինչև նրա ուսումնասիրությունների երևան գալը աշխարհաբարի քերականական երևույթների նկարագրությունը առավել կամ պակաս չափով կախման մեջ էր գրաբարի սխեմաներից։ Աբեղյանն առաջինն էր, որ ուսումնասիրեց աշխարհաբարը գրաբարից անկախ, այսպես ասած՝ ինքն իր մեջ, դիտելով այն իբրև մի ինքնուրույն ու անկախ համակարգ։ Հենց սրանով էլ նա հիմք դրեց մեր գրական լեզվի համամանակյա ուսումնասիրության։ Մյուս կողմից, սակայն, Աբեղյանի հետազոտությունների ընդգրկած ժամանակաշրջանը բնորոշվում էր մեր լեզվի ոչ միօրինականությամբ, քերականական բազմազան զուգահեռ ձևերի գործածությամբ։ Այս բանը անխուսափելիորեն առաջ է բերում պատմական մոտեցման անհրաժեշտություն։ Այսպես, օրինակ, նախասովետական շրջանի գրականության մեջ կարելի է հանդիպել պաւնեց–պաւնավ, ծանուցանել–ծանուցել և այլ բազմաթիվ զուգահեռների. ապացուցելու համար, որ դրանցից աշխարհաբար գրական լեզվին հարազատ է այս կամ այն ձևը, նա ստիպված էր պատմական քննությունների դիմել և դրանց հիման վրա հանգել գիտական եզրակացության։ Նույն պահանջն առաջադրում էր նաև հենց աշխարհաբարյան ձևերի ծագման ու զարգացման ուսումնասիրությունը։ Այս բոլորի արդյունքն այն եղավ, որ նա, մի կողմից, կարողացավ լուսաբանել մեր գրական լեզվի քերականական կառուցվածքի պատմականորեն ձևավորվելու պրոցեսը, մյուս կողմից, որ տվյալ դեպքում մեզ համար ավելի կարևոր է, ստեղծեց մեր լեզվի կառուցվածքին համապատասխանող քերականական սխեմաներ և վեր հանեց այն յուրահատուկը, որ օրինաչափ է ու հարազատ այդ կառուցվածքին։ Աբեղյանի հաջորդները ընդունեցին նրա սխեմաները, անշուշտ որոշ ճշտումներով ու փոփոխություններով և տեսական ա՛յլ մեկնաբանություններով ու սկզբունքներով։ Այն, որ այդ սխեմաներն այժմ էլ հիմնականում պահպանվում են, դա Մ. Աբեղյանի մեծագույն ավանդն է ժամանակակից հայերենի ուսումնասիրության բնագավառում։ Սակայն դրա հետ միասին, Աբեղյանի աշխատությունները ունեցան նաև այլ կարգի ազդեցություն։ Աբեղյանի հաջորդները յուրացրին նրա հե-

տազոտությունների եղանակը՝ պատմական ու համամանակյա մոտեցումների երկկողմանի հետազոտությունների մեթոդը։ Այս մեթոդը առավել կամ նվազ չափով բնորոշ է մեր գրական լեզվի ոչ միայն խոնարհման համակարգի, այլև մյուս քերականական երևույթների ուսումնասիրությանը նվիրված բոլոր աշխատություններին, չհաշված դպրոցական դասագրքերը։ Եթե Աբեղյանի մոտ պատմական քննություններն անհրաժեշտություն են ներկայացնում, ապա այժմ դա հաճախ խանգարում է մեր գրական լեզվի արդի կառուցվածքի համամանակյա ուսումնասիրությանը և պարզ, առանց հակասությունների ու սպառիչ նկարագրությանը։ Սրանից ավելանում է նաև այն, որ լեզվաբանական վերլուծության նորագույն մեթոդները բոլորովին անտեսվում են այդ աշխատությունների մեջ։

1. ԲԱՅԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, ՀԻՄՔԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Կարդացվեցին բայաձևի մեջ կարելի է գտնել հինգ լեզվաբանական միավոր՝ կարդ, աց, վ, եց, ին, *իսկ եթե* աց, եց, ին *միավորների մեջ էլ առանձնացնենք* ա, ե, ի *ձայնավորները, ինչպես որ արվում է հաճախ, ապա կստանայինք ութ լեզվաբանական միավոր կամ ձևույթ։ Այս վերլուծությունը թեև միանգամայն իրական է և ճիշտ, սակայն մեզ չի ներկայացնում կարդացվեցին բայաձևի էությունը. այդ միավորներից յուրաքանչյուրն ունի, իհարկե, իր դերն ու որոշ իմաստը, բայց տվյալ բայաձևի մեջ այդ բոլոր միավորները չեն, որ կարող են անջատվել՝ առանց բայի հիմնական իմաստը փոխելու։ Այսպես, մենք կարող ենք անջատել* -ին *միավորը և ստանալ կարդացվեց իրական ձևը, կարող ենք այդ ձևից հեռացնել* -եց-ին *միավորները և ավելացնել* -են *միավորը՝* կարդացվեն, *որով կստացվի ևս մի իրական բայաձև. այս երկու փոփոխությունների դեպքում էլ մենք որևէ փոփոխություն չենք առաջացնում բայի հիմնական իմաստի մեջ. այդ նույնը կարող ենք ասել նաև* կարդացված, կարդացվելու, կարդացվող, կարդացվում *և այլ բազմաթիվ ձևերի մասին։ Դժվար չէ տեսնել, որ,* -եց, -ին, -են, -ած, -ել, -ու, -ում *միավորները կարող են փոխարինել միմյանց՝ առանց բայի իմաստն ու սեռի քերականական իմաստը փոխելու. այդ բոլոր միավորներն արտահայտում են դեմքի, թվի, ժամանակի, վիճակի քերականական իմաստներ։ Եթե այժմ նույն* կարդացվեցին

ձևից անջատենք -վ, -եց, -իճ միավորները, կստանանք դարձյալ իրական կարդաց բայաձևը, որ սակայն չի պահպանել նախորդի իմաստի մի կարևոր մոմենտը՝ կրավորական սեռի քերականական իմաստը: Այդ իմաստն արտահայտող լեզվաբանական միավորն է -վ- ածանցը, որ առկա է կարդացվել բայի բոլոր հնարավոր ձևափոխությունների մեջ: Այս նկատի ունենալով, բայի այն մասը, որ առանց ձևաբանական փոփոխության հանդես է գալիս տվյալ բայի բոլոր ձևերի մեջ, կկոչենք բացարձակ հիմք: Կարդացվեցիճ բայաձևի բացարձակ հիմքն է կարդացվ-: Բացարձակ, ինչպես և այլ կարգի հիմքերը կարող են հնչյունափոխության ենթարկվել կամ չենթարկվել շեշտափոխության հետևանքով, ինչպես, օրինակ, դնել բայի անցյալի հիմքում է (դր-եց, դիր). բայց քանի որ դա ձևաբանական նշանակություն կամ դեր չունի, այդ հնչյունափոխված ձևերը դիտում ենք իբրև միևնույն հիմքի ձևակները: Այսպիսով, վերլուծված բայաձևի մեջ մի կողմից ունենք բացարձակ հիմքը (կարդացվ-), իսկ մյուս կողմից՝ զանազան ձևույթներ, որոնք արտահայտում են քերականական տարբեր իմաստներ ու հարաբերություններ: Այդ ձևույթները կոչվում են վերջավորություններ. վերը թվարկած -իճ, -եճ, -ած, -ող, -ում և այլ ձևույթները վերջավորություններ են: Վերջավորությունների հավելումով կամ փոփոխումով ստացված յուրաքանչյուր բայական ձև մի բառով կոչենք բայանձ: Վերցնենք մի այլ բայանձ՝ կարդացնել, որ, ինչպես հայտնի է, կարդալ բայի պատճառականն է. դրանից մենք կարող ենք ունենալ կարդացնում, կարդացնի, կարդացրու, կարդացրեց և այլն. այս ձևերից -ում, -ի, -ու, -եց վերջավորությունները հանելով, մենք կունենանք կարդացն- և կարդացր- ձևերը. քանի որ վերջավորություններից առաջ ունենք -ն- և -ր- ձևույթները, որոնք փոխարինում են իրար տարբեր ձևերի մեջ, ապա պարզ է, որ դրանք չեն պատկանում բացարձակ հիմքին, որ է՝ կարդաց-, որը թեև այլ պարագաներում բայանձ է, բայց իբրև կարդացնել բայի բաղադրիչ մաս, միայն բացարձակ հիմք է: Կարդացվել ձևի մեջ -վ- ածանցը արտահայտում է կրավորական սեռի քերականական իմաստ և մտնում է բացարձակ հիմքի մեջ, իսկ կարդացնել // կարդացրել ձևերի մեջ -ն-, -ր- ձևույթները հանդես են գալիս պատճառական կազմություններում, բայց չեն մտնում բացարձակ հիմքի մեջ. սա նշանակում է, թե բերված օրինակի մեջ կարող ենք հակադրել իրար մի կողմից՝ կարդացն- և կարդացր- միավորները, մյուս կողմից այդ երկուսը՝ կարդաց- բացարձակ հիմքին: Համեմատելով կարդացնել, կարդացնի և

նման բայաձևերը կարդացվել, կարդացվի ձևերի հետ, տեսնում ենք, որ առաջին երկու ձևում վերջավորությունները ուղղակիորեն չեն միանում բացարձակ հիմքին, իսկ վերջիններում՝ միանում են. բայց նույն բայի կարդացվեցիկ ձևում դարձյալ ուղղակիորեն չեն միանում: Սրանից պետք է եզրակացնենք, որ ձևակազմության մեջ բացի բացարձակ հիմքից կարևոր է նաև մի այլ կարգի հիմք, այն՝ որին կարող են միանալ վերջավորությունները. այդ հիմքը կոչենք արդեն ընդունված անունով՝ բայահիմք: Հիշյալ ձևերը նկատի ունենալով, մի կողմից ստանում ենք կարդացվ–, կարդաց– բացարձակ հիմքերը, մյուս կողմից՝ կարդացվ– //կարդացվեց–, կարդացն–// կարդացր– բայահիմքերը. առաջին զույգի մեջ առաջին բայահիմքը (կարդացվ–) համընկնում է բացարձակ հիմքին, բայց քանի որ ժամանակակից հայերենում բացարձակ հիմքն ու բայահիմքերը չեն նույնանում, ապա՝ կարդացվ– բայահիմքի համար կընդունենք զրո վերջավորությունը, ինչպես որ կարդացվեց դիմավոր ձևի վերջավորություն էլ համարվում է զրո: Այսպիսով, բայահիմք կազմելու համար ժամանակակից հայերենում բայի բացարձակ հիմքին ավելացնում ենք զանազան ձևույթներ (ն, r, եց, զրո և այլն): Բայահիմքը կազմելը կոչենք հիմքակազմություն, իսկ հիմքակազմությունը ծառայող, հիմքակազմ դեր կատարող ձևույթները՝ հիմքային ձևույթներ:

Վերջապես, մենք կարող էինք վերցնել նաև կարդալ բայը, որի բայահիմքերն են կարդ– և կարդաց–. բայց մեզ այս դեպքում հետաքրքրողը բայահիմքերը չեն, այլ բացարձակ հիմքը, որ է՝ կարդ–: Համեմատելով կարդ–, կարդաց–, կարդացվ– բացարձակ հիմքերը և նրանցից կազմվող կարդալ, կարդացնել, կարդացվել բայաձևերը, տեսնում ենք, որ դրանցից յուրաքանչյուրը մի ուրույն բայ է. միևնույն ժամանակ, հեշտ է նկատել, որ այդ բացարձակ հիմքերից երրորդը (կարդացվ–) կազմվում է երկրորդից՝ –վ– ձևույթի հավելումով, երկրորդը (կարդաց–)՝ առաջինից՝ –աց– ձևույթով: Քանի որ –(ա)ց–, –վ– ձևույթները ծառայում են արդեն ունեցած բայից նոր կարգի բայեր կազմելուն, ապա դրանք կկոչենք բայակազմ ձևույթներ. ի վերջո, կարդ– բացարձակ հիմքից բայի անորոշ դերբայը կազմելու համար էլ ունենք որոշ ձևույթներ (ա–լ, ե–լ ևն): Հետևաբար, բայակազմության համար գործադրվում են ինչպես յուրահատուկ բայակազմ ձևույթներ, այնպես էլ հիմքային ձևույթներն ու վերջավորությունները (համմտ. կարդա–կարդացնել– կարդացվել, տեսնել–տեսնվել ևն): Բայի, որպես բառի, այն մասը,

որից բայակազմ կամ հիմքակազմ ձևույթների և կամ վերջավորությունների հավելումով ստանում ենք տվյալ բայը, կոչենք բառահիմք. կարդալ, կարդացնել, կարդացվել բայերի բառահիմքն է կարդ-: Բայերի բառահիմք կարող են լինել թե՛ առանձին, իբրև բառ չգործածվող արմատները, թե՛ պարզ (արմատական) բառերը և թե՛ բաղադրյալ (ածանցավոր, բարդ, բարդ-ածանցավոր) բառերը, ինչպես՝ կարդ-ալ, գործ-ել, տես-տեսվար-ել, թանաք-ոտ-ել և այլն, ըստ որում բայի բաղադրյալ բառահիմքը նույնպես կարող է առանձին, իբրև անկախ բառ չգործածվել կամ պարզապես՝ չլինել, ինչպես՝ վերընթերցել, տարընթանալ և այլն, որ նշանակում է, թե դրանք կազմված են պարզ ընթերցել, ընթանալ բայերից: Այդ երևույթին, սակայն, կանդրադառնանք ստորև: Բառահիմքերից բայեր կազմելը կոչենք ընդունված անվանումով՝ բայակազմություն:

Այսպիսով, բայի ձևաբանական ու բառակազմական վերլուծության համար մենք ժամանակակից հայերենում տարբերում ենք հետևյալ միավորները՝ բառահիմք, բացարձակ հիմք, բայահիմք, բայակազմ ձևույթներ, հիմքակազմ ձևույթներ, վերջավորություններ:

2. ԲԱՅԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենում բայերն ըստ կազմության ներկայացնում են երկու կարգ՝ պարզ և բաղադրյալ: Պարզ են այն բայերը, որոնք կազմվում են բառահիմքի և վերջավորությունների միացումով, ինչպես՝ գործել, խաղալ և այլն: Բաղադրյալ են այն բայերը, որոնք բացի բառահիմքից ու վերջավորությունից, ունեն նաև որևէ այլ կարգի բայական ձևույթ, ինչպես՝ կատաղել, կոխոտել, կոր-չել, մոռ-աճ-ալ, տես-ն-ել, սիր-վ-ել, կոր-ցն-ել և այլն: Բաղադրյալ բայեր կազմելու համար ժամանակակից հայերենն ունի երեք միջոց. ածանցում, կրկնություն, հարադրություն[1]. հա-

1 Պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանն իր «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության 1-ին գրքում տարբերում է երկու կարգի բայակազմություն՝ համադրական և վերլուծական: Թերևս այդ բնորոշումները հարմար են ընդհանրապես բառակազմության համար, բայց բայի ձևաբանական կառուցվածքի վերլուծության տեսակետից պարզ և ածանցավոր բայերը մեկ կարգի մեջ միացնելը չի արդարանում: Այդ պատճառով էլ մենք գերադասում ենք սովորական, ավանդական անվանումները: Բացի դրանից, մենք այդ անվանումներն արդեն հատկացրել ենք բառաձևերի տարբեր կազմություններին:

մապատասխանորեն բաղադրյալ կազմությամբ բայերն էլ կոչվում են՝ ածանցավոր, հարադիր, կրկնավոր. **կտրատել, կոխոտել, կոր-չել** ածանցավոր բայեր են, վազվզել, փայլփլել, շարշարել՝ կրկնավոր, բաց աճել, աչք ծակել՝ հարադիր։ Կրկնավոր բայերի կազմության առանձնահատկությունները կարևոր են առհասարակ բառակազմության տեսակետից, բայց ժամանակակից հայերենի բայի ձևաբանական կառուցվածքի մեջ որևէ յուրահատկություն չունեն. կրկնությունն այստեղ հանդես է գալիս իբրև բառահիմքի կազմության միջոց, որ հավասարապես կարող է գործադրվել նաև այլ խոսքի մասերի պատկանող բառեր կազմելուն, ինչպես, օրինակ, **մեծամեծ, փայլփլուն, թափթփուկ, ճվճվոց** և այլն։ Հարադիր բայերը թեև եղանակային ձևերի մեջ ունեն մի յուրահատկություն (օժանդակ բայի տեղը), բայց մյուս հատկանիշներով նրանք նույնանում են պարզ կամ ածանցավոր բայերի հետ, ըստ որում հարադրության մեջ խոնարհվում է բայական բաղադրիչը սովորաբար այնպես, ինչպես հարադրությունից դուրս իբրև անկախ բայ։ Այս բոլորը նկատի ունենալով, մենք այստեղ քննության կառնենք միայն պարզ և ածանցավոր բայակազմություններ։

Թե՛ պարզ և թե՛ ածանցավոր բայերը կարող են կազմված լինել, ինչպես ասացինք, որպես բառ չգործածվող արմատներից, արմատական (պարզ) բառերից և բաղադրյալ բառերից, ինչպես՝ **հաճել, գործել, գերազանցել, թանաքոտել, տնտեսավարել** և այլն։ Պարզ բայեր կազմվում են միայն **-ալ** և **-ել** վերջավորություններով. դրանք վերջավորություններն են անորոշ դերբայի, որ դիտվում է իբրև բայաձևերի ելակետային ձև, իբրև բառույթ։ Այդ երկու վերջավորությունները միատեսակ կիրառություն չունեն. **-ել** վերջավորությամբ կազմվում են ամեն կարգի ներգործական ու չեզոք բայեր, մինչդեռ **-ալ** վերջավորությամբ կազմվում են միայն բնաձայնական-նմանաձայնական պարզ կամ կրկնավոր բայեր։ Այն պարզ բայերը, որոնք կազմված են **-ալ-ով**, բայց այդ կարգին չեն պատկանում, կա՛մ ժառանգված են հնից (ինչպես՝ **կարդալ, խաղալ, մնալ, աղալ** և այլն) կամ էլ բարբառներից են մուտք գործել (ինչպես՝ **ծխալ, մխալ** և այլն)։

Ածանցավոր բայերին ժամանակակից հայերենում կարող են որպես բառահիմք ծառայել թե՛ ինքնուրույն բառերը, թե՛ փոխառյալ արմատներ, որոնք որպես առանձին բառ չեն գործածվում, ինչպես՝ **էվակուացնել, մոբիլիզացնել** և այլն։ Այս կարգի արմատները ստանում ենք փոխառված գոյականների հետ և, այդ գոյա-

կանների վերջավորությունները հանելով, կազմում բայեր[1]*։ Ածանցավոր են համարվում* ոտ, ատ, տ, կոտ, շտ, կշտ, րտ, կրտ, կլտ, որ, ավոր, ան, են, ն, չ, ցն/gr, վ *ածանցներով բայերը։ Այս բոլոր ածանցները կարելի է բաժանել երեք խմբի. կերպային-բառակազմական, սեռային-քերականական և հիմքակազմ։ Երրորդ խմբի ածանցների* (ան, ն, են, չ) *քննությունը թողնելով հիմքակազմության բաժնին, զբաղվենք առաջին երկուսով։*

Կերպային բառակազմական *ածանցներն են* –ոտ–, –ատ–, –կոտ–, –կլտ–, –տ, –րտ, –կրտ–, –շտ, –կշտ–, –որ–, –տակ–, ավոր–, արտ–ներ–, վեր–: *Դրանք, բացի վերջին երեքից, ավելանում են բառահիմքերին և բոլոր մյուս կարգի ածանցներն ու վերջավորություններըը հաջորդում են նրանց, ինչպես՝ կոր-ատ-ել, կոր-ատ-վ-ել։ Այս ածանցները կոչվում են կերպածանցներ, ըստ որում նրանք կազմում են բազմակիության, կրկնության, սաստկության ևն իմաստ արտահայտող բայեր։ Դրանցից ժամանակակից գրական լեզվում կենսունակ, արտադրողական են* վեր–, ներ–, –ավոր–, –ոտ–, –ատ–, *մասամբ և,* –տ– *ածանցները, իսկ մյուսները սահմանափակվում են մի քանի բառերով։*

Վեր–, ներ–, արտ– *ածանցները ժամանակակից հայերենին նվիրված ուսումնասիրությունների մեջ դիտվում են որպես առհասարակ բառակազմական ածանցներ*[2]*, սակայն մեզ թվում է, թե դրանք պետք է դիտել իբրև բայակազմական ածանցներ։*

Վեր– *նախածանցն ունի երեք իմաստ՝ «1. դեպի վեր, 2. վրա, 3. վերստին»։ Առաջին երկու իմաստներով կազմվում են բայեր, գոյականներ ու ածականներ, ինչպես՝* վերասլաց, վերադաս *(1),* վերադիր, վերագրել *(2) և այլն։ Երրորդ իմաստով կազմվում են բայեր՝ գործողությունը վերստին, նորից կատարելու իմաստով, ինչպես՝* վերապատմել, վերամշակել, վերաշինել, վերապրել, վերբոստանալ *և այլն։ Այս իմաստով գոյականները կամ այլ խոսքի մասերը կազմվում են բայից, ինչպես՝* վերամշակել–վերամշակում, վերածնել–վերածնություն (վերածնունդ), վերաճորոգել–վերաճորոգիչ, վերընթերցել–վերընթերցում *և այլն, ըստ որում գոյականներն էլ գործողության անուն են (վերամշակում «վերամշակելը, վերա-*

---

1 *Ավելի մանրամասն տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 119—136։*

2 *Տե՛ս, օրինակ, պրոֆ. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1951, էջ 221—27, Գ. Ս ա ա կ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1955, էջ 172—182 և այլն։*

մշակվելը»), ինչպիսիք են նաև շարժում, ընթերցում և այլ բայակազմ գոյականները։ Այս նախածանցով ժամանակակից հայերենը ազատորեն կազմում է նորանոր բայեր, ինչպես՝ միավորել–վերամիավորել, միանալ–վերամիանալ, վաճառել–վերավաճառել, գնել–վերագնել, պատրաստել–վերապատրաստել, նվաճել–վերանվաճել *և այլն, և այլն։ Քանի որ այս նախածանցը կազմում է բայերի մի յուրահատուկ կարգ՝ գործողությունը վերստին, նորից կատարելու, երկրորդելու իմաստով, ապա մենք այն դիտում ենք իբրև բայակազմ կերպային ածանց, և դասում ենք կերպային-բառակազմական ածանցների շարքը։ Այս ածանցով բայերը կարելի էր կոչել երկրորդության բայեր։ Հասկանալի է, որ այս բայերը գործածության մեջ կարող են ստանալ փոխաբերական իմաստներ և ժամանակի ընթացքում իմաստափոխվել, ինչպես օրինակ՝* վերլուծել *այժմ չի նշանակում «վերստին լուծել՝ լուծմունք կատարել», այլ՝ «տարրալուծել,* анализировать, разобрать». *սակայն սա լեզվի պատմական ուսումնասիրության է վերաբերում և այժմ մեզ չի զբաղեցնի։*

Ներ– *նախածանցը ցույց է տալիս գործողության ուղղվածությունը դեպի ներս կամ մի բանի մեջ, ինչպես՝* ներհաշել «դեպի ներս քաշել», ներգրավել «դեպի ներս գրավել, մի բանի մեջ առնել», ներբերել «դեպի ներս բերել», այդպես էլ՝ ներմուծել, ներփակել, ներհոսել *են։ Ինչպես նախորդ, այնպես էլ այս ածանցով գոյականները բայանուններ են, ինչպես՝* ներդրում, ներարկում *և այլն։ Մի քանի ածականներ ունենք* ներ– *ածանցով, որոնք բայերից չեն կազմված և նույնիսկ համապատասխան բայերը չունենք էլ, դրանցից են՝* ներծովային, ներկուսակցական, ներպատերազմական, ներգազային *և այլն, բայց սրանց մեջ* ներ– *ածանցն ունի ներքին, ներսի, ներսում իմաստը (ներկուսակցական կյանք=կուսակցության ներքին կյանք, ներազգային գործեր=ազգի ներքին գործեր և այլն)։ Այս ածանցով նույնպես ազատորեն կազմվում են նորանոր բայեր, ինչպես՝* ներմարմնավորել, ներդրել, ներսրսկել, ներուղղել, ներսղոսկել *են։ Մի քանի գոյականներ և ածականներ ունենք* ներ– *ածանցով, որոնք պարզապես բայահիմքով են կազմված, ինչպես՝* ներդաշնակ, ներփակ, ներգաղթ *են, բայց սրանք էլ կազմված են համապատասխան բայերից։*

Նախորդ ածանցին հակառակ իմաստով բայեր է կազմում արտ– *նախածանցը. նա ցույց է տալիս գործողության ուղղվածությունը դեպի դուրս, ինչպես՝* արտածել, արտամղել, արտահոսել, արտահանել *են։ Այսպիսով,* ներ– *և* արտ– *նախածանցներով կազմված*

բայերը կարելի է կոչել ուղղվածության բայեր, որոնք բաժանվում են երկու խմբի. այդ երկու խմբերը հակադրվում են իրար «դեպի ներս»—«դեպի դուրս» ուղղվածության իմաստով, որ արտահայտում են նախածանցները։

Այս նախածանցներից բացի, կարելի է հիշել թերևս նաև ենթ–, ընդ–, ստոր– և այլ նախածանցները, որոնք նույնպես բայակազմական որոշ դեր ունեն, բայց նախ՝ դրանք այժմ ավելի հաճախ գործածվում են գոյականներ կամ ածականներ կազմելու համար, ինչպես՝ ենթագլուխ, ենթավերնագիր, ենթադաս, ստորադաս, ընդհատակյա, ընդծովյա ևն, երկրորդ՝ դրանք առհասարակ ոչ շատ կենսունակ ածանցներ են, թեև մեր լեզվի զարգացման տվյալ էտապում դգալի է դրանց առավել գործածական ու արտադրողական դարձնելու ձգտումը։

Ավոր– *ածանցը, որ մեր լեզվի պատմության բոլոր փուլերում էլ մեծ գործածություն է ունեցել որպես ածականակերտ ածանց, արդի գրական լեզվում հանդես է գալիս նաև իբրև բայակերտ ածանց և կազմում է մի բանով օժտելու իմաստն արտահայտող բայեր, ինչպես՝ ֆինանսավորել, ավանսավորել, պարենավորել, սարֆավորել, ակտավորել ևն։ Ա. Աբրահամյանը, քննության առնելով –ավոր– ածանցի դերը հատկապես փոխառյալ բառերից բայեր կազմելու տեսանկյունով և համեմատելով ռուսերենի -ова- բայածանցի հետ, գրում է. «Ռուսերենում -ова- ածանցը և նրա տարբերակները ունեն իմաստային նրբերանգներ։ Դժվար է անվերապահորեն պնդել, թե հայերենի –(ա)վոր ածանցը լրիվ չափով արտահայտում է այդ բոլոր իմաստային նրբերանգները։ Սակայն այդպիսի բայակազմության մեջ հետաքրքրականն այն է, որ հայերենը որոշակի կերպով ձգտում է որոնել միջոցներ իմաստային այդ նրբերանգները որքան կարելի է ճիշտ արտահայտելու համար, և նրա առաջքաշած միջոցներից մեկը –(ա)վոր– ածանցի գործադրումն է»[1]։ Այս եզրակացությունը միանգամայն ճիշտ է և հիմնավորված է հարուստ փաստական նյութի վերլուծությամբ։ Մնում է ավելացնել, սակայն, որ –(ա)վոր– ածանցը հանդես է գալիս ոչ միայն փոխառություններից, այլև սովորական հայերեն բառերից նոր բայեր կազմելու դերով, ըստ որում նա շատ բայերի մեջ որոշակիորեն իր իմաստով սահմանազատվել է ածականների մեջ ունեցած իմաստից. այսպես՝ թևավոր, լուսավոր, փառավոր նշանակում են «թև ունեցող», «լույս*

---

1 *Ա. Աբրահամյան, նույն տեղում, էջ 134։*

ունեցող, լույսով օժտված», «փառք ունեցող, փառքի արժանի», և համապատասխանորեն դրանցից կազմված թևավորել, լուսավորել, փառավորել *բայերն էլ իրենց ուղղակի իմաստով նշանակում են՝ «թևավոր դարձնել», «լուսավոր դարձնել», «փառավոր դարձնել»։ այսպես են գրեթե բոլոր հին կազմությունները։ Մինչդեռ նոր կազմությունների մեջ մեծ մասամբ այդպես չէ. աստիճանավոր նշանակում է «աստիճան ունեցող» (պաշտոնյա), իսկ* աստիճանավորել՝ *«աստիճաններով օժտել, աստիճանների բաժանել», միավոր՝ «մեկեր ունեցող», իսկ* միավորել՝ *«միասնացնել, միացնել», այդպես էլ՝* ռեսակավորել, սարֆավորել, կաճավորել, դասավորել, ֆինանսավորել, վարկավորել, որակավորել, ատեստավորել *են։ Այս բոլորի մեջ արտահայտվում է մի բանով օժտելու գաղափարը, ուստի և այս կարգի բայերը կարելի է կոչել* օժտման բայեր։

Այսպիսով, ժամանակակից հայերենի համար կենսունակ, արտադրողական կերպային-բառակազմական ածանցներ կարելի է համարել. միայն կերպային՝ -ոտ-, -ատ-, -տ-, և կերպային-բառակազմական վեր- *(երկրորդության),* ներ-, առ- *(ուղղվածության),* -ավոր- *(օժտման)։ Մյուս կերպածանցները (-կլտ, կտ են), որոնցով ունենք մի խումբ բայեր, մեր արդի գրական լեզվի համար գործուն, կենսունակ չեն։*

Թվարկված բոլոր ածանցները մտնում են բացարձակ բայահիմքի մեջ՝ լրացուցիչ հիմքակազմ ածանցներով կամ առանց դրանց։

Սեռային-ֆեռականական ածանցներն են -ցն // -ցր և-վ-: *Առաջինը կազմում է պատճառական բայեր և կարող է հանդես գալ ա, ե ձայնավորների հետ կամ առանց դրանց. ա ձայնավորով է լինում* -ալ *վերջավորությամբ և* -ան- *ածանցով բայերի հետ (կարդալ-կարդացնել, մոռանալ- մոռացնել), ե ձայնավորով՝ ել վերջավորությամբ և* -են- *ածանցով բայերի հետ (վազել-վազեցնել, մոտենալ-մոտեցնել), իսկ առանց ձայնավորի՝ ն, չ ածանցներով բաղաձայնալ, ինչպես և մի քանի աննկատ ու պակասավոր բայերի հետ (բուսնել-բուսցնել, թռչել-թռցնել, ուտել-կերցնել). այս կարգի բայերից* իջնել *բայի պատճառականն է* իջեցնել, զբոսնել *բայինը՝* զբոսեցնել, դառնալ *բայինը՝* դարձնել. լցնել, վերցնել, հարցնել *բայերը թեև պատճառականության իմաստ չունեն, բայց ձևաբանորեն պատկանում են պատճառականների թվին, ըստ որում ստացվել են* լցուցանել, հարցանել *ձևերից*[1]. *այդ կարգին են պատկանում նաև հրամ-*

1 *Ա. Աբրահամյանը կարծում է, որ* վերցնել *ստացվել է* վերնալ-*ից,*

ցրնել, հատկացնել, յուրացնել *բայերը, որոնք ունեն ներգործական սեռ, առանց պատճառականության իմաստի, բայց ձևականորեն վերջիններիս խմբի մեջ են մտնում: Դրանց հակառակ, կան բայեր, որոնք թեև ծագումաբանորեն պատճառականի կազմություն ունեն, բայց ո՛չ ձևաբանորեն, ո՛չ իմաստով, ո՛չ էլ իրենց կազմության արդի ձևով չեն կարող պատճառականների մեջ դասվել. դրանք են՝* զեկուցել, ծանուցել, կառուցել, հատուցել, հարուցել, մատուցել, ուսուցել–ուսուցանել, սնուցել (սնուցանել)[1]: *Փոխառյալ գոյականներից* –ացնել *բաղադրիչով կազմված բայերը, անկախ իրենց իմաստից, ձևաբանորեն պատկանում են պատճառականների տիպին, ինչպես՝* էլեկտրիֆիկացնել, էվակուացնել *և այլն:*

Մենք ասացինք, որ պատճառական մասնիկն է –ցն–//–ցր–, *բայց դա, իհարկե, արտաքուստ է միայն այդպես և կարիք ունի ճշտման: Պատճառական բայերի խոնարհման մեջ, ինչպես վերը ցույց ենք տվել, ունենք երկու բայահիմք, որոնք երկուսն էլ տարբերվում են բայի բացարձակ հիմքից. այսպես՝* հեռացնել *բայի բացարձակ հիմքն է* հեռաց–, *իսկ բայահիմքերը՝* հեռացն– *և* հեռացր–: *Ինչպես տեսնում ենք,* –ն– *և* –ր– *ձևույթները հանդես են գալիս որպես տարբեր բայահիմքերի կազմիչներ, ուստի և որպես պատճառականության ցուցիչ կամ բաղադրիչ մնում է միայն* –ց– *ձևույթը: Որ այդ այդպես է, ապացուցվում է նաև կրավորական կազմությամբ. պատճառական բայերի կրավորականը կազմվում է, ինչպես գիտենք, բացարձակ հիմքին ավելացնելով* –վ– *ձևույթը (հեռաց-ն-ել, հեռաց-վ-ել). քանի որ կրավորականների մեջ էլ պահպանվում է պատճառականության իմաստը (համմտ. հիշել-հիշվել-հիշեցնել-հիշեցվել) և այդ իմաստն արտահայտվում է միայն ց-ով, առանց ն-ի կամ ր-ի, ապա պատճառականության ձևույթն է* –ց–: *Վերջապես, պատմական տվյալներն էլ հաստատում են այդ, ըստ որում* –ցն– *ստացվել է* –ուց–անել–*ից, որի մեջ պատճառականի ձևույթն է* –ուց (<ույց), *իսկ ն-ն այն է, ինչ որ ունենք* տես–ն–ել, գտ–ն–ել *և այլ բայերի մեջ (-անել>նել): Ստորև, ձևակազմության կառուցվածքային ընդհանուր օրինաչափության մասին խոսելիս*

լցնել-ը՝ լից *արմատից* +ցն, *աչքաթող անելով ժողովրդական բարբառային* վերցուցել, լցուցել *ձևերը. մեր կարծիքով* լցուցանել *ձևից ստացվել է* լցցնել *(ինչպես ունենք որոշ բարբառներում), իսկ սրանից էլ ըստ օրենքի ընկել է երկու ց-երից մեկը (համմտ. անցուցանել, անցցնել>անցընել, դարձուցանել>դարձնել ևն):*

1 *Ա. Աբրահամյան, անդ, էջ 576:*

կտեսնենք, որ գործուն կանոնը ևս հաստատում է մեր տեսակետը։ Այսպիսով, պատճառականության սեռային քերականական ածանցն է ց ձևույթը, որ կազմում է պատճառական բայեր անցյալի հիմքին ավելանալով՝ ա, ե լծորդներով կամ առանց դրանց և իր հետ ունենում է հիմքակազմ -ն- կամ -ր- ձևույթներից մեկը։

Այս ածանցը իսկապես պատճառական է կազմում ներգործական սեռի բայերից։ Չեզոք սեռի բայերից նա սովորաբար կազմում է ներգործական սեռի բայեր, ինչպես՝ խաղալ-խաղացնել, փայլել-փայլեցնել, մեծանալ-մեծացնել ևն։ Բնաձայնական չեզոք սեռի բայերից կազմում է ինչպես ներգործական, այնպես էլ չեզոք բայեր, օրինակ՝ զնգալ-զնգացնել, խոմփալ-խոմփացնել ևն։

Մյուս ածանցների հետ պատճառական -ց- ձևույթը բայակազմության մեջ հետևյալ հարաբերություններն ունի. կերպային-բառակազմական -ոտ-, -ատ-, -տ- (ինչպես և՝ -կոտ-, -կլոտ- ևն) ածանցներով բաղադրված բայերի բացարձակ հիմքը պատճառականների համար դառնում է բառահիմք, ինչպես՝ թռչկոտել-թռչկոտեցնել, բոցկլտալ-բոցկլտացնել և այլն. այս կարգի բայերը, սակայն, շատ քիչ են ու սակավ գործածական, ուստի այդպիսի կազմությունները անսովոր են, թեև տեսականորեն դրանք չեն հակասում մեր լեզվի այժմյան կառուցվածքին։ Հնարավոր է նաև կազմության հակառակ հաջորդականությունը, այսինքն՝ պատճառականից կազմել բաղադրյալ բայեր՝ -ոտ (-ատ, -տ) ածանցով, բայց դա միայն հնարավորություն է, պոտենցիա, և մեզ հայտնի է միայն կորցնոտել հազվադեպ գործածությամբ բայը։ Այնուամենայնիվ, այդ տիպի բայակազմությունը չի հակասում մեր լեզվի կառուցվածքին։ Նկատելի է, որ այդ դեպքում կարող է հանդես գալ, բստ երևույթին, միայն -ոտ ածանցը։ Լեզվի ձևաբանական (մոդելների) համակարգը արդի վիճակում թույլ կտար այդ դեպքում կրկնակի պատճառական կազմել, ասենք՝ կորցնոտեցնել, թեև իրականում այդպիսի բայ չունենք։

Մյուս ածանցներից ներ-, առ- և վեր- նախածանցների հետ պատճառական կազմությունը ներկայացնում է երկկողմանի հնարավորություն, այսինքն՝ այդ նախածանցներով բաղադրված բայերից կարելի է կազմել պատճառական, ինչպես՝ ներհոսել-ներհոսեցնել, առուսհոսել-առուսհոսեցնել, վերակաճգնել-վերակաճգնեցնել, և հակառակը՝ պատճառականներից կազմել նոր բայեր՝ ներ-, վեր- նախածանցներով, ինչպես՝ փայլեցնել-վերափայլեցնել, միա-

ցրնել–վերամիացնել, սառեցնել–վերասառեցնել[1]: Այս երկու կարգի բայերն էլ խիստ հազվադեպ են մեր գրական լեզվում, բայց չեն հակասում նրա կառուցվածքին:

Վերջապես, –(ա)վոր ածանցով մեզ հայտնի են ճարկավորեցնել, փառավորեցնել, միավորեցնել սակավադեպ գործածությամբ բայերը, բայց այս դեպքում էլ կառուցվածքային տեսակետից ունենք միանգամայն հնարավոր կազմություն, մինչդեռ հակառակը, այսինքն՝ պատճառականներից –(ա)վոր ածանցով կազմություն, ասենք՝ փայլեցնել–փայլեցնավորել ձևատիպարով, մեր լեզվի արդի կառուցվածքի մեջ հնարավոր չէ:

Այսպիսով, մեր լեզվի արդի համակարգի մեջ կարելի է հնարավոր համարել հետևյալ սխեմայով ներկայացվող ձևատիպարները.

1) կերպածանցավոր բայերի հիմք + պատճառական + ել, օր. բոց-կլո-ացն-ել,

2) պատճառականի ներկայի հիմք + կերպային -քեր. ածանց + ել, օր. կորցնոտել,

[3) պատճառական ներկայի հիմք + կերպային -քեր. ածանց + պատճառական + ն + ել, ասենք՝ կորցնոտեցնել],

4) ներ–, արտ– կամ վեր– նախածանց + բառահիմք + պատճառական + ն + ել, օր. ներհոսեցնել,

5) ներ– կամ վեր– նախածանց + պատճառական բայ, օր. վերափայլեցնել,

6) բառահիմք + (ա)վոր ածանց + պատճառական + ն + ել, օր. հարկավորեցնել:

Այս բոլորը կարելի է ներկայացնել պայմանական թվանշանների զուգորդություններով, նշանակելով բառահիմքը 1, կերպային-քերականական ածանցները՝ 2, պատճառական ձևույթը 3, ն//ր ձևույթը՝ 4, անորոշի -ել վերջավորությունը՝ 5, պատճառական բայերի ներկայի հիմքը՝ 6, վեր–, արտ–, ներ– նախածանցները՝ 7, –(ա)վոր– ածանցը՝ 8, պատճառական բայի անորոշ դերբայը՝ 9 և կստանայինք հետևյալ հնարավոր կազմությունները. ա) 1+2+3+4+5, բ) 6+2+5, գ) (6+2)+3+4+5, դ) (7+1)+3+4+5, ե) 7+9, զ) (1+8)+3+4+5:

Այս ձևատիպներից (մոդելներից) որոշ չափով գործածական են առաջինը, չորրորդը, հինգերորդը, վեցերորդը, իսկ մյուսները

1 «Սովետական Հայաստան», 1959, 24/5:

չոկ հնարավորություններ են, բայց նույնիսկ նրանք էլ, որ գործածական են, շատ անսովոր են։ Այս տեսակետից մեր լեզուն չի օգտագործում իր մեծամեծ հնարավորությունները, բայց դա էլ հետևանք է այն բանի, որ բաղադրյալ բայերից պատճառական կազմելու ավելի սովորական ու արտադրողական միջոցն է տալ-ով հարադրությունը, ինչպես՝ կոտրատել տալ, կտրտել տալ և այլն։

Սեռային-քերականական -վ- ածանցը կազմում է կրավորական սեռի բայեր ներգործական ու պատճառական բայերից, ինչպես և անդրադարձ կամ չեզոք բայեր[1]։ Այդ ածանցով բայեր կազմվում են -ել խոնարհման բայերի բացարձակ հիմքից, ինչպես՝ սիր-վ-ել, կտրտ-վ-ել, մոռեցնել-մոռեց-վ-ել և այլն. ալ խոնարհման բայերից, ինչպիսի կազմությամբ էլ լինեն նրանք, կրավորաձև բայեր են կազմվում անցյալի հիմքից՝ կարդալ-կարդաց—կարդացվել են։ Ն ածանցով բայերը կրավորական կազմում են ներկայի հիմքից, ինչպես՝ գռնել-գռնվել, բողնել-բողնվել, առնել-առնվել և այլն, իսկ կրկնահիմք բայերը՝ անցյալի հիմքից, ինչպես՝ դնել-դրեցի-դրվել, տանել-տարվել, ուտել-կեր-ակեր-վել[2] են։

Շատ լեզուների մեջ կրավորական սեռը կազմվում է խոնարհման հատուկ վերջավորություններով, ինչպես, օրինակ, ռուսերեն читать—читаться—читающий—читаемый, լատիներեն՝ amatis «սիրում եք»—amanini «սիրվում եք» և այլն. մասամբ այդպես էր նաև գրաբարում, ինչպես՝ սիրեմ-սիրիմ, սիրեցայ և այլն։ Այս կարգի լեզուների մեջ կրավորականի կազմությունը մտնում է ձևակազմության համակարգի մեջ։

Ժամանակակից հայերենում կրավորականի կազմությունը ոչ մի կապ չունի բայաձևերի վերջավորությունների հետ և որևէ ձևով չի անդրադառնում ձևակազմության վրա (համմտ. գրում է— գրվում է, գրեց-գրվեց, գրեր-գրվեր և այլն)։ Կրավորականի -վ- ածանցը նույն հարաբերության մեջ է վերջավորությունների հետ, ինչպիսի հարաբերության մեջ են -ոտ, -ատ, -տ, -ավոր- ածանցները, որ նշանակում է, թե մեր արդի լեզվում կրավորականը հանդես է գալիս որպես յուրահատուկ բայատեսակ, այլ կերպ ասած՝ կրա-

---

Մանրամասնությունները տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, անդ, էջ 616—656։

2 Ուտվել ձևը բարբառային է, որ սակայն տարածվում և առավել գործածական է դառնում։

վորական սեռի քերականական իմաստն արտահայտվում է ոչ թե ձևակազմության, այլ բայակազմության միջոցով։

Ով այսպես, ժամանակակից հայերենի բայի ձևաբանական կառուցվածքի մեջ որպես բայակազմության ձևույթներ հանդես են գալիս. 1) կերպային բառակազմական ածանցներ (-ոտ, -ատ, -տ, -ավոր, ներ-, վեր(ա)-, ոչ կենսունակ՝ -կլտ, -կրտ, -տակ, -որ), որոնք մի բառով կոչվում են կերպածանցներ. 2) սեռային-ֆերա-կանական ածանցներ (պատճառական՝ -ց-, կրավորական՝ -վ-), որոնք մի բառով կկոչենք սեռածանցներ։ Քանի որ այս բոլոր ածանցներն էլ բայակազմական դեր ունեն, ապա նրանց տարբերակումը ըստ առանձին խմբերի ունի ոչ թե ձևակազմական, այլ բայակազմական հիմունք. ձևակազմական տեսակետից նրանք միևնույն մակարդակի վրա են գտնվում, որպես ելակետային ձևեր, թեև, իհարկե, կիրառության տարբեր ոլորտներով ու գործածության զանազան սահմանափակումներով ու յուրահատկություններով։ Որպես ընդհանուր օրինաչափություն, բոլոր բայակազմական ածանցներն անփոփոխ կերպով մնում են բայի բացարձակ հիմքի մեջ, ինչպես՝ կտրատ-ել, -եցի, -ում, կեռպավոր-ել, -եցի, -ում, սիրվ-ել, -եցի, -ում և այլն։ Սա ևս ապացուցում է, որ ժամանակակից հայերենում պատճառականի ածանցն է -ց-։

Քանի որ այս բոլոր միջոցներով կազմում ենք զանազան քերականական իմաստներ արտահայտող բայեր կամ ավելի ճիշտ՝ բայական բացարձակ հիմքեր, ապա կարելի է բացարձակ հիմքերը իրենց կազմությամբ բնութագրել հետևյալ ձևով։ Բայի բացարձակ հիմքը կարող է լինել արմատ կամ հիմույթ (պարզ կամ բազադրյալ բառ)։ Ինչպես արմատական, այնպես էլ հիմույթային բացարձակ հիմքերը զուրկ են բային հատուկ քերականական կարգերից (սեռի, պատճառականության, կերպային իմաստներից)։ խաղ բառից ունենք խաղալ չեզոք և ներգործական սեռերով բայը (երեխան խաղում է (=խաղով է զբաղված), նա շախմատ է խաղում), ներ- արմատից ունենք ներ-ածել չեզոք սեռի բայը, մոռ- արմատից՝ մոռ-ացել ներգործական բայը, տեսեվար հիմույթից ունենք տեսեվարել ներգործական և չեզոք սեռի բայը, ղեկավար հիմույթից՝ ղեկավարել ներգործական բայը և այլն։ Այս բոլոր դեպքերում բացարձակ հիմքը համընկնում է բառահիմքին, ուստի և բայի քերականական կարգեր չի արտահայտում, այլ նրա բառային իմաստը։ Այս կարգի բացարձակ հիմքերին հակադրվում են նրանք, որոնք արտահայտում են կերպային կամ սեռային քերականական

իմաստներ բայակազմության միջոցով: Սրանք ածանցների միջոցով նշույթավորված են ըստ այս կամ այն իմաստի, իսկ առաջինները՝ ոչ: Հետևաբար ըստ կազմության կունենանք բայածանցավոր բացարձակ հիմքեր *և* անբայածանց բացարձակ հիմքեր: *Ըստ քերականական իմաստների բայածանցավոր բացարձակ հիմքերը նշույթավորված են որևէ կերպային կամ սեռային իմաստով, ուրեմն դրանք նշույթավոր բացարձակ հիմքեր են, իսկ անբայածանց բացարձակ հիմքերը՝ աննշույթ:*

Նշույթավոր բացարձակ հիմքերը նույնպես երկու տեսակ են. կերպածանցավոր բացարձակ հիմքերը սեռի քերականական իմաստ չեն արտահայտում, նրանք «անտարբեր» են սեռի նկատմամբ: Իրենց հերթին սեռածանցներն էլ «անտարբեր» են կերպային իմաստների նկատմամբ: Առաջինները բայիմաստի մեջ են մտնում, ուստի և այդ կարգի բայերի բացարձակ հիմքը կկոչենք բայիմաստով նշույթավոր: Երկրորդները բայի վերաբերական իմաստ են արտահայտում, թեև բայակազմական միջոցով: Հետևաբար, սեռի իմաստով նշույթավորված բացարձակ հիմքերը կկոչենք քերականորեն նշույթավոր: Ըստ այսմ կունենանք հետևյալ սխեման.

Տ ա խ տ ա կ 17

		Աննշույթ	Նշույթավոր	
			բայիմաստով	քերականորեն
Անբայածանց բացարձակ հիմք		+	0	0
Բայածանցավոր բացարձակ հիմքեր	Կերպածանցավոր	—	+	0
	Սեռածանցավոր	—	0	+

Քանի որ քերականորեն նշույթավորված բացարձակ հիմքերն արտահայտում են սեռի քերականական իմաստ որպես ձևաբանական կարգ, ապա հարկավոր է պարզել, թե բայը ի՛նչ սեռեր ունի ժամանակակից հայերենում, և ձևաբանորեն ինչպես են արտահայտվում դրանք: Առաջին հերթին կարելի էր բայերը բաժանել ըստ անցողականության *և ոչ* անցողականության: *Առաջինները ցույց են տալիս ենթակայի գործողության «անցումը» մի այլ առարկայի, այլ կերպ ասած, անցողականությունը կանխադրում է*

գործողությունը կրող առարկա։ Երկրորդը այդպիսի առարկա չի պահանջում. անանցողականությունը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ ենթական կատարում է ինքնին, առանց ուրիշ առարկայի վրա ներգործելու։ Բայի անցողականությունը և անանցողականությունը, ուրեմն, արտահայտում է քերականական ենթակայի հարաբերությունը գործողության առարկայի հետ։ Այն բոլոր դեպքերում, երբ առկա է գործողությամբ դրսևորվող այս երկկողմանի հարաբերությունը գործողի ու գործողության առարկայի միջև, բայը անցողական է, իսկ եթե առկա է միայն միակողմանի հարաբերություն գործողի և գործողության միջև առանց երրորդ անդամի, բայը անանցողական է։ Ժամանակակից հայերենում իբրև անցողական ձևաբանորեն նշույթավորված են պատճառական սեռածանցով բացարձակ հիմքերը, իսկ անանցողականությամբ՝ կրավորական սեռածանցով բացարձակ հիմքերը. մոռացնել, սպիտակացնել, սովորեցնել, կարդացնել են անցողական բայեր են, մոռացվել, սպիտակեցվել, սովորեցվել, կարդացվել, գրվել, գոնվել են՝ անանցողական։ Բոլոր մյուս կարգի բացարձակ հիմքերը՝ բայածանցավոր, թե՛ անբայածանց, ձևաբանորեն նշույթավորված չեն ըստ անցողականության և անանցողականության և այդ տեսակետից չեզոք են։ Չեզոք բացարձակ հիմքերը կարող են նշույթավորվել հիմքակազմության միջոցներով, որոնց մասին կխոսենք ստորև։

Բացի անցողականությունից և անանցողականությունից, բայերն ունեն նաև սեռեր։ Սեռի քերականական կարգը արտահայտում է գործողի և գործողության հարաբերությունը։ Այսպես. գործողը կարող է գործողությունը կատարել՝ ներգործելով մի այլ առարկայի վրա, և այս դեպքում կունենանք ներգործական սեռ. գործողը կարող է դրդել, հարկադրել մեկին մի բան անելու, պատճառ դառնալ, որ մեկը մի գործողություն կատարի. երբ ասում ենք աշակերտը դասը կարդաց, գործողությունը վերագրում ենք աշակերտին (ենթական աշակերտն է՝ կարդացողը), իսկ երբ ասում ենք ուսուցիչը աշակերտին կարդալ տվեց դասը, ապա այս դեպքում կարդացողը ենթական ինքը չէ. նա միայն ստիպողը, դրդողը, պատճառ դարձնողն է, իսկ կարդալու գործողությունը կատարողը՝ իրնդիրը (աշակերտը)։ Ենթակայի ու գործողության այսպիսի հարաբերությունը կոչում են պատճառական սեռ։ Այսպիսով, անցողականությունը դրսևորվում է իբրև երկու սեռ. ներգործական և պատճառական։ Անանցողականությունը նույնպես արտահայտում է գործողի ու գործողության տարբեր հարաբերություններ.

Հայրը սիրվում է *որդուց*։
Ջուրը հոսում է։
Արևենը լվացվում է։
Բարեկամները հրաժեշտի ժամին գրկախառնվեցին։

Այս նախադասություններից առաջինում սիրվում է *բայը ցույց է տալիս, որ հայրը, որպես գործող, ենթարկվում է մի ուրիշից բխող գործողության, երկրորդում՝* հոսում է *ցույց է տալիս, որ ջուրը, որպես գործող, կատարում է գործողությունն ինքնին, ըստ որում այդ գործողությունը ոչ ուրիշից է բխում, ոչ էլ մի այլ առարկայի է անցնում, երրորդում՝* լվացվում է *ցույց է տալիս, որ* Արսենը, *որպես գործող, ինքն էլ իր գործողության առարկան է (=ինքն իրեն լվանում է). չորրորդում* գրկախառնվեցին *ցույց է տալիս, որ* բարեկամները, *որպես գործողներ, փոխադարձաբար ենթարկվում են միմյանց գործողության։ Համապատասխանորեն՝* սիրվում է *կրավորական սեռ է արտահայտում,* հոսում է՝ *չեզոք,* լվացվում է՝ *անդրադարձ,* գրկախառնվեցին՝ *փոխադարձ։ Ուրեմն՝* ածանցողականությունը դրսևորվում է *չորս* սեռով. *չեզոք, կրավորական, անդրադարձ, փոխադարձ։*

Ասվածներից հեշտ է եզրակացնել, որ անցողականություն ու անանցողականություն քերականական կարգը արտահայտում է գործողի ու գործողության առարկայի հարաբերությունը՝ բայի երկկողմանի հարաբերությամբ կամ դրա բացակայությամբ, մինչդեռ սեռերն արտահայտում են գործողի ու գործողության հարաբերություն։ Բայց սրանից բխում է այն, որ առաջին դեպքում մենք ունենք ըստ էության մեկ քերականական կարգ՝ անցողականություն, որովհետև միայն սա է ցույց տալիս գործողի ու գործողության առարկայի (սուբյեկտի և օբյեկտի) հարաբերություն, իսկ անանցողականությունը պարզապես նշանակում է այդպիսի հարաբերության բացակայություն։ Այլ կերպ ասած՝ այս քերականական կարգի համար բայերը կարելի է բաժանել երկու դասի և նրանք ներկայացնել դրական ու բացասական հարաբերությամբ, այսինքն՝ տվյալ բայը իր տվյալ իմաստով անցողականության քերականական կարգ ունի կամ զուրկ է այդ կարգից։ Այդպես չենք կարող ասել սեռերի մասին. ամեն բայ ունի որևէ կարգի հարաբերություն գործողի հետ, և այս դեպքում ամեն բայի տվյալ իմաստը արտահայտում է որևէ սեռի քերականական իմաստ։ Երկուսի տարբերությունը կարելի է ցուցադրել հետևյալ տախտակով (նկատի ունենք բայերի միայն մեկ՝ գլխավոր բառային իմաստը)։

Տ ա խ տ ա կ 18

Բայեր	Անցողակա-նություն	Սեռ
1. կարդալ	+	+
2. գնալ	—	+
3. կարդացնել	+	+
4. սիրվել	—	+
5. հոսել	—	+
6. լվացվել	—	+
7. գրկախառնվել	—	+
8. ողջագուրվել	—	+

Ինչպես տեսնում ենք, երկրորդ սյունակում ունենք + նշանը բոլորի համար, իսկ առաջին սյունակում՝ միայն երկուսի համար։ Առաջին սյունակի համար կարելի է դիմել կամ այո կամ ոչ (է՛ կամ չէ) արտահայտությանը, իսկ երկրորդի համար՝ միայն այո, ըստ որում այստեղ էլ եթե հակադրությունները արտահայտենք կամ-կամ բանաձևով, ապա կստանայինք՝ կամ Ա է, կամ Բ, կամ Գ ևն, բայց անպայման դրանցից մեկն է։ Այսպես.

Տ ա խ տ ա կ 19

Բայեր	Ներգծ.	Ցտճռ.	կրավ.	Չեզ.	Փոխա-դարձ	Անդրա-դարձ
1. կարդալ	+	—	—	—	—	—
2. գնալ	—	—	—	+	—	—
3. կարդացնել	—	+	—	—	—	—
4. սիրվել	—	—	+	—	—	—
5. հոսել	—	—	—	+	—	—
6. լվացվել	—	—	—	—	—	+
7. գրկախառնվել	—	—	—	—	+	—
8. ողջագուրվել	—	—	—	—	+	—

Այսպիսով, սեռի քերականական կարգի հակադրություններն ունեն բաժանական կամ բաշխական (դիզյունկտիվ)[1] բնույթ, մինչդեռ անցողականության հակադրությունը այդպիսին չէ։ Լեզվաբանության մեջ՝ հնչույթաբանական հակադրությունների բնորոշումներին համապատասխան, առաջինները համարում են հավա-

1 *Դիզյունկտիվ (լատ. disiunctio «բաշխել, բաժանել») կոչվում են այնպիսի հակադրությունները, որոնց անդամներից յուրաքանչյուրը տրված կատեգորիաներից որևէ մեկն է. տրամաբանության մեջ դա արտահայտվում է «կամ Ա կամ Բ, կամ Գ» ևն բանաձևով։*

սարական *(էկվիպոլենտ), երկրորդները՝ մասնական (պրիվատիվ)* հակադրություններ։ Հետևաբար, բայերի հակադրություններն ըստ սեռի հավասարական են, իսկ ըստ անցողականության՝ մասնական։

Վերևում ասացինք, որ միայն սեռածանցավոր բառերն են ձևաբանորեն նշույթավորված որպես անցողական կամ ոչ անցողական։ Նույնը կարելի է ասել նաև սեռերի մասին, բայց շատ ավելի մեծ վերապահությամբ։ Այսպես՝ պատճառական ածանցով կազմված բայերը անցողական են, բայց ըստ սեռի նրանք կարող են լինել պատճառական կամ ներգործական։ Այսպես՝ խմեցնել *պատճառական է. նա կարող է փոխարինվել նույն սեռի վերլուծական ձևով՝* խմել տալ *(ստիպել՝ հորդորել՝ օգնել են, որ խմի).* սպիտակացնել *ներգործական է. նա կարող է փոխարինվել* սպիտակ դարձնել *կապակցությամբ.* հիվանդացնել՝ *հիվանդ դարձնել,* ուրախացնել՝ *ուրախություն պատճառել. այլ իմաստ և այլ սեռ (պատճառական սեռ) ունեն* սպիտակել տալ, հիվանդանալ տալ, ուրախանալ տալ։ *Վերջապես, կան բայեր էլ, որոնք կարող են և՛ մեկ, և՛ մյուս սեռի իմաստն արտահայտել նույն պատճառական ածանցով. ծիծաղեցնել նշանակում է և՛ ծիծաղել տալ (պատճառական), և ծիծաղ պատճառել. ծուլացնել՝ և՛ ծույլ դարձնել, ծուլության դրդել՝ մղել՝ վարժեցնել են, և՛ ծուլություն պատճառել՝ առաջ բերել. տրտմեցնել՝ և՛ տրտում դարձնել, տրտմություն պատճառել, և՛ տրտմել տալ։ Այս վերջին դեպքում ունենք պատճառական և ներգործական սեռերի ձևաբանական հակադրության չեզոքացում.* ծիծաղեցնել, ծուլացնել, տրտմեցնել *ձևաբանորեն և՛ ներգործական սեռի են, և՛ պատճառական։ Նրանց սեռերի չեզոքացումը վերանում է շարահյուսական մակարդակում։ Առաջին օրինակի* խմեցնել *բայը պատճառական սեռին է պատկանում, իսկ երկրորդ օրինակի* սպիտակացնել *բայը՝ ներգործական սեռին։ Սեռային այդ հակադրությունն արտահայտվում է ձևաբանական մակարդակում, բայց արտահայտվում է ոչ թե ց պատճառական ածանցով, այլ իր հիմույթով. եթե պատճառական ձևի հիմույթը ներգործական սեռի բայ է, ստացվում է պատճառական սեռի բայածանցավոր բայ, իսկ եթե հիմույթը չեզոք սեռի է, ստացվում է պատճառական կամ ներգործական սեռի բայ։ Սա նշանակում է, թե ց ածանցը առաջին դեպքում ձևաբանորեն տարբերակում է պատճառական սեռը ներգործականից (ուժեղ դիրք), ինչպես՝* հիշել—հիշեցնել, խմել—խմեցնել, մոռանալ—մոռացնել *են, իսկ երկրորդ դեպքում՝ կերտում է անցողական բայ, արտահայտում է անցողականություն՝*

ձևաբանորեն հակադրություն ստեղծելով անցողական—ոչ անցողական բայերի միջև, բայց չի ստեղծում ներգործական սեռ—պատճառական սեռ հակադրությունը (թուլլ դիրք)։

Երկրորդ սեռածանցը, որ կոչվում է կրավորական, ձևաբանական մակարդակում կրավորական—չեզոք, կրավորական—անդրադարձ, կրավորական—փոխադարձ հակադրություններ չի ստեղծում. կարելի է ասել, թե ամեն մի բայ, որ ունի վ ածանցը, և՛ կրավորական է, և՛ չեզոք, հաճախ նաև՝ անդրադարձ, կամ և՛ կրավորական է, և՛ անդրադարձ և այլն։ Սեռերի այս տարբերակումները և հակադրությունները ստեղծվում են շարահյուսական մակարդակում։ Կրավորական սեռի –վ– ածանցի համար ուժեղ դիրք են հանդիսանում պատճառական կազմությամբ բայերը. սպիտակացվել, խմեցվել, աճեցվել, այլև՝ վերլուծական պատճառականների կրավորականը (նկարել տալ—նկարել տրվել) միայն կրավորական սեռի են նույնիսկ այն դեպքում էլ, երբ նախադասության մեջ ներգործող առարկան բաց է թողնվում։ Բոլոր մյուս դեպքերում –վ– ածանցը կազմում է ոչ անցողական բայեր՝ անցողականներից։ Ինչպես տեսնում ենք, –ց– և –վ– սեռածանցները միևնույն կարգի հակադրություններ են ստեղծում. մի կողմից՝ անցողականություն—ոչ անցողականություն, մյուս կողմից՝ սեռերի (պատճառական—ներգործական, կրավորական—չեզոք)։ Սրանից ելնելով կարող ենք ասել, որ սրանցից յուրաքանչյուրի սեռային իմաստը չեզոքանում է ձևաբանական մակարդակի որոշ դիրքերում՝ առաջ բերելով համանունություն։ Քայլել չեզոք սեռի բայ է և ոչ մի դեպքում չի կարող կրավորական սեռի իմաստ արտահայտել. շարժվել և՛ կրավորական սեռի իմաստն ունի, և՛ չեզոք. նա համանուն ձև է այդ երկու քերականական կարգերի համար։ Նույնն է նաև չեզոք ու ներգործական սեռերի հակադրության պատկերը։ Այստեղ էլ՝ –աճալ վերջավորությունը կարելի է դիտել որպես չեզոք սեռի ձև, և այդ վերջավորություններով փոքրաթիվ ներգործական բայերի առկայությունը չի փոխում վիճակը։ Ըստ այսմ, չեզոք սեռը ձևաբանորեն նշույթավորված է լծորդավոր հիմքակազմիչով (–աճալ) –ալ խոնարհման տիպով թե՛ ըստ կազմության և թե՛ ըստ խոնարհման (անց. կատարյալի –ա, –ար, –ավ, –աճ, –աֆ, –ան վերջավորությունները)։ Մինչդեռ –ել վերջավորության մասին նույնը չի կարելի ասել. գրել ներգործական է, վազել՝ չեզոք, ճայել և՛ ներգործական է, և՛ չեզոք, այստեղ էլ, ուրեմն, ունենք համանուն բայաձևեր տարբեր սեռերի համար։ Այս համանունությունները հետևանք

են այն բանի, որ բոլոր սեռերը իրենց յուրահատուկ ձևաբանական արտահայտությունը չունեն. իբրև ընդհանուր երևույթ, ներգործական սեռն իրեն հատուկ ձևը չունի, որը տարբերվեր, ասենք, չեզոքից: Չեզոք սեռը ունի իր ձևը որոշ թվով բայերի համար (Ա խոնարհում), բայց չունի մյուսների համար (ներգործաձև և կրավորաձև բայեր): Այս է պատճառը, որ -ց- և -վ- ածանցները, բացի իրենց բուն դերից, ստացել են նաև մի այլ, ավելի ընդհանուր դեր՝ ոչ անցողականներից կազմել անցողական (վազել—վազեցնել), կամ անցողականներից՝ ոչ անցողական (նկարել—նկարվել, կարդացնել—կարդացվել): Այս բոլորը նկատի ունենալով, կարելի է ընդհանուր ձևով որոշել սեռային հակադրությունների չեզոքացման հետևյալ դեպքերը:

1. Ներգործական և չեզոք սեռերի ձևաբանական հակադրությունը չեզոքանում է Ե խոնարհման մեջ:

2. Ներգործական և պատճառական սեռերի հակադրությունը չեզոքանում է -ց- սեռածանցով կազմված այնպիսի ձևերում, որոնց հիմույթը չեզոք սեռի բայ է:

3. Չեզոք և կրավորական սեռերի հակադրությունը չեզոքանում է -վ- սեռածանցով կազմված կրավորաձև բայերի մեջ:

4. Պատճառական սեռի իմաստը չեզոքանում է Ա խոնարհման ներգործական բայերի և դրանցից կազմված պատճառականների կրավորականի ձևում, ըստ որում երկուսի կրավորական ձևն էլ նույնն է (հմմտ. կարդալ—կարդաց-վ-ել, կարդաց-ն-ել, կարդաց-վ-ել): Այս նույնացման պատճառն այն է, որ ա խոնարհման ներգործական բայերի կրավորականը կազմվում է անցյալի հիմքից, որը նույնական է պատճառականի բացարձակ հիմքի հետ:

5. Անդրադարձ, փոխադարձ, կրավորական և չեզոք սեռերի հակադրությունը չեզոքանում է -վ- սեռածանցով կազմված բայերում:

Այս բոլոր չեզոքացումները վերաբերում են միայն ձևաբանական մակարդակին, որովհետև այստեղ ձևույթների նույնության հետևանքով առաջանում է բառաձևերի համանունություն: Դա, հետևաբար, ձևույթների հակադրության չեզոքացում է. այսպես՝ պատճառական և ներգործական սեռերի համար ունենք -ց- և զրո ձևույթները. խմել–խմեցնել և նման բայերի սեռային հակադրությունն էլ, ուրեմն, այդ ձևույթներով կազմված բառաձևերի հակադրությունն է: Այս դեպքում ունենք երկու անցողական բայեր, որոնցից մեկը՝ -ց- ձևույթով, մյուսը՝ զրո: Տրամեցնել, տխրեցնել

ևն բայերի այդպիսի հակադրություն չունենք, որովհետև չկա դրանց անցողական սեռի գրո վերջավորությամբ ձև։ Այդպես է նաև չեզոքացման մյուս դեպքերի համար։ Իբրև բառաձևերի համանունություն, այդ չեզոքացումները վերանում են շարահյուսական մակարդակում։

3. ՀԻՄՔԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենի խոնարհման համակարգին նվիրված ուսումնասիրությունների մեջ ընդունված տեսակետն այն է, որ բայական ձևերն ունեն երկու հիմք՝ առաջին և երկրորդ կամ ներկայի և անցյալի կամ անորոշի և կատարյալի. այս անվանումներից յուրաքանչյուրը պայմանական է, ուստի և՝ առանձին քննության առարկա չդարձնելով, կգործածենք առայժմ աճկատարի և կատարյալի հիմքեր անվանումները՝ նույնպիսի պայմանականությամբ։ Երկու հիմքերի տարբերակումը պայմանավորված է բոլոր բայաձևերի մեջ անփոփոխ կերպով հանդես եկող բայական բազադրիչների առանձնացումով. այսպես՝ կարդալ, կարդում, կարդա, կարդամ բայաձևերում անփոփոխ կերպով ունենք կարդ– բազադրիչը, իսկ կարդացի, կարդացող, կարդացած ձևերում՝ կարդաց–, հետևաբար՝ կարդալ բայն ունի երկու հիմք՝ կարդ– և կարդաց–։ Առերևույթ ճիշտ թվացող այս սկզբունքը, թեև ընդհանուր ճանաչման է արժանացել, բայց չի արդարանում ժամանակակից հայերենի բայաձևերի ձևաբանական վերլուծությամբ։ Բանն այն է, որ մեր լեզվում որոշ բայաձևեր կազմվում են անորոշ դերբայից, ինչպես՝ կարդալ–իս, կարդալ–ու, կարդալ–իմ, այլև ժողովրդական խոսակցական՝ կարդալ–են, իսկ այս նշանակում է, թե ձևակազմության մեջ մենք ունենք երկուսից ավելի հիմք։ Բայահիմքերի ոչ ճիշտ տարբերակումն ու որոշումը ավանդական բնույթ է կրում և գալիս է Մ. Աբեղյանից։ Ինչպես իր վաղ շրջանի աշխատություններում, այնպես էլ 1931 թ. հրատարակած «Հայոց լեզվի տեսություն» մեծարժեք մենագրության մեջ, որ դարագլուխ կազմող գործ է աշխարհաբարի ուսումնասիրության բնագավառում, Մ. Աբեղյանը գտնում է, որ «ինչպես գրաբարում, նույնպես և աշխարհաբարում խոնարհման ձևերը կազմվում են երկու բնի վրա՝ ներկայի և կատարյալի բներ։ Ներկայի բնին պատկանում են՝ ըղձական ներկա ու անցյալ և արգելական, իսկ կատարյալի բնին՝ սահմ.

անցյալ կատարյալ և հրամայական»[1] Վերը մենք ասացինք, որ Մ. Աբեղյանն ստեղծեց աշխարհաբարի կառուցվածքին համապատասխանող քերականական սխեմաներ. բայահիմքերի (իր անվանումով՝ բների) այս բնորոշումը կարծես թե հակասում է դրան, և առաջին հայացքից թվում է, թե նա այս դեպքում անհետևողականություն ցուցաբերելով՝ պարզապես որդեգրել է գրաբարյան սխեման: Բայց իրականում այդպես չէ: Մ. Աբեղյանը առաջնորդվում էր որոշակի տեսությամբ և, այդ տեսության դիրքերից ելնելով, դերբայները բայ չէր համարում, այլ հատկացնում էր տարբեր խոսքի մասերի, դրան համապատասխան էլ, դերբայների կազմությունը նրա համար բայերի ձևակազմության մեջ չէր մտնում, այլ ընդհանրապես բառակազմության մեջ: Այդպիսով, բայի հիմքերի բնորոշման համար մնում էին բուն բայական ձևերը, կամ այլ կերպ՝ պարզ ձևերը, իսկ դրանց մեջ իրոք որ կարելի է գտնել միայն երկու հիմք կամ բուն՝ ներկայի և կատարյալի (կամ անցյալի): Ինչպես տեսնում ենք, Մ. Աբեղյանի մոտեցումը միանգամայն տրամաբանական էր, հետևողական և իր տեսության համաձայն՝ լիովին պատճառաբանված: Նրա հաջորդները, հրաժարվելով այդ տեսությունից, ճիշտ կերպով դերբայները համարեցին բայական ձևեր (ոչ դիմավոր) և դրանով իսկ վերափոխեցին բայաձևերի սխեման, վերջինիս մեջ մտցնելով նաև դերբայների կազմությունը[2], բայց մեխանիկորեն ընդունեցին հիմքերի այն տարբերակումը, որ համապատասխանում էր Մ. Աբեղյանի տեսությանը: Հետևանքը, բնականաբար, այն եղավ, որ ստացվեց մի անհետևողական ու ոչ տրամաբանական սխեմա, որը չի ներկայացնում մեր լեզվի բայի ձևաբանական կառուցվածքը: Ցավալի է, որ Ա. Աբրահամյանի հիշյալ աշխատության մեջ էլ կրկնվում է այդ նույնը, բայց մանվածապատությամբ. «Ժամանակակից հայերենի բայական ձևերի կազմության մեջ,— գրում է նա,— համապատասխան ձևույթների կցումով ամբողջական ձևեր կազմող ընդհանուր մասի բնույթի ու կազմության հաշվառումով կարելի է ընդունել երկու հիմք՝ ա) անորոշ դերբայի (կամ ներկայի), բ) անցյալ կատարյալի»[3]: Այս հարցում յուրահատուկ դիրք է

---

1 Պրոֆ. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 340:

2 Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954, էջ 291, Հ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 236 և այլն:

3 Ա. Ա. Աբրահամյան, Անդ., էջ 327:

գրավում պրոֆ. Գ. Սևակը, որ իր «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ առհասարակ բայահիմքերի մասին ոչինչ չի խոսում և յուրաքանչյուր դերբայի կամ եղանակային ձևի կազմությունը բացատրում է առանձին, ինչպես, օրինակ, «Իս ածանցը կցվում է անորոշ դերբայի վերջից, մինչդեռ -ում ածանցը դրվում է անորոշի ել և ալ ածանցների տեղը»[1]: Այսպես և՝ մյուս բայաձևերը:

Քննելով ժամանակակից հայերենի բայաձևերը, մենք գտնում ենք, որ պետք է վերանայել բայահիմքերի հիշյալ տեսությունը: Բայահիմք ասելով մենք հասկանում ենք բայի այն մասը, որից՝ վերջավորությունների հավելումով, ստացվում են զանազան ձևեր, այլ կերպ ասած՝ բայաձևերի վերջավորություններից առաջ հանդես եկող մասը բայահիմք է, օրինակ՝ գտ–նել, գտն–ում, գտն–ող, գտն–եմ բայաձևերի մեջ վերջավորություններից առաջ ունենք բոլոր այդ ձևերի համար ընդհանուր գտն– մասը, և դա էլ հենց մի բայահիմք է: Այդ սահմանումից ելնելով, բերենք կարդալ բայի հնարավոր դերբայական ձևերն ու եղանակային ձևերից առաջին (հրամայականի համար երկրորդ) դեմքի ձևը.

կարդալ, կարդ-ում, կարդ-ա, կարդ-ամ, կարդ-այի, կարդաց-ի, կարդաց-ել, կարդաց-ած, կարդաց-ող, կարդաց-ք, կարդալ-ու, կարդալ-իս, կարդա-լիք, (կարդալ-են):

Այս ձևերի համադրությունից պարզ կերպով երևում է, որ մենք ունենք երեք բայահիմք.

1) **կարդ–**, որից կազմվում են անորոշ, պնակատար և ժխտական դերբայները, ըղձականի ներկան ու անցյալը, հրամայականի եզակին.

2) **կարդաց-**, որից կազմվում են ենթակայական, հարակատար, վաղակատար դերբայները, անցյալ կատարյալը և հրամայականի հոգնակին:

3) **կարդալ–**, որից կազմվում են հետևյալ դերբայները՝ ապառնի, անկատարի ձևերից մեկը, ապառնիի երկրորդ ձևը և «ընթացակցանը»[2]:

---

1 Գ ու ր գ է ն Ս և ա կ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 296:

2 Պայմանականորեն առայժմ դերբայների գործածվող անվանումներն ենք բերում. ստորև կանդրադառնանք այդ անվանումներին:

Այս երեք կարգի հիմքերը մենք կարող ենք գտնել նաև բոլոր մյուս բայատիպարներից կազմվող բայաձևերում, թեև ձևակազմության որոշ չափով տարբեր ոլորաններով, ինչպես՝

1. *գր-ել- -ում, -իր, -ի, -եմ, -եի, -ող, -ած, -ել (հրկար)*
   գրվ-ել,-ու, -իր, -ի, -եմ, -եի, -ող, -ած, -ել
   վերցն-ել, -ում, -ի, -եմ, -եի, -ող
   գտն-ել, -ում, -ի, -եմ, -եի, -ող
   կարտ-ել, -ում, -իր, -ի, -եմ, -եի, -ող, -ած, -ել
   մոտենա-ալ, -ում, -ա, -ամ, -այի
   հեռան-ալ, -ում, -ա, -ամ, -այի
2. *գրեց-ի, -եք*
   գրվեց-ի, -եք
   վերցր-ի, -ու, -եք, -ած, -ել
   գտ-ա, -իր, -եք, -ած, -ել
   կարեց-ի, -եք
   մոտեց-ա, -իր, -եք, -ող, -ած, -ել
   հեռաց-ա, -իր, -եք, -ող, -ած, -ել
3. *գրել-ու, -իս, -եք, (-են)*
   գրվել-ու, -իս, -իք, (-են)
   վերցնել-ու, -իս, -իք, (-են)
   գտնել-ու, -իս, -իք, (-են)
   կարտել-ու, -իս, -իք, (-են)
   մոտենալ-ու, -իս, -իք, (-են)
   հեռանալ-ու, -իս, -իք, (-են)

Ինչպես տեսնում ենք, բոլոր կարգի բայերն էլ ունեն երեքական հիմք. այդ հիմքերից առաջին երկուսը կկոչենք կերպային հատկանիշով՝ **անկատարի բայահիմք** *(1) և* **կատարյալի բայահիմք** *(2), իսկ երրորդը՝* **դերբայական բայահիմք**, *համաձայն այն բանի, որ և՛ այդ բայահիմքն արդեն մի դերբայական ձև է (հետևաբար՝ հիմույթ է), և՛ նրանից կազմվող բայաձևերը դերբայներ են: Այն, որ երրորդ (դերբայական) բայահիմքը մի որոշ բայաձև է (անորոշ դերբայ), չի կարող որևէ նշանակություն ունենալ, որովհետև լեզուների մեջ շատ սովորական երևույթ է որևէ քերականական ձևի որպես հիմք հանդես գալն ուրիշ ձևերի համար. հենց ժամանակակից հայերենի հոլովման համակարգում էլ այդ երևույթին ունենք. օրինակ՝* **ձոր**, **ձոջ** *սեռական-տրական հոլովն են ձայր, ձույր բառերի, բայց և՛ բացառական ու գործիական հոլովների հիմքն են:*

Թե ո՛ր բայահիմքից ի՛նչ բայաձևեր են կազմվում ո՛ր տիպի բայերի համար, կքննենք ստորև։ Այստեղ անհրաժեշտ է պարզել բայահիմքերի կազմությունը։

Դերբայական բայահիմքը, բոլոր բայերի համար անխտիր, կազմվում է **-ալ** *կամ* **-ել** *վերջավորությամբ. -ել վերջավորությունն ստանում են բոլոր կերպային-բառակազմական և սեռային քերականական ածանցներով բաղադրված բայերը, և, չ հիմքակազմ ձևույթներով բայերը և այն պարզ բայերը, որոնք բնաձայնական-նմանաձայնական կամ վերլուծության-դառնալիության բայեր չեն։ Թեև -ել վերջավորությամբ ունենք այս վերջին երկու կարգի բայերից էլ, ինչպես՝ վայել, ավաղել, կարկաչել, դեղնել, ապշել, կարմրել և այլն, բայց դա չի խախտում ընդհանուր օրինաչափությունը, հետևյալ պատճառով. ա) բնաձայնական-նմանաձայնական այն բայերը, որոնք -ել վերջավորություն ունեն, կամ ավանդական (հնից եկող) բայեր են, կամ բարբառային, ուստի և պատրաստի ձևեր են, տարբեր աղբյուրներից ստացված, և ոչ թե մեր արդի լեզվին հատուկ կազմություններ. բ) թեև -ել վերջավորությամբ վերածման բայեր ունենք, բայց դրանք բոլորն էլ ունեն կամ կարող են ունենալ -անալ ձևով զուգահեռ, ըստ որում դրանց միջև որոշակի իմաստային տարբերություն կա. կարմրել նշանակում է «կարմիր գույն ստանալ, շիկնել», իսկ կարմրանալ՝ «կարմիր դառնալ», ապշել, «ապուշության վիճակի մեջ ընկնել», իսկ՝ ապշանալ «ապուշ դառնալ» և այլն. առաջինները նշանակում են որևէ հատկանիշ ձեռք բերել՝ ստանալ, իսկ երկրորդները՝ որևէ հատկանիշի վերածվել՝ փոխարկվել, որևէ բան դառնալ, այլ կերպ ասած՝ առաջինները վերածության-ստացողական բայեր են, երկրորդները՝ վերածության-դառնալիության բայեր։*

Դառնալ, բառնալ, բանալ բայերը թեև ունեն և հիմքակազմ ձևույթը, բայց մեր լեզվի մեջ հնից ժառանգվել են -ալ վերջավորությամբ, ըստ որում բառնալ և բանալ այժմ փոխարինվել են բեռնել (և բարձել) և բացել ձևերով, որոնք և՛ ավելի կենսունակ են, և՛ մեր արդի գրական լեզվի բայակազմության համակարգին հարազատ։

Մյուս՝ **-ալ** *վերջավորությունն ստանում են* **-են, -ան** *ձևույթներով (վերածության-դառնալիության) բայերը և բնաձայնական-նմանաձայնական[1] պարզ կամ կրկնավոր բայերը, ինչպես՝* **մեծա-**

---

1 *Այս ընդհանուր անվանումով կոչում ենք նաև բացականչության-ձայնարկության բայերը։*

նալ, լավանալ, տաքանալ, զնգալ, վշշալ, թշշալ, կչկչալ, ֆչփչալ և այլն։ Այս վերջավորությունն ստանում են նաև -կլտ կերպայինբառակազմական ածանցն ունեցող բոցկլտալ, կայծկլտալ և -կտածանցով փայլկտալ բայերը։

Մի խումբ պարզ բայեր անորոշ դերբայում ունեն -ալ վերջավորությունը, թեև բնաձայնական բայեր չեն, ինչպես՝ կաւղալ, խաղալ, դողալ, տեճչալ, աղալ և այլն։ Այդ բոլոր բայերը ավանդաբար ժառանգված (մի քանիսը բարբառներից մուտք գործած) բայեր են։ Մեր լեզվի արդի բայակազմության ու հիմքակազմության համակարգը որևէ օրինաչափություն չի դրսևորում այդ ձևերի կազմության մեջ. չկա որևէ կանոն, որը ասեր, թե խաղ, տեճչ, դող և նման բառերից անորոշ դերբայը պետք է կազմենք -ալ վերջավորությամբ։ Այդպես էլ -ան- ձևույթով բայերից մի մասը վերածության-դառնալիության իմաստ չի արտահայտում, ինչպես՝ մոռանալ, վերանալ («ոչնչանալ» իմաստով), գոլանալ, զլանալ, ցանկանալ և այլն։ Սրանք նույնպես հնավանդ բայեր են։ Վերջապես, -են ձևույթով բայերը, որոնք շատ քիչ են, բոլորն անխտիր գրաբարյան կազմություններ են։ Քանի որ այս երեք կարգի բայերի անորոշ դերբայի (դերբայական հիմքի) կազմության համար որևէ կանոն չունենք, ուստի և թե՛ ուսուցման և թե՛ կառուցվածքային վերլուծության ժամանակ այդ բոլոր բայերը պետք է պարզապես թվարկել։

Այսպիսով, դերբայական հիմքի հնարավոր ձևատիպարներն են.

1. Բացարձակ հիմք + ել (գր-ել, գրվ-ել, կտրտ-ել)
2. Բացարձակ հիմք + ն + ել (կարդաց-ն-ել, տես-ն-ել)
3. Բացարձակ հիմք + չ + ել (թո-չ-ել)
4. Բացարձակ հիմք + ալ (կարդ-ալ, թշշ-ալ)
5. Բացարձակ հիմք + ան + ալ (մեծ-ան-ալ, մոռ-ան-ալ)
6. Բացարձակ հիմք + են + ալ (մոտ-են-ալ, կամ-են-ալ)

Այս վեց ձևատիպարներն էլ կարող ենք վերածել երկուսի և ներկայացնել ավելի պարզ ձևով, հետևյալ կերպ (Բ—բացարձակ հիմք, վ—վերջավորություն (-ել, -ալ), ա—սոսկածանց). 1) Բ-վ, 2) Բ-ա-վ։

Քանի որ դերբայական հիմքը միշտ էլ ունենում է -ալ կամ -ել վերջավորությունը, ապա մենք այն կկոչենք վերջավոր բայահիմք։

Անկատարի և կատարյալի բայահիմքերը կարող են լինել երկու տեսակ՝ վերջավոր և անվերջավոր[1]. վերջավոր են նրանք, որոնք ունեն տվյալ բայահիմքին հատուկ վերջավորություն (հիմքակազմ ձևորդ), ինչպես՝ տեսն-(ել), գրեց-(ի) և այլն. անվերջավոր են նրանք, որոնք որևէ հատուկ հիմքային վերջավորություն (հիմքակազմ ձևորդ) չունեն կամ այլ կերպ՝ ունեն բացասական (զրո) վերջավորություն, ինչպես՝ կարդ-(ալ), գր-(ել) և այլն։ Անվերջավոր բայահիմքերի համար մենք ընդունում ենք զրո վերջավորությունը, որովհետև մեր լեզվի արդի կառուցվածքում իբրև ընդհանուր օրինաչափություն բայի բացարձակ հիմքը որոշակիորեն տարբերվում է բայահիմքերից՝ հիմքային վերջավորություններով. այսպես՝ վերածության-դառնալիության բայերի բայահիմքերը տարբերվում են բացարձակ հիմքերից –ան– և –ացո– հիմքային վերջավորություններով, –են–, –ալ ձևույթներով կազմված բայերինը՝ –են– և –եց– վերջավորություններով, –ալ և –ել վերջավորությամբ պարզ բայերինը և բոլոր կրավորաձև բայերինը՝ միայն կատարյալի բայահիմքում –ացո և –եց վերջավորություններով, ն, չ ձևույթներով բայերինը՝ միայն անկատարի հիմքում՝ հենց այդ ձևույթներով։ Յուրահատուկ հիմքային վերջավորությունից, ավելի ճիշտ՝ մասնիկից զուրկ են միայն –ալ և –ել վերջավորությամբ պարզ բայերի անկատարի բայահիմքը և ն, չ ձևույթներով բայերի կատարյալի բայահիմքը։ Եթե այս բոլորի հետ հիշենք և այն, որ դերբայական բայահիմքը նույնպես վերջավոր է, ապա պարզ կլինի, որ անվերջավոր բայահիմքերի համար էլ պետք է ընդունել զրո վերջավորությունը։ Դրան պետք է ավելացնել նաև հետևյալը. բացարձակ հիմքը, բայահիմքը և բայաձևը միմյանցից բաղադրվող ձևեր են. ամեն մի բայաձև, նույնիսկ այն դեպքում, երբ հատուկ մասնիկ չունի, ավելի մեծ է, քան իր հիմքը (հմմտ. օրինակ՝ կարդամ և իր հիմքը՝ կարդ-), և ամեն մի բայահիմք ավելի մեծ է, քանի իր բացարձակ հիմքը (հմմտ. օրինակ՝ վերցն- և վերց-)։

Անկատարի անվերջավոր բայահիմք ունեն –ալ կամ –ել վերջավորությամբ պարզ բայերը և բոլոր կրավորաձև բայերը, ինչպես՝ կարդ-(ալ), գր-(ել), գրվ-(ել), կարդացվ-(ել) և այլն։ Այս բայահիմքը ձևապես նույնանում է բացարձակ հիմքի հետ, քանի որում ունի զրո հիմքային վերջավորություն։

---

1 **Անվերջավոր** անվանումը որոշ չափով պայմանական է. թերևս ավելի ճիշտ կլիներ կոչել անմասնիկ, բայց զուգահեռությունն ու հակադրությունը պահպանելու համար գերադասեցինք անվերջավոր-ը։

Անկատարի վերջավոր բայահիմք ունեն պատճառական բայերը և -ան-, -են-, -ն-, -չ- ձևույթներով բայերը. պատճառական բայերի ներկայի բայահիմքը կազմվում է բացարձակ հիմքին ավելացնելով -ն-, վերածութ յան-դառնալութ յան բայերինը՝ -ան-, մյուսները՝ -են-, և կամ չ: Քանի որ -են-, -ն-, չ- ձևույթներով նոր բայեր չեն կազմվում, իսկ եղածներն էլ սակավաթիվ բայեր են, ապա՝ դրանք կարող են միայն թվարկվել, առանց որևէ կանոնի տակ դրվելու:

Շարադրվածի համաձայն անկատարի բայահիմքը կարող է ունենալ երկու ձևատիպար. 1) բ— # (անվերջավոր), 2) բ—վ (վերջավոր):

Կատարյալի անվերջավոր բայահիմք ունեն -ն- կամ -չ- հիմքակազմ ձևույթներով -ել վերջավորութ յամբ բայերը, ինչպես՝ տեսնել-տես-, թռչել-թռ- և այլն, ինչպես և՝ կրկնահիմք՝ ուտել-կեր-(ա), գալ-եկ-(ա), լինել-եղ-(ա) բայերը: Մի շարք բայեր անցյալ կատարյալում ունեն միաժամանակ և՛ անվերջավոր, և՛ վերջավոր բայահիմք, ինչպես՝ թողնել-թող-(ի) և թող-(եցի), բերել-բեր-(ի) և բեր-(եցի) և այլն: Մեր լեզվի արդի կառուցվածքին համապատասխանում է վերջավոր ձևը, ըստ որում անվերջավոր ձևն էլ եզակի երրորդ դեմքում փոխարինվում է վերջավորով, ինչպես՝ բերի, բայց՝ բերեց: Տալ բայը, որ նույնպես այդ երկու բայահիմքերն ունի, ստանում է տվ-(ի) և տվեց-(ի) ձևերը (պատմականորեն՝ տու>տվ):

Կատարյալի վերջավոր բայահիմք ունեն բոլոր մյուս կարգի բայերը (-ալ, -ել պարզ բայեր, կրավորաձև բայեր, պատճառական բայեր, -ան, -են ձևույթներով բայեր, կերպածանցավոր բայեր), ինչպես՝ գր-ել—գրեց-ի, կարդալ—կարդաց-ի, գրվել-գրվեց-, մոտենալ—մոտեց-ա, մոռանալ—մոռաց-ա և այլն:

Կատարյալի վերջավոր բայահիմքերը կազմվում են բացարձակ հիմքին ավելացնելով -ացլ, -եց կամ ր. -աց ստանում են -ալ և -ա-ճալ կազմութ յամբ բայերը, -եց ստանում են -ել, -ենալ կազմութ յամբ բայերը և բոլոր կրավորաձև բայերը, ինչպես՝ կարդ-ալ, կարդաց-ի, մոռանալ—մոռաց-ա, բայց՝ գրել—գրեց-ի, մոտենալ—մոտեց-ա, գրվ-ել, գրվեց-ի և այլն: Կան մի խումբ բայեր, որոնք ծագումաբանորեն պատկանում են ն, չ մասնիկներով կազմութ յամբ բայերին, բայց ժամանակակից հայերենում նրանց կազմութ յունը մթագնված է, այդ մասնիկները միացել են բացարձակ հիմքին, որպես անբաժանելի տարր, և հետևաբար այդ բայերն էլ

անցել են պարզ բայերի շարքը: Այդ բայերն են. երկնչել, մարտնչել, մեղանչել, ճաճանչել, կառչել, փախչել, զրոսնել, խրտնել, հառնել, ոստնել, զարթնել, այլն՝ կալնել (բարբառային): Այդպես նաև -ան- ձևույթով բեկանել, ուսանել, կլանել, օծանել (որ, սակայն, խոստ հնացած է և փոխարինվում է օծել բայով), այլն՝ ուսուցանել, մատուցանել, ծանուցանել բայերը, որոնք նույնպես հնատիպ են և փոխարինվում են ուսուցել, մատուցել, ծանուցել ձևերով: Ասել բայից ունենք ասաց-, թեև գործածվում է նաև համաբանական եղանակով ստացված ասեց- բայահիմքը: Դառնալ բայն ունի անվերջավոր դարձ- բայահիմքը, որով անցնում է կրկնահիմք բայերի շարքը (դառնալ և դարձ-ա), կենալ բայը՝ կաց-:

Կատարյալի բայահիմքում r ստանում են պատճառական կազմութիյամբ բայերը (սովորեց-ն-ել, սովորեց-ր-ի), ինչպես և՝ վերցնել, հարցնել, լցնել բայերը: Այս կարգին են պատկանում նաև անել, դնել, տալ, տանել բայերը, որոնց հրամայականը կազմվում է ար-, դիր-, տուր-, տար- բայահիմքերից. անցյալ կատարյալում այդ բայերից երեքը կանոնավոր արեցի, դրեցի, տվեցի ձևերին զուգահեռ ունեն նաև արի, դրի, տվի անհանձնարարելի ձևերը, որով դառնում են զուգահիմք բայեր, իսկ տալ բայն ունի միայն տար- բայահիմքից կազմվող ձևերը: Պատճառական բայերի կատարյալի r-ով բայահիմքից կազմվում է եզակի 3-րդ դեմքի լծորդավոր հիմքը. օր. սովորեցր-եց, որով և ունենում ենք կատարյալի առաջնային (սովորեցր) և երկրորդային (սովորեցր-եց) հիմքերը:

Այն բայահիմքերը, որոնք կազմվում են -ացն, -եցն վերջավորութիյուններով, կոչվում են ցոյական. համապատասխանաբար -ր-ով կազմվող հիմքերն էլ կկոչենք րեական: Ուրեմն, կատարյալի վերջավոր բայահիմքերը կարող են լինել երկու տեսակ՝ ցոյական և րեական:

Շարադրվածի համաձայն կատարյալի բայահիմքը կարող է ունենալ հետևյալ ձևատիպարները. 1) բ— #, 2) բ—վ, այսինքն՝ մի դեպքում բացարձակ հիմք—#, իսկ մյուս դեպքում՝ բացարձակ հիմք + ացն//եցն կամ ր:

Եվ այսպես, ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում ունենք երեք բայահիմք. դերբայական,, անկատարի և կատարյալի, որոնցից առաջինը միայն վերջավոր է, իսկ մյուսները՝ վերջավոր կամ անվերջավոր:

Մինչև այժմ մենք խոսեցինք բայահիմքերի ու նրանց կազմութիյան մասին. այժմ անդրադառնանք հիմքակազմ ձևույթներին:

Երեք բայահիմքերի մասին խոսելիս մենք ասացինք, որ դրանք կազմվում են -ել-, -եց-, -աց-, -ր- վերջավորություններով ու -ան, -են, -ն, -չ ձևույթներով, բայց այդ բնորոշումները պայմանական են և, նույնիսկ, ոչ ճիշտ: Բանն այն է, որ հիշյալ «վերջավորություններից» ու «ձևույթներից» ոչ մեկի մեջ էլ ե կամ ա ձայնավորը վերջավորությանը չի պատկանում: Այսպես, անորոշ դերբայի վերջավորությունն ենք համարել -ալ, -ել, բայց դրանց մեջ իսկապես վերջավորությունն է -լ-ն, իսկ ա, ե ձայնավորները միայն բայահիմքը և բայածևի վերջավորությունն իրար կապող տարր են, այսինքն՝ ներույթներ: Հայ քերականագիտության մեջ այդ ձայնավորները կոչվում են խոնարհիչներ կամ լծորդներ: Իրարից տարբերելու համար մենք գործածելու ենք խոնարհիչ անվանումը այն ներույթների համար, որոնք բայահիմքը կապում են բայածևի վերջավորությանը, ինչպես, օրինակ՝ կարդ-ա-մ, կարդ-ա-լ, գր-ե-մ, գր-ե-լ և այլն: Մյուս «վերջավորությունների» մեջ (-եց, -ացի, -են, -ան) ե և ա ձայնավորները իրար են միացնում բացարձակ հիմքը և ավյալ բայահիմքի վերջավորությունը, օրինակ՝ մոռ-ա-ն, մոռ-ե-ն, մոռ-ա-ց, մոռ-ե-ց, կարդ-ա-ց, գր-ե-ց և այլն. այս ներույթները կոչում ենք լծորդներ. ուրեմն, լծորդն այն ձայնավորն է, որ բացարձակ հիմքը միացնում է բայահիմքին: Եթե որևէ բայածև, որ խոնարհիչ ունի, կարող է հանդես գալ որպես բայահիմք, ապա այդ բայահիմքի մեջ խոնարհիչը վերածվում է լծորդի. այսպես՝ կարդ-ա-լ, գր-ե-լ անորոշ դերբայների մեջ ա, ե ձայնավորները խոնարհիչներ են, իսկ կարդալ-իս, գրել-իս և այլ ձևերի կարդալ-, գրել- բայահիմքերի մեջ՝ լծորդ: Սակայն այս փոխանցումը որևէ կարևորություն չունի ձևաբանական վերլուծության համար, այդ պատճառով էլ անորոշ դերբայի ա, ե ձայնավորները միշտ էլ խոնարհիչ կկոչենք:

Եթե այժմ աչքի անցկացնենք ներկայի և անցյալի վերջավոր հիմքերի ձևորդները, կտեսնենք, որ նրանց մի մասը բացարձակ հիմքին է միանում առանց լծորդի, մի մասը՝ միայն լծորդով, մի մասն էլ՝ որոշ դեպքերում լծորդով, որոշ դեպքերում՝ առանց լծորդի, այսպես՝ անցյալի բայահիմքի -ց վերջավորությունը չի կարող հանդես գալ առանց լծորդի[1]*, պատճառականի ներկայի բայահիմքի*

[1] *Միայն լալ և բանալ բայերի անցյալի բայահիմքում է, որ հիմքակազմ ց ձևույթը միանում է բացարձակ հիմքին (լա-, բա-) առանց լծորդի, բայց այդ էլ այն պատճառով, որ բացարձակ հիմքը վերջավորվում է ձայնավորով: Այդ բայահիմքերն էլ, սակայն, գործածությունից դուրս են գալիս, քան որում ավելի գործածական են լացել կամ լաց լինել և բացել կամ բաց անել:*

ե և անցյալի բայահիմքի r վերջավորությունները միշտ առանց լծորդի են միանում բացարձակ հիմքին, իսկ սովորական բայերի ներկայի բայահիմքի ե-ն կարող է լծորդ պահանջել (օր. մոտ-ե-նալ, մոռ-ա-ն-ալ) կամ՝ չպահանջել (օր. տես-ն-ել)։ Այս բանից ելնելով, հիմքակազմ ձևույթները կբաժանենք երեք կարգի. լծորդավոր, անլծորդ և երկբնույթ, և կորոշենք, թե որը ինչպիսին է։

Վերլուծությունը հեշտացնելու համար, այն բոլոր ձևորդները, որոնք վերը կոչել ենք հիմքակազմ ձևույթներ կամ վերջավորություններ, լծորդներն անջատելուց հետո, մի բառով կոչենք **հիմքակազմիչներ**: Ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում հանդես եկող հիմքակազմիչներն են՝ ե, չ, ց, r. առաջին երկուսը կարող են կազմել միայն ներկայի, իսկ երրորդը և չորրորդը՝ միայն անցյալի բայահիմք. հիմքակազմիչ կարելի է համարել նաև անորոշի լ վերջավորությունը՝ դերբայական բայահիմքի համար, բայց դա քննության չենք առնի այստեղ, այլ կթողնենք ձևակազմության։ Այդ հիմքակազմիչներից անլծորդ են չ և r, միշտ լծորդավոր է ց-ն, իսկ երբեմն լծորդավոր և երբեմն անլծորդ է ե: Լծորդավոր ց հիմքակազմիչը պարզ բայերի և կրավորաձևերի անցյալի բայահիմքում իբրև լծորդ ստանում է նրանց խոնարհիչը, ինչպես կարդ-ա-լ—կարդ-ա-ց(-ի), իսկ ա խոնարհման ե-ով բայերի մեջ՝ ներկայի բայահիմքի լծորդը, ինչպես՝ մոռ-ա-ե-ալ—մոռ-ա-ց-(ա), մոտ-ե-ե-ալ, մոտ-ե-ց-(ա): Ն հիմքակազմիչը անլծորդ է ե խոնարհման և պատճառական բայերի մեջ (օր. տես-ն-ել, կարդ-աց-ն-ել), լծորդավոր է ա խոնարհման բայերի մեջ (օր. մոտ-ե-ն-ալ, մոռ-ա-ն-ալ). իբրև լծորդ այս բայերի մեջ կարող են հանդես գալ ա և ե ձայնավորները. ե ձայնավորով ունենք հնուց ժառանգած մի խումբ բայեր. այդ լծորդով ներկայի վերջավոր բայահիմքով նոր բայեր չեն կազմվում, ուստի և ժամանակակից հայերենը որևէ կանոն չի տալիս որոշելու համար, թե ո՛ր բայերն ունեն ե լծորդը։ Մյուսը՝ ա լծորդը հանդես է գալիս հնից ժառանգած և հիմքով բայերի մեծագույն մասում, իսկ ժամանակակից բայակազմության մեջ միակն է։ Վերը մենք տեսանք, որ պատճառականի ց ածանցն էլ կարող է հանդես գալ ա, ե ձայնավորների հետ կամ առանց դրանց։ Քանի որ այդ ածանցն էլ մեկ բացարձակ հիմքից մի նոր բացարձակ հիմք է կազմում, ապա այդ ձայնավորներն էլ կհամարենք լծորդներ, ըստ այսմ՝ պատճառականի ց ածանցն էլ կարող է լինել լծորդավոր կամ անլծորդ, մինչդեռ կրավորականի վ ածանցն անլծորդ է։

Այս վերլուծությունները կարող ենք ամփոփել հետևյալ ձևով. ժամանակակից հայերենի անլծորդ հիմքակազմիչներն են չ, ր, լծորդավոր հիմքակազմիչները՝ ց և լ (դերբայականի), երկբնույթ է –և հիմքակազմիչը, ինչպես և՝ պատճառականի ց ածանցը։ Որպես լծորդներ, այլև խոնարհիչներ, ժամանակակից հայերենում կարող են հանդես գալ ա կամ ե ձայնավորները։

Հիշյալ հիմքակազմիչներից անցյալի բայահիմքի ց, ր և անորոշի լ հիմքակազմիչն ընդհանուր ճանաչում են գտել. ինչ վերաբերում է և, չ հիմքակազմիչներին, ապա դրանց մասին եղած տարակարծություններն անհրաժեշտ են դարձնում առանձնապես կանգ առնել դրանց վրա։ Ամենից առաջ պետք է հիշել, որ մեր լեզվի բայական ածանցներն են համարվում ան, են, ն, չ. Աբեղյանը, որ դրանք համարում էր միջածանցներ, իր «Աշխարհաբարի քերականության» մեջ գրում է. «Սոսկ միջածանցները՝ ան, են, ն, չ բայի հիմքի նշանակության վրա ոչ մի նոր երկրորդական, ածանցական գաղափար չեն ավելացնում»[1]։ Նույն ածանցներն ընդունվում են բոլոր հետագա ուսումնասիրություններում, որոնցից նորագույնն է Ա. Աբրահամյանի արդեն հիշված աշխատությունը. այդտեղ կարդում ենք. «Ժամանակակից արևելահայ գրական լեզվում (և ընդհանրապես հայերենում) բաղադրության-քերականական ածանցները մեծ թիվ չեն կազմում։ Դրանք են՝ -ան-, -են-, -ն-, -չ-»[2]։ Վերը կատարած վերլուծությունները ցույց են տալիս, որ պետք է կատարել, այսպես կոչված, ձևույթների նույնացում (идентификация морфем). քանի որ ա, ե ձայնավորները լծորդներ են, և քանի որ ճեռանալ, մոտենալ, կարդացնել, տեսնել բայատիպարների մեջ և ձևույթը հավասարապես միևնույն հիմքակազմ դերն է կատարում, ապա մենք ան, են, ն, այլև՝ ցն կապակցություններով հանդես եկող և ձևույթը դիտում ենք որպես մեկ ձևույթ, այն է՝ ներկայի բայահիմքի հիմքակազմիչ (լծորդավոր կամ անլծորդ)։ Այսպիսով, հիշյալ չորս ածանցների փոխարեն մենք ընդունում ենք երկու հիմքակազմիչ՝ և և չ, որոնց կիրառության պայմանների մասին խոսել ենք արդեն։ Երկրորդ խնդիրն այն է, թե դրանք որևէ ածանցական իմաստ էլ արտահայտո՞ւմ են, թե ոչ։ Վերի մեջբերումից պարզորոշ կերպով երևում է արդեն, որ Մ. Ա-

---

1 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1912, էջ 92։

2 Ա. Ա. Աբրահամյան, Անդ, էջ 214։

բեղյանը որևէ ածանցական իմաստ չի կապում դրանց հետ։ Այլ կարծիքի է սակայն Ա. Աբրահամյանը. նրա կարծիքով այդ ածանցները ունեն բառակազմական և քերականական կրկնակի դեր, որի համաձայն էլ դրանք կոչում է բաղադրության-քերականական ածանցներ. առանձնապես -ան- ածանցի մասին, որ առավել կենսունակն է համարում, գրում է. «ժամանակակից գրական լեզվում շատ կենսունակ է և լայն ընդգրկում ունի -ան- ածանցը՝ ա լծորդության բայերի մեջ։ Այսպիսի ածանցմամբ ժամանակակից գրական հայերենի բայերը ներկայացնում են երեք հիմնական խմբի բայեր՝ ա) վերածության բացարձակ նշանակություն ունեցող բայեր, բ) ընդհանուր, վերացարկված նշանակություն ունեցող բայեր, գ) երկքնույթ՝ վերածության նշանակությունը վերացարկվածի հետ պահպանող բայեր։ Առաջինների և վերջինների մեջ առկա է ածանցի բառակազմական նշանակությունը, որով նա մոտենում է բառակազմական ածանցներին, սակայն ինքնուրույնաբար, առանց բայացնող մասնիկի չի կարող բայեր կազմել։ Իսկ խոր հնությունից եկող վերացարկված նշանակության սակավաթիվ բայերի վրա աշխարհաբարում ավելացել են հատ ու կենտ միավորներ»[1]։ Այստեղ ճիշտ է տվյալ կազմությամբ բայերի իմաստաբանական դասակարգումը, ճիշտ է և այն, որ երկրորդ խմբի բայերը խոր հնությունից են գալիս. մյուսները վերածության-դառնալիության բայեր են, որոնք փոխաբերությամբ ստացել են նաև վերացարկված իմաստներ։ Այս բոլորի եզրակացությունն այն է, որ (ա)ն-ով կազմվում են վերածության-դառնալիության բայեր. բայց դա չի կարող նշանակել, թե դա բառակազմական ածանց է, որովհետև՝ ա) բոլոր բառակազմական, տվյալ դեպքում՝ բայակազմական ածանցներն անփոփոխ կերպով պահպանվում են բայի բացարձակ հիմքում, ինչպես օրինակ՝ կերպածանցները և սեռածանցները, իսկ ն և չ ձևույթները չեն մնում, բ) -անալ տիպի բայերի ն ձևույթը թե՛ ծագումաբանորեն և թե՛ գործառական-ձևաբանական տեսակետից նույնանում է պատճառականի -ն-ի հետ, ուստի և եթե ածանցական իմաստ վերագրելու լինենք, պետք է վերագրենք նախորդող ա-ին, բայց դա էլ ճիշտ չէ, որովհետև մի կողմից ունենք տեսնել, գտնել, բռնկել, դառնալ և նման բայերը, մյուս կողմից՝ բարբառային մոռնալ, վերնալ, թեթևնալ և նման բայերը, որոնք հիմք են տալիս ա և ն ձևույթները լծորդներ համարելու, գ) թեև լծորդավոր

1 Ա. Ա. Աբրահամյան, Անդ, էջ 292։

-ն- հիմքակազմիչով ժամանակակից հայերենում կազմվում են միայն վերածության-դառնալիության բայեր, բայց դա գործառական հատկանիշ է և դրանից չի կարելի հետևցնել, թե -ան-ը վերածության իմաստով բառակազմական ածանց է. այս բանը հաստատելու համար կարելի էր հետևյալ օրինակը բերել. ժամանակակից հայերենում անորոշ դերբայը հոլովվում է միայն ու հոլովումով, որոշ բառեր՝ ի հոլովումով, կամ ոջ հոլովումով և այլն: Դրանց միջև կա գործառական-կիրառական, ավելի ճիշտ՝ բաշխման (դիստրիբուտիվ) հարաբերություն, բայց՝ ոչ իմաստաբանական, մանավանդ՝ բառակազմական: Հարցը շատ ավելի պարզ լուծում կստանա, եթե ընդունենք, որ ժամանակակից հայերենում ն հիմքակազմիչով նոր բայեր կազմվում են միայն երկու եղանակով՝ պատճառականի ց ձևորդի հետ կամ առանց դրան՝ ա լծորդի հետ: Այս վերջին եղանակով կազմված բայահիմքերը ստանում են միայն անորոշի ա խոնարհիչը, որով ինչպես տեսել ենք, այժմ միայն չեզոք սեռի բայեր են կազմվում: Սրան համապատասխան էլ, լծորդավոր ն հիմքակազմիչով այժմ ազատորեն կազմվում է բայերի ձևա-իմաստային յուրահատուկ տիպ, որի ձևաբանական առանձնահատկությունն է անցյալ կատարյալի յուրահատուկ վերջավորություններ ստանալը, որ հատուկ է ն, չ հիմքակազմիչներով բայերին, եթե դրանք չունեն պատճառականի կազմություն. իմաստայինն է այն, որ դրանք չեզոք սեռի վերածության-դառնալիության բայեր են:

Եթե այսպես է ն-ի վերաբերյալ, ապա առավել ևս այդպես է չ-ի նկատմամբ, որ ոչ մի նոր բայ չի կազմում, իսկ ժառանգված հնակազմ բայերն էլ իմաստային տեսակետից որևէ որոշակի կարգ չեն ներկայացնում: Այսպիսով, ընդունելով ներկայի բայահիմքի երկու հիմքակազմիչների գոյությունը չորսի փոխարեն, մենք միանում ենք Մ. Աբեղյանին և գտնում ենք, որ ն և չ ձևույթները աննշանակ են, այսինքն՝ ածանցական իմաստից դուրկ են:

Հիմքակազմության մասին մեր ասածները կարելի է ամփոփել հետևյալ ձևով. ժամանակակից հայերենի բայի ձևաբանական կառուցվածքում ունենք երեք կարգի հիմք. բառահիմք, բացարձակ հիմք և բայահիմք: Բառահիմքը բայի այն մասն է, որից կազմվում է տվյալ բայի բացարձակ հիմքը. բացարձակ հիմքը այն մասն է, որից կազմվում են բայահիմքերը. բայահիմքը այն մասն է, որից կազմվում են բայաձևերը: Բառահիմքը բացարձակ հիմքից տարբերվում է միայն այն բայերի մեջ, որոնք կազմված են կերպածանց-

ներով կամ սեռածանցներով. մյուս բոլոր բայերի մեջ բառահիմքն ու բացարձակ հիմքը նույնանում են, բացառությամբ անկանոն ու կրկնահիմք բայերի: Բացարձակ հիմքը տարբերվում է դերբայական բայահիմքից բոլոր դեպքերում, բուն որում դերբայական բայահիմքը ինքնին արդեն մի տարբերակված բայաձև է (անորոշ դերբայ): Բացարձակ հիմքը ներկայի բայահիմքից տարբերվում է միայն և, չ հիմքակազմիչներով բայերի մեջ. մյուս կարգի բայերում (պարզ, կերպածանցավոր, կրավորական) նույնանում է ներկայի բայահիմքին: Անցյալի բայահիմքից տարբերվում է բոլոր բայերի մեջ, բացի –ել խոնարհման և կամ չ հիմքակազմիչով ոչ պատճառական բայերից: Քանի որ մեր արդի գրական լեզվի համար բացարձակ հիմքի ու բայահիմքի տարբերակումը հանդես է գալիս որպես օրինաչափություն, ապա՝ բոլոր այն դեպքերում, երբ բացարձակ հիմքն ու բայահիմքը ձևով նույնանում են, մենք բայահիմքի համար, ինչպես վերն ասված է, կընդունենք ըրո վերջավորությունը:

Ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում չափազանց մեծ նշանակություն ունեն բայահիմքերը. մեր լեզվի պատմական զարգացման հետևանքներից մեկն այն է, որ տարբեր բայաձևերի մեջ վերջավորությունները նույնացել են[1]: Իսկ դա էլ իր հերթին ավելի կարևոր է դարձրել բայահիմքերի դերը. այսպես՝ –իր վերջավորությունն ունենք սահմանականի անցյալ կատարյալի եզ. երկրորդ դեմքում, հրամայականի եզակիում և ըղձական եղանակի անցյալի ապառնիում (գրեց-իր, գր-իր, գր-ե-իր), այդպես էլ՝ գրե-ի, գրեց-ի և այլն: Այս նույնացումները լեզվի մեջ առաջ են բերել բայաձևերի տարբերակման զանազան միջոցներ, որոնցից մեկն է այդ ձևերի բայահիմքերի տարբերությունը. սրանով էլ պայմանավորված է բայահիմքերի հակադրության օրինաչափ երևույթը ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում: Դերբայական բայահիմքի հակադրությունը մյուս հիմքերին միանգամայն որոշակի է. դա պարզապես տարբերակված բայաձևի (անորոշ դերբայի) և երկու մյուս բայահիմքերի հակադրությունն է, որ արտա-

---

1 Այս նույնացումը կար նաև գրաբարում, բայց այնտեղ կար նաև երկու կարգի ընդհանուր բնույթ կրող հակադրություն. բայահիմքերի և վերջավորությունների: Բայահիմքերի հակադրությունը կերպային (վիճակային) էր՝ անկատար-կատարյալ, իսկ վերջավորություններինը՝ ժամանակային՝ ներկա-անցյալ (համմ. գործ-ե-մ, բայց գործ-եց-ի, գործ-է-ի են): Արդի հայերենի ժամանակային հակադրության արտահայտության միջոցներին կանդրադառնանք ստորև:

հայտվում է լծորդավոր -լ հիմքակազմիչով: Անկատարի և կատարյալի բայահիմքերի հակադրությունը հիմնված է հիմքակազմիչների փոփոխության վրա, որ կարող է արտահայտվել կամ բացասական ու դրական վերջավորությունների, կամ էլ երկու տարբեր դրական վերջավորությունների հակադրությամբ: Բացասական (զրո) և դրական վերջավորությունների հակադրություն ունենք 1) -ալ և -ել կազմությամբ պարզ ու կերպածանցավոր և բոլոր կրավորաձև բայերի բայահիմքերում, որոնց անկատարի բայահիմքն ունի բացասական (զրո) վերջավորություն, իսկ կատարյալինը՝ լծորդավոր -ց վերջավորությունը. 2) անլծորդ ե, չ հիմքակազմիչով -ել կազմությամբ բայերի մեջ, որոնց անկատարի հիմքն ունի դրական վերջավորություն (ե կամ չ), իսկ կատարյալի հիմքը՝ բացասական (զրո): Երկու դրական վերջավորությունների հակադրություն ունենք. 1) լծորդավոր -ե- հիմքակազմիչով բայերի մեջ, որոնք կատարյալի բայահիմքում ստանում են -ց- հիմքակազմիչը (մոռան-ալ, մերձեն-ալ — մոռաց-ա, մերձեց-ա), 2) պատճառականի կազմություն ունեցող բայերը, որոնք անկատարի բայահիմքում ունեն անլծորդ -ե- հիմքակազմիչը, իսկ կատարյալում՝ -ր- (սովորեցն-ել—սովորեցր-ի). նույն կարգի (ե—ր) հակադրությունն ունեն նաև տանել և դնել բայերը: Այս բոլորից կարելի է հանել ժամանակակից հայերենի բայահիմքերի կազմության հետևյալ ընդհանուր գործուն օրինաչափությունները. ա) բոլոր այն բայերը, որոնք անկատարի բայահիմքում ունեն զրո վերջավորություն (անվերջավոր բայահիմք), կատարյալում ունեն դրական վերջավորություն, որ է -ց- հիմքակազմիչը. բ) բոլոր այն բայերը, որոնք անկատարի բայահիմքում ունեն դրական վերջավորություն (վերջավոր բայահիմք), կատարյալում այդ հիմքակազմիչը փոխարինում են -ց- կամ -ր- հիմքակազմիչով. 3) ե խոնարհման մի խումբ հնավանդ բայեր, որոնք ունեն անլծորդ ե հիմքակազմիչը անկատարի բայահիմքում, կատարյալի բայահիմքում ունեն բացասական (զրո) վերջավորություն (անվերջավոր բայահիմք): Այսպիսով՝ ներկայի և անցյալի բայահիմքերի համար կունենանք հետևյալ հակադրությունները. անվերջավոր անկատար—վերջավոր կատարյալ, վերջավոր անկատար—անվերջավոր կատարյալ, վերջավոր անկատար—վերջավոր կատարյալ (դրական վերջավորությունների հակադրություն), այսինքն՝ հետևյալ բանաձևերը (Բ=բայահիմք, Ա=անկատար, Կ=կատարյալ, +=նշված է հիմքակազմիչով,—=նշված է զրո հիմքակազմիչով):

ԱԲ— — ԿԲ+ (Գր- — գրեց-)
ԱԲ+ — ԿԲ— (տեսն- — տես-)
ԱԲ+ — ԿԲ+ (կարդացն- — կարդացր-)

4. ՁԵՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենի բայաձևերը ներկայացնում են երկու կարգ. դերբայներ կամ ոչ եղանակային ձևեր և դիմավոր կամ եղանակային ձևեր: Խոնարհման համակարգում գերակշռում է եղանակային ձևերի վերլուծական կազմությունը, որ ներկայացնում է ունեէ դերբայ+օժանդակ բայ կամ ըղձականի բայաձև+եղանակիչ սխեմաներով. այդ սխեմաներից դուրս են մնում սահմանական եղանակի անցյալ կատարյալը, հրամայականը, ենթադրականը և ըղձականի երկու ժամանակները: Քանի որ բայաձև ասելով հասկանում ենք բայահիմքերից վերջավորությունների հավելումով կազմվող յուրաքանչյուր ձև, ապա այս բաժնում քննության կառնենք դերբայները և եղանակային ձևերը:

Դ ե ր բ ա յ ն ե ր.— *Ինչպես վերն ասել ենք, Մ. Աբեղյանը դերբայները չէր համարում բայաձևեր, այլ հատկացնում էր անունների կարգին, հետևյալ կերպով. դերբայ գոյական (անորոշ դերբայ), դերբայ ածական (անցյալի երկու ձևերը, ենթակայականը, ապառնին) և դերբայական մակբայ կամ մակբայական դերբայ (անկատար դերբայ). այդ մոտեցումով նա աշխարհաբարում տարբերում էր հինգ դերբայ. անորոշ, անկատար, ապառնի, անցյալ (հարակատար և վաղակատար), ենթակայական: Պրոֆեսորներ Գ. Սևակը և Ա. Ղարիբյանը ճիշտ կերպով դիտելով դերբայն իբրև բայաձև, միաժամանակ անցյալի երկու տարբերակները համարեցին ինքնուրույն դերբայներ: Բացի դրանից, ենթադրական եղանակի ժխտականի ձևերը, որոնք կազմվում էին անորոշ դերբայից և օժանդակ բայից (չեմ գնալ, չես գնալ և այլն), գրական լեզվում ընդունված էին հենց այդպես՝ լ-ի պահպանումով. այդ առթիվ Մ. Աբեղյանը գրում է, որ ենթադրական եղանակի ժխտական ձևերում «անորոշ դերբայի լ վերջավորությունը խոսակցական, երբեմն և գրական լեզվի մեջ հաճախ դուրս է ընկնում»[1]: Հետագայում,*

---

1 *Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 132:*

սակայն, վիճակը փոխվեց. գրական լեզվի մեջ ժամանակի ընթացքում ընդհանրացավ առանց լ-ի ձևը (չեմ գնա, չես գնա և այլն), իսկ դա թելադրում էր մեր խոնարհման համակարգում տարբերել ևս մեկ դերբայ, որ և տարբերեց Ա. Ղարիբյանը, կոչելով ըղձական, իսկ հետո՝ ժխտման դերբայ: Հայերենի դերբայներն առանձին մենագրությամբ ուսումնասիրել է Ա. Աբրահամյանը[1]. արևելյան գրական աշխարհաբարի դերբայներին վերաբերող նյութն ամփոփված է «Բայը ժամանակակից հայերենում» մենագրության 1-ին գրքում (էջ 357—418): Այստեղ հեղինակը՝ դերբայ համարելով «բայի անդեմ ձևերը, որոնք բայական մի շարք հատկանիշների հետ գործողությունը կամ եղելությունը դրսևորում են տարբեր վիճակներում» (էջ 363), ընդունում է անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտական դերբայները, նշելով միաժամանակ, որ ժամանակակից գրական լեզվում հանդիպում է նաև «ընթացակցական» դերբայը, որը սակայն խոսակցական-բարբառային կնիք ունի: Այստեղ նա փորձում է նաև խմբավորել դերբայները: Ելնելով դերբայների արտահայտած իմաստային ընդհանրություններից, Ա. Աբրահամյանը տարբերում է հետևյալ երեք խմբերը, «ա) տարատամ, անորոշ և հետևաբար թույլ դրսևորում ունեցող վիճակ արտահայտող դերբայներ՝ անորոշ, ժխտական, բ) ցայտուն, բայց ոչ ժամանակային վիճակ արտահայտող դերբայներ՝ անկատար, ենթակայական, գ) ժամանակային ընդհանուր վիճակ արտահայտող դերբայներ՝ ապառնի, վաղակատար, հարակատար»[2]: Այս խմբավորումները տարատամ են, ոչինչ չասող և, մանավանդ, արհեստական ու մտացածին: Զանազան կարգի դերբայները խառնված են միմյանց, որից և շփոթ է ստեղծվել. ժամանակային հատկանիշ է վերագրվել ապառնիին ու վաղակատարին, որոնք ժամանակի քերականական կարգից դուրկ են, ժամանակ չի վերագրված ենթակայականին, որ ունի ժամանակ:

Մեզ թվում է, թե ժամանակակից հայերենի դերբայների որոշման հարցում ճշտումների անհրաժեշտություն կա, ըստ որում, այդ ճշտումները կարելի է կատարել հենվելով միաժամանակ երկու հիմունքի վրա՝ գործառական և իմաստային: Դերբայ ասելով մենք հասկանում ենք այն անդեմ բայաձևերը, որոնք արտահայ-

---

1 Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:

2 Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 363:

տում են կերպային կամ վիճակային իմաստներ: *Սրանից բխում է այն, որ այս կամ այն բայաձևը դերբայ համարելու կամ չհամարելու համար մենք պետք է պարզենք, թե այդ ձևն արդյոք արտահայտո՞ւմ է որևէ կերպային կամ վիճակային իմաստ, թե ոչ: Իմաստային հիմունքի հետ զուգորդվում է նաև գործառական հիմունքը, այսինքն՝ այն, որ դերբայներն ունեն որոշ դեր, կատարում են որոշակի գործառություն լեզվի ձևաբանական և շարահյուսական մակարդակում: Այս երկու հիմունքները նկատի ունենալով, փորձենք որոշել մեր գրական լեզվի դերբայները, վերցնելով կարդալ բայի հնարավոր անդեմ ձևերը՝* կարդալ, կարդում, կարդալիս, կարդացել, կարդալու, կարդացած, կարդացող, կարդալիք, կարդա, (կարդալեն): *Այս ձևերից դատելով, մենք կարող ենք որոշ խմբավորում կատարել իմաստային հիմունքով. կարդում, կարդացել, կարդալու, կարդա ձևերը արտահայտում են գործողության ընթացքը, այլ կերպ ասած՝ կերպային հարաբերություն են արտահայտում, մինչդեռ՝* կարդալիս, կարդացած, կարդացող, կարդալիք, *այլև կարդալեն՝ վիճակային հարաբերություն են արտահայտում: Սրան համապատասխան էլ մենք ժամանակակից հայերենի դերբայները բաժանում ենք երկու խմբի՝* կերպային դերբայներ *և* վիճակային դերբայներ: Կարդալ *անորոշ դերբայի մասին կխոսենք առանձին:*

Կերպային դերբայները *չորսն են.* շարունակական *կամ* անկատար, ավարտված (կատարված), կատարելի *և* ժխտման *կամ* բացասական:

Շարունակական կերպային իմաստ է արտահայտում անկատար *կոչվող դերբայի մեկ տարբերակը, որ կազմվում է անկատարի հիմքին ավելացնելով* -ում *դերբայական վերջավորությունը: Խուսափելով ավանդական անվանումների անհարկի փոփոխությունից, որոնք ցավոք սրտի ոմանք այնքան սիրում են, մենք այս դերբայը կկոչենք ընդունված անունով՝* անկատար դերբայ: *Երեք բայ, այն է՝* տալ, գալ, լալ, *զուրկ են անկատար դերբայից և դա փոխարինում են* -իս *վերջավորությամբ դերբայով, որի մասին կխոսվի ստորև: Անկատար դերբայով կազմվում են սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները. ինքնուրույն բառային գործածություն չունի և ինքնին՝ առանց օժանդակ բայի նախադասության անդամ լինել չի կարող*[1]*: Այս դերբայը ցույց է տալիս սկսված ու շարունակվող գործողության կերպային իմաստ և միանալով օժան-*

1 *Սղված ձևերը, ինչպես՝* կարդում է ու գրում, *բնականաբար չի կարելի համարել ինքնուրույն, անկախ գործածություն:*

դակ բային՝ արտահայտում է շարունակվող կերպի հարաբերությունը ներկա կամ անցյալ ժամանակների հետ (կարդում եմ, կարդում էի)։

Ավարտված կերպային իմաստ է արտահայտում վաղակատար դերբայը. վերջավորությունն է -ել, որ ավելացվում է ա խոնարհման, պատճառական և ն, չ հիմքակազմիչներով -ել խոնարհման բայերի կատարյալի բայահիմքին, իսկ -ել խոնարհման ոչ հիմքակազմիչներով բայերի՝ անկատարի բայահիմքին։ Գործառական տեսակետից նույն հատկանիշներն ունի, ինչ որ՝ անկատարը։ Ցույց է տալիս ավարտված գործողություն և միանալով օժանդակ բայի հետ՝ արտահայտում է ավարտված կերպի հարաբերությունը ներկա կամ անցյալ ժամանակների հետ (կարդացել եմ, կարդացել էի)։

Կատարելի կերպային իմաստ է արտահայտում ապառնի դերբայը, որ կազմվում է դերբայական բայահիմքին ավելացնելով -ու վերջավորությունը։ Բացի կերպային տարբերությունից, բոլոր մյուս հատկանիշներով նույնանում է նախորդների հետ։

Այսպիսով՝ անկատար, վաղակատար և ապառնի դերբայները եռակի հակադրություն են կազմում կատարվող, կատարյալ, կատարելի կերպային իմաստներով և, օժանդակ բային միանալով, արտահայտում են այդ կերպերի ու ժվյալ ժամանակի հարաբերությունը։

Ժխտման դերբայն արտահայտում է կերպային շատ ավելի աղոտ իմաստ և ինքնին ոչ թե բացասական կամ ժխտման կերպային իմաստ է արտահայտում, այլ թերևս կարելիության կամ հնարավորության. իմաստի այդ աղոտությունը հետևանք է այն բանի, որ՝ ա) ստացվել է անորոշ դերբայից և ձևով տարբերակվելով, իմաստով դեռևս որոշակիորեն չի տարբերվել, բ) ձևով նույնացել է ըղձական եղանակի երրորդ դեմքի հետ, գ) համեմատաբար նոր առաջացած դերբայ է մեր գրական լեզվի համար։ Երևի ժամանակը կվերացնի այդ աղոտությունը։ Առայժմ կարող ենք ընդունել, որ նա արտահայտում է հնարավորության աղոտ կերպային իմաստ, որ և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ բացասվում է։ Ինչպես նախորդները, այնպես էլ այս դերբայը չունի բառային անկախ գործածություն, հանդես է գալիս որպես ենթադրական եղանակի ժխտական ձևերի բաղադրիչ, և միայն դրանով էլ արդարանում է նրա անվանումը։ Այս դերբայը կազմվում է անկատարի բայահիմքին ավելացնելով ա վերջավորությունը ա խոնարհման բայերի համար և ի վերջավորությունը՝ ե խոնարհման բայերի համար։

Եվ այսպես, ժամանակակից հայերենի կերպային դերբայներն են՝ անկատարը, վաղակատարը, ապառնին, ժխտականը։

Կերպային դերբայները ցույց են տալիս գործողության ընթացքը և հանդես են գալիս միայն ժամանակային ձևերի՝ օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի հարադրությամբ, որով և գործառական տեսակետից բնորոշվում են որպես եղանակային բաղադրյալ ձևերի բաղադրիչ. նրանք բառային անկախ գործածություն չունեն և ինքնին չեն կարող լինել նախադասության անդամ։ Վերջապես, նրանցից նաև բառեր չեն կազմվում, ուստի և նրանք հիմույթային դեր չունեն։

Դերբայների մեջ առանձին դիրք է գրավում անորոշ դերբայը։ Նա ոչ գործողության կերպ է արտահայտում, ոչ էլ առարկայի վիճակ, այլ պարզապես անվանում է գործողությունը։ Այստեղ էլ, ինչպես գոյականների ուղղական հոլովը, անորոշ դերբայը հանդես է գալիս որպես գործողության բացարձակ անվանում։ Իբրև այդպիսին էլ նա ոչ միայն բայաձևերի ելակետային ձև է, այլև անկախ բառ և դրանով իսկ՝ նաև հիմույթ։ Այս նկատի ունենալով, անորոշ դերբայի կերպային-վիճակային իմաստը կբնորոշենք հենց որպես անորոշ իմաստ։

Վիճակային դերբայները ցույց են տալիս ոչ թե բուն իսկ գործողություն, այլ դրա հետ իբրև ենթակա կամ խնդիր առնչվող առարկայի վիճակը. այսպես՝ գճացող, կարղացող, վազող և նման դերբայներն արտահայտում են ոչ թե գճալ, կարդալ, վազել բայերով արտահայտած գործողությունների որևէ վիճակ, այլ որևէ առարկայի վիճակը, որևէ առարկա, որը կատարում է այդ գործողությունները։ Ենթակայական դերբայի համար այս բանը շատ պարզ է և այդ պատճառով էլ հնուց ի վեր այդ դերբայը սահմանվել է իբրև գործողի անուն (nomen agentis), մի բան անող կամ եղող առարկա, գործողության ընթացքի մեջ գտնվող առարկա և այլն, այսինքն՝ բոլոր դեպքերում էլ առարկա, որ տվյալ գործողությունը կատարում է կամ տվյալ գործողությանը ենթարկվում (բերող, բերվող), ըստ որում երկու դեպքում էլ այդ առարկան գործողության քերականական ենթական է (գիրքը բերող մարդ—այն մարդը, որ բերում է գիրքը. բերվող գիրքը—այն գիրքը, որ բերվում է)։ Քանի որ այս դերբայի ավանդական սահմանումը միանգամայն ճիշտ է.

---

1. Ուրիշ լեզուներում անորոշ վիճակն էլ կարող է առնվել ժամանակային հարաբերության մեջ. այդպես է, օրինակ, լատիներենում, որ ունի ներկայի, անցյալի և ապառնու անորոշ դերբայները։

մենք այլևս նրա իմաստի քննությամբ չենք զբաղվի. նշենք միայն, որ նա առարկան ներկայացնում է գործողության ընթացքի մեջ (շարունակական վիճակ), կազմվում է -ող վերջավորությամբ, որ ավելանում է ա խոնարհման բայերի կատարյալի, իսկ է խոնարհման բայերի անկատարի բայահիմքին (կարդաց-ող, գր-ող)։

Հարակատար դերբայը սովորաբար սահմանվում է որպես գործողության ավարտված վիճակ արտահայտող դերբայ, հետևանքային կամ հարատևման երանգով. ահա այդպիսի երկու բնորոշում. «Հարակատար դերբայը նույնպես ցույց է տալիս կատարված գործողություն, ինչպես և վաղակատարը, սակայն այն հիմնական տարբերությամբ, որ միաժամանակ արտահայտում է այդ ավարտված գործողության հետևանքը իբրև մնայուն, հարատևող արդյունք»[1]։ «Ինչպես վաղակատարը, նույնպես և այս դերբայը բայիմաստն արտահայտում է կատարյալ վիճակով, սակայն մի որոշակի տարբերությամբ, այս դերբայի մեջ կատարյալ գործողության կամ եղելության գաղափարը ներկայացվում է հետևանքային երանգով»[2]։ Ինչպես տեսնում ենք, երկու հեղինակներն էլ շեշտը դնում են հետևանքային, հարատևման երանգի վրա և վաղակատարից նրա ունեցած տարբերությունը հենց այդ են համարում, բայց դա բոլորովին էլ էականը չէ։ Երբ ասում ենք **բանդված պատը կառուցեցին** վիճակը կամ հետևանքը բոլորովին էլ չի հարատևում, ընդհակառակն, հետևանքը վերացել է. այդպես էլ՝ **բնած երեխան զարթնեց, ընկած մարդը կանգնեց** և նման կապակցությունների մեջ հետևանքի հարատևման մասին խոսք լինել չի կարող, որովհետև այդ հետևանքն արդեն վերացել է։ Հարատևման գաղափարը կամ երանգը հանդես է գալիս այն դեպքում, երբ հարակատար դերբայի արտահայտած վիճակը հարաբերության է առնվում որևէ ժամանակի հետ. օրինակ՝ **երեխան բնած էր, երեխան բնած է, պատը բանդված էր, պատը բանդված է** և այլն։ Պրոֆ. Գ. Սևակը, նկատելով այդ բանը, հատուկ ծանոթության մեջ գրում է. «Շատ հաճախ հարակատար դերբայը իբրև որոշիչ դրվում է նաև այնպիսի գոյականների վրա, որոնց կատարած գործողության արդյունքը չի ցույց տալիս, այլ որոնք կատարված այդ գործողության արդյունքն են կամ նույնիսկ խնդիրը»[2]։ Այստեղ արդեն որոշ քայլ կատարվել է

---

1 Գ ու ր գ է ն Ս և ա կ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 298։

2 Ա. Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, նույն տեղում, էջ 387։

3 Գ ու ր գ է ն Ս և ա կ, Անդ, էջ 299։

դեպի խնդրի ճիշտ լուծումը։ Հարակատար դերբայի ճիշտ բնորոշմանը խանգարել է և այժմ էլ խանգարում է այն, որ **fնած** *է, խմած է, կարդացած է և նման կապակցությունները դիտվել են որպես բայի եղանակային ձևեր, մինչդեռ դա մեր արդի լեզվի համար ճիշտ չէ։ Բայի եղանակային ձևերը ցույց են տալիս գործողության ընթացքը որևէ ժամանակի հարաբերությամբ՝ դեմքի, թվի և այլ քերականական կարգերով հանդերձ, ըստ որում գործողության ընթացքը կարող է դիտվել իբրև ցանկություն, հրաման, ենթադրություն, հնարավորություն, գործողության վիճակ (կերպ) և այլն։ Արդ,* **fնած, խմած, կարդացած** *և նմանները ցույց են տալիս ոչ թե գործողության, այլ առարկայի վիճակ. այդ դերբայները իմաստային տեսակետից նույնն են* **fնող, խմող, կարդացող** *դերբայների հետ, այն տարբերությամբ միայն, որ մեկն արտահայտում է առարկայի վիճակը՝ որպես որևէ ժամանակի զուգորդող, այդ ժամանակակետում հանդես եկող վիճակ, իսկ մյուսը՝ նախորդած վիճակ։ Այստեղ էլ, ուրեմն, երկու դերբայների արտահայտած վիճակների միջև կա ժամանակային տարբերություն՝ տվյալ ժամանակին զուգորդող և նախորդած՝ անցյալում ստեղծված վիճակ։ Իբրև առարկայի վիճակ արտահայտող դերբայ, հարակատարը չի կարող լինել բայի եղանակային ձևերի բաղադրիչ, ինչպես և ենթակայականը*[1]*։ Այս բանը հեշտությամբ ապացուցվում է մեր լեզվի խոնարհման համակարգի կառուցվածքային վերլուծությամբ՝ հետևյալ տվյալներով։*

1. Բայի բաղադրյալ եղանակային ձևերում, որոնք կազմվում են որևէ դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ, ժխտական խոնարհման դեպքում օժանդակ բայը դրվում է դերբայից առաջ, ինչպես՝ **չեմ fնում, չէի fնում, չեմ fնել, չէի fնել, չեմ fնելու, չէի fնելու, չեմ fնի, չէի fնի**։ *Հակառակ դասավորությունը խորթ է մեր գրական լեզվին, եթե շարահյուսական կամ խոսքային ինչ-ինչ հանգամանքներով չի պայմանավորվում։ Այդպես չէ, սակայն, հարակատար դերբայի հետ. այս դեպքում, ընդհակառակն, օժանդակ բայը եռաղաս է.* **fնած չեմ, fնած չէի**. *Հակառակը խորթ է մեր լեզվին, եթե չի արդարանում խոսքային հանգամանքներով (տրամաբանական շեշտ, ոճավորում և այլն)։ Այս դասավորությունն*

---

1 *Վ. Տեր-Մկրտչյանը իր «Գիրք լինելության» վեպում հաճախ ենթակայական դերբայով և օժանդակ բայով շարունակական ներկա է կազմում՝ միջին հայերենի ոճային երանգավորում ստեղծելու համար. օրն իրիկնացող էր (էջ 7), կանու կրկնվող են (էջ 6)։ Սա, իհարկե, արդի հայերենի խոնարհման կառուցվածքից չի բխում։*

այնքան կայուն է և այնպիսի կարևորություն ունի, որ հաճախ դասավորության փոփոխությունը փոխում է նաև իմաստը. օրինակ՝ այս գիրքը չի կարդալու և այս գիրքը կարդալու չի նախադասություններից առաջինում անխուսափելիորեն ենթադրվում է ևս ենթական, գիրքը ուղիղ խնդիր է, իսկ չի կարդալու սահմանական ապառնիի ժխտականը (պարզ ստորոգյալ), իսկ երկրորդում ենթակա է հենց գիրքը, կարդալու չի, նշանակում է կարդալու արժանի չէ, կարդալու բան չէ և բաղադրյալ ստորոգյալ է. այդպես էլ երեխան ճնած է, երեխան ճնած չէ նախադասությունների մեջ ճնած է, ճնած չէ բաղադրյալ ստորոգյալներ են և, հետևաբար, բայի եղանակային ձև չեն:

2. Բայի եղանակային ձևերի ժխտականում մեր արդի գրական լեզուն եզակի երրորդ դեմքի համար ունի օժանդակ բայի չի ձևը. չի գրում, չի գրելու, չի գրել, չի գրի. այժմյան համակարգում սխալ են՝ չէ գրում, չէ գրելու, չէ գրել, չէ գրի. այնպիսի կապակցություններում, ինչպիսիք են՝ ևս չէ գրում (գրելու), այլ՝ ես, ունենք ուղում՝ ևս չէ, որ գրում է; այլ՝ ես կապակցության: Հարակատար դերբայի հետ, ընդհակառակն, կարող է լինել և՛ չէ, և՛ չի, թեև երկրորդն այժմ ավելի սովորական է դառնում:

3. Բայի եղանակային ձևերի բաղադրիչ հանդիսացող դերբայները, ինչպես տեսանք, բառային անկախ գործածություն չունեն, իսկ հարակատար դերբայն ունի և այս տեսակետից ենթակայականի զուգահեռն է կազմում:

4. Վիճակային դերբայները բառային մակարդակում հանդես են գալիս որպես հիմույթներ. նրանցից ածանցումներով նոր բառեր են կազմվում, ինչպես՝ զգալ–զգացող–զգացողություն, լսել–լսող–լսողություն. ցրվել–ցրված–ցրվածություն, զգացվել– զգացված–զգացվածություն, ճարբել–ճարբած–ճարբածություն և այլն: Եղանակային ձևերի բաղադրիչ հանդիսացող դերբայները բառային մակարդակի միավոր չեն դառնում և հիմույթային դեր ունենալ չեն կարող:

5. Եղանակային ձևերի բաղադրիչ հանդիսացող դերբայներն ունենում են այն հնարավոր իմաստային առումներն ու փոխաբերական գործածությունները, ինչ որ կարող է ունենալ անորոշ դերբայը՝ որպես բառ: Վիճակային դերբայները, բացի անորոշ դերբայի իմաստային առումներից ու փոխաբերություններից, կարող են նաև այնպիսի իմաստներ ստանալ, որոնք անորոշ դերբայը չունի, օրինակ՝ կարդացած դերբայն ունի «զարգացած, մտավոր մեծ զարգա-

ցում ունեցող» իմաստը (հմմտ. նա կարդացած մարդ է), իսկ կարդալ անորոշը, ինչպես և դրա եղանակային ձևերն այդ իմաստը չունեն։

6. Նախորդ կետերում նշված տարբերությունները չեն կարող առաջ չբերել որոշակի գործառական տարբերություններ և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական մակարդակում, իսկ այդ էլ, իր հերթին, թելադրում է որոշակիորեն զանազանել իրարից տարբեր միավորներով ստեղծվող լեզվաբանական կառույցները (կոնստրուկցիաները), տվյալ դեպքում՝ բայի վերլուծական եղանակային ձևերը և դերբայի ու օժանդակ բայի շարահյուսական կապակցությունը բաղադրյալ ստորոգյալի դերում։ Այս դեպքում, բնականաբար, պետք է հիմնվել լեզվի համամանակյա և ոչ թե պատմական տվյալների վրա։ Հարակատար դերբայի և օժանդակ բայի կապակցությունը եղանակային ձև համարելը գալիս է Ստ. Պալասանյանից ու նրա հաջորդներից, բայց ազդեցության անմիջական աղբյուրը Մ. Աբեղյանի աշխատություններն են։ Մեր քերականագիտական գրականության մեջ սովորաբար հետևում են նրան, առանց նկատի ունենալու, որ Մ. Աբեղյանի մոտեցումը ճիշտ էր իր ժամանակի համար. չէ գրած, չէ տեսած, չէ եկած, գիրը չէ բերված կամ գիրը բերած չէ («գիրքը չի բերել» նշանակությամբ) և նման ձևերը սովորական ու ճիշտ էին անցյալ դարում և մեր դարի սկզբներում, բայց անսովոր են ու ոչ ճիշտ մեր ժամանակի գրական լեզվի համար։ Այդ կապակցությունները մեր արդի լեզվում և՛ կառուցվածքով և՛ իմաստով բոլորովին տարբեր են։ Որպեսզի այդ բանը ցույց տանք, դիմենք օրինակների։ Մի 50 տարի առաջ կարելի էր ասել՝ նա իր ձորեկ բարեկամին դեռ չէ տեսած, նա իր գիրը չէ բերած ևն, այժմ դրանք խորթ են մեզ համար։ Մենք կարող ենք ասել՝ նա իսկական բարեկամ տեսած չէ (ավելի ճիշտն է՝ չի տեսել), որ նշանակում է՝ «բոլորովին բարեկամի չի հանդիպել՝ բարեկամ չի ունեցել՝ չի ճանաչել, նա չգիտե, թե ինչ է իսկական բարեկամը». գիրը բերած չէ. կարող է գործածվել «բերված չէ, բերովի չէ իմաստով» և այլն։ Հետաքրքիր է այդ տեսակետից հետևյալը. «Հայկետհրատը» 1965 թ. վերահրատարակեց Վ. Պոլենցի «Գյուղացի բրուտները» վեպը, Ս. Թառայանի թարգմանությամբ. այդ թարգմանությունն առաջին անգամ հրատարակվել է 1910 թվականին։ Այստեղ կարդում ենք.

Չէ՞ որ գերմանացի գյուղացին մի ժամանակ ազատ է եղած (էջ 273)։

Նրանցից մեկը պատրաստի էր եղած մոտակա ամրոցում և այժմ դուրս էր եկած (էջ 247)։

Նա մի լավ այգեպան էր եղած (էջ 287)։

Պաուլինեն ձեռների վրա պաճած էր տղային (էջ 82)։

Նա իր ամբողջ կյանքում մի առողջ դաստող, կարգին մարդ էր եղած (էջ 270) և այլն։

Լեզվի մեծ իմացություն ու զգացողություն հարկավոր չէ՝ գիտենալու համար, որ եթե այդ գիրքը այժմ թարգմանվեր, հիշյալ նախադասությունների փոխարեն կունենայինք.

Չէ՞ որ գերմանացի գյուղացին մի ժամանակ ազատ է եղել։

Նրանցից մեկը ախոռապահ էր եղել մոտակա ամրոցում և այժմ դուրս էր եկել։

Նա մի լավ այգեպան էր եղել։

Պաուլինեն ձեռքերի վրա պահել էր (կամ պահում էր) տղային։

Նա իր ամբողջ կյանքում մի առողջ դաստող, կարգին մարդ էր եղել։

Այսպիսի օրինակների թիվը կարելի է բազմացնել ուզածին չափ, բայց դա ավելորդ է։ Հարակատար համարված եղանակային ձևը մեր արդի լեզվում այլևս եղանակային ձև չէ. նա վերածվել է բաղադրյալ ստորոգյալի, ուստի պետք է քննության առնվի շարահյուսական մակարդակում և ոչ թե ձևաբանական։ Այս դրույթին կարծես թե հակասում են այնպիսի կապակցությունները, որոնց մեջ հարակատար դերբայը հանգույցի հետ ցույց է տալիս վիճակ, ինչպես՝ նստած եմ, ընած է, պառկած է ևն։ Այս կապակցություններն էլ, սակայն, եղանակային ձև չպետք է համարել. դրանք կառուցվածքային տեսակետից նույնն են, ինչ որ՝ ինվանդ է, առողջ է ևն։ Հիրավի, նա արդեն զարթնած է և նա արդեն զարթուն է կապակցությունների միջև կառուցվածքային տարբերություն չկա, այլ՝ իմաստային, ըստ որում առաջինի մեջ ունենք գործընթացային ինքնակա հատկանիշ, երկրորդում՝ ոչ գործընթացային ինքնակա հատկանիշ, այլ կերպ ասած՝ զարթնած հարակատար դերբայը գործառում է որպես բայական ածական կամ բայածական, իսկ զարթուն՝ որպես բուն ածական։ Իրոև կանոն, այն բոլոր դեպքերում, երբ ածականը ցույց է տալիս վիճակային հատկանիշ, հաճախ բաղադրյալ ստորոգյալը կազմվում է հենց ածականով և ոչ թե համապատասխան բայի դերբայով. օրինակ՝ ինվանդ է, առողջ է և նման կապակցությունների փոխարեն չի ասվում ինվանդացած է, առողջացած է. եթե հարկ լինի բայական ձևով փոխարինել, կունենանք՝ ինվանդացել է, առողջացել է։

7) Որ իրոք հարակատարի և օժանդակ բայի կապակցությունը ոչ թե եղանակային ձև է, այլ բաղադրյալ ստորոգյալ, լավագույն կերպով ապացուցվում է նաև հետևյալով։ Բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադիր գոյականը կարող է հոգնակի թվով դրվել, եթե ենթական հոգնակի է. օրինակ՝ Նրանք աշակերտներ են։ Հոգնակի թվով կարող է դրվել նաև ստորոգելիական վերադիր ածականը գոյականի առումով, օրինակ՝ Սրանք ընդունակներն են։ Լեռնանցքը պահպանողներ են։ Դերբայներից, ինչպես ընդունված է բոլորի կողմից, որպես ստորոգելիական վերադիր կարող են հանդես գալ ենթակայականն ու ապառնիի -իմ վերջավորությամբ տարբերակը, և դրանք նույնպես կարող են հոգնակի թիվ ստանալ. օրինակ՝ սրանք բարձրաձայն խոսողներն են։ Բոլորն էլ լավ ձայն ունեցողներ են։ Դրանք ինձ իմ գրելիքներն են։ Արդ, օժանդակ բայի հետ գործածվելով՝ հոգնակի թիվ կարող է ստանալ նաև հարակատար դերբայը գոյականի առումով հենց այն կապակցություններում, որ իբրև եղանակային ձև են ընդունում. օրինակ՝ Սրանք ինձ ծանոթ են կարող ենք դարձնել սրանք ինձ ծանոթներ են կամ ինձ ծանոթներն են։ Սրանք ճարպած են → սրանք ճարպածներ են։ Նրանք կանգնած են → նրանք կանգնածներ են։ Ջինվորները կանգնածներն են, նրամանատարները՝ նստածները և այլն, և այլն։ Եղանակային ձևեր կազմող դերբայներից և ոչ մեկը չի կարող հոգնակի թիվ ստանալ. չի կարելի ասել՝ նրանք գրումներն են, նրանք գրելներն են, նրանք գրելուներն են և այլն։

8. Վիճակային դերբայներից հարակատարը, ենթակայականը և մակբայականը կազմում են երկրորդական բաղադրյալ ժամանակներ, ինչպես՝ գրած կլինեմ, գրած եմ լինելու, այրող կլինի, այրող է լինում, գրելիս կլինի, գրելիս է լինում և այլն։ Կերպային դերբայներից անկատարը և վաղակատարը չեն կարող լինել երկրորդական բաղադրյալ ժամանակների բաղադրիչ։ Ապառնի դերբայի ձևով ունենք գրելու լինեմ, գրելու լինեի, գրելու կլիներ և այլն։ Բայց հարց է, թե այստեղ անորոշ դերբայի սեռական հոլո՞վ ունենք, թե ապառնի դերբայ։ Գնալու լինեմ կարելի է գործածել մեծ մասամբ երբ, եթե շաղկապների հետ. օրինակ՝ երբ գնալու լինես, ինձ իմաց տո՛ւր։ Եթե գնալու լինեմ, ձեզ կհայտնեմ։ Երկու դեպքում էլ գնալու կարելի է համարել և՛ անորոշի սեռական հոլով, և՛ ապառնի դերբայ, և այստեղ էլ, ինչպես շատ ուրիշ դեպքերում, դժվար է հաստատապես ասել, թե ո՛րն է։ Սակայն, եթե ապառնի դերբայ էլ համարենք, ոչինչ չի փոխվի։ Մենք կարող ենք ընդու-

նել, որ ապառնի դերբայը կազմում է և՛ գլխավոր, և՛ երկրորդական բաղադրյալ ձևեր, իսկ անկատարը և վաղակատարը՝ ոչ: Նրանք կազմում են միայն գլխավոր բաղադրյալ ձևեր: Այսպիսով, մի կողմից կունենանք երկու կատարելի դերբայների հակադրություն նրանով, որ մեկը (գրելու, կարդալու) կարող է կազմել և՛ գլխավոր, և՛ երկրորդական բաղադրյալ ձևեր, մյուսը (գրելիք, կարդալիք)՝ ոչ, իսկ անկատարի ու վաղակատարի և հարակատարի, ենթակայականի ու մակբայականի համար (երեք բառերը մի կողմ թողնելով) կունենանք հակադրություն այն բանով, որ առաջինները կարող են լինել միայն գլխավոր, երկրորդները՝ միայն երկրորդական բաղադրյալ ձևերի բաղադրիչ:

Այս բոլոր տվյալները բավականաչափ հիմք են տալիս ապացուցված համարելու, որ մեր լեզվի արդի կառուցվածքում հարակատար դերբայով եղանակային (գլխավոր) բաղադրյալ ձևեր չեն կազմվում, այն, ինչ որ համարվում է սահմանականի հարակատար ներկա և հարակատար անցյալ, պետք է համարել բաղադրյալ ստորոգյալ և հանել խոնարհման հարացույցիչ: Միայն այն փաստը, որ կանգնած են, նստած են, բնած են կարող ենք դարձնել կանգնածներ են, նստածներ են, բնածներ են, բավական է, արդեն, մեր այդ դրույթը հաստատելու համար:

Հարց է առաջանում, թե ապա ինչպե՞ս պետք է բնութագրել հարակատար դերբայի իմաստը: Մենք արդեն ասացինք, որ հետևվանքային հատկանիշը չենք դիտում որպես հարակատար դերբայի իմաստը բնորոշող տարր: Պրոֆ. Գ. Սևակի սահմանումի մեջ կա մի ավելի բանական բնութագրություն. «Հարակատար դերբայն արտահայտում է այդ ավարտված գործողության հետևանքը իբրև մնայուն, հարատևող արդյունք»: Այս «հարատևող» կամ «մնայուն» կոչվածը իրականում ոչ այլ ինչ է, եթե ոչ կերպային հատկանիշ: Այս տեսակետից միանգամայն սխալ է հարակատար դերբայը բնորոշել որպես կատարյալ. այս դերբայի և վաղակատարի տարբերությունը հենց այն է, որ վաղակատարը ցույց է տալիս գործողության ավարտվածություն, նա ունի բայական կատարյալ կերպ, մինչդեռ հարակատար դերբայը ավարտվածություն ցույց չի տալիս: Նա արտահայտում է առարկայի վիճակ, իբրև «հարատևող, մնայուն» հատկանիշ, այլ կերպ ասած՝ գործողությունը (վիճակը) ներկայացնում է տևական, շարունակական կերպով, իսկ դա նշանակում է, թե հարակատարը շարունակական կամ տևական կերպ ունի: Այս դեպքում էլ, սակայն, առաջ է գալիս ենթակայականի

ու հարակատարի տարբերական խնդիրը. ինչո՞վ են նրանք հակադրվում իրար, եթե երկուսն էլ ըստ գործողության կերպի շարունակական կամ տևական են.—նրանով, որ ենթակայականն ունի ներկայի ժամանակային հատկանիշ, իսկ հարակատարը՝ անցյալի։ Այդ բանը պարզորոշ կերպով երևում է հետևյալ համեմատություններով.

1. Հոսող ջուր—ջուր, որ հոսում է
Խոսող մարդ—մարդ, որ խոսում է
Շարժվող ատամ—ատամ, որ շարժվում է
2. Հոսած ջուր—ջուր, որ հոսել է
Թերթատած գիրք—գիրք, որ թերթատել են
Քնից զարթնած երեխա—երեխա, որ զարթնել է քնից։

Ինչպես տեսնում ենք, ենթակայական դերբայը համապատասխանում է ներկա շարունակականին, իսկ հարակատարը՝ ներկա վաղակատարին, ասել է թե, նա ցույց է տալիս ներկա ժամանակին նախորդած գործողություն։ Իբրև ներկա, ենթակայական դերբայը բնականաբար կարող է ցույց տալ նաև ընդհանուր ժամանակ, ինչպես որ շարունակական ներկայի բայածևը (հմմտ. երկիրը պտտվում է—պտտվող երկիր)։ Քանի որ ենթակայականն ու հարակատարը ցույց են տալիս ներկա և անցյալ ժամանակներ, նրանք ըստ էության արտահայտում են ոչ միայն բայական ներկա ժամանակին, այլև ամեն մի ժամանակի հարաբերակցվող վիճակներ, ենթակայականը որպես գուգորդող, հարակատարը՝ որպես նախորդած. այսպես՝ երբ նա ներս մտավ, ելույթ ունեցող իր ընկերը մի պահ լռեց (լռեց իր ընկերը, որ ելույթ էր ունենում), երբ նա ներս մտավ, ելույթ ունեցած իր ընկերը այլևս դահլիճում չէր (այլևս դահլիճում չէր իր ընկերը, որ ելույթ էր ունեցել)։ Այսպիսով, հարակատարը ցույց է տալիս առարկայի որևէ վիճակ, որ նախորդել է որևէ ժամանակակետի, տեղի է ունեցել այդ ժամանակակետից առաջ և շարունակվում է մինչև տվյալ ժամանակակետը (երեխան քնած է, երեխան քնած էր, երեխան քնած կլինի), իսկ ենթակայականը՝ որևէ ժամանակակետի գուգորդող, այդ ժամանակակետում սկսված և շարունակվող վիճակ։ Այդ նկատի ունեն մեր քերականագետներից շատերը, որոնք ենթակայականը համաձա կոչում են ներկա դերբայ, իսկ հարակատարը՝ անցյալ։

Եվ այսպես, ենթակայական և հարակատար դերբայները ցույց են տալիս առարկայի վիճակ՝ գործողության (վիճակի) շարունա-

կական կերպով, առաջինը՝ ներկա, երկրորդը՝ անցյալ ժամանակով։ Իբրև վիճակային դերբայներ նրանք մեր արդի գրական լեզվում բայի եղանակային գլխավոր բաղադրյալ ձևեր չեն կազմում։ Դրան հակառակ, վիճակային դերբայները կազմում են երկրորդական բաղադրյալ ժամանակներ, իսկ կերպային դերբայները (ապառնիի բացառությամբ)՝ չեն կազմում (ալեկոծված կլինեմ, կլինեի, եղավ, ալեկոծվող կլինի, կլիներ, եղավ, բայց ոչ՝ ալեկոծվում[1] կլինի, կլիներ, եղավ, ալեկոծվել կլինի, կլիներ, եղավ են)։

Առարկայի վիճակ է ցույց տալիս նաև ապառնի դերբայի մի տարբերակը, որ կազմվում է ի կամ իվ վերջավորությամբ դերբայական բայահիմքից (գրելի, գրելիք, կարդալի, կարդալիք). ի-ով ձևն այժմ գրական լեզվում անցել է բայակազմ ածականների շարքը և քննության առարկա չենք դարձնի, ըստ որում նա կորցրել է ապառնիության իմաստը և ցույց է տալիս մի բանի արժանի լինելը[2]։ Երկրորդ ձևն, ընդհակառակը, արտահայտում է կատարելության գաղափար և ցույց է տալիս դարձյալ առարկայի վիճակը, իբրև սպասվող, կատարելու վիճակ, այլ կերպ ասած, նա ցույց է տալիս տվյալ ժամանակակետին հաջորդելու վիճակ և ապառնի է։ Այս դերբայը, թեև գործածական, բայց շատ մեծ տարածում չունի, ըստ որում շատ հաճախ փոխարինվում է անորոշ դերբայով (կարդալիք գիրք—կարդալու գիրք). ավելի հաճախ է նրա գործածությունն անկախ ձևով, գոյականի առումով և այդ դեպքում համապատասխանում է լատիներենի գերունդիումին։ Սովորական ապառնի դերբայից այս դերբայը տարբերվում է նրանով, որ արտահայտում է առարկայի և ոչ թե գործողության վիճակ, բայի եղանակային ձևերի բաղադրիչ չէ, բառային անկախ գործածություն ունի և ինքնին նախադասության անդամ կարող է լինել, ինչպես ենթակայական և հարակատար դերբայները։ Այս հիման վրա էլ անհրաժեշտ է տարբերել այս դերբայը կերպային ապառնի դերբայից. հարմար ենք գտնում այս դերբայը կոչել ապառնի, իսկ կերպայինը՝ կատարելի։ Պետք է նկատել, որ այս դերբայը ցույց է տալիս խնդիր-առարկայի վիճակ թե՛ ներգործական, թե՛ կրավորական ձևով, թեև կրավորականի հետ առարկան քերականորեն

---

1 Այսպիսի ձևեր գործածվում են ժողովրդական-խոսակցական ոճում։

2 Առանձին գործածություններում նա դեռևս հանդես է գալիս որպես դերբայ, բայց դրանք էլ արդեն անսովոր են դառնում և փոխարինվում են կամ անորոշ դերբայի սեռական հոլովով, կամ էլ –իվ ձևով։

կարող է դիտվել իբրև ենթակա (հմմտ. հատկացնելիք գումար— հատկացվելիք գումար, կնքելիք պայմանագիր—կնքվելիք պայմանագիր, գրելիք նամակ—գրվելիք նամակ և այլն)։

Այսպիսով, այս երեք դերբայները ցույց են տալիս առարկայի վիճակը գործողության (հատկանիշի) հարաբերությամբ, որպես ներկա կամ զուգորդող, անցյալ կամ նախորդող և ապառնի կամ հաջորդող գործընթաց։ Մինչդեռ կերպային դերբայները ցույց են տալիս բուն իսկ գործողության վիճակը, նրա ընթացքը որպես անկատար կամ շարունակվող, կատարված (ավարտված) և կատարելի գործընթաց (պրոցես)։ Վիճակային դերբայները գործողությունը ներկայացնում են որպես շարունակական (ենթակայական, հարակատար) կամ կատարելի։ Քանի որ ենթակայական, հարակատար և ապառնի դերբայները որոշում են առարկայի վիճակը, ապա այդ երեքը միասին կկոչենք **որոշչական վիճակային դերբայներ** նրանց ընդհանուր գործառույթի հիմունքով, թեև այդ գործառույթը նրանք կատարում են ոչ միատեսակ կենսունակությամբ և կիրառության ոչ միևնույն պայմաններով։

Ժամանակակից հայերենի *-իս* վերջավորությամբ դերբայը (կարդալիս, գրելիս) ընդունված է համարել անկատար դերբայի մի տեսակը (տարբերակը)։ Այսպիսի մոտեցման հիմք է ծառայել այն փաստը, որ **կարդալիս, գրելիս** դերբայները ցույց են տալիս գործողության շարունակական վիճակ, ինչպես և՝ **կարդում, գրում**. դրան ավելանում է նաև այն, որ երեք բայի (լալ, տալ, գալ) սահմանականի ներկան և անցյալ անկատարը կազմվում են այս դերբայով (գալիս եմ, գալիս էի և այլն)։ Այս երկրորդ հանգամանքը բնականաբար չի կարող որոշիչ լինել, որովհետև երեք պարականոն բայով չի կարելի բնորոշել ամբողջ երևույթը։ Ինչ վերաբերում է առաջին փաստին, ապա նա դերբայի բնորոշման համար ամենագլխավոր հատկանիշն է, ուստի և մենք էլ կդիմենք իմաստային վերլուծության։ Անժխտելի է, որ այս դերբայը շարունակական, չավարտված, անկատար գործողություն է ցույց տալիս և այս տեսակետից նույնանում է անկատար դերբայի և ենթակայականի հետ, բայց նրանցից տարբերվում է նրանով, որ մինչդեռ անկատարը հանդես է գալիս որպես բուն իսկ գործողության վիճակ, այս դերբայը ցույց է տալիս առարկայի մի վիճակ, որի ժամանակ նա (առարկան) մի այլ գործողություն է կատարում։ Այսպես, օրինակ, երբ ասում ենք. համալսարան գնալիս տեսա ընկե-

rոջս, համալսարան գնալիս տեսնելու եմ (կտեսնեմ) ընկերոջս և այլն, ապա՝ գնալիս դերբայը ցույց է տալիս, որ հենց այդ վիճակում (=գնալու վիճակում) լինելու ժամանակ եմ տեսել կամ տեսնելու։ Սա նշանակում է, թե այս դերբայը ցույց է տալիս մի ուրիշ գործողության զուգահեռ, ընթացակից գործողություն, որպես շարունակվող վիճակ։ Անկատար դերբայից սա իր դերով որոշակիորեն տարբերվում է. անկատար դերբայը կազմում է բայի եղանակային ձևեր, իսկ սա չի կազմում (չհաշված երեք անկանոն բայերը), անկատար դերբայը ինքնին նախադասության անդամ չէ, իսկ սա նախադասության երկրորդական անդամ է որպես ժամանակի պարագա։ Այս նկատի ունենալով էլ մենք այս դերբայը կոչում ենք ժամանակային դերբայ. ըստ այսմ, ժամանակային դերբայը ցույց է տալիս մի շարունակվող գործողություն (վիճակ), որի ընթացքում կատարվում է մի այլ գործողություն։ Այլ կերպ ասած նա զուգորդում է եղանակային մի այլ գործողության։ Նկատելի է, որ նա կարող է դրվել բոլոր ժամանակների ու եղանակների հետ անփոփոխ ձևով (համմտ. գնալիս տեսա, տեսնելու եմ, կտեսնեմ, տեսնեմ, պիտի տեսնեմ և այլն), ըստ որում սահմանականի ներկա և անցյալ ժամանակների հետ գործածվելիս ցույց է տալիս նաև զուգահեռաբար կատարվող գործողության տևական կամ մշտական բնույթը, ինչպես, օրինակ՝ Համալսարան գնալիս հանդիպում եմ (էի) ընկերոջս նախադասության մեջ հանդիպում եմ (էի) ստորոգյալը ցույց է տալիս ոչ թե մի անգամ կատարվող, այլ մշտական կամ սովորական դարձած գործողություն (=սովորաբար հանդիպում եմ)։ Այս դերբայը կազմվում է դերբայական բայահիմքից՝ –իս վերջավորությամբ։

Վերջապես, խոսակցական լեզվից գրականության մեջ թափանցած -են վերջավորությամբ դերբայը նույնպես ցույց է տալիս զուգահեռ, ընթացիկ գործողություն, իբրև շարունակական վիճակ։ Մեր «Մեղրու բարբառը» աշխատության մեջ, խոսելով այդ դերբայի մասին, մենք այն կոչել ենք մակբայական դերբայ, նկատի ունենալով, որ –իս ձևով դերբայը այդ բարբառում վերածվել է բուն անկատար դերբայի (կերպայինի), իսկ –ում ձևով դերբայը բոլորովին չկա։ Քանի որ այդ բարբառում մակբայական դեր կատարող դերբայը միայն դա է, ապա հարմար է այդ բարբառի համար այն կոչել մակբայական դերբայ։ Ա. Աբրահամյանը՝ ուսումնասիրելով հայերենի դերբայները հայ գրական լեզուներում և բարբառներում, ցույց տվեց, որ այդ դերբայը կա նաև ուրիշ

բարբառներում, որոնցից թափանցել է նաև գրական լեզվի մեջ, և կոչեց «ընթացակցական»։ Այս անվանումը ճիշտ կարելի է համարել, սակայն, թե՛ այս և թե՛ նախորդ դերբայի համար։ Թե՛ վազելեն և թե՛ վազելիս դերբայները ցույց են տալիս ընթացակից, զուգահեռ գործողություն (զուգորդող գործընթացային հատկանիշ) և դրանով նրանք միատեսակ դերբայներ են. նրանց տարբերությունն այն է, որ մեկը՝ ժամանակայինը, ցույց է տալիս վիճակ, որի ժամանակ ենթական կատարում է մի այլ գործողություն, իսկ մյուսը ցույց է տալիս վիճակ, որի մեջ լինելով ենթական կատարում է մի այլ գործողություն, այլ կերպ ասած՝ մեկը որոշում է ժամանակը, մյուսը՝ ձևը։ Քանի որ այդպես է, ապա երկուսն էլ պետք է դիտել իրենց իմաստի ու գործառույթի ընդհանրությամբ և այդ ընդհանուր հատկանիշներով նրանք կապելով իրար հետ, գտնել նաև նրանցից յուրաքանչյուրին առանձնահատուկը։ Իմաստի տեսակետից ընդհանուր է այն, որ երկուսն էլ ցույց են տալիս շարունակական վիճակ, որն ընթացակից է մի այլ գործողության։ Գործառույթի տեսակետից ընդհանուր է այն, որ նրանք եղանակային ձևերի բաղադրիչ չեն և նախադասության անդամ կարող են լինել որպես պարագա։ Տարբերությունն այն է, որ մեկը ժամանակի պարագա է, մյուսը՝ ձևի։ Այսպիսով, երկուսն էլ հանդես են գալիս զուգորդող հատկանիշի իմաստով։ Ընդհանրությունների հիման վրա երկուսն էլ կկոչենք **մակբայական դերբայներ**, իսկ տարբերության հիման վրա մեկը՝ ժամանակայինը, մյուսը՝ ձևի դերբայ։ Մնում է ավելացնել, որ ձևի դերբայը, որը կազմվում է դերբայական բայահիմքից՝ -են վերջավորության հավելումով, գրական լեզվում սահմանափակ գործածություն ունի, այն էլ իբրև խոսակցական-ժողովրդական ձև. մեր արդի գրականում նրա փոխարեն գործածվում է անորոշ դերբայի գործիական հոլովը (շորորալեն եկան = շորորալով եկավ)։

Այսպիսով, ժամանակակից արևելահայ գրական լեզվում մենք ընդունում ենք տասը դերբայ (մեկը վերապահորեն՝ որպես ժողովրդական-խոսակցական ոճի իրողություն), որոնք խմբավորվում են հետևյալ կարգերի մեջ.

1. **Բացարձակ կամ ընդհանուր.**— անորոշ.

2. **Կերպային.**— անկատար, վաղակատար, կատարելի, ժխտման.

3. **Վիճակային.**— *ա)* **որոշչական.**— ենթակայական, հարակատար, ապառնի, *բ)* **մակբայական.**— ժամանակային, (ձևի)։

Այս բոլորը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով.

		Կ ե ր պ ա ս յ ի ն հ ա տ կ ա ն ի շ			
		շարունակական կամ տևական	կատարելի	կատարված (ավարտված)	ընդհանուր
Կերպային դերբայներ		անկատար (կարդում, գրում)	կատարելի (կարդալու, գրելու)	վաղակատար (կարդացել, գրել)	ժխտական (կարդա, գրի)
Բացարձակ					անորոշ (կարդալ, գրել)
Վիճակային դերբայներ	սրտնչական	ենթակայական (կարդացող, գրող) հարակատար (կարդացած, գրած)	ապառնի (կարդալիք, գրելիք)		
	ժամանակային	1. ժամանակային (կարդալիս, գրելիս) 2. (ձևի, կարդալեն, գրելեն)			

5. ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐ

Բայի եղանակային ձևերը լինում են պարզ և բաղադրյալ. պարզ են այն ձևերը, որոնք կազմվում են բայահիմքի և դիմային-ժամանակային վերջավորությունների միացումով, բաղադրյալ են նրանք, որոնք կազմվում են որևէ կերպային դերբայի և օժանդակ բայի ներկայի կամ անցյալ անկատարի հարադրությամբ: Բաղադրյալ ձևերն են. սահմանական եղանակի ներկան և անցյալ անկատարը, ապառնի ներկան և ապառնի անցյալը, վաղակատար ներկան և անցյալը, ենթադրական եղանակի ապառնի ներկայի ու ապառնի անցյալի ժխտական ձևերը: Վերը շարադրվածի համաձայն սահմանականի հարակատար ներկա և անցյալ կոչվածը մենք եղանակային ձևեր չենք համարում: Թե ո՛ր դերբայից ի՛նչ բաղադրյալ եղանակային ձևեր են կազմվում, արդեն ասել ենք, ուստի և բավականանում ենք միայն թվելով:

Պարզ եղանակային ձևերն իրենց հերթին կարող են լինել առաջնային և երկրորդային. առաջնային են նրանք, որոնք կազմ-

վում են որևէ բայահիմքից՝ դիմային-ժամանակային վերջավորությունների հավելումով, ինչպես՝ կարդ–ա–մ, գրեց–ի և այլն, երկրորդային են այն ձևերը, որոնք կազմվում են առաջնային ձևերից՝ եղանակավորող կամ բացատական (ժխտական) ձևույթների հավելումով, ինչպես՝ կ–կարդամ, պիտի կարդամ, չկարդամ և այլն։

Առաջնային պարզ ձևեր ունեն. սահմանական եղանակի անցյալ կատարյալը, ըղձական եղանակի դրական խոնարհման երկու ժամանակները, հրամայական եղանակի դրականը. երկրորդային ձևեր ունեն ենթադրական ու հարկադրական եղանակների դրական խոնարհումը և ըղձականի, հարկադրականի ու հրամայականի ժխտական խոնարհումը։

Վերլուծելով ժամանակակից հայերենի առաջնային պարզ եղանակային բայաձևերի վերջավորությունները, ստանում ենք հետևյալ պատկերը.

1. Կան վերջավորություններ, որոնք ընդհանուր են բոլոր պարզ առաջնային բայաձևերի համար, բացի հրամայականից. օրինակ, -նք վերջավորությունն ունենք բոլոր պարզ բայաձևերում (կարդանք, կարդայինք, կարդացինք, մոռացանք և այլն)։ Կան վերջավորություններ էլ, որոնք հատուկ են միայն որևէ ժամանակային ձևի. օրինակ՝ ըղձական ապառնու եզակի 2-րդ դեմքում ունենք u վերջավորությունը (կարդա-ս), իսկ ապառնի անցյալում՝ –ր (կարդայի-ր)։

2. Քանի որ դիմային վերջավորությունները ինքնին չեն արտահայտում ժամանակային հարաբերություն, ապա դրանք արտահայտելու համար օգտագործվում են անցյալի ժամանակային ցուցիչներ՝ անցյալի համար, օրինակ՝ գրեմ և գրեիմ ձևերի մեջ ժամանակային հակադրությունը (ապառնի—ապառնի անցյալ) արտահայտվում է ի ցուցիչի բացակայությամբ կամ առկայությամբ։

3. Քանի որ անցյալի նույն ցուցիչը հավասարապես կարող են ունենալ երկու տարբեր եղանակների անցյալի ձևերը, ապա դրանց հակադրությունն արտահայտվում է բայահիմքերի հակադրությամբ, օրինակ՝ գրեիմ և գրեցիմ ունեն նույն վերջավորությունը (-ինք), որի մեջ անցյալի ժամանակային ցուցիչն է ի. այդ երկու ձևերի տարբերությունը հիմնված է այն բանի վրա, որ մեկը կազմված է անկատարի, մյուսը՝ կատարյալի հիմքից։

4. Բացի բայահիմքերի և ժամանակային ցուցիչի հակադրությունից, ունենք նաև դիմային վերջավորությունների հակադրություն. օրինակ՝ գոնեի, գոներ և գոտավ ձևերի մեջ ունենք ոչ միայն

անկատար և կատարյալ հիմքերի հակադրություն, այլև՝ դիմային վերջավորություններ։

5. Թվի կարգի համար յուրահատուկ վերջավորություն չկա. եզակիի և հոգնակիի հակադրությունն արտահայտվում է նրանով, որ յուրաքանչյուր դեմքի եզակի ու հոգնակի վերջավորությունները տարբեր են. սա նշանակում է, թե թվի կարգը ևս արտահայտվում է դիմային վերջավորությամբ։

Այս բոլորից ելնելով, ժամանակակից հայերենի առաջնային պարզ բայաձևերի վերջավորությունները կարելի է դասակարգել ըստ կազմության և ըստ ժամանակի։ Ըստ կազմության վերջավորությունները լինում են պարզ և բաղադրյալ. պարզ են այն վերջավորությունները, որոնք ցույց են տալիս միայն դեմքի ու թվի քերականական կարգերը, ինչպես, օրինակ, մ, ս, ք և այլն, բաղադրյալ են այն վերջավորությունները, որոնք ունեն նաև ժամանակային ցուցիչ, ինչպես օրինակ՝ -իմ, -իր և այլն։

Ըստ ժամանակի վերջավորությունները կարող են լինել ներկայի և անցյալի, այսինքն՝ վերջավորություններ, որոնք միայն ներկայի ձևերում կարող են լինել (մ, ս) և վերջավորություններ, որոնք միայն անցյալի ձևերում կարող են լինել (ր, վ)։

Վերջապես պետք է ավելացնել այն, որ թե՛ պարզ և թե՛ բաղադրյալ վերջավորությունները կարող են միանալ բայահիմքին կամ խոնարհիչի օգնությամբ, ինչպես՝ կարդ-ա-մ, կարդ-ա-յ-իմ, կամ առանց խոնարհիչի, ինչպես՝ գր-ի, գրեց-իմ։ Իբրև ընդհանուր կանոն, առանց խոնարհիչի են կատարյալի ձևերի վերջավորությունները, խոնարհիչով են անկատարի ձևերի (ապառնի, ապառնի անցյալ) վերջավորությունները։

Այսպիսով, առաջնային պարզ բայաձևերի մեջ կարող ենք ունենալ հետևյալ ձևաբանական միավորները՝ բայահիմք, խոնարհիչ, ժամանակային ցուցիչ, դիմային վերջավորություն։ Սրանց կարելի էր ավելացնել որոշ ձևերի մեջ երևան եկող յ հնչյունը. դա նույնպիսի երևույթ է, ինչպես հոլովման ձևերի մեջ հանդես եկող յ ձայնակապը, որ ունի միայն ուղղախոսական և ուղղագրական արժեք։

Վերջավորությունների այսպիսի անդամատումը հնարավորություն է տալիս կատարելու ձևույթների նույնացում (идентификация морфем) *և տարբեր ձևերի մեջ գտնելու միևնույն վերջավորությունները։ Այսպես, վերլուծելով բոլոր առաջնային պարզ բայաձևերը, գտնում ենք հետևյալ ձևույթները.*

1. **Դիմային վերջավորություններ.** *արդի գրական հայերենի խոնարհման համակարգում ունենք եզակիում՝ առաջին դեմքի մ կամ #, 2-րդ դեմքի՝ ս, ր, ա, երրորդ դեմքի՝ ր, վ կամ #, հոգնակիում՝ առաջին դեմքի –նք, երկրորդ դեմքի –ք և երրորդ դեմքի –ն վերջավորությունները, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ տախտակով.*

Տախտակ 21

	Բ ա կ ի			Հ ո գ ն ա կ ի		
	Ա. դեմք	*Բ. դեմք*	*Գ. դեմք*	*Ա. դեմք*	*Բ. դեմք*	*Գ. դեմք*
Ներկա	*մ*	*ս*	*ի, #*	*նք*	*ք*	*ն*
Անցյալ	*#*	*ր*	*ր, վ*			
Հրամայական . . .	*—*	*ր, ա*	*—*			

Ինչպես տեսնում ենք, հոգնակի թվում ունենք միայն մեկական վերջավորություն յուրաքանչյուր դեմքի համար բոլոր առաջնային պարզ բայաձևերում, մինչդեռ եզակիում այդպիսի միօրինակության չի հասել մեր լեզուն:

2. **Ժամանակային ցուցիչներ.** *ինչպես ասացինք, ժամանակային ցուցիչներ ունեն միայն անցյալի պարզ բայաձևերը, ուստի և դրանք կարելի է կոչել անցյալի ժամանակային ցուցիչներ: Այդ ցուցիչներն են ի և ա. դրանցից ա ցուցիչն առանում են ներկայի ն և չ հիմքակազմիչով ոչ պատճառականաձև բայերը սահմանական եղանակի անցյալ կատարյալում, ինչպես՝ մոռանալ–մոռաց–ա–նք, մերձենալ–մերձեց–ա–նք, տեսնել–տես–ա–ն, թռչել–թռ–ա–ն և այլն: Մյուս բայերը սահմանականի անցյալ կատարյալում և բոլոր բայերն ըղձականի անցյալում առանում են ի ցուցիչը, ինչպես՝ կարդաց–ի–ն, գրեց–ի–ն, սովորեցր–ի–ն, գրվեց–ի–ն, կարդա–յ–ի–ն, գրե–ի–ն, սովորեցն–ե–ի–ն, գրվ–ե–ի–ն, մոռաս–այ–ի–ն, մերձենա–այ–ի–ն, տեսն–ե–ի–ն, թռչ–ե–ի–ն և այլն: Սահմանական եղանակի անցյալ կատարյալի և ըղձականի անցյալի եզակի երրորդ դեմքում ի ցուցիչը չի լինում, ուստի և այդտեղ էլ ունենում ենք #: Դիմային վերջավորությունների հետ ժամանակային ցուցիչների միացումով առանում ենք անցյալի հետևյալ բաղադրյալ վերջավորությունները.*

	ի *ցուցիչով*	
1-ին դեմք	*ի + # > ի*	*ի + նք > ինք*
2-րդ »	*ի + ր > իր*	*ի + ք > իք*
3-րդ »	*# + ր > ր*	*ի + ն > ին*

Ա ցուցիչով

1-ին դեմք	ա + # > ա	ա + նք > անք
2-րդ դեմք	ա + ր > ար	ա + ք > աք
3-րդ դեմք	ա + վ > ավ	ա + ն > ան

Եզակի երրորդ դեմքի ր վերջավորություն է լինում ըղձականի անցյալում (աղար, գրեր), զրո վերջավորություն՝ ի ցուցիչով բայաձևերի սահմանականի անցյալ կատարյալում (աղաց, գրեց), և վ՝ ա ցուցիչով բայաձևերի անցյալ կատարյալում (մոռաց-ա-վ, տես-ա-վ, թո-ա-վ)։ Քանի որ պատճառականաձև բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքը (սովորեցրեց, հարցրեց) համարել ենք երկրորդային բայահիմք, ապա՝ զրո վերջավորություն պետք է ընդունենք նաև այդ բայաձևի համար։

3. Խոնարհիչներ.— Ինչպես արդեն ասել ենք, խոնարհիչ ենք համարում այն ձայնավորները, որոնք բայահիմքը միացնում են վերջավորությանը. իբրև խոնարհիչներ կարող են հանդես գալ ա, ե և ի ձայնավորները՝ ըղձականի և հրամայականի ձևերում։ Ըղձական եղանակի բոլոր ձևերում, բացի ներկայի եզակի երրորդ դեմքից, վերջավորությունները, բաղադրյալ թե պարզ, միանում են հիմքին ա կամ ե խոնարհիչով, ըստ որում պահպանվում է անորոշի խոնարհիչը, ինչպես՝ գրել-գր-ե-մ, կարդալ-կարդ-ա-մ և այլն։ Ներկայի եզակի երրորդ դեմքն ունի զրո վերջավորություն ա խոնարհիչի հետ և ի վերջավորությունը՝ անորոշի ե խոնարհիչով բայերի հետ, առանց խոնարհիչի պահպանման։ Ըստ այսմ ըղձականի ձևերում ունենում ենք խոնարհիչների ու վերջավորությունների հետևյալ միացությունները (տե՛ս տախտակ № 22)։

Հրամայական եղանակը, որ ունի մեկ ժամանակ և մեկ դեմք, ամենից ավելի խայտաբղետ պատկերն է ներկայացնում կազմության տեսակետից. եզակի թվում ունենք ր, ու կամ # վերջավորություն, իսկ հոգնակիում՝ f: Խոնարհիչներն են. ր վերջավորության հետ՝ ի (գր-ի-ր), # վերջավորության հետ՝ ա (կարդ-ա #), ու վերջավորության հետ՝ # (սովորեցր-ու), f վերջավորության հետ՝ ե (կարդաց-ե-ք, գրեց-ե-ք). մի խումբ բայեր առանց խոնարհիչի են զրո վերջավորությամբ, որով հրամայականի եզակին նույնանում է կատարյալի բայահիմքի հետ (բե՛ր, տե՛ս են)։ Այսպիսով, հրամայականի համար ստանում ենք խոնարհիչների և դիմային վերջավորությունների հետևյալ հնարավոր միացությունները.

Եզակի. 1. ա + # > ա. 2. ի + ր > իր, 3. # + ու > ու 4. # + # > # (կարդա՛, գրի՛ր, սովորեցրո՛ւ, տե՛ս).

Հոգնակի. ե + ք >եք (կարդաց-եք, գրեց-եք, տես-եք)։

	Ներկա			Անցյալ			
	խոնարհիչ	դիմային վերջավ.	բոլորի միացուբ.	խոնարհիչ	ժամանակային ցուցիչ	դիմային վերջավ.	բոլորի միացուբ.
1-ին դ.	ա	մ	-ամ	ա	ի	#	-այի
	է	ժ	-եմ	է	ի	#	-էի
2-րդ դ.	ա	ս	-աս	ա	ի	ր	-այիր
	է	ս	-ես	է	ի	ր	-էիր
3-րդ դ.	ա	#	-ա	ա	#	ր	-ար
	#	ի	-ի	է	#	ր	-եր
1-ին դ.	ա	նք	-անք	ա	ի	նք	-այինք
	է	նք	-ենք	է	ի	նք	-էինք
2-րդ դ.	ա	ք	-աք	ա	ի	ք	-այիք
	է	ք	-եք	է	ի	ք	-էիք
3-րդ դ.	ա	ն	-ան	ա	ի	ն	-ային
	է	ն	-են	է	ի	ն	-էին

Ամփոփելով այս բոլորը, առաջնային պարզ բայաձևերի համար կստանանք խոնարհիչների, անցյալի ժամանակային ցուցիչների և դիմային վերջավորությունների հետևյալ հնարավոր միացությունները (տե՛ս տախտակ № 23)։

Այս բոլորից հետո մնում է ասել, թե պարզ ձևերից ո՛րը ո՛ր բայահիմքից է կազմվում։

		Սահմանական. անցյալ կատարյալ	Ըղձական եղ. ներկա	Ըղձական եղ. անցյալ	Հրամայական եղ.
Եզակի	1-ին դեմք	ա, ի	ամ եմ	այի եի	—
	2-րդ դեմք	իր ար	աս ես	այիր եիր	ա, իր, ո՛ւ
	3-րդ դեմք	#, ավ	ա է	ար եր	—
Հոգնակի	1-ին դեմք	ինք անք	անք ենք	այինք եինք	—
	2-րդ դեմք	իք աք	աք եք	այիք եիք	եք
	3-րդ դեմք	ին ան	ին են	այինի եին	—

Սահմանական եղանակի անցյալ կատարյալը կազմվում է կատարյալի բայահիմքից և ներկայացնում է հետևյալ երեք տիպարները.

I		II		III
կարդաց-ի	գրեց-ի	տես-ա	մոռաց-ա	սովորեցր-ի
կարդաց-իր	գրեց-իր	տես-ար	մոռաց-ար	սովորեցր-իր
կարդաց	գրեց	տես-ավ	մոռաց-ավ	սովորեցր-եց
կարդաց-ինք	գրեց-ինք	տես-անք	մոռաց-անք	սովորեցր-ինք
կարդաց-իք	գրեց-իք	տես-աք	մոռաց-աք	սովորեցր-իք
կարդաց-ին	գրեց-ին	տես-ան	մոռաց-ան	սովորեցր-ին

Երրորդ տիպարի առանձնահատկությունն այն է, որ եզակի երրորդ դեմքը ներկայացնում է կատարյալի երկրորդային բայահիմքը, մինչդեռ մյուս ձևերը կազմվում են առաջնային բայահիմքից. այդպես են ոչ միայն պատճառականաձև բայերը, այլև կատարյալի անվերջավոր բայահիմք ունեցողները, եթե նրանք ստանում են -ի ժամանակային ցուցիչը (տվի, տվիր, տվեց,

տվինք, տվիք, տվին), սակայն այդ բայերի այս կարգի խոնարհումը հատուկ է ժողովրդական-խոսակցական լեզվին և մեր գրական լեզվի արդի համակարգի համար օրինաչափություն չի կարելի համարել, մինչդեռ պատճառականաձև բայերինը հաստատուն օրինաչափություն է։

Ըղձական եղանակի ձևերը կազմվում են անկատարի բայահիմքից՝ բոլոր բայերի համար անխտիր, և ներկայացնում են երկու տիպար՝ խոնարհիչների համաձայն.

կարդամ, կարդաս...	*գրեմ, գրես...*
կարդայի, կարդայիր...	*գրեի, գրեիր...*

Հրամայականի եզակին կազմվում է ա և ե խոնարհման պարզ բայերի ներկայի բայահիմքից (կարդալ—կարդա՛, գրել—գր-ի՛ր), իսկ մյուս բոլոր բայերի՝ կատարյալի բայահիմքից (օր. սովորեցրո՛ւ, մոռացի՛ր, գտիր). ա խոնարհիչով ղրո վերջավորություն ունեն ա խոնարհման պարզ բայերը, առանց խոնարհիչի ու վերջավորություն ունեն պատճառականաձև բայերը, ի խոնարհիչով ր վերջավորությունը՝ բոլոր մնացյալ բայերը, բացի նրանցից, որոնց հրամայականի եզակին նույնանում է կատարյալի բայահիմքին (տես, բեր ևն)։ Այս բոլորից ստանում ենք հետևյալ տիպարները.

1. *Անկատարի բայահիմք (աբ)+ ա խոնարհիչ (խ)+ # վերջավորություն (վ) (կարդա)—աբ-ա-#*
2. *Անկատարի բայահիմք (աբ) + ի խոնարհիչ (խ) + ր վերջավորություն (գրիր)—աբ-խ-ր*
3. *Կատարյալի բայահիմք (կբ) + ի խոնարհիչ (խ) + ր վերջավորություն (մոռացիր)—կբ-խ-ր*
4. *Կատարյալի բայահիմք (կբ) + # խոնարհիչ (խ) + ու վերջավորություն (սովորեցրու) կբ-ու*
5. *Կատարյալի բայահիմք (կբ) + # խոնարհիչ (խ) + # վերջավորություն (տես) կբ*

Հոգնակի թիվը կազմվում է բոլոր կարգի բայերի կատարյալի բայահիմքից (կարդացեք, գրեցեք, մոռացեք, սովորեցրեք, տեսեք). ե խոնարհման բայերը խոսակցական լեզվում ունեն նաև անկատարի հիմքից կազմվող ձև (գրեք, գործեք ևն), որով հրամայականի հոգնակին նույնանում է ըղձականի ներկայի հետ. այդ ձևը թափանցել է գրական լեզվի մեջ և տարածվելու հակում ունի։

Երկրորդային պարզ բայաձևերը կազմվում են ըղձականի ձևերից՝ պիտի, կ եղանակիչների կամ չ ժխտականի հարադրությամբ. պիտի եղանակիչով կազմվում է հարկադրական եղանակը (պիտի

կարդամ, պիտի կարդայի, պիտի գրեմ, պիտի գրեի)։ եղանակիչը, իբրև կանոն, նախադաս է. պիտի եղանակիչը կարող է փոխարինվել պետք է եղանակիչով։

Կ եղանակիչով կազմվում է ենթադրական եղանակը՝ ըղձականի հարադրությամբ (կկարդամ, կգրեմ)։

Չ ժխտականով կազմվում են ըղձական և հարկադրական եղանակների բացասականը (չկարդամ, չկարդայի, չպիտի կարդամ, չպիտի կարդայի) և սահմանականի անցյալ կատարյալի բացասականը (չկարդացի, չգրեցի)։ Նույն եղանակիչով կազմվում է նաև օժանդակ (էական) բայի ներկայի ու անցյալի ժխտականը, որ բոլոր բաղադրյալ ձևերի բացասական (ժխտական) խոնարհման բաղադրիչն է հանդիսանում։ Օժանդակ բայի ժխտական ձևերն են. ներկա՝ չեմ, չես, չի (չէ), չենք, չեք, չեն. անցյալ անկատար՝ չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին։ Ներկայի եզակի երրորդ դեմքի չի ձևը գործածվում է բայի բաղադրյալ ժամանակային ձևերում, իբրև կանոն նախադաս է և չի կարող փոխարինվել չէ ձևով (չի գրում, չի գրելու, չի գրել, չի գրի). չէ ձևը կարող է գործածվել որպես բաղադրյալ ստորոդյալի հանգույց, իբրև կանոն հետադաս է և ազատորեն կարող է փոխարինվել չի ձևով (աշակերտ չէ—աշակերտ չի, վատ չէ—վատ չի, անհրաժեշտ չէ—անհրաժեշտ չի, քնած չէ—քնած չի)։

Հրամայական եղանակի ժխտականը, որ կոչվում է արգելական, կազմվում է երկու ձևով. 1) մի՛ արգելական մասնիկով, որ դրվում է հրամայականի դրական ձևերի վրա և նախադաս է. մի՛ կարդա, մի՛ գրիր, մի՛ սովորեցրու, մի՛ կարդացեք, մի՛ գրեցեք, մի՛ սովորեցրեք են, 2) ժխտական դերբայի ու նախադաս արգելական մասնիկի հարադրությամբ, որ հոգնակիի համար ստանում է երկրորդ դեմքի f վերջավորությունը. մի՛ կարդա, մի՛ գրի, մի՛ մոռանա, մի՛ սովորեցնի, մի՛ տեսնի, մի՛ կարդա, մի՛f գրի, մի՛f մոռանա, մի՛f սովորեցնի, մի՛f տեսնի և այլն։

Այս երկրորդ ձևն ավելի ժողովրդական-խոսակցական բնույթ ունի, բայց թափանցել է գրական լեզվի մեջ և հետզհետե տարածվում է՝ ընդհանրանալու ձգտումով։

Ինչպես մի՛ արգելականը, այնպես էլ օժանդակ բայի ժխտական ձևերը, որպես բացասական բայաձևերի նախադաս բաղադրիչ, շեշտն իրենց վրա են կրում, իսկ խոնարհվող բայը զրկվում է շեշտից (համմտ. գրի՛ր, մի՛ գրիր, կկարդա՛մ, չե՛մ կարդա և այլն), ըստ որում ժխտականների շեշտը շատ ավելի ուժգին է, քան սովորական բառային շեշտն է։

6. ԵՂԱՆԱԿՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Ընդունված է, որ ժամանակակից հայերենն ունի հինգ եղանակ. սահմանական, ըղձական, հարկադրական, ենթադրական կամ պայմանական, հրամայական։

Սահմանական եղանակի ինն ժամանակներից երկուսը (հարակատար ներկա և անցյալ), ինչպես ցույց տվեցինք, եղանակային ձևեր չեն, ուստի և մնում է յոթը։ Այդ ձևերից վեցը երեք կերպերի հակադրությունն են ներկայացնում ներկա և անցյալ ժամանակների հարաբերությամբ. այսպես՝

Տախտակ 24

Կերպեր	Ժամանակներ	
	Ներկա	Անցյալ
շարունակական (անկատար դերբայ)	(կարդում) եմ, ես, է··· (գրում) եմ, ես, է···	(կարդում) էի, էիր, էր··· (գրում) էի, էիր, էր···
կատարելի (ապառնի դերբայ)	(կարդալու) եմ, ես, է··· (գրելու) եմ, ես, է···	(կարդալու) էի, էիր, էր··· (գրելու) էի, էիր, էր···
կատարյալ (վաղակատար դերբայ)	(կարդացել) եմ, ես, է··· (գրել) եմ, ես, է···	(կարդացել) էի, էիր, էր··· (գրել) էի, էիր, էր···

Հակադրությունն այնքան օրինաչափ է ու կանոնավոր, որ ավելացնելու ոչինչ չի մնում։

Հակադրությունների այդ համակարգից դուրս է մնում անցյալ կատարյալը, որ ցույց է տալիս կատարյալ (ավարտված) գործողություն անցյալ ժամանակում. ըստ գործողության վիճակի անցյալ կատարյալն, ուրեմն, համընկնում է կատարյալ կերպի հետ. բայց վերի եռակի հակադրության մեջ բացի գործողության վիճակից (կերպից) կա նաև մի այլ բան՝ տևականություն, կամ շարունակականության, որ արտահայտվում է օժանդակ բայով. կարդացել եմ նշանակում է կարդալու գործողությունը ավարտած վիճակում եմ, այդպես էլ՝ կարդացել էի, կարդում եմ և այլն, մինչդեռ կարդացի ցույց է տալիս պարզապես ավարտած գործողություն անցյալում, առանց տևականության հատկանիշի։ Ըստ այսմ, բաղադրյալ ձևերը արտահայտում են տևականություն, կամ շարունակականություն, իսկ անցյալ կատարյալը՝ պարզապես կատարված գործողություն, և դրան համապատասխան էլ կկոչենք պարզ կերպ, քննությունով

Մ. Աբեղյանի անվանումը։ Բաղադրյալ ձևերի այդ շարունակականությունը, որպես վիճակ, պայմանավորված է օժանդակ բայի կերպով. ինչպես գիտենք, օժանդակ բայի ներկան և անկատարը (եմ, էի) շարունակական կերպ ունեն։ Դրա հետևանքով բուն գործողությունը ինչպիսի կերպով էլ արտահայտված լինի, վերագրվում է գործողին որպես որոշ ժամանակի՝ ներկայի կամ անցյալի շարունակական հարաբերություն. այսպես՝ գրելու եմ նշանակում է «ես այժմ ունեմ գրելու գործողությունը որպես կատարելի գործողություն», գրել եմ նշանակում է «գրելու գործողությունն ավարտած վիճակում եմ» և այլն։ Ըստ այսմ, բաղադրյալ ձևերի մեջ ունենք բաղադրիչների (դերբայի և օժանդակ բայի) կերպային զուգադրություն կամ հակադրություն. գրում եմ, գրում էի ձևերում երկու բաղադրիչներն էլ ունեն շարունակական (կամ անկատար) կերպ, ուստի և առկա է կերպերի զուգադրություն, մինչդեռ գնացել եմ, գնացել էի, գնալու եմ, գնալու էի ձևերի առաջին զույգում ունենք կատարյալ—անկատար, երկրորդում՝ կատարելի—անկատար կերպերի հակադրություն։ Օժանդակ բայի կերպը և դրանով ստեղծվող շարունակական վիճակը հնարավորություն են տալիս բաղադրյալ ձևերի հետ գործածելու դեռ, դեռևս, առայժմ բառերը (դեռևս չի եկել, դեռ գրում է, առայժմ չի գալու), մինչդեռ անցյալ կատարյալի հետ դրանք գործածելի չեն. այն դեպքերում, երբ դրանք գործածվում են անցյալ կատարյալի հետ, նրան հաղորդում են շարունակականի իմաստ, կամ այլ կերպ՝ անցյալ կատարյալը գործածվում է վաղակատարի առումով (հմմտ. դեռ չեկա՞վ=դեռ չի՞ եկել) կամ իմաստային այլևայլ նրբերանգներով (հմմտ. առայժմ գրեց, բայց թե ինչ դուրս կգա, հայտնի չէ)։

Մեր գրական լեզվի խոնարհման համակարգին նվիրված ուսումնասիրությունների մեջ շատ է արծարծվել ենթադրական եղանակի հարցը, և ճիշտ կերպով կասկածի տակ է առնվել այդ եղանակի գոյությունը։ Նրանք, որ գտնում են, թե կգամ, կգայի... ձևերն իբրև ենթադրական կամ պայմանական եղանակ պետք է դիտել, ելնում են այն փաստից, որ բարդ ստորադասական նախադասությունների մեջ որևէ պայման արտահայտող երկրորդական նախադասության հետ գլխավոր նախադասության ստորոգյալը մեծ մասամբ լինում է այդ ձևով (հմմտ. եթե ուզի, կգա, եթե գամ, կխոսենք ևն)։ Այս մոտեցումը, սակայն, չի կարելի արդարացնել. բայական եղանակները որոշելու համար չի կարելի իբրև հիմք ընդունել միայն մի կարգի կիրառությունը և այն էլ ժամանակների

որոշակի համաձայնություն պահանջող նախադասությունների մի տիպի մեջ: Ամեն մի բայաձևի համար իբրև որոշիչ տվյալ պետք է վերցնել անկախ գործածությունը: Հենց այդ անկախ գործածությունը ցույց տալու համար մենք թույլ ենք տալիս մեզ այս դեպքում մի քանի ընդարձակ մեջբերումներ կատարել.

Վ. Տերյան

Դու կգաս ու կրկին հեքյաթով կդյութես,
Լուսերես կցրես մառախուղն իմ հոգուս...
Կփարվես մեղմորեն, կփռես, կվառես անթառամ՝
Կուսական աշխարհիդ ծաղիկներն անծանոթ,
Կնստենք իրար մոտ, և հեռու կլինի առօրյան...
Սև թախիծն՝ իմ սրտից, մութ խոհերն՝ իմ հոգուց
կգնան,
Լույսիդ դեմ կցրվեն ըսավերները մռայլ,
Տառապանքը քեզ հետ քաղցր՝ հուշ, և խոսքերը՝
խորհուրդ կդառնան, կճագնեն ուրիշ փայլ...[1]
Նորից կթողնեմ քաղաքն աղմկոտ
Ու համփա կրնկնեմ հավետ միայնակ.
Անխոս կմարի երեկոն ազոտ,
Կպառկեմ դաշտում կանաչ ծառի տակ[1]...

և այսպես՝ ամբողջ բանաստեղծությունը, որի մեջ գործածվում են. կմոռանամ, կզգամ, կբերի, կլսեմ, կգրկեմ, կճեկեկամ, կերազեմ, կխնդրեմ, կխմեմ, կճնեմ:

Ե. Չարենց

Մենք դեռ կգանք.
Մեր բանակը կանցնի դեռ աշխարհքով,
Դեռ կգա Իլյիչը,
Որ մանի համաշխարհային Սովնարկոմ[2]:
Կանցնենք մենք էլ այս աշխարհում,
Ինչպես ծովում՝ ջրի կաթիլ,
Ծուխ կդառնա ամեն գարուն...[2]
...Կելնեն շքեղ և ուղիղ
Երգի շյուղեր կենդանի...
Կապրի հանճարը քո չինջ...

---

1 Վ. Տերյան, Բանաստեղծություններ, Երևան, 1940, էջ 179, 15:
2 Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954, էջ 62, 212:

Կխաղաղվի *վերջապես*
Խոնջած աճյունը քո հար...
Կապրի *հոգիդ հմայող...*[1]

Այսպիսի ամբողջական հատվածներ կարելի էր շատ բերել. սակայն այսքանը բավական է մեր վերլուծությունների համար։ Այդ հատվածներից դատելով, հեշտ է եզրակացնել, որ ընդգծված բայաձևերը ոչ պայմանական, այլ միանգամայն հաստատապես կատարելի գործողություն են արտահայտում։ Այնուհետև. այդ բոլոր ձևերը կարող ենք փոխարինել բաղադրյալ ապառնիով, ինչպես՝ Դու գալու ես ու կրկին դյութելու ես, փարվելու ես, փռելու ես *և այլն. այս դեպքում իմաստը բոլորովին չի փոխվում, բայց գործողությունը դիտվում է իբրև անխուսափելիորեն կատարելի, և դա միանգամայն հասկանալի է. բաղադրյալ ձևերն, ինչպես ասացինք, ցույց են տալիս մի կողմից գործողության վիճակը (կերպը), մյուս կողմից՝ առարկայի վիճակը տվյալ ժամանակում. ինչպես որ եկել եմ նշանակում է, թե ես այժմ գործողությունը ավարտած վիճակի մեջ եմ, գալիս եմ՝ գործողությունը կատարելու վիճակի մեջ, այդպես էլ գալու եմ նշանակում է, թե ես այժմ գործողությունը ապագայում կատարելու վիճակի մեջ եմ, այսինքն՝ գործողությունը դիտվում է որպես նախորոշված, հաստատապես կատարելի գործողություն, ուստի և բնականաբար կատարելի գործողությունն էլ անխուսափելի է, մինչդեռ կգամ բայաձևի մեջ այդ անխուսափելիությունը չի արտահայտվում, այլ պարզապես շեշտվում է գործողության կատարելի լինելը։ Այս բանը ավելի լավ երևում է հետևյալ օրինակների մեջ.* եթե ազատ լինեմ, գալու եմ, եթե գամ, տեսնելու եմ—եթե ազատ լինեմ, կգամ. եթե գամ, կտեսնեմ: *Այս նախադասությունների մեջ կատարելի գործողությունը կախված է որոշ պայմանից, և այդ պայմանականությունը չի արգելում, որ* գալում եմ, տեսնելու եմ *ձևերը փոխարինվեն* կգամ, կտեսնեմ *ձևերով. երկու ձևերի տարբերությունը դարձյալ այն է, որ մեկում անխուսափելիություն կա, մյուսում՝ ոչ։ Այս հանգամանքը մեզ, ինչպես և ուրիշներին, առիթ է տվել ենթադրականը դիտելու որպես սահմանականի մի ուրույն ձև՝ իմաստային որոշ երանգավորումով*[2]: *Բայց եղանակների իմաստային վերլուծությունը մեզ այժմ*

1 Նույն տեղում, էջ 518։


2 Տե՛ս Ս. Աբրահամյան, Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը, ԳԱՏ, 1953, № 9. Է. Բ. Աղայան, Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, ՊԲՀ, 1963, № 3. Իվ. Խ. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, ԼՈՀ, 2, 1964 և այլն։

բերում է այլ եղրակացության։ Ասացինք, որ սահմանական եղանակի ապառնին ցույց է տալիս կատարելի գործողություն ներկայի և անցյալի կամ իբրև այդպիսին ընդունվող որոշ ժամանակակետի հարաբերությամբ. դա նշանակում է, թե այս դեպքում մենք գործ ունենք իբրև օբյեկտիվ իրողություն դիտվող գործողությունը՝ կատարելիության կերպային բնորոշումով, որ վերագրվում է ներկա կամ անցյալ ժամանակներին։ Ենթադրական եղանակը գործողությունը ներկայացնում է որպես կանխատեսում, նախագուշակում, կանխադրում. իմաստային այս յուրահատկությունը ցայտուն կերպով արտահայտվում է վերը բերված հատվածներում։ Սրանից ելնելով, մենք գտնում ենք, որ ա) ենթադրական եղանակին պայմանականության եղանակային իմաստ վերագրելը ճիշտ չէ, պայմանականությունը այդ եղանակի շարահյուսական մասնավոր իմաստն է, որը կապված է շարահյուսական որոշակի կառուցվածքի հետ. բ) ենթադրական եղանակը պետք է բնութագրել գործողության կանխադրման կամ նախատեսման վերաբերական իմաստով։ Այս տեսակետից, գիտականորեն ավելի ճիշտ կլիներ ենթադրականի փոխարեն գործածել կանխադրական (պռոտուպատիվ) անվանումը, բայց մենք չենք ուզում փոխել արդեն երկարամյա գործածություն ունեցող տերմինը և միայն դրա սահմանումն ենք համապատասխանեցնում մեր բնութագրությանը։

Այս ամենը նկատի ունենալով՝ փորձենք բնութագրել եղանակներից յուրաքանչյուրի արտահայտած վերաբերական ընդհանուր իմաստը՝ ընդունելով նախապես, որ դրանցից ամեն մեկը խոսքի մեջ կարող է ունենալ զանազան մասնավոր դրսևորումներ, փոխանցումներ նախադասության որոշակի կառուցվածքներում (հմմտ., օրինակ, պայմանականությունը սահմանական եղանակի ձևերով արտահայտված՝ հետևյալ տիպի նախադասություններում։ **Եթե դու գնում ես, ես էլ եմ գնում**)։ *Գիտենք, որ եղանակը արտահայտում է գործողության իրական կամ ոչ իրական լինելը որպես իրողության հաստատում կամ ժխտում (բացասում)՝ խոսողի հայեցակետով։ Դրան համապատասխան բոլոր եղանակները կարելի է բաժանել երկու կարգի. ա) իրական գործողություն (իրողություն, վիճակ և ն)— անիրական գործողություն։ Առաջինը արտահայտվում է սահմանական եղանակով, ըստ որում իրական լինելը չի նշանակում օբյեկտիվորեն իրական կամ ճշմարիտ լինելը, այլ այն, որ խոսողը ներկայացնում է գործողությունն իբրև իրողություն։ Ըստ այսմ, սահմանական եղանակով խոսողի վերաբեր-*

մունքը արտահայտվում է իբրև գործողության հաստատում կամ բացասում (ժխտում), մինչդեռ մյուս եղանակներով՝ որպես իղձ, հրաման, հորդոր, ենթադրություն, հարկադրանք։ Այսպիսով, սահմանական—ոչ սահմանական եղանակների բնութագրությունը կատ իական—ոչ իական *հակադրությունը. դա հավասարական (էկվիպոլենտ) հակադրություն է, որի երկու անդամներն էլ նշույթավորված են։*

Անիրական եղանակները ցույց են տալիս, որ գործողությունը իրական չէ, չի համապատասխանում իրականության, տեղի չի ունենում ոչ իբրև հաստատում, ոչ իբրև բացասում, այլ ներկայացվում, բնութագրվում է որպես խոսողի ցանկություն, հրաման, նախատեսում, կամ կանխադրում, հարկադրանք։ Սրան համապատասխան էլ ունենք. ա) գործողությունը անիրական է, բայց ցանկալի—ըղձական, բ) գործողությունը անիրական է, բայց դիտվում է իբրև խոսողի թելադրանք, հրաման կամ հորդոր (խնդրանք)—հրամայական, գ) գործողությունը անիրական է, բայց դիտվում է որպես հարկադրանք, ստիպողական անհրաժեշտություն—հարկադրական, դ) գործողությունը անիրական է, բայց դիտվում է իբրև կանխադրում, նախատեսում, կանխազուշակում—ենթադրական։ Այս չորս կարգի անիրականներից առաջին երկուսը միավորվում են մեկ ընդհանուր հատկանիշով. երկուսն էլ խոսողի համար ցանկալի են, նրանք արտահայտում են խոսողի կամքը որպես ցանկություն, իղձ կամ թելադրանք, մինչդեռ երրորդն ու չորրորդը խոսողի կամքը չեն արտահայտում, այլ՝ նախատեսում կամ անխուսափելի անհրաժեշտություն, երբեմն նույնիսկ խոսողի կամքին հակառակ (հմմտ. չեմ ուզում, բայց ճարս ի՞նչ՝ պիտի գամ)։ Ուրեմն այդ երկու զույգերը կարող ենք բնութագրել որպես կամային—ոչ կամային *բնույթով ներկայացվող անիրական գործողություններ, դարձյալ իբրև հավասարական հակադրություն, որի երկու անդամներն էլ նշույթավորված են։ Այսպիսով, անիրական եղանակների համար կունենանք հետևյալ կարգի հակադրությունները.*



Եղանակների արտահայտած քերականական իմաստները՝ վերը շարադրվածից ելնելով, կարելի է ներկայացնել իմաստային հատկանիշների հակադրությունների հետևյալ տախտակով։

Իմաստային հատկանիշներ	Ժխմ.	Ըղձ.	Հրմ.	Հրկդ.	Ենթդ.
1. Իրական (Ի) — անիրական (Ի̄)	+	—	—	—	—
2. կամային (Կ) — ոչ կամային (Կ̄)	0	+	+	—	—
3. հրաման (Հ) — ցանկություն (Ց[1])	0	—	+	0	0
4. կանխագրում (Ա) — հարկադրանք (Դ)	0	0	0	—	+

Տախտակի հիման վրա եղանակային իմաստները կարող ենք ներկայացնել հետևյալ ձևով.

1. Ժամանակական եղանակ—Ի
2. Ըղձական եղանակ—Ի̄Կ3
3. Հրամայական եղանակ—Ի̄Հ̄
4. Հարկադրական եղանակ—Ի̄Կ̄Ա
5. Ենթագրական եղանակ—Ի̄Կ̄Դ

Բոլոր բաղադրյալ ժամանակներն արտահայտում են բուն գործողության վիճակը (= կերպ) ժամանակային հարաբերությամբ, այսինքն՝ բաղադրյալ ժամանակների մեջ օժանդակ բայն առարկային վերագրում է տվյալ գործողությունը տվյալ կերպով՝ ժամանակային հարաբերությամբ, ինչպես որ բաղադրյալ ստորոգյալի հանգույցն էլ տվյալ հատկանիշը վերագրում են ենթակային ժամանակի հարաբերությամբ։ Պարզ ժամանակներն արտահայտում են գործողության վիճակը (կերպը) ժամանակային հարաբերությամբ, դիմային վերջավորությունների ու բայահիմքերի միջոցով։ Հակառակ բաղադրյալ ժամանակների, որոնք դերբայների օգնությամբ արտահայտում են գործողության երեք կերպ ներկա և անցյալ ժամանակների հարաբերությամբ, պարզ ժամանակներն ունեն երկու կերպ՝ կատարյալ և կատարելի, առաջինը՝ միայն անցյալի, երկրորդը՝ անցյալի ու ներկայի հարաբերությամբ։ Այստեղ պակասում է կատարվող (շարունակական) կերպը, որ սակայն ունեն մի քանի պակասավոր բայեր (եմ..., կամ..., դիտեմ...)։ Թե՛ պարզ և թե՛ բարադրյալ ժամանակները չեն արտահայտում կերպի հարաբերությունը ապառնի ժամանակի հետ. դրա համար օգտագործվում են

1 Սկզբնատառերի նույնացումից խուսափելու համար (իրական, իղձ) «իղձ»-ը փոխարինում ենք «ցանկություն»-ով։

երկրորդական բաղադրյալ ժամանակները, որոնք քննության առարկա չենք դարձնում։

Ամփոփելով բայի և խոնարհման ձևերի վերլուծությունները՝ կարող ենք ներկայացնել բայաձևերի կառուցվածքները տարբեր մակարդակներում՝ ըստ հետևյալ պայմանական արտահայտությունների։

Ա—անորոշ դերբայ
Բ—բայի բացարձակ հիմք
Բո—բայի բառահիմք
Դ—դերբայ
ե—եղանակիչ
Ը—ըղձական եղանակի բայաձև
ժ—ժխտական
լ—լծորդ
խ—խոնարհիչ
կ—կերպածանց
Հ—բայահիմք
Հբ—հրամայական եղանակի բայաձև
Ձ—հիմքակազմիչ (ձևույթ)
Սկ—կրավորական սեռածանց
Սպ—պատճառական սեռածանց
Վ—վերջավորություն
Յ—անցյալի ժամանակային յուցիչ
0—օժանդակ բայ
ա—անցյալի
ն—ներկայի
կ—կատարյալի
չ—անկատարի (շարունակականի)
դ—դերբայական

Ա. ԲԱՅԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

1. Բո-խ-վ. — կարդ-ա-լ, գր-ի-լ
2. Բո-լ-Ձշ-խ-Վդ. — մոռ-ա-ն-ա-լ, մոռ-ե-ն-ա-լ
3. Բո-Ձշ-խ-Վդ. — տես-ն-ե-լ, Թռ-չ-ե-լ
4. Բո-կ-ի-Վդ.—կոտր-ատ-ե-լ, կոտր-տ-ե-լ, բոց-կլտ-ա-լ
5. Կ-Ա.— ներ-թափանցել, վեր-ընթերցել
6. Բո-լ-Սպ-Ձշ-խ-Վդ. — սովոր-ե-ց-ն-ել-, կարդ-ա-ց-ն-ե-լ

7. Հկ-Սպ-Զշ-Խ-Վդ.— փախ-ց-ն-ե-լ
8. Հշ-Սկ-ԽՎդ.— սիր-վ-ե-լ, գտն-վ-ե-լ
9. Բռ-Սպ-Սկ-Խ-Վդ.— կարդ-ա-ց-վ-ե-լ
10. Հկ-Սպ-Զշ-Խ-Վդ.— փախ-ց-ն-ե-լ

Բ. ՀԻՄՔԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

1. Դերբայական հիմք. անորոշ դերբայը՝ վերի բոլոր ձևատիպարներով
2. Անկատարի բայահիմք
   ա) Բ- #.— կարդ-
   բ) Բ-Լ-Զշ.— մոռ-ա-ն-, գիտ-ե-ն-
   գ) Բ-Զշ.— տես-ն-, փախ-չ-, սովորեց-ն-,
3. Կատարյալի բայահիմք
ա) Բ-Լ-Զկ.— կարդ-ա-ց-, մոռ-ա-ց, մոտ-եց-
   բ) Բ- #.— տես-, փախ-
   գ) Բ-Զկ.— սովորեց-ր-
դ) Հկ-Լ-Զկ.— սովոր-եցր-ե-ց-

Գ. ՁԵՎԱԿԱԶՄՄՈՒԹՅՈՒՆ

1. Դերբայներ

ա) Անորոշ դերբայը՝ վերի բոլոր ձևատիպարներով, որպես էլակետային ձև, կարելի է ներկայացնել մեկ բանաձևով՝ Բ-Լ-Վ, որի մեջ լծորդը (Լ) կարող է լինել ա կամ ե (կարդ-ա-լ, գր-ե-լ ևն)։

բ) Անկատար դերբայ. Հշ-Վդ {ում} կարդ-ում, գր-ում, տեսն-ում ևն։

գ) Ապառնի դերբայ. Հդ-Վդ {ու} կարդալ-ու, գրել-ու ևն։

դ) Վաղակատար դերբայ

1. Հկ-Վդ {ել} կարդաց-ել, մոռաց-ել, սովորեցր-ել, տես-ել
2. Հշ-Վդ {ել} գր-ել, գրվ-ել, կարդացվ-ել։

ե) Ժխտման դերբայ

1. Հշ-խ- # կարդ-ա, մոռան-ա
2. Հշ-Վդ {ի} գր-ի, տեսն-ի, սովորեցն-ի, գրվ-ի։

զ) Ենթադրական դերբայ

1. Հշ-Վդ {ող} գր-ող, գրվ-ող, սովորեցն-ող, տեսն-ող
2. Հկ-Վդ {ող} կարդաց-ող, մոռաց-ող։

է) Հարակատար դերբայ

1. Հկ-Վդ{ած},կարդաց-ած, մոռաց-ած, սովորեցր-ած, տես-ած

2. Հշ-Վդ {ած} գր-ած, գրվ-ած։

ը) Կատարելի դերբայ. Հդ-Վդ {իք} կարդալիք, գրելիք։

թ) Ժամանակային դերբայ. Հդ-Վդ {ի՞ս} կարդալիս, գրելիս։

(ժ) Ձևի դերբայ. Հդ-Վդ {ենն} կարդալենն, գրելենն)։

Այս բոլորը կարելի է վերածել հինգ ընդհանուր ձևատիպարային բանաձևի.

Հշ-խ-Վդ (ա), Հշ-Վդ (բ, դ², ե², զ¹, է²), Հշ-խ- # (ե¹)

Հկ-Վդ (դ¹, զ², է¹), Հդ-Վդ (գ, ը, թ, ժ)։

2. Առաջնային պարզ բայաձևեր

ա) Հշ-խ-Վ.— կարդ-ա-մ, գր-ե-մ

բ) Հշ-Վ.— գր-ի, սովորեցն-ի, տեսն-ի, գրվ-ի

գ) Հշ-ե-Ց-Վ.— կարդ-ա(յ)-ի-նք, գր-ե-ի-նք

դ) Հշ-ե-Վ.— կարդ-ա-ր, գր-ե-ր

ե) Հշ-Ց-Վ.— կարդաց-ի-նք, գրեց-ի-նք, սովորեցր-ի-նք

զ) Հկ- # #.— կարդաց, գրեց

է) Հկ-լ-Ձկ- #.— կարդացր-ե-ց, սովորեցր-ե-ց

ը) Հշ-խ-Վ.— գր-իր

թ) Հկ-խ-Վ.— մոռաց-ի-ր, գտ-ի-ր, փախ-ի-ր

ժ) Հկ- # - Վ.— սովորեցր-ու

ժա) Հկ- # - #.— տես

3. Բկրորդային պարզ բայաձևեր

ա) Ե-Ը.— պիտի կարդամ, պիտի կարդայի, կկարդամ, կկարդայինն

բ) Ժ-Ը.— չկարդամ, չկարդայինն

գ) Ժ-Հր.—մի՛ կարդա, մի՛ կարդացեք

դ) Ժ-ե-Ը.— չպիտի կարդամ, չպիտի կարդայի

ե) Ժ-Օ.— չեմ, չես ևն։

4. Բաղադրյալ ձևեր. կարելի է ներկայացնել վեց բանաձևով.

ա) Դ-Օն.— կարդում եմ, կարդալու եմ, կարդացել եմ...

բ) Դ-Օա.— կարդում էի, կարդալու էի, կարդացել էի...

գ) Ժ-Օն-Դ.— չեմ (կարդում,—կարդալու, կարդացել,—կարդա)...

դ) Ժ-Օա-Դ.— չէի կարդում՝ կարդալու՝ կարդացել՝ կարդա...

ե) Ժ-Վ-Դ.— մի՛-ք կարդա, մի՛-ք գրի ևն։

Եթե այժմ այս բոլորի համաձայն վերը բերված կարդացվեցիճ ձևը վերլուծենք, կստանանք հետևյալ բանաձևը. Բռ-լ-Սպ-Սկ-Լ-Ձկ-

Յ-վ, այսինքն՝ կարդ- (բառահիմք) -ա- (լծորդ) -ց- (պատճառականի սեռածանց) -վ- (կրավորականի սեռածանց) -ե- (լծորդ) -ց- (կատարյալի հիմքակազմիչ) -ի- (ժամանակային ցուցիչ) -ն- (դիմային վերջավորություն)։ Այդ նույն ձևը, սակայն, կարող ենք ներկայացնել նաև մի այլ բանաձևով. ՀԿ-Յ-Վ (կատարյալի բայահիմք—ժամանակային ցուցիչ—դիմային վերջավորություն)։ Այս տարբեր բանաձևերը պայմանավորված են այն բանով, թե մենք ինչ մակարդակի վրա ենք կատարում վերլուծությունը։ Այդ մակարդակներն են.

1. Ձևույթաբանական (մորֆեմատիկ). *երբ վերլուծությունը նպատակ ունի բացահայտել տվյալ լեզվաբանական միավորի մեջ եղած բոլոր ձևույթները։ Այս կարգի վերլուծությունն էլ կարող է լինել ընդհանուր և մասնավոր. ընդհանուր է, երբ անխտիր բոլոր ձևույթներն են առանձնացվում, և մասնավոր է, երբ տվյալ համակարգին հատուկ ձևույթներն են առանձնացվում. օրինակ՝ անկայունացնել բայն առաջին դեպքում կվերլուծենք ան-կայ-ուն-ա-ց-ն-ե-լ ձևույթներին, իսկ երկրորդ դեպքում, միայն բայական համակարգը նկատի ունենալով, կվերլուծենք՝ անկայուն-ա-ց-ն-ե-լ։ Այստեղ մեր նպատակը բայի կառուցվածքային վերլուծությունն է, ուստի և պետք է դիմենք մասնակի ձևույթաբանական վերլուծության։ Ըստ այսմ՝ կարդացվեցին ձևը կներկայանա երկրորդ բանաձևով։*

2. Բայակազմական, *որի նպատակն է առանձնացնել տվյալ տեսակի բայի կազմության մեջ մտնող բաղադրիչները. այսպիսի վերլուծության համար պետք է վերցնել բայի ելակետային (բառարանային) ձևը, մեր օրինակի համար՝ կարդացվել, որ կներկայանա Բռ-Լ-Սպ-Սվ-Խ-Վդ (բառահիմք—լծորդ—պատճառականի սեռածանց—կրավորականի սեռածանց—խոնարհիչ—դերբայական վերջ.)։*

3. Հիմքակազմություն, *որի նպատակն է գտնել տվյալ ձևի բայահիմքը և նրա բաղադրիչները, մեր օրինակի բայահիմքն է կարդացվեց-, որի բանձևն է՝ Բ-Լ-ՋԿ (բացարձակ հիմք—լծորդ—կատարյալի հիմքակազմիչ)։*

4. Ձևակազմություն, *որի նպատակն է բացահայտել տվյալ բայաձևի բաղադրիչները. մեր օրինակի (կարդացվեցին) բանաձևը կլինի ՀԿ-Յ-Վ (կատարյալի բայահիմք—ժամանակային ցուցիչ—դիմային վերջավորություն)։*

Բ Ա Ռ Ա Ց Ա Ն Կ

Այլակերտ — аллогенный
Այլակերտ մակարդակներ — аллогенные уровни
Այլակերտություն — аллогенность
Անայլակ — инвариант
Անայլակություն — инвариантность
Աննշույթ — немаркированный
Ասույթ — высказывание
Արժութային — валентный, релевантный
Արժութայնություն — валентность, релевантность
Արժույթ — ценность, валентность
Բաժանական — диззъюнктный
Բազադրական — интегративный
Բազադրույթ — интегрант
Բաշխական, տես Բաժանական
Բաշխում — дистрибуция
Բաշխումային — дистрибутивный
Բառաձև — словоформа
Բառույթ — лексема
Գերբառաձև — архисловоформа
Գերբառույթ — архилексема
Գերիմաստույթ — архисема
Գերխոսքամաս — архи-часть речи
Գերհնչույթ — архифонема
Գերձևույթ — архиморфема
Գերշարահյուսույթ — архисинтаксема
Գործառական — функциональный
Գործառել — функционировать
Գործառնություն — операция
Գործառություն — функционирование, функция
Գործառույթ — функция
Գործընթաց — процесс
Գործընթացային — процессуальный
Գործընթացայնություն — процессуальность
Դիրք — позиция
Դիրքային — позиционный
Ենթաբառաձև[1] — алло-словоформа
Ենթաբառույթ — аллолексема
Ենթահնչույթ — аллофона
Ենթաձևույթ — алломорфа
Ենթաշարահյուսույթ — аллосинтаксема
Ենթիմաստ(ույթ) — аллосема

[1] *Միջազգային լեզվաբանական տերմինաբանության մեջ գործածվող* алло *բաղադրիչին համապատասխանում է մեր այլ-ը, բայց մենք փոխարինում ենք ենթ-ով՝ ելնելով հետևյալ սկզբունքից.* аллофона-*ները,* алломорфа-*ները ևն որևէ իրական ճնչութի, ձևույթի ևն այլևփոխություններ չեն, այլ մեկ վերացական, ընդհանուր ճնչույթի, ձևույթի ևն տարբեր դրսևորումները, տարբեր իրացումները։ Օրինակ՝* -եր, -ներ, -իկ, -ք *հոգնակերտները* -եր-ի *կամ* -ներ-ի *տարբերակները չեն, այլ՝ ընդհանրապես հոգնակերտ ձևույթի իրական դրսևորումները. սա նշանակում է, թե անայլակը՝ արժութայինը հոգնակերտ վերացական ձևույթն է, որ պայմանականորեն նշանակում ենք* {ɜ}, *իսկ* -եր, -ներ, -իկ, -ք *դրա իրացումներն են և հավասարապես ենթադասվում են դրան։*

Երկատում—дихотомия
Իմաստույթ—сема
Ինքնամակերտ (մակարդակներ)—автогенный (-ые уровни)
Ինքնամակերտություն—автогенность
Ինքնավար (միավոր)—автономная (единица)
Տավալում—распространение
Կանխադրական—постулативный
Կանխադրել—постулировать
Կանխադրույթ—постулат
Կանոն—норма
Կապակցել (միավորների մեջև կապ ստեղծել)—сочетать
Կապակցություն—сочетание
Կառույց—конструкция
Կառուցվածք—структура
Կիրարկություն—узус
Հակադրական—оппозитивный
Հակադրականություն—оппозитивность
Հակադրություն—оппозиция
Համակարգ—система
Համակարգայնություն—системность
Համակցական—комбинационный, комбинаторный
Համակցել—комбинировать
Համակցելիություն—комбинируемость
Համակցություն—комбинация
Համամանակյա—синхронный
Համաձև—изоморфный
Համաձևություն—изоморфизм, изоморфность
Համուլթ—универсалия
Համուլթային—универсальный
Հավասարական հակադրություն—эквиполентная оппозиция
Հավելական—избыточный
Հավելականություն—избыточность
Հատույթ—сегмент
Հատույթավորել—сегментировать
Հատույթավորում—сегментация
Հարակցել (միատեսակ միավորների հաջորդականություն՝ հաջորդական շարք ստեղծել)—сочетать
Հարակցելիություն—сочетаемость
Հարակցություն—сочетание
Հարացույց—парадигма
Հարացուցային—парадигматический
Հարացուցայնություն—парадигматика
Հիմուլթ—темема
Հիմուլթային—темемный
Հոդավորել—конституировать
Հոդավորիչ—конституент
Հոդավորող—конститутивный
Ձևակ—морфа
Ձևահնչույթ—морфо(фо)нема
Ձևահնչույթաբանական—морфо(фо)нологический
Ձևահնչույթաբանություն—морфо(фо)нология
Ձևույթ—формант, форматив
Մասնական հակադրություն—привативная оппозиция
Մենույթ—монема
Միաձուլություն—синкретизм
Նշույթ—метка
Նշույթավոր—маркированный
Նշույթավորել—маркировать
Շարակարգային—синтагматический
Շարակարգայնություն—синтагматика
Շարահյուսույթ—синтаксема
Շարույթ—синтагма
Շարույթային—синтагматический
Ուղղակարգային—иерархический
Ուղղակարգություն—иерархия
Վերհատույթային—супрасегментный
Տարամանակյա—диахронический
Տարբերակ—вариант
Տարրուլթային (մակարդակ)—меризматический (уровень)
Փոխակերպական—трансформационный
Փոխակերպել—трансформировать
Փոխակերպություն—трансформация
Փոխակերպույթ—трансформа
Փոխարկել—субституировать
Փոխարկիչ—субститутор
Փոխարկություն—субституция
Փոփոխակ—вариация
Փոփոխայնություն—вариативность

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԱՏ — ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների սերիա):
ԳԹ — «Գրական թերթ»:
ԵՊՀԳԱ — Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ:
ԼԻԱԺ — ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու:
ԼՈՀ — «Լեզվի և ոճի հարցեր» (ժողովածու):
ՀԱ — «Հանդէս ամսօրեայ»:
ՊԲՀ — «Պատմա-բանասիրական հանդես»:
ՍԳ — «Սովետական գրականություն»:
ՍՀ — «Սովետական Հայաստան»:

ВГ—Вопросы грамматики (сборник статей к 75-летию Академика И. И. Мещанинова), М.—Л., 1960.
ВГиВЯ—Вопросы грамматики и истории восточных языков (сборник), М.—Л., 1958.
ВП—«Вопросы психологии».
ВСОГ—Вопросы составления описательных грамматик (сборник), М., 1961.
ВСЯ—Вопросы структуры языка (сборник), М., 1964.
ВЯ—«Вопросы языкознания».
ДСФФМГУ—Доклады и сообщения филологического факультета Московского государственного университета.
ИАН ОЛЯ—«Известия АН СССР. Отделение литературы и языка».
ИЯ—Звегинцев, В. А. История языкознания XIX и XX веков в очерках и извлечениях. Т. I—II, М., 1960.
КС—«Кибернетический сборник».
МСС—Морфологическая структура слова в языках различных типов (сборник), М.—Л., 1963.
МТПК—Морфологическая типология и проблема классификации языков (сборник), М.—Л., 1965.
НЛ—Новое в лингвистике (сборник).
ПИЯ—Проблемы изучения языка (сборник), М., 1957.
ПК—«Проблемы Кибернетики».

ПНИЯ—Принципы научного анализа языка (сборник), М., 1959.
ПСЛ—Проблемы структурной лингвистики (сборник), М., 1963.
ПЯ—Проблемы языкознания (сб. в честь акад. И. И. Мещанинова), Уч. записки ЛГУ, № 301, серия филологических наук, вып. 60, Л., 1961.
РГЛСРЯ—Развитие грамматики и лексики современного русского языка (сборник), М., 1964.
ССАИИЯ—О соотношении синхронного анализа и исторического изучения языка (сборник), М., 1960.
ТИЯ—Труды Института языкознания АН СССР.
ТМСЛ—Трансформационный метод в структурной лингвистике (сборник), М., 1964.
УзЛГУ—Ученые записки Ленинградского гос. ордена Ленина университета им. А. А. Жданова. Серия филологических наук.
УзЧНИИ—Ученые записки научно-исследовательского института при Совете Министров Чувашской АССР.
ЭКП—Эргативная конструкция предложения (сборник), М., 1950.
ЯНСССР—Языки народов СССР.
BPTJ—„Biuletyn Polskiego towarzystwa językoznawczego".
BSLP—„Bullétin de la Société de linguistique de Paris".
TCLC—„Travaux du Cercle linguistique de Copenhague".
TCLP—„Travau du Cercle linguistique de Prague".

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ[1]

Աբեղեան, Մ. *Աշխարհաբարի քերականութիւն. Վաղարշապատ, 1906։*

Աբեղեան, Մ. *Աշխարհաբարի հոլովները. Վաղարշապատ, 1908։*

Աբեղեան, Մ. *Հայկական հոլովը մեր աշխարհաբարում. Վաղարշապատ, 1909։*

Աբեղյան, Մ. *Հայոց լեզվի տաղաչափություն. Եր., 1933։*

Աբեղյան, Մ. *Հայոց լեզվի տեսություն. Եր., 1965։*

Աբրահամյան, Ա. Ա. *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը. Եր., 1953։*

Աբրահամյան, Ա. Ա. *Բայը ժամանակակից հայերենում, հ. I, Եր., 1962։*

Աբրահամյան, Ս. Գ. *Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը. ԳԱՏ, 1953, № 9։*

Աբրահամյան, Ս. Գ. *Արդի հայերենի դերանունները. Եր., 1956։*

Աբրահամյան, Ս. Գ. *Նախադասության տեսակներն ըստ բնույթի ժամանակակից հայերենում. ԼՈՀ, I, 1960։*

Աբրահամյան, Ս. Գ. *Ժամանակակից հայերենի չքեքվող խոսքի մասերը. Եր., 1959։*

Աբրահամյան, Ս. Գ. *Չքեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում. Եր., 1965։*

Աբրահամեան, Ս. Գ., Վերդեան, Գ. Յ., Քոսեան, Վ. Ա. *Հայերէն լեզուի դասագիրք. Եր., 1966։*

Աղայան, Է. Բ. *Լեզվաբանության ներածություն. Եր., 1963։*

Աղայան, Է. Բ. *Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում. ՊԲՀ, 1963, № 3։*

Աղայան, Է. Բ. *Բայակազմությունը ժամանակակից հայերենում. ԳԱՏ, 1963, № 5։*

Աղայան, Է. Բ. *Մեղրու բարբառը. Եր., 1954։*

Աղայան, Է. Բ. *Սովետահայ գրական լեզուն որպես հայ ժողովրդի համազգային լեզու. ԼԻԱԺ, II, 1948։*

1 *Ցանկի մեջ չենք մտցնում թերթերի հոդվածները, ինչպես և հանդեսների ու ամսագրերի այն հոդվածները, որոնք ուղղակիորեն չեն կապվում մեր այս աշխատության հետ։*

Աղայան, Է. Բ. Դրաբարի քերականություն, հ. I, գիրք Ա, Եր., 1964։
Աղայան, Է. Բ., Բառեղյան, Հ. Խ. Հայոց լեզու. Եր., 1965։
Աճառյան, Հ. Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների. հ.հ. I—V, Եր., 1952—1967։
Աճառյան, Հ. Հայերեն արմատական բառարան, հ.հ. I—VII, Եր., 1926—1935։
Աճառյան, Հ. Հայոց լեզվի պատմություն, հ.հ. I—II, 1949—1951։
Աճառյան, Հ. Քննություն Ագուլիսի բարբառի. Եր., 1935։
Աճառյան, Հ. Հայերենի բնաձայն և կրկնավոր բառերը. ՀԱ, 1899, հուլիս-օգոստոս։
Աճեմյան, Վ. Լ. Արևմտահայ աշխարհաբարը 19-րդ դարի առաջին 40-ամյակում և գրապայքարի նախապատրաստումը. ԼՈՀ, I 1960։
Այտընեան, Ա. Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի. Վիեննա, 1866։
Առաքելյան, Վ. Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն. Եր., 1953։
Առաքելյան, Վ. Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները. Եր., 1957։
Առաքելյան, Վ. Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները. Եր., 1954։
Առաքելյան, Վ. Հայերենի շարահյուսություն. հ.հ. I—II, Եր., 1958—1964։
Ավագյան, Մ. Նաիրի Զարյանի ստեղծագործության լեզուն և ոճը. Եր., 1961։
Ասատրյան, Մ. Ե. Բայի սեռերը ժամանակակից հայերենում. Եր., 1959։
Ասմանգուլյան, Հ. Ա. Հայերենի բայի խոնարհման ձևերի շուրջը. ՊՊՀ, 1963, № 2։
Աբամյան, Ա. Ժամանակակից հայերենի ձայնավորները. Եր., 1962։
Բագրատունի, Ա. Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց. Վիեննա, 1852։
Բանբերեանց, Ա. Քերականութիւն աշխարհիկ լեզուի. Տփղիս, 1879։
Բառեղյան, Հ. Խ. Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն. Եր., 1953։
Բառեղյան, Հ. Խ. Հատուկ անուն. Եր., 1964։
Գալստյան, Ա. Ա. Ակնարկներ աշխարհաբարի պատմության. Եր., 1963։
Գարեգինյան, Գ. Լ. Շաղկապի և դերանվան խոսքի մասային հարաբերության շուրջը, ԼՈՀ, I, 1960։
Գյուլբուդաղյան, Ս. Վ. Թվական անունը ժամանակակից հայերենում. Եր., 1964։
Դաղբաշյան, Յ. Արևելահայ աշխարհաբառի քերականութիւն. մասն ա, ստուգաբանութիւն, Թիֆլիս, 1913։
Էլոյան, Ս. Ա. Հայերենի միջածանցները. ԼՈՀ, I, 1960։
Էլոյան, Ս. Ածանցները ժամանակակից հայերենում. Եր., 1963։
Իշխանյան, Ռ. Բայի սեռի կարգը արդի հայերենում, ԳԱՏ, 1959, № 11—12։
Լիսիցյան, Ստ. Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը. ԵՊՀԳԱ, հ. XIX, 1941։
Կոստանդյան, Հ. Հ. Ակնարկներ վերջին տասնամյակի սովետահայ արձակի լեզվի և ոճի մասին. Եր., 1957։
Հայրապետյան, Հ. Ե. Տերյանի քնարերգության ոճական մի քանի առանձնահատկությունների մասին. ԼՈՀ, I, 1960։

Ղազարյան, Ս. Ղ. Ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա հարստացման ու զարգացման մեջ. Եր., 1955։
Ղազարյան, Ս. Ղ. Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1954։
Ղարիբյան, Ա. Հայ բարբառագիտություն. Եր., 1953։
Ղարիբյան, Ա. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա. Եր., 1954։
Ղարիբյան, Ա. Հայոց լեզվի քերականություն. Եր., 1964։
Ղարիբյան, Ա., Պարիս, Գ. Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց. Եր., 1957։
Ղափանցյան, Գ. Ընդհանուր լեզվաբանություն. Եր., 1939։
Մալխասյանց, Ստ. Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները. 2-րդ հրատ., Թիֆլիս, 1910։
Մալխասեանց, Ստ. Հայցական հոլովը աշխարհաբարի մէջ. Թիֆլիս, 1910։
Մալխասեանց, Ստ. Դարձեալ հայցական հոլովը, «Նոր դպրոց», 1909, № 11, 12։
Մալխասեանց, Ստ. Հայերեն բացատրական բառարան, հ.հ. I—IV, Եր., 1944—1945։
Մարգարյան, Ալ. Արդի հայերենի կապերը, Եր., 1955։
Մարգարյան, Ալ. Հայերենի հարադիր բայերը. Եր., 1966։
Մարգարյան, Ս. Ս. Հարակատարն ու անցյալի հարակատարը բայական ժամանակներ են. ՊԲՀ, 1964, № 2։
Մելիք-Թանգեան, Ն. Աշխարհաբարի քերականութիւն. Շուշի, 1893։
Մուրվալյան, Ա. Հայերենի բայածանցները. ԼՒԱԺ, I, 1946։
Մուրվալյան, Ա. Հայոց լեզվի բառային կազմը. Եր., 1955։
Մուրվալյան, Ա. Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն. Եր., 1959։
Ներսիսյան, Գ. Բայի սեռի և կերպի ուսուցումը. Եր., 1943։
Շարաբխանյան, Պ. Ե. Գրաբարի շաղկապները. Եր., 1960։
Շանբազյան, Տ. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա. Եր., 1958։
Շիլակաձե, Իվ. Ի. Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները. ԼՈՀ, II, 1964։
Պալասանեան, Աա. Գործնական քերականութիւն հայերէն լեզուի. Թիֆլիս, 1968։
Պալասանեան, Ստ. Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց. Թիֆլիս, 1970։
Պալասանեան, Ստ. Գործնական քերականութիւն հայերէն լեզուի. Թիֆլիս, 1906։
Պառնասյան, Ն. Խ. Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները ժամանակակից հայերենում. ԼՈՀ, I, 1950։
Պառնասյան, Ն. Խ. Անշազկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում. ԼՈՀ, II, 1964։
Պետրոսյան, Հ. Գոյականի առումները հայերենում. Եր., 1960։
Պողոսյան, Պ. Մ. Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում. Եր., 1959։
Ջահուկյան, Գ. Բ. Լեզվաբանության պատմություն. հ.հ. I—II, Եր., 1960—1962։

Ջահուկյան, Գ. Բ. *Հայոց լեզվի զարգացման փուլերը. Եր., 1964։*
Ջուհարյան, Թ. *Բայի ուսուցման հիմնական հարցերը. Եր., 1956։*
Սևակ, Գ. *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955։*
Սևակ, Գ. *Խոսքի մասերի ուսմունքը, ԵՊՀԳԱ, հ. XI, 1939։*
Սևակ, Գ. *Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը. Եր., 1946։*
Սևակ, Գ. *Հայոց լեզվի շարահյուսություն. Եր., 1964։*
Սևակ, Գ. *Սերունդների կռիվը քերականության բնագավառում. «Կուլտուրական ֆրոնտ», 1934, №№ 33, 34։*
Վահանյան, Գ. *Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ. Եր., 1956։*
Վանցեան, Գ. *Դպրոցական քերականութիւն. Թիֆլիս, 1906։*
Օհանյան, Հ. Ա. *Ածական անունը ժամանակակից հայերենում. Եր., 1962։*

Абаев В. И. Лингвистический модернизм как дегуманизация науки о языке. ВЯ, 1965, № 3.

Аванесов Р. И. Фонетика современного русского литературного языка. М., 1956 г.

Аврорин В. А. Об основных различиях между агглютинативной и флективной аффиксацией. МСС.

Агаян Э. Б. Введение в языкознание. Ереван, 1960 г.

Адмони В. Г. Введение в синтаксис современного немецкого языка. М., 1955 г.

Адмони В. Г. Развитие синтаксической теории на западе в XX в. и структурализм. ВЯ, 1956, № 6.

Адмони В. Г. Основы теории грамматики. М.—Л., 1964.

Адмони В. Г. О «портативности» грамматических структур. МСС.

Алексеев М. Н. и Колшанский Г. В. О соотношении логических и грамматических категорий. ВЯ, 1965 г., № 5.

Амбразас В., Вайткявичюте, В., Валацкене, А., Моркуас, К., Сабляускас А., Ульвидас К. Литовский язык. ЯН СССР, I, 1965.

Андреев И. А. О категории дефинитивности в чувашском языке. УзЧНИИ, XXVIII, 1965.

Андреев Н. Д., Зиндер Л. Р. О понятиях речевого акта, речи, речевой вероятности и языка. ВЯ, 1963, № 3.

Андреев Н. Д. Полихрония и таутохрония, ССАИИЯ.

Андреев Н. Д. О дифференциальных признаках, лежащих в основе стратификации языковых единиц. МСС.

Аничков И. Е. Об определении слова. МСС.

Апресян Ю. Д. К вопросу о структурной лексикологии. ВЯ, 1962, № 3.

Апресян Ю. Д. Дистрибутивный анализ значений и структурные семантические поля. «Лексикологический сборник», вып. V, 1962.

Апресян Ю. Д. Современные методы изучения значений и некоторые проблемы структурной лингвистики. СПЛ.

Апресян Ю. Д. Опыт описания значений глаголов по их синтаксическим признакам (типам управления). ВЯ, 1965, № 5.

Арнольд И. В. Лексикология современного английского языка. М., 1959.

Арнольд И. В. Оппозиции в семасиологии. ВЯ, 1966, № 2.
Атаян Э. Р. Проблемы и методы структурального синтаксиса. Ереван, 1962.
Атаян Э. Р. Понятие элементарной синтаксической структуры. Ереван, 1964.
Ахманова О. С. О методе лингвистического исследования у американских структуралистов. ВЯ, 1952, № 5.
Ахманова О. С. Глоссематика Луи Ельмслева как проявление упадка современного буржуазного языкознания. ВЯ, 1953, № 3.
Ахманова О. С. О понятии «изоморфизма» лингвистических категорий (в связи с вопросом о методе лексикологического исследования). ВЯ, 1955, № 3.
Ахманова О. С. Фонология, морфонология, морфология. М., 1966.
Ахманова О. С. Основные направления лингвистического структурализма. М., 1955.
Ахманова О. С. О психолингвистике. М., 1957.
Ахманова О. С. К вопросу об основных понятиях метаязыка лингвистики. ВЯ, 1961, № 5.
Ахманова О. С. Словарь лингвистических терминов. М., 1966.
Ахманова О. С., Микаелян Г. Б. Современные синтаксические теории. М., 1963.
Бабкин А. М. К вопросу о лексико-грамматических отношениях. ВГ.
Базмаджян Р. А., Джанполадян Т. К., Тер-Микаелян Г. М. Об одном варианте морфологического анализа и методе его реализации на специализированной машине. ПК, выпуск 15, 1965.
Балкаров Б. Х. О частях речи в кабардинском языке. ВСОГ.
Балли Ш. Французская стилистика. Пер. с франц. К. А. Долинина, М., 1961.
Бархударов Л. С. К вопросу о бинарности оппозиций и симметрии грамматических систем. ВЯ, 1966, № 4.
Баскаков Н. А. Морфологическая структура слова в тюркских языках. МСС.
Баскаков Н. А. Порядок и иерархия в основе слова в тюркских языках. МТПК.
Белецкий А. А. Описательное языкознание как отрасль общего языкознания. ВСОГ.
Белоозеров В. Н. Формальное определение фонемы. ВЯ, 1964, № 6.
Бельчиков Ю. А. Интернациональная терминология в русском языке. М., 1959.
Бенвенист Э. Классификация языков. Пер. с франц. М. А. Матвеенко. НЛ, III, 1963.
Бенвенист Э. Уровни лингвистического анализа. Пер. с франц. К. Ф. Филоновой. НЛ, IV, 1956.
Бертагаев Т. А. О границах слова (на материале монгольских языков). МСС.

Бертагаев Т. А. О спорных вопросах грамматики (на материале монгольских языков). ВСОГ.
Блэк М. Лингвистическая относительность (теоретические воззрения Б. Ли Уорфа). Пер. с англ. Е. С. Кубряковой и В. П. Мурат. НЛ, 1, 1960.
Бородина М. А. К вопросу об аналитической морфологии французского языка. МСС.
Бромлей С. В. Принципы классификации глагола в современном русском языке. ВЯ, 1965, № 5.
Будагов Р. А. Очерки по языкознанию. М., 1953.
Будагов Р. А. Введение в науку о языке. М., 1958.
Будагов Р. А. Система языка в связи с разграничением его истории и современного состояния. ВЯ, 1958, № 4.
Будагов Р. А. Несколько замечаний о понятии отношения в грамматике. ВГ.
Булаховский А. А. Курс русского литературного языка. Харьков, 1937.
Булаховский А. А. Введение в языкознание, ч. II, М., 1954.
Булыгина Т. В. Некоторые вопросы классификации частных падежных значений (на материале сочетаний с генетивом в современном литовском языке). ВСОГ.
Бухгольц У. Выбор языка команд. КС, 2, М., 1961.
Вандриес Ж. Язык, пер. с франц., М., 1937.
Вахек Й. Лингвистический словарь пражской школы, пер. с франц., немец., англ. и чешск. И. А. Мельчука и В. З. Санникова. М., 1964.
Виноградов В. В. Русский язык. Грамматическое учение о слове. М., 1947.
Винокур Г. О. Заметки по русскому словообразованию. ИАНОЛЯ, т. V, 1946, вып. 4.
Винокур Г. О. О задачах истории языка. ИЯ, II.
Винокур Г. О. Избранные работы по русскому языку. М., 1959.
Воронцова В. Л. Процессы развития морфологических элементов, стоящих на грани морфемы и слова. РГЛСРЯ.
Вэнь Ляно и Ху Фу. Части речи в китайском языке. ВЯ, 1955, № 3.
Гак Б. Г. Опыт применения сопоставительного анализа к изучению структуры значения слова. ВЯ, 1966, № 2.
Галкина-Федорук Е. М., Горшкова К. В., Шанский Н. М. Современный русский язык. М., 1958.
Гальперин И. Р. Очерки по стилистике английского языка. М., 1958.
Гардинер А. Различие между «речью» и «языком». ИЯ, II.
Гвоздев А. Н. Очерки по стилистике русского языка. М., 1955.
Гвоздев А. Н. Вопросы изучения детской речи. М., 1961.
Гладкий А. В. О формальных признаках в лингвистике. ВЯ, 1966, № 3.
Глиссон Г. Введение в дескриптивную лингвистику, пер. с англ. П. С. Кубряковой и В. П. Мурат, М., 1959.
Головин Б. Н. К вопросу о сущности грамматической категории (на материале русского языка). ВЯ, 1955, № 1.

Головкин Б. Н. Заметки о грамматическом значении. ВЯ, 1962, № 2.
Горнунг Б. В. О характере языковой структуры. ВЯ, 1959, № 1.
Горнунг Б. В. Единство синхронии и диахронии как следствие специфики языковой структуры. ССАИИЯ.
Горский Д. П. Вопросы абстракции и образование понятий. М., 1961.
Грабис Р. Латышский язык. ЯН СССР, 1, 1966.
Грамматика русского языка. тт. I и II, М., 1960.
Граур А. Структурализм и марксистская лингвистика. ВЯ, 1958, № 1.
Григорьев А. Н. О границах между словосложением и аффиксацией. ВЯ, 1956, № 4.
Григорьев В. И. Несколько замечаний о структурализме и семантике. ВЯ, 1958, № 4.
Григорьев В. И. Что такое дистрибутивный анализ. ВЯ, 1959, № 1.
Григорьев В. И. О коде и языке. ВЯ, 1959, № 6.
Григорьев В. И. Статистическое распознавание и дифференциальные признаки фонем. ВЯ, 1964, № 3.
Григорьев В. П. О взаимодействии словосложения и аффиксации. ВЯ, 1961, № 5.
Григорьев В. П. Словарь языка русской советской поэзии. М., 1965.
Гринберг Дж. Квантитативный подход к морфологической типологии языков, пер. с англ. Е. С. Кубряковой и В. П. Мурат, НЛ, III, 1963.
Гринберг Дж. Некоторые обобщения, касающиеся возможных начальных и конечных последовательностей согласных. ВЯ, 1964, № 4.
Груздева С. И. О связи слов в предложении. УзЛГУ, № 61, вып. 18, 1952.
Гухман М. М. Критерии выделения глагольных аналитических конструкций из других типов словосочетаний. МСС.
Гухман М. М. Э. Сепир и «этнографическая лингвистика». ВЯ, 1954, № 1.
Гухман М. М. Понятие системы в синхронии и диахронии. ВЯ, 1962, № 4.
Данеш Фр. Опыт теоретической интерпретации синтаксической омонимии. ВЯ, 1964, № 6.
Даниленко В. П. Имена существительные (нарицательные) как производящие основы современного словообразования. РГЛСРЯ.
Даниленко В. П. Имена собственные как производящие основы современного словообразования. РГСЛСРЯ.
Дегтерева Т. А. Краткий обзор лингвистических учений (в XIX—XX вв. в Европе). ПИЯ.
Дегтерева Т. А. Развитие методов и общей проблематики в советском языкознании. ПНАЯ.
Десницкая А. В. Об историзме в трактовке элементов структуры слова. МСС.
Десницкая А. В. К вопросу о взаимоотношении аглютинации и флексии. МГПК.
Дирр А. М. Глагол в кавказских языках. ЭКП.
Доброгаев С. М. Речевые рефлексы. М.—Л., 1947.
Дорошевский В. Знак и означаемое (десигнат). ВЯ, 1963, № 5.

Егоров В. Г. Слова-повторы как показатели формальных грамматических категорий в ряде языков мира. УзЧНИИ, XXVIII, 1965.
Елиазаренкова Т. Я. Опыт синхронического анализа палийского глагола. ВСЯ.
Ельмслев Л. Пролегомены к теории языка, пер. с англ. Ю. К. Аскомцева, НЛ, 1, 1960.
Ельмслев Л. Можно ли считать, что значения слов образуют структуру, пер. с англ. И. А. Мельчука, НЛ, II, 1962.
Ермакова О. П. О некоторых изменениях в системе аффиксов и производящих основ качественных наречий. РГЛСРЯ.
Есперсен О. Философия грамматики. М., 1958.
Ефимов А. И. О языке художественных произведений. М., 1954.
Ефимов А. И. Стилистика художественной речи. М., 1957.
Жирмунский В. М. Внутренние законы развития языка и проблемы грамматической аналогии. ТИЯ, т. IV, М., 1954.
Жирмунский В. М. О границах слова. МСС.
Засорина Л. Н. Трансформация как метод лингвистического эксперимента в синтаксисе. ГМСЛ.
Звегинцев В. А. Очерки по общему языкознанию. М., 1962.
Звегинцев В. А. Теоретико-лингвистические предпосылки гипотезы Сепира-Уорфа. НЛ, I, 1960.
Звегинцев В. А. Семасиология. М., 1958.
Звегинцев В. А. Глоссематика и лингвистика. НЛ, 1, 1960.
Звегинцев В. А. Лингвистическое датирование методом глоттохронологии (лексикостатистики). НЛ, I, 1960.
Звегинцев В. А. Проблема значения в современном зарубежном языкознании. НЛ, II, 1962.
Звегинцев В. А. Современные направления в типологическом изучении языков, НЛ, III, 1963.
Звегинцев В. А. Функционально-структурные основы лингвистического описания. НЛ, III, 1963.
Звегинцев В. А. Применение в лингвистике логико-математических методов. НЛ, IV, 1965.
Звегинцев В. А. Современные направления в зарубежном языкознании. НЛ, IV, 1965.
Эвегинцев В. А. Новые черты современного языкознания. НЛ, V, 1965.
Зиновьев А. А. Об основах абстрактной теории знаков. ПСЛ.
Зиндер Л. Р. О новом в языковедении. ВЯ, 1966, № 3.
Иванов А. И. Прямой объект и его выражения в чувашском языке. УзЧНИИ, XXVIII, 1965.
Иванов А. И. Теория фонологических различительных признаков. НЛ, II, 1962.
Иванов И. П. К вопросу о возможности единого определения слова. МСС.
Иванова И. П. Об основном грамматическом значении. ПЯ.

Ильиш Б. А. О критериях слова. МСС.
Ингве В. Гипотеза глубины, пер. с англ. И. К. Бельской, НЛ, IV, 1965.
Исаченко А. В. Грамматический строй русского языка в сопоставлении с словакцим. Морфология. Братислава, Ч. I, 1954, ч. II, 1960.
Исаченко А. В. О грамматическом значении. ВЯ, 1961, № 1.
Исаченко А. В. Бинарность, привативные оппозиции и грамматические значения. ВЯ, 1963, № 2.
Исаченко А. В. Опыт типологического анализа славянских языков, пер. с немец. Шеворошкина, НЛ, III, 1963.
Карольсфельд Г. Ш. О переходных и непереходных глаголах. ЭКП.
Карри Г. Некоторые логические аспекты грамматической структуры, пер. с англ. В. В. Лазарева. НЛ, IV, 1965.
Ковтун Л. С. О значении слова. ВЯ, 1955, № 5.
Колшанский Г. В. О логической функции артикля. ВЯ, 1958, № 5.
Колшанский Г. В. О природе коитекста. ВЯ, 1959, № 4.
Колшанский Г. В. К вопросу о содержании языковой категории модальности. ВЯ, 1961, № 1.
Коротков Н. Н., Панфилов В. З. О типологии грамматических категорий. ВЯ, 1965, № 1.
Коротков Н. Н. К вопросу об отдельности слова и его границах в современном китайском литературном языке. МСС.
Коссек Н. В. К вопросу о лексической сочетаемости. ВЯ, 1966, № 1.
Косериу Э. Синхрония, диахрония и история, пер. с испан. И. А. Мельчука. НЛ, III, 1963.
Кравченко М. Г. и Строева Т. В. К вопросу о слове и словосочетании (опыт экспериментального фонетического исследования на материале немецкого языка). ВЯ, 1962, № 2.
Крейнович Е. А. О морфологической структуре глагольных слов в кетском языке. МСС.
Крейнович Е. А. О модели глагола в кетском языке с основой в конце слова. МТПК.
Кубрякова Е. С. Об основных единицах лингвистического анализа и предмете морфологии. МСС.
Кузнецов А. И. Понятие семантической системы языка и методы ее исследования. М., 1963.
Кузнецов П. С. Об основных положениях фонологии. ВЯ, 1959, № 2.
Кузнецов П. С. О принципах изучения языка. М., 1961.
Кузнецов П. С. Опыт формального определения слова. ВЯ, 1964, № 5.
Кузнецов П. С. Еще о гуманизме и дегуманизации. ВЯ, 1966, № 4.
Кумахов М. А. К вопросу о границах слова в адыгских языках. МСС.
Кулаев Н. Х. К вопросу о проблеме падежей в осетинском языке. ВСОГ.
Курилович Е. Р. Заметки о значении слова. ВЯ, 1955, № 3.
Курилович Е. Р. Очерки по лингвистике. М., 1964.
Куртене, Бодуэн де. Избранные труды по языкознанию. т. 1, М., 1963.

Куртенэ, Бодуэн де. Основы общей фонетики (из курса лекций). ВЯ, 1959, № 6.
Кусикян И. К. Изменения в словарном составе литературного армянского языка советского периода. М., 1964.
Лафарг Поль. Французский язык до и после революции. Соч. т. III, М.—Л., 1931.
Леви-Брюль Л. Выражение принадлежности в меланезийских языках. ЭКП.
Левковская К. А. Лексикология немецкого языка. М., 1956.
Левковская К. А. О принципах структурно-семантического анализа языковых единиц (на материале немецкого языка). ВЯ, 1957, № 1.
Левковская К. А. Теория слова. Принципы ее построения и аспекты изучения лексического материала. М., 1962.
Левковская К. А. О понятии производности слова. ВСОГ.
Лекомцев Ю. К. Аналитическое слово во вьетнамском языке как специфический тип языковой единицы. МСС.
Лекомцев Ю. К. Элементы теории языковой сочетаемости. ПСЛ, 1963.
Леман У. Ф. Преемственность языкознания. ВЯ, 1966, № 1.
Леонтьев А. А. О специфике слова. МСС.
Леонтьев А. А. Слово в речевой деятельности. М., 1965.
Лиз Р. Б. О возможностях проверки лингвистических положений. ВЯ, 1962, № 4.
Лиз Р. Б. Что такое трансформация. ВЯ, 1961, № 3.
Лопатин В. В. Нулевая аффиксация в системе русского словообразования. ВЯ, 1966, № 1.
Лысков И. П. О частях речи. М., 1926.
Майтинская К. Е. Об отграничении слова от части слова (на материале финно-угорских языков). МСС.
Макаев Э. А. К вопросу об изоморфизме. ВЯ, 1961, № 5.
Макаев Э. А. Понятие давления системы и иерархия языковых единиц. ВЯ, 1962, № 5.
Мальмберг Б. Проблема метода в синхронной фонетике. Пер. с франц. В. В. Шеворошкина. НЛ, II, 1962.
Маркус С. Логический аспект лингвистических операций. ПСЛ, 1963.
Марсель-Коэн. Современная лингвистика и идеализм. ВЯ, 1958, № 2.
Марти А. О понятии всеобщей грамматики и философии языка. ИЯ, II.
Мартине А. О книге «Основы лингвистической теории» Луи Ельмслева, пер. с франц. В. П. Мурат. НЛ, I, 1960.
Мартине А. Основы общей лингвистики. НЛ, III, 1963.
Мартине А. Структурные вариации в языке, пер. с франц. А. А. Жолковского, НЛ, IV, 1965.
Мачавариани М. В. О взаимоотношении математики и лингвистики. ВЯ, 1963, № 3.
Мелкумян Р. Л. Особенности русского языка в сравнении с армянским. Ереван, 1941.

Мельчук И. А. Морфологический анализ при машинном переводе. ПК, вып. 6, М., 1961.
Мельчук И. А. О стандартной форме и количественных характеристиках некоторых лингвистических описаний. ВЯ, 1963, № 1.
Мельничук А. С. К оценке лингвистического структурализма. ВЯ, 1957, № 6.
Мещанинов И. И. Общее языкознание. Л., 1940.
Мещанинов И. И. Члены предложения и части речи. М.—Л., 1945.
Мещанинов И. И. Глагол. М.—Л., 1949.
Мещанинов И. И. Различные виды классификации языкового материала. ВЯ, 1959, № 3.
Мещанинов И. И. Основные грамматические формы эргативного строя предложения. ВЯ, 1964, № 5.
Микуш Ф. Обсуждение вопросов структурализма и синтагматическая теория. ВЯ, 1957, № 1.
Михайлов А. В. Опыт введения в изучение русского литературного языка и письма. Варшава, 1911.
Моисеев А. И. О некоторых спорных вопросах морфологической структуры слова в русском языке. МСС.
Молошная Т. Н. Грамматические трансформации английского языка. ГМСЛ.
Москович В. А. Опыт квантитативной типологии семантического поля. ВЯ, 1965, № 4.
Москович В. А. Автоматизация некоторых аспектов лингвистической работы. ВЯ, 1966, № 1.
Мухин А. М. О критериях морфологических и синтаксических единиц. МСС.
Мухин А. М. Об артикле. ВГ.
Мухин А. М. О категории падежа в современном английском языке. ВЯ, 1957, № 2.
Мухин А. М. Функциональные лингвистические единицы и методы структурного анализа. ВЯ, 1961, № 1.
Мухин А. М. Понятие нейтрализации и функциональные лингвистические единицы. ВЯ, 1962, № 5.
Мухин А. М. Функциональный анализ синтаксических элементов (на материале древнеанглийского языка). М.—Л., 1964.
Найда Е. А. Анализ значения и составление словарей, пер. с англ. Т. Н. Сергеевой, НЛ, II, 1962.
Недялков В. П. Несколько замечаний о структуре немецкого глагола. МСС.
Никифоров В. К. О системности термина. ВЯ, 1966, № 1.
Николаева Г. М. Трансформационный анализ сочетаний с прилагательным—управляющим словом. ГМСЛ.
Ольдерроге Д. А. К вопросу о границах слова в языках нефлективного строя. МСС.

Панов М. В. Русский язык. ЯН СССР, I.
Панфилов В. З. Об определении понятия слова. МСС.
Пауль Г. Принципы истории языка, пер. с немец. под редак. А. А. Холодовича. Л., 1960.
Петерсон М. Н. Русский язык. Пособие для учителей. М.—Л., 1925.
Петрова Н. В., Пиотровский Р. Г. Слово, контекст, морфология. ВЯ, 1966, № 2.
Пешковский А. М. Русский синтаксис в научном освещении. 7-е изд., М., 1956.
Пиотровский Р. Г. Структурализм и языковедческая практика (возможна ли структуральная диалектология?). ВЯ, 1957, № 4.
Пиотровский Р. Г. О границах слова. МСС.
Плат У. Математическая лингвистика, пер. с англ. Е. В. Падучевой. НЛ, IV, 1965.
Поливанов Е. Д. Русская грамматика в сопоставлении с узбекским языком. Ташкент, 1933.
Поливанов Е. За марксистское языкознание. М., 1931.
Поливанов Е. Введение в языкознание для востоковедных вузов. Л., 1928.
Поллер П. И. О системах членения предложения в зарубежной грамматической литературе (критический разбор). ПИЯ.
Покровский М. М. Избранные работы по языкознанию. М., 1959.
Попов П. С. Значение слова и понятие. ВЯ, 1956, № 6.
Попов А. С. Именительный темы и другие сегментированные конструкции в современном русском языке. РГЛСРЯ.
Путнам Х. Некоторые спорные вопросы теории грамматики. Пер. с англ. В. В. Лазарева, НЛ, IV, 1965.
Ревзин И. И. Структуральная лингвистика, семантика и проблемы изучения слова. ВЯ, 1957, № 2.
Ревзин И. И. О некоторых понятиях так называемой теоретико-множественной концепции языка. ВЯ, 1960, № 6.
Ревзин И. И. Трансформационный анализ и трансформационный синтез. ГМСЛ.
Ревзин И. И. Каково значение малайско-полинезийских языков для общей теории моделирования языка. ВСЯ.
Ревзин И. И. Модели языка. М., 1962.
Ревзин И. И., Розенцвейг В. Ю. Основы общего и машинного перевода. М., 1964.
Ревзин И. И. К логическому обоснованию теории фонологических признаков. ВЯ, 1964, № 5.
Ревзин И. И. Структурная лингвистика и единство языкознания. ВЯ, 1965, № 3.
Резников Л. О. Понятие и слово. Л., 1958.
Реферовская Е. А. От свободного сочетания к грамматической форме. ВГ.

Реформатский А. А. Агглютинация и фузия как две тенденции грамматического строения слова. МТПК.
Реформатский А. А. Число и грамматика. ВГ.
Реформатский А. А. К вопросу о фоно-морфологической делимитации слова. МСС.
Реформатский А. А. Принципы синхронного описания языка. ССАИИЯ.
Реформатский А. А. Что такое структурализм. ВЯ, 1957, № 2.
Реформатский А. А. Введение в языкознание. М., 1960.
Рождественский Ю. В. Проблема слова в свете данных китайского языка. МСС.
Рождественский Ю. В. О современном строении языкознания. ВЯ, 1965, № 3.
Розенцвейг В. Ю. Языковая практика и лингвистическая теория. ВЯ, 1966, № 2.
Рубинштейн С. Л. К вопросу о языке, речи и мышлении. ВЯ, 1957, № 2.
Сабиров К. С. Классификация лексической фразеологии (на материале татарского языка). УзЧНИИ, XXVIII, 1965.
Санжеев Г. Д. К проблеме частей речи в алтайских языках. ВЯ, 1952, № 2.
Санжеев Г. Д. Несколько замечаний о структуре слова и его границах. МСС.
Сводеш М. К вопросу о повышении точности в лексическом датировании, пер. с англ. Н. П. Токмаковой. НЛ, I, 1960.
Сводеш М. Лексикостатистическое датирование доисторических этнических контактов (на материале племен эскимосов и североамериканских индейцев), пер. с англ. И. П. Токмаковой. НЛ, I, 1960.
Сенкевич-Гудакова В. В. Морфологическая структура саамского слова. МСС.
Сепир Э. Язык, пер. с англ. А. М. Сухотина, М.—Л., 1934.
Серебренников Б. А. Причины устойчивости агглютинативного строя и вопрос о морфологическом типе языка. МГПТ.
Серебренников Б. А. О сущности процессов изменения слов и словосочетаний и о природе и характере структуры слова в тюркских и финно-угорских языках. МСС.
Скаличка В. О современном состоянии типологии, пер. с чешского Н. А. Кондрашова. НЛ, III, 1963.
Скорик П. Я. К вопросу о границах слова (на материале чукотского языка). МСС.
Скорик П. Я. К вопросу об аналитических конструкциях. ВЯ, 1964, № 3.
Смирницкий А. И. Некоторые замечания о принципах морфологического анализа слов. ДСФФ МГУ, 5, 1948.
Смирницкий А. И. Значение слова. ВЯ, 1955, № 2.
Смиронова И. А. К вопросу ограничения слова от свободного синтаксического сочетания (на материале сложного глагола курдского языка). МСС.

Соболева П. А. О трансформационном анализе словообразовательных отношений. ГМСЛ.

Современный русский язык. Морфология (курс лекций). Под редакцией акад. В. В. Виноградова, М., 1952.

Солнцев В. М. Проблема частей речи в китайском языке. ВЯ, 1956, № 5.

Солнцев В. М. К вопросу о приложимости общеграмматических терминов к анализу китайского слова. МСС.

Соммерфельт А. О. Французская лингвистическая школа, пер. с англ. В. П. Мурат, НЛ, IV, 1965.

Соммерфельт А. О. О понятии подлежащего в грузинском языке. ЭКП.

Сссюр Ф. де. Курс общей лингвистики, пер. с 2-го франц. изд. А. М. Сухотина, М., 1933.

Спанг-Ханссен Х. Глоссематика, пер. с англ. В. В. Шеворошкина, НЛ, IV, 1965.

Ставровски Н. В. Лингвистическая статистика. София, 1964.

Стеблин-Каменский М. И. Несколько замечаний о структурализме. ВЯ, 1957, № 1.

Степанов М. Д. Словообразование современного немецкого языка. М., 1953.

Степанов Ю. С. О предпосылках лингвистической теории значения. ВЯ, 1964, № 5.

Степанов Ю. С. Основы языкознания. М., 1966.

Сумкина А. И. Деривационные корреляции существительных в формах множественного числа. РГЛСРЯ.

Суник О. П. О происхождении морфологической структуры слова. ВЯ, 1959, № 5,

Суник О. П. О частях речи в тунгусо-манчжурских языках в свете общей теории частей речи. ВСОГ.

Суник О. П. Слово, его основа и корень как различные морфологические категории. МСС.

Сыромятников Н. А. Есть ли в японском языке основной падеж. МГПК.

Сюй Го-чжан Обзор структурального направления в лингвистике. ВЯ, 1959, № 3.

Тезисы пражского лингвистического кружка. ИЯ, II.

Тер-Матевосян, А. Краткий сравнительный обзор структурных особенностей русского и армянского языков, Баку, 1939.

Тимофеев К. А. Заметки о словообразовании. ВГ.

Топоров В. Н. О введении вероятности в языкознании. ВЯ, 1959, № 6.

Топоров В. Н. О трансформационном методе. ГМСЛ.

Топоров В. Н. Локатив в славянских языках. М., 1961.

Топоров В. Н. Индоевропейские языки СССР. ЯН СССР, I.

Травничек Ф. Некоторые замечания о значении слова и понятия. ВЯ, 1956, № 1.

Трнка Б. и др. К дискуссии по вопросам структурализма. ВЯ, 1957, № 3.

Тромбетти А. О. О теории пассивного характера глагола. ЭКП.
Тронский И. М. Несколько замечаний о границе слова и его структуре. МСС.
Трубецкой Н. С. Основы фонологии, пер. с немец. А. А. Холодовича, М. 1960.
Туманян Э. Г. Превращение артикля в флексию дательного падежа в новоармянском языке. ВЯ, 1955, № 5.
Туманян Э. Г. Артикли в современном армянском языке. Ереван, 1963.
Туманян Э. Г. Очерки исторического развития падежных форм новоармянского литературного языка. М., 1962.
Туманян Э. Г. Армянский язык. ЯН СССР, I.
Убрятова Е. И. Заметки по поводу падежей в чувашском языке. УзЧНИИ, XII, 1955.
Уленбек Х. К. Пассивный характер переходного глагола или глагола действия в языках Северной Америки. ЭКП.
Уленбек Х. К. К учению о падежах. ЭКП.
Уленбек Х. К. Agens и Patiens в падежной системе индоевропейских языков. ЭКП.
Уленбек Х. К. Идентифицирующий характер пассивной флексии в языках Северной Америки. ЭКП.
Ульдалль Х. И. Основы глоссематики (исследование методологии гуманитарных наук со специальным приложением к лингвистике), пер. с англ. В. В. Иванова, НЛ, I, 1960.
Ульман С. Дескриптивная семантика и лингвистическая типология, пер. с англ. Е. С. Гулковой, НЛ, II, 1962.
Уорс Д. С. Трансформационный анализ конструкций с творительным падежом в русском языке, пер. с англ. Ф. А. Дрейзна и Г. М. Николаевой, НЛ, II, 1963.
Уорф Б. Л. Отношение норм поведения и мышления к языку, пер. с англ. Л. Н. Натан и Е. С. Турковой, НЛ, I, 1960.
Уорф Б. Л. Наука и языкознание (о двух воззрениях на речь и мышление, характеризующих систему естественной логики, и о том, как слова обычно влияют на мышление), пер. с англ. Е. С. Кубряковой и В. П. Мурат. НЛ, I 1960.
Уорф Л. Лингвистика и логика, пер. с англ. Л. Н. Натан, НЛ, I, 1960.
Успенский Б. А. Структурная типология языков. М., 1965.
Ушаков Д. Н. Краткое введение в науку о языке. 7-е изд., М., 1925.
Уэлз Р. Мера субъективной информации, пер. с англ. В. В. Лазарева, НЛ, IV, 1965.
Фант Г. Акустическая теория речеобразования, пер. с англ. А. А. Варшавского и В. И. Медведева. М., 1964.
Ферс Дж. Р. Техника семантики, пер. с англ. Л. Т. Натан, НЛ, II, 1962.
Филин Ф. П. О слове и вариантах слова. МСС.
Филин Ф. П. Заметки о состоянии и перспективах советского языкознания. ВЯ, 1965, № 2.

Филин Ф. П. К проблеме социальной обусловленности языка. ВЯ, 1966, № 4.
Финк Ф. Н. О якобы пассивном характере переходного глагола. ЭКП.
Фитиалов С. Я. Трансформация в аксиоматических грамматиках. ГСМЛ.
Фрейд Зигмунд. Тотем и табу, пер. с немец. М. В. Вульфа, М.—Петроград, 1925.
Фриз Ч. Значение и лингвистический анализ, пер. с англ. С. А. Григорьевой, НЛ, II, 1962.
Фриз Ч. «Школа Блумфильда», пер. с англ. В. П. Мурат, НЛ, IV, 1965.
Фролов Ю. П. От инстинкта до разума. М., 1947.
Фрумкина Р. М. Статистические методы изучения лексики. М., 1964.
Хаймз Д. Х. Общение как этнологингвистическая проблема. ВЯ, 1965, № 2.
Халле М. Фонологическая система русского языка. Лингвистико-акустическое исследование, пер. с англ. Д. М. Сегал, НЛ, II, 1962.
Халле М. О роли простоты в лингвистических описаниях, пер. с англ. В. В. Лазарева, НЛ, IV, 1965.
Хансен К. Пути и цели структурализма. ВЯ, 1959, № 4.
Хауген, Эйнар. Направления в современном языкознании, пер. с англ. С. А. Григорьевой, НЛ, I, 1960.
Харрис З. С. Совместная встречаемость и трансформация в языковой структуре, пер. с англ. К. И. Бабицкого, НЛ, II, 1962.
Хойер Г. Лексикостатистика (критический разбор), пер. с англ. И. П. Токмаковой, НЛ, I, 1960.
Хойер Г. Антропологическая лингвистика, пер. с англ. В. П. Мурат, НЛ, IV, 1965.
Хоккет Ч. Грамматика для слушающего, пер. с англ. В. В. Лазаревой, НЛ, IV, 1965.
Хомский Н. Три модели описания языка. КС, 2, М., 1961.
Хомский Н. Синтаксические структуры, пер. с англ. К. И. Бабицкого, НЛ, II, 1962.
Хомский Н. Логические основы лингвистической теории, пер. с англ. И. А. Мельчука, НЛ, IV, 1965.
Хомский Н. О понятии «правило грамматики», пер. с англ. И. К. Бельской, НЛ, IV, 1965.
Хэмп Э. Словарь американской лигвистической терминологии, пер. с англ. В. В. Иванова, М., 1964.
Цинциус В. И. Порядок и иерархия аффиксов в агглютинативных языках (на материале тунгусо-манчужурских языков), МТПК.
Черри Е., Халле М., Якобсон Р. К вопросу о логическом описании языков в фонологическом аспекте, пер. с англ. Е. М. Сморгуновой, НЛ, II, 1962.
Черч А. Введение в математическую логику, пер. с англ. В. С. Чернявского, т. I, М., 1960.
Чешко Е. В. К вопросу о падежных корреляциях. ВЯ, 1960, № 2.

Чикобава А. С. Введение в языкознание. Ч. 1, 2-ое изд., М., 1953.
Чикобава А. С. Несколько замечаний об эргативной конструкции (к постановке проблемы). ЭКП.
Чикобава А. С. Проблема языка как предмета языкознания. М., 1959.
Чикобава А. С. К вопросу о путях развития современного языкознания. ВЯ, 1966, № 4.
Чистович Л. А., Кожевников В. А. и др. Речь, артикуляция и восприятие. М.—Л., 1965.
Шанский Н. М. Очерки по русскому словообразованию и лексикологии. М., 1959.
Шанский Н. М. Лексикология современного русского языка. М., 1964 г.
Шаумян С. К. О сущности структурной лингвистики. ВЯ, 1956, № 5.
Шаумян С. К. О логическом базисе лингвистической теории. ПСЛ.
Шаумян С. К. Проблемы теоретической фонологии. М., 1962.
Шаумян С. К. Теоретические основы трансформационной грамматики. НЛ, II, 1962.
Шаумян С. К. и Соболева П. А. Аппликативная порождающая модель и исчисление трансформаций в русском языке. М., 1963.
Шаумян С. К. Трансформационная грамматика и аппликативная порождающая модель. ТМСЛ.
Шаумян С. К. Порождающая лингвистическая модель на базе принципа двухступенчатости. ВЯ, 1963, № 2.
Шаумян С. К. Структурная лингвистика. М., 1965.
Шахматов А. А. Очерк современного русского литературного языка. 4-е изд., М., 1941.
Шенделькс Е. И. О грамматических значениях в плане содержания. ПНАЯ.
Шенделькс Е. И. О грамматической полисемии. ВЯ, 1962, № 3.
Штелинг Д. А. О неоднородности грамматических категорий. ВЯ, 1959, № 1.
Штибер З. Слово в дискуссии о структурализме. ВЯ, 1957, № 3.
Шухардт Г. Избранные статьи по языкознанию, пер. с немец. А. С. Бобовича, М., 1950.
Шухардт Г. О пассивном характере переходного глагола в кавказских языках. ЭКП.
Шухардт Г. Об активном и пассивном характере переходного глагола. ЭКП.
Шухардт Г. Пассивность и активность. ЭКП.
Щедровицкий Г. П. Языковое мышление и его анализ. ВЯ, 1957, № 1.
Щерба Л. В. Избранные работы по русскому языку. М., 1957.
Щерба Л. В. Избранные работы по языкознанию и фонетике, т. I, Л., 1958.
Щерба Л. В. О трояком аспекте языковых явлений и об эксперименте в языкознании. ИЯ, 1, 1960.
Щербак А. М. О морфологической структуре слова в тюрских языках. МСС.

Щербак А. М. Лингвистические заметки. ВЯ, 1965, № 6.
Якобсон Р. О. Морфологические наблюдения над славянским склонением, s-Gravenhage, 1958.
Якобсон Р. и Халле М. Фонология и ее отношение к фонетике, пер. с англ. А. А. Зализняка и Е. В. Падучевой, НЛ, II, 1962.
Якобсон Р., Фант Г. М., Халле М. Введение в анализ речи. Различительные признаки и их корреляты. Гл. II. Опыт описания различительных признаков, пер. с англ., А. А. Зализняка и Е. В. Падучевой. НЛ, II, 1962.
Якобсон Р. Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание, пер. с англ. Е. С. Кубряковой и В. П. Мурат, НЛ, 1963, III.
Якобсон Р. Разработка целевой модели языка в европейской лингвистике в период между двумя войнами, пер. с англ. И. А. Мелчука, НЛ, IV, 1965.
Якобсон Р. Итоги девятого конгресса лингвистов, пер. с англ. И. А. Мельчука, НЛ, IV, 1965.
Ярцева В. Н. Диахроническое изучение системы языка. ССАИЯ.
Ярцева В. Н. Об аналитических формах слова. МСС.
Яхонтов С. Е. О значении термина «слово». МСС.
Amer K. Einführung in die Sprachwissenschaft. B. I, Halle, 1958.
Bally Ch. Linguistique générale et linguistique française. 2me éd., Berne, 1944.
Bloomfield L. Language. London, 1935.
Brøndal V. Essais de linguistique générale. Copenhague, 1943.
Bühler K. Sprachtheorie. Jena, 1934.
Carnap. Logische Syntax der Sprache. Wien, 1934.
Essen O. Allgemeine und angewandte Phonetik. Berlin, 1957.
Faulseit D., Kühn G. Stilistische Mittel und Möglichkeiten der deutschen Sprache. Halle, 1961.
Greenberg J. H., Essays in Linguistics, „Viking Fund Publications in Anthropology", № 24. N.-Y., 1957.
Groot A. Classification of the uses of a case illustrated on the genitive in Latin, „Lingua", VI, 1, 1956.
Gutraud P. Les champs morphosémantique (critères externes et critères internes en étymologie). BSLP, t. 52, fasc. 1, 1956.
Hill A. Introduction to linguistic structures. N.-Y., 1958.
Hockett Ch. F. A. A course of modern Linguistics. N.-Y., 1958,
Hoenigswald H. M. Language change and linguistic reconstruction. Chicago, 1960.
Jacobson R. Beitrag zur allgemeinen Kasuslehre. Gesamtbeteungen der russischen Kasus. TCLP, 6, 1936.
Kurilowicz J. La notion de l'isomorphisme. TCLC, V, 1949.
Kurilowicz J. Le problème du classement des cas. BPTJ, IX, 1949.
Martinet A. Éléments de linguistique générale. 2me ed., Paris, 1961.

Meile P. Introduction au tamoul. Paris, 1945.
Meillet A. Linguistique historique et linguistique générale, Tt. I—II, Paris, 1948—1952.
Pike K. L. Phonemics. 7th pr., Ann Arbor, 1961.
Riesel E. Abriss der deutschen Stilistik. M., 1954.
Riesel E. Stilistik der deutschen Sprache. M., 1959.
Riesel E. Der Stil deutschen Alltagsrede. M., 1964.
Schmidt W. Grundfragen der deutschen Grammatik. Berlin, 1965.
Serensen H. Ch. Contribution a' la discussion sur la theorie des cas. TCLC, V, 1949.
Tastevin C. F. R. P. Ptite clef des langues africaines. 2me éd., Paris, 1947.
Wartburg W. V. Évolution et structure de la langue française. 3me éd., Berne, 1946.
Whatmaugh J. Language. A modern synthesis. London, 1956.
Zacher O. Deutsche Phonetik, Leningrad, 1960.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նախաբան 5

Գլուխ առաջին

Ընդհանուր հիմունքներ

1. Լեզվի կիրարկություն, կանոն և կառուցվածք 11
2. Լեզվի տարբերակներ և ոճեր 18
3. Լեզվական կառուցվածքի մակարդակները 34
4. Կառուցվածքային վերլուծության մեթոդները 48
5. Չեղոքացում 56

Գլուխ երկրորդ

Ձևույթային, բառային ու ձևաբանական մակարդակները և նրանց փոխհարաբերությունը

1. Հարացուցային և շարակարգային շարքեր 69
2. Ձևույթային մակարդակ 76
3. Բառային մակարդակ 100
4. Ձևաբանական մակարդակ 149

Գլուխ երրորդ

Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը

1. Հոլով և հոլովում 175
2. Ժամանակակից հայերենի հոլովները 184
3. Հոլովների իմաստները և նրանց դասակարգումը 220
4. Հոլովների կազմությունը և հոլովումներ 233
Ա. Անվանական հոլովում 233
Բ. Դերանվանական հոլովում 262
5. Հոլովական ձևերը և նրանց հարաբերությունները միմյանց հետ . 274

Գլուխ չորրորդ

Բայը և նրա խոնարհումը

1. Բայակազմություն, ձևակազմություն և հիմքակազմություն . . . 306
2. Բայակազմություն 309
3. Հիմքակազմություն 327
4. Ձևակազմություն 343
5. Եղանակային ձևեր 360
6. Եղանակներ և ժամանակներ 369

Յ ա ն կ ե ր

1. Բառացանկ 380
2. Համառոտագրություններ 382
3. Մատենագիտական համառոտ ցանկ 384
4. Բովանդակություն 403

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԳՐԱՏԻ ԱՂԱՅԱՆ
ЭДУАРД БАГРАТОВИЧ АГАЯН

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՈՒՄՆ ՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Կազմը Ն. Խանզադյանի
Հրատ. խմբագիր Ա. Հ. Շաղգամյան
Տեխ. խմբագիր Մ. Ա. Կափլանյան
Սրբագրիչ Փ. Հ. Մադանյան

ՎՖ 04318, Հրատ. 2789, Խչհ 1047, պատվեր 5, տպաքանակ 4000։

Հանձնված է արտադրության 20/XII 1966 թ., ստորագրված է տպագրության 14/II 1967 թ., տպագր. 25,25 մամուլ, հրատ. 21,22 մամուլ։ Թուղթ № 1 60×90¹/₁₆։ Գինը 1 ռ. 54 կ.։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24։

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
25	2-րդ այունակ	20%	20,5%
46	3 վ.	(բո)	(բեռ)
75	3 վ.	ձևուլթնեբի	ձևեբի
87	1 ն.	ացցնել	-ացցնել
134	4 ն.	ՀՏՓՋՓ	ՀՏՓՋՓ
204	1-2 վ.	ավանդոդական	անվանոդական
209	13 վ.	անձնական ատացական-նեբի	անձնական դեբանուն-նեբի
218	14 ն.	նուլնանում են	նուլնացնում է
233	9 ն.	ն(ամհս) ն(ու)	ն(ամուղ) ն(ս)
271	2 ն.	դթլ	դթլ
289	10 ն.	դիրեկտորն է	դիրեկտոր է

ЦЕНА
АП
40699